891.981

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Թարգմանությունը և ծանոթագրությունները՝
Հակոբ Քյոսեյանի

A II 85571

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

© «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
հրատարակչություն
Երևան 1995

Քաջալերութեամբ և աջակցութեամբ

Նորին Սուրբ Օծութիւն Տէր Տէր

Գարեգին Ա Կաթողիկոսի

Ամենայն Հայոց

Մեր սուրբ Հայր, յոթնալույս

վարդապետ

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ

ստեղծած գիրքը, որ կոչվում է

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Նվիրվում է
Հայաստանում քրիստոնեության
պետական կրոն հռչակման
1700 - ամյակին

ՄՈՒՏՔ

Հայ միջնադարի աստվածաբանական մտքի սյուներից մեկն է Սուրբ Գրիգոր Տաթևացին: Նրա մատենագրական վաստակը հատկորոշվում է հանրագիտարանային բազմակողմանիությամբ, գիտական խորությամբ: Տաթևացու հոգևոր ժառանգությունը դարակազմիկ նշանակություն ունեցավ հայ աստվածաբանական, իմաստասիրական մտքի պատմության մեջ:

Ծնվել է 1346թ. Գուգարքի Թմկաբերդ քաղաք-ամրոցում, արհեստավորի ընտանիքում: Թաթար-մոնղոլների սանձարձակ կամայականություններից զերծ մնալու նպատակով ընտանիքը տեղափոխվում է Սյունիք: Նկատելով իրենց որդու՝ ուսման նկատմամբ ունեցած անհագ ծարավը՝ ծնողները պատանի Խութլա-շահին (ապագա Գրիգորին) հանձնում են Տաթևի վանքդպրոցը՝ Հովհան Որոտնեցու մոտ ուսանելու: Մեծանուն ուսուցչապետի մոտ քսան տարի սովորելուց հետո նա դառնում է վանքի միաբան: Լինելով Հովհան Որոտնեցու հավատարիմ օգնականն ու քարտուղարը՝ Գրիգոր Տաթևացին գրի է առել նրա դասախոսությունները, որոնք կարևոր սկզբնաղբյուր են Որոտնեցու մատենագրական վաստակը ճիշտ գնահատելու համար: Այս իրողությունն ինքնին ցույց է տալիս իր ուսուցչի նկատմամբ Տաթևացու տածած պատկառոտ սերն ու հարգանքը, այլև՝ հոգևոր ժառանգորդության այն առողջ մթնոլորտը, որ տիրում էր Տաթևի համալսարանում: Որոտնեցու մահից (1386թ.) հետո Տաթևացին շարունակում է նրա եկեղեցաքաղաքական, գիտական, ուսումնակրթական գործունեությունը՝ երկար տարիներ լինելով Տաթևի համալսարանի տնօրենն ու ուսումնական կյանքի անխոնջ կազմակերպիչը:

Իր ժողովրդի հոգևոր քաղաքական ինքնուրույնությամբ մտահոգ եկեղեցական գործիչն անհողդողդ, հետևողական պայքար է մղում կաթոլիկ եկեղեցուն ծառայագրված միարարների գաղափարական հավակնությունների դեմ: Սուրբ Գրիգոր Տաթևացու արդյունաշատ կյանքն ընդհատվում է 1409թ. դեկտեմբերի 27-ին:

Թողել է հսկայածավալ մատենագրական ժառանգություն. մեկնություններ, քարոզներ, դավանաբանական, իմաստասիրական աշխատություններ[1]: Սրանց մեջ առավել կարևորներն են՝ «Գիրք Հարցմանց»-ը, «Ոսկեփորիկը»-ը, Քարոզգրքի «Ձմերան», «Ամարան» հատորները, «Մեկնութիւն Աւետարանի», «Մեկնութիւն Սաղմոսաց», «Մեկնութիւն Եսայեայ», «Համառօտ տեսութիւն ի գիրս Պորփիւրի», «Լուծմունք համառօտ ի տեսութիւն Դաւթի»[2]:

Հայ եկեղեցու դավանաբանության պատմության ուսումնասիրության համար ուրույն նշանակությամբ են օժտված մասնավորաբար հեղինակի «Գիրք Հարցմանց»-ը (1397թ.) և «Ոսկեփորիկը»-ը (1401թ.): Այս աշխատու-

---

1. Աշխատությունների ցանկը տե՛ս Նորայր եպս. Պողարյան, Հայ գրողներ, Ե-ԺԷ դար, Երուսաղեմ, 1971, էջ 398-399:
2. Հեղինակի իմաստասիրական, տնտեսագիտական հայացքների քննությունը տե՛ս С. С. Аревшатян. Философские взгляды Григора Татеваци, Е. 1957, նաև՝ «Բանբեր Մատենադարանի», N4, 1958, էջ 121-137: Ն. Թովմասյան, Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսական հայացքները, Ե., 1966:

թյունները ունեն հանրագիտարանային բնույթ: Սրանց մեջ ի մի են բերված ոչ միայն կյանքի ամենազանազան բնագավառների վերաբերյալ տեղեկությունները, այլև, որ առավել կարևոր է, հայ դավանաբանական մտքի դարավոր ձեռքբերումները: Նախորդ շրջանի տեսական գրականության մեջ տարտղնված աստվածաբանական զանազան գիտակարգերը Տաթևացու այս երկերում, սքոլաստիկ աստվածաբանության մեջ ընդունված մասնավոր սկզբունքով, դասդասված և գիտական համակարգի են վերածված:

Բնույթով և կառուցվածքով նույնական այս աշխատությունները սակայն ծավալով տարբերվում են. «Հարցմանց» գիրքն ընդարձակ է, իսկ «Ոսկեփորիկ»-ը՝ փոքրածավալ: «Հարցմանց» գրքում առկա փաստերի մանրակրկիտ հաշվառումն ու մեկնաբանումը «Ոսկեփորիկ»-ի մեջ ամբողջացվում է ընդհանրական գնահատումներով:

«Հարցմանց» գրքի նման «Ոսկեփորիկ»-ի շարադրումը նպատակ ուներ ընթերցողին ծանոթացնել Հայ Առաքելական եկեղեցու դավանաբանական բոլոր սկզբունքներին ու գլխավոր կարգուլթներին: Իր մեջ ներառնելով հայ բազմադարյան աստվածաբանական մտքի բոլոր կարևորագույն հիմնադրույթները՝ «Ոսկեփորիկ»-ը դառնում է Հայ եկեղեցու դավանաբանության կարևորագույն ձեռնարկ:

«Ոսկեփորիկ»-ի աշխարհաբար թարգմանությունն իրականացվել է Մաշտոցի անվան Մատենադարանի N5118, 8503 ձեռագրերի և տպագրի (1746թ.) հիման վրա: Ստորև ներկայացնում ենք այդ միավորների նկարագրությունը.

N 5118

Ժամանակ՝ 1412թ.: Վայր՝ Ավագ վանք: Գրիչ՝ Ռստակես Սեբաստացի: Թերթ՝ 386: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 14×8: Գրություն՝ միասյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 27-29, 41: Հիշատակարան գրչի՝ 196բ, 197ա, 287ա:

Բովանդակություն

Ա. 1ա-196բ *[Ոսկեփորիկ]*

Բ. 198ա-286բ *Ծաղկաքաղ հավաքումն դժուարահաս եւ գըլխաւոր բանից Ղուկասու Աւետարանին ի մեկնութենէն Ինքնատիոսի սուրբ վարդապետին հայոց* - Արդ, զի ամենայն ոք, որ ծոյլ է յաստուածային ուսումն...

Գ. 286բ *Խրատ ուսումնականաց անձանց* - Անձանց մաքրութիւն, անախտութիւն մարմնոյ...

Դ. 287բ-289բ *Օրհնութիւնք քարոզից*

Ե. 289բ-293բ *Քարոզ ի փոխումն ամէնաւրհնեալ եւ միշտ կուսին Մարիամու Աստուածածնին: Արարեալ քաջ փաղերային եւ տիեզերալոյս րաբունոյն եռամեծին Գէորգեա՝ ի բանն մարգարէին, որ ասէ. Արի Տէր ի հանգիստ քո* - Յառաջ քան զամենայն տեսցուք, թէ զինչ ցուցանէ ասելն...

Զ. 294ա-329բ *Հարցումն Գէորգեա րաբունապետի եւ ծառայաքար կատարումն Յակոբի աշակերտի* - Ջհրաման հարկի րաբունոյդ իմոյ...

Է. 331ա-334ա *Լուծմունք ի Սուրբ Գրոց* - (սկ. թափված) /// Նմանապես և զԲանն մարմնացեալ իմացիր...

Ը. 334ա-344բ *[Մանունք]*

1. 334ա-335ա *Թղթի առաջք* - Տիպ գլխոյն սեւական անընդհատ լուսոյն...

2. 335ա-339բ *Անդրադարձութիւն նամակի* - Զառ ի յԱստուածուստ ամենառատ...

3. 339բ-344բ *[Պատմութիւնք զանազանք]*

Թ.345ա-352ա *Խաւսք իմաստասիրաց ի յառակս գազանաց եւ ի խրատ մեր* - Բարուախօսն ասէ վասն Յովազու...

Ժ. 352ա-365բ *Քերականն կոչի է (եօթն) ազգեանք զուգեալ ի Դաւթայ փիլիսոփայէ եւ ի հռոմա վարդապետէ կոչեալ անուն Փինիկ* - Եւ են այս գիրք...

ԺԱ. 365բ-370բ *Քարոզ մեծին Գէորգեա րաբունեաց պետի եւ քաջ փաղերայի՝ ի բանն որ ասէ. Արթուն կացէք...* - Եւ արդ, գիտելի է, զի նախախնամութիւն Աստուծոյ...

ԺԲ. 370բ-374ա *Նորին Գէորգեայ քարոզ ի բանաւորին, որ ասէ. Թէ աջ ակն քո կամ ձեռն գայթագղեցուցէ, խլեայ եւ ընկեայ ի քենէ* - Արդ, զոր աւրինակ ոք կամիցի ի նաւարկութիւն վաճառաշահութեան ընթանալ...

ԺԳ. 374ա-376բ *Նորին ի բան մարգարէին, որ ասէ. Ես առ Աստուած կարդացի...* - Յաղագս աղոթից ուսուցանէ...

ԺԴ. 376բ-378ա *[Մանունք]*

ԺԵ. 378բ-380բ *Նշանագիրք իմաստնոց*

ԺԶ. 380բ-381բ *Տիեզերալոյս վարդապետին (Գէորգեա՞յ) արարեալ* - Ինքն է միայն եւ ընկեր չունի /Իւր գոյութիւն յոյժ հրաշալի...

ԺԷ. 381բ-382բ *(Պատմութիւն բարոյական)*

ԺԸ. 382բ-385բ *Բան իմաստասիրական*

ԺԹ. 385բ-386բ *[Օրհնութիւնք]*

N 8503

Ժամանակ՝ XVդ.: Գրիչ՝ Սարգիս Ղրիմեցի: Թերթ՝ 270: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 13,9×9,1: Գրություն՝ միասյուն: Գիր՝ նոտրգիր: Տող՝ 29,25: Հիշատակարան նախագաղափար օրինակի՝ 258ա (1383թ.), 147բ (1401թ.), գրչի՝ 53ա, 91բ[3]:

Բովանդակություն

Ա. 2ա-147բ *[Ոսկեփորիկ]*

Բ. 149ա-153ա *[Բան իմաստասիրական]* - Հասարակ բաժանական որպէս կերակուր եւ անդաստան...

Գ. 153բ-156ա *Համառաւտ վերլուծութիւն Պորփիւրի դժուարալուծիցն ի յերկասիրութենէ մեծ հռետորին հայոց Յոհաննու Որոտնեցոյ* - Զինչ է սահման ընդհանուրին...

Դ. 158ա-205բ *Եռամեծին Յոհաննու Որոտնեցոյ հայոց փիլիսոփայի եւ վարժապետի հաւաքումն համառաւտ վերլուծութեան Ստորոգութեանցն Արիստոտելի* - Ստորոգութիւնք վասն այն կոչին՝ նախ ըստ բառին...

Ե. 206ա-258ա *Նորին Յոհաննու Որոտնեցոյ համառաւտ լուծմունք Պերիարմենիաս գրոցն* - Բան. Սկիզբն եւ Նախադրութիւն: Լուծմունք. Նոյն նախադրեալ բանքդ...

Զ. *[Բանք աստուածաբանականք]*

1. 258բ Եւ արդ, գիտելի է, զի մարդն նման է ստուերին...

2. 259ա-261բ Պողոսի յԱռաջին Կորնթացւոց. Թէ յորժամ տղայ էի...

Է. 262ա-270բ *Լուծմունք Աշխարհաց գրոց: Արարեալ Դաւթի փիլիսոփայի* -

3. Ձեռագրական միավորների արտաքին նկարագրությունն ըստ «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի». հտ. Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Ե., 1970, էջ 38, 759:

Իմաստուն ստորոգիչս զաշխարհէ բնախօսութիւն առնէ...

Տպագիր

Ժամանակ՝ 1746թ.: Վայր՝ Կ. Պոլիս: Տպ. Աբրահամ Թրակացու: Տիտղ. «Գիրք որ կոչի Ոսկէփորիկ: Արարեալ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Տաթևացւոյն եօթնալոյս վարդապետի: Ի հայրապետութեան տեառն Ղազարու սրբազան կաթուղիկոսին: Եւ ի պատրիարքութեան սրբոյն Երուսաղեմի և Կոստանդնուպօլսոյ տեառն Գրիգորի և տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետացն»:

592 զարդափակ էջ: 146, 580, 582, 584, 586, 588, 589, 590-րդ էջերը համարակալված չեն: Ութածալ, մամուլանիշերը հայատառ: Շարվ. չափը շրջանակով՝ 12,6×8,2սմ: Տիտղ. արձանազարդ խորանի մեջ: Առաջաբանը էջախորաններով: 5 փորագիր պատկեր՝ չափածո մակագրություններով. 147-րդ էջի նկարի վրա «ԱԲ» (Աբրահամ Թրակացի) և 364-րդ էջի վրա «ԳՐ» (Գրիգոր Մարզվանեցի) փորագրողների անվանատառերը: Գլխազարդեր, վերջազարդեր և զարդագրեր: Բնագիրը մոտ 10 կետաչափի բոլորգրով, օգտագործված են նաև գլխագրեր և նոտրգիր[4]:

Բովանդակություն

Ա. էջ 2-5 *Առաջաբանութիւն. նախերգանօրէն յայտարարութիւն առ ընթերցօղսն: Արարեալ տեառն Յակոբայ աստուածաբան վարդապետի և պատրիարքի Կոստանդնուպօլսոյ: Ի խնդրոյ Ղափանցի մահտեսի Շահնազարին* - Գերասպատիւ և հոգելի ճշմարտաբան...

Բ. էջ 6-572 *[Ոսկեփորիկ]*

- էջ 573-579 *Յիշատակարան յարմարողի գրքոյս*

Գ. էջ 579-582 *Տաղ սրբոյն Գրիգորի Տաթևացւոյն: Ասացեալ ի Գէորգեայ Աբեղայէ Մանկնեցւոյ* - Ի յԱստուծոյ նախ քան զաշխարհս ընտրեցեալ /Հազարապետ խորհրդոյ տեառն պատշաճեալ...

- էջ 582-591 *Յանկ գրքոյս ըստ այբուբենից*

- էջ 592 *Յիշատակարան տպեցման սուրբ մատենիս* (տե՛ս տպ. Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան, Հայ գիրքը..., էջ 384):

***

Շարադրանքի մեջ կլոր փակագծում բերված պարզաբանումները թարգմանչինն են:

Ծանոթագրվող հատվածները համարակալված են:

«Ծանոթագրություններ» բաժնում օգտագործված ձեռագրերը նույնպես Մաշտոցի անվան Մատենադարանինն են:

Հարկ եմ համարում խորին շնորհակալությունս հայտնել Մայր Աթոռի միաբան հգշ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանին՝ նրա կատարած օգտակար ճշգրտումների համար:

ՀԱԿՈԲ ՔՅՈՍԵՅԱՆ

4. Արտաքին նկարագրությունը ըստ Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան «Հայ գիրքը 1512-1800թթ., հայ հնատիպ գրքի մատենագիտություն», Ե., 1988, էջ 383:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

3 *Նախ՝ կանսական կերպով արքայության և ծածկված գանձի մասին:*

6 *Երկրորդ՝ սկզբունքների մասին նախապես:*

8 *Երրորդ՝ աստվածաբանության մասին. Աստված ճանաչվում է հինգ կերպով, և չորս բան է պահանջվում գիտության մեջ:*

11 *Չորրորդ՝ նրանց, ովքեր ասում են, թե Աստված չկա:*

13 *Հինգերորդ՝ այն մասին, թե կա և գոյություն ունի արարածների Արարիչ:*

18 *Վեցերորդ՝ նրանց [մասին], ովքեր ասում են, [թե] բազում աստվածներ [կան]. կռապաշտության, դևերի, աստղերի և այլ պաշտամունքների մասին:*

26 *Յոթերորդ՝ նրանց [մասին], ովքեր ասում են, [թե] երկու աստվածներ կան:*

32 *Ութերորդ՝ այն [մասին], թե Աստված մեկն է՝ բնական քննությամբ ու Սուրբ Գրքով, այլև կանսական մտքեր:*

40 *Իններորդ՝ անձերի երրորդության մասին. առարկություններ և պատասխաններ:*

42 *Տասներորդ՝ այն մասին, որ ճշմարիտ Երրորդությունը Սուրբ է՝ հաստատված Սուրբ Գրքով, վկայություններով, աշխարհական իմաստունների [խոսքերով] և տասն օրինակով:*

50 *Տասնմեկերորդ՝ ընդդեմ Արիոսի [քաղված]՝ Սուրբ Գրքից, որովհետև [այնտեղ] ասվում է՝ Լույսը Լույսից է:*

53 *Տասներկուերորդ՝ պատասխաններ ընդդեմ հոգեմարտի, և [այն մասին], որ Սուրբ Հոգին Աստված է:*

56 *Տասներեքերորդ՝ ընդդեմ նրանց, ովքեր ասում են, թե [Սուրբ] Հոգին Հորից և Որդուց է. ընդդիմախոսություն և պատասխաններ. հարցումներով, օրինակներով և վկայություններով ցույց է տրվում, թե Սուրբ Հոգին բխում է Հորից:*

60 *Տասնչորսերորդ՝ համագո Սուրբ Երրորդության մասին՝ կարճառոտ խոստովանությամբ:*

Այսքանն առաջին հատորում՝ Սուրբ Երրորդության մասին:

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

65 Տասնհինգերորդ՝ Բանի մարդեղության մասին՝ չորս նախադրությամբ. առաջին՝ ուրացողների առարկությունը, երկրորդ՝ թե պատշաճ էր Բանին մարդանալ, երրորդ՝ որ Բանը մարդ եղավ, չորրորդ՝ որ մեզ համար մարդացածը ճշմարիտ Աստված է: Եվ նույն այդ մասին, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ մարմնով Աստվածը՝ մեկ է:

72 Տասնվեցերորդ՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մասին վկայություններ՝ Պողոս առաքյալն ասում է. Բազմաթիվ մասերով: Նույն հավիտենական լույսն է և [նույն] նկարագիրը, կրելը, սրբությունը, բազմելը և Աստծո մեծությունը:

75 Տասնյոթերորդ՝ Տիրոջ և հրեշտակների բաղդատվելը. Աթոռը, Արդարությունը. օծյալների մասին. սկզբից հաստատված էր երկիրը, և [այն մասին], որ դրախտը չի ապականվում. Տնօրինության ոտքը, և թշնամիները, հարկավոր հոգիները, Աբրահամի զավակից է սկսում:

80 Տասնութերորդ՝ թե՛ սուրբ եկեղեցին հրեշտակներից բարձր է, և Քրիստոսից և Ադամից մի փոքր ցածր:

82 Տասնիններորդ՝ առաջին և երկրորդ Ադամի բաղդատվելը, եկեղեցու և Ադամի մասին:

84 Քսաներորդ՝ մեր Տիրոջ և մարգարեների մասին: Դարձյալ Մովսեսի և Տիրոջ, ինչպես նաև՝ բոլոր մարգարեների և Տիրոջ բաղդատվելը:

87 Քսանմեկերորդ՝ ընդդեմ հրեաների. հին քահանաների և Տիրոջ բաղդատվելը. Աստծո առաքելության և երդման մասին:

90 Քսաներկուերորդ՝ Մելքիսեդեկի և Տիրոջ բաղդատվելը, տասանորդի խորհրդի հոգևոր մեկնաբանությունը, Աբրահամի տոհմակիցները վճարում են տասանորդը. նրանց խորհուրդը:

93 Քսաներեքերորդ՝ հրեաներին տրված պատասխանը Սինայի օրենքների մասին: Անդրանիկների հոգիները. Աստված ճարակող հուր է. դառնանք մեզ և դիտենք մեր ներսը:

ՀԱՏՈՐ ԵՐՐՈՐԴ

99 Քսանչորսերորդ՝ Սուրբ Գրքում եղած բոլոր վկայությունները Բանի տնօրինության մասին. առաջին՝ Աստծո Բանի նախանկար երևումը նահապետներին և մարգարեներին. և ապա՝ մարգարեների վկայությունները, որոնք խոսեցին Քրիստոսի մասին: Հետո Քրիստոսի ծննդյան մասին՝ Ադամից սկսած և դրանից հետո վկայված:

106 *Քսանհինգերորդ՝ մեր Տիրոջ մասին վկայություններ Մատթեոսի Ավետարանից՝ կարգով դրված, նրա հետ նաև Մարկոսից բերված:*

111 *Քսանվեցերորդ՝ Տիրոջ մասին վկայություններ Ղուկասի Ավետարանից՝ կարգով համառոտված:*

114 *Քսանյոթերորդ՝ Տիրոջ մասին վկայություններ՝ կարգավորված Հովհաննես Ավետարանչից:*

118 *Քսանութերորդ՝ մեր Տիրոջ մասին վկայություններ Պողոս առաքյալի բոլոր թղթերից՝ համառոտված:*

122 *Քսանիններորդ՝ մեր Տիրոջ մասին վկայություններ՝ ասված Գործք առաքելոց գրքում:*

127 *Երեսուներորդ՝ մեր Տիրոջ մասին վկայություններ՝ հավաքված կաթողիկե յոթ թղթերից, այսինքն՝ Հակոբի, Պետրոսի, Հովհաննեսի և Հուդայի:*

132 *Երեսունմեկերորդ՝ մեր Տիրոջ մասին վկայություններ Հովհաննես Ավետարանչի Ննջումից, որ սկսվում է «Եղբայրների մեջ էր» [խոսքով]:*

134 *Երեսուներկուերորդ՝ մեր Տիրոջ մասին վկայություններ Հովհաննես Ավետարանչի Տեսիլքից՝ յոթանասուներկու գլխով թվակարգված, և յուրաքանչյուր խոսքից հետո կարգված դրա փոքրիկ մեկնությունը:*

150 *Երեսուներեքերորդ՝ մեր Տիրոջ մասին վկայություններ յոթ ուղղափառ վարդապետներից, այսինքն՝ մեր Գրիգոր Լուսավորչից, Գրիգոր Աստվածաբանից, Գրիգոր Սքանչելագործից, Բարսեղ Կեսարացուց, Եպիփանոս Կիպրացուց, Կյուրեղ Ալեքսանդրացուց և Ալեքսանդրիայի մեծն Աթանաս հայրապետից:*

ՀԱՏՈՐ ՉՈՐՐՈՐԴ

159 *Երեսունչորսերորդ՝ անհավատների ութ հիմնական հարցումներն ու դրանց պատասխանները: Նաև չորս վկայություններ, թե՝ Քրիստոսն Աստված է: Նաև տեսությունը երեքն է: Եվ թե՝ առավել է, քան մարդը: Մարդու Որդի և Աստծո Որդի է կոչվում:*

162 *Երեսունհինգերորդ՝ Տիրոջ ծննդյան մասին: Այլ է Քրիստոսի ծնունդը: Նույնի մասին չորս կերպով: Թլփատության մասին, թե ինչո՞ւ կարգվեց թլփատությունը: Եվ թե՝ ի՞նչ էր նշանակում: Եվ թե՝ ինչո՞ւ թլփատվեց: Եվ թե՝ մենք չենք թլփատվում:*

166 Երեսունվեցերորդ՝ Տիրոջ մկրտության մասին, որի կարիքը չուներ: Եվ թե՝ Քրիստոսն ինչո՞ւ մկրտվեց: Եվ թե՝ մեզ ի՞նչ օգուտ է մկրտվելը: Մեկ հավատք, մեկ մկրտություն, և մենք մեկ անգամ ենք մկրտվում:

168 Երեսունյոթերորդ՝ Քրիստոսի կրքերի մասին: Եվ ավելորդ ծորում չունեցավ: Եվ կրքերով մեզ բժշկեց: Նաև նույնի մեջ Քրիստոսի աղոթքի մասին: Չորս պատճառով էր աղոթում: Բայց և բացում պատճառով աղոթեց Ղազարոսի գերեզմանի վրա:

171 Երեսունութերորդ՝ Քրիստոսի մահվան մասին, որ մահ ճաշակեց: Եվ ինչո՞ւ մեռավ Քրիստոս: Եվ թե՝ մի անգամ մեռավ: Եվ թե՝ պատարագը մեկն է: Եվ թե՝ արյամբ մեռավ: Եվ թե՝ խաչով մեռավ: Եվ քառաթև է խաչը: Եվ խաչի նշանակը: Խաչի վրա յոթ խոսք ասաց: Մարգարեների վկայությունները Տիրոջ չարչարանքների մասին:

177 Երեսունիններորդ՝ Տիրոջ թաղման մասին: Մարգարեների վկայությունները Քրիստոսի թաղման մասին, թե՝ ինչո՞ւ թաղվեց:

180 Քառասուներորդ՝ Տիրոջ և ընդհանուր հարության մասին, թե՝ կրկնակի է հարությունը: Եվ բոլորինն է հարությունն ու անմահությունը: Եվ հարուցյալների հասակի մասին, այն որ մարմնավոր կերակուր չէ: Եվ Քրիստոսը հարությունից հետո կերավ: Հարության օրինակի մասին: Արդարների յոթ պարդերի մասին: Եվ նույնի մեջ Քրիստոսի հարության մասին: Եվ թե՝ կատարյալ հարությամբ հարություն առավ: Եվ անփոփոխելի է Քրիստոսի մարդեղությունը: Եվ փա՛ռք հարությանը:

186 Քառասունմեկերորդ՝ տասը հարցումներ Տիրոջ հարության մասին. նախ՝ շաբաթ երեկոյան: Հարության օրվա և ժամի մասին: Թե քանի՞ ժամ մնաց գերեզմանում: Եվ յուղաբեր կանանց մասին, որոնք չորս անգամ եկան: Իջած հրեշտակների մասին: Ինչո՞ւ կանանց երևաց: Թե՝ գողանալը սուտ է: Վարշամակը և կտավը: Հարության վկաները: Հարության հրաշքները, թե՝ Քրիստոս ինչպե՞ս հարություն առավ: Եվ թե՝ փութով հարություն առավ:

196 Քառասուներկուերորդ՝ ուղղափառների հակաճառությունները ընդդեմ երկաբնակների ժողովի: Հարցումներ և նրանց պատասխանները ըստ իմաստասերների խոսքերի: Հոմանո՞ւն, թե՞ նույնանուն և այլն: Եվ հարաբերությունը: Եվ ըստ թվաբանության: Գիծը, մակերևույթը և մարմինը՝ հոգեպես դիտված: Եվ դարձյալ՝ վեց հարցում երկաբնակներին. Քրիստոսը մե՞կ է, թե՞ երկու:

202 Քառասուներեքերորդ՝ երկաբնակների հարցումները ուղղափառներին Քրիստոսի մեջ անձի և բնության մասին՝ տասը գլխով: Նույնի մեջ Քրիստոսի մեկ կամքի և մեկ ներգործության մասին: Դարձյալ հարցումներ երկաբնակներին, որոնք ուրանում են Քրիստոսի մեկ լինելը և երկուսի են բաժանում՝ տասը գլխով:

207 *Քառասունչորսերորդ՝ էության, բնության, անձի, գոյացության և անհատի մասին։ Բանակը և տեղը։ Հարցումներ երկաբնակներին։ Եվ թե՝ ինչո՞ւ են նրանք հրաժարվում միավորությունը բնությամբ ասել։ Եվ ի՞նչ է ծայրագույն միավորությունը։ Եվ թե՝ Քրիստոսի համար ի՞նչ է հարկ ասել. մի բնությո՞ւն, թե՞ մի անձ, թե՞ երկու անձ, ինչպես նեստորականները։ Եվ թե՝ ո՞րն եք ուրանում, երբ Քրիստոսի համար մեկ բնություն եք ասում։ Կամ թե՝ ո՞րն եք ուրանում, երբ Քրիստոսի երեք գոյացություններում երկու բնություն եք ասում։ Եվ ինչպե՞ս պետք է փախչենք Նեստորի բաժանումից և Եվտիքեսի շփոթումից։ Եվ Քրիստոսի ճշմարիտ միավորության մասին։ Մեկ բնություն ասելը հաստատված է սուրբ վարդապետների վկայություններով։*

214 *Քառասունհինգերորդ՝ երկաբնակների հարցումները, թե՝ Քրիստոսի մարդեղությունը տեսնո՞ւմ է Աստվածությունը, թե՞ ոչ։ Եվ պատասխանները՝ երեսուն գլխով։*

ՀԱՏՈՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

223 *Քառասունվեցերորդ՝ Վահրամ վարդապետի՝ Սուրբ Երրորդության և մեկ Աստվածության մասին Սուրբ գրքի վկայությամբ հաստատված [խոսքն] է։*

244 *Քառասունյոթերորդ՝ հավատի դավանությունն է՝ տասնչորս գլուխներով, նույնի մեջ նաև՝ մտքի տեսության ու բանականության սկզբի և ավարտի մասին։*

246 *Քառասունութերորդ՝ հավատքի ճշմարտության մասին է, [այն մասին, որ] տարբեր է բանականությամբ քննությունն ու հավատի տեսությունը։*

247 *Քառասունիններորդ՝ հավատի, հույսի և սիրո մասին է, ու նաև՝ թե ինչպես են սրանք պանպանվում։ Նույնի մեջ նաև՝ հավատի և գործերի մասին։*

249 *Հիսուներորդ՝ հավատքի և գործերի մասին։*

250 *Այս գիրքը հորինողի հիշատակարանը։*

257 Ծանոթագրություններ

272 Անունների ցանկ

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Մեր սուրբ Հայր, յոթնալույս վարդապետ Գրիգոր Տաթևացու անեղծած գիրքը, որ կոչվում է
ՈՍԿԵՓՈՐԻԿ:

Բարեպաշտ իշխան Սմբատաշահի հարցումները և աշակերտ Գրիգորի պատասխանները: Նախ Սուրբ Երրորդության, ապա՝ Բանի մարդեղության մասին՝ հավաքված Սուրբ Գրքից և ուղղափառ վարդապետներից:

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Գլուխ Ա

Երկնքի արքայության մասին

«Երկնքի արքայությունը նման է ագարակում թաքցրած գանձի» (Մատթ 13.44) ասում է Ճշմարտությունը Ավետարանում: Արքայություն է անվանվում նաև միաստանական, անբաժանելի Սուրբ Երրորդությունը, որի համաձայն մարգարեն ասում է. «Քո արքայությունը հավիտենական արքայություն է» (Դան 7.27), և նա ծածկված է անմատչելի լույսով և անփոփոխանալի փառքով:

Երկրորդ արքայությունն է կոչվում նաև Քրիստոս, Որդին Աստծո, որի համաձայն ասում է «Ապաշխարեցեք, որովհետև մոտեցել է Աստծո արքայությունը» (Մատթ. 3.2, 4.17): Որովհետև Տերը նաև երկնքի արքայության տվողն է: Եվ այն (արքայությունը) թաքնված է մարմնի ագարակում:

Երրորդ արքայությունն է կոչվում նաև Քրիստոսի առաջին գալուստը, համաձայն այն (խոսքի թե) «Ձեզ վրա է հասել Աստծո արքայությունը» (Մատթ. 12.28): Եվ այն կոչվում է արքայություն, որովհետև Հարությամբ փրկություն և Հոգիների առաջին արքայությունը արարեց:

Չորրորդ արքայությունն են կոչվում Սուրբ Գրքերը և Արքայի Ավետարանը, համաձայն որի «Ձեզնից կվերցվի արքայությունը և կտրվի այն ազգին» (Մատթ. 21.43): Եվ այն քողարկված է օրինակով և առակավոր խոսքով:

Հինգերորդ արքայությունն է կոչվում Սուրբ Եկեղեցին, որովհետև բնութենակից վերին արքայությանը, ինչպես ասում է «Արքայությունը նման է ուռկանի և բոլոր ազգերի ժողովի» (Մատթ 13.47): Եվ նա քողարկված է բառ կյանքի փոխաման:

Վեցերորդ արքայությունն են կոչվում եկեղեցու խորհուրդները, որովհետև արքայությունը կոչ է, որի մասին ասում է «Արքայությունը նման է խմորի, որ թաքցվեց, մինչև ամբողջը խմորվեց» (Մատթ. 13.33): Եւ այն ծածկված է մարմնական նյութերով:

Յոթերորդ արքայություն է կոչվում Հավատքը, համաձայն որի «Երկնքի արքայությունը նման է մանանեխի հատիկի» (Մատթ.

13.31), որ փոքր է և աճում է. ու թաքնված է սրտի մեջ:

Ութերորդ՝ արքայություն է կոչվում մարդու հոգին, ըստ այն [խոսքի, թե] «Աստծո արքայությունը ձեր մեջ է կոծկված» (Ղուկ 17.21): Եվ սա կոչվում է արքայություն, որովհետև երկնքի արքայի պատկերն է:

Իններորդ՝ արքայություն է կոչվում [Տիրոջ] երկրորդ գալուստը. «Երբ Մարդու Որդին կգա իր արքայությամբ և սուրբ հրեշտակներով» (Մատթ 13.41, 16.27): Եվ այն արքայություն է կոչվում, որովհետև արքայության փառքը տալիս է իրեն սիրողներին, և այժմ ծածկված է վարագույրի ետևում՝ հայրական փառքի աջ կողմում:

Տասներորդ՝ արքայություն է կոչվում նաև երկնքի ժառանգությունը, և նա կոծկված է երկնքում. «Որն աչքը չտեսավ և ականջը չլսեց» (Ա Կոր 2.9): Որի մասին ասում է. «Եկե՛ք, իմ Հոր օրհնյալներ, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ի վեր ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ 25.34): Իսկ այսպիսի արքայությունն անվանում է թաքցրած գանձ: Եվ քանի որ գանձ է, ուրեմն փարթամություն և հարստություն է: Դարձյալ՝ այն [իրենց մեջ] ունեցողների համար շահ և օգուտ է: Եվ քանի որ գանձ է, ապա կուտակված և բազում է: Դարձյալ՝ խնդություն և զվարճություն է: Գանձ է, ուրեմն ցանկալի և սիրելի է: Եվ դարձյալ՝ ձեռք բերելի և գործածելի է: Եվ դարձյալ՝ գանձ է, ապա ուրեմն պատվական է: Դարձյալ՝ փրկություն է, ըստ որի. «Օրենքով կմատնվեն և գանձերով կլինի նրանց փրկությունը: Հասավ իմաստությունն ու աստվածապաշտությունը» (Հմմտ Եսայի 33.6): Սրանք են արդարության գանձերը. հաստատում է մարգարեն: Եվ Իմաստությունն այսպիսի գանձը թաքցված է անվանում չորս պատճառով.

Նախ՝ որովհետև չարերին անմատչելի է, ինչպես Ճշմարտությունն է ասում. «Ձեզ տրված է իմանալ արքայության խորհուրդները» (Մարկ 4.11), իսկ նրանց տրված չէ:

Երկրորդ՝ թաքցված է՝ ապա ուրեմն մնայուն է, ըստ որի՝ «Ձեզ համար գանձեր դիզեք երկնքում, քանզի ուր ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սրտերը պիտի լինեն» (Մատթ 6.20,21):

Երրորդ՝ քանի որ թաքցրած է, ապա ուրեմն փնտրելի և քննելի է, համաձայն որի ասում է. «Քննեցե՛ք գրքերը» (Հովհ 5.39) հրամայում է Տերը:

Չորրորդ՝ քանի որ թաքցրած է, ապա ուրեմն կգտնվի փնտրողների կողմից: «Քանզի յուրաքանչյուր ոք, ով փնտրի՝ կստանա, ով խնդրի՝ կգտնի, և ով դուռը բախի՝ կբացվի նրա առաջ» (Մատթ 7.8):

Արդ, ագարակի այս գանձի համար հրամայում է. «Ամենայն ինչ վաճառել և գնել այդ ագարակը» (Մատթ 13.44): Ո՞ր «ամենայն ինչ»-ը. մերը, մեր մեջ և մեր շուրջ [եղածը]:

Նախ, [այն], որը մերն է, այսինքն՝ մարմինը, հոգին և միտքը:

Երկրորդ՝ որը մեղմանում է, այսինքն՝ հաստատուն հավատը, աներկբա հույսը և սուրբ սրտից [բխած] սերը. նաև խոնարհությամբ և արիությամբ, ողջախոհ ցանկությամբ և արդար առաքինությամբ:

Երրորդ՝ որը մեր շուրջն է, այսինքն՝ կյանքի ժամանակը, զգայությունների հանդիպումը, մարմնական բաները, բոլոր ազգականները՝ հայրը, մայրը, կինը, որդին և այլն: Պարտավոր ենք այս բոլորը ատել և այսպես Աստծո արքայությունը գնել. «Նա է ինձ արժանի, ով կթողնի իր հորը, մորը և ամեն ինչ, ինչպես նաև՝ իր մարմինը և կառնի չարչարանքի խաչը և կգա իմ հետևից» (Մատթ 10.37,38, Ղուկ 9.23): Որովհետև, համաձայն առաքյալի, «Այս ժամանակի չարչարանքները արժանի չեն հանդերձյալ փառքին, որ հայտնվելու է մեզ» (Հռոմ 8.18), ասում է:

Ինչպես դու երևում ես [որպես] լուսո որդի և ավնչյան զավակ, վերին Սիոնի հարազատը և ավագ, ըստ հոգու, Մատուաշահ[1] եղբայր, որ հետամուտ եղար թաքցված գանձին և մեծագին մարգարտին: Եվ գտար մի անխառն մարգարիտ, որը գին չունի: Ճշմարտությունը մեկ է և չի ճեղքվում ու բաժանվում: Այլև մեկ և միակն է նրան հավատացողների ստացած հարստությունը: Իսկ անհավատները, ովքեր չունեն նրան և չգիտեն նրա հարստությունը և չեն հարստանում նրանով, արհամարհում և ոտնահարում են այն: Այս պատճառով Ճշմարտությունն ասում է. «Մի՛ տվեք սրբությունը շներին և ձեր մարգարիտները՝ խոզերին» (Մատթ 7.6):

Գլուխ Բ

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բոլոր գոյությունների սկիզբն Աստված է, բոլոր բարիքների սկիզբը սերն է, բոլոր շնորհների սկիզբը խոհականությունն է:

Առաջին՝ բոլոր գոյությունների սկիզբն Աստված է. որովհետև նրանից են սկսվում և առաջանում երևելի և աներևույթ արարածների բնությունները: Նրանք բաժանվում են սեռերի և տեսակների և տրոհվելով կերպարանավորվում յուրաքանչյուրն ըստ իր պատշաճ ձևի և կերպի:

Երկրորդ գլուխ՝ բոլոր բարիքների սկիզբը սերն է, որովհետև նրանից են ծնվում զանազան բարիքների բոլոր բույլերը՝ [սեր] առ Աստված, [սեր] առ հրեշտակները, [սեր] առ մարդիկ:

Նախ՝ [սեր] առ Աստված՝ որովհետև նա սիրուց գրգված գոյացրեց բոլոր արարածներին: Եվ իր պատկերի (մարդու) նկատմամբ ունեցած սիրուց Հայրը չխնայեց իր Որդուն, Որդին չխնայեց իր անձը, [Սուրբ] Հոգին չխնայեց իր հարատև բախելը մարդկանց [սրտերը]:

Երկրորդ՝ [սեր] առ հրեշտակները. որովհետև [նրանք] անկոտրում կամքով և անխզելի սիրով միշտ կապված են Աստծո հետ, և միշտ մարդկանց մասին են հոգում՝ գոյակից և ծառայակից լինելով մեզ:

Երրորդ՝ առ մարդիկ. որովհետև սիրուց են ծնվում բոլոր հոգևոր և մարմնավոր բարիքները. հոգևոր՝ որովհետև իրենց անձերը ի սեր արքայության մատնում են մահվան, զանազան տանջանքների, երկարամյա անտանելի ճգնության: Մարմնավոր, այսինքն՝ ըստ աշխարհի այն աստիճան, որ նույնիսկ ցնորվում են և անկարելին ձեռնարկում:

Երրորդ գլուխ՝ բոլոր շնորհների սկիզբը խոհականությունն է, որովհետև խոսքի և արհեստների մեջ [առկա] մարդկանց հոգևոր և մարմնական բոլոր շնորհները [նախ] մտքում են մտածվում, և երկարատև կշռադատումից, լավի ու վատթարի, օգտակարի և վնասակարի ընտրությունից հետո միայն գոյանում է իմաստը և խոսքը կամ կատարյալ արվեստը, որ կատարյալ ծնունդն է խոհականության ընտիր ծնողի:

Արդ, Աստված մարդուն ամենայն ինչով ստեղծեց իր նմանությամբ և այս երեքը դրեց նրա մեջ, որի [շնորհիվ] ամենայն ինչով նմանվում է Աստծուն, այսինքն՝ նախ արարչագործությամբ, երկրորդ՝ սիրով, երրորդ՝ խոհականությամբ: Արարչագործությամբ, որով արարչակից է լինում Ստեղծողին: Սիրով, որով փափագում է ցանկալիին և մշտապես ջանում է հասնել և վայելել այն: Խոհականությամբ, որով զատվում է անբաններից և կարող է մտածել պիտանիի և անպիտանի [մասին], և ուսմամբ ու ջանադրությամբ հասնել կատարյալ հասակի:

Դարձյալ՝ թե ինչպես են [մարդիկ] արարչակից լինում Աստծուն: Վարդապետները ահա հոգիներին դարձնում են իմաստուն, քահանա-

ները ախտավոր ծնունդներին՝ անախտ, մարդկանց՝ աստվածներ: Իսկ արհեստավորները տձև առարկաներից ստեղծում են հարմարավորներն ու պիտանիները. ինչպես հյուսները մայրի [փայտից]՝ սեղան և աթոռ, կարողները՝ կոշիկներ և գդակներ, դարբինները՝ քարերից՝ երկաթ և երկաթից՝ սուսեր և զանազան գործիքներ:

Ահա այս բոլորով մարդիկ նմանվում են Աստծուն և կոչվում արարչակից: Այդ պատճառով մարդը չի կարող այդ երեքը թաքցնել իր մարմնի մեջ, այլ միշտ եռում է [հրայրքով և] կայտառությամբ և ջանում գործ ձեռնարկել, որովհետև ձգտումն ու կերպավորումը ազգակից են: Եվ այսպես հղանալով գործում և արդելում են թե՛ բարին և թե՛ չարը: Մտքի արգանդից առնելով սերմը [միտքը], միշտ մտածում է խոհականությամբ և ստեղծում է պիտանի միջոցներ և ձգտում է ծնել և իրագործել բաղձալին: Եվ ապա լույս աշխարհ հանելով գործադրում է այն, ինչ սիրով հղացավ, և ներդաշնակելով խոհականությանը՝ լինում է այն առարկայի ստեղծիչը:

Ես՝ բոլոր մարդկանցից վատթարագույնս, եկեղեցու հետին ծնունդս՝ լի անկարգությամբ և լույսից ծուլությամբ լքված և շնորհներից զրկված՝ չկարողացա կրել այս բոլոր արարչական պարգևները, որ մեր բնության մեջ են: Սակայն ստանալով սերմը, սիրուց [գրգռված] վաղ տարիներից [ի վեր] իմ մեջ եռում էր բաղձանքը: Եվ խորհում, խոկում և ձգտում էի կատարել մի ոմն բանասերի խնդիրքն այս առարկայի մասին, որի վերաբերյալ վերը ակնարկվեց: Եվ այժմ սկիզբը դնելով Սուրբ Հոգով սկսում եմ: Եվ դուք մաքրեցեք ձեր սրտերը և լսելիքները, որովհետև անսրբությամբ չի [կարելի] հպվել սրբություններին. ինչպես սկար աչքը՝ արևի լույսին կամ մերկ ձեռքը՝ շիկացած երկաթին, որից տեսողությունը ավելի է նվաղում և ձեռքը՝ վիրավորվում:

Նախ և առաջ այսքանը:

Օգնիր Սուրբ Հոգի Աստված:

Այս գրքի առաջաբանի ավարտը:

Գլուխ Գ

ԱՍՏՎԱԾԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Տեսանողը բարձրագետ տեսությամբ, բնազանցական գերամբարձյալ բարձրությամբ, կայծակնամաքուր շքեղանքներով և սրբությամբ սնված աստվածաբանությամբ համարձակախոս ձայնը և բարձրալուր բարբառը, մարգարեներից մեծագույնը՝ Եսային աստվածագիտությունը երեք կերպով է բացատրում, այսինքն՝ ականջի լսողությամբ, մտքի իմացությամբ, աչքի տեսողությամբ: Առաջինի մասին ասում է. «Չլսեցի՞ք, չպատմվե՞ց ձեզ», երկրորդի մասին՝ «Մի՞թե չիմացաք և չտեղեկացաք» (Եսայի 40.21), և երրորդի մասին. «Վեր նայեք և տեսեք. ո՞վ ստեղծեց այս ամենը» (Եսայի 40.26): Այսինքն՝ նախնիների պատմությունից, մի շարք խրատություններից և զգալի [առարկաների] տեսքից այն ճշմարտության իմացությանն ենք հանգում, որից ճառագում է հավատքը:

Արդ, ի լրո առաջինի. [ասվում է] իր կողմից իր մասին, ուրիշի կողմից իր մասին, իր կողմից ուրիշի մասին, նաև՝ ուրիշի կողմից ուրիշի մասին: Իր կողմից իր մասին. «Ես՝ Տերս առաջինն եմ» և այլն (Հմմտ Եսայի 48.12): Ուրիշի կողմից իր մասին. «Ուստի հարկ է հավատալ, թե Աստված կա» (Եբր 11.6): Իր կողմից՝ ուրիշի մասին. «Ուրիշ Աստված չկա ինձանից բացի» (Ելից 20.3): Ուրիշի կողմից ուրիշի մասին. «Մարդկանց ձեռագործ [առարկաները] աստվածներ չեն» (Գործք 19.26):

Իսկ երկրորդը՝ ճշմարիտ Աստված ճանաչելի է իրերի կարգից. նախ՝ պատճառից, երկրորդ՝ սկզբից, երրորդ՝ մեկից:

Նախ՝ պատճառից. որովհետև բոլոր պատճառավորները պատճառ են պահանջում և սա էլ պատճառ է այլ պատճառի, և այսպիսի անհուն բացահայտումը իմացություն չէ: Արդ, անպատճառ անհրաժեշտ է բոլոր պատճառավորների պատճառը, որ ինքն իսկ Աստված է:

Երկրորդ՝ սկզբից. որովհետև որևէ առարկա բնությամբ չի կարող սկիզբ լինել և սկսվել. ուստի հարկ է բոլոր սկզբնավորվածներին մի սկիզբ ունենալ: Արդ, եթե այդ սկիզբն անսկիզբ է, ուրեմն՝ գտանք փնտրվածը, իսկ եթե նաև այդ է սկսվում, ապա նրան էլ է անհրաժեշտ սկիզբ: Եվ այս կամ անբավությամբ [շարունակվում է], կամ գտնվում անսկիզբի սկիզբը, որ է Աստված:

Երրորդ՝ մեկից. որովհետև բոլոր բազմությունները մեկից են կազմվում, ինչպես տեսակը՝ անհատից, գիծը՝ կետից և թվերի բազմությունը՝ մեկից: Արդ, եթե այս մեկը բաղկացած է՝ այլևս մեկ չէ, իսկ եթե բաղկացած չէ, ուրեմն չկա բազմություն, այլ՝ մեկ, մեկ, և այս այսպես է: Սակայն մեկը կազմվում է պակասությամբ, և բնությամբ անկազմելի է: Արդ, ըստ այսմ, շատ են բազմությունները, ապա ուրեմն նաև՝ մեկերը, որովհետև ո՛չ նա սրա համար կարող է միակ լինել և ո՛չ սա նրա համար:

Այս պատճառով հարկավոր է այնպիսի միակ, որը բոլոր բազմությունների և միակների միակն է, որ Աստված ինքն է: Սա երկրորդն է: Իսկ երրորդ գլուխը զգայարաններով տեսանելի երկնքի և երկրի [մասին է]: Արդ, երկրի վրա տեսանելի է երեք բան. նախ՝ երկրի հաստատությունը և ջրերի ընթացքը: Երկրորդ՝ թագավորների, մեծահարուստների և աղքատների փոփոխումը: Երրորդ՝ օդի և բույսերի այլափոխումը: Այդպես էլ երկնքում է տեսանելի երեք բան. նախ՝ լայնատարած կամարը, երկրորդ՝ նրա գեղեցկությունը, երրորդ՝ անդադար շարժումը: Սրանցով իմացվում է, որ կա և գոյություն ունի դրանց ստեղծողը: Ըստ այսմ, բնագետ այրերից մեկն[2] արարչության վերաբերյալ միտքը բարձրացնելով առ Նախասկիզբը [ասում է], թե «Մեկը կա, որ շարժում է երկնային մարմինները, մեկը [կա], որ անմարմին, ամենազոր և անեղ է. այդ պատճառով անվախճան է, և նա Արարիչն է բոլոր արարածների, նրան է հարկ երկրպագել»:

Արդ, իմանալու է, որ Աստծո իմացությունը անվախճան և հավիտենական կյանք է, ըստ Փրկչի խոսման, որ ասում է. «Այս է հավիտենական կյանքը, որ միայն քեզ ճանաչեն ճշմարիտ Աստված, և [նրան], որին առաքեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ 17.3): Եվ մարդկային ճանաչողությունը հինգ եղանակով է:

Նախ՝ բնական քննությամբ, ըստ իմաստասիրական տեսության:

Երկրորդ՝ հավատքի ձեռքով, ինչպես այժմ հավատացյալներիս [ձեռքով], ըստ այս խոսքի. «Հարկ է հավատալ, թե Աստված կա» (Եբր 11.6):

Երրորդ՝ շնորհական [եղանակով]. ինչպես մարգարեներին մարմնական զգայություններով [տրված] երևակայությամբ և տեսիլքով:

Չորրորդ՝ առանձնահատուկ, արժանավոր սրբության շնորհիվ, միայն մտքի իմացության առանձնակի տեսությամբ. ինչպես Մովսեսին, ըստ այս խոսքի. «Ես՝ Տերս տեսիլքով և երազով եմ երևում և խոսում ձեզ հետ, սակայն իմ ծառայի՝ Մովսեսի հետ՝ դեմ-հանդիման» (Թվոց 12.6,7):

Սրանք ճանաչողություն են այս ժամանակի մեջ:

Հինգերորդ՝ հանդերձյալ [կյանքում]՝ դեմ-հանդիման՝ պայծառ տեսությամբ, ըստ առաքյալի. «Այժմ տեսնում ենք հայելու մեջ, իբրև օրինակ, իսկ այն ժամանակ՝ դեմ-հանդիման» (Ա Կոր 13.12), և Հովհաննեսը Կաթողիկե թղթերում. «Նրան կտեսնենք, ինչպես որ է» (Ա Հովհ 3.2): «Նրան, որ մերձենում է Աստծո, հարկ է հավատալ, թե Աստված կա» (Եբր 11.6), ասում է Աստծո բերանը՝ Պողոսը: Նրանք, որ կամենում են տաճար կառուցել, նախ հիմքն են ամրացնում և ապա շինությունը կառուցում: Արդ, մեր հավատի և սուրբ գիտության հիմքն Աստված է, այս պատճառով հարկ է Աստծո էությունն իմանալ և ապա՝ նրա ինչպիսին լինելը, որովհետև, ըստ իմաստունների, յուրաքանչյուր իրողության համար չորս բան է պահանջվում. նախ [այն], որ կա, երկրորդ, թե՝ ինչ է, երրորդ՝ ինչպիսին է, չորրորդ՝ ինչու է, և հետո ամբողջացնել առարկան:

Նախ՝ որ կան, պարզաբանելու է, որ բաղում են այն առարկաները, որոնք անվանված են, բայց ոչ էացած, ինչպես՝ ապալեղներն ու եղջերվաքաղները: Կան նաև [այնպիսիք], որոնք ունեն էություններ, ինչպես մարդը, ձին և այլն:

Երկրորդ՝ «ինչ է»-ի պարզաբանումը, որ էացածների բնությունն է բացորոշում. երբ ասում ենք՝ ինչ է Բրիտոոս, ինչ է մարդը, ինչ է ձին և այլն:

Երրորդ՝ «ինչպիսի»-ն կերպն է ցույց տալիս. երբ ասում ենք՝ ինչպիսի մարդ:

Չորրորդը «ինչու»-ի պարզաբանումն է, որ պատճառն է ցույց տալիս. ինչպես՝ մարդը աշխարհը զարդարելու համար է, մահճակալը՝ հանգստանալու:

Եվ արդ, իմանալու է, որ աստվածաբանությունը բաղկացած է այս չորսից, որոնցից երկուսը քննելի են, երկուսը՝ ոչ, այսինքն՝ այս աշխարհում Աստված քննելի և հավատալի է, իսկ «ինչպիսի»-ն երևում է հանդերձյալ կյանքում: Մինչդեռ «ինչու»-ն չի երևում ո՛չ այստեղ և ոչ հանդերձյալ կյանքում, որովհետև Աստծո բնությունն անտեսանելի է թե՛ հրեշտակների և թե՛ մարդկանց [համար]: «Ինչ պատճառով»-ը՝ նույնպես. որովհետև ո՞վ կարող է տալ բոլոր պատճառների պատճառը: Այս բոլորն իմանալով՝ այժմ եկեք մեր առաջիկա խոսքին: Աստծո մասին իմանալու է չորս բան. նախ այն, որ ոմանք ասում են, թե Աստված չկա, երկրորդ՝ ոմանք ասում են, թե բաղում աստվածներ [կան], երրորդ՝ ոմանք ասում են, թե երկու աստվածներ կան, չորրորդ՝ ոմանք ասում են. մեկ Աստված կա: Մեր առաջիկա խոսքը սրանց մասին է:

Գլուխ Դ

ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ԱՍՏՎԱԾ ՉԿԱ

Առաջին՝ հանդիմանենք նրանց, ովքեր ասում են, թե Աստված չկա, ըստ այն խոսքի թե՝ «Անզգամն իր սրտում ասաց, թե Աստված չկա» (Սաղ 13.1): «Անզգամը» նախ ամբարիշտն ու անհավատն է, երկրորդ՝ անմիտը, երրորդ՝ անզգամը, չորրորդ՝ հանդուգնը: Սրանք ասում են Աստված չկա, ինչպես Էպիկուրոսը և նրանց նմանները[3]: Բայց Սողոմոնն ասում է. «Պատասխան մի՛ տուր անզգամին ըստ նրա անզգամության» (Առակ 26.4), որովհետև հայտնապես սուտ են և պատասխանի անարժան: Եվ վրա է բերում. «Այլ պատասխան տուր անզգամին, որպեսզի իրեն իմաստուն ցույց չտա» (Առակ 26.5): Սակայն նախ տեսնենք նրանց պատճառաբանությունները, թե ինչ պատճառով անզգամեցին և ասացին, որ Աստված չկա: Վարդապետներն ասում են՝ երկու պատճառով: Առաջին՝ որովհետև, ըստ անասունների նմանության, այն, ինչ զգայությամբ է ընկալվում, միայն դրան են հավատում: Մինչդեռ Աստված զգալի չէ, այլ՝ իմանալի և միայն, պարզ հոգի է. այս պատճառով չեն հավատում: Ասենք, որ սա ընդունայն և սուտ է երեք պատճառով. նախ՝ մարդը իմացությամբ և մտքով զանազանվում է անասուններից: Մարդ, որ մտքի իմացություն չունի, նա մարդկային ցեղին չի [պատկանում], այլ՝ անասունների: Նա, ով Աստծուն չի ճանաչում, ավելի անմիտ է, քան անասունը, ինչպես ասում է Հոբը. «Լավ, հարցրու չորքոտանիներին, երկնքի թռչուններին և ծովի ձկներին, որպեսզի ասեն քեզ: Այս ամենով հանդերձ ո՞վ է, որ չգիտի, թե այս բոլորը Տիրոջ ձեռքը ստեղծեց» (Հոբ 12.7-9):

Երկրորդ պատճառը. որովհետև նրանք իրենց հոգիները չեն տեսնում, այլ միայն հավատում են գործերին, [մինչդեռ հոգին է, որ] շարժում և կենդանություն է տալիս մարմնին: Նույնպես երկինքը և [նրա] լուսատուները շարժող Աստծո գործերով հարկ է հավատալ Աստծուն: Եվ ովքեր չեն հավատում՝ դևերից չար են, ինչպես Հակոբոսն է ասում. «Դևերն էլ են հավատում և սարսափում» (Հակ 2.19):

Երրորդ պատճառը. որովհետև ամեն ոք, ով հավատում է իր ծնողներին՝ հորը և մորը, թեպետ ինքն իրեն չի տեսել ծնվելուց, կարիք չի զգում [դրա] վկայության, այլ բավարարվում է մարդկանց վկայությամբ: Այնպես էլ երկնավոր Հորը և Արարչին հարկ է հավատալ բոլոր իմաստունների, մարգարեների և բոլոր արարածների վկայություններով:

Սա անզգամների առաջին պատճառաբանության [պատասխանն] է:

Նրանց մոլորության երկրորդ պատճառն աշխարհի անկարգ ընթացքն ու չարություններն են, որոնք ներհակ կերպով ապականում են մեկը մյուսին: Ասում են, եթե բացարձակ բարի Աստված լիներ, թույլ չէր տա, որ աշխարհում չարություն լինի: Ասենք, որ այս խոսքերը սուտ են երեք

պատճառով.

Նախ՝ նրանց խոսքերից պարզվում է, որ կա Աստված, որովհետև ասում են, թե աշխարհում չարություն կա, ապա [ուրեմն] հարկ է, որ բարի էլ լինի, որովհետև իմաստասերներն ասում են, թե չարն [ինքը] այլ բան չէ, քան բարու պակասությունը: Արդ, եթե ինչ-որ բարի կա, որ պակասություն ունի, ապա հարկ է, որ բացարձակ և կատարյալ բարի լինի, որը ոչ մի պակասություն չունի, որ է [ինքն] Աստված:

Երկրորդ՝ ընդդեմ անմիտների ասենք, թե աշխարհի բազում չարություններն ու անկարգությունները, ստուգապես նշան են այն [բանի], որ Աստված կա: Որովհետև փորձագետներն ասում են, թե մեղքն այլ բան չէ, քան Աստծո օրենքների խախտումը, իսկ եթե չկա Աստված, [ապա] չկան ո՛չ օրենքներ և ո՛չ մեղք: Արդ, տեսնում ենք, եթե կա մեղք, ապա ուրեմն կա Աստծո օրենքը և՝ Աստված:

Երրորդ. ասում ենք, թե Աստված բոլոր արարածներին խնամում է հավասարապես. եթե բոլոր չարիքները վերացնեի՝ կվերանային նաև բազում բարիքներ. ինչպես [ասենք] եթե կենդանիները չհոշոտվեն, [գիշատիչ] գազանները ողջ չեն մնա, որովհետև գազանները սնվում են նրանցով: Եվ եթե բռնակալների հալածանքը չլիներ, չէր լինի սրբերի պսակը. այս պատճառով Աստված հանդուրժում է չարիքը, որպեսզի նրանից բարիք բխեցնի: Ապա ուրեմն՝ հայտնապես սուտ է անզգամների ասարկությունը, ովքեր ասացին՝ Աստված չկա:·

Դարձյալ ոմանք ասացին, թե հնարավոր չէ խոսքով ցույց տալ, որ Աստված կա, այլ միայն՝ հաստատել հավատով: Սա էլ սուտ է. նախ՝ որովհետև հակառակ է իմաստունների խոսքին, որովհետև, [թեպետ] Պլատոնը և Արիստոտելը[4] և ուրիշներ հավատ չունեին, բայց բանական քննությամբ ցույց տվեցին, թե կա Աստված, ինչպես ավեց նախնրդանքում: Երկրորդ՝ հակառակ է Պողոս [առաքյալին], որ ասում է հռոմեացիներին [հղած թղթում]. «Աստծո աներևույթ ատրկանները ասեղծվածներով են իմացվում ու երևում» (Հռոմ 1.20):

Չորրորդ՝ հակառակ է ատույգ իմացությանը, որովհետև ատրկանները երկու կերպ են՝ճանաչվում. առաջին՝ պատճառներից, երկրորդ՝ պատճառի [հետևանքներից]: Արդ, պատճառներից՝ ինչպես սահմանվողը սահմանումից. բայց այս կերպով չենք կարող ասուգել, թե Աստված կա, որովհետև նա իրենից առաջ պատճառ չունի, և չի սահմանվում, սակայն պատճառի [հետևանքներից] կարող ենք ճշտել, թե Աստված կա, ինչպես՝ եթե մեկը տեսնելով ծուխը, որ պատճառի [հետևանքն] է, կարող է հաստատել, որ այնտեղ կրակ կա, տեսնելով կառույցը իմանում են կառուցողի մասին:

Այսպես, արարածներով կարող ենք իմանալ, թե կա և գոյություն ունի դրանց Արարիչը:

Գլուխ Ե

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ԹԵ ԿԱ ԵՎ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ԱՐԱՐԱԾՆԵՐԻ ԱՐԱՐԻՉ

Պետրոս առաքյալը մեզ հրամայում է. «Պատրաստ եղեք պատասխան տալ այն բոլորին, ովքեր փնտրում են հավատի խոսքերը» (Հմմտ Ա Պետ 3.15):

Արդ, այս խնդրի վերաբերյալ վեց կերպով հաստատենք, թե կա Աստված: Առաջին՝ մտքի բնական քննությամբ, երկրորդ՝ հավատով, երրորդ՝ Սուրբ Գրքով, չորրորդ՝ համեմատություններով, հինգերորդ՝ վկայություններով, վեցերորդ՝ մարմնավորներով: Եվ այսպես, առաջնորդվելով առաջին սրբերով, որպեսզի դուք էլ սովորելով՝ ճշմարտության մեջ հաստատվեք:

Առաջին գլուխը՝ մտքի բնական քննությունն է, և սա զանազան կերպով է [կատարվում]. նախ՝ Արիստոտելն ասում է, թե ամենայն ինչ, որ շարժվում է, շարժման [մեջ է դրվում] ուրիշի կողմից, թե բնությամբ՝ ինչպես քարը վայր է [ընկնում] ծանրությունից, և թե՛ կամքով, թե՛ ուժով, թե՛ մարմինը, որ [շարժման մեջ է դրվում] հոգու կողմից. սա բացահայտում է անկենդանը, որովհետև այն, ինչ շարժվում է, շարժման [մեջ է դրվում] ուրիշի կողմից: Ինչպես սրեղակը, որ շարժվում է. նրան շարժողը կամ շարժուն է կամ անշարժ, անշարժ կամ շարժող [ուժով] գտնում ենք փնտրվածը: Եթե այն շարժող [ուժը] շարժուն է, ապա սա կամ գնալի անհունն է բարձրանում, որ [վեր է] իմացությունից, կամ [որանով] գտնում ենք առաջին շարժողը, որ չի շարժվում, և նա [ինքն] Աստված է:

Երկրորդ՝ ինչպես ասում է Արիստոտելի մեկնաբան Ավեռոեսը[5], հայտնի է, որ չեն կարող բազում հակառակությունն ու անկարգությունը կցորդաբար միանալ, եթե նրանցից մեկը կարգավորող չէ, ինչպես զորավարը՝ իր զորքի: Արդ, աշխարհում, տեսնում ենք, որ մարմնականն ու անմարմինը [իրար] ներհակ են, նաև՝ չորս տարրերը, որոնք կցորդված են մեկ բնության մեջ, և իրար չեն ապականում: Արդ, նա, որ բոլորի խնամողն ու կարգավորողն է, Աստված է:

Երրորդ՝ հայտնի է, որ արարածներից ոմանք, իբրև ապականացու, ունեն սկիզբ և վերջ, իսկ մյուսներն ունեն սկիզբ, բայց ոչ վերջ, ինչպես երկնային մարմինները, հրեշտակները, բանական հոգիները: Իմաստուններն ասում են, որ պատճառն ազնիվ է և առավելություն ունի հետևանքի [նկատմամբ]: Արդ, որոնք, որ սկիզբ ու վերջ ունեն, և սկիզբ ունեն ու վերջ չունեն, չեն կարող պատճառ լինել: Ապա ուրեմն՝ պատճառին հարկ է անսկիզբ և անվերջ լինել. և այն Աստված է:

Չորրորդ պատճառ՝ Արիստոտելն ասում է, թե սուտն սահման ունի, որովհետև մեկը փոքր սուտ է, ինչպես չորսին հինգ ասելը, իսկ մյուսը՝

մեծ, ինչպես չորսին հազար անելը: Արդ, փոքր ասելը կամ ճշմարիտ է, կամ մոտ է ճշմարտին, ինչպես այն, որ քիչ սև է՝ սպիտակ է կամ՝ մոտ սպիտակին: Բայց որևէ առարկա չի կարող ․մոտիկ լինել ճշմարտին, եթե ամբողջովին ճշմարիտ չէ: Եվ եթե որևէ առարկա ամբողջովին ճշմարիտ է, հարկ է նաև, որ այն լինի համակ էություն, որովհետև որևէ առարկա, որ համակ ճշմարիտ է՝ առավել էություն է, իսկ այն, որ համակ էություն և ճշմարտություն է, Աստված է: Այսպես կարող ենք ցույց տալ [նաև] բարության աստիճանով, որովհետև կա, որ բարի է, և կա, որ՝ բարեգույն, ապա ուրեմն՝ մեկին հարկ է համակ բարի լինել, և այն Աստված [ինքն] է:

Հինգերորդ՝ իմաստուններն ասում են. այն առարկան, որ չի ճանաչում իրեն, չի կարող իր վախճանին հասնել, եթե [գործի] չի դրվում նրա կողմից, որն ինքնաճանաչում ունի, ինչպես նետը, որ չունի ինքնաճանաչում, անզգա է, չի կարող նշանակետին ինքնուրույն հասնել, եթե չի ուղղվում նետողի կողմից: Սակայն Արիստոտելն ասում է, թե ամենայն ինչ, որ [օժտված] է բնությամբ, հետամուտ է իր վախճանին, թեպետև չի ճանաչում [այդ] վախճանը, ինչպես կրակի վերընթաց և քարի վայրընթաց շարժումը, որովհետև նրանց վախճանն այդ է, չնայած չեն ճանաչում այդ [վախճանը]: Ապա, ուրեմն, մի առարկայի հարկ է ունենալ ինքնաճանաչում և խելք, որ բոլոր բնություններն ուղղում է դեպ իրենց վախճանը, և այն Աստված [ինքն] է:

Վեցերորդ՝ իմաստուններն ասում են, թե արարածների բոլոր կարողությունները դրված են [նրանց] էությունների մեջ, և նյութի կարիք ունեն, որովհետև առանց գոյացական նյութի դրանք չեն կարող ներգործել, այն բանի պատճառով, որ ոչնչից ոչինչ չի կարող ստեղծվել: Ապա, ուրեմն, հարկ է գոյությունների մեջ բացակայող անստեղծ [ինքնածին] կարողություն ունենալ, որը կարոտ չէ նյութի, որովհետև այն ոչնչից է ստեղծում, և այն Աստված [ինքն] է:

Յոթերորդ պատճառ՝ որոշ առարկաների պատճառը բոլոր զգալի [առարկաներն] են, որոնք կամ առաջին պատճառն են, կամ՝ ոչ. ասում ենք առաջին պատճառ չեն, որովհետև բաղադրված են: Եվ հարկ է նախ ինչ-որ կարողական [ուժ], որ բաղադրի դրանց: Եվ այդ կարողությունը կամ պարզ է լինում կամ բաղադրված [բարդ]. եթե բաղադրված է, ապա կարոտ է ուրիշ առարկայի, քանի որ այն չի կարող հավիտենական լինել: Ուստի անհրաժեշտ է համակ պարզ մի էություն գտնել, և այն Աստված [ինքն] է:

Ութերորդ՝ զգալի [առարկաների] ներգործական զորությունները, ինչպես կրակը և արեգակը, ապա (անկախ) զորություններ չեն, ինչպես [ասենք] կրակը, որ այրում է մեկին կամ արեգակը՝ կիզում: Եթե մեկը պաշտի նրանց, որպեսզի [նրանք] չվնասեն՝ չեն լսի, որովհետև կիզումը անհրաժեշտաբար է լինում, քանի որ իրենց Տիրոջ հրամանն են կատարում: Ապա ուրեմն՝ անհրաժեշտ է մի բարձրագույն և համակ կարողություն, որի ձեռքի տակ լինեն այս բոլոր զգալի [առարկաները]: Եվ այս

Աստծո կարողությունն է, որի հրամանով Եզեկիայի [օրոք] արեգակը ետ է ընթանում, Հեսուի [օրոք]՝ կանգ առնում, և Դանիելի [օրոք] երեք մանուկներին [պարուրած] կրակը չի այրում (տե՛ս Բ Մնաց 32.31, Եսայի 38.8, Դան 3.19-30):

Իններորդ՝ Արիստոտելն ասում է. նախ հարկ է նույնությունը [իրերը] ընտրել և ոչ տարբերությունները, ինչպես որ՝ նախ հարկ է արդարությունն ընտրել, հետո՝ արդարին, որովհետև արդարությունը բնությամբ արդար է, որն իր գոյությունն [էությունն] է[6]: Մինչդեռ արդարը բնությամբ արդար չէ, այլ տրված է նրան, որովհետև ուրիշից է ստանում [այդ]: Արդ, բոլոր ստեղծվածները արդարություն և բարություն ունեն ոչ թե բնությամբ, այլ [դրանք] ստացել են ուրիշի կողմից: Ապա ուրեմն՝ հարկ է այդպիսի մեկը, որ անթերի կերպով արդարություն և բարություն ունի, և այն Աստված [ինքն] է:

Տասներորդ՝ իմաստասերներն ասում են, թե այն ինչ շարժվում և փոփոխվում է, անկատար է, որովհետև երբ շարժվում և փոփոխվում է, կորցնում է այն, ինչ ուներ, և ստանում այն, ինչ չուներ: Այս պատճառով անկատար է կոչվում: Բայց բոլոր ստեղծվածները շարժվում և փոփոխվում են կամ էության կողմից, եթե ունի ապականություն, կա՛մ ստացական [կարողության] կողմից: Ապա ուրեմն՝ ոչ մի արարած կատարյալ չէ: Հարկ է, որ այդ առարկան ունենա համակ կատարյալ մի էություն՝ անշարժ, անփոփոխ և անմահ, և այն Աստված [ինքն] է: Իսկ եթե ոչ, աշխարհը անկատար կլինի:

Եվ նախադրության սկզբում արտահայտված երեք մտքերը՝ սկզբի, պատճառի և միակի [մասին, որոնք են]: Սա առաջին գլուխն է:

Երկրորդ՝ Աստծո ճշմարիտ լինելը վկայում է սուրբ ընդհանրական եկեղեցու հավատը, որովհետև հավատում է Աստված, հավատում է Աստծո մեջ և հավատում է Աստծուն: Առաջին՝ Աստված հավատալը [նշանակում է] որ Աստված կա, [երկրորդ]՝ հավատալ Աստծո մեջ՝ սիրել Աստծուն, հավատով մերձենալ և նրա մասը կազմել, իսկ Աստծուն հավատալը՝ Նրա խոսքերին հավատալ: Այս երեք կերպ հավատքից առաջինն ու վերջինը պատկանում է բարիներին և չարերին, իսկ միջինը միայն սրբերին է հատուկ: Ապա ուրեմն հավատի վկայությամբ հայտնի է դառնում, որ Աստված կա. և ոչ միայն՝ որ Աստված կա, այլև՝ որ լոկ Աստծո լինելությունն է կատարյալ: Եվ սրա պատճառն այս է. նախ՝ կատարյալն այն է, որ իրենից դուրս ոչինչ չունի, մինչդեռ մեր էությունն իրենից դուրս իրողություններ ունի, այդ պատճառով կատարյալ չէ: Որովհետև մեր պակասավոր լինելության մեջ կա բան, որ անցյալ է, և կա՝ որ լինելու է, բայց Աստծո լինելությունն համահավասար է, քանզի նրա [համար] չկա բան, որ անցյալ լինի, և չկա բան, որ լինելու է. այդ պատճառով հույժ կատարյալ է: Երկրորդ պատճառ. իմաստուններն ասում են, թե առարկաները երկակի են՝ բան կա, որ միշտ անցնում է, ինչպես ժամանակը և շարժումը,

և նրանք իրենց կրկնակը չունեն, որովհետև մի մասն անցյալ է, իսկ մյուս մասը՝ գալիք, և բան կա, որ մնում է, ինչպես մարդը և նմանները: Եվ սրանք երկակի են իրենց լինելության մեջ, այսինքն՝ գոյացական (էությունը) և պատահական (ստացական). գոյացականն ընդհանրական է, որովհետև ոչ անցյալ [ունի] և ոչ ապագա, այլ պատճառով մարդը ծնունդից մինչև մահ նույն մարդն է: Պատահական (ստացական) լինելին այն է, ինչն անցյալ և ապագա [ունի], ինչպես մանկությունն ու ծերությունը: Սակայն Աստված հավիտենական է, և Աստծո մեջ չկա ստացական [մի բան], այլ պատճառով հույժ կատարյալ է:

Երրորդ. գլուխը հաստատվում է Սուրբ Գրքի վկայությամբ, որ Աստված կա: Ծննդոց գրքում ասվում է. «Սկզբից Աստված երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ծննդ. 1.1), և Ելից գրքում ասվում է. «Է-ն ինձ ուղարկեց» (Ելից 3.14) և Սաղմոսն ասում է. «Հավիտենից մինչև հավիտյան դու ես» (Սաղ 99.3), և Ավետարանն ասում է. «Ի սկզբանե Բանն էր և Բանն էր առ Աստված» (Հովհ 1.1): Եվ այլ այսպիսի վկայություններով լի են Աստվածաշունչ գրքերը:

Չորրորդ՝ որ Աստված կա, ցույց են տալիս արարածների հետ նրա համեմատությունները: Աստծո լինելությունն անչափ ճշմարիտ է, մինչդեռ մեր լինելությունը նրա հետ համեմատած ոչինչ է: Նաև մեր արդարությունն ու գեղեցկությունը նրա [համեմատ] ոչ արդարություն և ոչ գեղեցկություն է: Այլ նաև Աստված իր մերձավորությամբ բոլոր առարկաներին գոյություն է տալիս: Եվ եթե իր մերձավորությունը մեր միջից հեռացնում է, բոլոր արարածները կործեք ոչնչի են փոխվում և այսպես անէության մեջ ընկնում: Այս պատճառով է արարածների համեմատությունն Աստծո հետ: Իմաստուններն ասում են, որ այն, ինչ անկատար է, նայում է նրան, որ կատարյալ է, և նրանից է արտածվում, և այն, որ առարկաներից մեկն է, [նայում է] նրան, որ ընդհանուրն է, նաև այն, որ ենթակայության տակ է [նայում է] նրան, որ ինքնիշխան է, այն, որ պակասավոր է [նայում է] նրան, որ անթերի է, այն, որ հասում և ծերում է [նայում է] նրան, որ հաստատուն և մնայուն է: Ուրեմն, եթե կա անկատարը, մասնավորը, ենթակայության տակ գտնվողը, պակասավորը, հասունը, ապա անհրաժեշտ է, որ լինի կատարյալը, ընդհանուրը, ինքնիշխանը, անթերին, մնայունը, այսինքն՝ Աստված:

Հինգերորդ գլուխ՝ բոլոր ազգերը վկայում են, թե Աստված կա: Վարդապետներն ասում են, թե՝ «Հավատում ենք քեզ, Տեր, որ դու այնպիսի իրողություն ես, որից [ավելի] բարձրի մասին ոչ ոք չի կարող խորհել»: Եվ սուրբ Դիոնիսիոսն ասում է. «Ընդհանրական լինելությունը գոյացական աստվածություն է, սակայն այս իմացիր ըստ պատճառի և ոչ ըստ տեսակի»[7]: Դարձյալ ասում են. այն է առավել իրական, որ առավել հեռու է անիրականից, և այն իրն է առավել հեռու անիրականից, որ չի կարող լինել լինելությունից հետո և չի կարող լինել անգոյությունից հետո, և ոչ

ոք չի կարող մտածել, թե չէր, և այն Աստված [ինքն] է: Որովհետև նա չունի գոյություն լինելությունից հետո, ինչպես ժամանակը և շարժումը, և չունի գոյություն անգոյությունից հետո, ինչպես մարդը: Քանզի Աստված հավիտենական է և չի կարող մտածվել, թե չկա:

*Վեցերորդ գլուխ՝ արարածները գոչում են, թե կա Աստված: Վարդապետներն ասում են, թե Աստծո մասին հարցնում են արեգակին, լուսնին, աստղերին և մյուս տարրերին. որոնք պատասխանում են, որ մենք այն չենք, ում փնտրում եք, այլ Աստծո արարածներն ենք ըստ Սաղմոսի՝ «Նա արարեց մեզ և ոչ թե մենք եղանք» (Սաղ 100.3): Նաև այս երկիրը՝ բոլոր տարրերից ավելի նվաստ ու աղտեղի, որի գեղեցիկ ծաղիկներն ու բույսերը գոչում են ասելով. մեր Ստեղծողը բյուրապատիկ գեղեցիկ է: Այս պատճառով իմաստուններն ասում են, թե՝ բնության ձայնն Աստված է. [բնության] մեջ են բոլոր գեղեցկություններն ու քաղցրությունները, բարձրություններն ու մաքրությունները, որոնք վկայում են, թե նա (Աստված) առավել գեղեցկագույն, քաղցրագույն, բարձրագույն և մաքրագույն է: Այսպես է նաև այլոց հետ [համեմատած]: Իմ մարդկային մարմինը նույնպես վկայում է, թե ես, որ այս աշխարհի մի փոքր մասն եմ, այսպիսի բանականություն ունեմ և խնամում եմ ինձ, ապա ուրեմն պարզ է, որ բարձրագույն բանականություն ունի նա, ով խնամում է բոլորին: Եվ ինչպես արքայության մեջ բոլոր արարածներին տեսնում ենք Աստծո մեջ, այդպես էլ այս կյանքում բոլոր արարածների մեջ, իբրև հայելում տեսնում ենք Աստծուն: Ինչպես ասում է առաքյալը. «Այժմ տեսնում ենք հայելու մեջ, իբրև օրինակ, իսկ այն ժամանակ՝ դեմ-հանդիման» (Ա Կոր 13.12): Եվ դարձյալ [ասում է]. «Աստծո աներևույթ առարկաները ստեղծվածներով են իմացվում և երևում» (Հռոմ 1.20): Եվ քանի դեռ այս օտար աշխարհում աքսորական ենք, արարածների ճանաչումով, իբրև սանդուղքով, բարձրանում և հասնում ենք Աստծո ճանաչողությանը: Սակայն երկնավորները կարոտ չեն այսպիսի սանդուղքների, որովհետև երբ տեսնում են Աստծո խոսքը, [արդեն իսկ] իմանում են Աստծո խոսքով եղածը:

Այսքանն անզգամների դեմ ասված առաջին տեսությունն է:

Ա II
85571

...ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Գլուխ Զ

ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ԲԱԶՈՒՄ ԱՍՏՎԱԾՆԵՐ ԿԱՆ

Աստված չկա սուտ անդգամների մասին ասվածից հետո, այժմ խոսենք ընդդեմ նրանց, ովքեր ասում են, թե բազում աստվածներ կան, որովհետև նույնն են անաստվածն ու բազում աստվածներ [պաշտողը], ինչպես անիշխանն ու բազում իշխաններ [ունեցողը], որոնք կռապաշտ են [հավասարապես]:

Արդ, կռապաշտության մասին երեք բան կարելի է ասել. նախ՝ թե ինչո՞ւ մարդիկ կռապաշտության մեջ ընկան, երկրորդ՝ քանի տեսակ կռապաշտություն կա, երրորդ՝ տարբերություն ընդդեմ կռապաշտների:

Առաջինի մասին իմանալու է, որ բազում և զանազան են կռապաշտների մոլորության պատճառները: Առաջին պատճառը սաստիկ կսկիծն է սիրելիի մահվան վրա, ինչպես ասում է Սողոմոնն իր Իմաստության [գրքում]. «Հայրը ստեղծեց վաղամեռիկ որդու պատկերը և իր սպասավորներին պատվիրեց երկրպագել» (Իմաստ 14.15): Եվ այս սովորությունը շատերն ընկալեցին, և կռապաշտության մեջ ընկան: Ուրիշներն ասում են, թե Նինվեն կառուցող Նինոսը կանգնեցրեց մեռած հոր պատկերը և Բել կոչեց, և նրան այնպես երկրպագեց, որ մահացու հանցանք գործած ամեն ոք այդ պատկերի մոտ էր գնում և ազատվում:

Երկրորդ պատճառը թագավորների և իշխանների հպարտությունն էր. որոնք մոռանալով իրենց տկարությունը, թույլատրեցին, որ իրենց [իբրև] աստվածներ պաշտեն, ինչպես Նաբուգոդոնոսորը: Եվ իրենց պատկերները նկարել տվեցին և ուղարկեցին հեռավոր [բնակավայրերին], որպեսզի նրանք էլ պաշտեն[8]*:*

Երրորդ պատճառը փոքրերի մարդահաճությունն էր: Նրանք կամեցան թագավորների մտքին հաճոյանալ և երկրպագությամբ ծառայել, և դա նրանց համար գայթակղություն եղավ, որովհետև նրանց [մեծարելով] կոչում էին Անհաղորդելի անուն:

Չորրորդ պատճառը արհեստների գեղեցկությունը կամ արարածների գեղեցկությունն էր, ինչպես ասում է. «Որոնց գեղեցկությամբ զմայլվելով աստվածներ կարծեցին» (Իմաստ 13.3): Նաև [երկնքի] լուսատուներին պաշտելով խաբվեցին, ինչպես ռամիկը, որ չի կարողանում տեսնել թագավորին և ում զարդարված է տեսնում, կարծում է, թե նա թագավոր է:

Հինգերորդ. որովհետև որոշ կախարդներ, խաբելով զգայությունները, բնության [օրենքի] մեջ հրաշքներ էին գործում, և նրանք կարծեցին, [որ դա] Աստծո գործն է, ինչպես Եգիպտոսում գորտերին և գավազաններին խաբեությամբ [իբրև] օձ էին ցույց տալիս, և այն, որ բնությունը դանդաղելով է կատարում, նրանք դիվական հնարքով աճապարանքով են կատա-

րում:

Վեցերորդ պատճառը սատանայի հպարտությունն ու նախանձն է, որը [հենց] սկզբից ցանկացավ աստվածանալ, և այժմ [էլ] ջանում է բոլոր մարդկանց կողմից երկրպագվել: Այդ նպատակով [նրանք] մտնում են կուռքերի մեջ և ձայն են տալիս մարդկանց, երբեմն հիվանդություն են տալիս և հետո վերցնում ցավը. այս պատճառով ընծաներն ընդունում էին իբրև Աստված: Եվ ինչ չարություն որ կամենում էին կատարել, նախապատրաստվում էին, որպեսզի մարդկանց խաբեն, և տանը նշում էին ուրախությամբ, ուտելով, խմելով և պարելով, որով է՛լ ավելի էին մարդկանց սիրտը հրապուրում: Այս և նմանները մարդկանց կռապաշտության պատճառ եղան: Սա առաջին գլուխն է:

Երկրորդ, թե՝ քանիսն են կռապաշտության տեսակները: Իմանալու է, որ բազում տեսակներ ունի,

նախ դևերի կռապաշտությունը,

երկրորդ՝ երկնքի լուսատուների պաշտամունքը,

երրորդ՝ չորս տարրերի [պաշտամունքը],

չորրորդ՝ մարդկանց [պաշտամունքը],

հինգերորդ՝ անբան կենդանիների [պաշտամունքը],

վեցերորդ՝ պատկերների և մարդկանց ուրիշ գործերի [պաշտամունքը],

յոթերորդ՝ ժամանակների և նրանց մեկ մասի պաշտամունքը,

ութերորդ՝ ոմանց [կողմից] ծառերի և բույսերի պաշտամունքը:

Բոլոր կռապաշտությունները մեծ մեղք են, [որովհետև] նախ Արարչին զրկում են իր պատվից և արարածներին են տալիս [այդ պատիվը]: Երկրորդ՝ Արարչին և արարածներին հավասարեցնում են: Երրորդ՝ լի են բոլոր չարություններով, երբ մարդու հոգին հեռացնում են Աստծուց, սակայն ծանրագույն կռապաշտություն է, երբ իրենք իրենց դնում են անարգ (քան պատվական) իրերի ծառայության տակ, որովհետև առավել անարգ են նրանք, որոնք Աստծո պատիվը չորքոտանիներին են տալիս, քան մարդկանց, ինչպես ասում է Պողոս [առաքյալը] Հռոմեցիներին [Հղած թղթում]. «Անեղծ Աստծո պատկերը փոխարինեցին եղծված մարդու, թռչունների, չորքոտանիների և սողունների պատկերի նմանությամբ» (Հռոմ 1.23): Եվ Դավիթն ասում է. «Աստծո փառքը փոխարինեցին խոտակեր արջառի նմանությամբ» (Սաղ 105.20):

Երրորդ գլուխ՝ պետք է հերքել նախ դևերի կռապաշտությունը, երկրորդ՝ լուսատուների կռապաշտությունը և ապա, ըստ կարգի, մյուսները:

Նախ խոսենք դևերի կռապաշտության դեմ: Դևերին երկրպագողները խիստ ատելի են չորս պատճառով.

նախ՝ որովհետև նրանք թշնամի են Աստծուն, և շատ ծանր է Աստծո համար, եթե որևէ մեկը դևերին է պաշտում:

Երկրորդ՝ որովհետև թշնամին են մարդկային ցեղի:

Երրորդ՝ որովհետև շատ ստախոս են, ինչպես Հովհաննեսն է ասում. «Սուտ է նա և նրա հայրը» (Հովհ 8.44):

Չորրորդ՝ որովհետև թեպետ բնությամբ դևերն ազնվագույն են, քան մարդիկ, սակայն մեղքով՝ անարգագույն, և ոչ միայն մարդկանցից [անարգագույն], այլև՝ անասուններից ու բոլոր արարածներից:

Եվ հայտնի է, որ բազում պատճառներով պետք չէ պաշտել այդպիսի հոգիներին:

Նախ, որովհետև չարիք կամ բարիք են. թե բարիք են, ապա հարկ է, որ նրանք դեմ լինեն Աստծո պատիվը յուրացնելուն: Եվ եթե չարիք են, ինչպե՞ս կարող են արժանի լինել պաշտվելու. այլ բազում անգամ նախատվել և արհամարհվել:

Երկրորդ՝ եթե բարիք լինեին, ապա չէին օգնի պոռնիկներին և կախարդներին, սակայն քանի որ չար են, չար գործը նրանց հաճելի է թվում:

Երրորդ՝ եթե բարի լինեին, որբերին կսիրեին, որովհետև նմանը նմանին է սիրում, սակայն քանի որ չար են, թշնամի են որբերին:

Չորրորդ՝ եթե բարի լինեին, մարդկանց կբարձրացնեին [դեպի] հոգևոր բարձրագույն բարիքները. սակայն [նրանք] մարդկանց տալիս են [լոկ] մարմնավոր փոքր բարիքներ, ինչպես գողությունը, հափշտակությունը և նմանները: Ապա, ուրեմն, նրանք չար են, և պետք չէ չարիքը պաշտել:

Հինգերորդ՝ մարմնավոր բարիք նրանք տալիս են կամ իրենց կարողությամբ, կամ՝ Աստծո. սակայն չեն կարող իրենց կարողությամբ, որովհետև նախ ցույց տվեց, թե մի է անեղծ և անհուն զորությունը և նրա հովանու տակ է ամենայն ինչ: Եվ նրանք թեպետ Աստծո սիրուց և շնորհից հեռացան, բայց Աստծո ներգործությունից բնավ չեն կարող ազատ լինել, որովհետև Աստծո ստեղծածներն են. հետևաբար այն բոլոր բարիքները, որ նրանք տալիս են, Աստծո պարգևն են, իսկ նրանք՝ [Աստծո] ծառաներ: Եվ թեպետ բարի հոգիները բարիքի միջնորդն են, պետք չէ նրանց պաշտել, այլ՝ ըստ չափի պատվել:

Վեցերորդ՝ նրանք, որ բարիք են գործում կա՛մ [գործում են] հարկադրաբար, համաձայն բնության՝ ինչպես հուր, և կամ ազատ կամքով և բնությամբ, [և սակայն] նրանց բոլորովին վայել չէ պատվել: Նրանք [գործում են] ազատ կամքով կա՛մ Աստծո հրամանով, կա՛մ ընդդեմ Աստծո հրամանների: Արդ, եթե գործում են ընդդեմ Աստծո հրամանների, հակառակ են Աստծուն, [իսկ] եթե՝ Աստծո հրամանով, ապա հարկ է պաշտել Աստծուն և ոչ նրանց:

Յոթերորդ՝ եթե մեկը ասում է, թե այսպիսի հոգիները բարկանում են մարդկանց վրա, ուստի պարտ է [նրանց] պաշտել, որպեսզի չվնասեն: Բայց այս ևս անմտություն է, որովհետև նրանք կա՛մ բարի են, կա՛մ չար. թե բարի չեն՝ մարդուն հարկավոր է բարկանալ [նրանց վրա], սակայն՝ միայն զղջման բերող մեղքերի պատճառով: Ապա, ուրեմն, պարտ է զղջումով և արտությամբ և ոչ կենդանիների արյամբ հաշտվել [Աստծո

հետ]: Սակայն նրանց բարկությունը չար է, ինչպես գազաններինը, որոնք մինչև արյուն չեն ճաշակում, չեն հանգստանում:

Ութերորդ՝ երբ Աստված հաշտ է մարդկանց հետ, և նրանք բարկացած են, նրանց բարկությունը կամ կարող է վնասել, կամ՝ ոչ. թե ի զորու է վնասել՝ պարզ է, որ Աստված ամենազոր լինել չի կարող, որովհետև չի կարող փրկել իր սիրելիներին նրա ճիրաններից և եթե չի կարող վնասել, ապա պետք չէ վախենալ և պաշտել նրան:

Իններորդ՝ Աստված նրանց չարությունը ետ է վանում կամ թույլ է տալիս. եթե ետ է վանում՝ պետք չէ վախենալ, իսկ եթե թույլ է տալիս՝ ուրեմն օգուտի համար է [թույլ տալիս], որպեսզի թշնամիները տանջեն սրբերին, և [նրանք] վարձատրվեն:

Տասներորդ՝ կամ նրանց զորությունն իմաստությամբ, արդարությամբ և կարգավորությամբ է, կամ՝ ոչ. թե կարգավորությամբ են [կատարում]՝ պետք չէ, որ սրբերը նրանց զորությունից վախենան, այլ՝ սոսկ մեղավորները, և նրանց կողնի գլխումը [միայն]: Եվ եթե նրանց զորությունը ագետ և անիրավ է, ապա դրանց ձեռքով պակասավոր [մարդը] գլխահարվում է: Եվ եթե որևէ մեկը նրանց պաշտում է անիրավության համար, ապա անհրաժեշտ է, որ նա գլխահարին և ախմարին պաշտի:

Տասնմեկերորդ՝ նրանց զորությունը կամ ազատ է, կամ՝ կապված. թե ազատ է՝ ինչո՞ւ բոլորին չի [օգնում], որպեսզի նրան գոհեր և պատարագներ մատուցեն, և եթե կապված է, հարկ է, որ պաշտեն Աստծուն, որ կապեց նրան, և ոչ սատանային:

Տասներկուերորդ՝ Երուսաղեմում նրանց պատիվը պակասեց Աստծո հրամանով և այժմ ամբողջ երկրում՝ Քրիստոսի Ավետարանով, ինչպես Ղուկասի [Ավետարանում է ասվում], թե՝ «Երբ հզորը զինավառված է՝ նրա ինչքերը խաղաղության մեջ են, բայց երբ նրանից առավել հզորն է գալիս ու հաղթում, նրան զինաթափ է անում» (Ղուկ 15.21,22): Արդ՝ այն մեծ զորությունը, որ նրան արգելում է, կամ Աստծո զորությունն է, կամ՝ մարդու: Եթե զորությունն Աստծունն է, ապա նրանք թշնամիներ են, և եթե զորությունը մարդունն է՝ նախ հարկ էր, որ նա վախենար մարդու զորությունից, քան մարդը նրա [զորությունից]: Ուրեմն պետք չէ նրան պաշտել, որովհետև [նա] տերը չէ, այլ միայն թշնամի, ինչպես Դավիթն է ասում. «Հեթանոսների բոլոր կուռքերը դևեր են, բայց Տերը երկինքը ստեղծեց» (Սաղ 95.5): Սա առաջին գլուխն էր:

Երկրորդ գլուխ՝ հարկ է խոսել ընդդեմ նրանց, որոնք լուսատուներին աստված կարծելով պաշտում են:

Նախ՝ խիստ անզգամություն է, երբ մեծը փոքրին է ծառայություն մատուցում, մինչդեռ մարդը աստղերից մեծ է: Որովհետև նրանք մարդու համար եղան, ինչպես Մովսեսն է ասում Արարածոց [գրքում]. «Նրանց դրեց հաստատության մեջ՝ երկրի լուսատուները լինել» (Ծննդ 1.17): Եվ Երկրորդ Օրինաց [գրքում] ասում է. «Արեգակին, լուսնին, աստղերին և

երկնքի բոլոր զարդերին նայելով՝ մոլորվելով մի՛ երկրպագիր նրանց, որ ստեղծեց Տեր Աստված երկնքի տակ գտնվող բոլոր ազգերին ծառայելու համար» (Բ Օր 4.19):

Երկրորդ՝ նրանց երկրպագողներն ասում են, թե մարդկանց չար և բարի սովորությունները լուսատուներից են. այդ պատճառով հարկ է պաշտել նրանց: Այս էլ սուտ է. որովհետև լուսատուներն իրենց ներգործությունն ունենում են կա՛մ բնությամբ, կա՛մ կամքով և գիտությամբ. եթե բնությամբ է [ներգործումը]՝ [ապա այդ] ներգործությունը ցածր է, քան մարդկանցը, որոնք գործում են կամքով և գիտությամբ: Որովհետև իմաստասերներն ասում են, թե բնությունները գործում են իբրև ծառաներ, և երկու ներհակ [ուժերը] չեն կարող գործել, այլ միայն մեկը, ինչպես կրակը կարող է միայն տաքացնել, մինչդեռ անձնիշխան կամքն ու գիտությունը ներգործում է իբրև տեր, և իշխում է երկու ներհակ [ուժերին]: Իսկ եթե լուսատուները ներգործում են բնությամբ, ապա սուտ են նրանք, որ ասում են, թե նրանք պատճառ են իմաստության, ագիտության, բարու և չարի, որովհետև սրանք առավել բարձր են, քան մեր բնությունները: Եվ եթե կամքով և գիտությամբ են ներգործում և [իրենց] կամքով մարդու մեջ չարություն և մեղք են ներարկում՝ չարագույն են և Աստծո թշնամիներ:

Երրորդ՝ ինչ չարություն որ ունեն, կամ բնությամբ ունեն, կամ հետո են ստացել: Բնությամբ չունեն չարություն, որովհետև Աստված նրանց բարի է ստեղծել և Աստծուց հեռու է չար ստեղծելը: Իսկ եթե հետո են ստացել և բարուց հեռանալով չարացել, հոգով ապականվել, որովհետև նրանց երկրպագողներն ասում են, թե լուսատուները հոգի ունեն: Բայց սուտ են, որովհետև նրանք ճշմարտապես հոգի չունեն, և եթե ունեն, անկարելի է, որ [նրանց] մարմինն անապական լինի և հոգին՝ ապականացու, քանի որ հոգին պատվական է, քան մարմինը: Ուրեմն սուտ է ասելը, թե մարդկանց սովորության մեջ չարը կամ բարին լուսատուներից են:

Չորրորդ՝ անկարգություն է [ասել], թե այն, որ բարձր է և առաջին, խոնարհվում է նրա կողմից, որ նվաստ է և վերջին: Մինչդեռ մարդկանց միտքը և կամքը շատ ավելի բարձր են, քան երկնային մարմինները: Ուրեմն երկնային մարմիններն ինքնուրույնաբար չեն կարող ինչ-որ բան հեղել կամ ներարկել մարդկանց մտքի և անձնիշխանական կամքի մեջ:

Հինգերորդ՝ ոչ մի մարմին չի կարող ներգործել առանց շարժման միջնորդության: Մինչդեռ մարդկային միտքն ինքնըստինքյան ենթակա չէ շարժման, որովհետև երբ մարմնի շարժումը դադարում է, հոգին առաքինության և իմաստության է ձգտում: Եվ քանի որ միտքն անշարժ է, այս է պատճառը, որ Արիստոտելն ասում է, թե ամենայն ինչ, որ շարժվում է, մարմին է, սակայն միտքը մարմին չէ և ոչ էլ մարմնի գոյություն, ինչպես աչքը՝ տեսողական զորություն: Այս պատճառով մարդու միտքը և կամքը լուսատուների շարժումից ոչինչ չի կարող ընդունել,

քանի որ նրանց իշխանության տակ չէ:

Վեցերորդ՝ կասկածողներն ասում են, որ ամեն ոք, ով սրանց ներքո է ստեղծվում, բարի կամ չար է լինում հարկադրաբար, և այն, որ այդ պահին և բախտին է սկիզբը տանում, կարող է իր վախճանին հասնել կամ՝ ոչ: Այս ևս սուտ է, որովհետև բազում անգամներ տեսնում ենք, որ մեկ աստղի տակ նույն պահին երկու ծնվածներից մեկը բարի է, մյուսը՝ չար, ինչպես Հակոբը և Եսավը: Եվ բազում անգամներ պատահել է, որ երկուսը միևնույն պահին նույն գործն են ձեռնարկում՝ մեկի գործը ավարտվում է, մյուսինը՝ ոչ: Ուրեմն մարդկանց բարի և չար սովորությունն աստղերից չէ:

Յոթերորդ՝ հոգևոր գոյացության ներգործության կերպը այսպես է. նախ [նա իր] սկիզբն բարինքյան տանում է խորհելով և ցանկանալով, և երկրորդ՝ բարինքյան ներգործում է միավորվելով մարմնին և ապա, նրանց միջնորդությամբ, հեռավոր մարմիններին: Ներգործության այս կարգը սկսվում է հոգու մտածումով, որ աննյութեղեն է, ապա մինչ նյութեղենանում է գործը, հոգևոր նրբությունից հեռանում է [այն]: Ուրեմն՝ աստղերն այսպես են ներգործում մարդկանց վրա. [աստղերը], որոնք շատ հեռու են, կարող են նյութականորեն ազդել, ինչպես, [ասենք], ջերմությամբ և սառնությամբ, հիվանդությամբ և առողջությամբ, սակայն չեն կարող տալ խելք և առաքինություն, չարություն և բարություն, որովհետև [որոնք] հույժ ոգեղեն են:

Ութերորդ՝ ամենայն ինչ, որ երկնքի և լուսատուների շարժումից է արտադրվում, բնության ազդեցությունից է: Ուրեմն՝ եթե մարդու [կատարած] ընտրությունը լուսատուներից է, ապա ինչ որ նա ընտրում է, բնությամբ է [ընտրում], ինչպես անասունները, և ոչ ազատ կամքով: Եվ [միաժամանակ] հակառակ է Արիստոտելին, որ ասում է, թե ներգործության սկիզբը երկուսն են՝ բնությունը և ազատ կամքը:

Իններորդ՝ այն առարկան, որ բնությամբ է, առավել ճշմարիտ է, որովհետև բնությունն իր ներգործության մեջ սակավ է սխալվում: Ուրեմն, եթե մարդու [կատարած] ընտրությունը բնությամբ է, այսինքն՝ լուսատուների շարժմամբ է, մարդիկ առավել ճշմարիտն են ընտրում, քան չարը: Սա էլ հայտնապես սուտ է, որովհետև Սողոմոնը և Արիստոտելը գրում են, թե չարիքը շատ է և բարիքը՝ սակավ:

Տասներորդ՝ այն արարածը, որ նույն տեսակից է, չի փոփոխվում բնության ներգործությունից, ինչպես ծիծեռնակը նույն կերպով է իր բույնը շինում, և բոլոր սարդերը նույն կերպ են ոստայնը հյուսում: Ուրեմն, եթե մարդու [կատարած] ընտրությունը լուսատուներից լիներ, ամբողջ մարդկությունը նույն ընտրությունը կկատարեր: Սա էլ հայտնապես սուտ է, որովհետև մարդիկ բազում ընտրություն են [կատարում], ինչպես տարբեր արվեստավորները, [ընտրում] պես-պես առաքինություններ, զանազան մեղքեր: Ուրեմն մարդու [կատարած] ընտրությունը լուսատուներից չէ:

Տասնմեկերորդ՝ Արիստոտելն ասում է, որ այն, ինչ բնության հարկադրանքով է՝ մնում է անփոփոխ և առանց մեղքի: Ուրեմն՝ մարդկանց սովորությունն ու բնությունն անհրաժեշտաբար լուսատուներից է, [հետևաբար] ոչ մեղք կա, ոչ հատուցում, ոչ արքայություն և ոչ դժոխք, և իզուր է Աստծո հրամանը՝ զգուշանալ մեղքերից և բարիք գործել: Եվ սա մեծ հերձված ու անհավատություն է:

Տասներկուերորդ՝ լուսատուներին պաշտողները երկրպագում են կա՛մ լուսատուների հոգիներին, կա՛մ մարմիններին, կա՛մ երկուսին միասին: Եթե միայն նրանց հոգին են պաշտում՝ դարձյալ նույնն է, և նույն խոսքով կարող ենք առարկել նրանց: Եվ եթե նրանց անհոգի մարմինն են պաշտում միայն՝ մեծ նախատինք է ծառայել նրան, որ չի զգում երկրպագությունը և չի կարող հատուցել: Եվ եթե պաշտում են հոգուց ու մարմնից բաղադրվածին, այն հոգին կամ բանական է և կամ անբան. եթե անբան է, ուրեմն բնության կարգը խախտված է, որ բանական արարածը պաշտում է անբան արարածին: Եվ նրան աղոթելը նույնն է, ինչ աղոթել խուլին, որը չի լսում. դեռ ավելին՝ հույժ անհարիր է, որ աստվածային զորությունը նրա մեջ լինի, որը ոչինչ չի կարողանում՝ ոչ լսում և ոչ էլ տեսնում է: Եվ եթե պաշտում են մարմնից և բանական հոգուց բաղադրվածին, այդ դեռ չի նշանակում, թե լուսատուները աստված են, որովհետև Աստված ամենակարող է, և նրա կամքը ոչ ոք չի կարող խափանել: Բայց աստղագուշակներն ասում են, թե աստղերի արտահոսքը միշտ խափանվում է, որովհետև [դրանք] հակառակ են իրար՝ մեկը տաք է, մյուսը՝ սառը: Այս պատճառով մեկմեկու հալածում են և մեկմեկու ոչնչացնում: Այս ևս հեռու է Աստծուց:

Ուրեմն լուսատուների պաշտամունքը մոլորություն է: Եվ շատ աստղագետներ այս մոլորության մեջ էին և տակավին կան, սակայն մարգարեների խոսքը հանդիմանում է նրանց. Երեմիան ասում է. «Այսպես է ասում Տերը. Երկնքի նշաններից մի՛ զարհուրեք, որովհետև նրանք վախենում են Աստծո երեսից, որովհետև հեթանոսների բոլոր օրենքները սնոտի են» (Երեմ 10.2,3): Եվ Եսային ասում է. «Աստղագետները թող բարձրանան և փրկեն քեզ, [նրանք] որ զննում են երկնքի աստղերը, թող պատմեն քո վրա գալիքը» (Եսայի 47.13):

Սա երկրորդ գլուխն [էր]:

Երրորդ գլուխ. Հարկ է առարկել նրանց, ովքեր պաշտում են իրենց ձեռագործ [կուռքերին] և այն [բոլոր] բաները, որոնք անարգ և նվաստ են, քան մարդկային բնությունը: Եվ այսպիսի կռապաշտությունը [առավել] արգահատելի է, քան կռապաշտության մյուս բոլոր տեսակները, որովհետև այսպիսի կռապաշտությունը մարդուն դարձնում է նախ թշվառական, երկրորդ՝ անիծված, երրորդ՝ նախատինքի և ծիծաղի արժանի:

Նախ թշվառական է դարձնում, որովհետև իր ազնիվ բնությունն անարգ է համարում և իրեն դնում անարգ արարածների շարքում: Ասում

են, թե Սոկրատեսը[9] սպանվեց այն պատճառով, որ չկամեցավ կուռքերին պաշտել, քանի որ մարդկանց ձեռքի գործն են. ասում է՝ Շատ ավելի պաշտում եմ շներին, որոնք բնության արվեստով են [արարված], որովհետև պատճառն ավելին է, քան պատճառի հետևանքը: Եվ Սողոմոնն Իմաստության [գրքում] ասում է. «Թշվառական են նրանք և մեռելների վրա է նրանց հույսը, ովքեր աստված են համարում մարդկանց ձեռքի գործը» (Իմաստ 13.10):

Երկրորդ՝ այս կռապաշտությունը նզովյալ և անիծյալ է, ինչպես Երկրորդ օրինաց [գրքում] է ասվում. «Անիծյալ լինի [այն] մարդը, որ պատկերներ և արձաններ է կերտում, քանզի Տիրոջ առջև պիղծ է արվեստագետի ձեռքի գործը» (Բ Օր 27.15): Եվ Իմաստության [գրքում] ասվում է. «Անիծյալ է ձեռագործ իրը և նա, որ ստեղծում է այն» (Իմաստ 14.8):

Երրորդ՝ այս կռապաշտությունը մարդուն դարձնում է ծիծաղի արժանի, ինչպես Երեմիան է ասում՝ ամաչեցին բոլոր ոսկերիչներն իրենց կերտածներով, քանզի սուտ են նրանք, և նրանց մեջ շունչ չկա, ունայն է այդ գործը և ծիծաղի արժանի (Երեմ 10.14): Եվ Իմաստության [գրքում] ասվում է. «Առողջության համար մեռելին է աղաչում և թիկունքին հանելու համար կաղածներին է օրհնում» (Իմաստ 13.18): Եվ Եսային ասում է. «Հյուսնը փայտ ընտրեց, կեսը այրեց և [մյուս] կեսից աստվածներ շինեց և աղոթեց նրանց ու ասաց. փրկիր ինձ, աստված իմ» (Եսայի 44.13,19)[10]: Այստեղից պարզվում է, որ կռապաշտությունն սնոտի և ընդունայն է, որովհետև միակ է ճշմարիտ Աստվածը:

Սրանք ընդդեմ նրանց են, ովքեր ասում են, թե բազում աստվածներ [կան]:

Գլուխ Է

ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ԵՐԿՈՒ ԱՍՏՎԱԾՆԵՐ ԿԱՆ

Սրանից հետո խոսենք նրանց դեմ, ովքեր ասում են, [թե] բազում աստվածներ [կան]: Այժմ խոսենք նրանց մասին, ովքեր ասում են, թե երկու աստվածներ կան. ինչպես մանիքեցիներն[11] ու նրանց նմանները, որոնք ընկերն ու դրացին են կռապաշտների և էլ ավելի չար են, քան նրանք: Որովհետև, թեպետ կռապաշտները բազում աստվածներ էին պաշտում, սակայն նրանցից շատերը մեկ Աստված խոստովանեցին, ասելով՝ բոլոր աստվածներին նրանից ծնված: Իսկ մանիքեցիները [ասացին, որ] երկու սկիզբ կա. մեկը՝ բարի և մյուսը՝ չար, և մեկը մյուսից չէ, այլ՝ երկուսն էլ հավիտենական են: Եվ նախ հարկ է նրանց դեմ վկայություններ բերել, նրանց առարկել և հետո նրանց մոլորության ապահով [լինելը] ցույց տալ: Բայց իրենց մոլորությունը երկու ձևով են հաստատում. նախ՝ բնական ընդդիմությամբ, երկրորդ՝ աստվածաշունչ գրքերով: Առարկում են հինգ հակաճառությամբ:

Առաջին՝ ասում են [որ] Աստված կամ կարող էր արարածներին անապական ստեղծել և չկամեցավ, և կամ չկարողացավ անապական ստեղծել. և եթե կարող էր ու չկամեցավ, [ուրեմն], ասում են՝ նախանձոտ էր, և եթե չէր կարող, ուրեմն անկարող էր: Ապա ուրեմն այն, ինչ ապականացու է, բարի Աստծուց չէ, այլ՝ չարից: Վարդապետները պատասխանում են, որ Աստված կարող էր անապական ստեղծել, բայց չկամեցավ ոչ թե նախանձի, այլ իմաստության պատճառով: Քանի որ նա, որ կարող է ստեղծել և կամենում է ստեղծել, անմիտ և փառնող է, բայց նա, որ իր կարողությունը կիրարկում է իմաստությամբ, բարի է: Այստեղ իմանալու է, որ այն, որն ըստ բնության է ներգործում, ներգործում է այնքան, որքան կարող է, ինչպես կրակը այրում է [այնքան] որքան կարողանում է, բայց եթե անձնիշխան կամքով է ներգործում, [ապա] հարկ չէ, որ կարողության չափով կատարի: Այդպես է Աստված. որովհետև Աստծո բարությունից է, որ ստեղծվեցին այս բոլոր զգալի արարածները, բայց [նրանց] ապականացու ստեղծելն իր իմաստությունից էր, [որ] երեք պատճառ [ունի]:

Նախ ցույց է տալիս, որ [նրանք] փոխման ունեն, նույնպես և՝ սկիզբ: Եվ այսպես, նրանք ինքնըստինքյան չեն լինում, այլ՝ Ստեղծողից, և այսպես հասնում մինչև մարդը:

Երկրորդ պատճառ. այս աշխարհը գեղեցիկ է, որովհետև ստեղծվածները զանազան են, և [այս] պարզենք երկու կերպով: Առաջին՝ քնարը, որ զանազան լարեր ունի. եթե բոլոր լարերը զույգ լինեին, այնպիսի գեղեցիկ ձայն չէին արձակի: Երկրորդ՝ մարմնի անդամները. որովհետև եթե ոտքը

այնքան պատվական լիներ, որքան աչքը, [կարող] էր բնությամբ գեղեցիկ լինել, բայց առանց մարմնի համար չէր լինի: Ինչպես Պողոսն է ասում. «Եթե բովանդակ մարմինը աչք լիներ, ապա ո՞ւր կմնար մարմինը» (Ա Կոր 12.17,19): Այսպես, եթե այն բոլորը, որ աշխարհում են, այնպես ազնվական, պատվական լինեին ինչպես հրեշտակները և երկինքը, որոնք գեղեցիկ են բնությամբ, բայց ոչ այս աշխարհի համար, և Աստված, որ ընդհանրապես խնամում է այս աշխարհը, խնամում է նախ ընդհանուրին, հետո՝ անհատներին:

Երրորդ պատճառ՝ որովհետև այն, որ այս աշխարհում է, մարդու համար է ստեղծվել, և եթե դրանք անապական լինեին, մարդկային միտքը դրանց հետ է՛լ ավելի կապված կլիներ և կհեռանար Արարչից: Այս պատճառով վարդապետներն ասում են. «Ո՛վ ապականելի աշխարհ, այժմ, որ այսպես ապականացու և անցավոր ես, և քեզ սիրում ենք, եթե մնայուն և անանց լինեիր, ի՞նչ պիտի անեինք»: Արդ, այժմ կարող ենք մանիքեցիներին հարվածել իրենց [իսկ] սրով, որովհետև նրանք ասում են, թե լույսը և անապական էակները բարի աստծու են: Պատասխանենք. որ այն, ինչ անապական է, Աստված կարող էր է՛լ ավելի բարի և ազնիվ ստեղծել և կամ չէր կարող, և եթե կարող էր ու չկամեցավ, ուրեմն նախանձոտ էր, իսկ եթե չկարողացավ՝ անկարող էր: Ուրեմն պարզ է, որ նրանց աստվածությունը սին է:

Երկրորդ՝ աշխարհում տեսնում ենք բազում անօգուտ բաներ, որ մարդկանց պետք չեն, այլև՝ վնասակար, ինչպես թունավոր օձերն ու որդերը և ուրիշ աղետի կենդանիները: Այս պատճառով ասում են, որ դրանք բարերար Աստծո ստեղծածները չեն, այլ՝ չարից և վնասակարից են: Բայց վարդապետները [առարկելով] պատասխանում են, որ աշխարհում չկա մի գոյ, որ օգտակար չլինի, թեպետ նրա օգտակարությունը չի երևում, ինչպես օձերից և վնասակար գեռուններից բժիշկների պատրաստած պիտանի դեղը: Իսկ եթե որևէ մեկը անպատշաճորեն է ճաշակում օգտակարը՝ գինին և կերակուրը, [ապա] այն վնասում է նրան: Այսպես էլ օգտակար է յուրաքանչյուր տարիքի պատշաճավոր կիրարկումը, մինչդեռ անպատշաճը վնասում է, ինչպես կրակի չափավոր կիրարկումը պիտանի է ցուրտը վանելու [համար], այնպես էլ ոչ չափավոր [կիրարկումը] այրում և վնասում է: Այսպես, աշխարհի բոլոր առարկաները [գոյերը] օգտակար են, սակայն մենք [նրանց մասին] անտեղյակ ենք երեք պատճառով: Նախ՝ հավատում ենք, որ Ստեղծողը ոչ մի անօգուտ բան չի ստեղծել: Երկրորդ՝ մեր միտքն ենք վարժում և ուսուցանում: Երրորդ՝ մեր հպարտությունն ենք վանում, որովհետև եթե արարածների մասին անգիտանում ենք, ինչպե՞ս կարող ենք դրանց Արարչին իմանալ: Ավելին, վարդապետներն ասում են, թե բոլոր արարածները զանազան [կերպով] օգտակար են մարդկանց. ոմանք՝ կերակուրներում, ոմանք՝ բեռը կրելիս, ոմանք՝ մեզ ուսուցանելիս, ինչպես մրջյուններն ու մեղուները, ոմանք՝

պատժով, ոմանք՝ մեզ խոնարհեցնելով, ինչպես ոջիլները, լվերը և ճանճերը, երբ մարդիկ չեն կարողանում նրանցից ձերբազատվել. որովհետև եթե մեկը քո դեմ անախորժ մի բան է անում, դու բարկանում և վիրավորվում ես՝ ինչպե՞ս չես կարող ընդդիմակայել լվերին և ճանճերին, որոնք միշտ անհանգստացնում են քեզ: Այսպիսով, ոմանք օգտակար են համով, ոմանք՝ հոտով, ոմանք՝ տեսքով, ոմանք՝ գույնով, ոմանք՝ ձայնով: Այս ուրեմն պարզ է, որ աշխարհում ոչ մի բան անօգուտ չէ:

Երրորդ՝ աշխարհում շատ բան տեսնում ենք անկարգ և մեղքով ու չարությամբ լի: Այս պատճառով ասում են, թե չար աստծուց է ստեղծված: Վարդապետները [առարկելով] պատասխանում են, թե ընդհանրապես բոլոր արարածները կարգավոր են, ինչպես ասում է Պլատոնը, թե՝ աշխարհում մի բան չկա, որի ծնունդը ճշմարիտ պատճառի նախընթացը չի լինում, ինչպես գրում է Հոբը. «Երկրում չկա մի բան, որ առանց պատճառի լինի» (Հոբ 34.13, 37.10-12): Նույնիսկ փոքրիկ թռչուններն առանց Աստծո նախախնամության չեն ընկնում. ինչպես ասում է Տերը. «Երկու ճնճղուկներ մեկ դրամով են վաճառվում, և նրանցից մեկն անգամ [գետին] չի ընկնում առանց ձեր Հոր [կարգադրության]» (Մատթ 10.29): Նույնպես և Ժողովողն է ասում. «Աստծո առջև մի՛ ասա, թե ագիտություն է, որպեսզի Աստված չբարկանա» (Ժող 5.6): Եվ դարձյալ ասում է. «Եթե աղքատների զրպարտվելը և իրավունքի ու արդարության հափշտակվելը տեսնես, մի՛ զարմացիր, որովհետև [մեզանից] բարձր բաները բարձունքների վրա է պահում և բոլորի վրա է թագավորում» (Ժող 5.7): Այս պատճառով այն, ինչ բարի է աշխարհում, Աստված ստեղծում է իր կամքի համաձայն, և այն, ինչ չար է, թույլ է տալիս, որ արդարությամբ և իմաստությամբ լինի: Բայց առկա չարը պատշաճորեն կարգավորում է երեք կերպով.

Նախ՝ մեղքի չարության [համար] պատժում է, որպեսզի մեղքի ապականությունը չմնա առանց գեղեցիկ վրեժխնդրության: Այսպես Հուդան արժանիորեն տանջվում է դժոխքում, ինչպես աղոտ ակնաքարը ոսկի մատանու վրա:

Երկրորդ՝ որովհետև բարությունը չարության մոտ գեղեցիկ է երևում, ինչպես սևությունն ըստինքյան անզարդ է, բայց պատկերագրության արվեստի մեջ, իր պատշաճ տեղում դրված, զարդ է երևում: Այսպես, չարությունն ըստինքյան տգեղ է, բայց այս աշխարհի մեջ, պատշաճավոր տեղում դրված, գեղեցիկ է ցույց տալիս այս աշխարհը:

Երրորդ՝ որովհետև վատերի չարությունը օգտակար է բարիներին, ինչպես ասում է Պողոսը. «Գիտենք. նրանք, ովքեր սիրում են Աստծուն՝ ամեն ինչում գործակից են լինում բարուն» (Հռոմ 8.28): Այս պատճառով Աստված դևերին բարի ստեղծեց, որոնք իրենց կամքի [պատճառով] չարացան: Աստված նրանց կարգավորեց հօգուտ բարության, [որովհետև] նախքան նրանց ստեղծելն Աստված գիտեր, որ նրանց չարությունից

բազում բարիք է դուրս գալու: Այս պատճառով Աստված թե՛ մարդկանց և թե՛ դևերի մեջ չարն է ստեղծում: Ուրեմն մանիքեցիների առարկությունը սին է, որովհետև Աստված ինչ չարություն և անկարգություն որ հանդուրժում է, հետո բոլորը կարգավորում և սահմանավորում է:

Չորրորդ՝ ասում են, թե պատճառն անփոփոխելի է, հարկ է, որ պատճառի [հետևանքն] էլ անփոփոխելի լինի: Եվ քանի որ Աստված անփոփոխելի է և արարածները՝ փոփոխական, ապա [այդպիսիք] բարի ստեղծված չեն, այլ՝ չարից: Ասենք, որ այս առարկությունը խիստ թույլ է, որովհետև ընդհանրապես հարկ չէ, որ հետևանքը ամեն ինչով նման լինի պատճառին, որը ներգործում է ազատ կամքով: Որովհետև տեսնում ենք, որ տգեղ նկարիչը գեղեցիկ պատկեր է նկարում և գեղեցիկ [նկարիչը] երբեմն՝ տգեղ: Դարձյալ՝ նրանց առարկությունը հակառակ է նրանց. որովհետև նրանք ասում են, թե չար աստվածը հավիտենական է և պատճառ է արարածներին, որոնք ժամանակավոր են: Ուրեմն հետևանքը նման չէ պատճառին:

Հինգերորդ՝ ասում են, թե հետևանքները ներհակ են մեկմեկու՝ հարկ է, որ նրանց պատճառներն էլ ներհակ լինեն իրար: Բայց քանի որ չարն ու բարին ներհակ են մեկմեկու, ապա հարկ է, որ նրանց պատճառներն էլ ներհակ լինեն իրար: Ուրեմն, եթե բարի աստվածը բարիքի պատճառն է, ապա հարկ է, որ չարի պատճառն էլ չար աստվածը լինի: Եվ վկայությունն են բերում Արիստոտելից, որ ասում է, թե՝ «Իհարկե, պետք է սկզբունքները ներհակ լինեն իրար»: Վարդապետները պատասխանում են, թե այս առարկությունը բազում թերություններ ունի, որովհետև նրանց առաջին խոսքը ընդհանրապես ճիշտ չէ, քանի որ պատճառն, ըստ Արիստոտելի, երկուսն է. առաջինը [այն է], որ ներգործում է բնությամբ՝ առանց կամքի և գիտության, ինչպես կրակը և ջուրը: Եվ այս ճշմարիտ է. որովհետև հետևանքները ներհակ են [իրար], այսինքն՝ տաքացնելն ու սառեցնելը: Այս պատճառով հարկ է, որ կրակը և ջուրը ներհակ լինեն իրար: Երկրորդ պատճառն [այն է], որ ներգործում է գիտությամբ և կամքով. և այս ճշմարիտ չէ, որովհետև մեկ բանական զորությունը իշխում է երկու ներհակ [ուժերի] վրա, ինչպես միևնույն նկարիչը կարող է և՛ գեղեցիկ պատկեր նկարել, և՛ տգեղ, և՛ սև, և՛ սպիտակ: Այս պատճառով Պողոսը գրում է Հռոմեացիներին հղած թղթում. «Մի՞թե բրուտը կավի վրա իշխանություն չունի նույն զանգվածից անոթ պատրաստելու՝ մեկը պատվի, մյուսն անարգանքի համար» (Հռոմ 9.21): Եվ այս է, որ բնական պատճառը ներգործում է [իր] բնության տեսակով, և անկարելի է, որ միևնույն առարկաները երկու տեսակ բնությամբ իրար ներհակ լինեն, որովհետև միևնույն առարկայի մեջ երկու ներհակ պատճառներ չեն կարող լինել: Մինչդեռ բանական պատճառը ներգործում է հակառակ տեսակների միջնորդությամբ, բայց բնությամբ երկու ներհակները ընկալող մտքում ներհակ չեն, ինչպես օրինակ՝ սևն ու սպիտակը բնությամբ ներհակ են, [բայց

մաքուր՝ ոչ]: Այս պատճառով, եթե բարին ու չարը ներհակ են իրար, հարկ չէ, որ դրանց սկզբնապատճառը ներհակ լինի, բայց միևնույն պատճառից հնարավոր է, որ երկու [ներհակ ուժեր] լինեն: Մինչդեռ Արիստոտելի խոսքը նրանց չի օգնում, որովհետև Արիստոտելը այդ [խոսքը] ասում է ոչ թե ընդհանրական նախադրյալի, այլ [միայն] բնության սկզբի մասին, որովհետև [նա] հաստատում է, որ բնությունը երեք սկիզբ ունի՝ նյութը, ներհակը և տեսակը: Երբ նյութն իր մեկ տեսակը կորցնում է, մեկ այլ տեսակ է ընդունում: Սակայն առաջին սկզբի մասին Արիստոտելը հաստատում է, որ մեկն է սկիզբը: Եվ Ավեռսեան ասում է. եթե որևէ մեկն ընդհանրական սկիզբը ներհակ է համարում, սխալ է: Այդ պատճառով Մանին, որ նախասկիզբը երկուսն էր համարում, շատ հիմար էր:

Նրանց երկրորդ խոսքը [այն մասին, թե] բարին և չարը [իրար] ներհակ են, ճշմարիտ չէ, որովհետև բարին և չարը երկու [ինքնակա] ներհակ [ուժեր] չեն, ինչպես սևը և սպիտակը, այլ՝ որպես ունակություն և պակասություն են:

Բանն այն է, որ երկու ներհակ [ուժերը] ունեն բնություն, ինչպես տաքությունն ու ցրտությունը, սևությունն ու սպիտակությունը, մինչդեռ ունակությունն ու պակասությունն այդպիսին չեն, որովհետև միայն ունակությունն ունի բնություն, իսկ պակասությունը բնություն չունի, որովհետև [նրա] բնությունը պակասությունն է: Այսպես, բարին ունի բնություն, իսկ չարը բնություն չունի, այլ բարու պակասությունն է: Եթե որևէ մեկը պնդում է, թե Արիստոտելը իր տասն ստորոգություններում ասում է, որ չարը ներհակ է բարուն՝ [դրան] կպատասխանենք. Արիստոտելը ընդարձակ առումով է վերցնում ներհակությունը՝ ունակության և պակասության փոխարեն: Եվ եթե չարն այլ բան չէ, քան բարու պակասությունը, հարկ չէ երկուսն [էլ] նախապատճառ համարել՝ մեկը բարի, մյուսը՝ չար: Եվ չարության մասին, որ պակասություն է, հիմարություն է ասել, թե նա նախասկիզբը ստեղծողներից մեկն է, որովհետև բարի արարածներից կարող է չարություն գալ, այսինքն՝ բանական արարածների ազատ կամքից: Որովհետև Աստծո ստեղծած ազատ կամքը կարող է բարիք և չարիք գործել, և քանի որ Աստծո ստեղծածն է, կարող է բարիք գործել: Սակայն որովհետև ոչնչից է ստեղծվել, կարող է հեռանալ [բարությունից], և չարիք գործել, ինչը բարու պակասությունից է:

Այսպիսով, մանիքեցիները չարության պատճառով ասացին, թե երկու աստվածներ կան, որովհետև չիմացան՝ ինչ է չարը, և այն համարեցին բնություն: Սակայն Դիոնիսիոսը գրում է, թե չարը բնություն չէ, այլ բարության պակասությունից է[12]*: Իմանալի է, որ չարը երկուսն է՝ մեկը պատիժն է և մյուսը՝ մեղքը:*

Առաջին չարն Աստծունն է. սակայն ամենևին [էլ] չար չէ պատժել մեղավորին և մեղքը, որովհետև այս գործն արդար է:

Երկրորդ. չարը մեղքինն է, որ ստեղծված չէ, այլ ստեղծվածներինն է, որոնք բարի են ստեղծվել, բայց [իրենց] ներհատուկ կամքի [պատճառով] չարացել: Այդ պատճառով է չարը առաջանում դրանից: Այն, որ բոլոր արարածներից կարող է և՛ չարը և՛ բարին դուրս գալ, հաստատենք օրինակներով: Մեկ պատճառ ունեն ուղիղ քայլելը և կաղալը. ուղիղ [են] քայլում, երբ առողջ են և պակասություն չունեն, մինչդեռ կաղում են [այն ժամանակ], երբ ինչ-որ պակասություն և թերություն ունեն: Այսպիսով, չարն ու բարին անձնիշխան կամքից են: Այս պատճառով Եսային ասում է. «Որթատունկ տնկեցի և սպասեցի, որպեսզի ինձ խաղող բերի, և փուշ բերեց» (Եսայի 5.2): Երեմիան ասում է. «Ես քեզ տնկեցի իբրև պտղաբեր ճշմարիտ որթատունկ, ինչպե՞ս ինձ համար դառնություն դարձար, [ո՞վ] դու օտարացած որթատունկ» (Երեմ 2.21):

Դարձյալ ժխտենք մանիքեցիների խոսքը, որոնք ասում են, թե երկու սկիզբ և երկու աստվածներ կան: Եվ այս կարճառոտաբար [արձանագրենք] հինգ մտքով:

Առաջին՝ երկուսը սկիզբ չի կարող լինել, որովհետև երկու թիվը մեկից է բաղկացած: Արդ, նախ բաղկացնողն է, հետո՝ բաղկացածը:

Երկրորդ՝ երկուսը բաղկացած (բարդ) է, իսկ մեկը՝ պարզ. քանի որ ամենայն ինչ բաղադրված է պարզից, ապա ուրեմն սկիզբը չէ երկուսը, որ բաղադրված է, այլ [սկիզբը] է մեկը, որ պարզ է:

Երրորդ՝ եթե սկիզբը երկու և հակառակ [լինեն], [ապա կողմերը] կըմարտնչեին իրար դեմ և իրենց սկզբունքների [դեմ], և ոչինչ խաղաղության մեջ չէր մնա:

Չորրորդ՝ եթե երկու հակառակամարտ աստվածներ լինեին, մեկը մյուսի ստեղծածը կավրեր, և արարածներ չէին լինի:

Հինգերորդ՝ եթե կան երկու աստվածներ, կամ իրար ճանաչում են, կամ չեն ճանաչում: Եթե չեն ճանաչում՝ երկուսն էլ սուտ են, իսկ եթե ճանաչում են, [ապա կարող են] ճանաչել կամ տեսակով, որ ունեն, այսինքն՝ բաղադրված գոյացությամբ, որ ունեն, և տեսակով, որ ընդունել են, այսինքն՝ պատահմամբ (ներմուծմամբ), կամ ճանաչում են երկնային պատրաստությամբ և նրա բնությամբ, որին մերձենում են, և որը կատարելագործում է [նրանց], ուրեմն՝ նրանք անկատար են: Ինչպես օրինակ՝ աչքը տեսնում է որակը, տեսնում է նաև լույսը, սակայն՝ ուրիշ կերպ, որովհետև որակը տեսնում է տեսակի միջնորդությամբ, քանի որ նրանից է ընկալում, մինչդեռ լույսը տեսնում է ներկայական էությամբ, որովհետև լույսի էությունը ընկալվում է աչքի մեջ և կատարելագործում այն: Այսպիսով, աչքն [ինքը] անկատար է, և կարոտ է լույսի ու տեսնելու: Արդ, եթե մի աստված մյուսին ճանաչում է կամ հոգևոր տեսակով և կամ ներկայական էությամբ՝ անկատար է, ուրեմն՝ Աստված չէ: Այսքանն ընդդեմ մանիքեցիների: Այս բոլորի պատասխանները կգտնես Հարցմանց գրքում[13]:

Գլուխ Ը

ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԱՍՏՎԱԾ ՄԵԿՆ Է

Այս բոլորից հետո մաքրվեցինք աստվածաբանության խոսքով, հերքեցինք հեթանոսների դասին, անզգամներին, կռապաշտներին և մանիքեցիներին: [Այժմ] անդրադառնանք աստվածապաշտներին, որոնք ասում են, թե Աստված մեկն է: Աստծո միակ լինելը հաստատվում է երկու կերպով. նախ՝ բնական իրերի քննությամբ, երկրորդ՝ աստվածաշունչ գրքերի վկայությամբ: Վարդապետները բնական իրերը ցույց են տալիս բազում կերպով:

Առաջին՝ եթե աստվածները բազում լինեին, աստվածային միությունը նրանց մեջ որևէ թիվ չէր ունենա, այլ կլիներ տեսակներից մեկը: Եվ երբ [նրանցից] որևէ մեկը թիվ չունի, հարկ է, որ նա ինչ-որ առավելություն ունենա, ինչը [իր հերթին] զանազանում է բնությունը և աստվածներից յուրաքանչյուրին անհատների վերածում: Սակայն աստվածային բնությունը, որ ամբողջովին պարզ է, չի կարող ինչ-որ առավելություն ունենալ՝ ոչ գոյացական և ոչ պատահական (ներմուծական): Եվ եթե [բնությունն] է ընդունում, չի կարող պարզ լինել, այլ՝ բաղադրյալ: Ուրեմն՝ անկարելի է, որ բազում աստվածներ լինեն, այլ՝ միայն մեկը: Եվ եթե որևէ մեկն ասում է, թե գոյացական տեսակը, ինչպես բանական հոգին, վերածվում է բազում անհատների և որևէ ավելորդ բան չի ընդունում, ուրեմն՝ աստվածային տեսակը կարող է զանազան անհատների վերածվել առանց ավելորդ բան ընդունելու: Պատասխանում ենք, թե այս նման չէ նրան, քանի որ գոյացական տեսակն ընդունվում է նյութի կողմից և վերածվում բազում նյութական մասերի ու տեսակների, ինչպես բանական հոգին: Մինչդեռ աստվածայինը չի կարող նյութի մաս կազմել, ուստի, ինչպես հոգին, չի կարող տարբերվել նյութական մասերից: Ուրեմն չեն կարող բազում աստվածներ լինել:

Երկրորդ՝ Արիստոտելը գրում է, որ «Այն, ինչը գերազանցություն ունի, միակ է համարվում»: Ինչպես օրինակ, [անհնար է] որևէ մեկի [մասին] ասել՝ կարող, կարողագույն, հույժ կարողագույն, մինչդեռ աստվածային բարության [մասին] գերազանցությամբ է ասվում՝ ոչ միայն բարի կամ բարեգույն, այլև հույժ բարեգույն. ուրեմն Աստված մեկն է:

Երրորդ՝ հարկ է ընդունել Աստծո ամբողջովին կատարյալ լինելը, որովհետև Արիստոտելն ասում է. «Որևէ իր կատարելություն ունի ըստ իր տեսակի, մինչդեռ Աստված ամբողջովին կատարյալ է»: Այն է կատարյալը, որի մեջ կատարելությունն անթերի է, և չկա որևէ թերություն նրա մեջ: Ուրեմն, եթե աստվածները բազում են, հարկ է, որ բազում համակ կատարյալներ լինեն: [Բայց] սա էլ անկարելի է. որովհետև բովանդակ կատարելությունը նրանցից յուրաքանչյուրի մեջ կլիներ. և բնավ նրանց

մեջ թերություն չէր լինի, ապա ուրեմն՝ նրանց մեջ բնավ զանազանություն չէր լինի: Եվ եթե [նրանցից] յուրաքանչյուրը [իրեն] հատուկ մի կատարելություն ունի, որ չունի մյուսը, ապա այս կերպով կարող է զանազանություն լինել նրանց մեջ, որովհետև [նրանցից] ամեն մեկը որևէ թերություն կունենա [մյուսի նկատմամբ]:

Չորրորդ՝ իմաստասերներն ասում են, որ այն, ինչ կարող է մեկի [շնորհիվ] կատարվել, նախընտրելի է, որ մեկի [շնորհիվ] լինի, քան թե բազմության: Եվ եթե բազմության [շնորհիվ] լինի՝ անօգուտ է: Մինչդեռ աշխարհի ընդհանուր կարգն իր վախճանին է հասնում մեկ սկզբի [շնորհիվ]: Եվ եթե առաջին սկիզբն ամենակարող է՝ ամենայն ինչ կարող է կատարելագործել: Ուրեմն սին և անօգուտ է ասել, որ բազում նախասկիզբներ [կան]:

Հինգերորդ՝ իմաստասերներն հաստատում են, թե առաջին շարժումը, որ քսանչորս ժամում մեկ օր է կազմում, մշտաշարժ և կարգավոր պտույտ է, որ միշտ նույնօրինակ է: Այդ առարկային անհրաժեշտ է մի նախասկզբնական շարժող, որովհետև մի կարգավոր շարժումը չի կարող բազում շարժողներից ընթացք առնել, որովհետև եթե շարժողները շատ լինեն, կամ պետք է երկուսը շարժեն, կամ հերթով՝ մեկը, հետո՝ մյուսը: Եթե երկուսն են շարժում՝ ուրեմն նա բնավ կատարյալ շարժող չունի, որովհետև բոլորը մեկ շարժողի չափ են, հետևաբար նրանց մեջ բնավ առաջին շարժող չկա: Ուրեմն՝ առաջին շարժողին պարտ է կատարյալ լինել: Իսկ եթե երկուսով չեն շարժում, այլ՝ մեկը՝ սկզբից, մյուսը՝ հետո, երբ [նրանցից] յուրաքանչյուրը մերթ շարժում և մերթ չի [շարժում], ապա նրանց մեջ առաջին շարժող երբեք չի լինում, և այն շարժումը, որ շարժում են, նույնպես չի լինում, որովհետև շարժողը, որ երբեմն շարժում է և երբեմն՝ ոչ, անկարգ է շարժում, ինչպես օրինակ՝ երբ ներքին շարժումը բռնությամբ է լինում՝ այլայլվում և անկարգաբար է շարժվում, որովհետև սկզբից արագ է պտտվում, իսկ վերջում՝ դանդաղ: Բայց այն, որ բնությամբ է շարժվում, հակառակ սրա, սկզբում դանդաղ և վերջում արագ է պտտվում: Ուրեմն առաջին շարժումը, որ մշտաշարժ և կարգավոր է, հարկավ պետք է, որ մի շարժողից շարժվի, և այն առաջին շարժողն Աստված է, հետևաբար պարտ է, որ մեկ Աստված լինի:

Վեցերորդ՝ փիլիսոփաներն ասում են, որ զգալի գոյացությունները կարգավորվում են հոգևոր գոյացությունների կողմից, որովհետև հոգևոր գոյացությունն ավելի բարություն ունի, ուստի զգալի առարկաները ձգտում են միշտ նրան նմանվել: Բայց բոլոր զգալի շարժումները կարգավորված են առաջին շարժումով և նրա ձեռքի տակ են, և նրանից դատ չկա ուրիշ շարժում, որ նրան ավերակի: Ուրեմն բոլոր զգալի գոյացությունները կարգավորվում են հոգևոր գոյացությունների կողմից, որ առաջին շարժման վախճանն ու ավարտն է: Բացի հոգևոր գոյացությունից ուրիշը չկա, որ նրա ձեռքի տակ լինի: Եվ դրան Աստված ենք ան-

վանում, ուրեմն՝ Աստված մեկն է:

Յոթերորդ՝ Աստված հույժ պարզ է. չկա մի իր, որ ընդհանրություն ունենա մեկ այլ իրի հետ, և եթե ինչ-որ ընդհանրություն ունի ուրիշի հետ, նրան հարկ է նաև հատկություն լինել, որպեսզի տարբերվի ուրիշներից: Որովհետև նրա նկատմամբ, որ ընդհանուր է, զանազանություն չունի, բայց եթե Աստված ինչ-որ ընդհանրություն ունի [այլ իրի հետ], կունենա նաև մասնավոր [տարբերություն], հետևաբար [նա] բաղադրյալ է: Այս էլ է սուտ: Արդ, անհրաժեշտաբար պարզ է, որ Աստված ընդհանրություն չունենա ուրիշների հետ: Ուրեմն կա ինչ-որ ընդհանրություն, [որ այլպիսին] չէ ուրիշ իրերի նկատմամբ, ինչպես աստվածայինը: Հետևաբար, եթե կան օրվա աստվածներ, նրանցից ոչ մեկն էլ աստված չէ, որովհետև եթե նրանցից մեկն է, մյուսը՝ չէ և թե մեկն աստված է, մյուսը՝ չէ, ուրեմն՝ ոչ թե երկու, այլ՝ մի Աստված: Բայց սրա դեմ մեկը կարող է առարկել, թե Աստված, որ ստեղծող է, ինչ-որ ընդհանրություն ունի ստեղծվածների հետ: Եվ քանի որ երկուսն են, ապա անհնարելի չէ, որ Աստված ինչ-որ ընդհանրություն ունենա այլ աստվածների հետ: Պատասխանում և ասում ենք, թե Ստեղծողը ոչ մի ընդհանրություն չունի ստեղծվածների հետ, որովհետև ոչինչ նույնական չէ Ստեղծողի և ստեղծվածների միջև: Բայց նույնական լինելը երկուսին չի կապում իրար, որովհետև լինելը երկակի [իմաստ] ունի. մեկն առանց շարժման ու չափի, և սա հատուկ է Աստծուն, և մյուսը՝ շարժական ու փոփոխական, և սա վերաբերում է ստեղծվածներին:

Ութերորդ՝ փիլիսոփաներն ասում են, թե երբ շատերը կարգավորվում են մեկը մյուսի հետ, նրանց կարգավորությունը [կատարվում է] մեկի [կողմից]: Այսպես օրինակ՝ Արիստոտելն ասում է, թե թագավորի զորքը երկու կարգ ունի. մեկը՝ զինվորների՝ մեկմեկու նկատմամբ ունեցած [կարգապահությունն է], երբ նրանք պահում, օգնում են իրար: Երկրորդ կարգը [այն] է, [երբ] բովանդակ զորքը կարգավորվում [ղեկավարվում] է զորապետի կողմից: Սակայն առաջին կարգը երկրորդի համար է (ենթակա է երկրորդին), և ամբողջ զորքն իրեն կարգավորում (ղեկավարում) է, որպեսզի թագավորի կամքը կատարվի և թշնամիները պարտվեն: Այս կարգը, որ ունի զորքը, [իրագործվում է] կամ զինվորների ու զորապետների, կամ էլ մի զորապետի կողմից: [Այդ կարգը] բազում զինվորներից չի կարող լինել, որովհետև զինվորները բազում և տարբեր են, և նրանցից յուրաքանչյուրի բարքն ու կամքը՝ յուրահատուկ, ուստի բազում կամքերը չեն կարող մեկ ընդհանուր կարգ հաստատել: Ուրեմն հարկ է, որ կարգը մի զորապետի կողմից [հաստատվի]: Եվ երբ շատերն են մեկմեկու կարգավորում, պարզ է, որ նրանց նպատակը մեկ կետի ուղղվի: Այդպես էլ աշխարհի բոլոր տարրերն են մեկմեկու նկատմամբ կարգավորված, որովհետև ստորին մարմինները կարգավորված են վերին մարմինների կողմից և խնամվում են նրանց կողմից, իսկ նրանք [էլ]՝ հոգևոր

գոյացությունների կողմից: Ուրեմն, հարկ է, որ բաժանված աշխարհն մի խնամող և կարգավորող ունենա, այն է՝ Աստված: Իսկ եթե որևէ մեկն ընդդիմանալով առարկի, թե աշխարհի կարգը [հաստատված] չէ մեկի կողմից, այլ [սոսկ] բախտ է, ասենք, որ այս [էլ] սուտ է, որովհետև այն, որ բախտ է [համարվում], լինում է ուշանալով և հազվադեպ, ինչպես օրինակ՝ եթե մեկը հողը փորի ոսկու համար, [նրան] հազվադեպ և ուշ-ուշ կհանդիպի: Մինչդեռ աշխարհի կարգը հարատև է, ինչպես արեգակի ծագելը, և հարակրկնությամբ, ինչպես մարդը, որը ծնվում է մեկ գլխով և հինգ մատով: Ուրեմն այս կարգը չի [կարելի] անվանել բախտ, այլ [այդ կարգը] նրա կողմից է, որը կարգավորում է ամենայն ինչ. հետևաբար Աստված մեկն է:

Իններորդ՝ եթե աստվածային բնությունն անհատ է ինչ-որ հատկությունների առավելությամբ, ապա [այն] բաղադրյալ է. ինչպես մարդկային բնությունը մասնավորվում է [օրինակ] Պետրոս և Հակոբոս անուններով, [որոնք] անհատ են, ուստի բաղադրված են: Հետևաբար [թեպետ] նրան չի կարելի Աստված անվանել, բայց նա բաղկացյալ անհատ է, ուստի և չի կարող շատերին հավասար լինել, որովհետև այն, որն անհատի սկիզբն է, շատերից մեկը չէ, այլ՝ միայն մեկը, ինչպես Պետրոս [անուն] կրողը մեկն է, ուրեմն անկարելի է, որ բազում աստվածներ լինեն: Եվ իմանալու է, որ Աստծո և մարդու միջև զանազանություն կա. Աստված [բոլոր] իրողությունների համար Աստված է, նույն իրողությունը [մեկ] Աստված ունի, այսինքն՝ [Աստված] իր բնությամբ ինքնակա է, [ինչպես նաև]՝ միևնույն իրողությունը չի կարող բազում աստվածներ ունենալ: Մինչդեռ մարդը մարդ է այլ իրողությունների [նկատմամբ], այսինքն՝ համաձայն իր մարդկության, և իր անհատի մեջ՝ մասնահատուկ մարդ, այսինքն՝ Սոկրատես: Եթե մարդկային [անհատն ընդհանրապես] և մարդ [անհատը մասնավորապես] նույնական լինեին, չէր կարող աշխարհում շատ մարդ լինել:

Տասներորդ՝ իմաստուններն ասում են, թե արարածների մեջ չորս իրողություն կա, այսինքն՝ բազմություն, կարգ, անկատարություն և շարժում: Սրանցից յուրաքանչյուրը հաստատում են, թե [կա] միայն մեկ սկիզբը:

Առաջինի մասին գրված է Թվաբանության գրքում, նույնն ասում է նաև Դիոնիսիոսը, թե՝ Բոլոր բազմությունները ծնվում են մեկից[14]: Ուրեմն հարկ է, որ բոլոր բազմությունները մեկ սկիզբ ունենան: Ինչպես ասում է Արիստոտելը. Բոլոր անհատներն ինչ-որ ընդհանրություն ունեն, և բոլոր անհատները նրանից են արտաբերվում, նրա, որպես պարզ [իրողության], մեջ են գտնվում բոլոր անհատները, [նրա,] որ բոլորի համար չափ է, և [բոլորը նրա] նույն անհատի մեջ են, ինչպես օրինակ՝ կշռի մեջ կշռաքը, որ բոլորի համար չափ է, թվերի մեջ՝ մեկը, գույների անհատներում՝ սպիտակը: Սակայն արարածները մեկ անհատի մեջ են միավորված

և կցորդվում, այսինքն՝ էության մեջ: Ուրեմն հարկ է, որ [նրանք] մի պարզ սկիզբ ունենան, որպեսզի բոլոր էակները նրանից տարածվեն, և դա Աստված [ինքն] է:

Երկրորդի մասին ասում են. յուրաքանչյուր կարգ ունի սկիզբ և վերջ, իսկ սկիզբը և վերջ ունեցողը հարկ է, որ մի սկիզբ ունենա:

Երրորդի մասին ասում են. բոլոր անկատարները ծնվում են մի համակ կատարյալից, և դա Աստված [ինքն] է:

Չորրորդի մասին Դիոնիսիոսն ասում է. Առաջին պատճառն իբրև մի շամփուր անցնում է մեր բոլորի էությունների միջով. [էությունները, որոնք] մնում են անփոփոխ[15]. ուրեմն Աստված մեկն է:

Տասնմեկերորդ՝ էությունն ու միակությունը (միությունը) նույնական են, որովհետև ինչ առավելություն որ ունի էությունը, նույնը ունի միակությունը, և յուրաքանչյուր էություն ջանում է իր միակությունը պահպանել: Էությունը հակառակ է բաժանմանը, որովհետև բաժանումից էությունը ապականվում է, իսկ միակության մեջ՝ պահպանվում: Մինչդեռ Աստված վեր է ամեն տեսակ էությունից, ուրեմն և՝ ամեն տեսակ միակությունից: Իմանալու է, որ միակությունը երեք աստիճան ունի.

Նախ՝ տարրական միակ է իր սեռի մեջ, և սա անկատար միակություն է:

Երկրորդ՝ որևէ տարրը միակ է իր տեսակի մեջ, և այս միակությունը կատարյալ է, քան առաջինը:

Երրորդ աստիճանը՝ [այն], որը միակ է ըստ թվի և անհատ (անբաժանելի) միակ է: Եվ սա բոլոր միակություններից կատարյալ է, որովհետև ենթակա չէ բաժանման: Հետևաբար հարկ է, որ Աստված մեկ լինի ոչ թե ըստ սեռի և տեսակի, այլ՝ միայն ըստ անհատի:

Տասներկուերորդ՝ փորձագետներն ասում են, որ յուրաքանչյուր առաջնորդ, որ գլխավոր է կարգված, հարկ է, որ մեկը լինի, ինչպես մի մարմնի անդամները մեկ գլուխ ունեն: Այս մասին Արիստոտելն ասում է. «Վատ է, երբ մի պետություն բազում առաջնորդներ ունի, և մի տուն՝ բազում տանուտերեր»: Եվ եթե բովանդակ աշխարհում այսպես է. կա մի թագավորություն, մի առաջնորդություն, ապա, հարկ է, որ մի [ընդհանուր] առաջնորդ և թագավոր լինի, այն է՝ մեկ Աստված: Այս մասին Արիստոտելն իր գրքի վերջում եզրակացնում է. «Ուրեմն բոլորի գլուխը մեկն է»[16]:

Այսքանը, բնական իրերի քննությամբ, [այն մասին], որ Աստված մեկն է:

Երկրորդ՝ [այն, որ Աստված մեկն է], հաստատվում է Սուրբ Գրքի վկայությամբ: Նախ Մովսեսը Երկրորդ օրինացում գրում է. «Լսիր, Իսրայել, քո Տեր Աստված մեկ Տեր է» (Բ Օր 6.4): Եվ նույն տեղում ասում է. «Տեսեք, որ ես եմ միայն Տեր Աստվածը և ոչ մեկ ուրիշը» (Բ Օր 32.39): Եվ Պողոսը Եփեսացիներին [հղած թղթում] ասում է. «Աստված մեկ է, մկրտությունը մեկ է, հավատքը մեկ է» (Եփես 4.5): Եվ փորձագետներն

ասում են, թե Աստված բացարձակապես մեկ է, ինքը միշտ նույնն է և միակերպ, և [իրենում] ոչինչ չունի իրենից զատ: Այս ճշմարտությունը մեկն է, որովհետև ինքը թիվ չունի, և նրա մեջ ոչինչ չկա բացի նրանից, որ էությունն է, քանզի ինչ որ Աստծո մեջ է՝ Աստված է: Սակայն այստեղ պետք է չորս բան իմանալ.

Նախ, առաջինն՝ [այն], որ յուրաքանչյուր ոք կարող է ցույց տալ, թե Աստված միակ չէ, որովհետև մեկ անունը բացահայտորեն ենթադրում է անկատարություն, ուստի պատշաճ չէ Աստծուն [միակ] համարել, որովհետև [միակը] անկատար է:

Պատասխան. *Հաստատենք, որ պատշաճ է Աստծուն միակ համարել՝ իբրև անմարմին, անճառելի, անսահմանելի, որովհետև իր գերազանցության պատճառով մեզ համար անհասանելի է, բայց անշուշտ՝ բացասական իմաստով: Իբրև անմարմին էությունն [այն] բացասում է մարմինը, որովհետև անմարմին է: Չի կարելի ասել՝ այն է վերացնում բաժանումը, որն անկատար է. [քանզի] որքան անբաժանելի է, այնքան՝ կատարելագույն:*

Երկրորդ՝ ոմանք ասացին, թե երբ Աստծո անվան քանակն է արտաբերվում, [դա] ոչինչ չի ավելացնում, այլ, [ընդհակառակը], պակասեցնում է: Ինչպես օրինակ, երբ ասում ենք, թե Աստված մեկ է, այն պատճառով ենք ասում մեկ է, որովհետև երեք անձ է, այն պատճառով ենք ասում, քանզի մեկ անձը միակ չէ. քանի որ մեկը նմանվում է դրական միավորի (մակադրական), որ (միաժամանակ) թվի սկիզբն է և գոյության քանակային սեռ է: Եվ մեկը, որ նմանվում է դրական միավորի, Աստծո համար է ասվում, իսկ Աստծո մեջ թիվ, քանակ և գոյություն է լինում: Այս էլ է սուտ: Այս պատճառով ասացին, որ Աստծո համար ասվող մեկը նմանվում է միայն [նրա] բացասական անվանը: Այսպես ասացին հները: Սակայն այսօրվա վարդապետներն ամենևին համաձայն չեն նրանց խոսքերին, որովհետև եթե մեկը բացասում է բազումին, և բազումն էլ բացասում է մեկին, ապա նրանց մեջ [մի տեսակ] շրջան է գոյանում: Այս ևս անկարելի է: Նույն պատճառով վարդապետներն ասում են. երբ Աստծո համար ենք ասում թվի անունը, [ապա այդ] ոչ միայն նրա բացասական, այլև դրական [իմաստն] է ցույց տալիս: Ինչպես օրինակ, երբ ասվում է, թե Աստված մեկ է, [ապա այդ] ցույց է տալիս, որ Աստված ոչ միայն բազում չէ, այլև ցույց է տալիս Աստծո էությունը: Եվ երբ ասվում է՝ Հայրը մեկն է. [ապա այդ] Հոր անձն է ցույց տալիս: Եվ երբ ասվում է, թե երեք անձ ունի, [ապա այդ] ոչ միայն անձի միությունն է վերացնում, այլև ցույց է տալիս անձերի թիվը: Եվ պատասխան են տալիս ընդդեմ նրանց առարկությունների և ասում. մեկը երկու իմաստով է բերվում, նախ՝ մեկ, որ թվի սկիզբ է և քանակային սեռ. և այս Աստծո համար չի ասվում, քանզի Աստծո չենք ընծայում քանակ և հատկություն: Երկրորդ՝ մեկ է ասվում, որ վերաբերում է էությանը, և այսպիսի մեկը առավելապես Աստծո համար է ասվում, քան այլ իրերի, որոնց պատճառն է [նա]: Քանզի

Արիստոտելն ասում է՝ մեկը, որ վերաբերում է էությանը, ցույց չի տալիս հատկություն, այլ՝ էություն: Եվ [մեկի] սահմանը մեկն է. Մեկն է, որ ըստինքյան անբաժանելի է և ուրիշի կողմից բաժանված: Նույնպես Աստծո էությունը ըստինքյան անբաժանելի է և արարածներից կողմից բաժանված: Եվ Աստծուց զատ բան չկա, որ չկարողանանք բաժանել մտքով կամ ներգործությամբ կամ գոյությամբ: Սակայն վարդապետներն ասում են, թե նյութական թիվը, որ քանակային տեսակ է, ամբողջապես թիվ է կոչվում, Աստծո համար չի ասվում, այլ Աստծո համար ասվում է տեսական թիվն ու հաշիվը, որ համաձայն մեկ իմաստի է կոչվում՝ ոչ թե բնության, այլ անձերի և կապակցության իմաստով:

Երրորդ՝ երեք օրինակով իմանալու է, թե որևէ առարկա չի կարող լինել միակ: Նախ՝ բազմությամբ, ըստ այլևայլ տեսակների, ինչպես հրեշտակներն ու աստղերը, որոնք միակ չեն: Երկրորդ՝ փոփոխմամբ, ըստ այն բանի, երբ մեկ մարդ բազում [վիճակներում է գտնվում]. այժմ՝ հիվանդ, երբեմն՝ առողջ, երբեմն՝ աղքատ և երբեմն՝ հարուստ: Երրորդ՝ նույն տեսակի աճով, երբ մեկ մարդ, նրանից ծնվածների հետևանքով, բազմանում է որդիների մեջ:

Այս երեք կերպերն Աստծո համար չեն ասվում: Մինչդեռ ճշմարիտ միակությունն Աստծո մեջ գտնվում է չորս կերպով: Առաջին՝ պարզության պատճառով, որ հակառակ է առաջինին: Երկրորդ՝ անփոփոխելի թյան պատճառով, որ հակառակ է երկրորդին: Երրորդ՝ անհատ լինելու լինելու պատճառով, որ հակառակ է երրորդին, որովհետև երբ մեկը որդի է ծնում, իր էությունը որդու [էության] թվին չի ավելացնում, այլ լինում է երկու էություն՝ մեկը հոր և մեկը՝ որդու: Չորրորդ՝ արարածների նմանության միության պատճառով, որովհետև ինչպես միակությունը չի ասվում որևէ մեկի կողմից, [այնպես էլ] ամեն տեսակ բազմություն միակությունից (մեկից) է ծնվում: Այսպես էլ Աստված որևէ մեկից չէ, այլ ամենայն ինչ նրանից է: Դարձյալ՝ ինչպես մեկից ըստինքյան մեկ է ծնվում, այնպես էլ Հայր Աստված ծնում է իրեն, այսինքն՝ իր նմանին կամ իր [էության մեկ մասին], որ Որդին է:

Չորրորդ՝ իմանալու է, որ այս անունը՝ Աստված, երեք կերպ է ասվում, այսինքն՝ բնությամբ, որդեգրությամբ և անվանումով: Նախ բնությամբ միայն Աստծուն ենք [Աստված] ասում, իսկ որդեգրությամբ սրբերին ենք ասում, որովհետև Աստծո բարությանն են կցորդ, կամ կանխատեսության շնորհքով, ինչպես մարգարեները, կամ ուսմամբ, ինչպես վարդապետները, կամ առաջնորդությամբ, ինչպես եկեղեցու առաջնորդները, կամ կարողությամբ և սքանչելագործությամբ աստված կոչվեցին, ինչպես Սաղմոսում է ասվում. «Ես ասացի, թե աստվածներ եք լինելու» (Սաղ 81.6): Երրորդ՝ անվանումով, ինչպես կուռքերին ենք կոչում, որոնք միայն Աստծո անունն ունեն և ոչ բնությունը, որովհետև Աստված անունը նրանց չի պատկանում: Արդ, առաջինը, որ Աստված է, ըստինքյան չունի

Հոգնական (բազմավորական) անուններ, քանզի ճշմարիտ Աստված մեկն է, և Աստվածությունը չի ենթարկվում բաժանման: Իսկ երկրորդն ու երրորդը Հոգնական են, այդ պատճառով Պողոս Կորնթացիներին [Հղած] Առաջին թղթում գրում է. «Թեպետ աստվածներ են կոչվում թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, ինչպես բազում աստվածներ և բազում տերեր, սակայն մենք մի Հայր Աստված ունենք, որից է ամենայն ինչ և մենք՝ նրա մեջ, և մի Տեր Հիսուս Քրիստոս, որով՝ ամենայն ինչ և մենք՝ նրանով» (Ա. Կոր 8.5): Այսքանը չորրորդի մասին, որ ասում ենք, թե Աստված մեկն է:

Գլուխ Թ

ԱՆՁԵՐԻ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սրանցից հետո իմացվեց Աստծո ճշմարիտ միությունը: Այս մասին տեսնենք նաև սուտ կարծիքները. արտաքսենք դրանք և մեր մեջ ճշմարտությունը հաստատենք: Որովհետև ոմանք թերահավատ մտքով կարծում են, թե մեկ Աստված միայն մեկ անձ է և ոչ Երրորդություն: Եվ այս մասին հրեաներն ասել են հնում և հեթանոսները՝ նոր [ժամանակներում], նա ինքը՝ փիլիսոփան Սաբելը[17], [որ] համամիտ է հրեաներին և միաբան է հեթանոսներին: [Սա] ասում էր, թե Հայրը, Որդին և Սուրբ Հոգին մեկ անձ են համարվում, ինչպես Սիմոն, Կեփաս և Վեմ կոչվում է միայն Պետրոսը: Ըստ այսմ, նախ նրանց հակաճառությունը տեսնենք, մեր պատասխանները հարմարեցնենք և հետո ճշմարիտ տեսությունը առաջադրենք: Նախ հրեաները վկայաբերում են Եկից (Երկրորդ օրինաց) [գիրքը], որ ասում է. «Լսիր Իսրայել, քո Տեր Աստվածը մեկ Տեր է» (Բ Օր 6.4): Եվ Երկրորդ օրինացը, [որ ասում է] «Ճանաչեք և տեսեք, որ Ես եմ և չկա այլ Աստված ինձանից զատ» (Բ Օր 32.39): Պատասխանում եմ և ասում, թե հրեաների վկայությունները մեկ Աստվածության մասին [ընդհակառակը] հաստատում են նույն մեկ Աստվածության Երրորդությունը, որովհետև այն, որ ասում է. «Քո Տեր Աստվածը մեկ Տեր է», երեք անգամ դնելով Տերը և Աստվածը՝ [դրանով] ցույց է տալիս անձերի մեկից ավելի լինելը, իսկ մեկ ասելը՝ Աստվածության մեկ էությունն ու բնությունը, ինչպես նախապես ցույց տվեցի: Նույնպես էլ. «Չկա այլ Աստված ինձանից զատ» խոսքը: «Այլ Աստված» չի նշանակում Որդին և Հոգին, որովհետև նրանից են, այլ՝ նրանք, որոնք, ըստ Պողոսի, անվանվում են բազում աստվածներ թե՛ երկնքում և թե՛ երկրի վրա, ինչպես վերևում ասվեց: Այս մասին նաև Երեմիան է ասում հանձին Որդու, թե՝ «Նա է միայն Աստված. ըստ որում չպիտի համարենք այլ աստված: Սրանից հետո երկրում երևաց և մարդկանց մեջ շրջեց» (Բար 3.37,38): Եվ առաջիկայում Սուրբ Գրքից այլ վկայություններ ևս կդնենք: Մինչդեռ հեթանոսներն առարկում են նախ այսպես, թե ծայրագույն պարզությունը կարիք չունի բազմության, իսկ Աստված ամբողջապես պարզ է, և այդ պատճառով չունի բազմաթիվ անձեր: Այս մասին ասենք ըստ Արիստոտելի, թե ինչպես չղջիկը չի կարող արեգակի լույսին նայել, այդպես էլ մարդկային իմացությունը չի կարող նայել աստվածային լույսին, որ անմատչելի է: Եվ չենք կարող հաստատել գիտության բանական լույսով, այլ՝ միայն հավատքի լույսով՝ առաջնորդվելով Սուրբ Գրքով: Եվ քանի որ նրանք չունեն հավատքի լույսը և ոչ էլ Սուրբ Գիրք, այդ պատճառով նրանց բոլոր առարկությունները, որոնք ըստ բնական գիտությունների և նյութական առարկաների են, չեն հանգեցնում Աստծուն: [Թեպետ] այս մի պատասխանը բավական էր նրանց

բոլոր տարակուսությունները [մերժելու համար], սակայն, որպեսզի ավելի չերկարենք, յուրաքանչյուրի կարճառոտ պատասխանը տանք՝ [քաղելով] որոշ վարդապետների աշխատություններից:

Առաջին տարակուսության մասին ասենք, որ ծայրագույն պարզությունը հակառակ է ոչ թե աստվածային անձերին, այլ՝ էությանը:

Երկրորդ՝ տարակուսում են, թե անձի միությունն ավելի պարզ է, քան անձերի բազմությունը, ուրեմն՝ այն, որ ավելի պարզ է, Աստծուն է վայելում: Այս մասին ասենք, որ անձի միությունը պարզագույն է արարածների մեջ և ոչ Արարչի, որովհետև եթե արարածների անձերը մեկ էություն ունեն ըստ տեսակի և ոչ ըստ թվի, ապա աստվածային անձերը նույնն են ըստ թվի. մի անձը չունի ավելի (էություն), քան երեքը. և ոչ էլ երեքը՝ ավելի (էություն), քան մեկը:

Երրորդ՝ տարակուսում են, թե Աստված ծնեց Աստծո. կամ ինքն իրեն ծնեց Աստված կամ ուրիշներին: Արդ, անկարելի է որևէ մեկին ծնել ինքն իրեն, իսկ եթե ծնի այլ Աստված, ապա ուրեմն՝ աստվածները երկուսն են: Պատասխանենք, որ երկուսին էլ համաձայն չենք, որովհետև եթե ասվեր՝ Աստված ծնեց ինքն իրեն, կհասկացվեր, թե Հայրը իրեն Հայր ծնեց, քանզի երբ ասում ենք, թե Աստված ծնեց Աստված, ապա Աստված հասկացվում է ոչ թե [իբրև] բացարձակ էություն, այլ [իբրև] Հոր անձը, որը ոչ թե իր անձը ծնեց, այլ՝ Որդու անձը: Նաև՝ չծնեց ուրիշ Աստված. որովհետև երբ ասում ենք «այլ Աստված», «այլ»-ը այստեղ անձ ցույց չի տալիս, այլ՝ էությունը:

Չորրորդ՝ տարակուսում են. եթե Աստծո մեջ ծնունդ կա, ապա կա նաև ապականություն, որովհետև մեկի ծնունդը մյուսի ապականությունն է: Եվ այս Աստծո անհարիր է, ապա ուրեմն՝ Աստծո մեջ ծնունդ չկա: Այս մասին ասենք, թե իմանալի ծնունդի մեջ չկա ապականություն և ոչ էլ որևէ փոփոխություն, որովհետև այնտեղ նյութ չկա, որ մի տեսակի լինելը ապականի մյուսին:

Հինգերորդ՝ տարակուսում են. ամենայն ինչ, որ ծնվում է, ժամանակավոր է, որովհետև ծնունդը փոխվելն է անէությունից էության: Մինչդեռ Աստված անփոփոխելի է: Այս մասին ասենք, որ աստվածային ծնունդը ժամանակի մեջ չէ, այլ՝ հավիտենության, և ոչ էլ գոյությամբ է, այլ միշտ ներգործությամբ:

Վեցերորդ՝ տարակուսում են. եթե Պետրոսը մարդ է, Պողոսը մարդ է և Հովհաննեսը մարդ է, ապա՝ երեքն են և ոչ մեկը: Այս մասին ասենք, որ [պատշաճ] չէ այդ օրինակը, որովհետև երբ ասվում է Պետրոսը մարդ է, Պողոսը մարդ է, [ապա այդ] ոչ թե մեկ մարդկություն է ըստ թվի, այլ՝ ըստ տեսակի: Մինչդեռ երբ ասվում է Հայր Աստված, Որդի Աստված, Հոգի Աստված՝ երեքն էլ մեկ Աստվածություն են ըստ թվի: Այսքանը հեթանոսների և Սաբելի տարակուսություններն են և նրանց կարճառոտ պատասխանները:

Գլուխ Ժ

ՈՐՈՎՀԵՏԵՎ ՃՇՄԱՐԻՏ Է ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ

«Աստված Հոգի է և նրան երկրպագողները հարկ է, որ հոգով և ճշմարտությամբ երկրպագեն» (Հովհ 4.24): Բովանդակ Աստվածաշունչ սուրբ գիրքը և հոգելից վարդապետները սովորեցնում և դավանում են աստվածային անեղ էությունը՝ երեք անձերով և մի բնությամբ: Այս պատճառով նաև մեզ հարկ է նրան պաշտել և երկրպագել, որովհետև ով կարիք ունի աչքի, հարկ է, որ հավատա զանազան գույներ տեսնողներին, ինչպես նաև՝ խուլը պարտավոր է հավատալ, թե կան ախորժալուր ձայնեղանակներ: Եվ այս այսպես է երկու պատճառով:

Նախ՝ թեպետ մեկ զգայություն չունի, բայց ունի չորս զգայություն, որով հմտանում է զգալի իրերի [ընկալման] մեջ:

Երկրորդ՝ բազում են նրանք, որ վկայում են, թե [իրենց] բոլոր զգայությունները կատարյալ են: Ուրեմն՝ նրանք, որ չունեն սրատես աչք, պետք է հավատան տեսնողներին: Նույնպես մենք, որ կուրացած ենք մեղքով, պարտավոր ենք հավատալ սուրբ առաքյալներին, մարգարեներին և աստվածարան վարդապետներին, որովհետև նրանք հոգևոր տեսանողներ են: Ինչպես օրինակ, խավարչտին վայրում ծնված մի մանուկ, որ թեպետ չի տեսել արեգակ և լուսին, պարտավոր է հավատալ, թե կա արեգակ և լուսին, այդպես էլ մեղքի և ագիտության խավարի մեջ ծնված մարդիկ պարտավոր են հավատալ սրբերին և բարի այրերին, որոնց Աստված ինքն իրեն հայտնեց: Ինչպես Տերն առաքյալներին ասաց. «Ամենայն ինչ, որ լսեցի իմ Հորից, ձեզ հաղորդեցի, և դուք վկայեցեք իմ մասին» (Հովհ 15:15): Եվ Նիկոդեմոսը գալով Հիսուսի մոտ ասում է. «Գիտենք, որ Աստծո կողմից եկել ես [որպես] վարդապետ, որովհետև ոչ ոք չի կարող այդ հրաշքները կատարել, որ դու կատարում ես, եթե Աստված նրա հետ չլինի» (Հովհ 3.2): Այս բառերն ակնարկում են Սուրբ Երրորդությունը նրանով, որ Աստծուն անվանում է Հայր Աստված, եկածին՝ Որդի և «Աստված նրա հետ չլինի» [խոսքով]՝ գործակից Սուրբ Հոգուն: Եվ դարձյալ Սուրբ Երրորդությունը հիշվում է այն խոսքով, որ ասում է. «Ով չի ծնվում ջրից և Հոգուց, չի կարող Աստծո արքայությունը մտնել: ...Նույնպես՝ Հոգուց ծնված ամեն ոք» (Հովհ 3.5,8): Եվ ուրիշ տեղում ասում է. «Նրանց մկրտեք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով» (Մատթ 28.19): Եվ այստեղ ասում է. Աստված Հոգի է, այսինքն՝ Աստվածությունը Հայր, Որդի և Սուրբ Հոգի է: Այսպես, Նոր Կտակարանում բազմաթիվ են Աստծո Որդու մասին վկայությունները, որոնք հետո կշարադրվենք: Բայց քանի որ ոմանք չեն հավատում Սուրբ Ավետարանին և Քրիստոսի առաքյալներին, այդ պատճառով ժողովեցի սուրբ մարգարեներից վկայություններ, որոնք ընդունելի են նրանց կողմից, և

նրանք չեն համարձակվում հակաճառել:

Արդ, Ամենասուրբ Երրորդության մասին երեք [կարգի] վկայություններով են հաստատվում, նախ՝ Աստվածաշունչ գրքերի մարգարեներով, երկրորդ՝ սրբերի իմաստասերներով, երրորդ՝ աստվածային վարդապետներով և օրինակներով:

Տեսնենք, առաջին՝ Աստվածաշունչ գրքերի [վկայությունները]. նախ՝ Մովսեսն ասում է. «Սկզբից Աստված երկինքը և երկիրը ստեղծեց» (Ծննդ. 1.1), այսինքն՝ Հայրը: Եվ Աստված ասաց. «Եղիցի լույս» (Ծննդ. 1.3), այսինքն՝ Որդին: Եվ «Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդ. 1.2), [այսինքն՝ Հոգին]: Դարձյալ խելապես՝ Հայրը, Բանը՝ Որդին, Սուրբ Հոգին. «Եվ Աստված ասաց. Ստեղծենք մարդ ըստ մեր պատկերի և նմանության» (Ծննդ. 1.26): Եվ Աստված ասում է. «Ահա Ադամը եղավ իբրև մեզանից մեկը» (Ծննդ. 3.22): Եվ Նոյը ասում է. «Օրհնված է Տեր Աստվածը, Աստվածը Սեմի» (Ծննդ. 9.26): Եվ աշտարակի վերաբերյալ ասում էր. «Եկեք իջնենք և խառնենք շինարարների լեզուները» (Ծննդ. 11.7): Աստված երևաց նաև Աբրահամին Մամբրեի կաղնու մոտ. «Տեսավ, որ ահա երեք այրեր կային նրա գլխավերևում» (Ծննդ. 18.2): Երեք անձնավորությունը հավատն է ցույց տալիս: Սրանից հետո Գիրքն ասում է, թե. «Տիրոջ կողմից հուր և ծծումբ տեղաց Սոդոմի վրա» (Ծննդ. 19.24):

Դարձյալ երեք անձնավորությունը նրանով է հայտնի դառնում, որ հրեշտակն ասաց Իսահակի զոհաբերման [պահին]. «Իմ անձի վրա եմ երդվում, ասում է Տերը» (Ծննդ. 22.16): Այս խոսքերը [ասվում են] ի դեմս Հոր: Եվ Որդու [վերաբերյալ] Դավիթն ասում է Հայր Աստծուն, թե՝ «Քոնն է բարությունը և զորությունը» (Սաղ 88.14): Եվ Պողոսը մեկնաբանում է. «Քրիստոսն Աստծո զորությունն է» (Ա Կոր 1.24): Եվ եգիպտացիք պատուհասի մասին ասացին, թե՝ «Սա Աստծո մատն է» (Ելից 8.19), որը նշանակում է Սուրբ Հոգին, ինչի մասին Քրիստոսն Ավետարանում ասում է, թե՝ «Աստծո մատով դևեր եմ հանում» (Ղուկ 11.20): Արդ, անձը, բարությունը և մատը, որ զանազանվում են անվամբ և բաժանվում անուններով, երեք անձերն են հայտանշում: Եվ Մովսեսին ասաց. «Ես եմ Աստվածը. Աբրահամի Աստվածը և Իսահակի Աստվածը և Հակոբի Աստվածը» (Ելից 4.5): Եվ դարձյալ Մովսեսն ասում է. «Լսիր, Իսրայել, Քո Տեր Աստվածը մի Տեր է» (Բ Օր 6.4): Երեք անգամ «Տեր» [ասելով] երեք անձնավորության է ակնարկում, և «մի» [ասելով]՝ մեկ էությունը: Դարձյալ՝ «Մովսեսը ասաց՝ կառուցել երեք քաղաքապաստան՝ իրարից հավասարաչափ հեռու» (տե՛ս Թվոց 35.11-14): Եվ դարձյալ Մովսեսը խրատում է, թե՝ «Նայիր քո մեջ» (Բ Օր 8.11), այսինքն՝ որովհետև Երրորդության պատկերն ես: Այսքան՝ թվով տասնչորս վկայությունները Մովսեսից են:

Երկրորդ՝ Դավիթը սաղմոսի մեջ ասում է. «Տերը կենդանի է և Աստված օրհնված է, և թող բարձր լինի իմ փրկության Աստվածը» (Բ Օր 17. 47): Դարձյալ՝ «Երկիրը լի է Տիրոջ ողորմությամբ, և Տիրոջ խոսքով եր-

կինքը հաստատվեց և նրա հոգու բերանով՝ նրա բոլոր զորությունները» (Սաղ 32.6): Եվ դարձյալ՝ «Տիրոջ ձայնը ջրերի վրա է» (Սաղ 28.3), որ Տիրոջ ձայնն էր Հորդանանի վրա (տե՛ս Մատթ 3.17): «Եվ փառքի Աստվածը որոտաց» (Սաղ 28.3), որ Հայրն է: Եվ Տերն ինքը բազում ջրերի վրա է (հմմտ Սաղ 28.3), այսինքն՝ մկրտված Որդին: Դարձյալ ասում է. «Աստվածների Աստվածը, Տերը խոսեց և կանչեց երկիրը արևելքից» (Սաղ 49.1): Եվ դարձյալ. «Աստված մեզ օրհնեց, մեր Աստվածը, մեր Աստվածը կօրհնի մեզ» (Սաղ 66.7): Դարձյալ՝ «Քեզնից է, Տեր, կյանքի աղբյուրը» (Սաղ 35.9), որ Հորից բխած Սուրբ Հոգին է: Եվ՝ «Քո դեմքի լույսով տեսնում եմ լույսը» (Սաղ 35.9): Հոր դեմքի լույսը Որդին է և լույսը՝ Սուրբ Հոգին:

Դարձյալ ասում է. «Տեր, առաքիր քո լույսը և քո ճշմարտությունը, որպեսզի ինձ առաջնորդեն» (Սաղ 42.3): Եվ դարձյալ. «Իմ զորությունն Աստծո մեջ է և քո [մեջ է] Տեր, ողորմությունը, և դու հատուցում ես ըստ նրանց գործերի» (Սաղ 61.12,13): Նաև՝ «Քոնն է բազուկը և քոնն է զորությունը, թող զորանա քո Աջը, և թող բարձր լինի քո ձեռքը» (Սաղ 88.14):

Եվ դարձյալ. «Տիրոջ Աջը զորություն արարեց, Տիրոջ Աջը բարձրացրեց ինձ, և Տիրոջ Աջը ինձ [համար] զորություն արարեց» (Սաղ 117.16):

Նաև՝ «Տերը մեծ է» (Սաղ 98.4), այսինքն՝ Հայրը, «Նրա զորությունը մեծ է» (Սաղ 146.5), այսինքն՝ Որդին, «Որովհետև Քրիստոսն Աստծո զորությունն է» (Ա Կոր 1.24), և նրա իմաստությունը, այսինքն նրա Սուրբ Հոգուն, սահման չկա:

Նաև Տեր երկնից-ի երեք փոխը ի դեմս Երրորդության է տալիս, այսինքն՝ «Օրհնեցեք երկնքի Տիրոջը» (Սաղ 148.1)՝ Հորը, «Օրհնեցեք Տիրոջը նոր օրհնությամբ» (Սաղ 32.3)՝ Որդուն, «Օրհնեցեք Աստծուն նրա սրբության մեջ» (Սաղ 150.1)՝ Սուրբ Հոգուն: Եվ այլուր ասում է. «Տերն ասաց ինձ՝ դու իմ Որդին ես, և ես այսօր ծնեցի քեզ» (Սաղ 2.7):

Եվ ուրիշ տեղ. «Նա ձայնում է ինձ. դու իմ Հայրն ես» (Սաղ 88.27): Եվ դարձյալ ասում է. «Տերն ասում է իմ Տիրոջը. Նստիր իմ աջ կողմում» (Սաղ 109.1): Եվ դարձյալ՝ «Արուսյակից առաջ արգանդից ծնեցի քեզ» (Սաղ 109.3): Նաև՝ «Օրվա զորության սկիզբը քո մեջ է» (Սաղ 109.3): Ինչպես նաև՝ «Նրա անունն արևից առաջ է»: Եվ՝ «նրանով են օրհնվում երկրի բոլոր ազգերը» (Սաղ 71.17): «Եվ թող նրա փառքով լցվի բովանդակ երկիրը» (Սաղ 71.19): Եվ ասում է. «Իմ սրտից թող բարի խոսք բխի, և թող պատմեմ իմ գործերը» (Սաղ 44.1):

Եվ դարձյալ. «Այս պատճառով Աստված, քո Աստվածը օծեց քեզ ուրախության յուղով» (Սաղ 44.7): Եվ այլուր. «Տերը երդվեց, թե դու Քահանա ես, և Տերը Քո աջ կողմում է» (Սաղ 109.4,5): Եվ դարձյալ ասում է. «Քո Հոգուց ես ո՞ւր գնամ կամ քո երեսից ես ո՞ւր փախչեմ» (Սաղ 138.7): Դարձյալ ասում է. «Քո բարի Հոգին առաջնորդում է ինձ վասն քո անվան, Տեր» (Սաղ 142.10):

Սողոմոնից [բերված] այս վկայությունները թվով քսաներկուսն են:

Երրորդ՝ Սողոմոնն Առակաց [Գրքում] ասում է. «Ես իմ Հոր Որդին եմ» (Առակ 4.3) և իմ մորից առաջ միածին էի: «Բոլոր լեռներից և բլուրներից առաջ ծնեց ինձ: Երբ արարում էր ամենայն ինչ, ես նրա հետ էի» (Առակ 8.25-27):

Եվ դարձյալ ասում է. «Աստված երկրի հիմքերը իմաստությամբ հաստատեց և իր հանճարով անդունդը պատռեց» (Առակ 3.20): Եվ դարձյալ ասում է. «Բոլորի ճարտարապետն ինձ իմաստություն սովորեցրեց, որովհետև նրա մեջ Միածին Սուրբ Հոգի կա» (Իմաստ 7.21): Եվ այդպես, ըստ կարգի: Դարձյալ ասում է. «Երեք [բան] կա, որ ինձ [համար] դժվար է իմանալ» (Առակ 30.18): Եվ դարձյալ՝ «եռայար պարանը դյուրությամբ չի պոկվի» (Ժող 4.12): Եվ այլուր ասում է. «Նրա անունն ի՞նչ է և ի՞նչ է նրա Որդու անունը» (Առակ 30.4):

Սրանք Սողոմոնից [բերված] վկայություններ են՝ թվով ութը:

Չորրորդ՝ Եսային ասում է. «Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տեր զորությունների» (Եսայի 6.3): Երեք անգամ Սուրբ ասելով ակնարկում է երեք անձերը և մեկ [անգամ] Տեր [ասելով]՝ բնությունը: Մեզ այս սովորեցրին նաև վեցթևյան սերովբեներն իրենց վեց թևերով. երկու [թևերով] ծածկում էին իրենց գլուխները՝ [հավատալով այն], որ Աստված անսկիզբ է, երկու թևերով ծածկում իրենց ոտքերը (տե՛ս Եսայի 6.2)՝ [հավատալով այն], որ անվախճան է, իսկ միջին երկու թևերով [թռչելը] երեք անձնավորության և մի Աստվածության իմացությունն է:

Եվ դարձյալ ասում է. «Երկինքը ձգեց իբրև խորան» (Եսայի 40.22) և երեք մատով կախեց երկիրը: Դարձյալ ասում է. «Ահավասիկ մեր Աստվածը, ահավասիկ Տերը Տերը գալիս է իր զորությամբ» (Եսայի 10.33): Ակնարկելով մարդացյալին՝ ասում է. «Տերը Տերն ուղարկեց ինձ և նրա Հոգին» (Եսայի 48.16):

Դարձյալ ասում է «Դու ես, Տեր, մեր Հայրը և հավիտյան է քո անունը» (Եսայի 64.8, 63.12):

Եվ Հոգու մասին ասում է. «Թող Հեսսեի արմատից գավազան ելնի, և նրա վրա հանգչի Աստծո Հոգին, իմաստության և հանճարի Հոգին, գիտության և աստվածպաշտության Հոգին, և նա թող լցվի Աստծո երկյուղի Հոգով» (Եսայի 11.2):

Դարձյալ ասում է. «Տիրոջ Հոգին իմ վրա է, այդ պատճառով իսկ օծեց ինձ» (Եսայի 61.1): Եվ դարձյալ ասում է. «Հոգին ինձանից է դուրս գալիս, և ամենայն շունչ ես եմ արարում» (Եսայի 57.18):

Եվ Իսրայելին ասում է, թե՝ «Ես և իմ Հոգին, և իմ խոսքը քո մեջ է» (Եսայի 59.21): Եվ դարձյալ ասում է. Ես որ բոլորին ծնունդ եմ պարգևում, մի՞թե ես չեմ ծնի, ասում է ամենակալ Տերը:

Եսայուց [բերված] այս վկայությունները՝ թվով տասնմեկն են:

Հինգերորդ՝ տասներկու մարգարեներից Անգեոսն ասում է. «Ես [ձեզ հետ] եմ և իմ խոսքը և Հոգին ձեր մեջ է, ասում է ամենակալ Տերը» (Հմմտ Անգ 2.5): Եվ Միքիան ասում է, թե՝ «Իսրայելի տունը բարկացրեց Տիրոջ Հոգին» (Միք 2.7):

Եվ Զաքարիան ասում է. «Թող Տերը սաստի քեզ» (Զաք 3.2): Եվ Երեմիան ասում է. «Մեր դեմքի հոգին Տեր Քրիստոսն է, որ երևաց երկրում և շրջեց մարդկանց մեջ» (Ողբ 4.20): Եվ Հոբն[18] ասում է. «Աստվածեղեն Հոգին, որ արարեց ամենայն ինչ» (Հոբ 33.4): Եվ Թագավորը Դանիելին ասաց. «Աստծո Հոգին քո մեջ է» (Դան 4.15): Եվ Որդու վերաբերյալ ասում է. [Արքայք] երեք մանուկները չնետվեցի՞ն հնոցի մեջ, և չորրորդը նման է Աստծո Որդու (Դան 3.91,92): Եվ դարձյալ ասում է. «Հինավուրցը նստեց» (Դան 7.9)՝ որ Հայրն է, և Նրա մոտ եկավ Աստծո Որդին, և «Նրա թագավորությունը հավիտենական թագավորություն է, որ չի անցնում» (Դան 7.13,14):

Սուրբ Երրորդության մասին այսպիսի և ավելի քան այսպիսի վկայություններ կան Սուրբ Գրոց մեջ, որ այստեղ թվով վաթսուներկուսն են:

Երկրորդ՝ տեսնենք հեթանոս իմաստասերների [վկայությունները], որոնցից քաղելով այսպես են հաստատում վարդապետները:

Նախ բնությամբ բարուն է [պատշաճ] այլոց հաղորդակից դարձնել իրեն, և որքան ավելի բարի է, այնքան առավելագույն [չափով] է իրեն հաղորդակից դարձնում: Եվ քանզի Աստված է բովանդակ բարի, ուստի ամբողջովին իրեն է հաղորդակից դարձնում: Եվ քանի որ ոչ ոք ստեղծված չէ [որպես] անչափելի [միավոր], ինչպես Աստված [է անչափելի], այս պատճառով հարկ է ասել, թե Աստված Որդի ունի, որին և ինքն իրեն ամբողջովին հաղորդակից է դարձնում:

Երկրորդ՝ առավել պատվական և լավագույն է այն, որը բարիք է և բարիք է ծնում, անփոփոխան է և անփոփոխանն է բխում նրանից, քան այն, որը սոսկ բարի և անփոփոխան է. այլապես զորությունն առավել պատվական կլիներ, քան ներգործությունը: Այսպես, Աստված առավել պատվական և լավագույն է, քան ամենայն ինչ, և նա, իր միջոցով, գոյավորում է անփոփոխան բարին, որ Աստված է:

Երրորդ՝ բոլոր արարածները սահմանավոր են, և բոլոր նրանց մեջ գտնվողները [նույնպես] սահմանավոր են: Այդպես էլ՝ Աստված, որ անսահման է, նրա մեջ առկա ամենայն ինչ [նույնպես] անսահման է: Եվ Աստված ունի իմացություն և կյանք. Աստծո իմացությունն ու կյանքն անսահման են, որոնց շնորհիվ իսկ անձն է հաստատվում:

Չորրորդ՝ հավիտենական և անհուն ներգործությունը ներգործում է անհունորեն և հավիտենապես, այլապես չէր լինի համակ ներգործություն, ապա ուրեմն՝ ներգործում է հավիտենական և անհուն բարին:

Հինգերորդ՝ հայտնի է, որ Աստված ունի իմացություն և կամք և, ինչպես ճանաչելով ինքն իրեն՝ ծնում է Բանին, այդպես էլ կամենալով

ինքն իրեն՝ բխեցնում է Սուրբ Հոգին:

Վեցերորդ՝ ինչպես բոլոր էությունների համար [ընդհանուր] է մեկ նախասկզբնական էությունը, այդպես էլ բոլոր շարժումների համար [ընդհանուր] է մի նախասկզբնական շարժումը: Եվ քանզի շարժումը ծնունդ է, այդ պատճառով Աստված, որ ամբողջապես նախասկզբնական էություն է, երկու ծնունդ ունի՝ մեկը բնական, որ իր իմացությունն է, և մյուսը՝ կամավորական, որ իր կամենալն է: Եվ այսպես, Որդին Հոր իմաստությունն է և Սուրբ Հոգին՝ նրա կամքը: Այս [մասին] արդեն ասվեց:

Յոթերորդ՝ ամենայն ինչ, որ ունի կարգ, հարկ է, որ լինի առաջին, միջին և վերջին: Կարգ ունի նաև Աստված, ինչպես ասում է Արիստոտելը. Աստված ունի բոլոր կարգերը, որոնք պաշտելի են «երեք» թվով:

Ութերորդ՝ յուրաքանչյուր անհատ իր՝ մարմնավոր թե անմարմին, ունի էություն, զորություն և ներգործություն: Եվ քանզի հաստատված է, որ [Հայր] Աստված էություն է, ուրեմն՝ նրա զորությունն իր Որդին է, և ներգործությունը՝ Սուրբ Հոգին: Նախ՝ յուրաքանչյուր մարմին եռաչափ է, այսինքն՝ երկար, լայն և խոր. օրինակ բեր [մարմնի] տունը. նրանից որևէ [չափում] հանելն անհնար է. որովհետև [այդ պարագային] մարդու մարմինը չի գոյանա:

Իններորդ՝ անկատար հայրը կարող է կատարյալ որդիներ ծնել, ինչպես կույր հայրը տեսնող որդի է ծնում: Անշուշտ մարդ կատարելություն չի ստանում իր որդու ծնունդով, այլ [հենց] մարդու կատարելությունից է ծնվում իր նմանը: Եվ հարկ է, որ ամենայն կատարելություն Աստծո մեջ լինի: Այս մասին Եսային ասում է. «Ես, որ բոլորին ծնունդ եմ պարգևում, մի՞թե ես չեմ ծնի, ասում է Տերը»:

Տասներորդ՝ հրեշտակները և մարդիկ պատվական էություններ են, և խոսք ու կենդանություն ունեն, և դրանցից զրկվածը անպատվ և անկենդան է, ինչպես քարը, կուռքը, որոնք աստված են հորջորջվում, անպատվ և անկենդան են: Բայց Աստված պատվական էություն է, և Խոսք ու Կենդանություն ունի, որ Որդին և Սուրբ Հոգին է: Եվ Պլատոնն[19] այս բոլորը վավերացնում է ասելով. Ինչպես Հոր [այնպես էլ] Արարչի [մասին] իմանալը դժվար է և պատմելը՝ անկարելի: Եվ եթե մեկը հակառակն ասի, թե՝ Աստված ունի խոսք, սակայն ստեղծված է և ոչ ծնունդ, [ապա] այս մասին կասեմ, որ այստեղ չորս թյուրիմացություն կա:

Նախ՝ ինչպես մեր խոսքը մեր մտքի ծնունդն է և ոչ ստեղծված, այնպես էլ՝ Աստծո [խոսքը]:

Երկրորդ՝ մինչև խոսքը ստեղծվելը [այն] անբան (անգո) էր:

Երրորդ՝ Աստծո մի մասն արարած է և մյուս մասն արարիչ:

Չորրորդ՝ խոսքը բնությունից է. և եթե խոսքը ստեղծված է, նաև նրա բնությունն է ստեղծված:

Եվ դարձյալ հակառակն են ասում, թե՝ Աստծո խոսքը և Հոգին Աստծո անձերն են, հետևաբար Աստծո անձերը բազմաթիվ են և ոչ երեքը, քանզի

Աստված ունի և՛ խոսք, և՛ տեսողություն, և՛ լսողություն, և՛ զորություն, և՛ ներգործություն, և՛ հավիտենականություն, և՛ քաղցրություն, և՛ բարություն և այլն: Այս մասին [հետևյալն] ասենք. նախ այս թվարկվածները՝ տեսողությունը, լսողությունը և զորությունը և այլն, իրենք իրենց ներսը չեն նայում, այլ՝ [միայն] դուրս՝ արարածներին:

Այդ պատճառով [դրանք] անձեր չեն: Մինչդեռ խոսքը և հոգին իրենք իրենց մեջ են [նայում], այդ պատճառով անձնավորություններ են: Մյուս բոլոր թվարկվածները՝ բարությունը, զորությունը, քաղցրությունը և այլն, ինչպես նախապես ցույց տվեց, վերաբերում են երեք անձերին:

Սա երկրորդ գլուխն էր:

Երրորդ՝ [այժմ] տեսնենք աստվածաբան վարդապետներին, որոնք բազում օրինակներով մեր մտքում Երրորդությունն են հաստատում:

Նախ, ինչպես արեգակն ունի իր կլորությունը, լույսը և ջերմությունը, այնպես էլ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին հավասար են իրար: Կամ ինչպես արեգակից երկու լույս է ճառագում, այսինքն՝ դեղին և սպիտակ լույս, այդպես էլ՝ Հորից՝ Որդին և Սուրբ Հոգին: Կամ ինչպես երեք լույս միախառնվելով լապտեր [են գոյացնում][20]:

Երկրորդ օրինակ՝ վարդապետներն ասում են. մարդը, որ Աստծո պատկերն է, հոգով, մարմնով և խոսքով մեկ [ամբողջ] է. թե հոգի չունի՝ մեռած է, թե չի խոսում՝ մունջ է:

Երրորդ օրինակ՝ Ադամը, Եվան [արարածներ են], և Սեթը նրանցից է [լույս աշխարհ եկել]. որոնցից մեկը ծնունդ է, իսկ մյուսը՝ ոչ, սակայն երեքի բնությունը մեկ է:

Չորրորդ՝ մարդու բանական հոգին ունի միտք, կամք և հիշողություն, որոնք երեք զորություններ են և մեկ էություն: Նույնպես Սուրբ Երրորդությունը [ունի] մեկ Աստվածություն և երեք անձեր: Եվ դարձյալ՝ միտքը, իմացությունը և կամքը բնությամբ մեկ են և հատկությամբ երեք[21]:

Հինգերորդ օրինակ՝ խնձորն ունի երեք որակ, այսինքն՝ համ, հոտ և գույն, և երեք զգայություններով է ճանաչվում: Եվս մի օրինակ՝ կրակը, լույսը և նրա ջերմությունը. ինչպես ջուրը տաքանալիս, կրակն իր ջերմությունը տալիս է ջրին, սակայն կրակն իր մեջ [անբաժանելիորեն] պահպանում է ջերմություն, այդպես էլ խնձորի հոտը անկարելի է նրանից բաժանել: Նմանապես միայն Աստծո Որդին մարդացավ և ծնվեց սուրբ Աստվածածնից՝ չբացակայելով Հայր Աստծո աջակողմից:

Վեցերորդ օրինակ՝ հոգին, խոսքը և շունչը մեկ են և երեք. խոսքը ծնունդն է և շունչը՝ հոգու բխումը:

Յոթերորդ՝ մարմինը, ձեռքը և մատը մեկ է, և այս երեքը մեկ բնություն ունեն, բայց՝ երեք հատկություն:

Ութերորդ՝ ծովը, գետը և աղբյուրները ջրի [նույն] բնությունն ունեն:

Իններորդ՝ մեկ ամբողջ է արմատը, ծառը և պտուղը: Դարձյալ մեկ [ամբողջ] է ծաղիկը, գույնը և հոտը:

Տասներորդ օրինակ՝ բոլոր մարմնավոր և անմարմին էություններն ունեն բնություն, գոյություն և ներգործություն, նաև՝ էություն, գեղեցկություն և բարություն: Եվ մարդկանց ակար մտքի համար իբրև նշույլ այլ բազում օրինակներ են բերում վարդապետները Սուրբ Երրորդության մասին: Եվ իրապես, նա ինքն անզույգ ու աննման է և վեր է ամենայն ինչից. նման միայն ինքն իրեն՝ և՛ Միածին Որդուն, և՛ Սուրբ Հոգուն: Եվ եթե հակառակն է ասվում. «Ոչ ոք բարի չէ, բայց՝ միայն Աստված», ասում է Ավետարանը (Ղուկ 18.19), նաև՝ առաքյալը Կորնթացիներին [գրած] Առաջին [Թղթում] ասում է. «Մեզ համար Հայր Աստված մեկ է. ամենայն ինչ նրանից է» (Ա Կոր 8.6), ապա այս մասին կասենք, որ մեկ Աստված ասելը չի բացառում Որդին և Սուրբ Հոգին: Նախ, որովհետև մեկ միակ Աստծուց է Որդին և Սուրբ Հոգին, նաև՝ ինչպես Աստված է Հայրը, [նույնպես] Աստված է Որդին և Աստված է Սուրբ Հոգին: Բայց մեկ ասելը չորս կերպով է իմացվում.

Նախ՝ Աստծո համար «մեկ» ասելը հակառակ է կուռքերի բազում աստվածություններին, որոնք աստվածներ չեն՝ ոչ բնությամբ և ոչ ներգործությամբ, ոչ երկնքում և ոչ երկրի վրա:

Երկրորդ՝ Աստված մեկ է բնությամբ, գոյությամբ, փառքով և իշխանությամբ՝ թեպետ անձերը երեքն են, ըստ [իրենց] հատուկ դեմքերի:

Երրորդ՝ մեկն է, ըստ թվի, ինչպես արեգակն է թվով մեկ, և ոչ թվով երեքն է ըստ երեք անձերի, ինչպես երեք մարդ երեք անձեր են և թվով՝ երեք, այլ Սուրբ Երրորդության մեջ երեք անձեր են և թվով՝ մեկ՝ մի Աստված և մի Թագավոր:

Չորրորդ՝ մեկ է Հայրը, մեկ է Որդին և մեկ է Հոգին, որովհետև մեկ է Հայրը՝ պատճառը Որդու ծննդյան և Հոգու բխման: Մեկ է Որդին և ոչ՝ երկու, չնայած Որդին ու Հոգին Հորից են: Մեկ է անփոփոխելի Հոգին, որովհետև չի փոխարկվում Հոր կամ Որդու: Եվ այսպես, Սուրբ Երրորդությունը մեկ է և երեք, երեք է և մեկ, որ վեր է հրեշտակների և մարդկանց մտքից ու խոսքից, լոկ ինքը գիտի իրեն, և մեզ [պարտ է] հավատալ [նրան] Սուրբ Գրքով և օրինակներով և ոչ քննել, որովհետև քննելը հանդգնություն է, իսկ հավատալը՝ փրկություն և ճանաչելը՝ հավիտենական կյանք: Ըստ որում թող մեզ արժանի դարձնի երկրպագել իրեն՝ Սուրբ Երրորդությանը. և նրան փառք հավիտյանս. ամեն:

Գլուխ ԺԱ

ԸՆԴԴԵՄ ԱՐԻՈՍԻ[22]

Սուրբ Երրորդության անձերը և մի Աստվածությունը Սուրբ Գրքով, բնական քննությամբ և օրինակներով ցույց տալուց հետո, այժմ վերլուծենք հերձվածները, որոնք հայհոյում են Սուրբ Երրորդության անձերը: Նախ [խոսենք] Արիոսի և նրա նմանների [մասին], երկրորդ՝ Մակեդոնի և նրա նմանների [մասին]: Ինչպես Սաբելը չարաչար միավորում է Աստվածությունը՝ մեկ անձ և մեկ բնություն անելով՝ հակառակ սրա, Արիոսը չարաչար բաժանում է Աստվածությունը՝ դատարկելով երեք անձերը և երեք բնությունները: Մեզ՝ ճշմարտության հետևորդներիս, հարկ է խուսափել [այս] երկու չար ծայրահեղություններից, և միջին ճանապարհն անխոտոր պահպանել, ինչպես խրատում է Սողոմոնը. «արքունական ճանապարհով գնա, և աջ ու ահյակ մի՛ խոտորվիր» (Առակ 4.27): Եվ ուղղափառության արքունական ճանապարհն այս է, որ հայրերը սովորեցրին. Սուրբ Երրորդությունն ունի մեկ բնություն, մեկ կամք, մեկ ներգործություն, մեկ թագավորություն, և մնացյալ ամենայն ինչ խոստովանել [որպես] մեկ միություն, ինչպես նաև՝ չշփոթել դեմքերը, այսինքն՝ երեք անձերը առանց շփոթելու պահպանել և խոստովանել:

Արի տեսնենք նախ Արիոսի մոլորությունը և նրա պատասխանները և հետո ճշմարտությունը հաստատենք: Արիոսի առաջին մոլորությունն այն էր, թե՝ Սողոմոնը հանձին Քրիստոսի է ասում [հետևյալը]. «Տերն ինձ ստեղծեց իր ճանապարհների սկզբում, գործերի սկզբում» (Առակ 8.22): Եվ դարձյալ Սիրաքի խոսքը, թե՝ «Սկզբից և հավիտենականությունից առաջ ստեղծվեցի» (Սիրաք 42.21): Այս հակաճառությանը պատասխանենք երեք եղանակով.

Նախ այստեղ չի խոսվում, որ իմաստությունը Աստծո Որդին է, այլ [խոսքն այն] իմաստության [մասին] է, որ Աստված տալիս է իր ընտրյալներին, ինչպես Սիրաքն է ասում. «Նա Սուրբ Հոգով ստեղծեց իմաստությունը, և այն հեղեց իր բոլոր գործերի վրա» (Սիրաք 1.9):

Երկրորդ՝ Քրիստոսի մարդեղության մասին ենք իմանում. ինչպես ասում է Հովհաննեսը՝ «Բանը մարմին եղավ» (Հովհ 1.14): Ինչպես մարմնին միավորվելու պատճառով ասվեց, որ Աստծո Որդին չարչարվեց և մեռավ, այնպես էլ մարմին լինելու պատճառով է, որ Սիրաքն ասում է՝ «Սկզբից և հավիտենականությունից առաջ ստեղծվեցի» (Սիրաք 42.21), այսինքն՝ նախասահմանված էր միանալ արարվածին:

Երրորդ՝ ասաց, թե՝ Տերը ստեղծեց ինձ (Առակ 8.22), և ասաց թե՝ «Բոլոր բլուրներից առաջ ծնեց ինձ» (Առակ 8.25): Սրանցով հաստատվում են աստվածային ծննդյան եղանակները. մեր (արարածների) ծննդյան ժամանակ ծնողն է այլափոխվում, իսկ, որպես հակառակ, ստեղծելու [պա-

հին] առեղծվածն է այլափոխվում: Արդ, ասվում է՝ Որդին արարած է ծնված, որովհետև արարումից երևում է Հայր անփոփոխ [լինելը], իսկ ծնունդից [էլ]՝ Հայր և Որդու բնության մեկ [լինելը]:

Այժմ Սուրբ Գրքից բերենք սակավաթիվ վկայություններ: Հորից ծնված Խոսքը (Բանը) Աստված է և արարչակից է նրան. Որդի անունը հատուկ է, և ճշմարտապես նրան է պատշաճում, որը ծնվում է նրա գոյությունից: Թեպետ այլ իմաստով էլ ենք որդի ասում, ինչպես ասենք՝ աշակերտներին և հոգաբարձուներին, սակայն այդ [անվանումը լոկ] նմանությամբ է և ոչ ճշմարտությամբ: Եվ Հովհաննեսն ընդհանրական [թղթում] ասում է. «Նրա ճշմարիտ Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ ենք, որովհետև նա է ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը» (Ա Հովհ 5.20): Եվ քանի որ ծնողի էությունից է, այդ պատճառով էլ ճշմարիտ Աստված է:

Երկրորդ՝ ոչ մի արարած չի կարող հավասար լինել Աստծուն և ոչ էլ [նման լինել] նրա կերպարանքին: Փիլիպեցիներին [հղված թղթում] ասվում է. «Որ Աստծու կերպարանքով էր և՝ Աստծուն հավասար, ծառայի կերպարանք առավ» (Փիլիպ 2.6,7): Եվ Հովհաննեսն ասում է. «Աստծուն Հայր էր անվանում և իր անձն Աստծուն հավասար նկատում» (Հովհ 5.18):

Երրորդ՝ ոչ մի արարած չի կարող արարել, որովհետև արարելու համար անսահման զորություն է պահանջվում. քանզի արարելը ոչնչից մի բան առեղծելն է, և ոչնչի ու առարկայի միջև անհուն հեռավորություն կա: Որդու համար Ավետարանիչն ասում է. «Ի սկզբանե էր Բանն և Բանն էր առ Աստված» (Հովհ 1.1): Եվ ավելացնում է. «Ամենայն ինչ նրանով եղավ» (Հովհ 1.3): Եվ Պողոսը Կողոսացիներին [հղած թղթում] ասում է. «Ամենայն ինչ նրանով հաստատվեց՝ այն, որ երկնքում է, այն, որ երկրի վրա է, որոնք երևում և որոնք չեն երևում, թե՛ աթոռները, թե՛ պետությունները» և այլն (Կող 1.16): Սակայն Արիոսը թերևս կասի, թե այս բոլորը Որդին իրականացնում է ոչ որպես նախասկզբնական կատարող, այլ իբրև նախասկզբնական կատարողի գործիք: Այս կարծիքը Հովհաննեսը մերժում է ասելով. «Ինչ Հայրն է կատարում, նույնը Որդին է նրա նման կատարում» (Հովհ 10.25): Ուրեմն՝ ինչպես Հայրն է գործում իրեն հատուկ զորությամբ, այնպես էլ՝ Որդին:

Դարձյալ իմանալու է, որ Հորից ծնված Աստծու Խոսքն անվանվում է լույսից ծագած լույս. «Քո երեսի լույսով ենք տեսնում լույսը» (Սաղ 35.15): Եվ ինքը՝ Տերն ասում է. «Ես [որպես] լույս եկա աշխարհ» (Հովհ 12.47): Եվ Պողոսը Եբրայեցիներին [հղած թղթում] ասում է. «Որը Հոր փառքի ճառագայթն է և նրա էության նկարագիրը» (Եբր 1.3): Լույսի և ճառագայթի համեմատությունը կատարվում է բազում պատճառով.

Նախ հակառակության պատճառով, որպեսզի որևէ ախտ և մարմնավոր բան չնշմարվի աստվածային ծնունդի մեջ, ինչպես լույսի և իր ճառա-

դայթի մեջ: Այս է ասում Կյուրեղը[23] Պարապմանց գրքում:

Երկրորդ՝ անճառելի է լույսի ճառագման արդիւնքը. և մեր Տերն ասում է. «Ոչ ոք չգիտի Հորը, բայց միայն՝ Որդին, և ընդհակառակը» (Մարկ 13.32):

Երրորդ՝ ճառագայթը լույսից՝ իբրև պատճառից է, և Տերն ասում է. «Ելա Հորից, և եկա աշխարհ» (Հովհ 16.28):

Չորրորդ՝ լույսի ծագումը մշտնջենական ժամանակից է. այսպես, Հովհաննես Ավետարանիչն ասում է. «Ի սկզբանե էր Բանն» (Հովհ 1.1):

Հինգերորդ՝ [այն, որ նա] անբաժանելի է լույսից. «Եվ բանն էր առ Աստված» (Հովհ 1.1):

Վեցերորդ՝ մեկ ընդհանուր բնություն ունի լույսը և ճառագայթը, և Որդու մասին վկայում է. «Բանն Աստված էր» (Հովհ 1.1):

Յոթերորդ՝ Լույսը և Ճառագայթն ըստ էության մեկ մեկու մեջ են. այդպես էլ Հայրը և Որդին, ինչպես ասում էր. «Ես Հոր մեջ եմ, Հայրը իմ մեջ է» (Հովհ 10.38): «Ով տեսավ ինձ՝ տեսավ Հորը» (Հովհ 14.9): «Ես և իմ Հայրը մեկ ենք» (Հովհ 10.30):

Ութերորդ՝ լույսն իր ճառագայթին մի ինչ որ եղանակով էություն պարգևող է, և առաքյալն ասում է. «Եվ Բանը Հոր էության նկարագիրն է» (Եբր 1.3):

Իններորդ՝ ինչպես նույն էությունն ունեցող լույսը տարբեր է իր ճառագայթից, այդպես էլ, ունենալով մեկ էություն, ըստ անձնավորության տարբեր է Հայրը, և տարբեր է Որդին:

Տասներորդ՝ ինչպես ճառագայթն է լույսը հասցնում տեսողների հայացքին, այնպես էլ՝ Որդին. «Ով հավատում է ինձ, ինձ չի հավատում, այլ նրան, որ առաքեց ինձ» (Հովհ 12.44): «Ոչ ոք չի կարող գալ Հոր մոտ, եթե ոչ իմ միջոցով» (Հովհ 14.6): Այսքանն Աստծո ծնածին Բանի մասին:

Գլուխ ԺԲ

ԱՍՏԾՈ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒ ՄԱՍԻՆ՝ ԸՆԴԴԵՄ ՄԱԿԵԴՈՆԻ

Ինչպես Գրիգոր Աստվածաբանն[24] է գրում Սուրբ Հոգու մասին իր խոսքում, Սուրբ Հոգու աստվածության վերաբերյալ շատերը զանազան կերպով մոլորվեցին: Բայց սրանք թողնելով մեկ այլ առիթի՝ միայն երկուսը վերցնենք. նախ՝ Մակեդոնի հայհոյող խոսքը, որ Սուրբ Հոգին արարած և սպասավոր է անվանում, և ապա նրանց մոլորությունը, ովքեր ասում են, թե Հոգու բխումը [կատարվում է] Հորից և Որդուց:

Տեսնենք նախ Մակեդոնին[25] և նրա նման մտածողներին: [Նրանք] աստիճանավորում են Երրորդությունը, և անվանում՝ արարիչ, գործակից, սպասավոր, և, ըստ անունների, նրանց շնորհներ պատշաճեցնում. ասում են մեկն արարիչ է՝ զորությամբ և անսահման բնությամբ, մյուսը գործակից է՝ անսահման զորությամբ, որովհետև ընդունում են, [որ նա նրան] գործակից է և բնությամբ սահմանավոր, քանզի ասում են, թե արարած է, իսկ [երրորդը] սահմանավոր է և՛ զորությամբ, և՛ բնությամբ, որովհետև ասում են, թե արարած է, սպասավոր է և՝ ծառա: Եվ իրենց խոսքերը հաստատում են Սուրբ Գրքի վկայություններով. նախ [այն, որ] հարմար չէ Աստծուն աղոթել և բարեխոս [համարել], նաև՝ Որդուն՝ մարդկայնության [պատճառով]: Պողոսը ևս Հռոմեացիներին [հղած թղթում] ասում է. «Սուրբ Հոգին բարեխոս է լինում անմռունչ հեծությամբ» (Հռոմ 8.26): Արդ, այժմ նրանց հակաճառությանը պատասխանենք և հետո Սուրբ Հոգին Հոր և Որդու հետ ընդունենք [որպես] ճշմարիտ Աստված:

Առաջին՝ բարեխոսելը հետևյալ կերպ է մեկնաբանում Հովհան Ոսկեբերանը[26]. [Սուրբ Հոգին մկրտության] ավազանով վերստին ծնվածներին ըստ շնորհաց չափի է արժանի դարձնում իմաստության, բացատրելու [կարողության] և այլն: Այսպես, մեկը շնորհք ընդունում է աղոթելու համար, որպեսզի ուրիշներ էլ նրանից աղոթել սովորեն: Սրա օրինակն այժմ մեզ սարկավագն է տալիս, նրան հոգի ենք կոչում հոգևորապես խոսելու պատճառով: Մինչդեռ ուրիշներ հրեշտակի հոգին են հոգի անվանում, որը տրված է մեզ պահպանելու համար, որովհետև նա առաջնորդում է մեզ դեպի բարին և մեր աղոթքները մատուցում Աստծուն, որի մասին Տովբիթի մեջ ասվում է. «Երբ աղոթքի կկանգնեիր և քո անունը Սառա [կլինի], ես ձեր աղոթքները կմատուցեմ Սրբի առաջ» (Տով 12.12):

Նույն Հոգին նաև մխիթարիչ է: Այս խոսքը ուղղակիորեն է [վկայված] (տե՛ս Հովհ 14.16,26, 15.26, 16.7): Սուրբ Գրքի սովորությունն է Աստծո [անվանն] ընծայել այն, ինչ [նա] կատարում է մարդկանց մեջ. ինչպես [օրինակ]՝ Աբրահամին ասում է. «Այժմ իմացա, թե դու Աստծո [նկատմամբ] երկյուղած ես» (Ծննդ 22.12), այսինքն՝ այժմ մարդկանց կասեմ քո երկյուղածության [մասին]: Այդպես է նաև Հոգու բարեխոսելը. որովհետև

Նա ինքը ծագում է մեր սրտում՝ աղոթքի մեջ բարեխոս լինելու, այսինքն՝ խնդրելու այն, ինչն Աստծո փառքի համար է:

Երկրորդ տարբերություն. փոքրն է առաքվում մեծի կողմից. Որդին ասում է. «Երբ կգա մխիթարիչ Սուրբ Հոգին, որ առաքեց Հայրն իմ անունով» (Հովհ 14.26): Այս մասին ասենք [հետևյալը]. ասվում է, թե Որդին առաքված է Հորից և Հոգուց, ըստ այս խոսքի. «Տերը Տերը և Նրա Հոգին առաքեց ինձ» (Եսայի 48.16): Բայց այս ոչ թե փոքրության, այլ նրանց կամքի միության պատճառով է: Նաև Հոգու առաքումը ոչ թե նվաստությունը, այլ Հոր և Որդու հետ [նրա] համախոհությունն է ցույց տալիս:

Երրորդ տարբերություն. շարժվելը ստեղծվածներին է [հատուկ]. [և իրապես] Ծննդոց [գրքում] ասվում է. «Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդ 1.2): Նաև Հովելը ասում է. «Իմ Հոգուց եմ հեղելու բոլոր մարմինների վրա» (Հովել 2.28): Սրա վերաբերյալ ասենք, որ ոմանք Աստծո Հոգի են համարում օդը, որի բնական տեղը ջրերի վրա է: Դարձյալ, շարժումը վերաբերում է ոչ միայն Սուրբ Հոգուն, այլև՝ Հորը և Որդուն, համաձայն այն խոսքի. «Դրախտի մեջ լսեցին Տեր Աստծո ոտնաձայնը» (Ծննդ 3.8): Նաև՝ «Իջնեմ և տեսնեմ թե [ինձ հասած] աղաղակի պես արեցին» (Ծննդ 18.21): Այսպիսով, այս շարժումները ցույց չեն տալիս, որ Աստված ստեղծված է, ուրեմն նաև՝ Սուրբ Հոգին: Իսկ Հովելի խոսքում («Իմ Հոգուց եմ հեղելու») հեղումը ոչ այլ ինչ է, բայց եթե առաքումն, որը ցույց է տալիս մեկի կողմից շատերի վրա Հոգու շնորհների ծավալումը:

Չորրորդ տարբերություն. տրտմությունը կիրք է և չի կարող Աստված լինել. և, իրապես, Եփեսացիներին [հղած թղթում] ասվում է. «Մի տրտմեցրեք Սուրբ Հոգին» (Եփես 4.30): Այս մասին [նաև] մարգարեն է ասում. «Տերը տրտմությամբ բարկացավ ժողովրդի վրա» (Եսայի 5.25): Սակայն այս չի նշանակում, թե Աստված կիրք ունի, այլ՝ դա հանցավոր գործերի պատիժն էր: Այդպես է նաև [Սուրբ] Հոգու տրտմությունը. ինչպես տրտմողն է հեռանում տրտմեցնողից, այդպես էլ Սուրբ Հոգին է հեռանում մեղավորից:

Հինգերորդ տարբերություն. եթե Սուրբ Հոգին բնությունը առնում է Հորից, ապա [նա] նրա որդին է, որովհետև այն է անվանվում որդի, որն ունի հոր նույնատեսակ բնությունը: Իսկ նա, որ չունի Հայր Աստծո բնությունը, ուրեմն Աստված չէ: Այս մասին ասենք [հետևյալը]. Հորից է Հոգու բնությունը, սակայն ոչ թե ծնունդով՝ ինչպես Որդին, այլ՝ բխումով. [այնպես] ինչպես շունչն ու խոսքը հոգու միևնույն էությունն ունեն: Եվ ինչպես Ադամից առաջացան Սեթն ու Եվան, որոնցից մեկը ծնունդ է և մյուսը՝ ոչ ծնունդ, և երկուսն էլ մարդու միևնույն բնությունն ունեն, այդպես էլ Սուրբ Հոգին Հորից հավիտենական բխումով առավ [նրա] էությունը, իսկ Որդին՝ [հավիտենական] ծնունդով: Ուրեմն՝ [Սուրբ Հոգին] Հոր և Որդու հետ հավասարապես Աստված է, որ

արարչակից և մշտնջենավորակից, գոյակից և փառակից է [Նրանց]:

Սրանք և սրանց նմանները են չարախոս Մակեդոնի վկայություններն ու [դրանց արված] ուղղափառների պատասխանները:

[Այն,] որ Սուրբ Հոգին ճշմարիտ Աստված է

Այն, որ Սուրբ Հոգին Աստված է, փորձենք [հաստատել] Սուրբ Գրքի վկայություններով.

Նախ՝ Աստծո պաշտամունքը միայն Աստծուն է պատշաճում ըստ այն խոսքի, թե՝ «Քո Տիրոջը երկրպագես և միայն նրան պաշտես» (Բ Օր 6.13): Այլև Փիլիպեցիներին [հղած թղթում] Պողոսն ասում է. «Մենք իսկ թլփատությունն ենք, որ պաշտում ենք Աստծո Հոգին» (Փիլիպ 3.3):

Երկրորդ՝ մեռելներին հարություն պարգևել միայն Աստծուն է պատշաճում, որի շնորհիվ Որդին իրեն հավասարեցրեց Հայր Աստծուն, ասելով. «Ինչպես Հայրն է հարություն տալիս մեռելներին, այնպես էլ Որդին» (Հովհ 5.21): Եվ Հռոմեացիներին հղած թղթում ասվում է. «Նրա Հոգին, որ մեռելներից հարություն պարգևեց Հիսուսին, կկենդանացնի ձեր մահկանացու մարմինները» (Հռոմ 8.11):

Երրորդ՝ արարածներից և ոչ մեկը չի կարող քննել աստվածային խորքերը, ըստ այն խոսքի թե՝ «Ոչ ոք չգիտի Հորը, եթե ոչ Որդին, որ Աստված է» (Մարկ 13.32): Ավելին՝ Կորնթացիներին [հղած թղթում] Պողոսն ասում է. «Հոգին է, որ քննում է ամենայն ինչ ու [նաև]՝ աստվածային խորքերը» (Ա Կոր 2.10):

Չորրորդ՝ ամեն տեղ լինելը միայն Աստծուն է հատուկ. «Ես եմ լցնում երկինքն ու երկիրը, ասում է ամենակալ Տերը» (Ամոսի 3.13): Այլև [Սողոմոնի] Իմաստության մեջ ասվում է. «Որովհետև Տիրոջ Հոգին լցրեց Տիեզերքը» (Երեմ 23.24):

Հինգերորդ՝ Պետրոսը Անանիային ասում է. «Ինչո՞ւ սատանան քո սիրտը լցրեց՝ խաբելու Սուրբ Հոգին» (Գործ 5.3): Եվ հետո ասում է. «Մարդկանց չստեցիր, այլ՝ Աստծուն» (Գործ 5.4): Ուրեմն Սուրբ Հոգին Աստված է: Սակայն թերևս Մակեդոնը ասի, թե վերը ասվածները հարմարվում են Հոգուն, ոչ որպես Աստծո, այլ՝ սպասավորի: Որ սա բացահայտորեն սուտ է, երևում է Պողոսի՝ Կորնթացիներին հղած թղթից. «Պարգևները զանազան են, բայց տվողը նույն Հոգին է: [Նաև] զանազան են սպասավորությունները, բայց նույն Տերն է տալիս: [Նույնպես] զանազան են հաջողությունները, բայց նույն Աստված է, որ հաջողություն է [պարգևում] բոլորին ամեն ինչում»: Եվ հետո ասում է. «Այս բոլորը հաջողեցնում է նույն Հոգին, և բաժանում յուրաքանչյուրին, ինչպես կամենում է» (Ա Կոր 12.4-7,11): Այսքանը ընդդեմ հոգեմարտ Մակեդոնի:

Գլուխ ԺԳ

ԸՆԴԴԵՄ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՍՈՒՄ ԵՆ, ԹԵ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԲԽՈՒՄ Է ՀՈՐԻՑ ԵՎ ՈՐԴՈՒՑ[27]

Այժմ գանք և տեսնենք նրանց մոլորությունը, ովքեր ասում են, թե Սուրբ Հոգին բխում է Հորից և Որդուց: [Սա] պատճառաբանվում է [հետևյալով]. նախ ասվում է. «Հոգի Քրիստոսի» (Ա Պետ 1.11), հետո՝ «Փչեց առաքյալների վրա, և ասաց. «Առեք Սուրբ Հոգին» (Հովհ 20.22), «Գնամ և առաքեմ նրան» (Հովհ 15.26), «Իմից պիտի առնի» (Հովհ 16.14), «Նա ինձ կփառավորի» (Հովհ 16.14): Դարձյալ՝ Աստծո մատը Սուրբ Հոգին են անվանում, ըստ այն [խոսքի, թե]՝ «Աստծո մատով եմ դևեր հանում» (Ղուկ 11.20): Եվ [եթե] Որդին [Հոր] աջն ու բազուկն է, ապա ուրեմն [նա էլ] նրանից է[28]: Դարձյալ՝ «Կենդանարար է Հոգին» (Հովհ 6.64): Եվ ինչպես խոսքը մտքից և բանականությունից է, այդպես էլ Հոգին Հորից և Որդուց է:

Նախ պատասխանենք հակաճառություններին և հետո ուղղափառ ճշմարտությունը շարադրենք: Այն պատճառով ասվեց Հոգի Քրիստոսի, փչեց և առաքեց, որովհետև մարդկանց վրա Սուրբ Հոգու ծավալումը կատարվեց Քրիստոսի գալուստով, համաձայն այն [խոսքի, թե]՝ «Չկար Հոգին, քանզի Հիսուսը դեռ չէր փառավորվել» (Հովհ 7.39): Եվ դարձյալ՝ Հոգին, որ դուրս է գալիս Հորից, բնակվում է Որդու մեջ, և Որդու միջոցով, նախքան մարմնանալն ու մարդեղությունը, իբրև հայրական բարիք, բաշխվում է բոլոր արարածներին, երկնավորներին և երկրավորներին. այդ պատճառով է Հոգի Քրիստոսի ասվում:

Դարձյալ՝ ինչպես ասում է Տերը, այն ամենը, ինչ Հորն է, նույնը Որդունն է, ուրեմն՝ Հոր Հոգին նույն էության պատճառով Որդու Հոգին է, որովհետև Հայրը ավեց այն, ինչ գոյ է և ոչ անգո: Եթե առաքյալների վրա փչելը բխելն է ցույց տալիս, ապա Որդու ծնունդն [էլ], ըստ հրեշտակի, [Սուրբ] Հոգուց է. «Բեղնից ծնվածը Սուրբ Հոգուց է» (Ղուկ 1.35): Սրանով մեկմեկու գործակից լինելն է ցույց տալիս: Իսկ եթե [ասվում է], թե Հոգին առաքվեց Որդու կողմից, [հետևաբար] ասում են, [թե] նրանից է սկսվում, [սակայն] Որդին էլ Հոգու կողմից է առաքվում և ասվում, թե նրանից է սկսվում համաձայն այն խոսքի, [թե]՝ «Տերը Տերը առաքեց ինձ և նրա Հոգին» (Եսայի 48.16): Բայց սրանք կամքի հաճությունն են ցույց տալիս: Իսկ եթե ասեն, թե Հոգին փառավորում է Որդուն, ապա տես, որ Հայրն [էլ] է Որդուն փառավորում, որ նրա սկիզբն է, ըստ այն [խոսքի], թե՝ «Փառավորեցի և դարձյալ պիտի փառավորեմ» (Հովհ 12.28): Սակայն սրանք [նրանց] հավասարապատիվ լինելն են հայտանշում: «Իմից պիտի առնի» (Հովհ 16.14), այսինքն՝ իմ սկզբից պիտի վերցնի և պատմի: Իսկ եթե իմից առելով նկատի ունի բխումը Որդուց,

ապա ուրեմն ըստ քեզ մարմնացած է Հայրը, որի մասին Որդին ասում է. «Ամենայն ինչ, որ քոնն է, իմն է» (Հովհ 16.15) և ընդհակառակը՝ Այն, ինչ իմն է, քոնն է: Բայց սրանք [նրանց] մեկ էությունն են ցույց տալիս: Իսկ թե ասես, որ եթե Հոգին չի բխում Որդուց, [ուրեմն Որդին] անկենդան է, [հետևաբար] ըստ քեզ Հոգին [էլ] անբան է, որովհետև չի ծնում Բանին: Սակայն մեծ հիմարություն է կարծել կամ ասել, որ այսպիսիք [զետեղված են] մեկ գոյության մեջ: Իսկ Աստծո մատը երբեմն [Սուրբ] Երրորդության անձերն է խորհրդանշում, ըստ այն [խոսքի, թե]՝ Ո՞վ է երեք մատով կշռում երկրի ծանրությունը, երբեմն՝ զանազան շնորհները, ինչպես ասվում է Երգ երգոցում. «Իմ ձեռքերը զմուռս կաթեցրին և իմ մատները» (Երգ 5.5) և այլն, երբեմն՝ միայն մեկ անձը, համաձայն այն [խոսքի, թե]՝ «Աստծո մատով հանում եմ դևերին» (Ղուկ 11.20): Եվ Աստծո մատը Սուրբ Հոգին է. [որովհետև] նախ ինչպես մատն է մարմնի էությունից, այդպես էլ Սուրբ Հոգին է Աստծո էությունից: Երկրորդ՝ ինչպես մատով գրում կամ կատարում ենք ամեն տեսակ գործ, այդպես էլ Սուրբ Հոգին գրում էր մարգարեների [ձեռքով], համաձայն այն [խոսքի թե]՝ «Ե՞րբ և ինչպիսի՞ ժամանակ էր նրանց վրա ներգործում Քրիստոսի Հոգին» (Ա Պետ 1.11): Նաև՝ Որդին Հոգով էր կատարում բոլոր հրաշագործությունները: Սուրբ Հոգին ընկալել իբրև խոսք և՛ ճշմարիտ է, և՛ սխալ: Ճշմարիտ է՝ որովհետև ինչպես խոսքն է մտքի և բանականության թարգմանը, այդպես էլ՝ Հոր և Որդու Հոգին, ըստ այն [խոսքի, թե]՝ «Ոչ թե ինձանից եմ խոսում» (Հովհ 14.10): Սխալը հետևյալն է. նախ՝ խոսքը արտաբերված միտք է, իսկ սա [էլ]՝ ներակա միտք: Այս օրինակը վերացնում է Հոգու անձնավոր լինելը: Երկրորդ՝ խոսքը միայն բանականությամբ է գոյավորվում և ոչ մտքով. այսպես կարծելը ցույց է տալիս, որ Հոգին միայն Որդուց է և ոչ Հորից, որ բացարձակ հերձված է:

Այն, որ Սուրբ Հոգին բխում է Հորից, տեսնենք երեք կերպերով. նախ՝ հարցումով, երկրորդ՝ օրինակներով, երրորդ՝ վկայություններով:

Առաջին՝ հարցումով. նախ այսպիսի հարցում. Երրորդությունը մի՞ սկիզբ ունի թե՞ երկու. եթե մի սկիզբ ունի, ապա սուտ է նրանց մասին ասել, թե Հոգին Հորից և Որդուց է սկսվում: Իսկ եթե երկու սկիզբ ունի, ապա պարզ է, որ երկու ներգործություն կունենա: Սրա համաձայն, ըստ Մանիի[29]*, լինում են երկու աստվածներ՝ մեկը չարի և մյուսը բարու արարիչ, որ աստված է, աստվածություն:*

Դարձյալ հարցնում եմ. կարո՞ղ է Հայրը բխեցնել Հոգին, թե՞ ոչ. եթե կարող է, ապա Որդին կցորդ չի լինի, իսկ եթե անկարող է, ապա նրանից առաջ եկածն է անկարող, ուրեմն [նրանցից] և ոչ ոք Աստված չէ:

Դարձյալ հարցնում եմ. Սուրբ Հոգին մասամբ Հորից և մասամբ Որդո՞ւց է բխում, թե՞ ամբողջապես՝ Հորից և ամբողջապես՝ Որդուց. եթե մասամբ է, ուրեմն՝ անկատար է Հոգու բխումը, իսկ եթե ամբողջապես, ապա սա, ինչպես ասացինք, կլինի երկու հոգի, կամ ավելորդ կլինի

Որդուց բխելը, ինչը խիստ հայհոյություն է:

Դարձյալ հարցնում եմ. եթե Հոգին Հորից և Որդուց եք ասում, ապա ա՞նձն եք բխած համարում թե՞ բնությունը, եթե բնությունը՝ ապա բնությունը բաժանում եք բխողի և բխածի, ինչպես ծնողի և ծնվածի, որ Մակեդոնի և Արիոսի [հերձվածն] է: Իսկ եթե անձն եք համարում բխած, ապա երկու անձ եք նկատում Հոգին՝ մեկը բխած Հորից և մյուսը՝ Որդուց: Եվ այսպես Երրորդությունը դառնում է չորրորդություն:

Դարձյալ հարցնում եմ. Որդին Հորից բխեցվա՞ծն է բխեցնում, թե՞ չբխեցվածը: Եթե բխեցվածն է բխեցնում, ապա ավելորդ է Որդուց բխումը, որովհետև Հայրն է բխեցնում Հոգին: Իսկ եթե չբխեցվածն է բխեցնում, ապա բխումը Հորից չէ, այլ՝ միայն Որդուց է, որ սուտ է: Այսքանը՝ հարցումներով:

Երկրորդ՝ օրինակներով. նախ Հոգու բխումը ելք է, իսկ ելքը շարժում է մեկից մյուսը: Արդ, եթե Սուրբ Հոգին դուրս է գալիս Որդուց, պարտավոր է Որդուց դեպի Հայրը գնալ կամ՝ մյուս անձը: Բայց դեպի Հայրը չի գնում, որովհետև Հայրն [իր մեջ] որևէ բան չունի Որդուց: Դարձյալ. Հոգին դուրս է գալիս որպես արտաշնչված և բխեցված: Արդ, ինչպես արտաշնչումը դուրս չի գալիս բանականությունից, այնպես էլ՝ Հոգին Որդուց:

Դարձյալ՝ Սուրբ Հոգին Հորից է, ինչպես կամքը՝ մտքից, իսկ Որդին՝ որպես իմացություն: Արդ, կամքը իմացությունից չէ և ոչ Հոգին Որդուց:

Դարձյալ. Սուրբ Հոգին բխում է Հորից, ինչպես ջերմությունը՝ կրակից: Արդ, տեսնում ենք, որ ջերմությունը չի բխում լույսից, այլ՝ միայն կրակից, նույնպես Սուրբ Հոգին չի բխում Որդուց, այլ՝ միայն Հորից:

Դարձյալ. Սուրբ Հոգին բխում է Հորից, ինչպես ծաղկի կամ խնձորի հոտը: Արդ, հոտը ոչ թե գույնից է, այլ միայն մարմնից (նյութից), նույնպես՝ Հոգին ոչ թե Որդուց է, այլ՝ միայն Հորից:

Դարձյալ. Հոգին դուրս է գալիս [որպես] միջնամաս, իբրև շաղկապ և մեկ միավորիչ, որը շաղկապում է երկու եզրերը, կամ, ի տարբերություն որա՝ երեք եզրերը: Արդ, եթե դուրս է գալիս Հորից և Որդուց՝ լինում է երեք եզր և ոչ միջին: Հետևաբար ոչ թե Հորից և Որդուց է դուրս գալիս, այլ՝ Հորից՝ Որդի:

Այսքանն՝ օրինակներով:

Երրորդ՝ վկայություններով. նախ և առաջ մեր Տերն Ավետարանում ասում է. «Ճշմարտության Հոգին, որ Հորից է դուրս գալիս» (Հովհ 15.26): Եվ դարձյալ. «Ձեր Հոր Հոգին կխոսի ձեզ հետ» (Մատթ 10.20): Պողոսը նույնպես Հռոմեացիներին [հղած թղթում] ասում է. «Այն Հոգին, որ հարություն տվեց Հիսուսին» (Հռոմ 8.11): Մարգարեն նմանապես Հոգու մասին ասում է. «Տեր, քեզանից է կենդանության աղբյուրը» (Սաղ 35.10) և ոչ թե՝ ձեզնից: Նաև մեծն Դիոնիսիոսն Աստվածային անուններում ասում է. «Հայր Աստվածությանն աղբյուր է, իսկ Որդին և Հոգին Աստ-

վածային Ծնողից, որոնց պատշաճ է անվանել աստվածատունկ բողբոջներ կամ՝ ծաղիկներ և գերագույն լույսեր»[30]:

Դարձյալ [ասում է]. «Ովքեր Գերագույն Աստվածային Ծնողից են՝ իրար չեն հակառակվում, քանզի միայն Հայրն է Գերագույն Աստվածության աղբյուրը»[31]: Աստվածաբանը նմանապես [Աստծո] Որդուն [նվիրված] ճառում ասում է. «Այս պատճառով, մեր [էության] սահմաններում պահելով անծինին, ներս բերենք նաև ծնվածին և [նրան], որ Հորից է առաքվել»[32]: Եվ դարձյալ ասում է. «Երկուսին չարժող Մեկը, որ գտանում է Երեք: Եվ այս մեզ [համար] Հայրը, Որդին և Սուրբ Հոգին է, Մեկին ծնող և առաջ առաքող՝ անախտաբար և անժամանակ»[33]: Նույնպես Հավատքի ճառում ասում է. «Ինչպես իմ խոսքն է մեկ՝ Հայր Աստված, որ պատճառն է Որդու և Հոգու»[34]: Դարձյալ ասում է. «Լսեցիր ծնունդի [մասին]՝ որդիությունը մի՛ քննիր, լսեցիր, որ Սուրբ Հոգին առաջացել է Հորից՝ մի՛ հարցրու՝ թե ինչպես»[35], որովհետև քննելը հանդգնություն է, հավատալը՝ բարեպաշտություն և ճանաչելը՝ հավիտենական կյանք:

Գլուխ ԺԴ

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱԳՈ ԵՎ ՁՈՒԳԱՊԱՏԻՎ ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՒՅՆԱԳՈՐԾ ԱՐԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արարիչ է Հայրը, արարիչ է Որդին, արարիչ է Սուրբ Հոգին, ինչպես գրված է. «Երկիրը լի է Տիրոջ ողորմությամբ» (Սաղ 118.64) և «Տիրոջ խոսքով հաստատվեց երկինքն ու բերանի շնչով» (Սաղ 32.6) և այլն: Բովանդակ աշխարհը Հայրը լցրեց, սակայն ոչ առանց Որդու, ըստ [այն] գրվածի, [թե]՝ «Երկինքն ու երկիրը ես եմ լցնում, ասում է Տերը» (Հմմտ Երեմ 23.24): Լցնում է նաև Որդին, որովհետև ամենայն ինչ նրանով եղավ (Հովհ 1.3): Եվ Հոգու մասին ասվում է. «Տիրոջ Հոգին լցրեց տիեզերքը» (Իմաստ 1.7): Պողոսն ասում է. «[Այն], որ ներգործեց մեզ վրա, Աստված է, որը և՛ օծեց մեզ և՛ կնքեց» (Բ Կոր 1.21): Կնքում է նաև Սուրբ Հոգին. «Մի տրտմեցրեք Աստծո Սուրբ Հոգին, որով կնքվեցիք ձեր փրկության օրը» (Եփես 4.30):

Մեծ է Հայրը, մեծ է նաև Որդին, անբովանդակելի է նաև Սուրբ Հոգին, ըստ Հոգենվագի, որ ասում է. «Մեծ է Տերը, և մեծ է նրա զորությունը. Քրիստոսն է Աստծո զորությունը, և նրա իմաստությունը սահման չունի» (Սաղ 146.5), այսինքն՝ Սուրբ Հոգին:

Խաղաղություն է Հայրը՝ Ես իմ խաղաղությունը, ասում է, բխեցնում եմ որպես գետ (Հմմտ Եսայի 48.18): Խաղաղություն է նաև Որդին, ըստ Պողոսի. «Նա է մեր խաղաղությունը, որ երկուսը մեկ դարձրեց, և իր խաչի արյամբ խաղաղություն արարեց» (Եփես 2.14,16): Խաղաղություն է նաև Սուրբ Հոգին: Ասում է. «Հոգու պտուղն այս է՝ սեր, խնդություն, խաղաղություն» (Գաղ 5.22):

Աղբյուր է Հայրը, քանզի նրանից է կենաց աղբյուրը (Սաղ 35.10): Աղբյուր է նաև Որդին, որ ասաց. «Թողեցին ինձ՝ կենդանի ջրի աղբյուրին» (Հմմտ Հովհ 4.10-13): Աղբյուր է նաև Հոգին, քանզի մենք բոլորս նույն Հոգին ենք խմում (Հմմտ Հովհ 4.14):

Լույս է Հայրը, որովհետև լույս Աստված է կոչվում (Հմմտ Ա Հովհ 1.5): Լույս է նաև Որդին, որ ասում է. «Ես եմ աշխարհի լույսը (Հովհ 8.12): Լույս է նաև Սուրբ Հոգին, ինչպես Պողոսն է ասում. «Հոգին մի՛ մարեք» (Ա Թես 5.19):

Կյանք է Հայր Աստված, ըստ այն [խոսքի, թե]. «Ես սպանում և ես ապրեցնում եմ» (Բ Օր 32.39): Կյանք է նաև Որդին, որ ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը» (Հովհ 11.25): Կյանք է նաև Սուրբ Հոգին, ըստ այն [խոսքի, թե]՝ «Հոգին Տեր և կենդանարար է» (Հովհ 6.64):

Տեր է Հայրն, ըստ Եսայու. «Մեր հայրը Տեր է» (Եսայի 33.22): Տեր է նաև Որդին, ըստ Պողոսի. «Մենք [ունենք] մեկ Տեր՝ Հիսուս Քրիստոս» (Ա

Կոր 8.6)։ Տեր է նաև Հոգին, որովհետև, Տերը «Հոգին է», ասում է Պողոսը (Բ Կոր 3.17)։

Բարի է Հայրը, որովհետև և ոչ մեկը բարի չէ, բացի միակ Աստծուց (Ղուկ 28.19)։ Բարի է Որդին, ինչպես ասում է. Դու ես միայն բարերար Աստված, իմ Հիսուս։ Բարի է Հոգին, ըստ այն [խոսքի, թե]. «Քո բարի Հոգին թող առաջնորդի» (Սաղ 142.10)։

Այսքանը վկայություններով[36]։

Ամենասուրբ Երրորդության մասին

Խոստովանում եմ ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն՝ [որպես] երեք անձնավորություն և մի բնություն և մեկ Աստված. Հայրը՝ անծին և անսկիզբ, Որդին՝ ծնված Հոր բնությունից նախքան հավիտենությունը՝ անախտ և անմարմին [բոլոր] ժամանակներից առաջ, Սուրբ Հոգին՝ բխած Հորից, ոչ թե Որդու ծննդյան նման, այլ միայն իրեն մատչելի և արարածների համար անիմանալի եղանակով՝ աղբյուրի նման դուրս գալով։ Եվ Հայրը Որդուց ու Հոգուց առաջ չէր, այլ ինչպես Հայրը միշտ Հայր է, ինչը հետագայում չէ, որ ստացել է հայրության անունը, այնպես էլ Որդին միշտ Որդի՝ իր Հորը մշտնջենակից, նույնպես Սուրբ Հոգին՝ միշտ Աստծո Հոգի՝ Հորից և Որդուց անբաժանելի. մի էություն, մի իշխանություն, մի կամք և մի արարչագործ զորություն երեք անձնավորության մեջ։ [Նրանցում] ո՛չ մեծություն, ո՛չ փոքրություն, ո՛չ բարձրություն, ո՛չ խոնարհություն, ո՛չ առավելություն և ոչ նվազություն [կա], այլ մի կարգը, մի պաշտոնը և մի երկրպագությունն է դավանվում համագո Սուրբ Երրորդության, որի շնորհիվ բոլոր արարածները ոչնչից գոյացան՝ երկինքը՝ երկնաբնակներով և երկիրը՝ երկրաբնակներով՝ երևելի և աներևույթ արարածները, [որոնք] սկիզբը եղան արարչագործության։

Հատոր երկրորդ

Գլուխ ԺԵ
ԲԱՆԻ ՄԱՐԴԵՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սուրբ Հոգու օգնությամբ, առաջնորդվելով Աստծո խոսքով, մարդացած Աստծո տնօրինություն, նաև արարչության և մարդկային ցեղի վերստին նորոգման տեսությանը գանք, վստահելով հենց իրեն՝ [Աստծո] Բանին, որի մասին է մեր խոսքը, որպեսզի մեզ տա լեզվի խոսք և մտքի իմաստություն, լսողներին՝ ունկնդրություն, տկարներին՝ զորություն, որպեսզի կարողանանք ճշմարիտը իմանալ և ուղիղ խոսել. «Սրտով Հավատալ արդարությունը, բերանով խոստովանել մեր փրկությունը» (տե՛ս Հռոմ 10.10):

Արդ, Բանի մարդեղության մասին նախ չորս խնդիր է առաջադրել. առաջին՝ ուրացողների առարկությունը, երկրորդ՝ թե պատշաճ էր Բանի մարդեղությունը, երրորդ՝ որ Բանը մարդ եղավ, չորրորդ՝ որ մեզ Համար մարդացածը Աստված է: Եվ ապա, դրանից Հետո, Հետևենք առաքյալների, մարգարեների և սուրբ Հայրերի խոսքերի տեսությանը:

Տեսնենք առաջինը՝ ովքեր ուրանում են Բանի մարդեղությունը: Նախ առարկում են, թե Աստված մարմին չէ և ոչ [էլ] զորություն է մարմնի մեջ և ոչ փոփոխելի: Արդ, եթե մարդ եղավ՝ փոփոխելի է:

Պատասխանենք, թե Աստծո Բանը մարդացավ առանց փոփոխվելու, որովՀետև Բանի բնությունը չշփոթվեց մարդկայինի Հետ և ոչ էլ մարդկայինը այլափոխվեց Բանի բնության, որովՀետև անփոփոխ է աստվածային էությունը. ինչպես Հոգին միավորվում է մարմնի Հետ և դառնում

մարդ, և հոգի լինելով չի փոփոխվում, քանզի անմարմինը, թեպետ միավորված է, չի փոխարկվում մարմնի:

Դարձյալ ասում են. եթե անընդգրկելի Բանը մարմին առավ, [ուրեմն] կամ Բանի [մի] մասը մարմին եղավ, կամ Բանը [պարունակող] մարմինն է անընդգրկելի: Այս մասին ասենք, որ ամբողջ ու կատարյալ Բանը մարմնի մեջ ընդգրկվեց և մնաց անընդգրկելի, և Բանին միավորված մարմինը եղավ ընդգրկելի, որովհետև չդադարեց մարմին լինելուց, ինչպես գրին միացած միտքը և մարդու խոսքը բազում ականջներում՝ կատարյալ և ամբողջական ընդգրկումով:

Դարձյալ ասում են. այն, որ գալիս է նրա կատարելությունից հետո, նրա [համար] պատահական է, ուրեմն մարմինն էլ Բանի [համար] է պատահական: Այս մասին ասենք, որ Բանն Աստված մարդկային բնություն առավ, որպեսզի ճշմարիտ մարդ լինի, սակայն մարդ լինելը գոյացական սեռից է և ոչ պատահականության սեռից:

Դարձյալ ասում են, [թե] Աստծուն անարժան է բնակվել արգանդում, այլ նաև՝ աղճատում: Այս խելով՝ չարերն են գայթակղվում և մոլորվում: Ասենք, որ անարժան չէ, որ Ստեղծողը բնակվի ստեղծվածների մեջ, ինչպես կառուցողն՝ իր կառույցի մեջ: Եվ ահա Աստված բնակվում է երկնքում և լցնում ամենայն տեղ, և բոլոր մարդկանց մաքուր է. նույնպես բնակվեց Կույսի սուրբ արգանդում, և աղճատում չէ, եթե նախատիպը բնակվի պատկերի մեջ, որովհետև չի զարշում իր անձով բնակվել նրա մեջ, որին իր ձեռքով ստեղծեց: Իսկ եթե չարերը գայթակղվում և մոլորվում են, [ապա դա նրանց] չարությունից և հպարտությունից է, ովքեր չեն հավատում Սուրբ Գրքին և չեն կամենում ճանաչել Աստծո բարիքը: Եվ ահա արարչագործումից ի վեր բազում մոլորություններ եղան աշխարհում:

Դարձյալ ասում են. [եթե] մեղքերը ջնջվում են ապաշխարությամբ, ինչպես դուք եք ասում, ապա Աստծուն հարկ չէր մարդանալ: Եվ դարձյալ, [ասում են, եթե] մարմնավորման գործն ավելի մեծ էր, քան արարչության գործը, ապա ուրեմն, ինչպես արարչագործման ժամանակ բոլոր մարդիկ ստեղծվեցին, այնպես էլ մարմնանալիս բոլոր մարդիկ հարկ է, որ փրկվեն, բայց այդպես չի եղել:

Պատասխանենք առաջինին. ապաշխարությունն ու այլ բարի գործերը չեն կարող ջնջել մեղքերը, եթե հիմնված չեն Քրիստոսի չարչարանքների [նկատմամբ] հավատքի վրա: Մյուսի վերաբերյալ ասենք՝ պատճառն Աստված չէ, որ բոլորը չեն փրկվում, այլ՝ հենց իրենք, ինչպես օրինակ, եթե մեկը ցերեկն իր աչքը փակի և խավարի մեջ մնա, պատճառն ինքն է և ոչ արևը: Եվ ինչպես արուի և էգի զուգավորությունից միշտ չէ, որ զավակ է ծնվում, և այս ոչ թե Արարչի պատճառով է, որ ասաց՝ Աճեցեք և բազմացեք (Ծննդ 1.22, 8.17), այլ կատարողի կամ կրողի նյութի պակասությունից:

Դարձյալ ասում են, եթե Բանի մարմնանալն էր մարդկանց փրկության պատճառը, [ապա նրան] հարկ էր աշխարհի սկզբից լինել, որպեսզի առաջինները էլ փրկվեին:

Եվ դարձյալ ասում են՝ հրեշտակների և մարդկանց մեղքը մի քանից էր, այսինքն՝ հպարտությունից, եթե հրեշտակներին չփրկեց, հարկ չէր նաև մարդկանց փրկել:

Առաջինի վերաբերյալ ասենք, որ մարդիկ երկար ժամանակ թողնվեցին բնական օրենքներում և բնական անարգ մեղքերի մեջ: Նրանց տրվեցին նաև գրական օրենքներ, որպեսզի խորշեն մեղքերից, սակայն դրանցով էլ չարդարացան: Եվ ապա եկավ շնորհքի օրենքը, որպեսզի ճանաչենք Քրիստոսով եղած փրկությունը: Նմանապես մարդկային կյանքը միանգամից չէ, որ իր վախճանին է հասնում, ինչպես մանուկներն են նախ վարժվում նվազագույն սերտողությամբ: Այդպես էլ անպատշաճ էր նախ մեծամեծ պատվիրանները տալ, այլ նախ անկատար սերտողությամբ նվազագույն [պատվիրաններն են] սովորում և հետո կատարյալ օրենքին հասնում:

Երկրորդի [վերաբերյալ] ասենք, որ հրեշտակները չեն կարող նորոգվել. [որա] պատճառն այս է. նախ բնությունը հետևում է կարծիքին. [մինչդեռ] հրեշտակներն առանց փոփոխության են իմանում և կարծում, այդ պատճառով էլ առանց փոփոխության են ընտրում չարը կամ բարին, որի հետևանքով անզեղջ մնացին: Դարձյալ, հրեշտակները կարող են իմացողաբար սովորել, իսկ մարդը կարիք ունի զգայությամբ սովորելու: Նույնպես, [թեպետ] հրեշտակների մի մասը կորավ, սակայն ամբողջը մնաց, իսկ եթե մարդը չփրկվեր, բոլորը կկորչեին: [Սրանցով] նաև հեթանոսներն են հակառակվում սուրբ եկեղեցուն: Առաջին գլխում այս բոլորի մասին [խոսվեց] համառոտ կերպով:

Երկրորդ գլխում դարձյալ մենք ցույց տանք, որ պատշաճ էր Բանին մարդ լինել: Եվ քանի որ Բանի մարդեղությունը հայտնի է Սուրբ Գրքից, սակայն նրանք չեն հավատում, ուստի [այդ] ցույց տանք բնական իմացությամբ:

Նախ. Աստծուն սիրելը [համաձայն] է մարդու բնությանը, և հայտնի է, որ [մարդը], մոլորվելով, հեռացել այլազան և սուտ աստվածների: Այս պատճառով Աստված մարմնացավ և երևաց, որպեսզի ճանաչենք միակ և ճշմարիտ Աստծուն:

Դարձյալ՝ առաջին մարդը կամեցավ աստվածանալ, սակայն, անպատեհ լինելով, չկարողացավ, որի պատճառով Աստված մարդ եղավ և աստվածացրեց նրան[37]: Դարձյալ՝ սատանան չարախոսում էր [ասելով], թե մարդը բնությամբ չար ու մեղանչական է, սակայն Աստված մարդ եղավ և ցույց տվեց Արարչից եղած բարի և անմեղ բնությունը:

Դարձյալ՝ ինչպես Աստծուն հատուկ է ստեղծելը, այնպես էլ՝ նորոգելն ու փառավորելը. ստեղծեց ոչնչից, նորոգեց ապականությունից և վերջում

կփառավորի: Նմանապես՝ ինքն՝ Արարիչը վճիռ կայացրեց և դատապարտեց Ադամին, որի պատճառով ինքը մարմնացավ և չարչարվեց, վճիռ կայացրեց և ազատեց նրան: Նմանապես՝ սատանան հաղթեց մարմինը, և Աստված նույն մարմնով հաղթեց հաղթողին, և սա արդար գործ է: Այս պատճառով և առավել քան այս [պատճառով] աստվածային Բանը մարդկային բնություն առավ, [որպես] մարդ երևաց աշխարհում և փրկեց մեզ:

Տեսնենք երրորդը. ինչո՞ւ մարմին եղավ Բանը և ոչ Հայրը կամ Հոգին: Համառոտակի պատասխանենք:

Նախ. որովհետև անպատշաճ էր, որ Հայրը մարմնանար, որովհետև Հայրը անսկիզբ է, և այնժամ ոչ ոք չէր գոյանա առանց անսկզբի: Եվ եթե Հոգին մարմնանար, երկու որդիներ կլինեին:

Երկրորդ՝ եթե Հայրը մարմնանար՝ Հայրը և Որդին կնույնանային, նույնպես՝ Սուրբ Հոգին կլիներ Որդի և Հոգի:

Երրորդ՝ Բանը Հոր էության պատկերն է, իսկ մարդը նմանության պատկերն է, այս պատճառով Աստծո Բանը մարդու կերպարանքով եղավ:

Չորրորդ՝ բնական Որդուն էր պատշաճ մարդուն վերադարձնել Աստծո որդեգրությունը, այս պատճառով Աստծո Որդին մարդու Որդի դարձավ, որպեսզի մեզ Աստծո որդիներ դարձնի:

Հինգերորդ՝ Բանին է պատշաճ պատմել Հոր մասին և երևալ մեզ, ինչպես ներքին խոսքն է արտահայտվում և դառնում հնչող խոսք և, գրվելով թղթի վրա, շոշափվում է:

Վեցերորդ՝ որպեսզի մեր նկատմամբ Հոր սերը երևա, ինչպես ասում է. «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ մինչև իսկ իր Միածին Որդին տվեց» (Հովհ 3.16): Այլև ցույց է տալիս, որ ինչ խնդրում ենք նրանից և ոչ մի բարիք չի խնայում մեզ, ինչպես առաքյալն է ասում. «Նա, որ իր Որդին չխնայեց. նրա հետ միասին ամեն ինչ կպարգևի մեզ» (Հռոմ 8.32): Սա երրորդ հարցումն է:

Տեսնենք նաև չորրորդը՝ որ Քրիստոսը ճշմարիտ Աստված է:

Նախ այսպես. Աստծո գործը ստեղծելն է, ըստ այն խոսքի՝ Սկզբից Աստված երկինքն ու երկիրը ստեղծեց (Ծննդ 1.1): Եվ Քրիստոսի մասին առաքյալն ասում է. «Մեկ Տեր ունենք՝ Հիսուս Քրիստոս, որով է ամենայն ինչ» (Ա Կոր 8.6): Ի ծնե կույրին աչքի լույս շնորհեց. հետևապես մեր Տեր Հիսուս Քրիստոսն Աստված է:

Երկրորդ՝ Աստված կյանք պարգևող է, ըստ այն խոսքի, թե՝ Ես սպանում և ես ապրեցնում եմ (Բ Օր 32.39): Եվ Հովհաննեսը Ավետարանում ասում է. «Կլսեն Աստծո Որդու ձայնը և դուրս կգան» (Հովհ 5.25): Նաև Ղազարոսին [դուրս] կանչեց գերեզմանից և խոսքով կենդանացրեց:

Երրորդ՝ «Աստված արդար դատավոր է» (Սաղ 7.12), ասում է սաղմոսը: Նաև Հովհաննեսը Քրիստոսի մասին ասում է. «Ոչ թե Հայրն է դատում մեկին, այլ ամենայն դատաստան Որդուն տվեց» (Հովհ 5.22):

Չորրորդ՝ Աստված ծածկագետ է, ինչպես Դավիթն է ասում. «Ով ստեղծեց նրանցից յուրաքանչյուրի սիրտը և իմացավ նրանց բոլոր գործերը» (Սաղ 32.15): Տերը գիտեր նրանց դիտավորությունները և ասում է. «Ի՞նչ եք խորհում ձեր սրտերում» (Մարկ 8.17):

Հինգերորդ՝ «Քո Տեր Աստծուն երկրպագիր» (Բ Օր 26.10), ասվում է Օրենքում: Նաև առաքյալն է ասում. «Որպեսզի նրան ծնրադրեն բոլոր երկնավորներն ու երկրավորները և ամենայն լեզու խոստովանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է» (Փիլիպ 2.10,11):

Վեցերորդ՝ «Օրենսդիրն ու դատավորը մեկն է» (Հակ 4.12), ասում է Հակոբոսը: Եվ ինքը՝ Քրիստոսն, օրենքը դնելով՝ ասում է. Առաջիններին ասվեց այս, բայց ես ասում եմ այս և այս (տե՛ս Մատթ 5.21,22):

Յոթերորդ՝ հրաշագործությունը միայն Աստծուն է հատուկ, ըստ այն խոսքի, թե՝ Դու ես Աստված, որ հրաշքներ ես գործում (Սաղ 76.14): Նաև մեր Տերն էր հրաշքներ գործում, ըստ այն խոսքի, թե՝ «Իմ Հայրը գործում է մինչև այժմ, նաև ես եմ գործում» (Հովհ 5.17): Նմանապես՝ «Ինչ որ Հայրն է անում, Որդին էլ նույնն է անում» (Հովհ 5.19):

Ութերորդ՝ միայն Աստծուն է հատուկ մեղքերը թողնել, ըստ այն խոսքի, թե՝ «Ո՞վ կարող է մեղքերը թողնել. բայց՝ միայն Աստված» (Ղուկ 5.21): Եվ մարդու Որդին իշխանություն ունի թողնել մեղքերը, ինչպես ասում էր. «Քո մեղքերը քեզ ներված են» (Ղուկ 5.20): Հետևաբար Քրիստոսն Աստված է:

Իններորդ՝ Աստծուն է հատուկ լինել հավիտենական և անփոփոխ, ըստ մարգարեի. Ես՝ Աստված նույնն եմ և չեմ փոփոխվում: Եվ Տերն ասում էր. «Շոշափեցեք ինձ և տեսեք, որ ես նույնն եմ» (Ղուկ 24.39):

Տասներորդ՝ միայն Աստված է ճշմարիտ, ըստ այն խոսքի [թե]՝ միայն քեզ ճանաչեն [որպես] ճշմարիտ Աստված (Հմմտ Իմաստ 12.27): Եվ իր մասին վկայում էր. «Ես եմ ճշմարտությունը» (Հովհ 14.6): Հետևաբար Քրիստոսն Աստված է:

Սակայն, թերևս մեկն ասի, թե վերոբերյալ վկայությունները պատշաճում են [միայն] Քրիստոսի՝ Բանի բնությանը և ոչ մարմնին: Այս պատճառով գլխի [մյուս մասով] պարտավոր եմ ցույց տալ, որ Քրիստոսն Աստված է մարմնի միավորությամբ՝ մարմնացած և մարդացած Աստված:

Քանզի մեր Տեր Հիսուս Քրիստոսը մեկ է և մարմնով Աստված է՝ Կույսից ծնված

Առաջին՝ «Բանը մարմին եղավ» (Հովհ 1.14), ասում է Հովհաննես Ավետարանիչը. այս «եղավ»-ը ցույց է տալիս Բանի և մարմնի միավորությունը: Իսկ եթե մեկն ասի, թե «եղավ»-ը փոփոխություն է ցույց տալիս, ըստ այն խոսքի, թե՝ «Մովսեսի գավազանը օձ եղավ» (Ելից 4.3), ապա կասենք, որ Տերը ապավեն եղավ (Սաղ 9.10), ինչպես ասում է մարգարեն. ոչ թե Տերությունից փոխվելով ապավինության, այլ լինելով ու

մնալով [որպես] Տեր, եղավ ապավեն. նմանապես Աստծո Բանը լինելով ու մնալով [որպես] Բան՝ եղավ մարմին: Եվ քանի որ Բանը մարմին եղավ միավորությամբ, պարզ է, որ Բանի մարմինը Բան եղավ նույն միավորությամբ, հետևաբար Քրիստոսի մարմինն Աստված է*:

Երկրորդ՝ Կորնթացիներին [Հղած] Առաջին [Թղթում] ասում է. «[Ուրեմն] մեկ Տեր՝ մեկ Հիսուս Քրիստոս, որով ամենայն ինչ» (Ա Կոր 8.6): Արդ՝ «որով ամենայն ինչ» խոսքը պատշաճում է Բանին, ըստ այն խոսքի, թե «Ամենայն ինչ Նրանով եղավ» (Հովհ 1.3), և Հիսուս մարդ է կոչվում. հետևաբար մեկ է Տերը և մեկ է Քրիստոս՝ մարմնացած Բանը:

Երրորդ՝ Փիլիպեցիներին [Հղած Թղթում] ասում է. «Յուրաքանչյուրը թող մտածի, որ Քրիստոս Հիսուսի մեջ էր, որ Աստծո կերպարանքով էր» (Փիլիպ 2.5,6): Արդ՝ Բանն առանց մարմնի Քրիստոս չէ, ուրեմն պարզ է, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսը միացյալ մարմնով է Աստծուն հավասար ու կերպարանակից:

Չորրորդ՝ Գաղատացիներին [Հղած Թղթում] ասում է. «Աստված իր Որդուն առաքեց, որ կնոջից եղավ» (Գաղ 4.4): Ուրեմն՝ կնոջից եղածը Աստծո Որդի է:

Հինգերորդ՝ Աստծո Բանն անմարմին է ի սկզբանե, ըստ այն խոսքի՝ «Ի սկզբանե էր Բանը» (Հովհ 1.1): Բայց ընդհանրական Թղթում Հովհաննեսն ասում է. «Որ ի սկզբանե էր, որի մասին լսեցինք և տեսանք մեր աչքերով և մեր ձեռքերը շոշափեցին Կենաց Բանը» (Ա Հովհ 1.1): Հետևաբար շոշափված մարմինը Կենաց Բանն է և Աստված:

Վեցերորդ՝ Երկնքից իջնելը Բանին է պատշաճում, որովհետև միավորվեց մարմնին, այսինքն [ցույց է տալիս] իջնելը, բայց Հովհաննես Ավետարանիչն ասում է մարմնի մասին: «Ես եմ կենաց հացը, որ երկնքից իջա» (Հովհ 6.35,41). ուրեմն՝ մարմինն Աստված է՝ երկնքից իջած:

Յոթերորդ՝ Հովհաննեսի Ավետարանում ասվում է. «Ես և իմ Հայրը մեկ ենք. ով տեսավ ինձ՝ տեսավ Հորը» (Հովհ 14.9): Եվ կույրին ասում է. «Որին տեսար և որի հետ խոսեցիր՝ նա է Աստծո Որդին» (Հովհ 9.37): Ուրեմն մարմնով երևացողը և խոսողը Աստծո Որդի է, և Հոր հետ մեկ է:

Ութերորդ՝ Պողոսն ասում է Փիլիպեցիներին [Հղած Թղթում]. «Որ Աստծո կերպարանքով էր, ծառայի կերպարանք առավ, մարդկանց նմանությամբ եղավ» (Փիլիպ 2.6-7): Ուրեմն մեկ է Աստծո Որդին և մարդու Որդին՝ մարմնացած և մարդացած Աստված:

Իններորդ՝ Հովհաննեսի Ավետարանն ասում է. «Վերջին օրը ես նրան հարություն կտամ» (Հովհ 6.39,40,44,55), և «Նրանց կտամ հավիտենական կյանք» (Հովհ 10.28): Ուրեմն՝ չէր լինի հարություն և ոչ կյանք

---

* Այստեղ խոսքը անապականության վարդապետության մասին է: «Քրիստոսի մարմինը ըստ բնության մարդկային է եղել, իսկ ըստ անօրինական միավորության՝ աստվածային» (Ս. Բարսեղ), այսինքն՝ Աստված: (Ծնթ. հրատ.):

պարգևատու, եթե միավորված չլիներ Հավիտենական կյանքին:

Տանտերերը՝ թեպետ որոշ մարդիկ իշխանություն ունենալու պատճառով տեր են կոչվում, սակայն փառքի Տերը միայն Աստված է, ըստ այն խոսքի. «Զորությունների Տերը՝ նա ինքն է փառքի Թագավորը» (Հմմտ Սաղ 23.8,10): Խաչյալ Քրիստոսին փառքի Տեր է կոչում Պողոս Կորնթացիներին [հղած] Առաջին [թղթում]. Եթե ճանաչեին, փառքի Տիրոջը չէին խաչի (Ա Կոր 2.8): Հետևապես Քրիստոսի մարմինն Աստված է: Այս մասին Աստվածաբանն ասում է. Աստված խաչված՝ Աստված չարչարված[38]: Հռոմեացիներին [հղած թղթում] առաքյալն ասում է. «Նրանցն է որդեգրությունը, կտակարանները, նրանցն է նաև Քրիստոսը մարմնով, որ Հավիտյանս բոլորի օրհնյալ Աստվածն է» (Հռոմ 9.4,5):

Այսքանը նախադրությամբ չորս հարցումների մասին:

Այժմ վկայակոչենք առաքելական խոսքերից, մարգարեներից, սուրբ ավետարանիչներից և ուղղափառ հայրերից, որոնք խոսեցին Քրիստոսի մասին, որպեսզի նրանցից ավարելով՝ նրանց շնորհներին արժանի լինենք Տիրոջ կողմից:

Գլուխ ԺԶ

ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻՑ

Այժմ գնանք Պողոս առաքյալի մոտ, որ մարգարեների վկայություններով ցույց է տալիս Որդու Աստվածությունը, ինչպես Եբրայեցիներին [Հղած] Թղթում է ասում. «Բազում կերպերով և բազում օրինակներով կանխապես Աստված մեր Հայրերի հետ խոսեց մարգարեներով: Այս վերջին օրերին մեզ հետ խոսեց Որդով» (Եբր 1.1,2): Ասում է. «Բազում կերպերով», [այսինքն]՝ նախ հրաշքներով և հնարքներով, երկրորդ՝ հրեշտակներով և մարդկանցով, երրորդ՝ Նոյով և Աբրահամով: «Օրինակ»-ը հուրը, ջուրը, գառը, ծեր ոչխարը, հական է, և մնացյալը՝ մարգարեների մոտ: Չորրորդ՝ այնտեղ՝ կերպը (մասը) և օրինակը, այստեղ՝ ամբողջը և ճշմարիտը, [որը] ցույց է տալիս նրա առավելությունը հին նկատմամբ: Նախ՝ այնտեղ հրեշտակներով և մարգարեներով, այստեղ՝ Որդով, երկրորդ՝ այնտեղ՝ մասը, այստեղ՝ ամբողջը, երրորդ՝ այնտեղ՝ օրինակը, այստեղ՝ ճշմարիտը, չորրորդ՝ այնտեղ՝ մեղքերի պղծում, այստեղ՝ կյանքի փրկություն:

Ժառանգության մասին

«Որին ամենայն ինչի ժառանգորդ դարձրեց» (Եբր 1.2): Քրիստոսը մարմնով է ժառանգորդ ասվում, ըստ սաղմոսի. «Քեզ ժառանգություն եմ տալու հեթանոսներին և երկրի ծագերը» (Սաղ 2.8): Այսինքն՝ ամենայն ինչի. հրեշտակների, մարդկանց, երկնքի և երկրի, հրեաների և հեթանոսների, ողջերի և մեռածների:

Հավիտենության մասին

«Որով և հավիտենությունն արարեց» (Եբր 1.2), որովհետև արարիչ է երկու աշխարհների՝ հրեշտակների հավիտենության և մարդկանց ժամանակների: Իմանալու է, որ հավիտենությունները չորսն են. նախ այն, որ ոչ սկիզբ ունի և ոչ՝ վերջ, երկրորդ՝ որ չունի սկիզբ, բայց ունի վերջ, երրորդ՝ որ ունի սկիզբ, չունի վերջ, չորրորդ՝ որ ունի սկիզբ և վերջ: Եվ թեպետ սրանք հավասարապես հավիտենություններ են կոչվում, բայց ունեն հատուկ անուններ. առաջինը կոչվում է հարաճգական հավիտյան, երկրորդը՝ սկզբնական հավիտյան, երրորդը՝ միշտ հավիտյան, չորրորդը՝ ժամանակային հավիտյան: Սրանք նաև համանուն հավիտյան են կոչվում, ինչպես յուրաքանչյուր դարը: Եվ Մովսեսի օրենքի մասին ասվում է. «Հավիտենական օրենք լինի» (Ելից 30.21), որ բազում ժամանակներ է նշանակում: Բայց իրապես սրանք են մեր խոսքերը: Այսպես. Հայրը, Որդին և Սուրբ Հոգին փառք ենք տալիս «այժմ և միշտ» [բառերով], որ

ժամանակավորն ու միշտն է, իսկ «Հավիտյանս Հավիտենից»-ը սկզբնականն ու հարատևականն է, որովհետև նա պարունակում է երեք Հավիտյան, որ ոչ սկիզբ ունի և ոչ վերջ:

Լույսի մասին

«Որ փառքի լույսն է» (Եբր 1.3): Քրիստոսը [որպես] լույս եկավ այս աշխարհ, և մեզ լուսավորեց Հավատքով, մկրտությամբ, գիտությամբ և կիտառավորի հանդերձյալ [կյանքում]: Նմանապես՝ անմատչելի և անստվեր լույս է, և ոչ զգալի լույսի նման: Դարձյալ անզուգական լույս է և ոչ հրեշտակների լույսի նման: Ասում է «փառքի», որովհետև Հայրը և Հոգին նրան զուգահավասար լույս են:

Պատկերի մասին

«Որ նրա էության պատկերն է» (Եբր 1.3), այսինքն՝ Հոր պատկերն ու նկարագիրն է, որ ամենայն ինչ ընդգրկում է բնությամբ և ոչ որդեգրությամբ: Որդեգրությամբ պատկերը չորսն է. նախ՝ ինչպես մարդը Աստծո պատկերն է, երկրորդ՝ ինչպես մոմն է [կրում] մատանու պատկերը, երրորդ՝ ինչպես մարդը մարդու պատկերն է և ձուն՝ ձվի, չորրորդ՝ ինչպես անունով է պատկեր լինում: Սակայն Որդին Հոր այսօրինակ պատկերը չէ, այլ բնությամբ է նկարագիրը և պատկերը: [Բնությամբ պատկերը], որ ազգակից է, չորսն է. նախ՝ ինչպես լույսն է արևի պատկերը և ջերմությունը՝ կրակի, երկրորդ՝ ինչպես որդին է Հոր պատկերը և խոսքը՝ մտքի[39], երրորդ՝ ինչպես եռատեղ այրը գրի պատկերն է, չորրորդ՝ ինչպես սահմանը՝ սահմանողի, որովհետև կենդանի միտքը և գիտություն ընդունակն է գոյավորում մարդուն, և վերացնելով՝ ապականում: Այդպես էլ՝ Որդին Հոր էության պատկեր և նկարագիր է կոչվում:

Կրելու մասին

«Որն ամենայն ինչ կրում է իր խոսքի զորությամբ» (Եբր 1.3): «Կրել»-ը նախ հորինել է, երկրորդ՝ ունենալ, երրորդ՝ խնամել, չորրորդ՝ երկինքն ու երկիրը առաջացնել, ստեղծել: Դարձյալ՝ «ամենայն ինչ կրում է» նշանակում է, որ ոմանց լինել[ություն], ոմանց մնալ (հարատևություն), ոմանց զգալ[ու] (կարողություն), ոմանց միտք և ոմանց իմացություն է շնորհում:

Սրբության մասին

«Մեր մեղքերը սրբեց» (Եբր 1.3), այսինքն՝ չորս տեսակ քավություն կատարեց. նախ՝ անսերմ ծննդյամբ, երկրորդ՝ մկրտությամբ, երրորդ՝ արդարությամբ, չորրորդ՝ խաչի պատարագով:

Նստելու և [Աստծո] մեծության մասին

«Նստեց [Աստծո] մեծության աջ կողմում, բարձունքներում»: «Նստել»-ը [վերաբերում է] մարմնին. նախ՝ հանգիստ է նշանակում, երկրորդ՝ պատիվ, երրորդ՝ լինել և մնալ: Աջ կողմը ցույց է տալիս նախ Աստվածության փառքը, երկրորդ՝ ահը, երրորդ՝ մերձավորությունը, չորրորդ՝ զորությունը: Աստծո մեծությունը չափվում է ոչ թե քանակով, որ վերաբերում է մարմնին, այլ չորս կերպով է մեծ ասվում. նախ՝ զորությամբ, երկրորդ՝ գործով, երրորդ՝ քանզի անբավ ու անհաս է, չորրորդ՝ քանզի հայտնի է: «Բարձունքներում» է, նախ, որովհետև գերազանցում է բոլոր արարածներին, երկրորդ՝ անհասանելի է մտքի համար, երրորդ՝ բարձր է փառքով, չորրորդ՝ քանզի տեսնում է բոլորին: Այս բոլորը Որդու աստվածաբանության մասին է:

Գլուխ ԺԷ

ԱՅԺՄ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ Է ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՀԵՏ՝ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՎ [ՆՐԱ] ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ասում է. Այնքան առավել [է], քան հրեշտակները.

Նախ՝ քանզի Բանը հավատարիմ եղավ հրեշտակների միջոցով, մինչդեռ Որդին իր զորությամբ լցրեց երկինքն ու երկիրը և փրկեց մեզ:

Երկրորդ՝ ասում է. Լավ անուն ժառանգեց, այսինքն՝ Որդին և Հիսուս Քրիստոսը Տեր Աստված կոչվեց, մինչդեռ հրեշտակը պատգամաբեր է անվանվում: Քանզի հրեշտակներից որի՞ն ասաց. «Իմ Որդին ես դու, և ես այսօր ծնեցի քեզ» (Եբր 1.5): Հրեշտակներն Աստծո Որդի չեն կոչվում. նախ՝ քանզի Աստծուց են ստեղծված և ոչ ծնված, երկրորդ՝ քանզի Աստծո բնությունը չունեն, երրորդ՝ քանզի հավասար չեն Աստծուն, չորրորդ՝ քանզի Քրիստոսը ոչ թե հրեշտակների բնությունն առավ, այլ՝ մարդու: Իսկ «Իմ Որդին ես» խոսքը նշանակում է, որ (նա) Հոր ծնունդն է հավիտենությունից առաջ: «Ես այսօր ծնեցի քեզ», այսինքն՝ Հայր Աստված (նրան) ծնեց մորից, քանզի Միածին Որդին ծնվեց Հորից և նույնը ծնվեց մորից՝ այնտեղ՝ անմարմին և այստեղ՝ մարմնով, հավիտենական և ժամանակային, անսահման և սահմանափակված, նույն Աստված մարդացած, մեկ Տեր, մեկ Քրիստոս, մեկ անձ, մեկ բնություն, մեկ կամք, մեկ ներգործություն:

Երրորդ՝ «Ես նրան Հայր կլինեմ և նա ինձ Որդի կլինի» (Եբր 1.5): [Այստեղ] տնօրինության մասին է ասվում, և չի անվանվում հրեշտակների Հայր:

Չորրորդ՝ «Երբ առաջնեկին աշխարհ բերի» (Եբր 1.6), մյուս անգամ գալստյամբ աշխարհ մտնելն է ակնարկում: «Աստծո բոլոր հրեշտակները նրան կերկրպագեն» (Եբր 1.6). այս մասին Մովսեսն է Երկրորդ օրինացում ասում (տե՛ս Բ Օր 33.2), այսինքն՝ անմարմին հրեշտակները՝ մարմնացած Որդուն: Հետևաբար պարզ է, որ Քրիստոսը Աստված է, որին երկրպագում են հրեշտակները:

Հինգերորդ՝ մարգարեն հրեշտակներին արարած և սպասավոր է անվանում. «Ո՛վ [իրեն] հոգիներ ստեղծեց հրեշտակներին և իր սպասավորներին՝ կրակի բոց» (Եբր 1.7, տե՛ս Սաղ 104.4): Այն պատճառով է բոց անվանում, քանզի չայրող հուր են և թափանցիկ լույս ու անվայրափակ հոգի:

Վեցերորդ՝ Որդուն ասում է. «Քո Աթոռն, ո՛վ Աստված, հավիտյանս հավիտենից է» (Եբր 1.8, տե՛ս Սաղ 45.6,7): Աթոռը վայելում է մարմնին, որ Որդին է: Աթոռը ցույց է տալիս նախ, որ նստած է, երկրորդ՝ պատիվը, երրորդ՝ որ հավասար է Հորը և [Սուրբ] Հոգուն, չորրորդ՝ որ թագավոր և մարմնով Աստված է՝ անփոփոխ հավիտենությամբ:

Յաթներորդ՝ «Քո թագավորության գավազանը ուղիղ գավազան է»: Այս ես ցույց է տալիս, որ Քրիստոսը թագավոր է: Գավազանը նախ իշխանությունն է ցույց տալիս, երկրորդ՝ ուղիղ լինելը, երրորդ՝ հաստատությունը, չորրորդ՝ չարերին տրված խրատը:

Ութերորդ՝ «Սիրեցիր արդարությունը և ատեցիր անօրենությունը» (Եբր 1.9): Այս ես մարմնին է [վերաբերում]. նախ՝ քանզի առանց սկզբնական մեղքի ծնվեց, երկրորդ՝ քանզի անմեղ մնաց, երրորդ՝ քանզի մկրտվեց՝ [դրա] կարիքը [չունենալով], չորրորդ՝ խաչով արդարության գործեց, որով մարդիկ արդարացան, և սատանան դատապարտվեց:

Օծման մասին

Իններորդ՝ «[Սրա համար] Քո Աստվածը ուրախության յուղով քեզ օծեց, ո՛վ Աստված» (Եբր 1.9,10): Օծյալը, որ Քրիստոս է թարգմանվում, այն է, որ Կույսի արգանդում իր մարդկային [բնությունը] օծեց Աստվածությամբ: Հնում օծյալները երեքն էին. նախ՝ մարգարեները՝ հոգով, երկրորդ՝ թագավորները՝ յուղով, երրորդ՝ քահանաները՝ անասունների արյամբ: Մինչդեռ մեր Տերը նախ՝ արգանդում օծվեց իր Աստվածության յուղով, ինչպես Սողոմոնն է ասում Երգ երգոցում. «Նրա անունը հեղված յուղի նման է» (Երգ 1.2), երկրորդ՝ հոգով օծվեց մկրտվելիս, երրորդ՝ արյամբ օծվեց խաչի վրա: Եվ այս երեք օծումները Դավիթ մարգարեն ընկալեց որպես օրինակ Քրիստոսի. նախ՝ քանզի օծվեց Բեթղեհեմում իր Հոր տանը, երկրորդ՝ օծվեց Քեբրոնի վրա, երրորդ՝ թագավոր օծվեց ամբողջ Իսրայելի վրա: Նմանապես մեր Տերը՝ նախ օծվեց տան արգանդում. երբ ծնվեց Բեթղեհեմում, հրեշտակները գոչեցին. «Այսօր ձեզ փրկիչ ծնվեց, որ օծյալ Տեր է Դավթի քաղաքում» (Ղուկ 2.11): Երկրորդ՝ օծվեց Հորդանանում և այն մկրտության ավազան գարձրեց: Երրորդ՝ օծվեց արյամբ, խաչի վրա, և տիրեց բոլորին, ինչպես ասում է հարությունից հետո. «Ինձ տրվեց ամենայն իշխանություն երկնքի և երկրի վրա» (Մատթ 28.18):

Տասներորդ՝ «Քո ընկերներից ավելի» (Եբր 1.9), այսինքն՝ սուրբ մարդկանցից, քահանաներից, մարգարեներից և թագավորներից: Եվ Քրիստոսը առավել է սրանցից:

Նախ՝ քանզի նրանք մարդիկ էին մարդկանցից օծված, իսկ մեր Տերը Աստված է և Աստծուց օծված, ինչպես ասում է. «Քեզ օծեց իմ Աստվածը և քո Աստվածը» (Սաղ 44.8, Եբր 1.9), օծողը Հայր Աստված է, օծյալը Որդի Աստված է և օծումը Սուրբ Հոգի Աստված է:

Երկրորդ՝ եթե նրանք օծվեցին ուրիշի հոգով, ուրիշի յուղով, ուրիշի արյամբ, ապա Քրիստոսը՝ իր Հոգով, իր յուղով և իր արյամբ:

Երրորդ՝ եթե նրանց օծումը ժամանակավոր էր, ապա մեր Տիրոջ օծումը՝ հավիտենական, ըստ այն խոսքի թե՝ «Դու հավիտենական քահանա ես» (Սաղ 109.4):

Չորրորդ՝ նրանք օծվեցին մասամբ միայն, այսինքն՝ մեկը՝ քահանա, մեկը՝ մարգարե, և մեկը՝ թագավոր, մինչդեռ մեր Տերն՝ ամբողջապես, քանզի միայն նա է և՛ քահանա, և՛ մարգարե, և՛ թագավոր, ըստ Ադամի օրինակի, որովհետև նա կորցրեց այս երեք շնորհները, իսկ մեր Տերը վերստին հայտնի դարձրեց դրանք ճշմարտությամբ:

Տասնմեկերորդ՝ «Դու, Տեր, սկզբից երկիրը հաստատեցիր և քո ձեռքերի գործը երկինքն է» (Եբր 1.10): [Այստեղ] «Տեր»-ը հանձին Քրիստոսի է, ինչպես առաքյալն է ասում Կորնթացիներին [գրած] Առաջին [թղթում]. «Մենք [ունենք] մեկ Հայր Աստված և մեկ Տեր Հիսուս Քրիստոս» (Ա Կոր 8.6): Արդ, Քրիստոսին Տեր և երկնքի ու երկրի Արարիչ է խոստովանում Դավիթ մարգարեն:

[Հարց.] Ի՞նչ է, որ Մովսեսն ասում է. «Աստված սկզբից երկինքը և երկիրը հաստատեց» (Ծննդ 1.1): Եվ Դավիթն ասում է. «Սկզբից, Տեր, երկիրը հաստատեցիր և հետո՝ երկինքը» (Սաղ 73.17):

[Պատասխան.] Սրանք իրար հակառակ չեն, այլ՝ չափազանց համաձայն. նախ՝ քանզի Մովսեսը լուսեղեն երկնքի մասին է ասում, որ հաստատվեց առաջին օրը, և հետո՝ երկիրը, իսկ Դավիթը երկինքը հաստատություն է անվանում, որ երկրորդ օրը հաստատեց: Դարձյալ՝ մեկն ասում է, [թե] երկինքն է առաջինը, և մյուսը՝ երկիրը: Երկուսաեք ցույց են տալիս, որ երկինքն ու երկիրը հաստատվել են մի կարճ վայրկյանում, թեպետ զարդարվելն ու կարգավորվելը վեց օրում եղավ:

Տասներկուերորդ՝ «Նրանք կանցնեն, բայց դու կաս և կմնաս հավիտյան» (Եբր 1.12), այսինքն՝ արարածներ են և փոխման ունեն և միայն դու ես անփոխման:

[Հարց.] Սողոմոնն ասում է. «Երկիրը հավիտյան կա» (Ժող 1.4), իսկ Դավիթն ասում է. «Կկորչեն» (հմմտ Սաղ 20.11):

[Պատասխան.] Հակառակ չեն, քանզի երկինքը, երկիրը և այլ տարրերն անապական են մնում ըստ էության, ինչի [մասին] ասում է Սողոմոնը և փոփոխվում են ըստ որակի, ինչի [մասին] ասում է Դավիթը:

Տասներեքերորդ՝ «Բոլորն իբրև վերարկու կմաշվեն» (Եբր 1.12): «Վերարկու» ասելով նախ հնությունն ու ապականությունն է ցույց տալիս, երկրորդ՝ հեշտությամբ փոփոխվելը, երրորդ՝ նորոգվելը, նաև՝ գալարվելը: «Մինչդեռ քո տարիները չեն պակասելու» (Եբր 1.12), քանզի, բացի Տիրոջից, արեգակի տակ եղածների տարիները պակասելու են:

[Հարց.] [Եթե,] ասում է, բոլորն ապականվելու են՝ դրախտը ե՞ս պիտի ապականվի:

[Պատասխան.] Որոշ հերձվածողներ ասում են, թե երկրի հետ նաև դրախտն է ապականվելու: Սակայն ուղղափառներն ասում են՝ չի ապականվի, այլ կվերանորոգվի, ինչպես երկնային մարմինը, որպեսզի նոր երկիր և նոր երկինք լինի: Այս երկուսից պարզ է, որ, նախ՝ դրախտում չկա ոչ մեղք և ոչ ապականություն, երկրորդ՝ քանի որ ջրհեղեղի ջուրը

չհասավ դրախտ, այնպես էլ աշխարհի վերջում կրակն այնտեղ չի հասնի:

Տասնչորսերորդ՝ «Հրեշտակներից որի՞ն ասաց. նստիր իմ աջ կողմում» (Եբր 1.13), բայց միայն՝ Որդուն, քանզի հրեշտակները չկարողացան մահը վերացնել և ոչ էլ՝ անեծքը և այլն: Տես՝ Դավիթ մարգարեն Հոր աջ կողմում նստած Որդուն Տեր է խոստովանում. «Տերն ասաց իմ Տիրոջը. Նստիր իմ աջ կողմում» (Սաղ 109.1): Տիրոջ անօրինությունը «աջ» է կոչվում չորս պատճառով. նախ՝ քանզի հոգի և մարմին էր, երկրորդ՝ վերջին ժամանակներում է, երրորդ՝ մարմնով շրջեց, չորրորդ՝ խոնարհագույն [գործեր] կատարեց: Եվ Քրիստոսի թշնամիները նախ՝ սատանան է, երկրորդ՝ անհնազանդները, երրորդ՝ մեղքը, չորրորդ՝ մահը և ապականությունները: «Մինչև»-ը երկիմաստ է. կա, որ վախճանավոր է և կա, որ՝ անվախճան, ինչպես այստեղ, որ ժամանակավորն է մասնանշում և չի ուրանում հավիտենականը: Բայց նրանք մարդկանց հարկավոր և սպասավոր հոգիներ են (Եբր 1.14): Նախ՝ ինչպես ասում է Մովսեսը. «Հեթանոսների սահմանների վրա կարգեց, ըստ Աստծո հրեշտակների թվի» (Բ Օր 32.8), քանզի յուրաքանչյուր մարդու վրա պահապան հրեշտակ է կարգված: Երկրորդ՝ «Ովքեր փրկությունն են ժառանգելու» (Եբր 1.14)՝ այսինքն՝ հրեշտակների բանակները քրիստոնյաների և սրբերի պահապաններն են: Երրորդ՝ սպասավորներն են Տիրոջ անօրինության, որ երկնքի արքայության առհավատչյան էր: Չորրորդ՝ որովհետև մեր հարության սպասավորներն են՝ փողի շեփորումով և պաշտոնավարությամբ:

Տասնհինգերորդ՝ «Հանդերձյալ աշխարհը ոչ թե հրեշտակներին հնազանդեց» (Եբր 2.5), այլ՝ Որդուն. նախ՝ որովհետև նա Արարիչ է և ոչ հրեշտակ, երկրորդ՝ որովհետև նա եղավ մեր Փրկիչը և ոչ՝ հրեշտակը, երրորդ՝ որովհետև Նա է մեր հարությունը և ոչ՝ հրեշտակը:

Տասնվեցերորդ՝ «Հրեշտակներին չի օգնում, այլ Աբրահամի զավակին է օգնում» (Եբր 2.16): Սա մարդու նկատմամբ ունեցած առավել մեծ սերն է ցույց տալիս. նախ՝ որովհետև չառավ հրեշտակների բնությունը, այլ՝ մարդկանց, երկրորդ՝ որովհետև մեզ համար փրկություն արարեց և ոչ՝ պաշտոնանկ հրեշտակների: Քրիստոսը Աբրահամի զավակ է կոչվում նախ՝ որովհետև նրա ազգից ծնվեց, երկրորդ՝ որովհետև նրան ավետիս խոստացավ, թե՝ «Քո զավակից կօրհնվեն երկրի բոլոր ազգերը» (Ծննդ 12.3): Եվ «օգնել»-ը նախ [ցույց է տալիս, որ] մեր բնությունը առավ և միավորեց իր Աստվածությանը, երկրորդ՝ որ անբաժանելի մնաց, երրորդ՝ որ Աբրահամի զավակի հետ մեզ ձերբազատեց մահից, մեղքից և տանջանքից:

Այսքանով, ըստ Սուրբ Գրքի վկայության, ցույց տվեց մեր Տիրոջ առավելությունը հրեշտակների նկատմամբ:

[Սակայն] հրեշտակներից բարձր է ոչ միայն մեր գլուխը՝ Քրիստոս, այլև սուրբ եկեղեցին, որ Քրիստոսի մարմինն է, ինչպես սաղմոսն է ասում. «Ըստ քո բարձրության զարացնում ես մարդկանց որդիներին» (Սաղ

11.8): Եվ այս չորս կերպով է.

Նախ՝ որովհետև եկեղեցին Քրիստոսի սուրբ հարսը և անդամն է, ըստ այն խոսքի, թե՝ «Նրա մարմնի մարմինն ենք և նրա անդամների՝ անդամը» (Ա Կոր 12.27): Մինչդեռ նրանք ծառաներ են:

Երկրորդ՝ ինչպես վերը ցույց տրվեց, նրանք (սոսկ) երկրպագում են մեր գլխավորին (Քրիստոսին) և մարդկանց սպասավորներ են, իսկ մենք չենք երկրպագում և չենք սպասավորում նրանց:

Երրորդ՝ մենք Քրիստոսի չարչարանքներին ենք կցորդվում և նրա փառքին հաղորդակից լինում, իսկ նրանք՝ ոչ, որովհետև մարմին չունեն:

Չորրորդ՝ եկեղեցին օրըստօրե ավելացնում է իր բնական վարձը և փառքը, մինչդեռ նրանք չեն կարող: Իսկ եկեղեցու բարձրանալը (զարդանալը) երեք կերպով է. առաջինը՝ այստեղ՝ շնորհքով և այնտեղ՝ փառքով, երկրորդ՝ այս կյանքում՝ հավատքով, մահվան ժամանակ՝ հույսով և հարության ժամանակ՝ սիրով, երրորդ՝ այժմ, երկրի վրա՝ մտքով, մահից հետո՝ սրբոց բնակավայրում՝ հոգով, իսկ հարությունից հետո՝ հոգով և մարմնով երկնքի արքայության մեջ, որին մեզ արժանի դարձնի Քրիստոսը՝ մեր հույսը. ամեն:

Այսքանը մեր Տիրոջ և հրեշտակների համեմատությունն էր, ինչպես և ցույց տրվեց:

Գլուխ ԺԸ

ԱԴԱՄԻ ԵՎ ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մարգարեն ասում է. «Մի փոքր ցածր առեղծեցիր մարդուն, քան քո հրեշտակներին» (Սաղ 8.6):

Առաջին մարդու փոքրությունը հրեշտակների նկատմամբ վեց [կարգի] է.

նախ՝ մարդն ունի մարմին, իսկ հրեշտակներն անմարմին են,

երկրորդ՝ մարդը հողեղեն է, իսկ նրանք՝ լուսեղեն,

երրորդ՝ մարդն արարվեց ուրբաթ օրը, իսկ նրանք լույսի հետ գոյացան առաջին օրը,

չորրորդ՝ մարդը դրվեց դրախտում, իսկ հրեշտակներն՝ երկնքում,

հինգերորդ՝ մարդը կարիք ունեցավ կերակրի և դրախտի վայելչության, իսկ հրեշտակները կարիք չունեն,

վեցերորդ՝ մարդը գտնվում է մահվան և կյանքի միջև, իսկ հրեշտակները բնությամբ անմահ են:

Այսպես, մարդը ցածր է հրեշտակներից վեց իրողությամբ, բայց [նույնպես] վեցով առավել պատիվ ունի, քան հրեշտակները.

նախ՝ որովհետև մարմնով, հոգով և մտքով մեծարվեց, ինչպես ասում է. «Փառքով և պատվով պսակեցիր նրան» (Սաղ 8.6, Եբր 2.7):

Երկրորդ՝ երեք անձերից երեք շնորհով զարդարվեց, այսինքն՝ թագավորությամբ, քահանայությամբ և մարգարեությամբ, ըստ այն խոսքի. «Ամեն ինչ [նրան] հնազանդեցրիր» (Եբր 2.8):

Երրորդ՝ որովհետև [Աստծո] պատկերով արարվեց մարդը, մինչդեռ հրեշտակների համար չի ասում, թե պատկերով առեղծվեցին:

Չորրորդ՝ որովհետև բոլոր մարդկանց սկիզբը մեկ մարդ է, ինչպես Հայր Աստված սկիզբն է ամենայն ինչի, մինչդեռ հրեշտակները անէությունից եղան:

Հինգերորդ՝ որովհետև հրեշտակները մարդու սպասավորներն ու ենթականերն են, որտեղից պարզվում է, որ հանցանքից հետո էլ նույն կարգը պահպանեցին:

Վեցերորդ՝ որովհետև մարդը հրեշտակների համար Տեր և Աստված եղավ և Հոր աջ կողմում նստեց, և երբ Բանը մարդ եղավ, երկրպագեցին նրան: Այս է փառքով ու պատվով նրան պսակը:

Դարձյալ՝ երկրորդ Ադամի խորհուրդն ունի. «Մի փոքր ցածր առեղծեցիր մարդուն» (Սաղ 8.6): Եվ այս վեց կերպով է երևում. նախ՝ [իր] կամքով խոնարհվելով [ցածրացվեց] կույսի արգանդում: Երկրորդ՝ քանզի Բանը մարմին եղավ: Երրորդ՝ երկրի վրա շրջեց մարմնով: Չորրորդ՝ ընդունակ եղավ կրքի և աշխատության: Հինգերորդ՝ չարչարվեց և խաչվեց: Վեցերորդ՝ մեռավ և թաղվեց: Այս բոլորը չունեն հրեշտակները: Սակայն

փառքով ու պատվով պսակվեց.

Նախ, որովհետև խաչով պսակվելով՝ մահը սպանեց և թշնամուն շղթայեց:

Երկրորդ՝ վերացրեց Ադամի պարտքը և անեծքը:

Երրորդ՝ ազատեց հոգիները, ավերեց դժոխքը, ինչը չէին կարող հրեշտակները:

Չորրորդ՝ հարությամբ տիրեց երկինքն ու երկիրը, կենդանիներին ու մեռածներին և այլն:

Հինգերորդ՝ երկինք բարձրացավ և Հոր աջ կողմում նստեց:

Վեցերորդ՝ «Որովհետև երկնավորների և երկրավորների լեզուները քեզ պիտի խոստովանեն» (Փիլիպ 2.11):

Մեռածներին հարություն է պարգևում և փառքով պսակում: Այս է Քրիստոսի՝ փառքով պսակվելը, որ չունեն հրեշտակները, ինչը բազում բաժիններով ցույց տվեց վերևում:

Գլուխ ԺԹ

ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԱԴԱՄԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

[Հարց.] *Ինչո՞վ են հավասար և ինչո՞վ են տարբեր առաջին և երկրորդ Ադամները:*

[Պատասխան.] *Հավասար են չորս [իրողությամբ.]*

Նախ՝ ինչպես Ադամը կույս հողից է, այնպես էլ Քրիստոսը՝ կույս մորից:

Երկրորդ՝ Ադամը ստեղծվեց Աստծո պատկերով և մեր Տերը, ինչպես Կողոսացիներին [հղված թղթում է] ասվում, աներևույթ Հայր Աստծո պատկերն է (Կող 1.15):

Երրորդ՝ երբ Ադամը թմրեց, նրա կողից ստեղծվեց կինը, և խաչի վրա Քրիստոսի կողի արյամբ և ջրով շինվեց եկեղեցին:

Չորրորդ՝ Ադամը բոլոր ծնունդների սկիզբն է, և մեր Տերը բոլոր հավատացյալների գլուխն է: Այս պատճառով նա առաջին Ադամ կոչվեց և Քրիստոսը՝ երկրորդ:

Իսկ տարբերությունները չորսն են.

Նախ՝ Ադամը [ստեղծվեց] կույս հողից, սակայն կույս չմնաց, իսկ Քրիստոսը [ծնվեց] կույս մորից և կուսությամբ մնաց:

Երկրորդ՝ Ադամից է մեղքը և մահը, Քրիստոսից է կյանքը և շնորհը բոլոր մարդկանց համար:

Երրորդ՝ Ադամը, որ անապական էր մարմնով, ապականացու եղավ, մինչդեռ մեր Տերն ապականացուն ստեղծեց՝ նրան խառնելով անապականություն, որովհետև նրա մարմինը ապականություն չտեսավ (Հմմտ Սաղ 15.10), հաստատում է մարգարեն:

Չորրորդ՝ Ադամը դրախտից իջավ երկիր, և մեր Տերը երկինք բարձրացավ և Հոր աջ կողմը նստեց:

Բացում է Տիրոջ, որպես Արարչի առավելությունը արարածների [նկատմամբ], ինչպես Պողոսն է ասում Կորնթացիներին [հղած] Առաջին [թղթում.] «Առաջին մարդը հողեղեն էր և երկրից էր ու՝ շնչավոր, երկրորդը Տեր էր և երկնքից էր ու՝ հոգևոր» (Ա Կոր 15.47): Սակայն, ինչպես ասացի, միայն մարմնով առավելություն ունի. այդ պատճառով էլ Նոր Ադամ է կոչվում Հնի համեմատ:

Եկեղեցու և Ադամի մասին

Դարձյալ իմանալու է, որ [ինչպես] ասում է Աստվածաբանը, թեպետ Ադամը ծերացող չէր հասակով և հարատև ուրախության մեջ էր, այդուհանդերձ այժմ սուրբ եկեղեցին չորս իրողությամբ առավել է [նրանից], քանզի հոգով գեղեցիկ էր, քան Ադամը, որ դրախտում էր.

Նախ՝ որովհետև Ադամը մյուս արարածների նման ստեղծվեց Աստծո ձեռքով և խոսքով, իսկ սուրբ եկեղեցին՝ Քրիստոսի մարդեղությամբ, և սրբվեց Քրիստոսի չարչարանքով, մահվամբ և հարությամբ, [եկեղեցու] պատիվն ու փառքը բարձր է, քան նրանը:

Երկրորդ՝ որովհետև Ադամը մահվան և կյանքի միջև էր [գտնվում], իսկ [մկրտության] ավազանով սրբվածն անմահություն ժառանգեց:

Երրորդ՝ Ադամը խոստումով էր ստանում վերին արքայությունը, իսկ մկրտվածն իրեն խոստացվածը գործով ընդունեց:

Չորրորդ՝ նրան Աստծո պատկերով ստեղծեց, իսկ սրան Աստծո Որդի և Քրիստոսի ժառանգակից դարձրեց՝ լինելով [նրան] պատկերակից, և այսու՝ [նրանից] առավել:

Այսքանը Ադամի, հրեշտակների, Տիրոջ և եկեղեցու [մասին]:

Գլուխ Ի

ՏԻՐՈՋ ԵՎ ՄԱՐԳԱՐԵՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այժմ գանք մարգարեներին, ինչպես առաքյալն է ասում. «Այդ պատճառով հավատարիմ է իր Տիրոջը, ինչպես Մովսեսը՝ նրա ամբողջ տանը» (Եբր 3.2): Նախ տեսնենք, թե ինչպե՞ս է Հայրը Որդու Արարիչը:

Պատասխանենք, որ ոչ թե ըստ էության Որդու Աստվածության էր Արարիչ, ինչպես Արիոսն է ասում կամ օտարադավաններն են բարբաջում, այլ՝ ըստ մարդեղության, որ չորս կերպով է.

Նախ՝ որովհետև Քրիստոսի մարմինը ստեղծվել է Կույսի և Ադամի բնությունից:

Երկրորդ՝ որովհետև Որդու մարդեղությունը Հայրն արարեց, այսինքն՝ կամեցավ և միավորեց:

Երրորդ՝ որովհետև Հայրն Արարիչ է ասվում, իսկ Որդին՝ ոչ երբեք արարած:

Չորրորդ՝ որովհետև «արարեց»-ը Հայր բնությունն է ցույց տալիս, ինչպես այնտեղ, որ ասում է Եզեկիան. Այսուհետև մանուկներ կստեղծեմ (տե՛ս Դ Թագ 18, Բ Մնաց 29.1,2, 31.1, 32.1-14, Եսայի 36.1-22). որոնք բնությամբ իր ծնունդներն էին: Նմանապես Հոբի համար ասվեց. «Հոբը յոթ որդի և երեք աղջիկ ուներ» (Հոբ 1.2): Նաև սովորական լեզվով ասում ենք՝ մանուկ ստեղծենք:

Նմանապես Մովսեսի մասին ասենք, որ [նրանում] բազում համեմատություններ են տեսնվում, այսինքն՝ փարավոնի սնվածը կոչվեց, հրաշքներ գործեց, տանջեց Եգիպտոսը և հանեց ժողովրդին [այնտեղից], ճեղքեց ծովը, իշխեց [բնության] տարրերին, օրենքներ հաստատեց, խորան կանգնեցրեց, ջուր բխեցրեց և վեմ ստեղծեց: Եվ շատ ուրիշ նմանություններ ունի Մովսեսը Քրիստոսի նկատմամբ, որի մասին ասում է. «Տեր Աստված ձեզ համար ինձ նման մարգարե դուրս կբերի՝ նրան լսեք» (Բ Օր 18.15): Սակայն մեր Տերը շատերին է գերազանցում:

Նախ՝ մեր Տերն Աստված է բնությամբ, իսկ Մովսեսը՝ կոչումով, ինչպես հրեշտակներն ու մյուս սրբերը, ըստ այն խոսքի. «Ես ասացի, թե աստվածներ եք լինելու», ասում է սաղմոսը (Սաղ 81.6):

Երկրորդ՝ նա Որդի է, և սա ծառա, ըստ այն խոսքի, թե՝ «Հեզ է իմ ծառա Մովսեսը» (Թվոց 12.3):

Երրորդ՝ Մովսեսն իշխեց բնության տարրերին, իսկ մեր Տերը՝ այստեղի և հանդերձյալ կյանքի:

Չորրորդ՝ նա փարավոնին պատժեց, իսկ մեր Տերը՝ անմարմին դևերին (սատանաներին), որոնք ասում էին. Ժամանակից առաջ ինձ մի՛ տանջիր (Հմմտ Ղուկ 8.28):

Հինգերորդ՝ նա ազատեց Իսրայելը Եգիպտոսից, իսկ մեր Տերը՝ հավատացյալներին՝ մեղքից և դժոխքից:

Վեցերորդ՝ նա նյութեղեն ծովը ճեղքեց, իսկ մեր Տերը՝ իմանալին, որ աշխարհի և մեղքի ծովն է:

Յոթերորդ՝ նա Աստծո անունով էր հրաշքներ գործում, իսկ մեր Տերը՝ իր ամենակարող զորությամբ, և Քրիստոսի անունով էլ աշակերտներն էին հրաշքներ գործում:

Ութերորդ՝ նա օրենքներ էր հաստատում Աստծո անունով՝ «Ես եմ քո Տեր Աստվածը» (Ծննդ 17.1), «Մի՛ շնացիր» (Ելից 20.13) և այլն, իսկ մեր Տերն օրենքներ հաստատեց իր անունով, ըստ այն խոսքի. Հների կողմից սա ասվեց, սակայն ես ձեզ այս եմ ասում (տե՛ս Մատթ 5.21):

Իններորդ՝ նա ժայռից ջուր բխեցրեց և երկնքից մանանա ու լորամարգի [բերեց], իսկ մեր Տերն իր մարմինն ու արյունը տվեց. նաև՝ անապատում՝ հաց:

Տասներորդ՝ նա՝ ժամի վրանը, իսկ մեր Տերը եկեղեցին հաստատեց, ըստ այն [խոսքի.] «Այդ վիմաժայռի վրա պիտի շինեմ իմ եկեղեցին և դժոխքի դռները նրան պիտի չհաղթեն» (Մատթ 16.18):

Ի մի բերելով ասենք. Մովսեսը խորհրդանշում էր օրինակը և մարմնավորը, ստվերականն ու ժամանակավորը, իսկ մեր Տերը՝ ճշմարտությունը, հոգևորը և լույսը, ու, որպես Աստված և Արարիչ, կերտեց հավիտենական փրկությունը: Մովսեսը [գործում էր] որպես ծառա և արարած, այս պատճառով ասում է. ինչպես տունն ու արհեստավորն է գնահատվում, այնպես էլ՝ Մովսեսը և մեր Տերը, «Որովհետև տունը կառուցվում է ինչ-որ մեկի կողմից, բայց բոլորին արարողն Աստված է» (Եբր 3.4):

Տիրոջ և մարգարեների ընդհանրական համեմատությունը

Մարգարեն ասում է. Բազում հրաշքներ գործեցիր, Աստված, ո՞վ է քեզ նման (Սաղ 39.6): [Սա] նրանց [դեմ է], ովքեր ասում են, թե Քրիստոսի հրաշագործությունները նման են այլ մարգարեների [հրաշագործություններին]: Ասում է, թեպետ նրանք հրաշքներ գործեցին, [սակայն դրանք] նման չէին քո հրաշագործություններին: Եվ այս հայտնի է չորս [կետով.]

Նախ՝ մարգարեներն Աստծո զորությամբ և միջնորդությամբ էին կատարում, իսկ Քրիստոսը՝ իր զորությամբ՝ ուղղակիորեն:

Երկրորդ՝ նրանք հրաշագործությունների խորհուրդը նրանից էին ստացել, իսկ Տերն ամբողջապես իրականացրեց:

Երրորդ՝ նրանք Քրիստոսի օրինակն էին, իսկ Տերը՝ նրանց ճշմարտությունը:

Չորրորդ՝ ինչն առավել հայտնի է. Մովսեսը միայն ծովը ճեղքեց, Եղիան երկինք բարձրացավ, Եղիսեն մեռածներին կենդանացրեց, Ադամն անարատ հողից ծնվեց, սակայն կուսությամբ չմնաց, Հովհաննեսը կույս մնաց,

բայց սերմից ծնվեց: Սրանցից յուրաքանչյուրն ունի այս կամ այն առաքինությունը: Մինչդեռ մեր Տերն ուներ բոլոր առաքինությունները, որովհետև Կույսից ծնվեց և կուսությամբ մնաց, երկինք բարձրացավ, առանց ծավին, մեռածներին հարություն պարգևեց. ոչ թե նրանք, ովքեր կրկնակի [մահով] մեռան, այլ նրանք, ովքեր չեն մեռնում: Հետևաբար պարզ է, որ Քրիստոսն Աստված է, և մարգարեների հրաշագործությունները նման չեն Քրիստոսի հրաշագործություններին:

Տիրոջ և մարգարեների հրաշագործությունները դարձյալ չորսով են տարբերվում.

Նախ՝ որովհետև Քրիստոսը փութալով էր բժշկություն կատարում, քանզի խոսքը գործով էր իրականացնում, իսկ մարգարեները՝ հապաղելով:

Երկրորդ՝ որովհետև մարգարեները դեղով էին [բժշկում], ինչպես Եսային՝ չոր թզով (տե՛ս Եսայի 38.21):

Երրորդ՝ որովհետև Քրիստոսը գերբնական մեծամեծ գործեր էր կատարում:

Չորրորդ՝ որովհետև [մարգարեները հրաշագործում էին] Աստծո անվամբ և աղոթքով, իսկ Քրիստոսը՝ միայն խոսքով և կամքով: Այդ պատճառով ժողովուրդը զարմանում և ասում էր, թե Իսրայելում երբեք այսպիսի հրաշքներ չեն եղել (հմմտ Մատթ 9.33):

Գլուխ ԻԱ

ՀԻՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԵՐԻ ԵՎ ՏԻՐՈՋ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՆԴԴԵՄ ՀՐԵԱՆԵՐԻ

«Նայեցեք մեր խոստովանության Առաքյալին և Քահանայապետին՝ Հիսուս Քրիստոսին» (Եբր 3.1): Իսկ մեր Փրկչի՝ Քրիստոսի՝ բոլորի Քահանայապետի հատկությունն Ահարոնի քահանայությանն է [հարաբերվում] համաձայն հետևյալ կետերի.

Նախ՝ [հին] քահանայությունը ստվերի նման էր և օրինակով էր, իսկ մեր Տերը՝ էությամբ և ճշմարտությամբ:

Երկրորդ՝ նրանք տկարությամբ տառապող մարդիկ էին, ըստ այն խոսքի, թե՝ «Օրենքը տկարությամբ տառապող մարդկանց քահանայապետ է կարգում, իսկ երդումի խոսքը, օրենքից հետո՝ Որդուն» (Եբր 7.28):

Երրորդ՝ նրանց քահանայությունը ժամանակավոր և խափանվող էր, իսկ մեր Տիրոջը՝ մշտնջենավոր և հավիտենական, ըստ այն խոսքի, թե՝ «Դու հավիտենական քահանա ես, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Եբր 5.6, 7.21):

Չորրորդ՝ նա (Մելքիսեդեկը) պատժապարտներին հատուցում էր առանց գթության, իսկ մեր Տերը՝ շնորհով և ողորմածությամբ, ըստ այն խոսքի, թե՝ «[Նա] լինելու է ողորմած և քահանայապետ» (Եբր 2.17):

Հինգերորդ՝ նրանք չէին կարող ախտակից լինել տկարներին, իսկ մեր Տերը փորձություն կրելով, կարող է նաև փորձության ենթարկվողներին օգնական լինել (Եբր 2.18), ըստ այն խոսքի, թե՝ «Ոչ թե ունենք Քահանայապետ, որ չի կարող ախտակից լինել մեր տկարությանը, այլ [մարդկանց] նմանությամբ ամբողջապես փորձության է [մատնվում], առանց մեղքի» (Եբր 4.15):

Վեցերորդ՝ նրանք պատարագ էին մատուցում նախ իրենց պատճառով և հետո՝ ժողովրդի անգիտության, իսկ մեր Տերը մեղք չգործեց, ըստ մարգարեի, և անմեղը մեղավորներիս պատճառով պատարագվեց, համաձայն այն խոսքի, թե՝ «Նա մեր մեղքերի պատճառով չարչարվեց» (Ա Կոր 15.3, Գաղ 1.4):

Յոթերորդ՝ նրանք հարատև պատարագ էին մատուցում հարատև հանցանքների, բազմազան մեղքերի պատճառով, իսկ մեր Տերը. «[Իր արյունով] մի անգամ մտավ սրբության մեջ՝ ստանալով հավիտենական փրկություն» (Եբր 9.12):

Ութերորդ՝ նրանք օտարներ են պատարագ մատուցում, այսինքն՝ զվարակ և նոխազ, իսկ մեր Քահանայապետ Քրիստոսն իր մարմինը, որպես անուշ հոտ, պատարագեց Հորը, ըստ այն խոսքի, թե՝ «Քրիստոսը եկավ ոչ թե նոխազների և զվարակների արյամբ, այլ իր արյամբ» (Եբր 9.11,12):

Իններորդ՝ նրանք [պատարագը] մատուցում էին ձեռագործ խորանում, որ Մովսեսից հաստատվեց, իսկ մեր Տերն անցավ վարագույրի ներքին կողմը, այսինքն անձեռագործ [պատարագ] մատուցեց, ըստ այն խոսքի, թե՝ «Սրբությունների սպասավորը և ճշմարտության խորանինը, որ Տերը հաստատեց և ոչ մարդը» (Եբր 8.2):

Տասներորդ՝ նրանք ծառայաբար էին մատուցում, որոնցից հայտնի է, որ չէին կարող նստած [կատարել] սրբագործումն ու քավությունը, իսկ մեր Քահանայապետը տիրաբար և ազատաբար նստած երկնքում Հոր աջ կողմում, ըստ այն խոսքի, թե՝ «Այսպիսի քահանայապետ ունենք, որ նստեց բարձունքներում, Մեծության Աջ կողմում» (Եբր 8.1), նաև՝ «Բոլոր ծունկերը թող խոնարհվեն և բոլոր լեզուները թող խոստովանեն, թե Հիսուս Քրիստոս Տեր է ի փառս Հայր Աստծո» (Փիլիպ 2.8):

Առաքելության մասին

Անհրաժեշտ է իմանալ, որ առաքելության ձևերը վեցն են, այսինքն՝ մարդը մարդուց առաքված, մարդը հրեշտակից առաքված, մարդն Աստծուց առաքված, հրեշտակը հրեշտակից առաքված, հրեշտակն Աստծուց առաքված, և այս բոլորից բարձրը՝ Աստված Աստծուց առաքված: Ուրեմն պարզ է, թե ինչու է Քրիստոսը առաքյալ կոչվում: Իսկ առաքելության գործը բազում նպատակներով է [կատարվում].

առաջին՝ պատգամի համար, ինչպես Գաբրիելը՝ Կույսին,

երկրորդ՝ մշակության համար, ինչպես ծառաներին՝ այգում [գործելու],

երրորդ՝ չարչարվելու համար, ինչպես ոչխարին՝ սպանդանոց, և ուրիշներին՝ հրեշտակների ձեռքով տանջվելու,

չորրորդ՝ բժշկելու համար. Առաքեց իր խոսքը և բժշկեց,

հինգերորդ՝ իշխելու համար. նրանց որպես իշխաններ ուղարկեց բովանդակ երկրով մեկ,

վեցերորդ՝ Ավետարանը քարոզելու համար, ինչպես առաքյալներին,

յոթերորդ՝ ինչպես մարգարեներին,

ութերորդ՝ մաքրության համար, ինչպես կայծակը՝ մարգարեի համար,

իններորդ՝ տեսիլքը մեկնաբանելու համար, ինչպես Դանիելին,

տասներորդ՝ միջնորդելու համար. «Քրիստոսը մեր խոստովանության առաքյալն ու քահանայապետը եղավ» (Եբր 3.1):

Երդումի և քահանայության մասին՝ ընդդեմ հրեաների

Աստված ասում է Աբրահամին. «Իմ անձի վրա եմ երդվում» (Ծննդ 22.16): Երդումը չորս հատկություն ունի.

նախ՝ գերադասին, երկրորդ՝ հակառակ վճռի, երրորդ՝ խոսքի հաստատումի, չորրորդ՝ անխաբելի ուխտի:

Աստված իր անձի վրա երդվեց, և չկա ավելի բարձր երդում, քան այս, որը զավակի, մեր Տիրոջ օրհնության համար է: Եվ այս է ասում առաք-

յալը Եբրայեցիներին [հղած թղթում]. «Երկու անփոփոխելի բաներով անհնար է, որ Աստված ստի» (Եբր 6.18): Մեկը երդվեց Աբրահամի միջոցով Քրիստոս գալստի համար, երկրորդը՝ Դավթի միջոցով՝ Քրիստոսի քահանայության. «Դու ես հավիտենական քահանա, ըստ Մելքիսեդեկի կարգի» (Սաղ 109.9): Այս երկու երդումները Քրիստոսի համար է՝ մեկը՝ մարմնով ծննդյան համար, և երկրորդը՝ խաչի քահանայության, հարության և երկինք բարձրանալու համար: Այս երկուսը հույսի և մեր փրկության հաստատուն խարիսխ է, խարիսխ, որ անշարժ է պահում նավը: Մեկը հույսն է Քրիստոսի մարդեղության շնորհի [նկատմամբ], որով փրկվեցինք, և մյուսը՝ հարության և հանդերձյալ կյանքի՝ որով հուսադրվեցինք:

Գլուխ ԻԲ

ՄԵԼՔԻՍԵԴԵԿԻ ԵՎ ՏԻՐՈՋ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

[Հարց.] *Քանի՞ կերպով է Մելքիսեդեկը նմանվում Քրիստոսին:*

[Պատասխան.] *Բազում կերպերով.*

Նախ՝ ըստ անվան. Մելքիսեդեկ թարգմանվում է Արդարության Թագավոր կամ Սաղեմի Թագավոր, այսինքն՝ խաղաղության թագավոր, իսկ սրանք հաստատապես պատշաճում են մեր Տիրոջը, որ արդարացրեց մեզ և խաղաղություն հաստատեց երկնքում և երկրի վրա:

Երկրորդ՝ որովհետև նա անհայր ու անմայր էր, և՝ ազգահամար չունեցող (Եբր 7.3), իսկ Քրիստոսը երկնքում անմայր և երկրում անհայր էր[40]*, և նրա ազգատոհմի [մասին] ո՞վ կպատմի (Եսայի 53.8), ասում է մարգարեն:*

Երրորդ՝ որովհետև նրա օրերի ոչ սկիզբը և ոչ [էլ] կյանքի վերջը կա (Եբր 7.3), այսինքն՝ մենք չգիտենք և ոչ էլ Մովսեսն է պատմում: Իսկ մեր Տիրոջ մասին ասում է. «Ի սկզբանե էր Բանը» (Հովհ 1.1), նաև՝ նրա թագավորությանը վախճան չկա (Ղուկ 1.33):

Չորրորդ՝ նա բարձրյալ Աստծո քահանան է, որովհետև այն Աստծուց ընդունեց և ոչ մարդկանցից, իսկ մեր Տերը՝ Քրիստոսը Հորից բնությամբ է ստացել քահանայությունը, համաձայն այն խոսքի, որ ուղղված է Որդուն. Դու ես քահանա (Սաղ 109.4):

Հինգերորդ՝ նրա քահանայության [համար] ասում է, թե մշտնջենավոր է, այսինքն՝ Աստծո Որդու նման անփոփոխ, իսկ մեր Տիրոջ համար ասում է. «Դու ես հավիտենական քահանա»:

Վեցերորդ՝ նա ոչ շաբաթն էր պահում և ոչ օրենքը և ոչ էլ թլփատությամբ էր քահանա, իսկ մեր Տերը՝ Քրիստոսը շաբաթը խափանեց (Հովհ 5.15): Թլփատությունն ու օրենքը ոչ թե օրինազանցությամբ էր կատարում, այլ հինը լրացնելով նորն էր կատարում:

Յոթերորդ՝ նա հեթանոսների աղոթքն էր քահանայագործելով Աստծո [առաքում], իսկ մեր Տերը ոչ թե հրեաների, այլ հեթանոսների ընծաներն էր Հորը մատուցում, և մեզ համար քահանա եղավ:

Ութերորդ՝ նա բաղարջահաց և բաժակ պատարագեց Աբրահամին, իսկ մեր Տերը՝ իր մարմինն ու արյունն ավանդեց որպես հաց և բաժակ պատարագի:

Իններորդ՝ նա օրհնեց Աբրահամին, իսկ մեր Տերն օրհնեց աշակերտներին, և նրանով մարդու բովանդակ բնությանը շնորհ ընծայեց:

Տասներորդ՝ նա տասանորդը առեց Աբրահամից և ամբողջից իր մասը ստացավ, իսկ մեր Տերը, որպես իր ժառանգություն, բոլոր ազգերի մեջ բաշխեց ընտրյալներին:

Նախ հրեաներին տես. որովհետև Քրիստոսի օրինակ Մելքիսեդեկն ավելի մեծ է, քան Աբրահամը, որը օրհնեց նրան, և Աբրահամը նրան տասանորդ տվեց, իսկ ճշմարտությունը, որ Քրիստոս է, է՛լ ավելի մեծ է և բարձր: Դարձյալ տես. մեր նոր քահանայությունն ըստ Մելքիսեդեկի է և ոչ ըստ Ահարոնի, նախ՝ որովհետև անթլփատ էր. երկրորդ՝ որովհետև հեթանոսներինն էր, երրորդ՝ որովհետև ընծաները հեթանոսներից ստացավ, չորրորդ՝ որովհետև բաղարջ և գինի պատարագեց:

Տասանորդի մասին

[Հարց.] *Ի՞նչ է տասանորդի խորհուրդը:*

[Պատասխան.] *Տասը թիվը կատարյալ է, սուրբ է և Աստծո ընծա: Այս պատճառով Աստված հրամայեց, որ ամենայն մարմնական բան տասը մասի բաժանվի. ինը պահել մարմնի համար և տասներորդը Աստծուն մատուցել, և տաճարի քահանաներին տալ, որովհետև Աստծո փոխանորդն են: Այս մարմնեղեն է: Իսկ հետևյալ տեսությունը հոգեղեն է.*

Նախ երկնքի և երկրի բոլոր արարածները տասը մաս ունեն, որոնցից միայն բանական էակներն են, որ որդությամբ Աստծուն են նվիրվում:

Երկրորդ՝ դա խորհուրդ է, որովհետև Քրիստոսը, երբ ավերեց դժոխքը, բոլոր կապված հոգիներին այնտեղ, սակայն միայն նահապետների և հրեից ազգի սրբերին երկինք հանեց. [նրանք] վերին Սիոնի հիմքը եղան:

Երրորդ՝ ցույց է տալիս, թե ինչ բարիք էլ որ գործում ենք տասը զգայություններով, տասներորդ մասն Աստծո փառքի համար է, իսկ մնացյալը գործողի պատիվն ու պսակն է:

Չորրորդ՝ հայրերը, ուսուցիչները և քահանաները վայելում են իրենց աշակերտների բարիքի տասներորդ մասը, որի պատճառով առաքյալն ուրախություն և պարծանքի պսակ է անվանում, և Ավետարանում ասվում է. «Ահավասիկ ես և իմ մանուկները, որոնք Աբրահամից տասանորդ ստացան» (Եբր 7.6):

[Հարց.] *Ի՞նչ է ասում Գիրքը, թե՝ Աբրահամի ազգից դուրս եկած ղևտական քահանայությունը տասանորդ ստացավ (Եբր 7.5):*

[Պատասխան.] [*Սա*] *այն է, երբ Աբրահամը Մելքիսեդեկին տասանորդ տվեց, Ղևին, որի ցեղից քահանայություն տրվեց Հակոբին, Աբրահամի կողմից տասանորդը ստացավ: Սա հետևյալ ծածուկ խորհուրդն ունի.*

Նախ, ինչպես ղևտացիների ազգը Աբրահամով տասանորդ ստացավ, այդպես էլ Աստծուն տեսնելու համար որդիները ընտրվեցին մինչև աշխարհի գոյությունը:

Երկրորդ՝ այն է ցույց տալիս, որ բոլոր մարդիկ Ադամի անձով էին, և նրա հետ հանցավոր և մահկանացու եղան:

Երրորդ՝ այն է, որ հավատացյալներս Քրիստոսի զորությամբ և հույսով կենդանացանք և նրա հետ հարություն առանք:

Չորրորդ՝ այն է, որ բազում զավակներ մասնակից են իրենց ծնողների մեղքին, ինչպես պոռնկորդիները, և ազնիվները մասնակից են իրենց ազգակիցների և ծնողների բարությանը:

Այսքանն այս մասին:

Գլուխ ԻԳ

ՊԱՏԱՍԽԱՆ ՀՐԵԱՆԵՐԻՆ

Խոսքն ուղղելով մեզ՝ հրեաներն ասում են, թե մեր օրենքը բարձր է, քան ձեր՝ քրիստոնյաներինը, որովհետև մեր օրենքը Սինա լեռան վրա տրվեց Մովսեսի ձեռքով, երբ Աստված կրակով, մշուշով և հրե սյունով իջավ, իսկ ձերն այդպես չէ:

[Պատասխան.] Նախ ասենք, որ հին և նոր օրենքները, որ մեկ Աստծուց են հաստատված, առավել կամ նվազ չեն, որովհետև բոլորի Տերը մեկն է, որ օրենքներ հաստատեց և՛ այնտեղ, և՛ այստեղ, բայց միջնորդներով զանազանվում են:

Երկրորդ՝ ասենք. համաձայն քո կարգության որքան առավել է օրենքը (Հին Ուխտը), ապա, այնքան առավել է Նոր (Ուխտի) ճշմարտությունը. որովհետև որքան հոգին ավելի է մարմնից և մարմինն էլ՝ ստվերից, նույնքան Նորը ավելի է Հնից, քանզի նա օրինակ էր և սա՝ ճշմարտություն, նա ստվեր էր և սա՝ լույս, նա օրենք էր և սա՝ շնորհ, նա մարմնավոր էր, և սա՝ հոգևոր, նա անկատարներինն էր, և սա՝ կատարյալներինը, նա ժամանակավոր և փոփոխական, և սա՝ անփոփոխ և հավիտենական, նա Մովսեսի ձեռքով էր, և սա՝ Քրիստոսի, ինչպես Հովհաննեսն է ավետարանում. «Օրենքները Մովսեսի ձեռքով տրվեցին, իսկ շնորհքը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի ձեռքով եղան» (Հովհ 1.17):

Երրորդ՝ ասենք. ինչպես այնտեղ՝ Սինա լեռան վրա, այնպես էլ այստեղ լեռը բարձրացավ և նստեց. այնտեղ զգալի հուր էր, իսկ այստեղ՝ իմանալի լույս. «Ես եկա որպես աշխարհի լույս» (Հովհ 12.48): Այնտեղ մշուշն էր ծածկում լույսը, իսկ այստեղ մշուշապատ մարմինն է ծածկում Աստվածության լույսը: Այնտեղ փողերի հնչյուն էր, իսկ այստեղ՝ առաքյալներն էին փող զարկել: Այնտեղ երկրավոր խոստումներ էին, իսկ այստեղ՝ կյանքի ավետիս և երկնքի արքայություն:

Չորրորդ՝ ինչպես առաքյալն է կարդացվում Եբրայեցիներին [հղած թղթում]. «Չեք մոտեցել շոշափելի լեռանը» (Եբր 12.18), այսինքն՝ մատչելի, ուր կրակ, մշուշ և խավար, փողերի ձայներ կային, և գազաններն էին քարկոծվում, և Մովսեսը սարսափահար էր (Հմմտ Ելից 20.18):

Աստծո՝ Սինա իջնելը չորս խորհրդություն է ցույց տալիս.

Առաջին՝ Սինա լեռը վերին Սիոնի օրինակն էր, որ անմատույց է անվանվում կամ՝ բարձր դիտանոց: Հուրը ցույց է տալիս Աստվածության լույսը, որ լուսավորում է հրեշտակներին և մարդկանց, իսկ ծուխը բարկությունն է ցույց տալիս. «Քո բարկությունից ծուխ ելավ» (Սաղ 17.9): Դարձյալ՝ անմատչելի լույսը հրեշտակներից և մարդկանցից ծածկված է խավարով. «Խավարն իրեն ծածկույթ դարձրեց» (Սաղ 17.12): Փողերը ցույց են տալիս երկնավորների փառաբանությունը, պատգամները՝ նրանց

աստվածախոսությունը, և չար գաղանը քարկոծվեց ու ընկավ:

Երկրորդ՝ մարմնացյալ Բանի օրինակ էր, որ իջավ անմատչելի լեռան՝ Կույսի արգանդի մեջ: Դանիելը նրան անվանեց Անձեռակերտ վեմ (Դան 2.45)՝ [ծնված] կույս լեռից, Աստվածության լույս և մարմնի մշուշ: Եվ Հովհաննես Ավետարանում ասում է. Լույսը խավարի մեջ էր լուսավորում (Հովհ 1.5), այսինքն՝ հավատացյալների լույսը և անհավատների խավարը՝ մարդկանց և դևերի: Խոսքը ցույց է տալիս Ավետարանը, փողը՝ առաքյալներին: Հայրը վկայեց Հորդանանում, իսկ գաղանը պարտվեց անապատում:

Երրորդ՝ շարժումով, հողմով, ձայնով և հրեղեն լեզուներով վերնատան մեջ Հոգու իջման օրինակն էր, որովհետև մարմնացյալ Բանն Աստված նախ երկինք ելավ և ելավ վերին Սիոնի հիմքը, և այնտեղ հավաքվեցին սրբերի հոգիները, որոնք նրա մոտ՝ երկինք բարձրացան: Եվ հետո Սուրբ Հոգին իջավ առաքյալների վրա ու այնտեղ կառուցեց քրիստոնյաների եկեղեցին, որ կենդանի Աստծո քաղաքն է և կենդանի հոգիների բնակավայրն է, որ վերին Երուսաղեմն է, այսինքն՝ խաղաղությունը, և երկինքը, որ բարձրությունն է, ուր հրեշտակների բյուր բյուրավոր և հազար հազարավոր անհաշիվ բանակներն են: Այնտեղ են անդրանիկների եկեղեցիները, մարգարեները և առաքյալները, որոնք մեր հավատքի և սրբության գլուխներն են: Նմանապես աջակողմյան խորանն անդրանիկ է կոչվում և դարձյալ՝ անդրանիկ, ինչպես Տերն է ասում. «Ով կկատարի և կուսուցանի՝ նա մեծ պիտի կոչվի, իսկ կլուծերը՝ փոքր» (Մատթ 5.19): Այնտեղ է կենաց գիրքը, ինչպես աշակերտներին է ասում. Ձեր անունները երկնքում են գրված (Ղուկ 10.20), և ինչպես Դանիելն է ասում. «Գրքերը բացվեցին» (հմմտ Դան 11.4): Այնտեղ են կատարյալ անդրանիկների հոգիները (հմմտ Կող 1.18), այսինքն՝ ավելի ընթացքն ավարտեցին, հավատքով և սրբությամբ կատարյալ [եղան], հանգստի և լույսի հասան: Սակայն չեն ստացել փառքը և պսակը, ինչպես առաքյալն է ասում. «Աստված մեզ համար ավելի լավ բան նախապատրաստեց, որպեսզի նրանք առանց մեզ չկատարվեն» (Եբր 11.40): Այսինքն՝ մեր հոգիները ոչ առանց մեր մարմինների և ոչ առաջիններն առանց մերօրյա վերջինների և ոչ էլ մեծամեծներն առանց մեզ՝ ազգերի, քանզի [բոլորին] միասին Քրիստոսի գալստյան ժամանակ կհատուցվի, «Որովհետև սահմանեց մի օր, երբ դատելու է բոլորին» (Գործ 17.31), ասվում է Գործք առաքելոցում: Այսպես առավել է Նորը Հնից: Այն Մովսեսի ձեռքին էր ծառայում, որ սարսափահար էր, այս Աստծո Որդու ձեռքով է. «Կատարյալ սերը վանում է երկյուղը» (հմմտ Ա Հովհ 4.18): Այնտեղ ժողովուրդը չէր հանդարտվում, երբ Աստված խոսում էր հրեշտակների միջոցով և Մովսեսը պատասխանում էր, իսկ այստեղ առավել անբացատրելի է. ինչը չի տեսել աչքը, չի լսել ականջը և չի իմացել սիրտը (Ա Կոր 2.9), ասում է Քրիստոսի Ավետարանը: Այնտեղ գաղաններն էին քարկոծվում, այստեղ

ճշմարտությունը հայհոյողները խոսքով են քարկոծվում: Եվ արդարների հոգիները (Եբր 12.25). երբ ավազանով ենք սրբվում, արձանագրվում ենք երկնքի կենաց գրքում: Եվ Նոր Կտակարանները, որոնք մեղքերի թողություն են և հավիտենական կյանք, որ Ավետարանն է: «Եվ միջնորդ Հիսուսը» (Եբր 8.6), որ նստում է Հոր Աջ կողմում: Եվ առ դատավոր Աստված (Եբր 12.25), [որ] խնամում է արդարին և պատժում չարերին: Սա եղավ երեք օրինակ:

Չորրորդ՝ Սինայի վրա իջնելը Քրիստոսի երկրորդ գալստյան օրինակն է, որ՝ «Նրա առջև կրակ պիտի բորբոքվի» (Սաղ 49.3): Եվ բոլոր հրեշտակները նրա հետ են, նա կգա մեծաձայն փողերով, որոնց ձայնը պիտի ցնցի երկիրը՝ մեռելներին հարություն տալու համար: Նաև երկինքը պիտի ցնցի՝ նորոգելով: Չար գործողներին դրսի խավարում և կրակի մեջ պիտի պատժի և արդարին լուսավորելու է անմահ կյանքի մեջ: «Այդժամ արդարներն արքայության մեջ ճառագեն իբրև արեգակ» (Մատթ 13.43): Սա Աստծո վերջին բարբառն է:

Իսկ այն, որ հարում է՝ «Մեր Աստվածը ճարակող կրակ է» (Բ Օր 4.24), չորս խորհուրդ է ցույց տալիս. նախ՝ արդարներին մաքրում է, իսկ չարերին կրակի մեջ այրում: Երկրորդ՝ լուսավորում է արդարին և այրում մեղավորներին: Երրորդ՝ վերջին կրակն այրում է նրանց, ովքեր մեղքի չար ճյուղեր են և մաքրում գործով արծաթ և ոսկի [եղածներին]: Չորրորդ՝ բոցը բաժանում է կրակից և լույսը պահ դարձնում արդարի համար, իսկ այրելը՝ դժոխքի տանջանքի համար, ըստ սուրբ Բարսեղի: Թող Քրիստոսը մեզ փրկի տանջանքների բոցից և լուսավորի ըստ իր խոստման. ամեն:

Այսքան պատասխաններն ընդդեմ հրեաների են, որոնք իրենց օրենքները մեծ են համարում:

Սակայն դառնանք մեզ և տեսնենք, թե որքան առավել է Քրիստոսի շնորհքը և պարգևը հավատացյալներին և բարեգործներին, և այնքան առավել մեծ է անհավատներին և չարերին տրված պատուհասը: Նախ, որովհետև ասում է. Եթե մեկը խախտում էր Մովսեսի օրենքը՝ երկու կամ երեք վկաներով՝ առանց ողորմության մահապատժի էր ենթարկվում, ապա որքա՞ն ավելի նա, որ Աստծո Որդու [շնորհն] է ոտնահարում (Եբր 10.28), այսինքն՝ անհավատությամբ է, կամ Նոր Ուխտի արյունն է պղծում (Եբր 10.29), այսինքն՝ մեղքով է: Դարձյալ ասում է. «Զգույշ եղեք, որովհետև եթե նրանք երանության երկիր տանող [ուղուց] հրաժարվելու [պատճառով] չփրկվեցին, ապա՝ որքա՞ն ավելի մենք, եթե մեր թիկունքը Երկնավորին ենք դարձնում և հրաժարվում ենք [անսալ] Նրա հորդորին» (Եբր 12.25): Նմանապես ասում է. «Եթե կանխամտածված հանցանք գործենք» (Եբր 10.26), այսինքն՝ եթե գիտության և ճշմարտության ընկալումից, այն է՝ մկրտությունից, հաղորդությունից հետո մեղանչում ենք կամքով, գիտությամբ և կարողությամբ, այսինքն՝ հանցանք ենք գործում [ան]հավատությամբ և մեղանչում ենք [վատ] գործերով, ապա այլևս պա-

տարագը մեղքերը [քավելու] համար չէ, այլ՝ Աստծո ահեղ դատաստանի և նախանձոտ կրակի (Եբր 10.18,27), այսինքն՝ հավիտենական կրակի տաքության և այրումի: Մեծ զարհուրանք է կենդանի Աստծո ձեռքն ընկնելը (Եբր 10.31): Մեզ՝ քրիստոնյաներիս հարկ է այս պատուհասը ի մտի ունենալ և ահով ու դողով ծառայել Աստծուն:

Հրեաների դեմ այս պատասխանները Պողոս առաքյալի՝ Եբրայեցիներին [հղած] թղթից [էին]:

Այսքանը երկրորդ հատորն է:

Հատոր երրորդ

Գլուխ ԻԴ

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍՈՒՐԲ ԳՐՔԵՐԻՑ ՔՐԻՍՏՈՍԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, այստեղ ցանկանում եմ հավաքել ի մի բերել Սուրբ Գրքում՝ Հին և Նոր Կտակարաններում [առկա] վկայությունները մեր Տիրոջ մասին, ոչ թե համաձայն առաջին վկայությունների, որոնք վերաբերում էին Երրորդությանը, այլ՝ Քրիստոսի տնօրինությանը, որպեսզի արագ գտնեն և բոլորը դյուրությամբ մատչեն:

Քրիստոսի մարդեղության խորհուրդը, որ այժմ մարմնով երևաց (Ա Տիմ 3.16), սկզբից նախահայրերի և մարգարեների օրոք հայտնվեց և հաստատեց մարմնով իր գալը: Աստծո Բանը երկու հրեշտակներով նախ Աբրահամին երևաց Մամբրեի մոտ, նրա հետ կերավ և Իսահակի ծնունդը նրան ավետեց: Դարձյալ նրան երևաց Իսահակի զոհաբերման ժամանակ, օրհնեց նրան և խոստացավ նրա Քրիստոս զավակը լինել, որով պետք է երկրի բոլոր ազգերն օրհնվեին: Դրանից հետո Աբրահամի որդուն՝ Իսահակին երևաց՝ նրան ակնարկելով զավակի մասին: Նմանապես Հակոբին երևաց սանդուղքի մոտ. Տերը կանգնած էր նրա վրա և հրեշտակները վեր ու վար էին անում (տե՛ս Ծննդ 28.12,13): Նաև հետո, գիշերը երևաց և պատերազմեց նրա դեմ, ու Իսրայել կոչեց նրան, որ [նշանակում] է Աստվածատես: Եվ հետո Մովսեսին երևաց Քորեբ լեռան վրա, ուր վառվում էր մորենին և չէր այրվում և իր էության անունը ճշմարտելով բացում հրաշքներով ու հնարներով Եգիպտոսը էր առաքում և ծովը ճեղքելով ժողովրդին անապատ էր առաջնորդում: Եվ դարձյալ երևաց

Սինա լեռան վրա՝ կրակով և մշուշով, և աստվածային մատներով գրված օրենքի տախտակները նրան տվեց: Եվ երբ երեք անգամ նա կանգնեց Տիրոջ առջև և [ասաց]. Եթե քո առջև ողորմություն եմ գտել, երևա ինձ: Տերը պատասխանում է նրան. «Ոչ ոք չի կարող տեսնել իմ երեսը և ապրել, բայց քեզ կդնեմ քարայրի մեջ և կտեսնես իմ Փառքը» (Ելից 33.18-20), և քանզի Տերը ողորմած ու գթած է, նրան խոնարհությամբ երևաց: Այնուհետև ժողովրդի վրա զորավար և առաջնորդ կարգեց Հեսուին, որ անվանակիցն ու օրինակն էր Քրիստոսի, իսկ հետո՝ Դավթին՝ թագավոր, որն աթոռ հիմնահաստատեց նրա Զավակի համար: Ավելի ուշ երևաց մարգարեներին, որոնք Տեսնող էին կոչվում՝ աստվածակերպ հայտնությունների հաղորդակցվելու պատճառով. նրանք, որ, համաձայն իրենց կարգի, Իսրայելին քարոզում էին Քրիստոսի գալստյան մասին, ինչպես Դավիթը երգեց. «Տեր Տեր մեր, քանզի երկրի վրա սքանչելի է քո անունը» (Սաղ 8.2,10): Նաև Հեսուն [նրան] տեսնում էր իբրև զորավար՝ պայծառ կառքով, նաև Դանիելը [նրան] տեսնում էր իբրև հին օրերից աթոռին բազմած Դատավոր, իբրև մարդու Որդի էր տեսնում՝ ամպին բազմած: Զաքարիան [նրան տեսավ] իբրև մի պղամարդ՝ սեղանի վրա, որի մասին ասում էր, թե՝ «Սեղանի վրա Տիրոջը տեսա» (Զաք 2.1): Տեսնո՞ւմ ես. թեպետ իբրև պղամարդ է տեսնվում, սակայն Տեր է ճանաչվում: Եվ Եսային ասում է. Տիրոջը բարձր աթոռի վրա տեսա, և նրա շուրջը վեցթևյան սերովբեներին, որոնք Քրիստոսի առջև երեքսրբյանն էին երգում. Սուրբ, Սուրբ, Սուրբ զորությունների Տեր, երկինքն ու երկիրը լի են նրա փառքով (Եսայի 6.3): Նաև Եզեկիելը Քոբար գետի վրա տեսավ չորեքկերպյան աթոռ Մարդու, Առյուծի, Եզի և Արծվի կերպարանքով և Տերը նրա վրա: Եվ ութթևյան քերովբեներն ասում էին. «Օրհնյալ է Տիրոջ փառքն իր տեղում» (Եզեկ 3.12): Եվ այսպես Աբրահամից սկսած և նրա զավակից հետո նրանց բազմիցս երևաց, ինչպես Ովսեասով էր ասում. «Ես հաճախակի [պիտի երևամ] տեսիլների մեջ և մարգարեների ձեռքին պիտի նմանվեմ» (Ովս 12.10): Հրեշտակները կարգված են մարդասեր Աստծուց՝ մարդկանց պատգամախոսելու համար, երբեմն երևալով մարդու կերպարանքով, ինչպես՝ Աբրահամին և Ղովտին, նրանց սեղանակից լինելով, նաև՝ Դանիելին երևաց որպես մի մարդ, նմանապես Գեդեոնին՝ թանձր տեսիլքով, Մանովեին՝ զավազանով, և Զաքարիային՝ լեռների մեջ՝ հեծյալի [կերպարանքով], Հեսուին իբրև մարդ երևաց, նա աներկյուղ հարցրեց. «Յուրայի՞ն ես, թե՞ մեր թշնամիներից» (Հեսու 5.13): Եվ երբ ասաց. Աստծո զորքերի զորապետն եմ, [նա] երկրպագեց: Բոլոր պատգամաբեր [հրեշտակները] Տիրոջ անունով ազդարարում էին. մեկը թե՝ Զորությունների Տերն ասաց, մյուսը՝ Ամենակալ Տերը հրամայում է: Նաև Եսային ասում է. Աստված չի անում մի բան, որ հայտնի չլինի իր ծառա մարգարեներին: Բազում ժամանակներից հետո Միածին Որդին եկավ երևաց աշխարհում, և խորհուրդը, որ ծածկված էր ազգերից և հավիտենություն-

ների, մարդկանց երևաց և իր փառքը մարդկանց ցույց տվեց, ինչպես առաքյալն է ասում. «Բազում ձևերով և բազում օրինակներով Աստված խոսեց մեր Հայրերի հետ մարգարեների միջոցով, իսկ այս վերջին օրերին մեզ հետ խոսեց իր Որդու միջոցով, որ բոլորի ժառանգն է, որով և հավիտենականությունն արարեց. նա է փառքի լույսը և նրա էության պատկերը» (Եբր 1.3): Այլափոխները և ավելի քան այլափոխներն Աստծո՝ մարդկանց երևալն էին նախապատկերում. նա հետո մարմնով երևաց:

Այժմ բեր տեսնենք Քրիստոսի մարդեղության մասին Սուրբ Գրքի վկայությունները:

Նախ՝ Աստված Աբրահամին ասաց. Քո զավակով պիտի օրհնվեն երկրի բոլոր ազգերը (Ծննդ 22.18): Նաև Դավիթն է վկայում այս մասին. Նրանով պիտի օրհնվեն երկրի բոլոր ազգերը, և բոլոր ազգերը նրան երանի պիտի տան (Սաղ 71.17): Նորագույն [ժամանակներում] սրա մեկնաբանությունը Կույս Աստվածածինն է տալիս. Սրանից հետո բոլոր ազգերը ինձ երանի պիտի տան (Ղուկ 1.48):

Եբրայեցիներին [հղած թղթում] առաքյալն ասում է. Ոչ թե հրեշտակներին է երբևէ օգնում, այլ՝ Աբրահամի զավակին (Եբր 2.16): Եվ նույն զավակը Դավթին երդումով խոստացավ. Քո որովայնի պտուղը պիտի քո աթոռին բազմեցնեմ (Սաղ 131.11): Եվ որպեսզի չկարծվի, թե Սողոմոնի մասին է ասվում, այլ՝ Սողոմոնի Տիրոջ, [ասում է]. «Նրա զավակը հավիտյանս պիտի մնա, ինչպես արեգակը և լուսինն իմ առջև» (Սաղ 71.5):

Եվ դարձյալ ասում է. «Տերն ասաց ինձ. իմ Որդին ես դու և ես այսօր քեզ ծնեցի» (Սաղ 2.7): Նաև Եսային է ասում. «Ահա կույսը պիտի հղանա և Որդի ծնի, և նրա անունը Էմմանուել պիտի կոչեն, որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ» (Եսայի 7.14), այսինքն՝ մարդացյալ Աստված:

Եվ դարձյալ Եսային ասում է. «Մեզ մանուկ ծնվեց, Որդի տրվեց մեզ, որի իշխանությունն իր ուսերի վրա է, և նրա անունը Հզոր Աստված է, Խաղաղության Իշխան և Հանդերձյալ աշխարհի Հայր» (Եսայի 9.6):

Միքիա մարգարեն նմանապես ասում է. «Դու՝ Բեթղեհեմ, որ Եփրաթի տունն ես, Հուդայի իշխանների մեջ կրտսեր չես, քեզանից պիտի դուրս գա՝ Իսրայելի իշխանը լինելու համար, և նրա դուրս գալը աշխարհի սկզբի օրերից է, պիտի ծնվի և հովվի իր հոտին Տիրոջ զորությամբ» (Միք 5.2):

Նաև Եսային է ասում. «Հեսսեի արմատից գավազան պիտի ելնի և ծաղիկ պիտի աճի նրա արմատից, և նրա վրա Աստծո Հոգին պիտի հանգչի՝ իմաստության և հանճարի Հոգին, գիտության և աստվածպաշտության Հոգին և Աստծո երկյուղի Հոգին» (Եսայի 11.1):

Սողոմոնը նույնպես Տիրոջն ակնարկելով ասում է. «Ես դաշտերի ծաղիկ եմ և հովիտների շուշան» (Երգ 2.1):

Դարձյալ Եսային ասում է. «Ահավասիկ մեր Աստվածը, ահավասիկ Տերը գալիս է իր զորությամբ և իբրև մի հովիվ իր խաշները պիտի հովվի» (Եսայի 40.11): Եսային դարձյալ ասում է. «Քանզի մարդ է՝ ո՞վ կճանաչի

նրան», այսինքն՝ Աստված մարդու [կերպարանքով] երևաց, որովհետև նախ Աստծուց ծնվեց և հետո՝ Կույսից: Նմանապես ասում է. «Իմ Հակոբ ծառան կոչնի նրան» (Եսայի 42.1). ծառայական մարմնի պատճառով ծառա է անվանում նրան, որ չարերին հոժարակամ ծառայեց: «Եվ իմ ընտրյալ Իսրայելը, որին ընդունեց իմ անձը, իմ Հոգին նրան չխնայեցի, և հեթանոսների իրավունքը պիտի վեր պարզի, և հեթանոսները նրա անվանը պիտի հուսան» (Եսայի 42.1-4): Եվ դարձյալ ասում է. Քեզ [որպես] ազգի ուխտ հաստատեցի և հեթանոսների լույս՝ բացելու համար կույրերի աչքը, ազատելու համար բանտում և զնդանում շղթայվածներին, որոնք նստած էին խավարի և մահվան ստվերի մեջ. «Ես եմ Տեր Աստվածը, այս է իմ անունը» (Եսայի 42.7,8):

Եվ դարձյալ Դավիթն ասում է. «Նրա անունն արևից առաջ է, նրանով պիտի օրհնվեն բոլոր ազգերը, և նրա փառքով պիտի լցվի ամբողջ աշխարհը» (Սաղ 71.17): Նաև Հոր անունից գիտում է Որդուն. Արուսյակից առաջ ծնեցի քեզ: Եվ՝ «Դու քահանա ես ըստ Մելքիսեդեկի կարգի» (Սաղ 109.3,4): Եվ դարձյալ, նկատի ունենալով Կույսին, ասում է. «Լսիր դուստր և տես, խոնարհեցրու քո ականջը, որովհետև թագավորը փափագեց քո գեղեցկությունը, նա ինքն է քո Տերը» (Սաղ 44.11): Այն, որին ասաց Գաբրիելը. «Տերն ընդ քեզ» (Ղուկ 1.28): Դարձյալ Դավիթն ասում է. «Ահավասիկ դու՝ քաղաքդ Աստծո, և Փառավորյալը քո մասին խոսեց» (Սաղ 86.3): Եվ դարձյալ ասում է. «Սուրբ է արդարությամբ սքանչելի քո տաճարը» (Սաղ 64.5):

Նաև Մովսեսն է ասում. «Իմ պատգամներն իբրև անձրև պիտի տեղան, իբրև անձրև՝ սերմի վրա և իբրև տեղատարափ՝ խոտի վրա» (Բ Օր 32.2):

Դավիթն ասում է. «Իբրև անձրև իջնում է գեղմի վրա, և իբրև ցող՝ որպեսզի ցողի երկիրը» (Սաղ 71.6): Եվ դարձյալ ասում է. «Նրա ցողերուց հետո պիտի զվարթանան նրա բույսերը» (Սաղ 64.11):

Եվ Եսային ասում է. «Քո ցողը, որ քեզնից ցողեց՝ նրանց համար բժշկություն է» (Եսայի 26.19): Դավիթն ասում է. «Իր Խոսքը (Բանը) ուղարկեց և բժշկեց նրանց, և իրենց ապականությունից փրկեց նրանց» (Սաղ 106.20):

Եվ Երեմիա մարգարեն ասում է. «Սա է մեր Աստվածը, ընդ որում ուրիշ մեկը պիտի [Աստված] չհամարվի: ...Սրանից հետո աշխարհում երևաց» (Բարուք 3.36,38): Նաև Դավիթն ասում է. «Աստված մեր, ողորմիր մեզ և օրհնիր մեզ, քո երեսը պարզիր մեզ և ողորմիր մեզ» (Սաղ 30.17): Դարձյալ ասում է. «Զորությունների Աստված, դարձիր մեզ, քո երեսը պարզիր մեզ և պիտի ապրենք» (Սաղ 79.4):

Եվ դարձյալ ասում է. «Մեր Տեր Աստվածը մեզ երևաց, ուրախություն արարեք» (Սաղ 117.27): Դարձյալ ասում է. «Դու իմ Աստվածն ես, և քեզ պիտի խոստովանեմ, դու ես իմ Աստվածը և քեզ պիտի պանծացնեմ» (Սաղ 117.28): Եվ Երեմիան ասում է. «Աստված ասաց, թե պիտի նրանց

մեջ բնակվեմ և պիտի նրանց մեջ գնամ, և նրանց համար Աստված պիտի լինեմ»: Եվ Եսայու [շուրթերով] ասում է. «Կենդանի եմ ես, ասում է Տերը, որովհետև ձեզ բոլորից իբրև զգեստ պիտի հագնեմ» (Եսայի 49.18): Եվ դարձյալ ասում է. «Իմ անձը Տիրոջով պիտի ցնծա, որովհետև ինձ փրկության հանդերձ հագցրեց և ուրախության պատմուճան» (Եսայի 61.10):

Գաղատացիներին [հղած թղթում] առաքյալը մեկնաբանում է սա. «Քրիստոսի մեջ մկրտվածներդ Քրիստոս եք հագել» (Գաղ 3.27): Դարձյալ Երեմիայի [շուրթերով] ասում է. «Ձեզ հետ նոր ուխտ պիտի ուխտեմ ոչ թե ըստ հին ուխտի. այս է ուխտը. իմ օրենքը նրանց սրտի մեջ պիտի դնեմ և նրանց մտքի մեջ պիտի արձանագրեմ» (Երեմ 31.31-33): Եվ դարձյալ Երեմիան ասում է. Մեր դեմքի հոգին Տեր Քրիստոս է, աշխարհում պիտի երևա և մարդկանց մեջ պիտի շրջի (Ողբ 4.20):

Դավիթն ասում է. «Այս պատճառով ուրախության յուղով քեզ օծեց քո Աստվածը, Աստված» (Սաղ 44.8): Նաև Սողոմոնն է ասում. «Նրա անունը թափված յուղ է» (Երգ 1.3), այսինքն՝ օծյալ, որ Քրիստոսն է: Եսային [նմանապես] ասում է. «Տիրոջ հոգին իմ վրա է, այդ պատճառով էլ օծեց ինձ, ուղարկեց ինձ ավետարանելու աղքատներին» (Եսայի 61.1):

Մարգարեներից բերված այս բոլոր վկայությունները մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին են

Բոլորից առաջ Ադամը մարգարեացավ, որ իր կնոջ անունը Կյանք կոչեց, որովհետև նա է բոլոր կենդանիների մայրը (Ծննդ 3.20), որ Կույս Մարիամն է, որ բոլոր կենդանիներին կյանք պարգևող Հիսուսի մայրն է: Նաև ամուլ Սառան, Ռեբեկան և Աննան՝ Սամվելի մայրն իրենց կուսությամբ Մարիամի ծննդաբերման օրինակն էին: Ինչպես վառվող մորենին, որ ոչ թե այրվում, այլ ծաղկում էր, կույս Աստվածածինը [նույնպես] չայրվեց Աստվածության կրակից, այլ ծաղկեց [իր] զավակով: Ահարոնի գավազանը, որ ծաղկեց, և մանանայով լի սափորը սրբուհի Կույսի անապական ծննդյան օրինակներն էին, իսկ ոսկի բուրվառն ու աստվածագիր երկու տախտակները Տիրոջ հոգին և մարմինն էին: Ոսկեպատ տապանակը և քավության ոսկին, լույսի աշտանակը և ջրի վեմը նմանապես Տիրոջ օրինակներն էին: Նաև Դանիելը լեռան կուսական բարձունքից առավ անձեռակերտ վեմը: Եսային ասում է. Ահավասիկ ես Սիոնի հիմքում վիմաձույլ եմ դնում, ով նրա վրա հավատավի, պիտի չամաչի (Եսայի 28.16): Դավիթն ասում է. «Վեմը, որ անարգեցին կառուցողները, անկյան գլուխ եղավ» (Սաղ 117.22, Ղուկ 20.17): Նաև Սողոմոնը. «[Նա] փակված պարտեզ է և կուսությամբ կնքված աղբյուր» (Երգ 4.12): Եզեկիելը փակված դուռ է անվանում, որով ոչ ոք ներմուտ չի անում, բացի Իսրայելի Տեր Աստծուց: Աստծո Բանն իջավ հնոցի մեջ մանուկների վրա, և կրակն իբրև քաղցրաբույր ցող ցնցուղվում էր [նրանց վրա]: Նաև Հակոբը մարգարեանալով ասում է. «Շառավիղից դուրս եկար, որդյակ» (Ծննդ 49.9), այսինքն՝

Քրիստոսը Կուսից ծնվեց: Դարձյալ ասում է. «Թող Հուդայում իշխան չպակասի և ոչ էլ պետ՝ նրա տոհմի մեջ, մինչև որ նա գա, քանզի թագավորությունը նրանն է, և հեթանոսները նրան պիտի հուսան» (Ծննդ 49.10): Նաև Մաղաքիա մարգարեն ասում է. «Ինձնից երկյուղացողների վրա պիտի արդարության արեգակ ծագեցնեմ» (Մաղ 4.2): Եվ Հովհաննեսի հայրն ասում է. «Բարձունքներից մեզ այցելեց արեգակը՝ լուսավորելու համար մեր խավարը» (Ղուկ 1.78): Եվ մոգերը, որ պարսիկներ էին, Բաղաամ մոգի վկայությունն ունեին, որն իր չորրորդ առակում Քրիստոսի մասին ասում էր. «Պիտի ծագի Հակոբի աստղը, և Իսրայելից մի այր պիտի բարձրանա» (Թվոց 24.17): Եվ այս պատճառով, երբ արևելքում նրա աստղը տեսան, Հրեաստան եկան և հարցնում էին, թե որտե՞ղ է ծնվելու Քրիստոսը: Այս մասին նաև Զաքարիան է ասում. «Ահա այրը և նրա ծագումը» (Զաք 6.12): [Այս մասին] ասում է նաև Սողոմոնը. «Արեգակը ծագում է և արեգակը մայր է մտնում ու իր տեղը աճապարում» (Ժող 1.5): Եվ Հոբը ասում է. «Ի՞նչ է երկիրը, ուր բնակվում է լույսը» (Հոբ 38.19), նաև՝ «Քեզնո՞վ կարգավորվեց առավոտվա լույսը» (Հոբ 38.12): Եվ ծեր Սիմեոնը բազուկների վրա վերցնելով ասում էր. «Արդ արձակիր քո ծառային, Տեր: [Որպես] լույս հայտնվեցիր հեթանոսներին» (Ղուկ 2.29,32): [Սա] այն է, որ ասաց. «Ես [որպես] լույս եկա [այս] աշխարհ, որպեսզի յուրաքանչյուր ոք, ով հավատա ինձ, չմնանի խավար» (Հովհ 12.46): Մսուրի մասին Եսային ասում է. «Եզը ճանաչեց իր Տիրոջը և էշը՝ իր Տիրոջ մսուրը, մինչդեռ Իսրայելը ինձ չճանաչեց» (Եսայի 1.3): Դարձյալ ասում է. «Ահավասիկ Տերը թեթև ամպի վրա նստած պիտի գա Եգիպտոս, և պիտի ցնցվեն եգիպտացիների ձեռակերտները» (Եսայի 19.1): Թեթև ամպ է անվանում Կույս Մարիամին, որ բարձր էր [իր] կուսությամբ և անհաղորդ՝ [ապականարար] հյութին: Եվ դարձյալ ասում է. Եգիպտոսից պիտի կանչեմ իմ Որդուն (Ովս 11.1): Նաև՝ Նազովրեցի պիտի կոչվի (Մատթ 2.23): Եվ Զաքարիան ավանակ նստելու մասին ասում է. Ասացեք Սիոնի դստերը. «Ահա քո թագավորը գալիս է հեզորեն՝ նստած էշի վրա, էշի ավանակի վրա, և պիտի խորտակի Եփրեմի կառքերը և պատերազմողի աղեղը, և անապատ գնդանում շղթայվածներին պիտի ազատի» (Զաք 9.9): Նաև Հակոբն է ասում. «Խաղողի որթից պիտի կապի իր ավանակը և ճյուղից՝ էշի ավանակը» (Ծննդ 49.11): Եսային ասում է. «Մի հեծյալ տեսա ուղտի վրա նստած և մի հեծյալ՝ էշի վրա» (Եսայի 21.7), որը ուղտի մազ հագած Հովհաննեսն էր և էշի վրա նստած մեր Տերը: Նաև Դավիթն էր ասում. «Օրհնվի նա, որ Տիրոջ անունով պիտի գա. Տիրոջ տնից օրհնեցինք քեզ» (Սաղ 117.26): Դարձյալ՝ «Մանուկների և կաթնակեր տղաների բերանով հաստատեցիր քո օրհնությունը» (Սաղ 8.3): Սրանք հետո: Իսկ մեր ծննդաբերման մասին Երգ երգոցում Սողոմոնն ասում է. «Կանանց մեջ գեղեցիկդ, որ նախապատրաստվեցիր առավելին արգանդում, պիտի անախտ մարմին ծնես» (Հմմտ Երգ 5.9), այսինքն՝

անապական: Եվ Տիրոջ մասին ասում էր. «Շատերից ընտրված իմ եղբորորդին կարմիր և սպիտակ է» (Երգ 5.10): Նաև Հակոբն էր ասում. «Նրա աչքերը գինուց կարմիր են, նրա ատամները կաթից ճերմակ են» (Ծննդ 49.12): Դավիթն ասում է. «Տեսքով գեղեցիկ է բոլոր մարդկանց որդիներից» (Սաղ 44.3):

Քրիստոսի՝ մեր Աստծո մարդեղության մասին՝ այսքան, և ավելի քան այսքան վկայությունները [քաղված] են մարգարեներից:

Այժմ կարգով վկայություններ բերենք Ավետարանից:

Գլուխ ԻԵ

ՄԵՐ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

Հիսուս Քրիստոսի՝ Դավթի որդու, Աբրահամի որդու ծննդյան գիրքը: [Ինչո՞ւ] որովհետև, ըստ խոստումի, Քրիստոսը նրանց զավակն էր: Եվ Հիսուս Քրիստոսի ծնունդն այսպես էր, [ասում է] Սուրբ Հոգուց հղիացավ: Հրեշտակն ասում է. Նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է: Որդի է ծնվելու և նրա անունը Հիսուս պիտի կոչես, որովհետև նա իր ժողովրդին պիտի փրկի մեղքերից, և վկայակոչում է Եսայի մարգարեին. Ահա Կույսը պիտի հղանա և որդի ծնի, և նրա անունը Էմմանուել պիտի դնեն, որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ: Նաև Միքիայն է վկայաբերում. Դու, Բեթղեհեմ, Հուդայի երկիր, քեզնից պիտի ինձ [համար] իշխան ելնի, որ հովվի Իսրայելի իմ ժողովրդին: Նաև մոգերն ընծաներ բերեցին՝ ոսկի, կնդրուկ և զմուռս: Մարգարեին է վկայաբերում. Եգիպտոսից պիտի կանչեմ իմ որդուն: Եսային ասում է. Նազովրեցի պիտի կոչվի: Նաև Հովհաննեսն է վկայում. Ես ձեզ ջրով եմ մկրտում, բայց ինձանից հզորը պիտի գա՝ նա ձեզ կմկրտի Սուրբ Հոգով, կրակով: Եվ Հովհաննեսն ասում է. Ինձ հարկ է քեզնից մկրտվել և դու ի՞նձ մոտ ես գալիս: Հիսուսը պատասխանում է. Մեզ վայել է այսպես կատարել օրենքը: Երբ Հիսուսը մկրտվեց, երկինքը բացվեց և Աստծո Հոգին, իբրև աղավնի, իջավ նրա վրա և ձայնեց երկնքից. Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, նրան լսեցեք: Փորձություններից հետո սատանան թողեց նրան, և ահա հրեշտակները մոտենում և պաշտում էին նրան: Եվ վկայակոչում է Եսայուն. Մահվան խավարի և ստվերի մեջ լույս ծագեց նրանց: Քարոզում և ասում էր. Ապաշխարեցե՛ք, որովհետև մոտեցել է Աստծո արքայությունը: Եվ ինքը հրամանների մեջ, հանձին իր ասում է. Երանի է ձեզ, երբ իմ պատճառով նախատեն և հալածեն ձեզ, [ուրախ եղեք,] որովհետև երկնքում ձեր վարձը շատ է: Ասում է. Ոչ թե եկա օրենքը կամ մարգարեներին հերքելու, այլ՝ լրացնելու: Առաջինները ասացին, թե՝ մի սպանիր, բայց ես ասում եմ ձեզ. Մի բարկացիր և կնոջ վրա մի՛ նայիր և մի՛ երդվիր: Նաև՝ Այսպես աղոթեք. Հայր մեր, որ երկնքում ես: Ոչ ամեն ոք, ով ինձ Տեր Տեր կասի, արքայություն կմտնի, այլ [նա], ով իմ Հոր կամքը կկատարի, որ երկնքումն է: Այն օրը շատերն ինձ Տեր Տեր կասեն, և պիտի ասեմ, թե ձեզ չեմ ճանաչում: Բորոտն ասում է. Տեր, եթե կամենաս, կարող ես ինձ մաքրել. ասում է. կամենում եմ, մաքրվիր: Նաև Եսայուն է վկայակոչում. Նա մեր հիվանդությունները ի չիք դարձրեց և մեր ցավերն իր վրա վերցրեց: Նաև փոթորիկը և ծովը սաստեց, և հանդարտվեցին: Դիվահարներն ասում էին. Հիսուս, Որդի Աստծո, դու մեզ հետ ի՞նչ գործ ունես, մեզ տարաժամ տանջելու համա՞ր ես եկել: Եվ Հիսուսը իմանալով նրանց միտքը՝

անդամալույծին ասում է. Թող քո մեղքերը ներվեն քեզ: Ողորմություն եմ կամենում և ոչ՝ զոհ: Եվ արյունահոսություն ունեցող կինը, մոտենալով նրա հանդերձին, բժշկվեց: Նաև բռնելով աղջկա ձեռքը՝ աղջիկը հարություն առավ: Կույրերն ասում են. Դավթի Որդի, ողորմիր մեզ: Այո՛ Տեր, և բացվեցին նրանց աչքերը: Աշակերտներին իշխանություն տվեց հանել պիղծ ոգիներին և բժշկել բոլոր ցավերը: Ասացեք, թե մոտեցել է երկնքի արքայությունը: Եվ նրանք, ովքեր ձեզ չեն ընդունի. ավելի դյուրին կլինի սոդոմացիներին դատաստանի օրը, քան այն քաղաքին: Ով մինչև վերջ համբերի իմ անվան համար, նա պիտի ապրի: Յուրաքանչյուր ոք, ով ինձ մարդկանց առջև դավանի, ես էլ նրան կդավանեմ իմ Հոր առջև, որ երկնքում է: Ով ուրանա ինձ, ես էլ նրան կուրանամ: Ով ընդունում է ինձ, ինձ առաքողին է ընդունում: Երանելի է նա, ով չի գայթակղվում ինձնով: Ասում եմ ձեզ. կանանցից ծնվածների մեջ ավելի մեծը չկա, քան Հովհաննես Մկրտիչը, սակայն արքայության մեջ գտնվող փոքրագույնը նրանից մեծ է: Հիսուսը պատասխանում և ասում է. Գոհանում եմ քեզնից, Հայր, երկնքի և երկրի Տեր: Ամենայն ինչ ինձ տրվեց իմ Հորից: Ոչ ոք չի ճանաչում Որդուն, եթե ոչ Հայրը, և ոչ ոք չի ճանաչում Հորը, բայց միայն Որդին: Եկեք ինձ մոտ, բոլոր հոգնած բեռնավորվածներ, և ես ձեզ պիտի հանգստացնեմ: Իմ լուծը քաղցր է, և իմ բեռը՝ թեթև: Շաբաթ օրվա մասին ասում էր. Մարդու Որդին նաև շաբաթվա տերն է: Վկայաբերում է Եսայուն. Ահա իմ մանուկը, որին ընտրեցի, և իմ սիրելին, որին հավանեց իմ անձը: Հեթանոսները նրա անվանը պիտի հուսան: Ժողովուրդն ասում է. Մի՞թե սա է Քրիստոսը՝ Դավթի Որդին. [ասում է] թե Աստծո Հոգով եմ դևերին հանում, ուրեմն՝ ձեզ հասել է Աստծո արքայությունը: Եվ մի նշան պիտի սրանց տամ՝ Հովնան մարգարեի նշանը, ինչպես Հովնանն էր երեք օր և երեք գիշեր կետ ձկան փորում, այնպես էլ մարդու Որդին պիտի երեք օր և երեք գիշեր մնա երկրի սրտում: Ով կատարի իմ Հոր կամքը, որ երկնքում է, նա է իմ եղբայրը, քույրը և մայրը: Ահա սերմնացանը դուրս եկավ կյանքի խոսքը սերմանելու: Բայց երանի ձեր աչքերին և ականջներին, որ տեսնում և լսում եք: Պիտի ասենք հնձողներին. նախ որոմը քաղեք և այրելու համար խուրձ կապեք, իսկ ցորենը իմ շտեմարանում ժողովեք: Երկնքի արքայությունը նման է մանանեխի հատիկի կամ խմորի: Բարի սերմ սերմանողը մարդու Որդին է, հունձը վախճանն է: Հրեշտակները պիտի լինեն՝ չարերին կրակի հնոցի մեջ նետելու, այնտեղ լաց ու ատամների կրճտոց է լինելու: Այնժամ արդարները երկնքի արքայության մեջ ծագելու են իբրև արեգակ: Երկնքի արքայությունը թաքցված գանձ է, նաև՝ պատվական մարգարիտ: Ինչպես ծով նետված ուռկանը: Հերովդես չորրորդապետը բանտում գլխատեց Հովհաննեսին: Օրհնեց հինգ նկանակն ու երկու ձկները. մոտ հինգ հազար մարդ ճաշակեցին: Գիշերվա չորրորդ պահին եկավ Հիսուսը՝ քայլելով ծովի վրայով: [Նրանք,] ովքեր նավի վրա էին,

ասում են. Իրապես, դու Աստծո Որդի ես: [Նրանք,] ովքեր [թեկուզ] մի անգամ նրա հանդերձի քղանցքներին մոտեցան, փրկվեցին: Նաև քանանացի կինն աղաղակում էր. Ողորմիր ինձ, Տեր, Դավթի Որդի: Եվ ասում է նրան. Ո՛վ դու կին, մեծ է քո հավատքը: Կույրերը տեսնում և փառավորում էին Աստծուն: Այստեղ չորս հազարը յոթ նկանակից կերան: Պետրոսն ասում է. Դու ես Քրիստոսը, կենդանի Աստծո Որդին: Երանի քեզ, Սիմոն, որովհետև ոչ թե մարմինն ու արյունը հայտնեց քեզ, այլ՝ իմ Հայրը, որ երկնքում է: Դու ես վեմը, այդ վեմի վրա պիտի կառուցեմ իմ եկեղեցին, և դժոխքի դռները նրան պիտի չհաղթեն: Սաստում է աշակերտներին, որպեսզի նրանցից մեկին չասեն, թե նա է Քրիստոսը: Եվ ասում է, թե [նրան] հարկ է Երուսաղեմ գնալ, չարչարվել և սպանվել և երեք օրից հարություն առնել: Պետրոսն ասում է. Քավ լիցի, Տեր, թող այդ չպատահի քեզ: Եվ ասում է Պետրոսին. Ետևս անցիր, սատանա, դու գայթակղություն ես ինձ, որովհետև ոչ թե Աստծո բաներն ես մտածում, այլ՝ մարդկանց: Մարդու Որդին իր Հոր փառքով և հրեշտակներով պիտի գա և այնժամ յուրաքանչյուրին պիտի հատուցի ըստ իր կատարած գործերի: Վեց օրից հետո լեռը բարձրացավ և նրանց առջև այլակերպվեց, և նրա երեսն արեգակի նման լուսավորվեց, և նրանց երևացին Մովսեսն ու Եղիան, որոնք խոսում էին նրա հետ: [Մի] լուսավոր ամպ նրանց հովանի եղավ և [մի] ձայն [լսվեց], որ ասում էր. Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի, դրան լսեցեք: Նրանց պատվիրեց և ասաց. Տեսիլքի մասին ոչ մեկին չասեք, մինչև մարդու Որդին մեռելներից հարություն առնի: Չար ոգին այլ կերպ դուրս չի գալիս, քան պահքով և աղոթքով: Ասում եմ ձեզ. նրանց հրեշտակները, որ երկնքում են, մշտապես իմ Հոր երեսն են տեսնում: Եվ ասում է Պետրոսին. մինչև յոթանասուն անգամ յոթ թողություն պիտի շնորհես: Թագավորը կամեցավ հաշիվ պահանջել իր ծառաներից: Պարտքերը շնորհեց և անողորմ ընկերոջը դահիճների ձեռքը մատնեց: Այդպես իմ երկնավոր Հայրը կանի ձեզ, եթե նրանց հանցանքները չներեք: Եվ այստեղ ներքինիների մասին է ասում և օրհնում մանուկներին: Եվ ոչ մեկը բարի չէ, բայց՝ միայն Աստված: Մշակներին միայն մեկ դահեկան տվեց: Կույրերն ասում են. Ողորմիր մեզ Քրիստոս՝ Դավթի Որդի, և լույս շնորհեց նրանց: Եվ նստեց էշի վրա, և ժողովուրդն աղաղակում և ասում էր. Օրհնությո՛ւն Դավթի Որդուն, օրհնյալ է նա, որ գալիս է Տիրոջ անունով. օրհնություն բարձունքներում: Իմ տունն աղոթքի տուն պիտի կոչվի: Եվ առավոտյան թզենին չորացրեց: Հետո իր Որդուն ուղարկեց. նրան այգուց դուրս հանեցին և սպանեցին: Որդու հարսանիքին: Հարության մասին խոսք: Դավիթը Հոգով նրան Տեր է անվանում. Ասաց Տերն իմ Տիրոջը. նստիր իմ աջ կողմում: Եվ ձեր ուսուցիչը Քրիստոսն է: Ես ձեզ մարգարեներ և իմաստուններ կուղարկեմ, և դուք պիտի սպանեք [նրանց], մինչև որ ասեք. Օրհնյալ է Տիրոջ անունով եկածը: Նստում էր Ձիթենյաց լեռան վրա և խոսում [աշխարհի] վախճանի և սուտ Քրիստոսի, նաև՝

տառը կույսերի և քանքարների մասին: Եվ եթե մարդու Որդին գա Հոր փառքով, նաև փառքի աթոռին, ոմանց պիտի ասի. եկեք, իմ Հոր օրհնյալներ և ոմանց՝ հեռացեք ինձնից, անիծվածներ: Երկու օրից զատիկ է լինելու և մարդու Որդին խաչի է մատնվելու: Եվ Հուդան գնաց քահանաների մոտ, նրան երեսուն արծաթ տվեցին, և խույր փնտրում էր, որպեսզի նրան նրանց մատնի: Զատկի երեկոյան վերնատան մեջ հացն ու բաժակն առնելով օրհնեց, գոհացավ և նրանց տվեց: Եվ եկավ Ձիթենյաց լեռը: Եվ ասում է աշակերտներին. Բոլորդ այս գիշեր պիտի գայթակղվեք իմ պատճառով: Պետրոսին ասաց. երեք անգամ պիտի ուրանաս ինձ: Եվ Հուդան եկավ բազմաքանակ ամբոխով և համբուրելով մատնեց նրան: Պետրոսը սրով կտրեց ծառայի ականջը, և Տերը ողջացրեց: Հիսուսին ձերբակալելով տարան Կայիափա քահանայապետի մոտ և երդումով հարցրեց նրան. Դո՞ւ ես Աստծո Որդի Քրիստոսը: Ասում է նրան. Դու ասացիր, բայց սրանից հետո մարդու Որդուն պիտի տեսնեք Զորության աջ կողմում նստած և երկնքի ամպերով գալիս: Եվ քահանայապետն ասում է. հայհոյեց, և թքեցին նրա վրա ու ապտակեցին: Այնժամ Պետրոսը երեք անգամ ուրացավ, և աքաղաղը կանչեց: Եվ առավոտյան Հուդան զղջաց և ասաց. Արդար արյուն մատնեցի: Եվ արծաթը տաճարի մեջ նետելով՝ գնաց խեղդվեց: [Այդ] արծաթով բրուտի ագարակը գնեցին՝ դարձնելով օտարների գերեզման: Ասում է դատավոր Պիղատոսը. Դո՞ւ ես հրեաների թագավորը, և Հիսուսը պատասխանում է. Դու ասացիր: Եվ կամենում է արձակել նրան, քանզի գիտեր, թե նախանձի պատճառով են նրան մահվան մատնում: Բայց քահանայապետերն ու ծերերն ասում էին. Թող խաչվի: Եվ առնելով ջուրը՝ Պիղատոսը լվաց իր ձեռքը և ասաց. Անմասն եմ այս արդարի արյունից: Ամբողջ ժողովուրդն ասաց. Դրա արյունը մեր վրա լինի և մեր որդիների վրա: Եվ նրա գլխին փշե պսակ դրեցին և նրա աջ ձեռքին՝ եղեգ և եղեգով նրա գլուխն էին ծեծում: Եվ նրան զմուռս և լեղի տվեցին խմելու. և բաժանեցին հանդերձներն ու տարան խաչ հանելու երկու ավազակների արանքում: Ժամը վեցից մինչև ինը խավար եղավ: Եվ Հիսուսը մեծ ձայն արձակելով՝ հոգին ավանդեց: Ու տաճարի վարագույրը պատռվեց, երկիրը շարժվեց, ժայռերը ճեղքվեցին, գերեզմանները բացվեցին, սրբերի բազում մարմիններ հարություն առան և հարությունից հետո մտան սուրբ քաղաքը և շատերին երևացին: Հարյուրապետը տեսնելով ասաց. Իրապես, սա Աստծո Որդի էր: Եվ երբ երեկո եղավ, Հովսեփ Արիմաթացին եկավ և Պիղատոսից Հիսուսի մարմինը խնդրեց և սուրբ կտավով պատեց և դրեց գերեզմանի մեջ, վիմաժայռը գլորելով փակեց գերեզմանի դուռը և գնաց: Եվ ուրբաթից հետո, վաղ առավոտյան, զգուշանալով, գերեզմանի դուռը զինվորների հետ կնքեցին: Եվ շաբաթ [օրվա] երեկոյան, երբ միաշաբթին, այն է՝ կիրակին էր լուսանում, մեծ շարժում եղավ, և լուսափայլ հրեշտակը մի կողմ գլորեց վեմը և նստեց նրա վրա: Եվ ասաց կանանց. Գիտեմ, խաչյալ Հիսուսին եք

փնտրում, այստեղ չէ, այլ հարություն է առել: Եկեք և տեսեք տեղը և գնացեք ու պատմեք աշակերտներին: Եվ ահա Հիսուսը նրանց պատահեց և ասաց. Ո՞ղջ եք, և նրանք երկրպագեցին նրան: Զինվորները քաղաք փախան և քահանայապետներին պատմեցին այն բոլորը, ինչ տեսան: Եվ նրանք արծաթ տվեցին և ասացին. Ասեք, թե գիշերն աշակերտները եկան ու գողացան նրան: Եվ տասնմեկ աշակերտները Գալիլիա գնացին և տեսան Քրիստոսին: Եվ ասում է. Ինձ տրվեց ամենայն իշխանություն երկնքի և երկրի վրա, ինչպես Հայրն ինձ առաքեց, այնպես էլ ես եմ ձեզ առաքում: Այսուհետև գնացեք, բոլոր հեթանոսներին աշակերտեք, նրանց մկրտեք Հայր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ես ձեզ հետ եմ մինչև աշխարհի վերջը: Նրան փառք հավիտյանս. ամեն:

Ահա սրանք են մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի մասին Մատթեոս Ավետարանչի վկայությունները, որոնք համառոտեցի, ողջույնի գլուխը մատնանշելով, յուրաքանչյուր Աստծու սիրելով:

Մեր Տիրոջ մասին վկայություններ Մարկոսի Ավետարանից

Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Որդու Ավետարանի սկիզբը: Ձայն բարբառոյ յանապատի, պատրաստեք Տիրոջ ճանապարհը, ուղղեք նրա շավիղները: Քարոզում և ասում էր. Ինձնից հզորը պիտի գա, որի կոշիկների կապերը քանդելու արժանի չեմ: Եվ գազանների հետ էր, ու հրեշտակները պաշտում էին նրան: Աստծո Ավետարանն էր քարոզում և ասում. Հասել է Աստծո արքայությունը: Եվ թույլ չէր տալիս դևերին խոսել, որովհետև գիտեին, թե նա Քրիստոսն է: Բորոտն ասում է. Եթե կամենաս, կարող ես մաքրել: Ձեռքը նրան մեկնեց և՛ ասաց. Կամենում եմ, մաքրվիր: Եվ արագորեն մաքրվեց: Այնպես որ բոլորը զարմանում և փառավորում էին Աստծուն և ասում, թե այսպիսի բան երբեք չենք տեսել:

Մնացյալը՝ կարգով. ինչ վկայություն որ կա Մատթեոսի մեջ, նույնը կա Մարկոսի մեջ:

Գլուխ ԻԶ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՂՈՒԿԱՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

Քանզի շատերը ցանկացան վերստին շարադրել պատմությունը, որ ավանդեցին մեզ, [նրանք,] որ սկզբից ականատես և սպասավոր եղան Բանին, դա նաև ինձ վիճակվեց, որ սկզբից բոլոր բաներին հետամուտ եղա ճշմարտությամբ, որպեսզի ճշմարտության խոսքը ճանաչես: Եվ Իսրայելի որդիներից շատերին պիտի Աստծուն դարձնի: Եվ ինքը նրա առջև պիտի գա Եղիայի հոգով և զորությամբ: Ուրախ եղիր, շնորհընկալ Կույս, Տերն ընդ քեզ: Նրա անունը Հիսուս պիտի կոչես, մեծ պիտի լինի և Բարձրյալի Որդի պիտի կոչվի: Եվ նրա թագավորությունը պիտի վերջ չունենա, որովհետև քեզնից ծնվածը սուրբ է և Աստծո Որդի պիտի կոչվի: Օրհնյալ ես դու կանանց մեջ և օրհնյալ է քո որովայնի պտուղը: Այս ինձ ինչպե՞ս եղավ, որ իմ Տիրոջ մայրն ինձ մոտ եկավ: Մեզ համար փրկության եղջյուր բարձրացրեց Դավթի տնից: Դու, մանուկ, Բարձրյալով մարգարե պիտի կոչվես, քանզի նրա երեսի առջևով պիտի քայլես: Բարձունքներից այցելեց նրանց երևալ, որոնք խավարի և մահվան մեջ էին նստել: Ծնվեց իր անդրանիկ որդին, խանձարուրով պատեց և դրեց մսուրի մեջ: Այսօր ձեզ փրկիչ ծնվեց, որ Դավթի քաղաքի Օծյալ Տերն է: Փառք Աստծուն բարձունքներում, երկրում խաղաղություն, մարդկանց մեջ հաճություն: Չտեսնել մահ մինչև տեսնի Տիրոջ Օծյալին: Եվ նա գրկելով նրան՝ օրհնեց Աստծուն և ասաց. Արդ, ըստ քո խոսքի արձակիր քո ծառային, Տեր, որովհետև իմ աչքերը տեսան քո փրկությունը, հեթանոսներին հայտնված լույսը: Սա պատճառ պետք է լինի շատերի կործանման և բարձրացման: Մանուկն աճում և զորանում էր իմաստությամբ, և Աստծո շնորհքը նրա վրա էր: Չգիտե՞ք, որ ինձ հարկ է իմ Հոր տանը լինել: Յուրաքանչյուր մարմին պիտի մեր Աստծո փրկությունը տեսնի: Որի հեծանոցը իր ձեռքում է՝ ցորենը շտեմարանում հավաքելու, իսկ հարդն անշեջ հրով պիտի այրի: Եվ ինքը՝ Հիսուսն երեք տարեկան էր և, ինչպես կարծվում էր, Հովսեփի որդին էր: Ազգատոհմը կարգադրելով հասցնում է մինչև Դավիթ, Աբրահամ, Ադամ և Աստված: Եվ Հիսուսը Սուրբ Հոգով լցված քառասուն օր ապրեց անապատում՝ սատանայից փորձվելով: Տիրոջ Հոգին իմ վրա է, այդ պատճառով իսկ օծեց ինձ: Եվ նրան բարձրացրին լեռան ծայրը՝ ցած նետելու համար, բայց նա նրանց միջով անցավ գնաց: Եվ ասում էին. Ի՞նչ է այս, որ իշխանությամբ և զորությամբ ասում է չար ոգիներին, և ելնում են: Ու դևերն աղաղակում և ասում էին, թե՝ Դու ես Աստծո Որդին, քանզի գիտեին, թե նա Քրիստոսն է: Նաև Պետրոսը, ընկնելով Հիսուսի ծնկները, ասում է. Ինձնից հեռացիր, Տեր, որովհետև մեղավոր մարդ եմ: Ասում է անդամալույ-

ծին. Թող ներվեն քո մեղքերը: Եվ իր տուն գնաց, ու փառաբանում էր Աստծուն: Ողջերին բժիշկներ պետք չեն, այլ՝ հիվանդներին: Երբ փեսան նրանցից վերցվի, այնժամ թող պահքի մեջ լինեն: Մարդու Որդին նաև շաբաթի Տերն է: Եվ տասներկու աշակերտների ընտրեց: Ինչո՞ւ եք ինձ Տեր, Տեր անվանում, և ինչ ասում եմ, չեք կատարում: Եվ պատանուն ասում է. Քեզ եմ ասում, վեր կաց: Մեռելը նստեց և կանգնեց, և նրան տվեց իր մորը: Հովհաննեսն [իր աշակերտներին] Տիրոջ մոտ ուղարկեց [հարցնելու]՝ Դո՞ւ ես, որ պիտի գաս, թե՞ ուրիշին սպասենք: Երանի նրան, որ չի գայթակղվի ինձնով: Կինը համբուրում էր նրա ձեռքը և յուղով օծում: Եվ ասում է նրան. Թող ներվեն քեզ քո մեղքերը: Աստծո արքայությունն էր քարոզում, և տասներկուսը նրա հետ էին: Ասում է. Ձեզ տրված է Աստծո արքայության խորհուրդն իմանալ: Եվ դևն ասում է. Ի՞նչ կա իմ և քո միջև, Հիսուս, Որդի Բարձրյալ Աստծո, աղաչում եմ քեզ. մի՛ տանջիր ինձ: Եվ հրամայեց մտնել խոզերի մեջ, և նրանք ընկան ծովի մեջ և խեղդվեցին: Պատմիր այն, ինչ մի անգամ քեզ Աստված արեց: Գնաց քաղաք և պատմում էր այն, ինչ Հիսուսն իրեն արեց: Նաև Հայրոսի դուստրը կենդանացրեց և հրամայեց նրան ուտելիք տալ: Քանզի նրան, ով ամոթով թողնի ինձ և իմ խոսքը, մարդու Որդին էլ, երբ իր փառքով գա՝ Հոր և սուրբ հրեշտակների հետ, նրան պիտի ամոթով թողնի: Թող մեռելներին՝ թաղելու իրենց մեռելներին և դու գնա ու պատմիր Աստծո արքայությունը: Արդ, աղաչեք հունձքի տիրոջը, որպեսզի մշակներին իր հունձքին դուրս բերի: Նրանց ասացեք, թե ձեզ մոտեցել է Աստծո արքայությունը: Ով լսում է ձեզ՝ ինձ է լսում, և նա, ով ինձ է լսում՝ լսում է նրան, ով առաքեց ինձ: Առաքյալները խնդությամբ վերադարձան և ասացին. Տեր, քո անունով նաև դևերն են հնազանդվում մեզ: Ձեթ և գինի դնելով՝ նրա վերքը կապեց, երկու դահեկան տվեց պանդոկապետին և ասաց. մյուս անգամ գալուց կվճարեմ քեզ: Եվ ասում է. Ինձ երեք նկանակ տուր պարտքով: Համարձակության համար է տալիս: Երանի [այն] որովայնին, որ քեզ կրեց և ստինքներին, որոնք կերակրեցին քեզ: Երանի նրանց, ովքեր լսում և կատարում են Աստծո խոսքը: Ով հայհոյում է Սուրբ Հոգուն, նրան չի ներվելու: Բայց խնդրեք Աստծո արքայությունը, և այն կտրվի ձեզ: Երանի այն ծառային, որին գալով արթուն է գտնում Տերը: Եթե չապաշխարեք, բոլորդ նույնպես կկորչեք: Եվ պիտի ասեք. Քո առջև կերանք և խմեցինք և հրապարակներում մեզ սովորեցրիր: Ասում եմ ձեզ՝ չեմ ճանաչում ձեզ: Երանի նրան, ով Աստծո արքայության կերակուրն է ուտելու: Ով իր խաչը չի վերցնում և չի գալիս իմ ետևից, չի կարող իմ աշակերտը լինել: Այստեղ է մոլորյալ ոչխարի, կորսված դրամի, անառակ որդու, անիրավ տնտեսի մասին առակը: Չեք կարող ծառայել Աստծուն և մամոնային: Օրենքը և մարգարեները մինչև Հովհաննեսն են, այնուհետև Աստծո արքայությունն է ավետարանվում: Մեծահարուստը և Ղազարոսը՝ նրա դռան մոտ: Տասը

բորոտները մաքրվեցին, և նրանցից մեկը բարձրաձայն փառաբանում էր Աստծուն և ինքը սամարացի էր: Ինչպես փայլակն է երկնքում երևում, այնպես էլ մարդու Որդին՝ իր [գալստյան] օրը: Անիրավ դատավորը: Նաև երկուսը տաճար բարձրացան՝ աղոթելու: Ով Աստծո արքայության համար թողնի իր տունը, կնոջը և այլոց՝ այստեղ ավելիով կվարձատրվի, իսկ այնտեղ հավիտենական կյանք կժառանգի: Եվ Զաքեոսը հավատաց Երիքովում: Քանզի մարդու Որդին եկավ փնտրելու և ապրեցնելու կորածներին: Մի ազնվական գնաց հեռու աշխարհ՝ իր թագավորությունը ստանալու և վերադառնալու: Եվ իր ծառաներին տասը մնաս տվեց ու ասաց: Առաջ անցավ՝ Երուսաղեմ գնալու: Նրանք հակառակվում էին ասելով, թե հարություն չկա: Ասում է, թե մեռելները հարություն առնելուց հետո ոչ կին են առնում, և ոչ էլ տղամարդկանց են տրվում, ոչ էլ կարող են մեռնել, որովհետև հավասար են հրեշտակների և Աստծո որդիների, քանզի հարության որդիներ են: Եվ տեսնում էր, որ գանձանակի մեջ էին դնում: Այնուհետև՝ խաչի, թաղման և հարության խորհուրդն է, որն [արդեն] ասվեց Մատթեոսի մեջ: Եվ հարությունից հետո Էմմավուս գնացողներին երևաց և հացը բաժանելիս ճանաչելի դարձավ: Եվ նրանց մեջ կանգնելով ասաց. Խաղաղություն ընդ ձեզ, և այս ասելով՝ իր թաղման և հարության խորհուրդն է, որն [արդեն] ասվեց Մատթեոսի մեջ: Եվ ձեռքերն ու ոտքերը ցույց տվեց: Նրանք մի կտոր ձկան խորոված և մեղրի խորիսխ տվեցին նրան, և մնացորդը նրանց տվեց: Եվ ասում է. Ես իմ Հոր ավետիսն եմ առաքում ձեզ: Նրանց Բեթանիա տարավ, օրհնեց նրանց, բաժանվեց նրանցից և երկինք բարձրացավ: Նրան երկրպագելով՝ նրանք մեծ ուրախությամբ վերադարձան Երուսաղեմ և գովում ու օրհնում էին Աստծուն:

Գլուխ ԻԵ
ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՎՀԱՆՆՈՒ ԱՎԵՏԱՐԱՆԻՑ

Ի սկզբանէ էր Բանը, Բանն էր առ Աստված և Աստված էր Բանը: Նա սկզբում Աստծո մոտ էր, ամենայն ինչ նրանով եղավ: Այդ լույսը, որ ճշմարիտ է, լուսավորում է աշխարհ եկող բոլոր մարդկանց: Աշխարհում էր և աշխարհը նրանով եղավ, և աշխարհը նրան չճանաչեց: Նրանց իշխանություն տվեց Աստծո որդիներ լինել, ովքեր հավատացին նրա անվանը: Եվ Բանը մարմին եղավ ու բնակվեց մեր մեջ, և նրա փառքը տեսանք, որպես Հորից Միածնի փառք՝ շնորհքով և ճշմարտությամբ լեցուն: Ոչ ոք երբեք Աստծուն չի տեսել, բայց միայն միածին Որդին, որ Հոր ծոցում է, նա մեզ պատմեց: Ահավասիկ Աստծո Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը: Ու ես տեսա և վկայեցի, թե սա է Աստծո Որդին: Ասում է. Ահավասիկ Քրիստոսը՝ Աստծո Գառը: [Նա,] ում մասին գրվեց Մովսեսի օրենքներում և մարգարեություններում, Հովսեփի Որդի Հիսուսն է Նազարեթից: Ռաբբի, դու ես Աստծո Որդին, դու ես Իսրայելի Թագավորը: Տեսնելու եք երկինքը բացված և Աստծո հրեշտակներին, որոնք վեր ու վար են անում մարդու Որդու մոտ: Նաև Գալիլիայի Կանա [քաղաքի] հարսանիքում, որտեղ ջուրը գինի դարձրեց: Սա նրա հրաշքների սկիզբն էր: Քանդեք այդ տաճարը և երեք օրում կկառուցեմ այն: Եթե մեկը ջրից և հոգուց չծնվի, չի կարող մտնել Աստծո արքայությունը: Ոչ ոք երկինք չի բարձրացել, եթե ոչ նա՝ մարդու Որդին, որ երկնքից իջավ ու երկընքում է: Աստված այնպես սիրեց աշխարհը, [որ] մինչև [իսկ] իր Միածին Որդին տվեց, որպեսզի ով հավատա նրան՝ չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա: Ով հարս ունի, նա է փեսան: Ով ի վերուստ է գալիս՝ բոլորից վեր է, ով երկնքից է գալիս՝ վկայում է այն մասին ինչ տեսել է, և հաստատում է, թե Աստված ճշմարիտ է: Ով հավատում է Որդուն՝ հավիտենական կյանք ունի, և ով Որդուն չի հնազանդվի, կյանք չի տեսնելու, այլ Աստծո բարկությունը նրա վրա է լինելու: Այստեղ սամարացի կնոջ հետ է խոսում: Աստված հոգի է, և նրան երկրպագողները հարկ է, որ հոգով և ճշմարտությամբ երկրպագեն: Իմ կերակուրն այն է, որ Հորս կամքն անեմ և նրա կամքը կատարեմ: Եվ ճշմարտապես գիտենք, թե դա է աշխարհի Փրկիչը: Գնա, քո որդին ողջ է, և մարդը հավատաց խոսքին, որ Հիսուս ասաց նրան: Սա երկրորդ հրաշքն էր, որ արեց Քրիստոսը: Իմ Հայրը գործում է մինչև այժմ, նաև ես եմ գործում: Այդ պատճառով հրեաները փնտրում էին [նրան]՝ սպանելու, որովհետև Աստծուն իր Հայրն էր անվանում, և իր անձը Աստծուն հավասար էր նկատում: Ինչպես Հայրն է հարություն պարգևում մեռելներին և կենդանացնում, այդպես էլ Որդին՝ որին կամենում՝ կենդանացնում է: Ոչ թե Հայրն է դատում, այլ

բովանդակ դատաստանն իր Որդուն հանձնեց: Եվ քանի որ մարդու Որդի է՝ ինչո՞ւ եք այդ բանի վրա զարմանում: Գալու ժամանակ, երբ բոլոր գերեզմաններում եղածները նրա ձայնը պիտի լսեն և դուրս պիտի գան: Գործերը, որոնք Հայրն ինձ տվեց, կատարում եմ. նրանք վկայում են, թե Հայրն է առաքել ինձ, նա վկայեց իմ մասին: Նաև Հովհաննեսը վկայեց ճշմարտության մասին: Քննեցեք գրքերը. նրանք էլ են վկայում իմ մասին: Նաև Մովսեսն իմ մասին գրեց: Երբ հացն ու ձուկը կերան, ասացին, թե՝ Սա է ճշմարիտ մարգարեն, որ պիտի աշխարհ գա: Եվ կամենում էին նրան հափշտակել, որպեսզի թագավոր դարձնեն: Տեսնում էին Հիսուսին, որ քայլում էր ծովի վրայով: Աստծո գործն այս է. որպեսզի հավատաք նրան, ով առաքեց ինձ: Հիսուսն ասում է նրանց. Ես եմ երկնքից իջած կյանքի հացը: Եթե մեկն այս հացից ուտի՝ կապրի հավիտյան: Ով իմ մարմինն ուտի և իմ արյունն ըմպի՝ հավիտենական կյանք ունի, և ես հարությամբ կառնեմ նրան վերջին օրը: Նա իմ մեջ կբնակվի, և ես՝ նրա մեջ, և ով ինձ ուտի՝ նա պիտի ապրի իմ շնորհիվ: Տեսնելու եք մարդու Որդուն, որ բարձրանում է այնտեղ, ուր սկզբից էր: Պետրոսն ասում է. Տեր, ո՞ւմ մոտ գնանք. [դու] հավիտենական կյանքի խոսքեր ունես: Մենք հավատացինք և ճանաչեցինք, թե Դու ես Աստծո Որդի Քրիստոսը: Հիսուս ասում է. Մի փոքր ժամանակ ձեզ հետ եմ, [հետո] գնալու եմ նրա մոտ, ով ինձ առաքեց: Ով ինձ հավատա, ինչպես գրքերն են ասում, նրա որովայնից գետերը կյանքի ջրեր պիտի բխեն: Ես եմ աշխարհի լույսը, ով ինձ հետ գա, չի մնալու խավարում, այլ կյանքի լույսը պիտի ունենա: Երբ մարդու Որդուն փառաբանեք, այնժամ կիմանաք, թե՝ ես եմ: Եթե Որդին ազատի ձեզ՝ ճշմարտապես ազատ կլինեք: Եթե Աստված ձեր Հայրը լիներ, նաև ինձ պիտի սիրեիք, որովհետև ես Աստծուց ելա և եկա: Ով Աստծուց է՝ Աստծո խոսքն է լսում, իսկ դուք չեք լսում, քանզի Աստծուց չեք: Ձեր հայր Աբրահամը ցնծությամբ տեսնել իմ օրը, տեսավ և ուրախացավ: Եվ ի ծնե կույրին թքով լույս շնորհեց, և ասաց նրան. Դու հավատո՞ւմ ես Աստծո Որդուն: Պատասխանեց. Տեր, ո՞վ է, որպեսզի հավատամ նրան: Հիսուսն ասում է նրան. Տեսար նրան, քեզ հետ խոսողը նա է: Ես եմ դուռը, ով ինձնով ներս մտնի՝ կապրի, ելումուտ կանի և ապրուստ կգտնի: Ես եմ քաջ հովիվը, ինչպես Հայրն ինձ գիտի, այնպես էլ ես գիտեմ Հորը: Ես իմ անձը դնում եմ, որպեսզի մյուս անգամ վերցնեմ այն: Ոչխարներն իմ ձայնը լսելու են, և ես նրանց հավիտենական կյանք եմ տալու: Հրեաներն ասում են. Դու մարդ ես, և քո անձը Աստված ես համարում: Ես ասում եմ, թե դուք աստվածներ եք: Արդ, եթե նրանց աստվածներ է համարում, [ուրեմն] Աստծո խոսքը նրանց արվեց: Իսկ նրան, որին Հայրը մաքրեց և աշխարհ առաքեց, դուք ասում եք՝ հայհոյում ես, որովհետև ասացի, թե Աստծո Որդի եմ: Եթե ինձ չեք հավատում, գոնե գործերին հավատացեք: Որպեսզի իմանաք, թե Հայրը իմ մեջ է, և ես՝ Հորս մեջ: Ասում է. Մեր բարեկամ Ղազարոսը ննջեց, բայց

գնամ արթնացնեմ նրան: Հիսուսն ասում է. Ես եմ հարությունը, կյանքը. ով հավատա ինձ՝ հավիտյան չի մեռնելու: Մարթան ասում է նրան. Ես հավատացի, թե դու ես Աստծո Որդին՝ Քրիստոսը, որ պիտի աշխարհ գար: Բարձրաձայն ասում է. Ղազար, դուրս արի, և մեռելը պատանքով եկավ: Կայիափան ասում է. Լավ է, որ մեկը ժողովրդի համար մեռնի, քան ամբողջ ազգը կորչի: Քահանայապետները խորհեցին, որպեսզի նաև Ղազարոսին սպանեն, որովհետև հրեաներից շատերը գնում և հավատում էին նրան: Առավոտից ողջագուրում էին. Օվսաննա, օրհնյալ է Իսրայելի Թագավորը, որ գալիս է Տիրոջ անունով: Ժամը հասավ, որ փառավորվի մարդու Որդին: Եթե մեկն ինձ պաշտի, ուր ես եմ՝ այնտեղ էլ իմ սպասավորը պիտի լինի: [Այնժամ] երկնքից ձայն եկավ. Փառավորեցի և նորից պիտի փառավորեմ: Երբ ես երկրից բարձրանամ, բոլորին ինձ պիտի ձգեմ: Եսային ասաց, որ նրա փառքը տեսավ և նրա մասին խոսեց: Ես [որպես] լույս եկա այս աշխարհ, որպեսզի ամեն ոք, ով ինձ հավատա, խավարում չմնա: Ընթրիքին վեր է կենում և լվանում է աշակերտների ոտքերը: Եվ ասում է. Դուք ինձ Տեր և Վարդապետ եք կոչում և ճշմարիտ եք ասում, քանզի իրապես եմ: Եվ եթե ես՝ Տերս և Վարդապետս ձեր ոտքերը լվացի, նույնն էլ դուք արեք: Ձեզ ասում եմ, ծառան իր տիրոջից մեծ չէ: Այժմ փառավորվեց մարդու Որդին, և Աստված էլ նրա մեջ փառավորվեց: Աստծուն հավատացեք և ինձ հավատացեք, իմ Հոր տան օթևանները բազում են: Հիսուս նրան ասում է. Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Ով ինձ տեսավ՝ Հորը տեսավ: Ես Հոր մեջ եմ, և Հայրը իմ մեջ է: Ես Հոր մոտ եմ գնում, որպեսզի Հայրը Որդիով փառավորվի: Ես կենդանի եմ, դուք էլ պիտի կենդանի լինեք այն օրը: Օն, ուրեմն, գնանք այստեղից: Ես եմ ճշմարիտ որթը և իմ Հայրը մշակն է: Ինչ որ խնդրեք իմ Հորից, պիտի տա ձեզ: Ով ինձ է ատում, իմ Հորն է ատում: Ճշմարտության Հոգին, որ դուրս է գալիս Հորից, նա իմ մասին է վկայում: Հորից ելա և աշխարհ եկա, դարձյալ թողնելու եմ աշխարհը և գնալու եմ Հոր մոտ: Հայր, հասել է ժամը, փառավորիր քո Որդուն, որպեսզի քո Որդին էլ քեզ փառավորի: Այս է հավիտենական կյանքը. որ միայն քեզ ճանաչեն [որպես] ճշմարիտ Աստված, և նրան՝ Հիսուս Քրիստոսին, որին ուղարկեցիր: Հայր Սուրբ, հանուն քո, պահիր նրանց, որպեսզի մեկ լինեն, ինչպես և մենք ենք մեկ: Հայր արդար, քանզի սերը, որով ինձ սիրեցիր, նրանց մեջ է, և ես՝ նրանց մեջ: Սակայն իմ թագավորությունն այս [աշխարհից] չէ: Դու ասում ես, թե թագավոր եմ, բայց ես ի ծնե այդ եմ: Պիղատոսն ասում է. Ահա ձեր թագավորը՝ ձեզ: Հրեաները պատասխանում են. Կայսրից զատ մենք թագավոր չունենք: Գրված էր. Հիսուս Նազովրեցի, Թագավոր հրեից: Եվ անկար պատմուճանի համար վիճակ գցեցին: Գլուխը խոնարհելով՝ հոգին ավանդեց: Զինվորներից մեկը տեգով կողը խոցեց, և անմիջապես արյուն ու ջուր դուրս եկավ: Եվ նա, որ այս տեսավ, վկայեց, և նրա վկայությունը ճշմարիտ է,

որպեսզի դուք էլ հավատաք: Որ գրվածը կատարվի, թե՝ նրա ոսկորը չի փշրվելու: Եվ մյուս գրվածն ասում է. Կնայեն նրան, որին խոցեցին: Հովսեփը և Նիկոդեմոսը մոտ հարյուր լիտր զմուռս բերեցին՝ հալվեի հետ խառը: Կտավներով ու խունկերով նրան պատեցին և դրեցին գերեզմանի մեջ: Եվ կիրակի օրը, ասում է Մարկոսը, Տիրոջը վերցրին այն գերեզմանից, և չգիտեմ՝ որտեղ դրեցին: Նաև Պետրոսը մտավ գերեզման և տեսավ կտավները, որ այնտեղ էին, ու վարշամակը, որ նրա գլխին էր, ոչ թե կտավների հետ էր, այլ առանձին ծալված և մի կողմ էր դրված: Հիսուս նրան ասում է. Մի մոտեցիր ինձ, քանզի դեռ Հորս մոտ չեմ բարձրացել: Ես պիտի իմ Հոր մոտ բարձրանամ և ձեր Հոր մոտ և իմ Աստծո մոտ և ձեր Աստծո մոտ: Եվ կիրակի օրը երեկոյան փակ դռներով ներս մտավ աշակերտների մոտ: Իր ձեռքերն ու ոտքերը նրանց ցույց տվեց: Նրանց ասաց. Ինչպես իմ Հայրն ուղարկեց ինձ, [այնպես էլ] ես եմ ուղարկում ձեզ: Նրանց վրա փչեց և ասաց. Առեք Սուրբ Հոգին. եթե մեկի մեղքերին թողություն տաք՝ պիտի թողնվի, և եթե պահեք՝ պահված կլինի: Ութ օրից Թովմասը տեսավ և ասաց. Տեր իմ և Աստված իմ: Հիսուս նրան ասում է. Ինձ տեսար և հավատացիր. երանի նրան, ով չի տեսնում, բայց հավատում է: Այսքանը գրվեց, որպեսզի հավատաք, թե Հիսուս Քրիստոսն Աստծո Որդի է, հավատաք և նրա անվամբ հավիտենական կյանք ունենաք: Եվ դրանից հետո իրեն ցույց տվեց աշակերտներին Տիբերական ծովեզերքում: Քանի որ գիտեին, թե Տերն է, երեք ուրացումներով բժշկվելը [ի մտի ունենալով] երիցս հարցրեց. Սիմոն [որդի] Հովնանի, սիրո՞ւմ ես ինձ: Պատասխանում է նրան. Տեր, դու ամեն ինչ գիտես, գիտես, որ սիրում եմ քեզ: Սա այն աշակերտն է, որ գրեց այս բոլորը, և գիտենք, որ նրա վկայությունը ճշմարիտ է: Եվ եթե գրվեր բոլորը, ինչ Հիսուսն արեց, կարծում եմ, թե աշխարհը չէր կարող պարունակել գրված գրքերը:

Ահա այսքան են մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մասին չորս Ավետարանների վկայությունները:

Սրանից հետո վկայություններ բերենք Պողոս առաքյալից:

Գլուխ ԻԸ

ՄԵՐ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԹՂԹԵՐԻՑ

Հռոմեացիներին ուղղած թղթում ասում է.

Պողոս, Հիսուս Քրիստոսի ծառա, Աստծո Ավետարանի համար ընտրված: Իր Որդու՝ [մեր Տեր Հիսուս Քրիստոսի] մասին, որ մարմնով Դավթի սերնդից էր: Դարձյալ ասում է. Այն, որ օրենքի համար անկարելի էր, քանզի մարմնով տկար էր, Աստված իր Որդուն ուղարկեց մեղանչական մարմնի նմանությամբ և դատապարտեց մեղքն այդ մարմնի մեջ: Դարձյալ ասում է. Եթե Հիսուս Քրիստոսին Տեր ճանաչես ու բերանով խոստովանես, քանզի սրտով հավատալը արդարություն է և բերանով խոստովանելը փրկագործում է: Դարձյալ ասում է. Տերը հակիրճ և համառոտ բան պիտի կատարի երկրի վրա: Դարձյալ ասում է. Նրանց հայրերից էր Քրիստոսը, որ մարմնով եկավ, որ բոլորի համար օրհնյալ Աստված է հավիտենապես:

Կորնթացիներին ուղղած Առաջին (թղթում) ասում է.

Ձեզ շնորհք և խաղաղություն՝ Աստծուց՝ մեր Հորից և Տեր Հիսուս Քրիստոսից: Նույնն ասում է բոլոր թղթերում: Եվ դարձյալ ասում է. Քրիստոսը Աստծո զորությունն ու Աստծո իմաստությունն է: Դարձյալ ասում է. Եթե փառքի Տիրոջը ճանաչեին, խաչ չէին հանի: Դարձյալ հանձին Երրորդության ասում է. Աստծո գործակիցներ ենք, Աստծո պտուղն եք, Աստծո շինվածքն եք: Դարձյալ ասում է. Մեզ համար Հայր Աստված մեկն է. նրանից է ամենայն ինչ և Տեր Հիսուս Քրիստոս մեկն է. նրանով է ամենայն ինչ: Եվ դարձյալ ասում է. Առաջին մարդը հողեղեն է՝ երկրից, իսկ երկրորդ մարդը Տեր է՝ երկնքից:

Կորնթացիներին ուղղած Երկրորդ թղթում ասում է.

Որպեսզի Քրիստոսի Ավետարանի փառքի լույսը [նրանց վրա չծագի], որ աներևույթ Աստծո պատկերն է: Քանզի ոչ թե մեր անձերն ենք քարոզում, այլ՝ մեր Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսին և մեզ՝ ձեր ծառաներին՝ հանուն Քրիստոսի:

Գաղատացիներին ուղղած թղթում ասում է.

Պողոսը՝ առաքյալ դարձած ոչ թե մարդկանցից և ոչ թե մարդու ձեռքով, այլ՝ Հիսուս Քրիստոսի ձեռքով: Եվ դարձյալ ասում է. Ես ոչ թե մարդուց ընդունեցի և ոչ թե մարդուց սովորեցի, այլ՝ Հիսուս Քրիստոսի հայտնությունից: Դարձյալ ասում է. Երբ ժամանակի լրումը հասավ, Աստված առաքեց իր Որդուն, որ կնոջից ծնվեց և մտավ օրենքի տակ: Դարձյալ ասում է. Քանի դեռ Աստծուն չգիտեիք, ծառա էիք նրանց,

որոնք բնությամբ աստվածներ չէին, բայց այժմ ճանաչեցիք Աստծուն, մանավանդ, որ Աստծուց ճանաչվեցիք: Եվ վերջում ասում է. Բայց ինձ քավ լիցի պարծենալ, բայց միայն մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի խաչով:

Եվ Եփեսացիներին հղած թղթում ասում է.

Օրհնյալ է Աստված և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հայրը, որը օրհնեց մեզ՝ ամենայն հոգևոր օրհնությամբ Քրիստոսով երկնավոր բաներում, որը նրանով ընտրեց մեզ աշխարհի գոյությունից առաջ: Դարձյալ ասում է. Որ ամենայն ինչ պարունակվի Քրիստոսի մեջ՝ այն, ինչ երկնքում է, և այն, ինչ երկրում է: Դարձյալ ասում է. Քանզի այն ժամանակ առանց Քրիստոսի էիք և օտարացված ավետյաց ուխտից և ոչ մի հույս չունեիք և աշխարհում անաստված էիք: Դարձյալ ասում է. [Որպեսզի] Քրիստոսը հավատքով ձեր սրտում բնակվի, որ Աստծո բարությամբ լցվեք: Դարձյալ ասում է. Մեկ Տեր, մեկ հավատ, մեկ մկրտություն, մեկ Աստված և բոլորի Հայր: Դարձյալ ասում է. «Ելավ»-ը ի՞նչ է, եթե ոչ այն, թե նույն է նա, որ իջավ և բոլոր երկինքներից վերև բարձրացավ, որպեսզի ամենայն ինչ լցնի: Դարձյալ ասում է. Այս մասին տեղեկանալով իմացեք, որ ամեն պոռնիկ կամ պիղծ կամ ագահ Քրիստոսի՝ Աստծո արքայության մեջ ժառանգություն չունի: Դարձյալ ասում է. Այս խորհուրդը մեծ է, բայց ես ասում եմ, որ Քրիստոսին և եկեղեցուն է վերաբերում: Եվ վերջում ասում է. Շնորհքն ամենքի հետ, որ մեր Տեր Հիսուս Քրիստոսին սիրում են անեղծությամբ:

Փիլիպեցիներին հղած թղթում ասում է.

Ձեզնից յուրաքանչյուր ոք թող այն խորհի, որ Քրիստոս Հիսուսի մեջ է, որ Աստծո կերպարանքն [ունենալով] հափշտակություն չհամարեց հավասար լինել Աստծուն, այլ, ծառայի կերպարանք առնելով, իր անձը խոնարհեցրեց: Այդ պատճառով Աստված նրան է՛լ ավելի բարձրացրեց և նրան մի անուն շնորհեց, որ բոլոր անուններից բարձր է, որպեսզի բոլոր երկնավորների, երկրավոր մարդկանց, սանդարամետականների, այսինքն՝ դևերի և մեռելների ծունկերը խոնարհվեն Հիսուս Քրիստոսի անվանը: Ամեն լեզու թող դավանի, թե Հիսուս Քրիստոսը Տեր է՝ Հայր Աստծո փառքի համար: Դարձյալ ասում է. Ոչ թե իմ արդարությունն ունենամ, որ օրենքից է, այլ՝ Քրիստոսի հավատքով եղածը, որ Աստծո արդարությունն է: Դարձյալ ասում է. Փրկչին՝ Տեր Հիսուս Քրիստոսին ենք սպասում, որ պիտի մեր խոնարհ մարմինը նորոգի ըստ իր փառավոր մարմնի:

Կողոսացիներին հղած թղթում գրում է.

Լսելով մեր Տիրոջ՝ Քրիստոս Հիսուսի նկատմամբ ձեր հավատքի մասին: Դարձյալ ասում է. Որ մեզ փրկեց խավարի իշխանությունից և մեզ փոխադրեց իր սիրելի Որդու արքայության մեջ, որ պատկերն է

անիրեւույթ Աստծո: Դարձյալ ասում է. Արդ, ինչպես Հիսուս Քրիստոսին՝ Տիրոջն ընդունեցինք, նրանով առաջնորդվենք՝ արմատանալով և նրա վրա կառուցվելով: Դարձյալ ասում է. Քանզի մեռաք, և ձեր կյանքը պահված է Քրիստոսի հետ Աստծո մոտ: Իսկ երբ Քրիստոսը՝ ձեր կյանքը, հայտնվի, այնժամ և դուք նրա հետ փառքով պիտի հայտնվեք:

Թեսաղոնիկեցիներին ուղղված Առաջին թղթում գրում է.

Թեսաղոնիկեցիների եկեղեցուն՝ մեր Հայր Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի շնորհքը և խաղաղությունը ձեզ: Դարձյալ ասում է. Ձեզ Աստծո Ավետարանը քարոզեցինք, և դուք մեզնից ընդունեցիք Աստծո խոսքը, ոչ թե որպես մարդու խոսք, այլ որպես Աստծո ճշմարիտ խոսք: Եվ հրեաների մասին ասում է. Որոնք Տեր Հիսուսին և մարգարեներին սպանեցին և Աստծո աչքից ընկան: Եվ դարձյալ ասում է. Դուք եք մեր պարծանքի պսակը, նաև՝ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի փառքը և խնդությունը՝ նրա գալստյան ժամանակ: Հարության մասին ասում է. Եթե հավատում ենք, որ Հիսուսը մեռավ և հարություն առավ, այդպես էլ Աստված ննջեցյալներին Հիսուսով պիտի բերի, քանզի Տերն ինքը հրեշտակապետի հրամանի ձայնով և Աստծո փողով պիտի իջնի երկնքից և սկզբից Քրիստոսով ննջեցյալները պիտի հարություն առնեն:

Թեսաղոնիկեցիներին հղած Երկրորդ թղթում ասում է.

Թեսաղոնիկեցիների եկեղեցուն՝ մեր Հայր Աստծով և Տեր Հիսուս Քրիստոսով: Մեր Հայր Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը և խաղաղությունը ձեզ հետ: Դարձյալ ասում է. [Քանզի] Աստծո առջև իրավունք ունենք հատուցել ձեզ նեղություն տվողներին և ձեզ՝ նեղյալներիդ՝ մեզ հետ հանգիստ [վայելել], երբ մեր Տեր Հիսուս Քրիստոսը կհայտնվի երկնքից իր զորավոր հրեշտակներով՝ բորբոքված կրակով [վրեժ առնելու]: Եվ դարձյալ ասում է. Եվ ինքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսը և մեր Հայրը՝ Աստված, որ մեզ սիրեց և մեզ տվեց հավիտենական մխիթարություն:

Տիմոթեոսին հղած Առաջին թղթում ասում է.

Պողոսը՝ Հիսուս Քրիստոսի առաքյալ՝ համաձայն մեր Փրկչի և Աստծո՝ մեր հույսի՝ Հիսուս Քրիստոսի հրամանի: Դարձյալ ասում է. Մեր Փրկչի՝ Աստծո առջև նա է բարի և ընդունելի, ով կամենում է, որ բոլոր մարդիկ ապրեն և ճշմարտության գիտությանը գան: Եվ դարձյալ ասում է. Հայտնապես մեծ է աստվածապաշտության խորհուրդը, որ երևաց մարմնով, արդարացավ Հոգով, հայտնվեց հրեշտակներին, քարոզվեց հեթանոսների մեջ, ընդունվեց աշխարհից և փառքով համբարձվեց: Դարձյալ ասում է. Ապավինում ենք կենդանի Աստծուն, որ բոլոր մարդկանց, մանավանդ հավատացյալների փրկիչն է: Դարձյալ ասում է. Որպեսզի դու այն պատ-

վերն անբիծ, անարատ պահես մինչև մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հայտնությունը, որն իր ժամանակին պիտի ցույց տա երանելին և միմիայն Հզորը՝ թագավորների Թագավորը և տերերի Տերը, միայն Նա անմահություն ունի՝ բնակվելու անմատչելի լույսի մեջ, որին մարդկանցից և ոչ ոք չտեսավ, ոչ էլ կարող է տեսնել, որին պատիվ և զորություն հավիտյանս. ամեն:

Տիմոթեոսին հղած Երկրորդ թղթում ասում է.

Շնորհ, ողորմություն և խաղաղություն Հայր Աստծուց և մեր Տեր Քրիստոսից: Դարձյալ ասում է. Բայց այժմ հայտնվեց մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի երևումով, որ մահը խափանեց և լուսավորեց կյանքը և անմահությունն Ավետարանի միջոցով: Եվ դարձյալ ասում է. Հիշիր Հիսուս Քրիստոսին՝ Դավթի սերմից՝ մեռելներից հարություն առածին, ըստ իմ [քարոզած] ավետարանի: Դարձյալ ասում է. Բայց նրանք, ովքեր կամենում են աստվածապաշտությամբ մնալ Հիսուս Քրիստոսի մեջ, հալածանք պիտի կրեն: Սա վկայություն եմ բերում Աստծո և Հիսուս Քրիստոսի առջև, որ դատելու է ողջերին և մեռելներին իր հայտնության և արքայության ժամանակ:

Տիտոսին հղած թղթում գրում է.

Քանզի Աստծո շնորհը՝ բոլոր մարդկանց Փրկիչը երևաց, որ մեզ խրատի, որպեսզի մերժենք ամբարշտությունն ու աշխարհական ցանկությունները: Աշխարհում աստվածապաշտությամբ մնանք և սպասենք երանելի հույսին ու Աստծո մեծ փառքի և մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի հայտնությանը:

Այս վկայությունները Պողոս առաքյալից են: Սրանցից ընդարձակները համառոտեցի, որպեսզի նախ թերավարժ մտքերը չձանձրանան, և [երկրորդ], որովհետև բոլորին ծանոթ են եկեղեցու ամենօրյա ընթերցումներից, [երրորդ], որովհետև եբրայեցիներին հղած թուղթը մեկնությամբ մանրամասնվեց:

Այսքանն այս մասին:

Գլուխ ԻԹ

ՄԵՐ ՏԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԳՐՔԻՑ

Առաջին խոսքը, որ գրեցի. Ավետարանն առաջին խոսք է անվանում: Եվ Հիսուսը սկսեց կատարել և սովորեցնել առաքյալներին, հետո համբարձվեց: Իր չարչարանքներից հետո քառասուն օր նրանց երևաց ու Աստծո արքայության և Սուրբ Հոգու գալստյան, մկրտության մասին խոսեց: Եվ երբ այս ասաց, մինչ նրանք նայում էին, համբարձվեց և ամպը նրան ծածկեց նրանց աչքից: Մինչդեռ ակնդետ երկինք էին նայում նրա ետևից, երկու ճերմակ հանդերձներով մարդիկ երևացին նրանց և ասացին. Այս Հիսուսը, որ ձեզնից երկինք համբարձվեց, այնպես պիտի գա, ինչպես նրա երկինք գնալը տեսաք: Այնտեղ շուրջ հարյուր քսան հոգի կար: Եվ Հուդայի փոխարեն Մատաթիային ընտրեցին: [Հանկարծ] երկնքից սաստկաշունչ հողմի նման ձայն եղավ, որ բովանդակ տունը լցրեց: Եվ նրանց կրակի նման լեզուներ երևացին՝ իրարից բաժանված և նրանց վրա նստեցին: Եվ բոլորը Սուրբ Հոգով լցվեցին և սկսեցին զանազան լեզուներով խոսել, ինչպես Հոգին էր նրանց խոսեցնում: Ու մի (բազմալեզու) բազմություն եկավ ու խռնվեց [այնտեղ], քանզի լսում էին, որ նրանցից յուրաքանչյուրն իր լեզվով էր խոսում: Պետրոսը վեր կենալով ասաց նրանց. Սրանք ոչ թե գինով են, ինչպես դուք եք կարծում, քանզի դեռ օրվա երրորդ ժամն է, այլ սա այն է, որ Հովել մարգարեի միջոցով ասվեց. Իմ Հոգուց յուրաքանչյուր մարմնի վրա պիտի հեղեմ և ձեր տղաներն ու աղջիկները պիտի մարգարեանան, և ձեր երիտասարդները [տեսիլքներ պիտի տեսնեն]: Հիսուս Նազովրեցին, որին փայտի վրա խաչելով սպանեցիք, որին Աստված հարություն տվեց: Քանզի նրա հոգին դժոխքում չմնաց և նրա մարմինն ապականություն չտեսավ: Դավիթ մարգարեին վկայաբերելով [ասում է], թե. Տերն իմ Տիրոջն ասաց. Նստիր իմ աջ կողմում: Բովանդակ Իսրայելի տունը թող ճշմարտապես իմանա, որ Աստված նրան և՛ Տեր, և՛ Օծյալ դարձրեց, այն Հիսուսին, որին դուք խաչեցիք: Ապաշխարեցեք և ձեզնից յուրաքանչյուրը մեղքերի թողության համար թող Տեր Հիսուս Քրիստոսի անունով մկրտվի: Եվ այն օրը շուրջ երեք հազար հոգիներ մկրտվեցին: Պետրոսը և Հովհաննեսն իններորդ ժամին տաճար գնացին: Այնտեղ ի ծնե կաղ մի մարդ կար: Ասում է. Հանուն Նազովրեցի Հիսուս Քրիստոսի՝ ելիր և քայլիր: Եվ նա վեր ցատկելով վազում և օրհնում էր Աստծուն: Պետրոսն ասում է. Ինչո՞ւ եք այս բանի վրա զարմացել. մեր հայրերի Աստվածը փառավորեց իր Որդուն՝ Հիսուսին, որին դուք մատնեցիք և կյանքի առաջնորդին սպանեցիք: Մովսեսը մեր հայրերին ասաց, թե Տեր Աստված ձեր եղբայրներից ձեզ իմ նման մի մարգարե պիտի հանի՝ նրան լսեցեք: Ով նրան չլսի, պիտի

ապանվի իր ժողովրդից: Աբրահամին ասում է. Քո զավակով պիտի օրհնվեն երկրի բոլոր ազգերը: Աստված նախ իր Որդին բարձրացրեց և ուղարկեց՝ ձեզ օրհնելու: Համատեղյալների թիվը հինգ հազարի հասավ: Պետրոսն ասում է. Թող ձեզ բոլորիդ հայտնի լինի, որ Հիսուս Քրիստոսի անունով է սա ձեր առջև բժշկված: Նա է ձեզնից՝ կառուցողներից անարգված վեմը, որ անկյան գլուխ եղավ: Քանզի ուրիշ մեկով փրկություն չկա, և երկնքի ներքո ուրիշ անուն տրված չէ, որով արժան լինի մեզ գոյատևել: Եվ Դավթից վկայություն է բերում. Իշխանները միասին հավաքվեցին Տիրոջ և նրա Օծյալի համար: Եվ Անանիային ու Սափիրային ասում է. Ինչո՞ւ Սուրբ Հոգուն ստեցիք, ոչ թե մարդկանց ստեցիք, այլ՝ Աստծուն: Եվ մեռած ընկան. մեծ ահի մեջ էին այն բոլորը, ովքեր լսեցին այս մասին: Հիվանդներին մահճակալներով դնում էին հրապարակներում, որպեսզի Պետրոսն անցնելիս գոնե նրա ստվերը նրանցից մեկին հասնի: Քահանայապետերն ասում են. Ձեզ չպատվիրեցի՞նք չսովորեցնել նրա անունով: Պետրոսը և մյուս առաքյալներն ասում են. Հարկ է ավելի Աստծուն հնազանդվել, քան մարդկանց: Մեր հայրերի Աստվածը հարություն տվեց Հիսուսին, որին դուք սպանեցիք՝ փայտից կախելով: Քանզի Աստված նրան Առաջնորդ և Փրկիչ կարգեց իր Աջով, և մենք այս բաների վկաներն ենք, նաև Սուրբ Հոգին, որ Աստված տվեց իրեն հնազանդվողներին: Եվ օրենսուսույց Գամաղիելն ասում է. Թույլ տվեք դրանց, քանզի եթե դրանց խորհուրդները և գործերը մարդկանցից լինեն՝ կխափանվեն, իսկ եթե Աստծուց են, ոչ ոք չի կարող խափանել: Եվ առաքյալներին գանահարում էին, որպեսզի Հիսուսի անունով չխոսեն: Նրանք ուրախանալով գնացին, քանզի Քրիստոսի անվան համար արժանի եղան անարգանքի: Եվ ասում են. Մեզ հաճելի չէ Աստծո խոսքը թողնել և սեղանները սպասարկել: Հավատքով և Սուրբ Հոգով լցված Ստեփանոսին ընտրեցին, նաև՝ Փիլիպպոսին, Պրոքորոնին, Նիկանովրին, Տիմոնին, Պարմենին և Նիկողայոսին: Առաքյալներն աղոթելով՝ ձեռքերը նրանց վրա դրեցին: Եվ Ստեփանոսն ասում է. Ահա տեսնում եմ երկինքը բացված և Հիսուսին, որ Աստծո աջ կողմում է: Քարկոծում են Ստեփանոսին, որ գոչում էր՝ ասելով. Տեր Հիսուս, ընդունիր իմ հոգին, Տեր, մեղք մի՛ համարիր սրանց արածը: Եվ այս ասելով՝ նահատակվեց: Եվ Սավուղը, որ Պողոս կոչվեց, մասնակցում էր նրա սպանությանը: Սիմոնը, որ Սամարիայից էր, մկրտվեց Փիլիպպոսի ձեռքով և հրաշքները տեսնելով, զարմացավ: Տեսնելով Պետրոսին և մյուս առաքյալներին, որոնք ձեռք դնելով Սուրբ Հոգին էին տալիս, իր ինչքերը նրանց տալով ասում է. Այդ իշխանությունն ինձ էլ տվեք, որպեսզի ում վրա որ ձեռքս դնեմ՝ Սուրբ Հոգին ընդունի: Եվ Պետրոսն ասում է. Քո արծաթը թող քեզ հետ կորչի, որովհետև կարծեցիր, թե Աստծո պարգևը կարելի է դրամով առնել: Եվ սարկավագներից Փիլիպպոսը ուղեկցում է [եթովպացի] ներքինին, որ Եսայու [մարգարեությունն] էր կարդում. Ոչխարի նման մորթվելու էր

տարվում: Իր բերանը բացելով՝ Փիլիպպոսը Հիսուս Քրիստոսին էր քարոզում նրան: Եվ մի ջրի մոտ հասան: Ներքինին ասում է. Ահա ջուր, էլ ի՞նչն ինձ պիտի արգելի մկրտվել: Նրան ասում է. Եթե [ամբողջ սրտով] հավատաս, կարելի է: Ներքինին ասում է. Հավատում եմ, թե Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է: Եվ երբ ներքինին մկրտվեց, Տիրոջ Հրեշտակը հափշտակեց Փիլիպպոսին, և նա հայտնվեց Ազովտոսում: Երբ Սողոսը Դամասկոսին մոտեցավ, հանկարծ իր շուրջը շլացուցիչ լույս փայլատակեց, ու մի ձայն լսվեց. Սողոս, Սողոս, ինչո՞ւ ես հալածում ինձ: Նա ասաց. Ո՞վ ես, Տեր: Պատասխանում է. Ես եմ Հիսուսը, որին դու հալածում ես: Վեր կաց և քաղաք մտիր: Եվ Անանիայի ձեռքով մկրտվեց: Ու-կամենում էին նրան սպանել: Աշակերտները նրան պարսպից կողովով իջեցրին: Եվ Լյուդիայում մի մարդ կար, որ ութ տարի անդամալույծ պառկած էր մահճակալին: Պետրոսը ասում է նրան. Հիսուս Քրիստոսը քեզ բժշկում է: Եվ անմիջապես վեր կացավ: Հոպպեյում Տաբիթա անունով մի հավատացյալ կին մահացավ: Պետրոսը ծունկի գալով աղոթեց, ավարտելով աղոթքը՝ ասաց. Տաբիթա, Տեր Հիսուս Քրիստոսի անունով վեր կաց: Եվ նա աչքերը բացեց ու նստեց: Կոռնելիոս հարյուրապետը հավատաց Տիրոջը: Պետրոսն անոթանման [պարկի] տեսիլքը տեսավ. ամեն տեսակ կենդանիներ կային նրա մեջ, ու մի ձայն եկավ նրան. Վեր կաց, Պետրոս, մորթիր և կեր: Պետրոսն ասում է. Քավ լիցի, Տեր, որովհետև իմ բերանը պիղծ ու անմաքուր բան երբեք չի մտել: Եվ ասում է. Այն, ինչն Աստված մաքրեց, դու պիղծ մի համարիր: Եվ մինչդեռ այս տեսիլքի վրա զարմացած էր, ներս մտան Կոռնելիոսի մարդիկ, և նրանց հետ գնաց: Նրան ասում է. Դուք գիտեք, թե որքան անպատշաճ է հրեային հպվել կամ մտերմանալ հեթանոսի: [Սակայն] Աստված ինձ ցույց տվեց, որ մարդկանցից ոչ մեկին պիղծ կամ անմաքուր չհամարեմ: Պետրոսն իր բերանը բացեց և ասաց. Ճշմարտությամբ եմ հասել այն բանին, որ Աստծո մոտ աչառություն չկա: Այն բոլոր ազգերը, որոնք երկյուղում են նրանից և արդարություն են անում, ընդունելի են նրան: Աստված իր խոսքն ուղարկեց Հիսուս Քրիստոսի ձեռքով խաղաղություն ավետարանելու. նա է բոլորի Տերը: Հիսուսը, որ Նազարեթից էր, որին Աստված օծեց Սուրբ Հոգով և զորությամբ, և մեզ պատվիրեց վկայել, թե նա է Աստծո սահմանած ողջերի ու մեռելների դատավորը, և բոլոր մարգարեները վկայում են, թե բոլոր հավատացյալները նրա անունով մեղքերի թողություն են ստանում: Քանի դեռ Պետրոսը խոսում էր, Սուրբ Հոգին իջավ բոլոր նրանց վրա, ովքեր լսում էին նրա խոսքը: Եվ նրանց հրամայեց մկրտվել Հիսուս Քրիստոսի անունով: Բայց երբ Պետրոսը Երուսաղեմ մտավ, թլփատվածները [սկսեցին] նրա հետ վիճել՝ ասելով, թե անթլփատների մոտ է գնում և նրանց հետ ուտում: Եվ նա նրանց պատմեց տեսիլքը՝ Այն, ինչ Աստված մաքրեց, դու պիղծ մի՛ համարիր: Պողոսը և Բառնաբասը իրենց աշակերտներին քրիստոնյա անվանեցին նախ Անտիոքում: Այն

ժամանակ Հերովդեսը սրով սպանեց Հակոբոսին՝ Հովհաննեսի եղբորը: Եվ Պետրոսին բանտ նետեց: Դրանից հետո Տիրոջ հրեշտակը նրան (Հերովդեսին) հարվածեց և որդնաշերվ սատկեց: Ու Աստծո խոսքն աճում և զորանում էր: Պողոսը կուրացրեց Եղիմաս մոգին: Պողոսը ոտքի կանգնեց, ձեռքը շարժեց և նրանց, ըստ Սուրբ Գրքի, մեռելներից հարությունն առած Հիսուս Քրիստոսին քարոզեց: Ի ծնե կաղ լյուստրացի մի մարդու Պողոսն ասում է. Մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի անունով քեզ եմ ասում, վեր կաց: Եվ [նա] վեր կենալով վազում ու քայլում էր: Ժողովուրդն ու նրանց քուրմը կամենում էին նրան զոհ մատուցել: Սակայն Պողոսը պատռեց իր հանդերձները և հազիվ նրանց լռեցրեց: Հակոբոսն ու առաքյալները Երուսաղեմից Անտիոք և Կիլիկիա են գրում. Լսեցինք, թե ոմանք ձեզ անհանգստացնում են՝ թլփատվել և օրենքները պահել, ինչի մասին չենք կարգադրել: Սուրբ Հոգուն և մեզ հաճո թվաց ավելի ծանր բեռ չդնել ձեզ վրա, բայց միայն չորս բանից հեռու մնալ՝ կուռքերի զոհերից, արյունից, խեղդվածից և պոռնկությունից: Պողոսը լյուստրացիների Իկոնիա քաղաքում Տիմոթեոս անունով մի աշակերտ գտավ և այնտեղի հրեաների պատճառով նրան թլփատեց: Գնացին Մակեդոնիա և [այնտեղ] ծիրանավաճառ մի կին հավատաց Տիրոջը: Եվ մի աղախին, որ չար ոգի ուներ, աղաղակում և ասում էր. Այս մարդիկ Բարձրյալ Աստծո ծառաներն են: Եվ Պողոսն ասում է չար ոգուն. Հիսուս Քրիստոսի անունով պատվիրում եմ քեզ՝ դուրս եկ դրա միջից, նույն պահին դուրս եկավ: Եկան Թեսաղոնիկե, և Պողոսը մեկնաբանում էր Գիրքը, թե՝ Քրիստոսին հարկ էր չարչարվել և մեռելներից հարություն առնել, և թե նա է Քրիստոս Հիսուսը, որի մասին պատմում եմ ձեզ: Եվ այնտեղից Աթենք գնալով, այնտեղ նրանց քարոզեց և ասաց. Մի օր կանխորոշեց, որի մեջ բոլորին դատելու է: Այնտեղ Դիոնիսիոս Արիսպագացին հավատաց: Եկավ Կորնթոս, և ժողովրդապետ Կրիսպոսը հավատաց Քրիստոսին: Պողոսը Եփեսոս եկավ և Հովհաննեսից մկրտվածներին Քրիստոսով մկրտեց և ձեռքը նրանց վրա դրեց և Սուրբ Հոգին առացան: Թաշկինակով տանում էին Պողոսի քրտինքը, որը հիվանդություններ էր բուժում և չար ոգիներ [վանում]: Այնտեղ էին հրեա Սկևա քահանայի որդիները, ովքեր Հիսուս Քրիստոսի անունով չար ոգիներ էին հալածում՝ ասելով. Երդվեցնում եմ քեզ Հիսուսով, որին Պողոսն է քարոզում: Եվ այնտեղ կախարդների գրքերն այրեցին, և նրանց գինը համրելով իմացան, որ հիսուն հազար արծաթ է: Այնտեղ արծաթագործ Դեմետրիոսը, որ արծաթե մեհյաններ էր պատրաստում Արտեմիս չաստվածուհու համար, շատ հակառակվեց: Եվ Տրովադայում, երբ Պողոսը երկարորեն խոսում էր, Տյուքիկոս (Եվտիքոս) անունով մի երիտասարդ խորը քնի մեջ ծանրանալով, տան երրորդ հարկից ընկավ և մահացավ: Ու Պողոսը նրան իր գիրկը վերցնելով, հարություն տվեց: Միլետոսից գալով Եփեսոս ասում է. Հափշտակող գայլեր պիտի գան, և էլ չեք տեսնելու իմ երեսը: Այնտեղ ասաց. Երանելի

է մանավանդ տալը, քան առնելը: Եվ ասում էին Պողոսին. Մի գնա Երուսաղեմ, քանզի այնտեղ շղթաներ և նեղություններ են սպասում քեզ: Պողոսը պատասխանում է. Ես ոչ միայն շղթայվելու, այլև հանուն Քրիստոսի անվան մեռնելու իսկ պատրաստ եմ Երուսաղեմում: Եվ Երուսաղեմում Հակոբոսն ասաց Պողոսին. Տեսնո՞ւմ ես, որքան շատ են հավատացյալները, որոնք օրենքի նախանձավորներ են: Նա (Պողոսը) վերցրեց այդ ուխտավոր մարդկանց և մաքրվեց ու տաճար մտավ: Եվ դատի ժամանակ ասում է. Ես Կիլիկիայի Տարսոն (քաղաքում) ծնված հրեա եմ՝ դաստիարակված այդ քաղաքում: Եվ պատմեց այն, ինչ տեսել էր Դամասկոսի ճանապարհին: Հրեաները աղաղակեցին և փակերով կապանեցին նրան: Պողոսը հարյուրապետին ասում է, թե՝ Արդա՞ր է արդյոք մի հռոմեացի և տակավին չդատապարտված մեկին ծեծել: Եվ մյուս օրը դատի բերվեց Աննա քահանայապետի մոտ և ասաց. Աստված [էլ] քեզ պիտի հարվածի, ծեփած պատ: Եվ ասում է, թե չգիտեի, որ քահանայապետ է: Ասում է. Ես փարիսեցի եմ և փարիսեցու որդի և հարության հույսի համար եմ դատվում: Այնտեղ քառասուն հոգի նզովեցին իրենց անձերը, մինչև չսպանեն Պողոսին: Իսկ հազարապետը նրան Կեսարիա իջեցրեց Փելիքսի մոտ: Եվ այնտեղ գնաց Անանիա քահանայապետը, տաճարապետ Տերտուղիոսը: Պողոսն այնտեղ երկու տարի մնաց: Հետո կայսերը բողոքեց, և Ագրիպպասին էր պատասխանում: Եվ հիշեց նրան, որ Դամասկոսի ճանապարհին երևաց իրեն: Եվ այնտեղից հարյուրապետ Հուլիոսի ձեռքով Հռոմ ուղարկվեց: Եվ նավելիս բազում վիշտ կրեցին: Նավը ընկղմվեց: Ու նրանք, հազիվ փրկվելով, Հռոմ հասան: Ասում է. Լավ ասաց Սուրբ Հոգին Եսայու միջոցով. Լսելով պիտի լսեք ու չիմանաք: Եվ երկու տարի մնաց Հռոմում ու Աստծո արքայությունն էր քարոզում և անարգել, ամենայն համարձակությամբ Տեր Հիսուս Քրիստոսի մասին էր սովորեցնում: Եվ այստեղ ավարտվում է Ղուկասի գրած Գործոց (պատմությունը): Բայց սրանից հետո Հռոմից ազատ արձակվելով տասը տարի քարոզեց բովանդակ աշխարհում: Եվ հետո Հռոմ վերադարձավ ու նահատակվեց Ներոն կայսեր օրոք. Պողոսը գլխատվեց, և Պետրոսը խաչվեց ի փառս մեր Աստծո՝ Քրիստոսի:

Մեր Տիրոջ մասին այսքան վկայությունները հավաքվեց Գործք [Առաքելոց] գրքից:

Գլուխ Լ

ՄԵՐ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՎԱՔՎԱԾ ԿԱԹՈՂԻԿԵ ԹՂԹԵՐԻՑ

Նախ Հակոբի թղթից,

ուր ասվում է. Հակոբոս՝ Աստծո և Տեր Հիսուս Քրիստոսի ծառա՝ տասներկու ցեղերին, որ ցրված եք, ողջույն: Ամեն բարի տուրք վերևից է իջնում, լուսո Հորից: Կամենալով ծնեց մեզ ճշմարտության խոսքով: Եղբայրներ, աչառությամբ հավատք մի ունեցեք մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի՝ փառքի Տիրոջ (նկատմամբ): Մի՛ պարծենաք սուտ համարել ճշմարտությունը: Այս իմաստությունը վերևից չի իջել, այլ երկրավոր է, շնչավոր և դիվական: Քանզի՝ ուր կռիվ և նախանձ կա, այնտեղ կա անկարգություն և ամեն տեսակ չարիք: Իսկ վերին իմաստությունը նախ և առաջ սուրբ է, ապա խաղաղարար, հեզ, դյուրահավան, ողորմությամբ և բարի պտուղներով լի, անկողմնակալ, առանց կեղծավորության: Արդարության պտուղը խաղաղությամբ է սերմանվում նրանց համար, ովքեր խաղաղություն են անում: Համբերող եղեք, եղբայրներ, մինչև Տիրոջ գալուստը: Ահավասիկ, դատավորը դրան մոտ է: Հոբի համբերության մասին լսել եք և նրա համար Տիրոջ սահմանած վախճանը տեսաք. քանզի Տերը բազմագութ և ողորմած է:

Վկայություններ Պետրոսի Առաջին թղթից.

Պետրոս՝ Հիսուս Քրիստոսի ծառա՝ օտարականներից ընտրված, որոնք սփռված են [Պոնտոսի... Բութանիայի երկրներում]: Հայր Աստծո կանխագիտությամբ, Հոգու սրբությամբ հնազանդության և Հիսուս Քրիստոսի արյան հեղումի համար: Օրհնյալ է Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որն իր առատ ողորմածությամբ մեզ վերստին ծնեց կենդանի հույսի (ապավինությամբ), դեպի անեղծ, անարատ և անթառամ ժառանգությունը, որ ձեզ համար պահված է երկնքում: Ձեր հավատքի փորձառությունը ավելի պատվական է, քան կորստաբեր ոսկին, որ կրակով է փորձվում գովության, փառքի և պատվի համար Տեր Հիսուս Քրիստոսի հայտնության մեջ, որին չտեսած սիրեցիք, որին այժմ չտեսնելով հավատացիք, և ուրախ եք՝ անճառ և փառավորյալ խնդությամբ: Գուշակում էր Քրիստոսի Հոգին, որ նրանց մեջ էր, որ նախ Քրիստոսի չարչարանքի մասին է վկայում և հետո՝ փառքի: Նրանց հայտնվեց, որով ձեր մտքի մեջքը գոտեպնդած կատարյալ հույսով սպասեք այն շնորհին, որ ձեզ հասնում է Հիսուս Քրիստոսի հայտնության մեջ: Իմացե՛ք, որ ոչ թե ապականացու արծաթեղենով և ոսկեղենով փրկվեցիք, այլ Քրիստոսի, որպես անբիծ և անարատ գառան պատվական արյունով, վերստին ծնված ոչ թե ապականացու սերմից, այլ անապական՝ Աստծո կենդանի և հավիտենական խոսքով: Եվ Աստծո խոսքը մնում է հավիտյան, այսինքն՝ այն

խոսքը, որ ձեզ ավետարանվեց: Դուք էլ որպես կենդանի քարեր կառուցվեք իբրև հոգևոր տաճար՝ Հիսուս Քրիստոսի ձեռքով Աստծո հաճո պատարագ մատուցելու համար: Որովհետև (արդեն) Գրքում կա, թե՝ Ահավասիկ Սիոնում անկյան գլուխ ընտիր քար եմ դնում, և ով նրան հավատա, պիտի չամաչի: Ձեզ՝ հավատացյալներիդ համար պատվական քար է, իսկ անհավատների համար քարը, որ անարգեցին կառուցողները, գլորման և գայթակղության քար [եղավ], որով նրանք գայթակղվում են՝ չենթարկվելով խոսքին, որի մեջ դրված են: Քանզի Հիսուսը մեռավ ձեզ համար և ձեզ օրինակ թողեց, որպեսզի նրա հետքով գնաք: Քրիստոսը մի անգամ ձեզ համար մեռավ, որպեսզի ձեզ Աստծուն մոտեցնի: Թեպետև մարմնով մեռավ, բայց կենդանի է հոգով, որով և քարոզեց բանտում եղած հոգիներին էլ, որոնք [մի ժամանակ] ապստամբ էին: Նոյի օրերում տապանը պատրաստելիս, որի մեջ շատ քչերը, այսինքն՝ ութ հոգի ջրից փրկվեցին. ըստ նույն օրինակի մկրտությունը ձեզ կփրկի ոչ թե մարմնի աղտից ձերբազատվելով, այլ բարի խղճմտանքի վկայությունն Աստծո նկատմամբ [ունենալով]՝ Հիսուս Քրիստոսի հարությամբ, որ գնացել է երկինք և Աստծո աջ կողմում է, հրեշտակները, իշխանությունները և զորությունները նրան են հնազանդվում: Քրիստոսը մեզ համար մարմնով չարչարվեց, դուք էլ նույն մտքով զինավառվեք: Ով մարմնով չարչարվի՝ ձերբազատվում է մեղքերից: Ովքեր պատասխան են տալու նրան, որ պատրաստ է դատել կենդանիներին և մեռելներին: Նույնը և մեռելներին է խոստացել, որպեսզի դատվեն մարմնով՝ ըստ մարդու և ապրեն Հոգով՝ ըստ Աստծո: Որ ամենայն ինչով Աստված փառավորվի Հիսուս Քրիստոսի միջոցով, որին փառք և զորություն հավիտյանս. ամեն: Եթե Քրիստոսի անվան համար նախատվեք, երանելի եք, քանզի [նրա անունը] փառքի և զորության անունն է, և Աստծո Հոգին ձեր վրա կհանգչի: Երեցներին աղաչում եմ որպես երեցակից և վկա Քրիստոսի չարչարանքների և հաղորդակից ապագայում հայտնվելիք փառքի, արածեցրեք Աստծո հոտը, որ ձեզ մոտ է, որպեսզի, երբ հովվապետը երևա, ընդունեք անթառամ փառքի պսակը: Եվ բոլոր շնորհների Աստվածը, որ ձեզ հավիտենական փառքին կանչեց Քրիստոս Հիսուսով, որին մի քիչ չարչարակից լինելուց հետո, թող ձեզ նորոգի, զորացնի, հաստատի, հիմնի: Նրան իշխանություն, փառք հավիտյանս: Խաղաղություն ընդ ձեզ, որ Քրիստոս Հիսուսի մեջ եք. ամեն:

Տիրոջ մասին վկայություններ Պետրոսի Երկրորդ թղթից.

Շմավոն Պետրոս՝ Աստծո ծառա, Հիսուս Քրիստոսի առաքյալ, որ [մեզ հետ նույն պատվական] հավատքին հասաք մեր Աստծո և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի արդարությամբ: Շնորհքը և խաղաղությունը ձեզ հետ թող բազմանան Աստծո և մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի գիտությամբ, որով մեծամեծ և պատվական ավետյաց պարգևներ են տրված մեզ, որպեսզի

նրանցով աստվածեղեն փառքին հաղորդակից լինենք: Քանզի այսպես ձեզ պիտի շնորհվի մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հավիտենական արքայությունը: Ոչ թե վարդապետությամբ հորինված առասպելներով ենք ձեզ ցույց տալիս մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի զորությունն ու գալուստը, այլ նրա մեծության ականատես լինելով: Քանզի ինքը Հայր Աստծուց փառք և պատիվ առավ, ու մեծ վայելչության փառքից մի ձայն եկավ. Դա է իմ սիրելի Որդին, որին հավանեցի: Եվ երկնքից եկած այս ձայնը մենք իսկ լսեցինք, երբ նրա հետ էինք սուրբ լեռան վրա: Եվ հաստատում է մարգարեի խոսքը. Մինչև ցերեկը լուսավորվի, և արեգակը ձեր սրտերի մեջ ծագի: Տերը գիտե աստվածապաշտներին փորձություններից փրկել և անիրավներին պահել դատաստանի օրվա տանջանքի համար: Եթե մեր Տիրոջ և Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի գիտությամբ աշխարհի պղծություններից հրաժարվածները դարձյալ նույն բաներով զբաղվեն, նրանց վախճանը առաջիններից չար է լինելու: Տիրոջ մեկ օրը հազար տարվա նման է, և հազար տարին՝ մեկ օրվա: Բայց գողի նման պիտի գա Տիրոջ օրը, և այն ժամանակ երկինքը սաստիկ շառաչյունով պիտի անցնի: Սակայն ձեզ հարկ է սրբությամբ և աստվածապաշտությամբ սպասել Տիրոջ գալստյան օրվան: Աճեցե՛ք մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհքով և գիտությամբ. նրան փառք այժմ և հավիտյանս հավիտենից. ամեն:

Տիրոջ մասին վկայություններ Հովհաննեսի Առաջին թղթից.

Որ սկզբից էր, որի մասին լսեցինք, որին ականատես եղանք, որ նայեցինք, և մեր ձեռքերը շոշափեցին Կենաց Բանը: Եվ կյանքը հայտնվեց, և տեսանք և վկայում ենք և պատմում ձեզ, որպեսզի դուք էլ հաղորդակից լինեք մեզ: Նրա Որդու՝ Հիսուսի արյունը մեզ մաքրում է բոլոր մեղքերից: Եթե խոստովանենք մեր մեղքերը, նա հավատարիմ և արդար է մեր մեղքերին թողություն տալու: Որդիներ, այս ձեզ եմ գրում, որպեսզի մեղք չգործեք, և եթե մեկը մեղք գործի, Աստծո մոտ բարեխոս ունենք Հիսուս Քրիստոսին՝ Արդարին և Անարատին: Նա ոչ միայն մեր մեղքերի քավությունն է, այլև՝ բովանդակ աշխարհի: Ինչպես լսեցիք, Նեռը պիտի գա, սակայն արդեն իսկ բազում նեռեր են եկել: Դուք օծություն ունեք Սրբից: Ո՞վ է ստախոս, եթե ոչ նա, որ ուրանում է, որ Հիսուսը Քրիստոսն է. հենց նա է Նեռը, ով ուրանում է Հորը և Որդուն: Յուրաքանչյուր ոք, ով ուրանում է Որդուն՝ չի ընդունում Հորը, իսկ ով խոստովանի Որդուն՝ նա Հորն է ընդունում: Ում մասին սկզբից լսեցիք՝ թող ձեր մեջ բնակվի, դուք էլ Որդու և Հոր մեջ պիտի բնակվեք: Եվ օծությունը, որ նրանից ընդունեցիք, թող ձեր մեջ բնակվի, և նրա օծությունը թող ձեզ սովորեցնի: Տեսեք՝ ինչպիսի՜ սեր շնորհեց մեզ Հայրը, որպեսզի մենք Աստծո որդիներ կոչվենք: Գիտենք. երբ նա հայտնվի, նրա նման պիտի լինենք, որովհետև նրան տեսնելու ենք, ինչպես որ է: Ով արդարություն անի, արդար է, ինչպես նա է արդար, և ով մեղք գործի՝ սատանայից է: Այդ պատ-

ճառով Աստծո Որդին հայտնվեց, որպեսզի խափանի սատանայի գործը: Յուրաքանչյուր ոք, ով Աստծուց է ծնվել, մեղք չի գործում, որովհետև նրա սերմը նրա մեջ է մնում, և չի կարող մեղանչել, քանզի Աստծուց է ծնվել: Սրանցով են հայտնի Աստծո որդիները և սատանայի որդիները: Յուրաքանչյուր ոք, ով արդարություն չի անում՝ նա Աստծուց չէ, և ով չի սիրում իր եղբորը՝ [մահվան մեջ է]: Յուրաքանչյուր ոք, ով ատում է իր եղբորը, մարդասպան է, և ամեն մարդասպան իր անձի մեջ չունի հավիտենական կյանք: Սրանով իմացանք Աստծո սերը, քանզի նա իր անձը դրեց մեզ համար, մենք էլ մեր եղբայրների համար մեր անձը պիտի դնենք: Այս է նրա պատվիրանը. որ հավատանք նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի անվանը: Սիրենք միմյանց, ինչպես պատվեր տվեց մեզ: Յուրաքանչյուր հոգի, ով Հիսուս Քրիստոսին չի խոստովանում մարմնով եկած՝ նա Աստծուց չէ: Յուրաքանչյուր հոգի, ով Հիսուս Քրիստոսին խոստովանում է մարմնով եկած՝ նա Աստծուց է: Մենք Աստծուց ենք. ով ճանաչում է Աստծուն՝ լսում է մեզ, և ով Աստծուց չէ՝ չի լսում մեզ: Սրա մեջ երևաց Աստծո սերը մեր նկատմամբ. քանզի Աստված իր Միածին Որդուն ուղարկեց աշխարհ, որպեսզի նրանով կենդանի լինենք: Եվ մենք տեսանք ու վկայում ենք, որ Հայրն իր Որդուն աշխարհի Փրկիչ ուղարկեց: Ով խոստովանի, թե Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծո Որդի, Աստված նրա մեջ է բնակվում, և նա՝ Աստծո մեջ: Աստված սեր է. ով սիրո մեջ է՝ Աստծո մեջ է բնակվում և Աստված՝ նրա մեջ: Ով հավատա, թե Հիսուսը Քրիստոսն է՝ Աստծուց է ծնվել: Ով սիրում է ծնողին, սիրում է նաև նրանից ծնվածին: [Ո՞վ է, որ հաղթում է աշխարհին, եթե ոչ նա,] ով հավատա, թե Հիսուս Քրիստոսն Աստծո Որդի է: Նա է, որ ջրով և հոգով եկավ և Հիսուս Քրիստոսի արյամբ. ոչ միայն ջրով, այլև արյամբ և ջրով, քանզի Հոգին ինքը ճշմարտությունն է: Այս երեքն են, որ վկայում են. հոգին, ջուրը և արյունը, և երեքը մեկ են: Ով ընդունի Աստծո Որդուն, կընդունի և կյանքը, ով չընդունի Աստծո Որդուն, կյանքը չի ընդունի: Իմացե՛ք, որ հավիտենական կյանք ունեք, քանզի Աստծո Որդու անվանն եք հավատում: Գիտենք, որ Աստծո Որդին եկավ և մեզ միտք տվեց, որպեսզի ճանաչենք ճշմարիտ Աստծուն: Եվ մենք այն Ճշմարտի՝ նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ ենք, քանզի նա է ճշմարիտ Աստվածը և հավիտենական կյանքը:

Տիրոջ մասին վկայություններ Հովհաննեսի Երկրորդ թղթից.

Շնորհքը, ողորմությունը, խաղաղությունը Հայր Աստծուց և Տեր Հիսուս Քրիստոսից՝ Հոր Որդուց, մեզ հետ լինի ճշմարտությամբ և սիրով: Ով չի խոստովանում Հիսուս Քրիստոսին մարմնով եկած, նա մոլորեցնող է և Նեռ: Ամեն ոք, ով հանցանք է գործում, Քրիստոսի վարդապետության մեջ չէ, [նա] չի ճանաչում Աստծուն, իսկ ով նրա վարդապետության մեջ է, նա Որդուն և Հորն է ընդունում:

Վկայություններ Հովհաննեսի Երրորդ թղթից.

Սրանից ավելի մեծ ուրախություն չունեմ, երբ լսում եմ, թե իմ որդիները ճշմարտությամբ են քայլում: Եթե աստվածահաճո կերպով նրանց ճանապարհես, լավ կանես, քանզի անվան համար ճանապարհվեցին և հեթանոսներից չեն առնում: Մենք այսուհետև պարտավոր ենք ընդունել այնպիսիներին, որպեսզի ճշմարտության գործակից լինենք: Ով բարիք է գործում՝ Աստծուց է, իսկ ով չարիք է անում՝ երբեք Աստված չի տեսել:

Վկայություններ Տիրոջ մասին Հուդայի Կաթողիկե թղթից.

Հուդա՝ Հիսուս Քրիստոսի ծառա և Հակոբի եղբայր, ձեզ՝ հեթանոսներից, որ Աստծո սիրելիներն եք և Հիսուս Քրիստոսից պահված և ընտրված, ողորմություն, խաղաղություն և սերը թող ձեր վրա բազմանան: Որոշ ամբարիշտներ, ովքեր մեր Աստծո շնորհներն անառակության վերածեցին և միակ իշխանին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին ուրացան, ինչպես Սոդոմ Գոմորում ապականված իրենց ընկերների մարմինների հետ, և հավիտենական կրակի պատուհասն ընդունեցին նույն օրինակով: Եվ սրանք ցնորվածների նման մարմինն են պղծում, Տեր Հիսուսին են քամահրում, փառքը հայհոյում: Մովսեսի մարմնի համար Միքայել հրեշտակապետը բանսարկու սատանային ասում է. Տերը հանդիմանի քեզ: Իսկ սրանք որ ոչինչ չգիտեն, հայհոյում են նաև նրանց, որ բնությամբ անբան անասունների նման գիտեն, նրանց մեջ պիտի ապականվեն: Վա՜յ է նրանց, որովհետև Կայենի ճանապարհով գնացին, և Բաղաամի մոլորությամբ այլանդակվեցին և Կորխի հակառակությամբ կորան: Սրանք սիրո խրախճանքներում մոլեգնող արատներ, անջրդի ամպեր, պտղակորույս ծառեր, ծովի անսանձ ալիքներ, մոլորված աստղեր են, որոնց համար խավարի վիհն է պահված հավիտյան: Բայց խիստ խոսքերի համար ամբարիշտներն ու մեղավորները նրա դեմ խոսեցին: Նրանց բերաններն ամբարտավան խոսքեր են խոսում, շահի համար երեսպաշտություն են անում: Սրանք նշավակված շնչավորներ են, որոնք չունեն Հոգի: Բայց մենք, սիրելիներ, մեր անձերը պատրաստեցինք հավատքի սրբությամբ՝ Սուրբ Հոգով՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի ողորմության ակնկալությամբ հավիտենական կյանքի համար: Նրան, որ ձեզ կարող է անարատ ու անբիծ պահել, իր առջև հաստատել անթերի ցնծությամբ, միակ Աստծուն և մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսին փա՜ռք, մեծություն, զորություն և իշխանություն բոլոր ժամանակներից առաջ. ամեն:

Սրանք են մեր Տեր Հիսուս Քրիստոսի մասին վկայությունները, որոնք հավաքված են Գործք Առաքելոցից և Կաթողիկե թղթերից ի փառս մեր Աստծո՝ Քրիստոսի:

Գլուխ ԼԱ

ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆՉԻ ՆՆՋՈՒՄԻՑ

Երանելի Հովհաննեսը եղբայրների հետ մեծ ուրախությամբ Տիրոջ մեջ էր: Եղբայրներ և Տիրոջ արքայությանը հաղորդակից [այրեր], Տերը ձեզ ողջունում և մաղթում է. Թող ձեզնից չարամի բարերար Աստված, [որ] գթած է, ողորմած, անարատ, միակ, անփոփոխ, ստույգ, որ ամեն տեսակ մեկնաբանելի և իմանալի բաներից վեր է՝ Աստված իմ Հիսուս Քրիստոս: Մեր Աստծո գրավականն ունենք, նաև՝ սուրբը և անհրաժեշտ գալուստը: Եթե անգիտությամբ եք մեղք գործել՝ Աստված կթողնի [ձեր մեղքը]: Իսկ եթե գիտակցաբար եք մեղք գործել և նրանից ողորմություն գտել և [սակայն դարձյալ] շարունակել նույն ընթացքը, ապա առաջինն էլ կվերցվի ձեզնից, և նրանից մասն ու ողորմություն չեք գտնի: Ո՛վ Աստված, քո հյուսումով հյուսեցիր այս պսակը, քո կենարար խոսքը սերմանեցիր: Դու, հենց միայն դու ես բժիշկ, որ ձրի ես բժշկում: Դու, հենց միայն դու ես բարերար, ողորմած և մարդասեր: Դու, հենց միայն դու ես արդար և փրկիչ: Դու, որ միշտ կաս, բոլորի մեջ, ամենուրեք, մոտիկ ես, Աստված իմ Հիսուս: Եվ հաց խնդրեց ու գոհանալով ասաց. Հացը կտրելով ո՞ւմ օրհնություն կամ ո՞ւմ գոհություն մատուցենք. Հիսուս, միայն քեզ փառաբանենք, քո ճանապարհը փառաբանենք, մեծությունը, ազատությունը, քանզի դու ես անմահության արմատը, անապական աղբյուրը և հավիտենական հիմքը: Որդեգրի սրանով իմանանք քո մեծությունը, որ այս ժամանակի մեջ անտեսանելի է, բայց տեսանելի միայն արդարին, և միայն Քո՝ մարդու կերպարանք ստացածի մեջ: Եվ հացը կտրելով՝ նրանց բաշխեց՝ արժանի լինել Տիրոջ շնորհներին: Նրանց փոխելու ժամանակ կյանքի խոսքն էր խոսում՝ Տիրոջ մեծությամբ կառուցվելու և հաստատվելու համար: Եվ այսպես էր աղոթում. Դու, որ մեզ ընտրեցիր առաքելագործելու հեթանոսների մեջ: Դու, որ քեզ հանձնեցիր ծարավածներին: Դու, որ հակառակորդին հաղթեցիր քեզ ապավինողների համար: Դու, որ մեզ ձերբազատեցիր դժոխական ախտից: Դու, որ մաքրեցիր քո գիտությունը, Աստված իմ Հիսուս: Դու, որ Հայրն ես որբերի՝ երկնքի [որբերից] ավելի և Աստվածը երկնավորների: Դու, որ ինձ գերծ պահեցիր կանանց մերձավորությունից: Դու, որ իմ՝ կանանց վրա նայելը ծանր [մեղք] համարեցիր: Դու, որ ինձ գերծ պահեցիր մարմնավոր աղտեղություններից: Դու, որ դառն մահից ինձ փրկեցիր, քո մեջ հաստատեցիր և [դեպի] մշտնջենավոր կյանք առաջնորդեցիր: Դու, որ դեպի քեզ տանող իմ ճանապարհն անբիծ դարձրեցիր: Դու, որ քո նկատմամբ իմ հավատքն աներկբա դարձրեցիր: Դու, որ քո միջի սուրբ գիտությունն ինձնով սահմանեցիր: Դու, որ յուրաքանչյուր գործի արժանավոր վարձն ես հատու-

ցում: Եվ արդ, Տեր իմ Հիսուս, շնորհը, որ ընդունեցի քեզնից, կատարեցի: Արժանի դարձրու ինձ հանդիպադ փայլիդ՝ քո ողորմությանը շնորհելով ինձ: Եվ իմ՝ գնալի քեզ գալիս թող ընկրկի կրակը, հեռանա խավարը, տկարանա վիհը, մարի գեհենը, ամաչեն չարի հրեշտակները, երկյուղեն դևերը, պապանձվի բանսարկուն, զարհուրի սատանան, և չվարեն նրա արմատները: Այս խաչակնքելով իրեն՝ ասում է. Դու ինձ հետ եղիր, Տեր իմ Հիսուս Քրիստոս: Եվ ընկղմվեց փառի մեջ ու տաղ մեջ. խաղաղություն ընդ ձեզ, իմ եղբայրներ: Եվ մինչդեռ ասում էինք՝ երանելի Հովհաննեսն իր հոգին ավանդեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի ձեռքը, որին փառք հավիտյանս հավիտենից. ամեն:

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մասին այս և սրանից ավելի վկայություններ հավաքելով համառոտեցի և սակավ մասը գրեցի:

Այսուհետև վկայաբերենք Հովհաննեսի տեսիլքը և այնտեղ տանենք:

Գլուխ ԼԲ

ՄԵՐ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՎԵՏԱՐԱՆՉԻ ՏԵՍԻԼՔԻ ԳՐՔԻՑ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Գլուխ առաջին. *Հիսուս Քրիստոսի Հայտնությունը, որի միջոցով Աստված իր ծառաներին ցույց է տալու այն, ինչ շուտով պիտի լինի: Հիսուս Քրիստոսի վկայությունն այս է, որ տեսավ, որ էր և որ լինելու էր դրանից հետո: Շնորհք ձեզ հետ և խաղաղություն նրանից, որ է, որ էր և որ գալու է, և յոթ հոգիներից, որ նրա Աթոռի առջև են, Հիսուս Քրիստոսի հավատարիմ վկայից, որ մեռելների անդրանիկն է և երկրի թագավորների իշխանը, նրան, որ սիրեց մեզ և արձակեց մեր մեղքի կապանքներն իր արյամբ և մեզ թագավորներ ու քահանաներ դարձրեց Աստծու ու իր Հոր համար: Նրան փառք և զորություն հավիտյանս հավիտենից: Ահավասիկ գալու է երկնքի ամպերով և ամեն աչք նրան տեսնելու է, [նաև նրանք,] որ խոցեցին նրան, և նրա վրա կոծելու են երկրի բոլոր ազգերը: Այո, ամեն: Ես եմ Ալֆան և Օմեգան, ասում է Տերը, որ է, որ էր, որ գալու է՝ ամենակալ Տերը:*

Մեկնություն. *Հայտնություն է համարվում ծածուկ խորհուրդների երևալը: «Որ է»՝ Հորն է ցույց տալիս՝ ինչպես Մովսեսն է ասում. Ես եմ, որ է: «Որ էր»-ը Բանն է [ցույց տալիս], ըստ այն խոսքի՝ «Ի սկզբանե էր Բանն», իսկ Որ գալու է՝ Մխիթարիչ [Սուրբ Հոգին], որը հետո Քրիստոսի համար ասվեց:*

Գլուխ երկրորդ. *Եվ կիրակի օրը Հոգին իմ մեջ իջավ: Ու փողի նման բարձր ձայն լսեցի. Ես եմ Ալֆան և Օմեգան, Առաջինը և Վերջինը: Շրջվեցի ու տեսա յոթը ոսկի ճրագարան, և ճրագարանների մեջ մարդու Որդու նման [մեկին]՝ պճղնավոր [պատմուճան] հագած և ստինքների մոտ ոսկեղեն գոտիով: Երբ տեսա, մեռելի նման նրա ոտքերի մոտ ընկա: Իր Աջն իմ վրա դրեց և ասաց. Մի՛ վախեցիր, ես եմ Սկիզբը և ես եմ Վախճանը, ես եմ Կյանքը, ես [այն] եմ, որ մեռած էի, և ահավասիկ կենդանի եմ հավիտյանս հավիտենից: Մահվան և դժոխքի բանալիներն ունեմ: Գրիր, ինչ տեսնում ես, ինչ կա և ինչ լինելու է:*

Մեկնություն. *Յոթ ոսկի ճրագարանների մեջ, այսինքն՝ Քրիստոսը եկեղեցու մեջ, [որ] լուսատու և անապական բնություն [ունի]:*

Գլուխ երրորդ. *Այսպես է ասում նա, որ իր աջ ձեռքում յոթ աստղ ունի և շրջում է յոթ ոսկի աշտանակների մեջ. Տեսա քո գործը, վաստակը և համբերությունը: Այլապես՝ ես շուտ կգամ և կշարժեմ քո աշտանակը, եթե չապաշխարես: Ով ականջ ունի, թող լսի: Ով հաղթի՝ նրան Աստծու դրախտում կենաց ծառից կտամ ուտելու:*

Մեկնություն. *Յոթ աստղը յոթ երկինքների հրեշտակներին է ցույց*

տալիս, նաև՝ յոթ դասերին, որ կարդաց եկեղեցին: Եվ երկու իմաստով է խոսում. մեկն այս, որով մեղադրում է, և մյուսը, որով ճշմարտության մեջ է հաստատում:

Գլուխ չորրորդ. *Այսպես է ասում անսկիզբը և անփոփոխանը, որ մեռավ և կենդանացավ. Տեսա քո գործը, նաև՝ նեղությունն ու հայհոյությունը: Համառորեն եղիր մինչև մահ, և քեզ կյանքի պսակը կտամ: Ով հաղթի՝ երկրորդ մահից չի վնասվի:*

Մեկնություն. *Անսկիզբը է աստվածությամբ և անփոփոխան՝ մարդկությամբ:*

Գլուխ հինգերորդ. *Այսպես է ասում [նա], որ սրած երկսայրի սուր ունի. Տեսա քո գործը, և [այն տեղը], ուր բնակվում ես, որ սատանայի աթոռ է, քանզի քո մոտ Բաղաամի վարդապետությունը կա, որ Բաղակին սովորեցրեց գայթակղություն գցել Իսրայելի որդիների առաջ: Ապաշխարիր, ապա թե ոչ, կգամ շուտով: Ով հաղթի, նրան թաքցրած մանանայից կտամ և նրան սրբության գիրքը կտամ, և գրքում նոր անուն կա գրված:*

Մեկնություն. *Երկսայրի սուրն Ավետարանն է, որ կիսում-բաժանում է սիրտն աջ և ձախ մասերի՝ հավատացյալներին զատորոշելով անհավատներից: Եվ այն քաղաքը կուռքերի տուն էր: «Ով հաղթի» [խոսքով] անհավատությունն է ցույց տալիս:*

Գլուխ վեցերորդ. *Այսպես է ասում Աստծո Որդին, որի աչքերը կրակի բոցի նման են, և ոտքերը՝ ծխացող պղնձի. Տեսա քո գործերը և հավատքը, և թող ճանաչեն բոլոր եկեղեցիները, թե ես եմ, որ հանդիմանում եմ բոլոր երիկամունքներն ու սրտերը և ձեզ հատուցում եմ ըստ ձեր գործերի: Ով հաղթի և պահի իմ գործերը, նրան իշխանություն եմ տալու ազգերի վրա: Ու երկաթի գավազանով պիտի հովվի, ինչպես ես ընդունեցի իմ Հորից:*

Մեկնություն. *Կրակի բոց աչքը լուսավորում է արդարներին և այրում՝ մեղավորներին: Ծխացող պղինձը Քրիստոսի անուշահոտությունն է: «Ով հաղթի» [խոսքը] մեղքի [համար է] ասում:*

Գլուխ յոթերորդ. *Աստծո յոթ հոգի և յոթ աստղ ունեցողն այսպես է ասում. Տեսա քո գործերը, քանզի ողջի անուն ունես. [բայց] մեռած ես: Այսուհետև արթուն և հաստատուն եղիր, քանզի պատրաստված ես մեռնելու: Ով հաղթի, ճերմակ հանդերձներ կհագնի, և նրա անունը չի ջնջվի կենաց գրքից: Եվ նրա անունը կդավանեմ իմ Հոր և հրեշտակների առջև:*

Մեկնություն. *Յոթ աստղերը եկեղեցու վերակացուներն են նշանակում և Հոգու յոթ շնորհները: Քունը ծուլությունն է, որ հաղթահարվում է առաքինությամբ:*

Գլուխ ութերորդ. *Այսպես է ասում Սուրբը և Ճշմարիտը. Ով ունի Դավթի բանալիները, եթե բանա, չի [լինի ուրիշ] մեկը, որ փակի, և եթե փակի, չի լինի մեկը, որ բանա: Ահավասիկ քեզ եմ տալիս սատանայի ժողովականներին, որոնք ասում են, թե հրեա են, բայց՝ չեն: Ով հաղթի, նրան իմ տաճարի սյունը կդարձնեմ, և այլևս դուրս չի գա:*

Մեկնություն. *Դավթի արքայությունը նաև Սողոմոն է, որ փակված էր նախքան մարմնանալը: Բայց մահու և կենաց իշխանը Քրիստոս է:*

Գլուխ իններորդ. *Այսպես է ասում Ամենը, Հավատարիմ և Ճշմարիտ Վկան, Աստծո արարածների սկզբների սկիզբը. Գիտեմ քո գործերը, քանզի ոչ սառն ես և ոչ տաք, այլ՝ գաղջ: Ում սիրում՝ հանդիմանում և խրատում եմ: Ով հաղթի, նրան թույլ կտամ ինձ հետ իմ աթոռին նստել, ինչպես ես հաղթեցի և իմ Հոր աթոռին նստեցի:*

Մեկնություն. *«Սառն» անհավատն ու ալևոն է, «տաքը»՝ հավատացյալը և մկրտվածը, «գաղջը»՝ որ հավատքի համաձայն գործեր չունի:*

Գլուխ տասներորդ. *Սրանից հետո ահա տեսա, որ երկնքի դռները բացվեցին, և այնտեղ երկնքում Աթոռ [տեսա]: Աթոռին նստածը հասպիս և սարդիոն քարի նման էր, և նրա Աթոռի շուրջ եղած քահանաները զմրուխտի նման էին: Եվ Աթոռի շուրջը քսանչորս աթոռներ կային, և աթոռների վրա քսանչորս երեցներ էին նստած: Աթոռի մեջ և Աթոռի շուրջը չորս կենդանիներ կային՝ առջևից և ետևից աչքերով լիացված: Եվ չորս կենդանիներից առաջինն առյուծի նման էր, երկրորդը՝ եզան, երրորդը՝ մարդու, չորրորդը՝ արծվի: Նրանցից յուրաքանչյուրը վեցական թև ուներ, որոնց շուրջը բոլոր աչքեր կային: Նրանք չէին դադարում ասել. Սուրբ, Սուրբ, Սուրբ Տեր Աստված ամենակալ, որ էիր, որ ես և որ գալու ես: Եվ քսանչորս երեցները վայր էին ընկնում և երկրպագում Աթոռի վրա նստած հավիտյան Կենդանուն:*

Մեկնություն. *Դռների բացվելը Հոգու գալստի խորհուրդն էր ցույց տալիս, իսկ աչքերը՝ հարատև կենդանությունն ու բժշկությունը: Քսանչորս երեցները մարդկային ցեղի անդրանիկներն են: Չորս կենդանիները երկնավորների դասն են ցույց տալիս, բայց նաև՝ Ավետարանիչներին, ինչպես Եզեկիելն ու Եսային տեսան:*

Գլուխ տասնմեկերորդ. *Եվ Աթոռին նստածի աջ ձեռքում մի գիրք տեսա գրված և յոթ կնիքով կնքված: Ոչ ոք՝ ոչ երկնքում, ոչ երկրի վրա չէր կարողանում բանալ [կնիքը], և բոլորը ողբում էին: Երեցներից մեկն ասում է. Մի ողբացեք, ահավասիկ Հուդայի ցեղից եղող առյուծը՝ Դավթի արմատը հաղթեց՝ բացելով գիրքն ու նրա յոթ կնիքները:*

Մեկնություն. *Գիրքը աստվածային իմաստության խորությունն է, այլև բոլոր [այնտեղ] արձանագրվածների մասին հիշողությունն է: Այն միայն մարդացած Բանը բացեց, ինչն անմատչելի է երկնավորներին և [մատչելի] միայն Աստծուն:*

Գլուխ տասներկուերորդ. *Աթոռի, չորս կենդանիների, քսանչորս երեցների մեջ մորթված Գառն է, որը յոթ եղջյուր և յոթ աչք ուներ: Քսանչորս երեցները խնկով լի ոսկի բուրվառներ ունեին: Եվ նոր երգ էին երգում. Արժանի ես այդ Գիրքը առնել և դրա կնիքը բացել, քանզի մորթվեցիր և մեզ գնեցիր քո՝ Աստծո արյամբ: Եվ Աթոռի ու քահանաների շուրջը հավաքված բյուր բյուրավոր, հազար հազարավոր հրեշտակներ*

տեսում էին. Աթոռին նստած օրհնյալ Գառը բարձր ու փառավորյալ է հավիտյանս հավիտենից: Եվ չորս կենդանիներն տեսում էին. Ամեն, ու երեցները վայր ընկնելով երկրպագում էին:

Մեկնություն. *Այս նաև Զաքարիան է տեսել. Վեմի վրա յոթ աչքեր կան, որոնք Հոգու յոթ զորություններն են, որ թվարկում է Եսային: Ոսկի բուրվառը մաքուր միտքն է, իսկ խունկը՝ սրբերի անուշահոտ աղոթքը:*

Գլուխ տասներեքերորդ. *Եվ կնիքներից մեկը բացեց, ու չորս կենդանիներից մեկի ձայնը լսեցի, որ ասում էր, թե գալիս եմ: Եվ ահա մի սպիտակ ձի տեսա. Հաղթողն էր գալիս, որ հաղթի:*

Մեկնություն. *Այս յոթ կնիքները ամենք մարդեղության են վերագրում. առաջինը ծնունդն է, երկրորդը՝ մկրտությունը, երրորդը՝ հրաշքները, չորրորդը՝ Պիղատոսի առջև գտնվելը, հինգերորդը՝ խաչը, վեցերորդը՝ գերեզմանը, յոթերորդը՝ դժոխքը: Իսկ ամենք ապագային՝ երկրորդ գալստյանն են վերագրում: Սպիտակ ձին Հոգու շնորհն է, որով առաքյալները զորացան քարոզության մեջ:*

Գլուխ տասնչորսերորդ. *Երբ երկրորդ կնիքը բացեց, երկրորդ կենդանու ձայնը լսեցի, որ ասում էր. Գալիս եմ: Եվ ահա կարմիր ձի տեսա, և նրան մեծ սուսեր տրվեց:*

Մեկնություն. *Կարմիր ձին սրբերի արյան հեղումն է նշանակում. նրանք, որ բացահայտվեցին Քրիստոսի սիրով, իսկ սուսերը ընտանիքից բաժանվելն է:*

Գլուխ տասնհինգերորդ. *Երբ երրորդ կնիքը բացեց, երրորդ կենդանու ձայնը լսեցի, որ ասում էր, թե գալիս եմ: Եվ ահա սև ձի [տեսա], որ իր ձեռքում կշեռք ուներ:*

Մեկնություն. *Սև ձին չար արքաներից սրբերի հալածանքի մրրիկն է:*

Գլուխ տասնվեցերորդ. *Երբ չորրորդ կնիքը բացեց, չորրորդ կենդանին ասաց, թե գալիս եմ: Եվ ահա դեղին ձի տեսա, և մահն ու դժոխքը նրա հետ էին գնում:*

Մեկնություն. *Դեղին ձին, որ կարմրի և սպիտակի միախառնումից է, ցույց է տալիս Մաքսիմիանոսի*[41] *ժամանակը, երբ մի քիչ նեղություն եղավ, և հետո՝ խաղաղություն:*

Գլուխ տասնյոթերորդ. *Երբ հինգերորդ կնիքը բացեց, սեղանի տակ Աստծո խոսքի և նրա վկայության համար սպանված մարդկանց հոգիները տեսա: Եվ ճերմակ հանդերձներ տրվեցին նրանց, ու նրանց ասվեց, որ մի քիչ հանգստանան, մինչև նրանց ծառայակիցները համալրվեն:*

Մեկնություն. *Սրբերն աշխարհի վախճանն էին խնդրում և քրիստոնյաների հալածանքների դադարումը, որ կատարվեց մեծն Կոստանդիանոսի*[42] *օրոք: Նրանց ճերմակ հանդերձները, որ [ցույց են տալիս] նրանց ծաղկած առաքինությունները, որ հանգիստ են և հանգստյան մեջ են, սակայն դեռ փառքը չեն ընկալել մինչև սքանչելի երկրորդ գալուստը:*

Գլուխ տասնութերորդ. *Երբ վեցերորդ կնիքը բացեց, շարժում եղավ, և*

արեգակը սեւացավ, ու լուսինը արնավեց, և աստղերը թափվեցին, և երկինքը մագաղաթի նման գալարվեց: Եվ ասում էին լեռներին, թե՝ Մեր վրա ընկեք, և բլուրներին, թե՝ մեզ ծածկեք, քանզի նրա մեծ բարկության օրը եկավ:

Մեկնություն. *Այս տեսիլքը Նեռի ժամանակ պիտի կատարվի, երբ եկեղեցու բարի կարգերը խավարեն, արյան հեղում լինի, և սրբերն աստղերի նման պիտի գայթակղվեն: Ու երկնային գրքերը մեզ համար պիտի վշտանան, որի համար «գալարվել է» ասում: Բայց այս բոլորը լինելու է Դատաստանի օրը:*

Գլուխ տասնիններորդ. *Եվ սրանից հետո երկրի չորս անկյուններում չորս հրեշտակներ տեսա, որոնք ապականում էին: Եվ լսեցի կնքվածների թիվը, որ հարյուր քառասունչորս հազար էր Իսրայելի որդիների բոլոր ցեղերից:*

Մեկնություն. *Այս էլ լինելու է Նեռի օրերում, երբ երկրի բոլոր կողմերում ապականություն է և կարգերի փոփոխություն: Կնքվածները՝ Իսրայելի կույսերն են լինելու կամ նրանց համար է ասում, ովքեր հաստատված են լինելու հավատքի մեջ:*

Գլուխ քսաներորդ. *Եվ մեծ բազմություն տեսա, որ թիվ չուներ. Աթոռի և Գառան առջև ճերմակ հանդերձներ հագած, ձեռքերում արմավենիներ բռնած: Եվ աղաղակում էին. Փրկությու՜նը մեր Աստծունն է, որ նստում է Աթոռի վրա և Գառան առջև: Ու բոլոր հրեշտակները երկրպագում էին Աստծուն՝ ասելով. Ամեն. օրհնություն և փառք, իմաստություն և գոհություն, պատիվ և զորություն և շնորհք մեր Տեր Աստծուն հավիտյանս հավիտենից. ամեն:*

Մեկնություն. *Եվ սրանք մարդկանց մեջ [եղած] սրբերն են, որոնց [հագուստը] սկզբից հանդերձ անվանեց, իսկ այժմ՝ սպիտակ պատմուճան, որ Քրիստոսի շնորհած մաքրությունն է, որից բոլորս փայլեցինք: Արմավենին հաղթությունն է ցույց տալիս: Ասում են՝ մեր փրկությունն Աստծո շնորհքով է և ոչ թե մեր զորությամբ:*

Գլուխ քսանմեկերորդ. *Եվ երբ յոթերորդ կնիքը բացվեց, կես ժամի չափ լռություն եղավ երկնքում: Եվ յոթ հրեշտակ ու յոթ փող տեսա, նաև՝ ուրիշ հրեշտակ, որ ոսկի խնկանոց ուներ ոսկեղեն սեղանի առջև:*

Մեկնություն. *Այս թիվը [ցույց է տալիս] յոթ հավիտենականությունների վախճանը, որից հետո շաբաթանալն ու հանգստանալն է: Եվ յոթ հրեշտակներն աշխարհավախճանին սպասավորելու են մարդկանց: Իսկ լռությունը երկյուղ է նշանակում, ոսկի սեղանը Քրիստոսի մարմինն է, որի վրա մատուցվում են բոլոր հոգևոր պատարագները:*

Գլուխ քսաներկուերորդ. *Եվ առաջին հրեշտակը հնչեցրեց փողը, և կարկուտ, և կրակ, և արյուն եղավ խառնված:*

Մեկնություն. *Յոթ հրեշտակներից եկող այս հարվածներն աշխարհի վախճանից առաջ պիտի գան, իսկ վախճանի ժամանակ կատարվելու են*

այլաբանությամբ, որովհետև ասում է՝ արյունը կրակին խառնված:

Գլուխ քսաներեքերորդ. *Եվ երկրորդ հրեշտակը հնչեցրեց փողը, և ծովի երրորդ մասը արյուն եղավ, և ձկների երրորդ մասը սատկեց:*

Մեկնություն. *Վախճանի ժամանակ ծովը մաքրվելու է բորբոքված կրակով. սակայն նրա բնակիչները նվազելու են:*

Գլուխ քսանչորսերորդ. *Եվ երրորդ հրեշտակը հնչեցրեց փողը, ու երկնքից մի աստղ ընկավ և դառնացրեց բոլոր ջրերը:*

Մեկնություն. *Այս ևս լինելու է աշխարհի վախճանի ժամանակ, քանզի ինչպես երկիրն ու ծովը հրդեհվելով բորբոքվելու են կրակով, այդպես էլ բոլոր գետերն ու ջրերը պիտի փոխվեն:*

Գլուխ քսանհինգերորդ. *Եվ չորրորդ հրեշտակը հնչեցրեց փողը, և արեգակի, լուսնի ու աստղերի երրորդ մասը խավարեց:*

Մեկնություն. *Ինչպես երկրավոր առարկաների, այնպես էլ երկնավորների նվազություն է լինելու, քանզի նրանք էլ մարդկանց սպասավորներն են:*

Գլուխ քսանվեցերորդ. *Եվ հինգերորդ հրեշտակը հնչեցրեց փողը, ու մի աստղ ընկավ երկրի վրա և նրան անդունդի բանալին տրվեց:*

Մեկնություն. *Այս աստղն Աստծո հրամանն է, նաև՝ դատաստանը: Եվ մորեխի նման դևերը դուրս գալով պիտի վնասեն մարդկանց:*

Գլուխ քսանյոթերորդ. *Եվ վեցերորդ հրեշտակը հնչեցրեց փողը, ու չորս կենդանիներից ձայն լսեցի, որ ասում էին. Եփրատ գետի վրա կապված չորս հրեշտակներին ազատ արձակիր:*

Մեկնություն. *Ցույց է տալիս, թե այն կողմից պիտի գա Հակաքրիստոսը և պիտի իր հետ զորքերի բազմություն բերի և մարդկանցից շատերին պիտի սպանի:*

Գլուխ քսանութերորդ. *Ուրիշ զորավոր հրեշտակ տեսա, որ ամպ էր հագել և ծիածան ուներ գլխին և նրա դեմքն արեգակի նման էր, և նրա ոտքերը՝ կրակի սյան նման: Եվ երդվեց, թե այլևս ժամանակ չի մնացել երկրի վրա, այլ՝ [միայն] հավիտենական կյանք, քանզի յոթերորդ հրեշտակի օրը, երբ փողը հնչի, Աստծո խորհուրդը պիտի կատարվի, որ ավետարանվեց իր ծառա մարգարեների միջոցով:*

Մեկնություն. *Ծիածան ունեցող հրեշտակը ցույց է տալիս երկնային զանազան պատիվներն ու փառքերը: Դեմքն արեգակի նման է, այսինքն՝ գերազանց աստվածային իմաստություն ունի: Հրեղեն ոտքերը [ցույց են տալիս] ահն ու տանջանքը: Քանզի յոթ դարի ավարտից հետո Աստծո խորհուրդները պիտի կատարվեն:*

Գլուխ քսանիններորդ. *Ինձ եղեգ տրվեց: Եվ ասում է հրեշտակը. Չափիր Աստծո տաճարը, նաև՝ սեղանն ու նրա մեջ երկրպագողներին: Եվ գավիթը, որ տաճարի դրսում է, մի՛ չափիր, քանզի այն հեթանոսներին է տրված: Եվ սուրբ քաղաքը պիտի ոտնակոխ անեն քառասուներկու ամիս:*

Մեկնություն. *Եղեգով ցույց է տալիս երկնքում նրան երևացած բաների ողեղն լինելը, այսինքն՝ սեղանի, աթոռի և այլն: Եվ ասում է. Չափիր*

և ճանաչիր նրանում եղած փայլչությունը՝ արդարների փառքը, հրեշտակների դասերը: Գավիթն այս երկիրն է, որ հավասար չէ երկնքին: Եվ Նեռը երեք ու կես տարի պիտի հալածի սուրբ եկեղեցին:

Գլուխ երեսուներորդ. Եվ իմ երկու վկաներին կտամ. և հազար երկու հարյուր վաթսուն օր քուրձ հագած պիտի մարգարեանան: Սրանք երկու ձիթենիներն ու երկու ճրագներն են, որոնք երկնքում են, Աստծո առջև: Եվ անդունդի գազանը նրանց պատերազմ է տալիս և սպանում: Նրանց դիակները ընկած են քաղաքում, ուր նրանց Տերը խաչվեց:

Մեկնություն. Սրանք Ենովքը և Եղիան են. նրանք քուրձով են, քանզի տրտմության և սգի մեջ են մեղավորների պատճառով, իսկ Զաքարիան ճրագ և ձիթենի է անվանում նրանց իրենց մարգարեությամբ խավար ժամանակները լուսավորելու համար:

Գլուխ երեսունմեկերորդ. Եվ երեք ու կես օր հետո Աստծո կենդանի Հոգին նրանց մեջ կմտնի, և նրանք կկանգնեն: Եվ ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. Այստեղ բարձրացեք: Եվ ամպով վեր բարձրացան:

Մեկնություն. Քանի տարի որ մարգարեացան, այնքան օր անթաղ են մնալու, և ապա Աստծո հրամանով հարություն են առնելու և բարձրանալու են երկինք:

Գլուխ երեսուներկուերորդ. Երբ հրեշտակը յոթերորդ փողն էր հնչեցնում, երկնքից ձայն եղավ, որ ասաց. Բովանդակ տիեզերքի թագավորությունը մեր Տիրոջը և նրա Քրիստոսինն է, և բոլորի վրա պիտի թագավորի հավիտյանս հավիտենից:

Մեկնություն. Հրեշտակներն ու քահանաները գոհանում են Աստծո արդար դատաստանից, որ հատուցում է ըստ յուրաքանչյուր գործի:

Գլուխ երեսուներեքերորդ. Երկնքում Աստծո տաճարը բացվեց, և Աստծո տապանակը երևաց իր երկնային տաճարում: Եվ երկնքում մի մեծ նշան երևաց. Մի կին՝ արեգակն իր վրա առած և լուսինն՝ իր ոտքերի տակ, և նրա գլխին տասներկու աստղերով պսակ կար:

Մեկնություն. Քանի երկինքը զգալի չէ, այլ տեսանելի է մտքի աչքին: Ոմանք ասում են, թե կինը Աստվածածինն է, որ Աստվածորդուն ծնեց, և ոմանք՝ սուրբ եկեղեցին: Արեգակն Ավետարանն է, և լուսինը՝ օրենքը, որ մկրտությամբ է գլխավորվում, ու տասներկու աստղերը՝ Հավատքի տասներկու աստիճանները:

Գլուխ երեսունչորսերորդ. Երկնքում պատերազմ ծագեց. Միքայելը և իր հրեշտակները պատերազմում էին վիշապի դեմ: Եվ ընկավ մեծ վիշապը՝ առաջին օձը: Ու ձայն լսեցի երկնքից, որ ասում էր. Արդ, մեր Աստծո զորությունը, փրկությունը, արքայությունը և նրա Օծյալի իշխանությունը եղավ, քանզի ընկավ մեր եղբայրներին չարախոսողը:

Մեկնություն. Առաջինը սատանան ընկավ երկնքից և Քրիստոսով իշխանությունից զրկվեց և ապա աշխարհավարտի ժամանակ հավիտենական

կրակի մեջ է ձգվելու:

Գլուխ երեսունհինգերորդ. *Եվ երբ վիշապը տեսավ, որ ընկավ երկրի վրա, արու զավակ ծնող կնոջ ետևից ընկավ: Եվ այն կնոջը մեծ արծվի երկու թևեր տրվեցին, որպեսզի օձի երեսից անապատ տեղ թռչի և այնտեղ կերակրվի մի ժամանակ, ժամանակներ և կես ժամանակ:*

Մեկնություն. *Բանսարկուն եկեղեցու ետևից պիտի ընկնի Քրիստոսից մինչև Նեռ: [Արծվի] երկու թևերը բանականն ու ներգործականն է, որ հավատքն ու գործն է: Սակայն Նեռի ժամանակ երեք ու կես տարի փախչելու և թաքնվելու են անապատ վայրում:*

Գլուխ երեսունվեցերորդ. *Տեսա, որ ծովից մի գազան էր դուրս գալիս, և յոթ գլուխ ու տասը եղջյուր ուներ: Եվ նրան իշխանություն տրվեց ազգերի և լեզուների վրա, և պիտի [նրան] երկրպագեն նրանք, որոնց անուններն աշխարհի սկզբից գրված չեն մորթված Գառնուկի Գրքում:*

Մեկնություն. *Ասացին, որ գազանը Նեռն է, և յոթ գլուխներն ու տասը եղջյուրները նրան միավորված Բանսարկուի զորություններն են: Դարձյալ՝ [յոթ գլուխները] յոթ թագավորություններն են, որոնք Կոստանդինից առաջ էին: Բայց հետո դրանք գտնվում են տասն, որոնց մեջ պիտի երևա Նեռը:*

Գլուխ երեսունյոթերորդ. *Մի այլ գազան տեսա, որ ցամաքից էր դուրս գալիս, և գառան նման երկու եղջյուր ուներ, ու վիշապի նման էր խոսում, և հրաշքներ էր գործում, և երկնքից երկիր կրակ էր իջեցնում:*

Մեկնություն. *Ոմանք ասացին, որ այս գազանը Հակաքրիստոսն է, իսկ ոմանք՝ սուտ մարգարեն: Եվ երկու եղջյուրները Նեռի և վիշապի զորությունն են առնում, որոնք ի փառս ու հանուն սուտ քրիստոսի հրաշքներ են կատարում:*

Գլուխ երեսունութերորդ. *Այստեղ է իմաստությունը. ով միտք ունի, թող համրի գազանի թվականը, որ մարդու թիվ է, և նրա թիվն այս է՝ վեց հարյուր վաթսունվեց:*

Մեկնություն. *Սուրբ Հոգին չհաճեց Սուրբ Գրքում նրա անվան ստուգաբանությունը հայտնել. այդ պատճառով ոմանք ասացին, որ Նեռը սուտ քրիստոսը կամ գազանն է: Հիպպոլիտոսը Լամպետին Տիտան է անվանում: Եվ այս գիրքն ասում է. Հոժարակամ ուրանում եմ երկնքի և երկրի արարչին և քեզ եմ հավատում*[1]*: Սարգիս վարդապետն ասում է. Վեց հարյուրավոր, վեց տասնավոր, վեց միավոր, որոնք միասին վեց հազարի ապստամբությունն են ցույց տալիս: Քանզի քանի օրվա ընթացքում որ աշխարհը եղավ՝ այնքան տարվա ընթացքում էլ կավարտվի:*

Գլուխ երեսունիններորդ. *Ահա տեսա, որ Գառը Սիոն լեռան վրա էր*

---

1. Գրաբարում՝ «Ուրանամ Կամաւ ԶԱրարիչն...», որոնց առաջին տառերը՝ ՈԿԶ=666՝ «Նեռ» անվան թվային արժեքն են կազմում:

կրակի մեջ է ձգվելու:

Գլուխ երեսունհինգերորդ. *Եվ երբ վիշապը տեսավ, որ ընկավ երկրի վրա, արու զավակ ծնող կնոջ հետևից ընկավ: Եվ այն կնոջը մեծ արծվի երկու թևեր տրվեցին, որպեսզի օձի երեսից անապատ անց թռչի և այնտեղ կերակրվի մի ժամանակ, ժամանակներ և կես ժամանակ:*

Մեկնություն. *Բանսարկուն եկեղեցու հետևից պիտի ընկնի Քրիստոսից մինչև Նեռ: [Արծվի] երկու թևերը բանականն ու ներգործականն է, որ համառոտն ու գործն է: Սակայն Նեռի ժամանակ երեք ու կես տարի փախչելու և թաքնվելու են անապատ վայրում:*

Գլուխ երեսունվեցերորդ. *Տեսա, որ ծովից մի գազան էր դուրս գալիս, և յոթ գլուխ ու տասը եղջյուր ուներ: Եվ նրան իշխանություն տրվեց ազգերի և լեզուների վրա, և պիտի [նրան] երկրպագեն նրանք, որոնց անունները աշխարհի սկզբից գրված չեն մորթված Գառնուկի Գրքում:*

Մեկնություն. *Ասացին, որ գազանը Նեռն է, և յոթ գլուխներն ու տասը եղջյուրները նրան միավորված Բանսարկուի զորություններն են: Դարձյալ՝ [յոթ գլուխները] յոթ թագավորություններն են, որոնք Կոստանդինից առաջ էին: Բայց հետո դրանք դառնում են տասն, որոնց մեջ պիտի երևա Նեռը:*

Գլուխ երեսունյոթերորդ. *Մի ուրիշ գազան տեսա, որ ցամաքից էր դուրս գալիս, և գառան նման երկու եղջյուր ուներ, ու վիշապի նման էր խոսում, և հրաշքներ էր գործում, և երկնքից երկիր կրակ էր իջեցնում:*

Մեկնություն. *Ոմանք ասացին, որ այս գազանը հակաքրիստոսն է, իսկ ոմանք՝ սուտ մարգարեն: Եվ երկու եղջյուրները Նեռի և վիշապի զորությունն են առնում, որոնք ի փառս ու հանուն սուտ քրիստոսի հրաշքներ են կատարում:*

Գլուխ երեսունութերորդ. *Այստեղ է իմաստությունը. ով միտք ունի, թող համրի գազանի թվականը, որ մարդու թիվ է, և նրա թիվն այս է՝ վեց հարյուր վաթսունվեց:*

Մեկնություն. *Սուրբ Հոգին չհաճեց Սուրբ Գրքում նրա անվան ստուգաբանությունը հայտնել. այդ պատճառով ոմանք ասացին, որ Նեռը սուտ քրիստոսը կամ գազանն է: Հիպպոլիտոսը Լամպետիս Տիտան է անվանում: Եվ այս գիրքն ասում է. Հոժարակամ ուրանում եմ երկնքի և երկրի արարչին և քեզ եմ հավատում*[1]*: Սարգիս վարդապետն ասում է. Վեց հարյուրավոր, վեց տասնավոր, վեց միավոր, որոնք միասին վեց հարյուրի ապստամբությունն են ցույց տալիս: Քանզի քանի օրվա ընթացքում որ աշխարհը եղավ՝ այնքան տարվա ընթացքում էլ կավարտվի:*

Գլուխ երեսունիններորդ. *Ահա տեսա, որ Գառը Սիոն լեռան վրա էր*

---

1. Գրաբարում՝ «Ուրանամ Կամաւ ԶԱրարիչն...», որոնց առաջին տառերը՝ ՈԿԶ=666՝ «Նեռ» անվան թվային արժեքն են կազմում:

և նրա մոտ հարյուր քառասունչորս հազարներ, որոնք իրենց ճակատի վրա գրված ունեին նրա անունն ու նրա Հոր անունը:

Մեկնություն. *Գառը Հայտնության Քրիստոսն է, որ ոչ թե սարին Սիոնում է, այլ՝ երկնքում: Եվ հարյուր քառասունչորս հազարը Նեռից նահատակվածներն են, որոնք, ասաց, նախապես կնքված են:*

Գլուխ քառասուներորդ. *Ուրիշ հրեշտակ տեսա, որ հավիտենական ավետիս ուներ: Եվ բարձր ձայնով ասում էր. Երկյուղեք Աստծուց և փառք տվեք նրան, քանզի եկավ նրա դատաստանի ժամանակը:*

Մեկնություն. *Այս սքանչելի երևումը լինելու է Հակառակորդի կողմից այսքան բազմություն սպանելուց հետո:*

Գլուխ քառասունմեկերորդ. *Եվ ուրիշ հրեշտակ նրա հետ էր գալիս և ասում. Ընկավ, ընկավ Բաբելոնը, քանզի բոլոր ազգերին հարբեցրեց իր կատաղի պոռնկության գինով:*

Մեկնություն. *Մեծ Բաբելոնը Նեռի խռովությունն է, որ դադարում է երեք ու կես տարի հետո, և ցասման գինին կռապաշտությունն ու բոլոր մեղքերի պոռնկությունն է:*

Գլուխ քառասուներկուերորդ. *Եվ ուրիշ հրեշտակ բարձր ձայնով ասում էր. Ով երկրպագի գազանին և նրա պատկերին՝ նա պիտի Աստծո անխառն բարկության բաժակից խմի և կրակով ու ծծումբով պիտի տանջվի Գառան առջև:*

Մեկնություն. *Ով խոսքով և գործով սուտ Քրիստոսին հնազանդվի և նրան դավանի որպես Աստված, [նա պիտի] Աստծո անխառն բարկության բաժակից խմի: Անխառն բարկությունն այն է, որի մեջ մաս չկա գթությունից:*

Գլուխ քառասուներեքերորդ. *Սպիտակ ամպ տեսա: Ամպի վրա մարդու Որդու նման մեկն էր նստել, իր գլխին ոսկե պսակ և ձեռքին սրված գերանդի կար: Քանզի հասել է հնձելու ժամանակը, և հասունացել է երկրի հունձքը:*

Մեկնություն. *Ամպը հրեշտակաց զորությունն է, և մարդու Որդու նմանը Քրիստոսն է, քանզի բոլորի Թագավորն է: Եվ սրված գերանդին աշխարհավարտի հրամանն է:*

Գլուխ քառասունչորսերորդ. *Եվ երկնքի տաճարից ուրիշ հրեշտակ դուրս եկավ և սրված գերանդի ուներ և ասում էր. Երկրի այգուց քաղիր ողկույզները, քանզի հասունացել է խաղողը: Հնձանը քաղաքից դուրս էր և նրանից արյուն էր դուրս գալիս:*

Մեկնություն.*Գերանդին հրեշտակի զորությունն է, և հասած ողկույզը՝ ամբարիշտների կողմից չափն անցնելն է, իսկ հնձանը դժոխքն է, ուր ամբարիշտներն են ճզմվում:*

Գլուխ քառասունհինգերորդ. *Եվ ուրիշ մեծ ու զարմանալի նշան տեսա երկնքում, յոթ հրեշտակներ, որոնք վերջին յոթ հարվածներն ունեին, քանզի նրանցով պիտի կատարվեր Աստծո բարկությունը: Եվ*

Աստծո և նրա Գառան առջև Մովսեսի երգն էին երգում՝ ասելով. Մեծամեծ և զարմանալի են քո գործերը, ամենակալ Տեր Աստված, և ճշմարիտ է քո ճանապարհը, բոլոր հեթանոսների Թագավոր, քանզի դու ես միայն սուրբ և երկրպագության արժանի: Ոչ ոք չի կարող տաճար մտնել մինչև կատարվեն յոթ հրեշտակների յոթ հարվածները:

Մեկնություն. *Յոթ թիվը կամ յոթ գարերը Սուրբ Հոգու յոթ զորությունները է ակնարկում, Մովսեսի երգը՝ արդարների նախնական շնորհը, իսկ Գառան առջև [լինելը]՝ այն ազգերը, որոնք Քրիստոսի գալուստից հետո անխտիր մաքրվեցին: Տե՛ս, որ ասում է. Ոչ ոք չի կարող Տիրոջ տաճար մտնել ոչ արդարների աղաչանքով, ոչ մեղավորների հառաչանքով. մինչև որ յոթ հարվածները կատարվեն:*

Գլուխ քառասունվեցերորդ. *Առաջին հրեշտակն իր սկավառակը երկրի վրա հեղեց, և չար հարվածներ անզգայն մարդկանց վրա, որոնք գազանի դրոշմն ունեին և նրան էին երկրպագում:*

Մեկնություն. *Երկրի պատուհասումը հրեշտակների կողմից երեք անգամ եղավ. նախ՝ Քրիստոսից մինչև Կոստանդիանոս [եղածը], երկրորդ՝ վերջին ժամանակներից մինչև Նեռը, սա կատարվելու է ապստամբ [Բանսարկուի] ժամանակ: Իսկ սկավառակը հրամանի բաժակն է, որ տանջանք է խմեցնում:*

Գլուխ քառասունյոթերորդ. *Երկրորդ հրեշտակն իր սկավառակը հեղեց ծովի վրա, և [ջրերը] մեռելի արյան դարձան, և ծովի մեջ բոլոր կենդանիները սատկեցին:*

Մեկնություն. *Եղիան և Ենովքն են ծովի ջրերն արյուն դարձնում, ինչպես Եգիպտոսում՝ Մովսեսի միջոցով, ի հանդիմանություն սուտ Քրիստոսի, որպեսզի անհավատները փախենան:*

Գլուխ քառասունութերորդ. *Երրորդ հրեշտակն [իր սկավառակը] հեղեց գետերի և աղբյուրների ջրերի վրա, և արյուն եղավ: Եվ հրեշտակն ասում է. Արդար ես դու, որ ես և որ էիր և սուրբ ես, որ այսպիսի դատաստաններ ես անում, քանզի ամբարիշտները սրբերի և մարգարեների արյունը հեղեցին:*

Մեկնություն. *Հրեշտակները կարգված են տարրերի. ջրի, կրակի և այլոց վրա: Նրանք, որ այն ժամանակ սրբերի արյունը հեղեցին, արյուն պիտի խմեն:*

Գլուխ քառասունիններորդ. *Եվ չորրորդ հրեշտակը [սկավառակը] հեղեց արեգակի վրա, ու մեծ տապից խարշակահար եղան մարդիկ և հայհոյեցին Աստծուն ու չապաշխարեցին Աստծո փառքի համար:*

Մեկնություն. *Ենթադրելի է, [որ ակնարկում է] տեսանելի արեգակի բոցակիզելը, որպեսզի ցավերի պատճառով մեղքն ատեն, սակայն թշվառականները հայհոյելու են Բարձրյալին: Այդպես էլ այժմ այլազգիներից հալածվելու պատճառը Աստծուն են համարում, որ մեր ազգին այսպիսի չարչարանքի մատնեց:*

Գլուխ հիսուներորդ. *Եվ հինգերորդ հրեշտակը սկավառակը հեղեց գազանի աթոռի վրա, և նրա թագավորությունը խավարեց, ու ցավի սաստից պիտի ծամեն իրենց լեզուները և Աստծուն հայհոյեն ու ետ չեն դառնալու իրենց գործերից:*

Մեկնություն. *Գազանի աթոռը Նեռի թագավորությունն է: Աստծո բարկությունից նրա բոլոր հնարքներն ու զորությունները տկարանում են, միտքը՝ մթագնում է: Լեզուն ծամելը ծայրահեղ վիշտն է ցույց տալիս, որովհետև խաբվածները ճանաչեն, թե խաբեբա է նա, որ մեր կողմից [որպես] Աստված էր փառաբանվում և հուսահատվելու են ու չեն զղջալու, որովհետև ուրիշ պատուհասներ էլ կրեն:*

Գլուխ հիսունմեկերորդ. *Եվ վեցերորդ հրեշտակը հեղեց [սկավառակը] Եփրատ գետի վրա, և նրա ջրերը ցամաքեցին, որպեսզի արևելքի թագավորի ճանապարհը հարթվի:*

Մեկնություն. *Աստծո թույլտվությամբ գետի ջուրը նվազելու է՝ հեթանոսների թագավորի ճանապարհը գետի այս երկիր հարթելու, մարդկանց մեռցնելու համար, ինչպես Գոգը և Մագոգը եկան սկյութացիների վրա: Ոմանք ասում են, [թե սա] Նեռի գալն է արևելքից և պարսից ազգի Դանի ցեղից ծնվելը:*

Գլուխ հիսուներկուերորդ. *Եվ յոթերորդ հրեշտակն իր սկավառակից օդի վրա թափեց, և փայլատակումներ, ձայներ, որոտումներ ու մեծ երկրաշարժ եղավ: Քանզի աշխարհի սկզբից մարդու լինելուց ի վեր այսպիսի երկրաշարժ և մեծ կարկուտ չէր եղել:*

Մեկնություն. *Երկնքից եկած հրեշտակի ձայնն աստվածային կատարյալ հրամանն է, որոտն ու փայլակը Քրիստոսի երկրորդ գալստյան նշանակն են, ինչպես Սինա իջնելը եղավ: Իսկ մեծ երկրաշարժը փոփոխման նշանակն է:*

Գլուխ հիսուներեքերորդ. *Մի կին տեսա, որ կարմիր գազանի վրա էր նստել և լցված էր հայհոյության անուններով, և գազանը յոթ գլուխ ուներ և տասն եղջյուր:*

Մեկնություն. *Ոմանք կինը հին Հռոմ քաղաքը համարեցին, որ յոթ բլուրների վրա է բազմած, իսկ ոմանք՝ նոր Կոստանդնուպոլիսը: Եվ այն քաղաքը կին է համարում իգական ու փափուկ հեշտության պատճառով: Կարմիր գազանը, պարզ է, որ ընկղմվել է արյան արբումի ու մեղքի հեշտանքի մեջ: Եվ լի է հայհոյությամբ, այսինքն՝ առանց պատկառանքի [արվում է] բազմատեսակ անօրենությունների, որոնցից շատ հերձվածներ են դուրս գալիս. քանզի իմաստության սկիզբը երկյուղն է (Առակ 1.7):*

Գլուխ հիսունչորսերորդ. *Եվ տեսա կնոջը՝ սրբերի ու վկաների արյամբ արբած, նաև՝ գազանին, որ կար և չկար և պատրաստվում է դուրս գալ դժոխքից և դեպի կորուստ գնալ:*

Մեկնություն. *Գազանը Բանսարկուն է, որ շրջում ու փնտրում է, թե ո՞ւմ կուլ տա (Հմմտ Ա Պետ 5.8): Սա խաչով սպանվեց և դարձյալ*

աշխարհավարտի ժամանակ պիտի կենդանանա և հրաշքներ պիտի կատարի ու մոլորապատիր հնարքներ գործադրի՝ Փրկչին ուրանալու և ասելու, որ եթե Խաչից առաջ կար, [ապա] Խաչից հետո չվերակենդանացավ: [Բանսարկուն] դարձյալ արթնանալու է Նեռի ժամանակ և հավիտենական կորուստ է գնալու:

Գլուխ հիսունհինգերորդ. *Սրանից հետո երկնքից իջած ուրիշ հրեշտակ տեսա, որ մեծ իշխանություն ուներ, և նրա փառքից երկիրը լուսավորվեց: Եվ բարձր ձայնով աղաղակեց. Ընկավ մեծ Բաբելոնը, որ դևերի բնակատեղի էր դարձել: Ուրախացեք նրա վրա, սուրբ առաքյալներ և մարգարեներ, քանզի Աստված ձեր դատաստանն արեց նրանից:*

Մեկնություն. *Այս հրեշտակն առաջին երկնավորներից էր, և հրեշտակների պայծառությունն ավելին է, քան լուսատուների ճառագայթները: Հրեշտակն աղաղակեց [հայտնելով] ընկած քաղաքի մեղքը, որ պատիժների պատճառն էր: Երկինքն ուրախանում է, այսինքն՝ [ուրախանում են] երկնավորների դասերը և բոլոր սրբերը, որոնք անտեսել են իրենց վրեժը:*

Գլուխ հիսունվեցերորդ. *Սրանից հետո երկնքից բազմության ձայն լսեցի, որ ասում էր. Ալելուիա, փրկություն, փառք, պատիվ և զորություն մեր Աստծուն, քանզի նրա դատաստանները ճշմարիտ են: Մյուս անգամ էլ ալելուիա ասացին, քանզի մեր ամենակալ Աստվածը թագավորեց, խնդանք և ցնծանք, նրան փառք տանք, քանզի եկավ Գառան հարսանիքը:*

Մեկնություն. *Ալելուիան օրհնություն է նշանակում, ամենը՝ թող լինի, իսկ հարսանիքը՝ եկեղեցու և Քրիստոսի միավորությունը:*

Գլուխ հիսունյոթերորդ. *Եվ [նրա] կինն իբրև հարս նախապատրաստեց իրեն: Նրան հագնվելու համար սուրբ և լուսափայլ սպիտակ բեհեզ տրվեց: Եվ երեցներից մեկն ասում է. Երանելի են նրանք, որ կանչված են Գառնուկի ընթրիքի հարսանիքին:*

Մեկնություն. *Բեհեզը պայծառ առաքինությունն ու նրանց սուրբ սիրտն է ցույց տալիս: Արքայությունը երբեմն դրախտ է անվանում, երբեմն՝ Աբրահամի գոգ, երբեմն, հարատև ուրախության պատճառով՝ ճաշ և հարսանիք: Սակայն նա այնպես է գերազանցում սրան, ինչպես լույսը խավարից և յուղի անուշահոտությունը գարշահոտությունից:*

Գլուխ հիսունութերորդ. *Եվ տեսա երկինքը բացված, և այնտեղ՝ սպիտակ ձի: Նրա հեծյալը արդարությամբ է դատում: Նրա աչքերը կրակի բոցի նման էին, արյունով ներկված հանդերձ էր հագել, և նրա անունն էր Բանն Աստծո:*

Մեկնություն. *Դարձյալ ուրիշ տեսիլքի սկիզբն է վերցնում, որ Քրիստոսի երկրորդ գալստյան խորհուրդն ունի, որը մաքուր արքայությամբ և զորությամբ պիտի գա դատելու: Եվ աչքը ամենահայաց տեսությունն է, որ ոմանց այրում և ոմանց լուսավորում է: Արյամբ ներկված մարմինը [ցույց է տալիս թե], ինչպես համբարձվեց, այնպես էլ պիտի գա:*

Գլուխ հիսունիններորդ. *Ուրիշ հրեշտակ տեսա, որ արեգակի վրա էր և բարձր ձայնով աղաղակեց բոլոր թռչող հավքերին. Եկեք մեծ Աստծո ընթրիքին և կերեք թագավորների մարմիններն ու հզոր երիվարների և նրանց բոլոր հեծյալների մարմինները:*

Մեկնություն. *Սա վերին հրեշտակներից էր, որ հրամայում է այլոց: Նրանց թռչուններ է անվանում արագության պատճառով: Ընթրիքն Աստծո դատաստանն է: Անմարմինների կերակուրն [ակնարկում է] ոչ թե զգալի մարմինները, այլ իմացությունը: Ուտելն այն է, որ մարմնավորներիս իմացությունը գործերով է հայտնապես բոլորին երևում, իսկ երիվարները նրանք են, որ հեշտանքի և ցանկասիրության ծառաներ են:*

Գլուխ վաթսուներորդ. *Եվ ուրիշ հրեշտակ տեսա, որ ձեռքում դժոխքի բանալիներն ու շղթաներն ուներ: [Նա] բռնեց առաջին վիշապ օձին, որ բանսարկու սատանան էր, և նրան հազար տարի կապեց ու դժոխքի անդունդը նետեց: Հետո նա արձակվելու է մի կարճ ժամանակով:*

Մեկնություն. *Սատանան խաչով կապվեց, սակայն այժմ կապվելն է հիշում, որպեսզի ապագա արձակումը ցույց տա: Եվ «կապելն» այն է, որ կռապաշտությունը վերացվեց, և աստվածապաշտությունը ծավալվեց աշխարհում: Եվ դժոխքում կապված լինելուց պարզորոշ [երևում է], որ դևերն աղաչում էին նրանց չուղարկել անդունդ: Շղթաները հրեշտակների՝ նրանց վրա ունեցած անկապտելի իշխանությունն է: Հազար տարին կատարյալ թիվ է, որ տասնյակ հարյուրից է [կազմված]: [Եվ դա] մարդանալուց մինչև Նեռն է, և այդ ժամանակ է սատանան արձակվում:*

Գլուխ վաթսունմեկերորդ. *Աթոռներ տեսա, և նրանց վրա նստեցին ու նրանց դատավորություն տրվեց Հիսուսի և Աստծո Բանի վկայության համար չարչարված հոգիներին ընտրելու համար:*

Մեկնություն. *Այս ընտրությունն այն է, երբ սատանան և նրա զորությունը կապվում է, որոնց հոգիները Քրիստոսի մոտ երկինք են բարձրանում, և այնտեղ հանգստանում են մինչև նրա մյուս անգամ գալուստը: Սա է մինչև աշխարհի վերջը հազար տարի թագավորելը:*

Գլուխ վաթսուներկուերորդ. *Եվ դրանից հետո մեռելներից ոչ ոք չմնաց մինչև հազար տարվա լրանալը: Սա առաջին հարությունն է. երանի՛ սրբերին, որ բաժին ունեն առաջին հարության մեջ:*

Մեկնություն. *Նրանք, որ մարմնով մեռան և հոգով առ Աստված վերացան, հարություն չառան մինչև հազարամյակի ավարտը: Սրբերի առաջին հարությունը մարմնի կապանքներից ձերբազատվելը և Աստծո մոտ գնալն է: Երկրորդ հարությունը մարմին հագնելն ու նրանով պսակվելն է:*

Գլուխ վաթսուներեքերորդ. *Հազար տարի հետո արձակում է սատանային և հանում բանտից, և նա գալու է գալիս ու մոլորեցնելու է աշխարհի չորս կողմերի բոլոր ազգերին: Ու Գոգ և Մագոգին իր ձեռքն է առնում և նրանցով պիտի պատերազմի. ու նրանց թիվը ծովի ավազից*

ավելի է:

Մեկնություն. *Ոմանք Գոգը և Մագոգը հյուսիսարևելյան սկյութացիների ազգն են համարում, որի անունը Նիկի, այսինքն՝ հաղթողներ է: Իսկ ոմանք ասում են, թե Գոգը և Մագոգը եբրայերեն նշանակում է հեթանոսների ժողով, որ հիշում է Եզեկիելը: Երուսաղեմում հավաքվածների նորարձից հետո [հեթանոսների ժողովը] խորտակվեց, և ասում է, թե յոթ տարի պիտի այրվեն նրա զենքերը: Այն ժամանակ դարձյալ սուտ քրիստոսի հետ գալու է, քանզի նա դրա ապացույցն էր:*

Գլուխ վաթսունչորսերորդ. *Եվ մեծ սպիտակ Աթոռ տեսա, որի վրա [մեկն] էր նստել: Նրա երեսից երկինքն ու երկիրը երկյուղում էին: Եվ մեծ ու փոքր մեռելներ տեսա, որոնք Աթոռի առջև էին և գրքերն էին բացում: Եվ կյանքի ուրիշ գիրք բացվեց, և ծովը տվեց իր մեռելներին, և մահն ու դժոխքը՝ իրենց մեռելներին: Նրանք դատվեցին ըստ իրենց յուրաքանչյուր գործի. իսկ մահն ու դժոխքը կրակի լիճ ձգվեցին:*

Մեկնություն. *Այս տեսիլքն ընդհանուր հարությանն է վերաբերում. նորոգվում են երկինքն ու երկիրը, նաև՝ մեծ ու փոքր հանցանքների համար դատված մեռելները՝ անխտիր բոլոր մարդիկ: «Գրքերը» յուրաքանչյուրի խղճմտանքն է, որ Քրիստոսը սիրտ անվանեց: Եվ կյանքի մեկ գրքում գրված են սրբերի անունները. և ովքեր կենաց գրքում չէին, ձգվեցին կրակի լճի մեջ:*

Գլուխ վաթսունհինգերորդ. *Եվ նոր երկինք ու նոր երկիր տեսա, քանզի առաջինն անցավ, և ծով չկար: Եվ սուրբ քաղաքը՝ Նոր Երուսաղեմը տեսա, քանզի [փեսայի համար] նախապատրաստված հարսի նման զարդարված իջնում էր երկնքից:*

Մեկնություն. *Այս մասին նաև Եսային է ասում ու Պողոսը գրում. «Բոլոր արարածներն ազատվելու են ապականության ծառայությունից» (Հռոմ 8.21), այսինքն՝ [մեղքի] հնությունից ու ախտից մաքրվելու են: Եվ շարժումից լուսատուները դադարելու են: Եվ «Նոր Երուսաղեմ» է անվանում սրբերի հոգիները, որոնք այժմ երկինք են բարձրացել, և նրանք փոխադրվելու ու պայծառանալու են:*

Գլուխ վաթսունվեցերորդ. *Եվ նա, որ նստած էր Աթոռի վրա, ասաց. Ահավասիկ նոր աշխարհ եմ ստեղծում: Եվ ասում է ինձ. Ես եմ Ալֆան և Օմեգան՝ Սկիզբը և Վերջը: Ես կենաց աղբյուրից ձրիաբար եմ տալու ծարավածներին: Ով հաղթի՝ ժառանգելու է այս ամենը:*

Մեկնություն. *Քանզի նա աստվածությամբ առաջինն էր և մարդկությամբ վերջինը եղավ, այլև բոլոր էությունների սկիզբն ու վախճանն է պարունակում: Կենաց աղբյուրը Սուրբ Հոգին է: «Ձրիաբար», քանզի այս աշխարհի չարչարանքը համեմատելի չէ սրբերի փառքին (Հռոմ 8.18), ասում է առաքյալը: Ով հաղթում է դևերի աներևույթ պատերազմում:*

Գլուխ վաթսունյոթերորդ. *Եվ յոթ հրեշտակներից մեկն ինձ հետ խոսեց և ասաց. Եկ, որպեսզի քեզ Գառան հարսին և կնոջը ցույց տամ: Եվ*

ինձ մի բարձր լեռան վրա տարավ: Եվ ինձ ցույց տվեց մեծ քաղաքը և սուրբ Երուսաղեմը, քանզի նա Աստծո մոտից, երկնքից էր իջել և Աստծո փառքն ուներ: Եվ նրա պարիսպները մեծ էին ու բարձր, և տասներկու դուռ ուներ: Եվ տասներկու դռները տասներկու զույգ մարգարիտներից էին: Եվ քաղաքի բնակիչները կարիք չունեին արեգակի և լուսնի, քանզի Աստծո փառքը հարաժամ լուսավորում էր նրանց:

Մեկնություն. *Հարսին Գառան կին է անվանում. քանզի ինչպես Ադամի քնի պահին նրա կողից առնդծվեց կինը, այնպես էլ խաչի վրա Քրիստոսի մահվամբ՝ կողի խոցումով առնդծվեց եկեղեցին, և սիրով նրան միավորվեց: Եվ տես. քանզի սա արդար դատաստանից հետո ցույց տվեց. որովհետև երբ մեղավորները կրակի լճի մեջ են ձգվում՝ արդարները հավիտենական կյանքի մեջ են փառավորվում: Եվ տասներկու դռներից յուրաքանչյուրի վրա Իսրայելի որդիների անուններն են: Քաղաքը՝ Աստծո հանգստյան վայրը, սրբերի հոգիներն են, որոնք կառուցվեցին Քրիստոսի հիմքի վրա: Եվ «դռները» տասներկու առաքյալներն են՝ միակամ իշխանությամբ, իսկ նրանց լուսատուն Քրիստոսն է:*

Գլուխ վաթսունութերորդ. *Եվ ինձ ցույց տվեց բյուրեղի նման կենդանի ջրի մի մաքուր գետ, որ դուրս էր գալիս Աստծո և Գառան աթոռից և գնում էր քաղաքի հրապարակների մեջ: Եվ գետի եզերքին այստեղ-այնտեղ կենաց ծառ կար, որ տասներկու պտուղ էր բերում: Եվ ծառի տերևը հեթանոսների բժշկությունն է:*

Մեկնություն. *Սուրբ Հոգին մաքուր, կենդանի գետ է, որ բխում էր այնտեղ, վերին քաղաքում, իսկ այստեղ՝ եկեղեցում, նոր մկրտվածների մեջ: Կենաց ծառը Քրիստոսն է, իսկ պտուղները՝ տասներկու առաքյալները, այլև՝ պարգևված առաքինությունները, իսկ տերևը Քրիստոսի վարդապետությունն է:*

Գլուխ վաթսունիններորդ. *Եվ ասում է ինձ. Այս խոսքերը հավատարիմ և ճշմարիտ են, և սուրբ մարգարեների Տեր Աստվածն իր հրեշտակներին ուղարկեց իր ծառայի մոտ՝ ցույց տալու համար շուտով լինելիքը: Ահա շուտով գալու եմ, երանի նրան, ով պահում է այս մարգարեության խոսքերը:*

Մեկնություն. *Քանզի մարգարեների Աստվածը Քրիստոսն է: Ահավասիկ հաստատում է. Նա առաքեց իր հրեշտակին և Հովհաննեսին տեսիլք ցույց տվեց: Ուրեմն Քրիստոսն անտեղյակ չէ ապագա դատաստանի օրվա և ժամի մասին, քանզի նրա մեջ են գանձված իմաստության գանձերը: Շուտով գալը ցույց է տալիս հանդերձյալի նկատմամբ [այս] կյանքի նվաստությունը:*

Գլուխ յոթանասուներորդ. *Ես՝ Հովհաննեսս լսեցի և տեսա այս բոլորը և ընկա ու երկրպագեցի հրեշտակին, որ ինձ այս բոլորը ցույց տվեց: Եվ ինձ ասում է. Ինձ մի՛ երկրպագիր, քանզի ես էլ քո ծառայակիցն եմ, Աստծուն երկրպագիր:*

Մեկնություն. *Այս սրբի սովորությունն է իր պատմությունն ավարտել իր վկայությամբ, ինչպես Ավետարանում: Եվ Հրեշտակին նույնը, որ Հրամայված է [ընդունել] առաքյալի երկրպագությունը: Նույնը Գաբրիելն արեց Դանիելի մոտ:*

Գլուխ յոթանասունմեկերորդ. *Եվ դարձյալ ինձ ասում է. Այս մարգարեական գրքի խոսքերը մի կնքիր: Անբարշտությունն անողը թող անբարշտություն անի, և արդարությունն անողը թող արդարություն անի: Ես եմ Ալֆան և Օմեգան, Սկիզբը և Վերջը, Առաջինը և Վերջինը: Ինձանից առաջ չկա Աստված, ինձանից զատ չկա ոչինչ, որ ծայրագույն սկիզբ լինի, և իմ աստվածային թագավորությանն ու իշխանությանը վախճան չկա:*

Մեկնություն. *[Ասում է] Ուրիշներին հայտնիր, քանզի սրա մեջ է մեղավորների պատիժը և արդարների փառքը: [Նաև] ամբարիշտների և արդարների փառքն ու տանջանքը ցույց ավեց, որից հետո կամքին է թողնում: Սկզբում Քրիստոսի անօրինության համար ասվեց «Առաջին և Վերջին»:*

Գլուխ յոթանասուներկուերորդ. *Ես՝ Հիսուս, իմ Հրեշտակին ուղարկեցի այս բոլորը վկայելու բոլոր եկեղեցիներին: Ես Դավթի արմատից և տոհմից եմ: Առավոտի պայծառ աստղն եմ: Հոգի և փեսա եմ, որ գալու եմ: Եվ ով լսի, պիտի ասի, թե եկ: Ով ծարավ է, թող գա, և նա, որ կամենում է, թող կյանքի ջուրը ձրի առնի: Ոչ ոք չի կարող սրա վրա ավելացնել կամ [սրանից] պակասեցնել: Այս խոսքերը վկայողն ասում է. Ես շուտով գալու եմ: Ամեն: Եկ, Տեր Հիսուս Քրիստոս: Տեր Հիսուսի շնորհքը բոլոր սրբերի վրա լինի. ամեն:*

Մեկնություն. *Հրեշտակը Քրիստոսի անունով է խոսում, քանզի նրա հրամանների պատգամավորն է: Քրիստոսը որպես Աստված Դավթի արմատն է և նրա [Դավթի] տոհմից է, քանզի մարմնով նրանից ծագեց: Սուրբ Հոգին, որ ստացանք Քրիստոսից, մեզ նրա հարսը դարձրեց: «Ծարավ» [ասելով նկատի ունի ծարավ] ճշմարիտ հավատքի իմացության [նկատմամբ]: Արտեմոնը և իր համախոհները եղծում էին Սուրբ Գիրքը: Նրանց պատճառով Քրիստոսը վկայեց, թե այս հայտնությունն իրենից է: Եվ նա շուտով պիտի գա՝ հանդիմանելու անհավատներին և գովաբելու հավատացյալներին: Եվ նրան՝ իր Հոր և ամենասուրբ Հոգու հետ միասին, փառք և երկրպագություն հավիտյանս. ամեն[43]:*

Ահա սրանք են այն բոլոր վկայությունները, որոնք համառոտաբար ժողովեցի Սուրբ Գրքի մարգարեներից և առաքյալներից: Տեսիլքն ընդարձակորեն բերեցի նախ՝ որովհետև այնտեղ շատ է աստվածաբանությունը, երկրորդ՝ որովհետև սրա խոսքերը եկեղեցու մեջ շատերին անծանոթ են: Համառոտ խոսքով բան մեկնիչի[44] բացատրությունը բերեցի՝ լսողներին ուսուցանելու և մեր՝ սրա վրա աշխատողներիս հիշատակի համար: Սրանից առաջ սուրբ և ուղղափառ վարդապետների՝ մեր Աստծո՝ Քրիստոսի անօրինության մասին ասված խոսքերը վկայաբերեցի:

Գլուխ ԼԳ

ՄԵՐ ՏԻՐՈՋ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅՈԹ ՈՒՂՂԱՓԱՌ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԻՑ

Վկայություններ մեր Լուսավորիչ Գրիգորից

Արդ՝ Աստված իր Որդուն աշխարհ ուղարկեց և կնոջից մարմնով ծնվեց ու ամեն մարմին կենդանացրեց և մահկանացուներին անմահացրեց անմահ Հոգով և փառաբանվելու է աստվածեղեն փառքով: Ապա ասում է. Աստված առաքվեց Աստծո կողմից Սուրբ Հոգով, Բանն Աստված մարմին առավ Կույսից, եղավ կատարյալ մարդ, կատարյալ Աստվածությամբ, մարմնով ծառայակից եղավ մարդկանց և մեղքից ազատեց մարդկային մարմինը: Դժոխք իջավ և այնտեղից հանեց մարմնով դժոխքում արգելվածներին, հալածվեց և հալածեց սատանային և մեղքը կապեց: Նրանց, ովքեր մարմնին հավատացին, իր Աստվածությունը ճանաչեցրեց, [սակայն] նրանք, ովքեր գայթակղվեցին նրա մարմնով, ուրացան նրա բնությունը. որովհետև մարմնին բնությամբ միացավ, և [իր] Աստվածությունը մարմնին խառնեց: Ովքեր նրան հավատան, նրանք անպատմելի բարիք պիտի վայելեն: Եվ նրանք, ովքեր վրիպեցին այս հավատքից, ոչինչ չգտան և վերևից ընկան, ինչպես սկզբի ընկածները: Եվ մի փոքր հետո ասում է. Նա, որ աստվածային լրությամբ խոսքով անհասանելի էր, մեզ համար իջավ անարգության (աստիճանի), որպեսզի մեզ բարձրացնի: Մարդկային մարմին առավ, այլև մարմինը խառնեց, միացրեց, ընկղմեց իր Աստվածության մեջ: Ապա ասում է. Անսահման հավիտենականությունից առաջ [նա] Հոր առաջին ծնունդն է, մշտնջենական ծնունդ է մշտնջենական Հորից: Նաև Սուրբ Հոգու բխումը: Երեք Անձեր, մեկ զորություն, մեկ բնություն, մեկ էություն, մեկ միասնական փառք: Եվ քանզի ոչ ոք չի կարող քննել՝ հավատացե՛ք Երրորդությանը, ճշմարտեցե՛ք միությունը: Եվ այս է ճշմարիտ հավատքը. որովհետև խոնարհվեց և իր Աստվածությունը խառնեց մարդկության հետ, անմահը՝ մահկանացուի հետ, որպեսզի բովանդակ մարդկությունն անբաժանելի դարձնի իր Աստվածության անմահությունից: Երբ մարմնով Հոր մոտ մտավ աջ կողմից, Աստծո միածին Որդին իր Աստվածությունը խառնեց մեզ: Հոր Աջն ու Բազուկը միածին Քրիստոսն է: Ի սկզբանե էր Բանը, և Բանն էր առ Աստված, և Աստված էր Բանը: Ամենայն ինչ նրանով եղավ: Նրանով հաստատվեց այն, ինչ երկնքում էր, և այն, ինչ երկրում: [Ուրեմն] հարկ էր, որ մաքրվեն նրանով, որով եղան և հաստատվեցին, ու նրանով լուսավորվեն: Աստված կամենում է, որ արարածներն ապրեն և չկորչեն: Արդ, Աստված Սուրբ Հոգին առաքեց Կույս Մարիամին և Աստվածորդին Կույսից մարմին առավ, որով կործանեց չարը և նույն մարմնով դատապարտեց մեղքը: Աստվածախառն մարմինը խառնեց բարձրախառն խա-

նորհությանը, անհրաւլթը միայրեց տեսանելիին:

Սուրբ Գրքից և Եկեղեցու օրենքներից [ընդունած] այս ճշմարիտ հավատքը (մեզ համար) առաջնորդ ունենք կյանքի ճանապարհին՝ դեպի Աստված՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսով: Այս վկայությունը մեր սուրբ Գրիգոր Լուսավորչից է[45]:

Սրանից հետո վկայություններ դնենք սուրբ Գրիգոր Աստվածաբանից:

Վկայություններ սուրբ Գրիգոր Աստվածաբանից

Քրիստոս ծնվեց՝ փառաբանենք. Քրիստոսին դիմավորենք: Դարձյալ լուծվում է խավարը, դարձյալ հաստատվում է լույսը: Տառը տեղի է տալիս, Հոգին հաղթում է: Ստվերն անցնում է, և ճշմարտությունը ներս մտնում: Մելքիսեդեկը ժողովում է, անմայրն անհայր է լինում. առաջ՝ անմայր, հետո՝ անհայր: Բնության օրենքները խզվում են, անմարմինը մարմնանում է, Բանը նյութանում է, Անտեսանելին տեսնվում է, Անշոշափելին՝ շոշափվում, Անժամանակը՝ սկսվում, Որդին Որդի է լինում, հրեաները գայթակղվելու են, հեթանոսները խնդալու են, հերետիկոսները դատախոսելու են: Այնժամ պիտի հավատան, երբ երկինք գնալը տեսնեն: Եվ եթե այնժամ չտեսնեն, ապա երկնքից իջնելը և իբրև Դատավոր նստելը [կտեսնեն]: Բայց սրանք՝ հետո: Սակայն այժմ Աստվածահայտնության տոնն է, քանզի ծնունդով մարդ [լինելով], Աստված երևաց: Այսօր այս ենք տոնում՝ Աստծո գալը մարդկանց մոտ, որպեսզի մենք Աստծո մոտ գնանք ու վեր բարձրանանք: Հին մարդուց ձերբազատվենք և նորը հագնենք, և ինչպես Ադամով մեռանք, նույնպես Քրիստոսով պիտի ապրենք: Եվ մի փոքր հետո ասում է. Հոր Սահմանն ու Խոսքն իր կերպարանքն է առնում և մարմին է հագնում մեր մարմնի համար: Եվ իմանալի Հոգին իմ հոգու համար միախառնվում է՝ նմանով նմանին մաքրելով և ունենում ամեն ինչ, բացի մեղքից: Կույսից մարդ ծնվածը որպես Աստված եկավ առացվածքի հետ միասին: Երկու ընդդիմակա [իրողություններից կազմըվածը] մեկ միություն է՝ մարմնի և հոգու, որոնցից մեկին աստվածացրեց և մյուսով Աստված մնաց. նոր խառնում և զարմանալի խառնվածք: Նա, որ կար, լինում է, ժառանգորդը ժառանգում է, անպարունակելին պարունակվում է: Հարուստն աղքատանում է իմ մարմնով, որպեսզի ես հարստանամ նրա Աստվածությամբ, լցվածը թափվում է, որպեսզի նրա լիությունից առանանք: Այս է իմ մեջի խորհուրդը՝ ընդունեցի [Աստծո] կերպարանքը և սակայն չպահեցի: Մարմին է առնում, որպեսզի կերպարանքը պահպանի և մարմինն անմահացնի: Երկրորդն առաջինից հրաշալի է. այնժամ վեհագույնից ավեց, իսկ այժմ վատթարագույնից է առնում: Սա առաջինից աստվածատեսակ է [և նրանց համար է], ովքեր բարձրագնա միտք ունեն: Եվ մի փոքր հետո ասում է. Մարմնո՞վ ես գայթակղվում. այդպիսին էին նաև հրեաները, ովքեր սամարացի էին անվանում և նման կարգի [բաներ], [որոնց մասին] լսում եք: Չե՞ս հավատում Աստվածու-

թյանը. չեն հավատում նաև դևերը: Ո՞վ է հրեաներից ավելի անհավատ. դու դևերից էլ չարաչար ես: Նրանք Որդի անվանումը զուգապատվություն համարեցին, և դևերը, որոնց հալածում էր, Աստված նկատեցին [նրան], քանզի հնազանդվում էին այդ չարչարանքին: Սակայն դու ոչ հավասարությունն ես ընդունում և ոչ Աստվածությունն ես խոստովանում: Նախընտրելի է քեզ թլփատվել և դիվահարվել, որպեսզի ծաղրական բաներ խոսեմ, քան թե անթլփատությամբ և ողջությամբ մնալ չարաչար և անաստվածաբար: Բայց այժմ ինձ պատմիր ծննդի մասին, որ ոչ թե Հովհաննեսի նման սովորականից էր, այլ Դավթի նման՝ տապանակի հանդամից: Աշխարհագրից պատկառիր, որով երկնքում արձանագրվեցիր, ծնունդը պաշտիր, որով ազատվեցիր ծննդի կապանքներից, Բեթղեհեմը պատվիր, որ քեզ վերստին դրախտ տարավ, մսուրը երկրպագիր, որով դու՝ անբանդ Բանից կերակրվեցիր: Եսային հրամայում է քեզ. Ինչպես եզ ճանաչի՛ր քո Տիրոջը, և ինչպես էշ [ճանաչի՛ր] քո Տիրոջ մսուրը (Եսայի 1.3): Եթե մաքրվածներից ես և օրենքի տակ եղածներից, որոճումը խոսքի կվերածես և պատշաճ զոհի: Իսկ եթե առկավին անմաքուրներից, չուտվողներից և չմարթվողներից, որոնք մասն են հեթանոսականի, ընծայաբեր մոգերի հետ դեպի աստղն ընթացի՛ր՝ [նրան] բերելով ոսկի, կնդրուկ և զմուռս՝ որպես Թագավորի, որպես Աստծո և որպես քո մեռելության նշանակի: Աստծուն տեսնելով՝ հովիվների հետ փառաբանիր, հրեշտակների հետ օրհներգիր, հրեշտակապետերի հետ պարիր: Սուրբ Երրորդությամբ երկրպագվելը և փառավորվելը տեսնելով՝ [փառաբանիր նրան], որ հավիտյանս օրհնյալ է. ամեն:

Այս վկայությունները Գրիգոր Աստվածաբանից էին[46]:

Վկայություններ Գրիգոր Սքանչելագործից

Նրան իսկ, որ սրբությունների վարդապետ էր, վայել էր, որ անարատ և սուրբ արգանդից դուրս գար և փառավորվեր, քանզի նա էր, որ կույս հողից Ադամին ստեղծեց և Ադամից լույս աշխարհ բերեց առանց կնոջ Եվա կնոջը, [ըստ իր] պատկերի: Եվ ինչպես Ադամն առանց կնոջ լույս աշխարհ բերեց կնոջը, այնպես էլ այստեղ առանց տղամարդու Կույսը ծնեց մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Եվ այսպես, կանանց սեռը պարտավոր էր փոխհատուցել տղամարդկանց, քանզի ինչպես Ադամի կինն առանց կնոջ, այնպես էլ կնոջից առանց տղամարդու մարդ [ծնվեց], որպեսզի Ադամը չմեծամտի, թե առանց կնոջ կին բերեց, նույնպես Կույսը [չմեծամտի], թե առանց տղամարդու մարդացած Աստված ծնեց: [Ինչո՞ւ]. որպեսզի տղամարդկանց և կանանց պատիվը հավասարվի: Դարձյալ՝ ինչպես Ադամի կողից վերցվեց, և նա չպակասեց, այնպես էլ Կույսից մարմին առացավ, և կուսությունն անկողոպտելի մնաց: Եվ ինչպես Ադամը ողջ և անարատ մնաց նրանից կողը վերցվելուց հետո, այնպես էլ անթերի և անարատ մնաց Կույսը նրանից մարմին դուրս գալուց հետո. այս պատ-

ճառով Կույսից մարմին առավ:

Այս մեծ տոնի ժամանակավոր կապանքները խորտակվում են, սատանան ամոթապարտ է լինում, և բոլոր դևերը փախստական են լինում: Մեռցնող մահը կյանքի վերածվեց: Դրախտը բացվեց: Անեծքն օրհնության վերածվեց, և բոլոր մեղքերը ընկրկեցին: Մոլորությունը հալածվեց, քանզի ճշմարտությունը եկավ հասավ: Եվ աստվածապաշտության բարբառը սփռվեց բովանդակ տիեզերքով մեկ: Հրեշտակները հաղորդակցվեցին մարդկանց հետ, և մարդիկ հրեշտակների հետ խառնվեցին, քանզի Աստված երկիր իջավ, և մարդիկ երկինք բարձրացան:

Այս վկայությունները Գրիգոր Սքանչելագործից[47] էին:

Վկայություններ սուրբ Բարսեղ Կեսարացուց[48]

Աստված երկրում, Աստված երկնքում, Աստված մարմնի մեջ է՝ ոչ թե առակավոր գործերով, ինչպես մարգարեների միջոցով էր, այլ ըստինքյան բուսակից ու միավորված [լինելով]՝ իր մեջ ներկա ցույց տալով մարդուն, մեր ազգակցի՝ իր մարմնի միջոցով դեպ վեր, իր մոտ բարձրացրեց բովանդակ մարդկությունը: Ի՞նչ օրինակով ցույց տանք մարմնի մեջ Աստվածությունը. ինչպես կրակը երկաթի մեջ ոչ թե փոխարկությամբ է, այլ՝ փոխատրությամբ, քանզի ոչ թե երկաթից հուր է արտադատվում և [փոխում] երկաթի [բնույթը], այլ, չփոխելով իր բնությունը, իր զորությունը փոխատրությամբ հաղորդում է, որով չի նվազում փոխատրությամբ, և ամբողջովին կլանվում է ընդունողի կողմից. ըստ այսմ աստվածային Բանը չի փոխում իր բնույթը և բնակվում է մեր մեջ՝ «Եվ Բանը մարմին եղավ»: Երկինքը թափուր չեղավ նրան ընդունողից, երբ երկիրն իր ծոցում էր ընդունում երկնայինին: Եվ ինչո՞ւ են [ասում]. Աստծո Բանը չփոխվեց մարմնանալով:

Պատասխանենք. նաև կրակը երկաթի հատկությունից ոչինչ չի առնում: Երկաթը սև է և սառն, սակայն շիկանալով՝ կրակի կերպարանք է ընդունում, և ինքը պայծառանալով՝ չի սևացնում կրակը, և տաքանալով՝ չի սառեցնում հուրը: Այսպես էլ մարմինը հաղորդվելով Աստվածությանը՝ նրան չփոխադրեց իր տկարությունը, քանզի, ինչպես կրակը, թույլ չի տալիս, որ արարածն ազդի Աստվածության վրա: Դարձյալ ասում է. Այս պատճառով Աստված մարմնում է [բնակվում], որպեսզի սպանի նրա մեջ բույն դրած մահը: Մահն անգիտանալով՝ նրան կուլ տվեց, կենդանությանը կուլ տվեց, և ընկղմվեց կենդանության մեջ, ինչպես խավարն է փարատվում լույսից: Ինչպես ջուրը սառն է, քանի դեռ ժամանակը գիշերային է և շատ է խոնավությունը, իսկ արեգակից տաքանալով՝ ջերմանում է նրա ճառագայթներով, այդպես էլ մահը թագավորեց մինչև Քրիստոսի գալուստը: Եվ մի փոքր հետո ասում է. Պատճա՞ռն ես հարցնում, [ուրեմն] իմացիր, որ Աստված մարմնի մեջ էր, որովհետև հարկ էր, որ այս մարմնի անեծքը սրբեր, օտարացածին Աստծո հետ

ընտանի գազաններ, գլխատից զրկվածին վերստին երկինք բարձրացներ:

Վկայություններ սուրբ Եպիփան Կիպրացուց[49]

Ով Կույս, Տիրոջ անարատ մայր, անբաժանելի Սուրբ Երրորդության երանելի Հարս, երանելի ես դու կանանց մեջ, որ մանուկ ծնեցիր երկրի վրա, որ առաջ էր, քան հավիտենությունը: Դու բոլորի Արարչի մայրը եղար և միայն դու ծնեցիր բոլորի Աստծուն: Նա՛, որին դու քո ստինքով կերակրեցիր, զարմանում է բոլոր արարածներին: Երանելի ես, Աստվածածին, որ դու միայն ծնեցիր Աստծո Որդուն, որ քեզնից և բովանդակ հավիտենությունից առաջ էր, քանզի ոչ թե ժամանակավոր Աստված ծնեցիր, այլ՝ հավիտենական: Անարատ մորենի, որ Քրիստոս Գառանը ծնեցիր: Անփորձ երինջ, որ Քրիստոս Հորթին ծնեցիր: Հավատքի իմանալի սեղան, որ կենաց հացն աշխարհին մատակարարեցիր: Ի՞նչ ասենք կամ ի՞նչ խոսենք: Ո՛վ սուրբ Կույս, մայր հավիտենական Լույսի, որ լուսավորեց հրեշտակաց զորքերը: Լույս, որ լուսավորեց բոլոր արարածներին: Լույս, որ ասաց. «Ես աշխարհ եկա [որպես] լույս» (Հովհ 12.46): Լույս, որ համբարձվեց և լուսավորեց այն, ինչ երկնքում էր, և այն, ինչ երկրում, որին փառք հավիտյանս. ամեն:

Սուրբ Կյուրեղ Ալեքսանդրացու վկայություններն ընդդեմ մարդադավան Նեստորի[50]

Արդ՝ Պողոս առաքյալը տիեզերքի մեջ համադս Երրորդության, մի Տիրոջ, մի հավատքի, մի մկրտության, մի Հոր, մի Որդու, մի Սուրբ Հոգու՝ անստահմանելի, անհասանելի Աստվածության [նկատմամբ] հավատքի ճշմարտությունը հաստատագրեց: Կույս Մարիամից ծնվածը՝ Տեր Աստծուց [ուղարկված] Աստված է և նրա փառքի ճաճանչը, լույսից [ուղարկված] լույս: Ինչպես Գաբրիելն է Կույսին ասում. «Սուրբ Հոգին քո մեջ կհանգչի և Բարձրյալի զորությունը հովանի կլինի քեզ. այդ պատճառով նա, որ ծնվելու է քեզնից, սուրբ է, և Բարձրյալի Որդի պիտի կոչվի» (Ղուկ 1.32): Ոչ միայն Գաբրիելի, այլև Դավիթ մարգարեի միջոցով համապատ հնչում է եկեղեցու մեջ. «Տերն ասաց ինձ. իմ Որդին ես դու, և ես այսօր ծնեցի քեզ» (Սաղ 2.7): Եվ մեծն Եսայի մարգարեն մեկնաբանելով ասում է. «Ահա կույսը պիտի հղանա և Որդի պիտի ծնի, ու նրա անունը Էմմանուել պիտի կոչեն» (Եսայի 7.14): Իսկ եթե չես հավատում առաքյալներին, մարգարեներին, ավետարանիչներին և Գաբրիելին, գեթ, այսինքն՝ գոնե քեզ նման դիվաբնակներին [հավատա], որոնք սարսափեցին զորությունից և աղաղակեցին. «Ի՞նչ կա մեր և քո միջև, Աստծո Որդի Նազովրեցի. ժամանակից շուտ եկել ես տանջելո՞ւ մեզ» (Մարկ 1.24): Նաև քեզ մոլորեցնող սատանային չխաբվեցիր, որ ասում էր. «Եթե Աստծո Որդի ես, ասա, որ այս քարերը հաց լինեն» (Մատթ 4.3): Ա՛յ քեզ զարհուրանք. դևերն իրենց հոր՝ սատանայի հետ Աստծո Որդի են անվանում Մարիամից ծնվածին, իսկ սա (Նեստորը) Աստծո Որդուն հասարակ մարդ է դարձնում:

Սուրբ Աթանաս Ալեքսանդրացի[51] հայրապետի վկայությունները

Անճառելի են այն խորհուրդները, որոնք ամենասուրբ կույսի միջոցով երևացին մարդկային ցեղին, [դրանք] անքննելի և անհասանելի են ոչ միայն մարդկանց, այլև՝ հրեշտակներին: Նրանց համար անմատչելին՝ անսկիզբ Բանը պարունակվեց և ծնվեց. նա, որ Հոր ծոցից առաքվեց մեր փրկության համար: Օրհնյալ ես դու՝ կանանց և մարդկանց մեջ ամենասուրբդ, և օրհնյալ է քո որովայնի պտուղը, որ փառքի Տերն է: Ուրախ լեր, սրբուհի անարատ մայր, որ քեզնից մարմնացավ մեր Աստված Քրիստոսը, որ Հոր և Սուրբ Հոգու էակցին՝ Աստված Բանին ծնեցիր, որով փրկվեցինք: Ուրախ լեր, մայր և կույս Աստվածածին, քանզի Աստված ծնեցիր. մայր՝ քանզի դու ծնեցիր, և կույս՝ քանզի միշտ անապական մնացիր: Լույսի, կյանքի և խաղաղության մայր. լույսի, քանզի քո Միածին Որդու միջոցով լուսավորվեցինք մեղքի խավարում. կյանքի, քանզի Քրիստոս Աստված վանեց մահվան դատնությունը և կյանք ու ազատություն շնորհեց. խաղաղություն, քանզի Բանն Աստված խաղաղություն արարեց երկնքում և երկրում:

Եվ մի փոքր հետո ասում է.

Ուրախ լեր, Մարիամ, որ մեզ համար, որպես ճշմարիտ լույս, մարդացած անեղական Բանին ծնեցիր համաձայն մարգարեի խոսքի. «Նրա անունը Ծագում է, և նա իր տեղում պիտի ծագի» (Զաք 6.12), նաև՝ «Նրա ներսում իբրև հուր բոցկլտաց»: Անախտ Աստված Բանին, մեզ համար մարդ եղած Աստծուն կրեցիր որովայնումդ, ամուսնությանն անհաղորդ լինելով՝ էմմանուելին ծնեցիր՝ ինքնագո գոյությանը, ժամանակների արարչին: Յուղաշեն լույսի հանգստարան, մարմնացած Տիրոջ աստվածէջ վայր, ցողի իջման վայր, ըստ Մովսեսի. «Իմ պատգամները որպես ցող պիտի իջնեն» (Բ Օր 32.2): Եվ Դավիթն ասում է. «Որպես անձրև իջնում է գեղմի վրա, [իջնում է] որպես ցող, որպեսզի ցողի երկիրը, և նրա ցողով զվարթանան անապատի բույսերը» (Սաղ 71.6): Մարիամ՝ դուստր Դավիթ մարգարեի, որ ընդունեցիր պատվական մարգարտին, երկնավոր գանձին, զորությունների թագավոր Քրիստոսին, համաձայն այն խոսքի, թե՝ «Լսիր, դուստր, և տես, քանզի թագավորը քո գեղեցկությանը փափագեց. նա ինքը քո Տերն է» (Սաղ 44.11): Քանզի Աստված քեզ հոժարելով իր Աստվածությամբ տեղավորվեց քո որովայնում, օրհնութենաբեր կույս, «որովհետև քեզնով օրհնվեցին երկրի բոլոր ազգերը» (Գաղ 3.8): Քանզի արևից առաջ ծնեցիր, և Հուր Աստծուն առանց այրվելու ծնեցիր: Եվ ինչպես տաճարն առանց երկաթի կառուցվեց, այնպես էլ Քրիստոս Աստված Բանը ծնվեց՝ առանց բաժանվելու և մեկուսանալու [Աստվածությունից]: Այլև արդարության Արեգակ ծնեցիր, ըստ Սողոմոնի. «Արեգակը դուրս է գալիս, արեգակը մայր է մտնում և վերադառնում է իր

անգը» (Ժող 1.5): Դարձյալ [ասում է]. «Արեգակը դուրս է գալիս և ճանաչում է իր մայրամուտի ժամը» (Սաղ 103.19): [Դու,] Մարիամ, մեզ լուսավորող Հրաբորբոք յոթնաջահյան աշտանակ ես, ըստ այն [խոսքի, թե]՝ քո խոսքերն իմ ոտքի ճրագն են և լույս են տալիս իմ շավիղներին: Նաև՝ Աստծո քաղաք ես, փրկության քաղաք, քանզի փառավորյալը հանուն քեզ խոսեց, քաղաք ես ապաստանության և տուն ապավինության: Դու, որ մեղավորների ապավենն ես, Քրիստոսին՝ մեր Աստծուն անդադար բարեխոսիր՝ մեզ պահելու համար: Եվ մի փոքր հետո նույն սուրբ Աթանասն ասում է. «Նաև մենք ճշմարտապես խոստովանում ենք անապական մարմնի մեջ անօրինությունը, քանզի Բանը բովանդակությամբ մարմին եղավ և սրանց [Աստվածությունից] բաժանվելու միացավ անապական և աներծական մարմնին և կուսական արգանդն անապատ պահեց: Նա, ըստ Մովսեսի գրքի, ոսկի տապանակ է, աննյութ խորան և քավություն. մի է կույսից մեկ բնությամբ եղած մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսը: Ունկնդիր լինենք մարգարեական գրքերին, քանզի նրա մարմնի բնությունն անապական ցույց տվեցին. չեմ ուրանում բնությունը և չեմ բաժանում միավորությունը, այլ անշփոթ միությունն եմ անվանում, քանզի [նա], որ Հոր ծոցում էր, կույսի ծոցում ոչ մեծացրեց իր փառքը և ոչ [էլ] նվազեցրեց: Լույսի մեջ երևալով Բեթղեհեմում, խորհուրդն իրականացնելով մսուրի մեջ՝ ինքը հանգստանում է քերովբեների մեջ և չի պատարոշվում, քանզի երկնքից է իջնում և մնում երկնքում: Աննվազելի Աստված Հորդանան է իջնում և մկրտվում, որպեսզի սուրբ ավազանի արգանդը մաքրի: Հայրը երկնքից վկայելով հայտնում էր Որդու մասին, և Սուրբ Հոգին աղավնու կերպարանքով էր իջնում, որպեսզի Երրորդության միությունը ծանուցի մեզ: Կարապետի ներկայությամբ՝ Որդուն էր բարձրաձայն դավանում. «Սա է Որդին և Գառն Աստծո, որ պիտի աշխարհի մեղքը վերցնի» (Հովհ 1.29): Նաև մենք հավատքով և մտերմությամբ ընդունենք Որդուն [որպես] մարմնացած Աստված, որ, մտնելով Հորդանանի ջրերի մեջ, ջախջախեց վիշապին և ջրի մեջ պահճապես չարին ոտքի տակ առավ: Այստեղ կատարվում է մարգարեի խոսքը, թե՝ «Միանգամից մի բովանդակ ազգ ծնվեց երկրում» (Եսայի 66.8) և դալարացրեց ու անապական դարձրեց ավազանով հոգիների ծնունդը՝ Քրիստոս Հիսուսով՝ մեր Տիրոջով, որին փառք հավիտյանս. ամեն»:

Այս վկայությունները համառոտաբար ժողովեցի մարգարեներից, առաքյալներից և հայրապետներից, որոնք խոսեցին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մասին. նախ՝ որովհետև ամեն խոսք վկայությամբ է հաստատվում, երկրորդ՝ ընդդեմ է պանազան հակառակությունների, երրորդ՝ հաստատելու համար ուղղափառ հավատքը և հերքելու համար հերձվածողներին: Ձանձրանալու համար չերկարեցրինք, քանզի ճշմարտության խոսքը և ուղիղ հավատքի շավիղը հակիրճ է ու համառոտ:

Այսքանը երրորդ հատորն է:

Հատոր չորրորդ

Գլուխ ԼԴ

ԱՆՀԱՎԱՏՆԵՐԻ ՈՒԹ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Սուրբ և աստվածաշունչ գրքերում ուղղափառ հավատքի մեջ ամրապնդվելուց հետո, բեր տեսնենք անհավատների հարցումները, [նաև] նրանց պատասխանները տանք, որ ասում են, թե Քրիստոս լոկ սուրբ մարդ էր·

Նախ՝ որովհետև իբրև մարդ ծնվեց մորից,

երկրորդ՝ ասում են, [թե] իբրև մարդ թլփատվեց,

երրորդ՝ ասում են, [թե] իբրև մարդ մկրտվեց,

չորրորդ՝ ասում են, [թե] իբրև մարդ քաղցեց և կրքեր ունեցավ,

հինգերորդ՝ ասում են, [թե] իբրև մարդ աղոթեց,

վեցերորդ՝ ասում են, [թե] իբրև մարդ մեռավ,

յոթերորդ՝ ասում են, [թե] իբրև մարդ թաղվեց,

ութերորդ՝ ասում են, [թե] իբրև մարդ հարության առավ:

Այս է նրանց՝ անհավատների դայթակղությունն ու կործումը:

Իսկ մենք ի՞նչ կարող ենք տալ այս կապակցությամբ: Քո բոլոր հարցումներին նախ կարճառոտ պատասխանենք, թե այդ, որ ասում ես, թե իբրև մարդ ծնվեց, թլփատվեց և այլն, քո նույն այդ խոսքը վկայում է, թե Քրիստոս Աստված է: Քանզի «իբրև մարդ» խոսքը ցույց է տալիս, որ Քրիստոս ըստ էության Աստված է, բայց մարմնով ծնվեց իբրև մարդ, քաղցեց իբրև մարդ և այլն: Արդ՝ թեպետև վերը մարգարեներից, տաս-

քյալներից, ավետարանիչներից և սուրբ հայրերից բերված վկայություններով հաստատվեց, որ Քրիստոս ճշմարիտ Աստված է, այդուհանդերձ այստեղ չորս վկայություններով համառոտ ցույց տանք, թե ինչպես ենք հավատում, որ Քրիստոս ճշմարիտ Աստված է:

Նախ Հովհաննես Մկրտիչն ասում է. «Ահա Քրիստոս՝ Գառն Աստծու» (Հովհ 1.36), և «Ես տեսա ու վկայեցի» (Հովհ 3.11) և այլն:

Երկրորդ՝ Քրիստոսի հրաշքները, այն, որ մեծամեծ գործեր էր կատարում: Ասում էր. «Եթե ինձ չեք հավատում, գոնե գործերին հավատացեք» (Հովհ 14.12): Ինչպես արհեստավորն է ճանաչվում իր գործով և ծառն՝ իր պտղով, Քրիստոսն էլ՝ իր հրաշագործություններով:

Երրորդ՝ Հոր ձայնը վկայեց. «Դա է իմ սիրելի Որդին» (Մատթ 3.17, Մարկ 9.6), նաև՝ [Սուրբ] Հոգու էջքը Քրիստոսի վրա: Եվ ձայնը երեք վայրում վկայեց Որդու համար. նախ՝ Հորդանանում, երկրորդ՝ Թաբոր լեռան վրա, երրորդ՝ խաչի վրա:

Չորրորդ՝ մարգարեների կողմից գրված վկայությունները. Եսային ասում է. «Նրա անունը Էմմանուել պիտի կոչեն» (Եսայի 7.14): Երեմիան ասում է. «Մեր հոգու երեսը Տեր Քրիստոս է» (Ողբ 4.20), «Երկրի վրա պիտի երևա և մարդկանց մեջ պիտի շրջի» (Բար 3.38): Մովսեսն ասում է. «Ձեր կյանքը փայտի վրա կախված պիտի տեսնեք» (Բ Օր 28.66): Եվ բոլոր մնացյալը, որ վերը ցույց տվեց:

Պատասխանն այն [խոսքի], որ ասում է, թե լոկ սուրբ մարդ է Քրիստոս: Ասենք, որ [սրա] տեսությունը երեքն է. նախ աչքերի համար, երկրորդ՝ մտքի, երրորդ՝ հավատքի, քանզի աչքով զգալիներն են տեսնվում, մտքով՝ իմանալիները և հավատքով՝ անիմանալիները: Արդ՝ աչքը սխալվում է, ինչպես [օրինակ, երբ] նավի ղեկը ջրում բեկված է տեսնում և քառանկյուն աշտարակը՝ բոլորակ: Միտքը սխալվում է Աստծո տեսության մեջ, ինչպես [օրինակ] իմաստունները մտքով չկարողացան Աստծուն ճանաչել: Սակայն հավատքը լույս է, որ մարդկանց վրա իջած Աստծո շնորհներից է, նրանով է ճանաչվում Աստված: Արդ՝ ով չունի հավատքի լույսը, չի ճանաչում Քրիստոսին [որպես] Աստված, այլ, ինչպես հրեաները, միայն երևացողն է տեսնում. «Դու մարդ ես և քո անձն աստված ես համարում» (Հովհ 10.33): Նույնպես այլազգիները մարմինը տեսնելով՝ լոկ մարդ և մարգարե[52] էին անվանում: Սակայն մարգարեն Մարդ և մարդու Որդի է անվանում. «Մարդու Որդու վրա, որին զորացրիր» (Սաղ 79.16): Եվ Ավետարանում իրեն մարդու Որդի է կոչում: Եվ ինչպես նախ մարմինն ենք տեսնում, հետո մարդու հոգին ենք ճանաչում, այդպես էլ նախ Քրիստոսի Մարդկությունն ենք տեսնում և հետո Աստվածությունը ճանաչում:

Դարձյալ՝ Քրիստոս մարդ է ճշմարիտ մարմնով, հոգով և մտքով, սակայն գերագույն մարդ է և ավելի քան մարդ է, քանզի մարդացած Աստված է: Ինչպես ասում է սուրբ Դիոնիսիոսը. «Քրիստոս ոչ մարդ է և

ոչ էլ ոչմարդ, այլ իբրև մարդ Գերագույն մարդ է»[53]:

Եվ այն, որ Քրիստոս առավել է, քան որդիքը, երևում է չորս բաներից:

Նախ՝ քանզի բոլոր որդիքը նրա մարմնով են մաքրվում. առաջ նահապետները Քրիստոսի խորհրդով մաքրվեցին, իսկ հետագայում մկրտվածները՝ նրա շնորհքով, ինչպես ասում է առաքյալը Եբրայեցիներին [հղած թղթում]. «Նրանք, ովքեր սրբում են և նրանք, ովքեր սրբվում են՝ բոլորն էլ մեկից են» (Եբր 2.11): Այսինքն՝ Ադամի նույն մարմնից են:

Երկրորդ՝ նա Փրկիչ է, իսկ որդիքը՝ փրկված. ինչպես ասվում է. «Հիսուս կոչվեց, որ [նշանակում է] Փրկիչ, քանզի նա պիտի փրկի իր ժողովրդին» (Մատթ 1.21):

Երրորդ՝ բոլոր որդիքն ապականացու մարմնով են, իսկ մեր Տերը՝ անապական մարմնով, «քանզի նրա մարմինը ապականություն չտեսավ» (Հմմտ Սաղ 15.10), ասում է Սաղմոսը:

Չորրորդ՝ նրա մարմինը կենդանարար է. «Ով իմ մարմինն ուտի և իմ արյունն ըմպի, հավիտյան կապրի» (Հովհ 6.55), իսկ մարդկանց մարմինն ուտելի չէ, [և ուտելի] է միայն գազանների համար:

Արդ ուրեմն պարզ է, որ Քրիստոս մարդ է և ավելի քան մարդ, քանզի մարմնով Աստված է, ինչպես ասում է Եսայի մարգարեն. «Եվ ո՞վ կճանաչի նրան»: Նույնպես մարդու Որդի է կոչվում չորս պատճառով. նախ՝ քանզի Ադամի մարմնից և արյունից է, երկրորդ՝ Հորը [որդեկիք] պարտքն է վճարում, երրորդ՝ ծնված է ինչպես Հորից, այնպես էլ՝ Կույսից, չորրորդ՝ քանզի Ադամի եղծված պատկերը նորոգեց՝ վերականգնելով նախկին պատկերը, որովհետև մարդը պատկեր է կոչվում, և Որդին՝ նորոգող: Բայց նաև Աստծո Որդի է կոչվում, ինչպես Գաբրիելը Կույսին ասաց. «Սուրբ է, և Աստծո Որդի պիտի կոչվի» (Ղուկ 1.35): Նախ՝ քանզի բնությամբ Որդին, որ Հորից անմարմին է ծնվել, մորից մարմնով ծնվեց: Երկրորդ՝ քանզի Կույսի արգանդում մեր մարդկային բնությանը խառնվելով՝ միացավ աստվածային Բանին: Եվ այսպես մեր Տերը կոչվում է մարդու Որդի և Աստծո Որդի, որովհետև մարմնի մեջ բնությամբ միավորված Աստծո Բանը մարդու Որդի է և, դարձյալ, մեր բնությանը միավորված Աստծո Բանը բնությամբ Աստծո Որդի է. ինչպես ինքն էր ասում. «Բարձրանում եմ Հոր մոտ և ձեր Հոր մոտ» (Հովհ 20.17), որովհետև նրա [համար] Հայր է բնությամբ և մեզ [համար]՝ շնորհով. «Աստված իմ և Աստված ձեր» (Հովհ 20.17), և մեզ [համար] Աստված է բնությամբ և նրա [համար], ըստ մարմնի, էությամբ: Այս է ճշմարտությունը:

Գլուխ ԼԵ

ՏԻՐՈՋ ԾՆՆԴՅԱՆ ՄԱՍԻՆ

Առաջին պատասխանը նրանց, ովքեր ասում են, թե իբրև մարդ ծնվեց: Նախ պետք է իմանալ, որ մարդկային ծնունդները չորսն են.

առաջին՝ ոչ մորից և ոչ հորից, ինչպես Ադամը,

երկրորդ՝ հորից և ոչ մորից, ինչպես Եվան,

երրորդ՝ հորից և մորից, ինչպես Սեթը և մնացած մարդիկ,

չորրորդ՝ մորից և ոչ հորից, ինչպես Քրիստոս:

Այս [մասին] է ասվում Աբրահամին, թե՝ մինչև չորրորդ ծնունդը քո զավակները ծառաներ են լինելու և հետո ազատվելու են (հմմտ Ծննդ 15.16):

Դարձյալ՝ Քրիստոսի ծնունդն այլ է՝ չորս կերպով:

Նախ՝ քանզի Սուրբ Հոգուց է, ինչպես Ավետարանն է ասում. «Նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ 1.20):

Երկրորդ՝ առանց նախասկզբնական մեղքի, ինչպես հրեշտակն է ասում. «Քեզնից ծնվողը Սուրբ է» (Ղուկ 1.35):

Երրորդ՝ առանց սերմի, ինչպես Ավետարանն է ասում. «Նրան չմերձեցավ մինչև որդու ծնվելը» (Մատթ 1.25):

Չորրորդ՝ անապական մարմին [ուներ], ինչպես ասում է Սողոմոնը Երգ Երգոցում. «Անարատ մարմին պիտի ծնես» (Երգ 8.5)[54]*:*

Մարմինն անարատ էր, նախ որովհետև անմեղ էր, երկրորդ՝ անապական, երրորդ՝ քանզի կարիք չուներ կերակուրի, թեպետ հանուն մեզ կուսական ստինքներից կերակրվեց, չորրորդ՝ քանզի զերծ էր բնական ախտերից:

Եվ դարձյալ Քրիստոսի ծնունդը ծնողի կողմից չորս կերպով է դասադասվում:

Նախ՝ քանզի նրա մայրն [արգանդ] սրբված էր որովայնից, ինչպես Երեմիան և Հովհաննեսը, ըստ Սողոմոնի խոսքի. «Քեզ արգանդից նախապատրաստեց» (հմմտ Իմաստ 7.2):

Երկրորդ՝ քանզի հովանավորված էր Հոր զորությամբ և գեղեցկացած Սուրբ Հոգով, ինչպես ասվում է. «Գեղեցիկ ես կանանց մեջ» (Երգ 1.7, 5.9):

Երրորդ՝ քանզի կուսությամբ հղացավ և ծնեց, ըստ Եսայու. «Կույսը պիտի հղանա և Որդի ծնի» (Եսայի 7.14):

Չորրորդ՝ հրեշտակի ավետումով: Եվ եթե մեկն ասի, թե Հովհաննեսն էլ [ծնվեց] հրեշտակի ավետումով, ապա կասենք, որ սա ևս չորս բանով է զանազանվում. նախ [հրեշտակը] նրան (Քրիստոսին) [որպես] Աստծո Որդի ավետեց, իսկ նրան (Հովհաննեսին) [որպես] Զաքարիայի որդի: Երկրորդ՝ նրան անվախճան Թագավոր [հռչակեց], իսկ նրան՝ ծառա: Երրորդ՝ նրան՝

կույս մորից [ծնված], իսկ նրան՝ ամուլ արգանդից: Չորրորդ՝ Հովհաննեսը կույսից [չծնվեց], բայց կուսությամբ ապրեց, իսկ Քրիստոսը Կույսից [ծնվեց] և կուսությամբ մնաց: Եվ դարձյալ, ի հավելումն այս ամենի, ըստ Հրեշտակի, Կույսից ծնվածն Աստված է. «Այսօր ձեզ Փրկիչ ծնվեց, որ Օծյալ Տեր է» (Ղուկ 2.11): Եվ Աստծո Սուրբ Եկեղեցին ծնողին Աստվածածին է խոստովանում, ըստ Եղիսաբեթի այն խոսքի, որ ասաց. «Թող ինձ մոտ գա իմ Տիրոջ մայրը» (Ղուկ 1.43): Եվ արգանդում Հովհաննեսը երկրպագեց Քրիստոսին, ու երեսուն տարի հետո, լսվեց [իբրև] «ձայն բարբառոյ յանապատի» (Եսայի 40.3) և վկայեց մարդացած Բանի մասին:

Այսքանը Տիրոջ ծննդյան մասին:

Տիրոջ թլփատության մասին

[Պատասխան] նրանց, ովքեր ասում են, թե իբրև մարդ թլփատվեց: Ասենք, որ թլփատության համար [պետք է] չորս բան իմանալ:

Առաջին՝ ինչո՞ւ կարգվեց թլփատությունը. ասենք, որ՝ յոթ պատճառով.

նախ՝ հիվանդություններից զերծ մնալու նպատակով, ինչպես եթովպացիք են այդ հիվանդություններից [խուսափելով] թլփատվում,

երկրորդ՝ որպեսզի մերձեցման պահին սերմնահեղուկը չճապաղի,

երրորդ՝ որպես ավելորդ ցանկություններից զերծ մնալու նշան և խրատ լինի,

չորրորդ՝ որպեսզի աստվածածանոթ ազգի հատկանիշը լինի,

հինգերորդ՝ որպեսզի օրինապահ ազգի հնազանդությունը ցույց տրվի,

վեցերորդ՝ որպեսզի ցույց տա Աբրահամի զավակից նրանց [սերված] լինելը,

յոթերորդ՝ որպեսզի ավետյաց խոստումի վրա հաստատված հիմքը և արմատը ցույց տա:

Երկրորդ՝ ի՞նչ է նշանակում թլփատությունը: Ասենք, որ՝ բազում բան:

Նախ՝ [դա] այլազգիներից զատորոշվելու նշան էր, ինչպես մարդն է նշան և դրոշմ դնում իր ոչխարներին, և այդ նշանը, որ այս կամ այն մասի վրա է [լինում], աչք ու ականջի, ոտքերի ու ռունգերի, (ժամանակի) ընթացքում նվազում, պակասում էր, սակայն թլփատված մասը ընթացքում չի պակասում: Իսկ թլփատված մազը, մորուքը կամ եղունգն աճում է, և թլփատությունը չի պահպանվում, մինչդեռ կտրված մասը չի աճում:

Երկրորդ՝ նշան է դնում և կտրում է ավելորդ ցանկություններից ու անկողինների խառնակությունից, այդ պատճառով է [կտրում] այդ մասը, որ ապականության աղբյուր է:

Երրորդ՝ մարմնական թլփատությունը նշանակում է հոգու, սրտի թլփատություն, այսինքն՝ անդամահատել բովանդակ չարությունը, անիրավությունը և չարիքի ավելցուկը:

Չորրորդ՝ Աբրահամի պտղակի նշանն է. «Որից բոլոր ազգերը պիտի օրհնվեն» (Ծննդ. 12.3), որ մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, քանզի Նրա մարմնավոր գալուստով հերքվում է անդամի գործը, և [Նա] գտյանում է անսերմ հղությամբ ու ծնվում կույս արգանդից:

Հինգերորդ՝ նշան և օրինակ է մկրտության ավազանի, որ մեզ ճերմակացնում և մաքրում է մեր բոլոր մեղքերից՝ սկզբնական, ներգործական և այլ:

Վեցերորդ՝ ութօրյա թլփատությունը ութերորդ դարի (շրջափուլի) նշանակն է, երբ մեղավորները հատվում և կրակն են նետվում, իսկ արդարները՝ ողջ մնում:

Երրորդ՝ քանի որ անմեղ էր, Քրիստոսն ինչո՞ւ թլփատվեց: Ասենք՝ բազում պատճառով:

Նախ որովհետև Ինքն էր պատճառն ամենայն որության, և հարկ էր, որ որբալրար գործն իր անձի մեջ կրեր:

Երկրորդ՝ որպեսզի իր ճշմարիտ մարդեղությունը հաստատի, քանզի երևութական չէր իր մարմինը:

Երրորդ՝ իր կողմից հաստատված օրենքները պարտավոր էր անձամբ կատարել, որպեսզի բոլորը հավատան, թե նրա կողմից են կարգավորված:

Չորրորդ՝ որպեսզի ցույց տա, թե օրենքի ապստամբների գալությամբ արմատն իրենից է:

Հինգերորդ՝ որպեսզի կատարյալ լինի մարգարեից խոսքությունն այն մասին, թե «Աբրահամի պտղակից է բխում» (հմմտ Հովհ 7.42):

Վեցերորդ՝ որպեսզի օրենքի ծանրության մեջ ասկա մեղքի ծանրությունը մեր միջից վերցնի:

Չորրորդ՝ արձանագրենք, որ նոր մկրտությունն առավել է, քան հին թլփատությունը: Եվ սա բազում կերպով է.

Նախ որովհետև թլփատությունը արդարություն չէր, այլ՝ միայն արդարության նշան, իսկ մկրտությունն արդարություն է, [քանզի] շնորհք և փառք է տալիս:

Երկրորդ՝ թլփատությունը հնում սկզբնական (ադամական) մեղքի դեմ էր, սակայն չէր վերացնում պատիժը, իսկ մկրտությունը վերացնում է սկզբնական և ներգործական մեղքը և ազատում պատժի անեծքից:

Երրորդ՝ թլփատությունը ժամանակավոր և վաղանցիկ մարմնավոր կնիք է, որ փոխվեց, իսկ մկրտությունը հոգևոր և մշտնջենավոր կնիք է, քանզի մկրտությունն անփոփոխ կնիք է հոգու մեջ:

Չորրորդ՝ թլփատությունը ազատների և (հավատքի մեջ) անկատարների նշանն է, իսկ մկրտությունը կատարյալների օրենքն է, ուստի Տերը թլփատվեց, երբ մանկահասակ էր, և մկրտվեց, երբ հասուն այր էր:

Հինգերորդ՝ մկրտությունը հնում անօգուտ էր, քանզի Քրիստոս ատակավին չէր մկրտվել, [նաև] թլփատությունն է անօգուտ նոր ժամանակներում, քանզի Քրիստոսով վերացավ, բայց յուրաքանչյուրը իր ժամին է

պատաշաճում: Ինչպես Հնում, թեպետ Մովսեսն ու Հովհաննեսը մկրտում էին, բայց մկրտության խորհուրդը չէր կատարվում, այդպես էլ նոր [ժամանակներում], եթե մեկը թլփատվի, ապա թլփատության խորհուրդ չի կատարվի, և չի մաքրվի սկզբնական մեղքից:

Վեցերորդ՝ թլփատությունը սկզբնական մեղքը չի մաքրում, ինչպես [այդ] Հայտնի է մարգարեներից, որոնք թեպետ թլփատվեցին, բայց դժոխք իջան սկզբնական մեղքի պատճառով: Իսկ մկրտությունը մաքրում է, քանզի, ինչպես Հայտնի է, [նրանք], ովքեր մկրտվում են, դժոխք չեն գնում:

Յոթերորդ՝ մկրտությունը բացում է երկնքի դուռը, որ չի կարող [անկայն]՝ թլփատությունը, ըստ այն [խոսքի]. «Ով չի ծնվի ջրից և Հոգուց՝ նա արքայություն չի մտնի» (Հովհ 3.5) թեկուզ թլփատված էլ լինի:

Ութերորդ՝ մկրտությունը [մկրտվողին] շնորհով Աստծո որդի է դարձնում և՝ Քրիստոսի ժառանգակից, ինչից զրկված են թլփատվածները:

Իններորդ՝ մկրտությամբ արուն և էգն են սրբվում, իսկ թլփատությամբ՝ միայն արուն և ոչ էգը:

Տասներորդ՝ մկրտությունը-գործածումն է Քրիստոսի չարչարանքներով, քանզի երեք անգամ ընկղմվելը նշանակում է երեքօրյա թաղումն ու գերեզմանից Հարությունն առնելը, իսկ թլփատությունը՝ ոչ: Եվ եթե ասար մեկն ասի. Քրիստոս թլփատվեց, դուք ինչո՞ւ չեք թլփատվում, ապա նախ կպատասխանենք, որ Քրիստոս թլփատության հին օրենքը կատարեց, իսկ մեզ մկրտության նոր օրենք սահմանեց՝ Հարգորելով. «Նրանց մկրտեցեք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անվամբ» (Մատթ 28.19):

Երկրորդ՝ երբ Քրիստոսը թլփատվեց, Հրաման կար թլփատվելու, և տակավին օրենքը զորություն ուներ: Սակայն այժմ ժամանակն ուրիշ է, քանզի օրենքը կատարվեց (ավարտվեց), և թլփատության Հրամանը խափանվեց:

Երրորդ՝ Քրիստոսն այն բանի Համար թլփատվեց, որպեսզի օրենքի ծանր բեռը մեր վրայից վերցնի, ըստ այն խոսքի. «Աստված առաքեց իր Որդուն, որ կնոջից ծնվեց և մտավ օրենքի տակ, որպեսզի օրենքի տակ գտնվողներին գնի» (Գաղ 4.4,5):

Չորրորդ՝ մենք նրա Համար չէ, որ չենք թլփատվում, որպեսզի բաժանվենք Հրեաներից, այլ մկրտվում ենք, որպեսզի բաժանվենք Հեթանոսներից:

Այսքանը թլփատության մասին:

Գլուխ ԼԶ

ՏԻՐՈՋ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երրորդ՝ [պատասխան նրանց,] ովքեր ասում են, թե Քրիստոսն իբրև մարդ մկրտվեց: Քրիստոսը մկրտվեց ոչ այն բանի համար, որ սրբության էր կարոտ: Եվ սա հայտնի է չորս բանով. նախ որովհետև բնությամբ սուրբ էր իբրև Աստված, երկրորդ՝ սուրբ էր մարմնով, քանզի արյունը [Սուրբ] Հոգով էր սրբված, ինչպես հրեշտակը Կույսին ասաց. «Սուրբ և Աստծո Որդի պետք կոչվի» (Ղուկ 1.35), երրորդ՝ սուրբ էր նաև արդար գործերով, ըստ այն խոսքի, թե՝ «Մեղք չգործեց, և նենգություն չեղավ նրա բերանում» (Եսայի 53.3, Ա Պետ 2.22), չորրորդ՝ քանզի մեզ համար սրբություն եղավ մարմնով, ըստ այն խոսքի, թե՝ «մեր մեղքերը սրբեց և նստեց Մեծության Աջ կողմում» (Եբր 8.1). ուստի անկարոտ էր սրբության:

Քրիստոս մկրտվեց բազում պատճառով. նախ՝ որովհետև մեր սրբությունը հանձն առավ, ինչպես և՝ բովանդակ անօրինությունը, երկրորդ՝ որպեսզի ջրի մեջ խորտակի վիշապի գլուխը, երրորդ՝ որպեսզի լվա [մեր] մեղքերը և հին Ադամին սուզի ջրի մեջ, չորրորդ՝ որպեսզի սրբի մկրտիչին և ջուրը, հինգերորդ՝ որպեսզի զորացնի ջուրը՝ վերստին ծնելով մեզ, վեցերորդ՝ որպեսզի կատարի և լրացնի օրենքը, յոթերորդ՝ որպեսզի մեզ համար օրինակ լինի՝ գալ մկրտության, ութերորդ՝ որպեսզի այնտեղ [Սուրբ] Երրորդության խորհուրդը հայտնվի, իններորդ՝ որպեսզի մեր օգուտը մատնանշի, տասներորդ՝ որպեսզի ցույց տա իր խոնարհությունը:

Արդ՝ Քրիստոսի խոնարհությունը չորս բանով է երևում: Ինչպես Ավետարանն է ասում. «Հիսուսը Հորդանան եկավ Հովհաննեսի մոտ՝ նրանից մկրտվելու» (Մատթ 3.13): Նախ ասում է. «Հիսուսը եկավ», այսինքն՝ փրկություն տվողը և ոչ փրկության կարոտը, երկրորդ՝ «Հորդանան [եկավ]» նա, որ տարրերի ստեղծողն է, ջրային տարրերի մեջ իրեն խոնարհեցրեց, երրորդ՝ «Հովհաննեսի մոտ», այսինքն՝ Տերը ծառայի մոտ, Թագավորը աշխատավորի մոտ, Արեգակը արուսյակի մոտ, չորրորդ՝ «նրանից մկրտվելու», այսինքն՝ աղբյուրն՝ առվից, լիությունը՝ մեկ կաթիլ ջրից, մաքուրը՝ սրբված կավից, արեգակը՝ լուսավորված ճրագից:

Նաև [այն մասին], թե՝ մեզ ի՞նչ օգուտ է տալիս մկրտությունը: Վարդապետներն ասում են, թե բազում օգուտ կա մկրտությունից.

առաջին՝ քանզի երկինքն է բացում, ինչպես Քրիստոսի մկրտության ժամանակ երկինքը բացվեց,

երկրորդ՝ քանզի մկրտությամբ մարդը դառնում է Աստծո Հոգու տաճարը, ինչպես Քրիստոսի մկրտության ժամանակ աղավնակերպ Սուրբ Հոգին իջավ,

երրորդ՝ քանզի մկրտությունը մարդուն Աստծո որդի է դարձնում, այդ

պատճառով Հոր ձայնը հնչեց. «Դա՛ է իմ սիրելի Որդին» (Մատթ 3.17),

չորրորդ՝ բուժում է հոգևոր հիվանդությունը, ինչպես Եղիսեն սրբեց ասորի Նեեմանին՝ Հորդանանի մեջ նրան լվանալով բորոտությունից (տե՛ս Դ Թագ 5.14), որ նշանակն է հոգու մեղքի,

հինգերորդ. օգուտն [այն է], որ խափանում է սատանայի բոլոր գործերը, քանզի կախարդները, որոնք երևութապես մարդու կերպարանքը էշի են վերածում, իսկ էշերը՝ մարդու, երբ ջրի մեջ են մտնում, բժշկվում և վերստանում են մարդու առաջին կերպարանքը,

վեցերորդ՝ քանզի ավազանի ջուրը մարում է նրանց դժոխքի [կրակը], ովքեր մկրտվում են, ինչպես ջուրն է մարում կրակը,

յոթերորդ՝ քանզի ինչպես ջուրը կլանում է մարդուն, այնպես էլ մկրտության ջուրը՝ սատանային, [ճիշտ այնպես], ինչպես փարավոնը ծովի մեջ ընկղմվեց,

ութերորդ՝ քանզի [ինչպես] ջուրը բույսերի և տունկերի կենդանատուն է, [ճիշտ] այդպես էլ ավազանի ջուրն է Հոգով կենդանացնում մեղքով մեռածներին, որոնք մկրտվում են ի փառս Քրիստոսի՝ մեր Աստծո:

Եվ ի՞նչ է [նշանակում], որ ասում է առաքյալը. «Մեկ է հավատքը, մեկ է մկրտությունը» (Եփես 4.5): Պատասխանենք. հավատքը մեկ է չորս բանի պատճառով. նախ որովհետև մի Աստծո և մի Քրիստոսի [նկատմամբ է], երկրորդ՝ որովհետև ամբողջական է և ոչ մասամբ, երրորդ՝ որովհետև բոլորի համար մեկ է, չորրորդ՝ որովհետև բաժանվածներին Տիրոջն է միացնում և՝ միմյանց:

Նույնպես մկրտությունը մեկ է չորս պատճառով. նախ՝ որովհետև երեք անձերի մեկ բնության մեջ ենք մկրտվում, երկրորդ՝ որովհետև բոլորս Քրիստոսի միության մեջ ենք մկրտվում, երրորդ՝ որովհետև որդության, կոչման և ժառանգության (նույն) շնորհն ենք ստանում, չորրորդ՝ որովհետև մի անգամ ենք մկրտվում:

Եվ ինչո՞ւ ենք մի անգամ մկրտվում: Պատասխանենք՝ վեց պատճառով. նախ՝ որովհետև, ինչպես մարմնով ենք մի անգամ ծնվում, այնպես էլ՝ Հոգով, երկրորդ՝ որովհետև Քրիստոս մի անգամ ծնվեց Կույսից, երրորդ՝ որովհետև Քրիստոսի մահն ու հարությունը մի (անգամ) է, չորրորդ՝ քանզի Հոգու կնիքն է, որ չի ջնջվում, հինգերորդ՝ քանզի Քրիստոսի նույն պատկերը հագնվեցինք և չմերկացանք, վեցերորդ՝ քանզի մեկ է սկզբնական մեղքը, որից սրբվում ենք:

Գլուխ ԼԵ

ՔՐԻՍՏՈՍԻ ԿՐՔԵՐԻ (ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶԳԱՑՈՒՄՆԵՐԻ) ՄԱՍԻՆ

Չորրորդ՝ [պատասխանը նրանց,] ովքեր ասում են, թե բոլոր մարդկային կրքերը կրեց: Քրիստոսը կրեց բոլոր մարդկային կրքերը, բացի մեղքից, այսինքն՝ ապականությունից, ավելորդ ծարումից, հիվանդությունից, տանջանքից: Եվ պատճառն այս էր. նախ՝ որովհետև բնության բնական կիրքը կրեց, իսկ եկամուտը[55]՝ ոչ, երկրորդ՝ [որովհետև] ոչ արհամարհելի կիրքը կրեց և արհամարհելին չկրեց, երրորդ՝ [որովհետև] բնության օգտակարը կրեց, իսկ անօգուտը՝ ոչ, չորրորդ՝ [որովհետև] Ադամի դատապարտության կիրքը կրեց, իսկ չարից եղածը չկրեց: Այս բոլորից ուրեմն պարզ է դառնում, որ քաղցեց, ծարավեց, ննջեց, աշխատեց, ուրախություն և տրտմություն կրեց և վերոհիշյալները չկրեց: Եվ եթե մեկը հարցնի, թե ծարում (կղկղանք) չունեցա՞վ. կպատասխանենք՝ ոչ, նախ՝ որովհետև [այն] ապականության մաս է, երկրորդ՝ արհամարհելի է, երրորդ՝ քանզի ավելորդ էր և Քրիստոսի մեջ չկար, չորրորդ՝ քանզի անօգուտ էր: Եվ եթե մեկը հարցնի. ապա ի՞նչ էր լինում կերակուրի ավելցուկը. ո՜վ դու անմիտ և անհավատ, քո ապականված մարմնի մեջ անապական մարմինն ես փնտրում: Անմիտ, երբ կերակուրի ծարումի համար ես ասում, ապա ցանկության ծարումի համար ինչո՞ւ չես ասում: Քեզ հարկ է կամ երկուսը (միասին) տալ, քանզի ավելորդ են, կամ երկուսից փախչել, քանզի արհամարհելի են: Սակայն նախ տանք, որ ինչպես Աբրահամի մոտ երկու հրեշտակների հետ ճաշակեց և տարրերի մեջ էր լուծում ու պակասում, երկրորդ՝ անչափ չէր ուտում և ըմպում, այլ՝ միայն չափավորապես, որպեսզի [լոկ] մարմինը սներ, երրորդ՝ ինչպես աշակերտների հետ կերավ, և ծարում չեղավ, այնպես էլ խաչից առաջ չեղավ, չորրորդ՝ ինչպես կարմրով կնքված ապակե (անոթի) ջուրն արևի ջերմությունից նվազում է, այնպես էլ Աստվածության հրից՝ մարմնի ծարումը:

Դարձյալ իմանալու է, որ Քրիստոսը չորս պատճառով կրեց ոչ արհամարհելի կրքեր. նախ՝ որպեսզի ցույց տա, որ ճշմարիտ մարդ էր և ոչ առերևույթ, երկրորդ՝ որպեսզի ծածկի իր Աստվածությունը չարին անհաղորդ մնալու նպատակով, երրորդ՝ որպեսզի ցույց տա կրքերից վեր լինելը, քանզի [հոժար] կամքով կրեց [դրանք] և ոչ թե մեր նման՝ բնության հարկադրումով, չորրորդ՝ որպեսզի նախաստեղծների (Ադամ, Եվա) կրքերը բժշկի, այսինքն՝ քաղցը, ծարավը, քրտնաթորությունը, աշխատությունը և այլն: Ինչպես կրակը հալում է մոմը և այրում խոտը, այնպես էլ ամեն տեսակ կիրք, որ մերձենում է Քրիստոսին, կորչում և այլափոխվում է:

Իսկ եթե մեկն ասի՝ ապա ինչպե՞ս Քրիստոսը կրեց և՛ մեղք, և՛ ապա-

կանություն, և՛ զանազան բաներ, ու վերացրեց: Պատասխանենք՝ ճիշտ այնպես, ինչպես բժիշկն է երկու կերպով բժշկում հիվանդին. նախ՝ նմանով նմանին. ինչպես ջերմությամբ ջերմությունը և սառնությամբ սառնությունն է հանում: Երկրորդ՝ հակառակությամբ, այսինքն՝ տաքով՝ սառնությունը և կակուղով չորությունն է վերացնում: Այդպես էլ մեր բժիշկը՝ Քրիստոս. նախ նմանով՝ նմանը, ինչպես քաղցով քաղցը, աշխատությամբ աշխատությունը և մահվամբ մահը վերացրեց: Երկրորդ՝ հակառակությամբ, այսինքն՝ արդարությամբ՝ մեղքը և ապականությունը և մեր բնության հիվանդությունը վերացրեց:

Այսքանը չորրորդ հարցման մասին:

Քրիստոսի աղոթքի մասին

Հինգերորդ՝ [պատասխան նրանց,] ովքեր ասում են, թե Քրիստոսն իբրև մարդ աղոթեց: Քրիստոսն աղոթեց ոչ թե ինչպես մենք՝ կարիքով, այլ առանց կարիքի: Երկրորդ՝ թեպետ կարիք չուներ սրբության, բայց մկրտվեց: Երրորդ՝ թեպետ կարիք չուներ կրքերի, բայց կրքեր կրեց. այդպես էլ կարիք չուներ աղոթքի:

Քրիստոսն աղոթեց չորս պատճառով. նախ՝ որպեսզի ցույց տա, որ ճշմարիտ մարդ էր և մեզ համար ճշմարիտ փրկություն արարեց, երկրորդ՝ որպեսզի սանձի մարմնացումը ուրացողների լեզուն, քանզի ոմանք ուրանալով ասում են, թե Աստծո Բանը չի մարմնացել, իսկ ոմանք էլ ասում են՝ առերևույթ, ոմանք՝ երկնքից է [բերել], երրորդ՝ Քրիստոսն աղոթեց, որպեսզի իբրև [գերագույն] պատճառ պատիվը Հորը վեր առաքի, չորրորդ՝ որպեսզի մեզ սովորեցնի հանապազ աղոթքով փրկվել: Այս պատճառով հարատև աղոթում էր, ինչպես լեռան վրա «գիշերն անցկացնում էր աղոթքի մեջ», ինչպես խաչի վրա, Ղազարոսի գերեզմանի մոտ և բազում այլ տեղերում:

Դարձյալ ասում եմ, որ Քրիստոսն աղոթեց բազում պատճառով.

նախ՝ իրեն քողարկելու համար, որպեսզի չարին անհաղորդ մնա, քանզի երբ Հոր ձայնը լսեց և [տեսավ] Հոգու իջնելը, ցանկանում էր իմանալ, թե Աստծո Որդի՞ է, և չիմացավ,

երկրորդ՝ որպեսզի չկարծեն, թե ուրիշ աստծուց է առաքված, այլ՝ Հորից,

երրորդ՝ որպեսզի հրեաները չկարծեն, թե հակառակ է Հորը,

չորրորդ՝ որպեսզի չանվանեն օրենքը լուծարող,

հինգերորդ՝ որպեսզի մարի հրեաների նախանձը,

վեցերորդ՝ քանզի մեկ Աստված էր օրենքը գրել, ուստի աղոթում էր, որպեսզի երկու աստվածներ չկարծեն,

յոթերորդ՝ մարմինը խոնարհությամբ կրելու համար, մեզ սովորեցնում է խոնարհություն ունենալ,

ութերորդ՝ քանզի Հոր Աստվածությունը նրանց հայտնի էր, իսկ

Որդունը՝ այն ժամանակ անհայտ,

իններորդ՝ որպեսզի ցույց տա Հոր հետ միակամ լինելը,

տասներորդ՝ քանզի մեր գլուխն է, ինչպես գլուխն ու լեզուն Հորն են աղոթում բոլոր անդամների համար, որպեսզի մենք փրկվենք Քրիստոսի ձեռքով:

Բայց ո՛վ դու չարափառ և վատ, եթե Ղազարին աղոթքով հարություն պարգևեց, ապա ինչպե՞ս եղավ, որ առանց աղոթքի հարություն պարգևեց այրի կնոջ որդուն, քահանայապետի դստերը, ծովին սաստեց, բոլոր բժշկությունները նա կատարում էր հրամայելով և ոչ աղոթելով: Դու տե՛ս աղոթելու պատճառը. «Իմ շուրջը եղած ժողովրդի համար, որպեսզի հավատան, թե դու ես ուղարկել ինձ» (Հովհ 11.42):

Եվ եթե մեկն ասի, թե ինչո՞ւ էր բարձրաձայն աղաղակում, քանի որ մեռելները ձայն չեն լսում, [ապա] կպատասխանենք՝ հինգ պատճառով.

Նախ՝ որպեսզի ամբողջ ժողովուրդը լսի և իմանա՝ նրանով հարություն լինելը:

Երկրորդ՝ որպեսզի չկարծեն, թե կախարդանքով է տալիս խոսքը:

Երրորդ՝ որպեսզի իր աստվածային զորությունն իմանան, և ոչ մարգարեների նման, որ Աստծո անվամբ էին հարություն պարգևում, և ոչ առաքյալների նման, որոնք Քրիստոսի անվամբ էին կենդանացնում:

Չորրորդ՝ որպեսզի ցույց տա, թե հոգին հեռավոր է և կենդանի ու ծածկված չէ գերեզմանի մեջ կամ մարմնի մեջ մեռած, ինչպես որոշ չարամիտներ են ասում:

Հինգերորդ՝ ձայնելիս ահաբեկված թշնամիները, դժոխքի սարսափած բարապանները բանտից ազատեցին հոգին:

Եվ ի՞նչ ասաց. «Ղազարոս արի, դուրս եկ» (Հովհ 11.43,44): Տես՝ չասաց, թե՝ Հայր, հարություն տուր սրան կամ հանուն Հոր, արի, այլ ինքնիշխանաբար՝ իբրև ողջի հետ խոսելով. «Եվ ոտքն ու ձեռքը կապված մեռյալը ոտքի կանգնեց» (Հովհ 11.43,44): Մեծ հրաշք կատարվեց Ղազարոսի հետ. և ոչ՝ մեկ, այլ՝ երկու. առաջին հրաշքը հոտած մարմինն էր, որ կենդանացավ, և մյուսը՝ որ կապված էր և քայլում էր, երեսը ծածկված էր և ուղիղ դուրս եկավ գերեզմանի դռնով: Եվ ապա ասում է. «Քանդեք դրա [կապերը] և թողեք գնա» (Հովհ 11.43,44):

Եվ վայելում էր [այն] գործը, որ հրամայեց նրանց. նախ՝ որովհետև ինքն առավ հոգին և դարձյալ բերեց մարմնի մեջ և կենդանացրեց, և նրանք պատանքեցին ու զմռսեցին, նրանք [էլ] արձակելու են նրա [կապերը]: Երկրորդ՝ նրանց ասում է՝ արձակեցեք [կապերը]. նրանց, որ անհամոզ էին և միշտ ջանում էին ճշմարտությունը եղծել: Ասում է՝ դուք քանդեք պատանքը, որպեսզի ձեր ձեռքերը վկա լինեն, նաև՝ հաստատելիքները, լսելիքները և տեսանելիքները, որ հարություն առած եք տեսնում ի փառս մեր Աստծո՝ Քրիստոսի:

Այսքանը հինգերորդ [հարցի] մասին:

Գլուխ ԼԲ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՀՎԱՆ ՄԱՍԻՆ

Վեցերորդ՝ [պատասխան նրանց,] ովքեր ասում են, թե Քրիստոսը որպես մարդ մեռավ: Եբրայեցիներին հղած թղթում առաքյալն ասում է. «Աստծո շնորհով բոլորի համար մահ ճաշակեց» (Եբր 2.9): «Աստծո շնորհով», այսինքն՝ Հոր մարդասիրությամբ Որդին մահ ճաշակեց:

Դարձյալ՝ «շնորհիվ»-ն Աստծո Բանն է, որ անբաժանելի մարմնով մեռավ: Իսկ «ճաշակեց» ասելով՝ երեք բան է ցույց տալիս.

նախ՝ որովհետև մեր մահը եղավ Ադամի՝ պտղի ճաշակումից,

երկրորդ՝ «ճաշակել»-ը [համար] կամքով մեռնելն է մատնանշում,

երրորդ՝ «ճաշակել»-ը չափավոր մահն է ցույց տալիս, քանզի մահվան մեջ և՛ մեռած էր, և՛ կենդանի: Մարմինը մեռած էր ըստ հոգու բաժանման և նույն մարմինը կենդանի էր անբաժանելի Աստվածությամբ: Եվ այս ցույց են տալիս կողի զույգ աղբյուրները. ջուրը, քանզի մեռած էր, և արյունը, քանզի կենդանի էր, որովհետև մեռածի մեջ արյուն չի լինում: Նաև Սողոմոնն է Երգ երգոցում վկայում. «Ես ննջում եմ, և իմ սիրտն արթուն է» (Երգ 5.2): Այսինքն՝ Աստվածությունը մարմնի մեջ գերեզմանում է և հոգու մեջ՝ դժոխքում:

Դարձյալ՝ այլ է Քրիստոսի մահը, քանզի մահը երեք մասի է բաժանվում, այսինքն՝ բնությամբ, կամքով և ներգործությամբ: Բնությամբ մեռնում ենք մենք, ներգործությամբ՝ Ադամը, կամքով՝ Քրիստոսը:

Եվ Քրիստոսը բազում պատճառով մեռավ.

Նախ՝ որովհետև Աստված մարդասեր է կոչվում, ինչը հայտնի դարձավ Հայր Աստծո սիրով, որ իր Որդուն մարդկանց համար մահվան ենթարկեց, ըստ այն խոսքի, որ ասվում է Ավետարանում. «Աստված այնպես սիրեց աշխարհը, որ Միածին Որդուն ուղարկեց» (Հովհ 3.16):

Երկրորդ՝ որպեսզի Որդու հնազանդությունը երևա, ըստ այն խոսքի, որ առաքյալն ասում է Փիլիպպեցիներին. «Իր անձը խոնարհեցրեց՝ հնազանդ լինել մահվան չափ և խաչի մահվան» (Փիլիպ 2.8):

Երրորդ՝ քանզի ասաց Ադամին. «Մահվամբ պիտի մեռնես» (Ծննդ 2.17). սա այն էր, որ մարմնով մեռավ և հոգով տանջվեց: Եվ ոչ ոք չէր կարող ազատվել [դժոխքից], ինչպես ասում է առաքյալը Հռոմեացիներին. «Մահը թագավորեց մինչև Մովսես, նաև չմեղանչողների (համար)» (Հռոմ 5.14) եկավ Քրիստոս և եղավ Ադամի որդի և մեռավ մարմնով ու հոգով դժոխք իջավ և ազատեց նրանց:

Չորրորդ՝ Քրիստոսը մեռավ և մահվամբ մահը մեռցրեց և մեզ կենդանացրեց, քանզի Քրիստոսի մահը մահվան համար մահ եղավ և մեռյալների՝ կենդանություն: Դժոխք իջավ և ազատեց հոգիներին, մեռելներից հարություն առավ ու մեզ հարություն շնորհեց:

Հինգերորդ՝ Քրիստոսը մեռավ, որպեսզի մարգարեների խոսքերը կատարվեն, «որովհետև պատշաճ չէր գրվածի եղծումը» (Հովհ 10.35): Քանզի մարգարեները սկզբից ասացին, և Քրիստոսը բոլորը կատարեց. մեկն ասաց Կուսից ծնվելու մասին, մյուսը՝ խաչի մասին, մյուսը՝ թաղման, հարության, համբարձման և Երկրորդ գալստյան մասին:

Վեցերորդ պատճառ. իր նախածանոթ գիտությամբ Աստված սահմանեց մարդկանց փրկությունը, որ լինելու էր Քրիստոսի մահվան շնորհիվ, ինչպես ասում է առաքյալը Հռոմեացիներին. «Աստծո Որդու կողմից սահմանված» (Հռոմ 1.4): Եվ ինքն Ավետարանում ասում է. «Մարդու Որդին պիտի գնա, ինչպես գրված է նրա մասին» (Մատթ 26.24): Եվ ոչ միայն այս, այլև բոլոր սրբերին ընտրեց նախքան աշխարհի լինելը, և հետո մարդիկ ծնվում են ըստ այդ ընտրության: Այդպես էլ՝ Քրիստոսի միջոցով մեր փրկությունը [եղավ], ինչպես առաքյալն է ասում եփեսացիներին. «Որն ընտրեց մեզ նախքան աշխարհի լինելը» (Եփես 1.4):

Այն մասին, որ Քրիստոսը մի անգամ մեռավ

[Հարց.] *Քրիստոսն ինչո՞ւ մի անգամ մեռավ:*

[Պատասխան.] *Նախ՝ որովհետև մարդկային ցեղի կատարյալ փրկությունն արարեց. այդ պատճառով երկրորդ անգամ չմեռավ:*

Երկրորդ՝ որովհետև մահվամբ մահին հաղթեց և մեզ հարությունը պարգևեց:

Երրորդ՝ որովհետև բովանդակ մեղքը և դատապարտությունը խաչի վրա հանեց մի անգամ և մեզ արդարացրեց:

Չորրորդ՝ որովհետև մարդը մի անգամ է մեռնում, և դրանից հետո դատաստան է, այդպես էլ մեր Տերը մի անգամ մեռավ և դրանից հետո պիտի գա դատելու:

Հինգերորդ՝ որովհետև ինքն է Քահանան, Պատարագը և Ընդունողը, այդ պատճառով էլ մի անգամ պատարագվեց և այս իմաստով մի օր է պատարագվում. և ոչ ավելի:

Այն մասին, որ պատարագը միակ է բազում տեղերում

[Հարց.] *Եվ եթե մեկն ասի, թե՝ ապա ինչո՞ւ են բազում տեղերում, բազում ժամանակներում, բազում մարդիկ պատարագում Քրիստոսին:*

[Պատասխան.] *Այս բազմաթիվ լինելը մեզ է վերաբերում, նաև՝ ժամանակները և տեղերը: Սակայն պատարագը միակն է չորս պատճառով.*

նախ՝ որովհետև մի անգամ է հիշատակվում Քրիստոսի մահվան մասին,

երկրորդ՝ որովհետև նույն Քրիստոսն է պատարագվում ամեն տեղ,

երրորդ՝ որովհետև նույն մարմինն է բոլորին բաժանվում անբաժանաբար և պատարագվում աննվազաբար,

չորրորդ՝ որովհետև նույն հացն ու բաժակն է, որ պատարագվում է

բոլոր եկեղեցիներում:

Այն մասին, որ արյամբ մեռավ

[Հարց.] *Քրիստոս ինչո՞ւ արյամբ մեռավ:*

[Պատասխան.] *Նախ՝ որովհետև Հին ուխտն անասունների արյամբ էր սրբում, իսկ Քրիստոս-Ճշմարտությունն իր արյամբ սրբեց մեզ,*

երկրորդ՝ արյամբ հաշտեցրեց Հոր հետ,

երրորդ՝ արյամբ գնեց մեզ,

չորրորդ՝ [իր] արյամբ մեզ գրեց Կենաց Գրքում,

հինգերորդ՝ արյամբ Նոր ուխտ [կնքեց] մեզ հետ Հին ուխտի փոխարեն,

վեցերորդ՝ որովհետև կենարար կերակուր և ըմպելիք տվեց մեզ, ըստ այն խոսքի, թե՝ «Ով չի ուտի իմ մարմինը և չի ըմպի իմ արյունը՝ չունի հավիտենական կյանք» (Հովհ 6.54):

Այն մասին, որ խաչով մեռավ

[Հարց.] *Քրիստոս ինչո՞ւ խաչով մեռավ:*

[Պատասխան.] *Նախ՝ որովհետև խաչն ավելի է հակադրվում Ադամի մեղքին, քանզի ինչպես Ադամը ոտքով գնաց և ձեռքը երկարեց ծառին, կերավ պտուղն ու եղծեց մարդկային ցեղը, այդպես էլ մեր Տերը ոտքով գնաց դեպի խաչը, ձեռքը բևեռեց փայտի վրա և լեղի ճաշակեց և այդպես փրկեց մարդկանց:*

Երկրորդ՝ քանզի անարգ էր խաչի մահը, ինչպես Օրենքում է ասվում. «Անիծյալ է յուրաքանչյուր ոք, որ կախված է փայտից» (Բ Օր 21.23): Այդ պատճառով էլ Քրիստոսը կախվեց փայտից, վերցրեց մեր մեղքերը և օրհնեց մեզ:

Երրորդ՝ Իսահակի խոյը կախվեց Սաբեկի ծառից, որ երկճյուղ էր, ինչն օրինակ էր Քրիստոսի ճշմարիտ խաչի:

Չորրորդ՝ Ոսկեբերանն ասում է. «Քրիստոսն այն պատճառով խաչ բարձրացավ, որպեսզի ցույց տա, թե իր մահը ճանապարհ է դեպի երկնքի արքայություն, ինչպես Հակոբը տեսավ սանդուղք, որի գլուխը երկինք էր հասնում, և Տերը հաստատված էր նրա վրա»[56]*:*

Եվ այլ բազում է [սրա] խորհուրդը:

[Հարց.] *Ի՞նչ է նշանակում խաչի չորս թևը:*

[Պատասխան.] *Առաջին՝ նշանակում է չորս բարությունները, որ Քրիստոսն արեց մեզ: Վերևի մասը ցույց է տալիս երկնքի արքայության բացվելը, ներքևինը՝ դժոխքի ավերումը, աջը՝ շնորհների բաշխումը, ձախը՝ մեղքերի թողությունը:*

Երկրորդ՝ նշանակում է չորս առաքինությունները, որոնք հարկ է տարածել մեր ներքին մարդու մեջ: Վերևի մասը նշանակում է սերը, ներքևինը՝ խոնարհությունը, աջը՝ հնազանդությունը, ձախը՝ համբերությունը:

Երրորդ՝ նշանակում է մեր՝ դրախտից զրկվելը, քանզի աջ էինք՝ ձախ

դարձանք:

Չորրորդ՝ նշանակում է մեր չորս խորհուրդները. վերին մասը՝ «միշտ վերևի մասին խորհել, ուր Քրիստոս է նստած» (Կող 3.2), ներքևինը՝ մեր կյանքի վախճանն է: Աջը և ձախը դատաստանի ընտրությունն է. փառքը՝ աջակողմյաններին, պատիժը՝ ձախակողմյաններին, և այլ բազում խորհուրդներ ունի:

Դարձյալ՝ բազում նշանակություն ունի քառաթև խաչը. նախ [նշանակում է] Եզեկիելի քառադեմ կառքը, և Տերը նրա վրա բազմած, այլև, ինչպես ասվեց, Հակոբի սանդուղքը, և Տերը նրա վրա հաստատված, այլև նրա ոտքի տակ գտնվողը աղյուսաձև շափյուղայի ակ է, այլև ամաղեկացիների դեմ Մովսեսի ձեռքերի տարածումը, այլև՝ Նոյյան տապանը և Մովսեսի տապանակը, ու քավությունը նրա վրա, ողջակեզների սեղան է, և սրբության սեղան, խնկերի սեղան է: Այս բոլորը քառակուսի են, որ նշանակում են Քրիստոսի քառաթև խաչը: Դարձյալ՝ աշխարհի չորս կողմը խաչաձև է՝ արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ: Նաև բոլոր մարմինների տարրերը չորս սկզբունք ունեն: Խաչաձև է նաև մարդը՝ բոլոր կենդանիների գլուխը: Խաչաձև են նաև օդում սավառնող թռչունները, որոնք թևերը երկու կողմ տարածած՝ տեսական միտքն են [նշանակում]: Նաև նավն է ջրի վրա ընթանում խաչաձև, երբ քամին բացում է առագաստը, և պարզած թևերով հասնում է նավահանգիստ. [այդպես] մարդիկ երկու թևերով հասնում են հավիտենական կյանքի փառքին:

[Հարց.] *Ի՞նչ են յոթ խոսքերը, որ Քրիստոսն արտաբերեց Խաչի վրա:*

[Պատասխան.] *Առաջինը՝ «Հայր, ների՛ր սրանց»,*
երկրորդը՝ «Այսօր ինձ հետ կլինես դրախտում»,
երրորդը՝ «Կին, ահա քո որդին»,
չորրորդը՝ «Ծարավ եմ»,
հինգերորդը՝ «Էլի, էլի, լամա սաբաքթանի»,
վեցերորդը՝ «Քո ձեռքն եմ հանձնում իմ հոգին»,
յոթերորդը՝ «Ամենայն ինչ կատարված է»:

Առաջինն ուսուցանում է մեր դեմ գործված անիրավությունները ներել,
երկրորդով՝ լսել աղաչանքները,
երրորդով՝ պատվել ծնողներին,
չորրորդով՝ մեր փրկությունը ցանկանալ,
հինգերորդով՝ նեղության պահին առ Աստված աղաղակել,
վեցերորդով՝ մեր բոլոր հոգսերն Աստծո վրա դնել,
յոթերորդով՝ կյանքը վերջացնել պատշաճ վախճանով:

Վկայություններ Տիրոջ չարչարանքների մասին

Եվ այստեղ հավաքենք վկայություններ մարգարեներից, որոնք խոսեցին Քրիստոսի չարչարանքների մասին: Նախ Զաքարիա մարգարեն է

ասում. «Պիտի հարվածեմ հովվին, և ոչխարները պիտի ցրվեն» (Զաք 13.7, Մատթ 26.31, Մարկ 14.27): Այսինքն՝ երբ ձերբակալեցին Տիրոջը, բոլոր աշակերտները փախան: Եվ Պետրոսը գնաց ետևից ու երեք անգամ ուրացավ: Եվ Հուդայի մատնության համար Դավիթն ասում է. «Ով ինձ հետ հաց էր ուտում՝ ինձ խաբեց» (Սաղ 40.10): Նաև Զաքարիան է ասում. «Իմ վարձը երեսուն արծաթով կշռեցին» (Զաք 11.13): Ավետարանը ևս ասում է նույն երեսուն արծաթի [մասին], որ ավեցին Հուդային: Եվ Եսային է ասում. «Վա՜յ նրանց անձերին, քանզի չար բաներ խորհեցին և ասացին. Կապենք արդարին, որովհետև մեզ համար անհաճ էր» (Եսայի 3.10): Դարձյալ ասում է Եսային. «Իմ թիկունքը հանձնեցի հարվածների և ծնոտը՝ ապտակների և իմ երեսը չթեքեցի թուքից» (Եսայի 50.6): Նաև Երեմիան է ասում. «Ես իբրև անմեղ գառ տարվեցի մորթվելու» (Երեմ 11.19). այն է, որ ասաց Մկրտիչը. «Սա է գառն Աստծո, որ վերցնում է աշխարհի մեղքը» (Հովհ 1.29): Եվ Եսային ասում է. «Իբրև ոչխար տարվեց մորթվելու և որպես գառնուկ անտրտունջ կանգնած է գանակի առջև. այդպես չի բացում իր բերանը» (Եսայի 53.7): Նաև Դավիթն է ասում. «Ես եղա մի մարդ, որ չի լսում, և նրա բերանում խոսք չկա» (Սաղ 37.15), սա այն է, որ ասում է Ավետարանը. «Հիսուսը լուռ կանգնած էր դատավորի առջև, այնպես որ նա շատ զարմացավ» (Մատթ 27.14): Հովել մարգարեն ասում է. «Այն օրը արեգակը մայր պիտի մտնի միջօրեին, և երկիրը պիտի խավարի կեսօրին» (Ամովս 8.9): Նաև Զաքարիան է ասում. «Այն օրը ոչ լույս պիտի լինի, ոչ ցուրտ և ոչ պարզ. մի օր է լինելու, և Տիրոջ հայտնի այն օրը ոչ ցերեկ է լինելու և ոչ գիշեր, և երեկոյան լույս է լինելու» (Զաք 14.7): Եվ Եսային ասում է. «Պիտի իմանա իմ մանուկը, պիտի մեծանա, բարձրանա և խիստ փառավորվի, և շատերը քո վրա պիտի զարմանան՝ այնքան անշուք է լինելու քո տեսքը մարդկանց մեջ: Քանզի նրանք, որոնց չի պատմվել քո մասին, տեսնելու են, և որոնք չեն լսել, պիտի իմանան» (Եսայի 52.13-15): [Սա] խաչի բարձրության և հեթանոսների՝ Քրիստոսին հավատալու [համար] է ասում:

Դարձյալ Եսային ասում է. «Ամբողջ օրը իմ ձեռքը պարզեցի անզգամ և հակառակվող ժողովրդին» (Եսայի 65.2). սա այն է, որ խաչի վրա տարածեց ձեռքերը: Եվ Մովսեսն ասում է. «Տարածեց իր թևերը և ընդունեց նրան, և վերցնելով բերում էր իր թիկունքի վրա» (Բ Օր 32.11): Եվ Դավիթն է ասում. «Քո թևերի հովանու հուսացի» (Սաղ 56.2). խաչի թևերի [մասին] է ասում: Մովսեսը դարձյալ խաչի մասին է ասում. «Ձեր կյանքը կտեսնեք փայտից կախված» (Բ Օր 28.66): Եվ պղնձե օձ պատրաստեց ու խարանի գաւն վրա բարձրացրեց: Ով հավատքով նայեր պղնձե օձին, փրկվում էր թույնից: Եվ Տերն ասում է. «Ինչպես Մովսեսն անապատում օձը բարձրացրեց, այդպես հարկ է բարձրանալ մարդու Որդուն, որպեսզի ով հավատա նրան՝ չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ 3.14): Նաև Երեմիան է ասում. «Եկեք փայտ գցենք նրա խմորի մեջ

և նրա հիշատակը ջնջենք» (Երեմ 11.19): Եվ Դավիթն ասում է խաչողների մասին. «Իմ շուրջը բոլորում շներ հավաքվեցին և չարերի խմբերը պաշարեցին ինձ» (Սաղ 21.17), այսինքն՝ Պիղատոսի զինվորները: «Զվարակները և գեր ցուլերը» (Սաղ 21.13), այսինքն՝ քահանաները, որոնց մարգարեն լուծընկեց երինջներ կոչեց (տե՛ս Ովս 4.16): «Գերք». ինչպես Մովսեսն է ասում. «գիրացավ, մեծացավ, լայնացավ և լքեց իր Տեր Աստծուն» (Բ Օր 32.15): Դավիթը նաև խաչի մասին է ասում. «Ծակեցին իմ ձեռքերն ու ոտքերը, և բոլոր նրանք, ովքեր տեսնում էին ինձ, արհամարհում էին» (Սաղ 21.18): [Այսինքն] նրանք, որ ասում էին. «Վա՜հ, որ քանդում էիր տաճարը և երեք օրում կառուցում» (Մատթ 27.40, Մարկ 15.29) և այլն: Եվ քացախի համար ասում է. «Իբրև կերակուր ինձ լեղի տվեցին և ծարավ ժամանակ ինձ քացախ խմեցրին» (Սաղ 68.22): Եվ Եսային ասում է արյան մասին. «Նրա զգեստների կարմրությունը Բոսորի [փոխվեց]՝ գեղեցիկ պատմուճանով, բուռն զորությամբ, որպես լի հնձանը ճզմած հնձանահար» (Եսայի 63.1): [Նաև] «Հնձանը միայնակ հարեցի, կոխեցի իմ զայրույթով և ճմլեցի իմ բարկությամբ և գետին իջեցրի դրանք» (Եսայի 63.3): Եվ Հակոբն է ասում. «Իր պատմուճանը գինով պետք է լվանա և խաղողի արյամբ՝ իր հանդերձները» (Ծննդ 49.11): Եվ խոցվելու մասին Զաքարիան ասում է. «Պիտի նայեն նրան, որին խոցեցին» (Զաք 12.10, Հովհ 19.37): Նաև Եսային (Դավիթն) է ասում. «Նրա ոսկորը չի փշրվելու» (Սաղ 34.20, Հայտ 1.7):

Սրանք են մարգարեների բոլոր վկայությունները՝ նախապես ասված Քրիստոսի չարչարանքների մասին, որոնք մարդկային ցեղի և հավատացյալների փրկությունն արարեցին, իսկ անհավատների և սատանայի [համար]՝ հավիտենական կորուստ:

Գլուխ ԼԹ

ՏԻՐՈՋ ԹԱՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Յոթերորդ՝ [պատասխան նրանց,] ովքեր ասում են, թե Քրիստոսն իբրև մարդ թաղվեց: Սուրբ վարդապետներն ասում են. Քրիստոսը եկավ և խաչի վրա մեր մեղքերը վերցրեց, որպեսզի մենք նրա արդարությամբ ապրենք. [նա,] որ մեռնում էր, փոքր չէր, այլ մարմին առած Աստված էր: Ոչ թե մեղավորների մեղքն այնչափ էր, որչափ նրա արդարությունը, որ արդարացրեց մեզ և եկավ իր Հայրին զոհելու մեզ համար ու երբ կամեցավ դարձյալ վերցրեց այնտեղից, այլ Տիրոջ թաղման մասին մարգարեները նախապես գուշակեցին. նախ այն, որ ասում է. «Յոթերորդ օրն Աստված հանգստացավ իր գործերից» (Ծննդ. 2.2): Այն է՝ որ ուրբաթի չարչարանքից հետո շաբաթամուտին հանգստացավ գերեզմանի մեջ: Նաև Հակոբի մարգարեությունն է ասում ի դեմս Քրիստոսի. «Ելար, բազմեցիր, ննջեցիր՝ որպես առյուծ և առյուծի կորյուն, և ո՞վ է, որ պետք է արթնացնի քեզ» (Ծննդ. 49.9): Թվոց գրքում Մովսեսն ասում է. «Բազմեց, հանգստացավ իբրև առյուծ և իբրև առյուծի կորյուն» (Թվոց 24.9):

Դարձյալ Եսային ասում է. «Նա մեր մեղքն է վերցնում և մեր անօրենությունների պատճառով չարչարվում, և նրա վերքով բժշկվեցինք. Չարը հանձնենք նրա գերեզմանի փոխարեն և մեծամեծ անօրենությունները՝ նրա թաղման փոխարեն» (Եսայի 53.5,9): Մարգարեն դարձյալ ասում է. «Իմ կյանքը մեռցրին գուբի մեջ և իմ վրա վեմ դրեցին» (Ողբ 3.53): Եվ Դավիթն ասում է. «Ես եղա իբրև մարդ՝ առանց օգնականի և մեռելներից ազատ» (Սաղ 87.5), այսինքն՝ միայնակ հաղթեց թշնամուն, և «մեռելներից ազատ», այսինքն՝ ապականությունից և մեռելների տանջանքից զերծ մնաց: Ինչպես և դարձյալ ասում է. «Իմ անձը դժոխքում չես թողնի և թույլ չես տա քո սրբին ապականություն տեսնել» (Սաղ 15.10): Եվ դարձյալ ասում է. «Ինձ դրեցին ստորին գուբի խավարի և մահվան ստվերի մեջ, և մահվան հողի մեջ իջեցրին ինձ» (Սաղ 87.7):

Նաև Սողոմոնն է ասում. «Ես ննջում եմ, և իմ սիրտն արթուն է» (Երգ 5.2), այսինքն՝ մարմնով մեռած էր և Աստվածությամբ՝ կենդանի: Եվ Երգ երգոցում թաղման վայրի [մասին] ասում է. «Փակված պարտեզ և կնքված աղբյուր» (Երգ 4.12). [սա] այն է, որ քահանաները վեմը մատանիով կնքեցին: Այնտեղ «զմուռս քաղեցի, զմուռս և հալվե անուշ խնկերի հետ» (Երգ 4.14): Ինչպես Ավետարանն է ասում. «Հովսեփը և Նիկոդեմոսը խունկ, զմուռս և հալվե բերեցին և Տիրոջը պատեցին» (Հովհ 19.39): Այնտեղ Տիրոջ ծննդյանը Հովսեփ աստվածահայրն էր վկա, այստեղ էլ թաղմանը և հարությանը միայն Հովսեփ Արիմաթեացին եղավ սպասավոր և վկա, քանզի ծննդյան և հարության խորհուրդը նույնն է:

Նախ՝ ինչպես այնտեղ փակված պարտեզ և կնքված աղբյուր էր սուրբ

Կույրը, այնպես էլ՝ գերեզմանը:

Երկրորդ՝ այնտեղ կույս արգանդից ծնվեց և այստեղ կույս գերեզմանից հարություն առավ:

Երրորդ՝ այնտեղ անապական մարմնով ծնվեց և այստեղ անապական մարմնով հարություն առավ:

Այնտեղ նախամոր տրտմությունը վերացրեց և այստեղ Ադամի պատիժը բժշկեց:

Այնտեղ հրեշտակները ծննդյան ավետաբերներն էին և այստեղ հրեշտակները հարության ավետաբերներն են:

Եվ այսպես՝ փրկչի ծննդյան և հարության խորհուրդը նույնն է: Եվ Ավետարանն ասում է. «Ինչպես Հովնանն էր ձկան փորում երեք օր ու գիշեր, այնպես էլ մարդու Որդին պետք է լինի երկրի սրտում երեք օր և երեք գիշեր» (Մատթ 12.40): Եվ այնտեղ կատարվեց Ովսեի մարգարեությունը. «Մահ, ո՞ւր է քո հաղթությունը, դժոխք, ո՞ւր է քո խայթոցը» (Ովս 13.14):

Այսքան և ավելի քան այսքան են Տիրոջ մասին մարգարեների վկայությունները: Այսուհետև ամոթ մի՛ համարիր խաչվելն ու թաղվելը, [քանզի] արեգակը խավարեց արդարության Արեգակի պատճառով, վեմերը ճեղքվեցին հավետ Վեմի պատճառով: Գերեզմանները բացվեցին, մեռելները հարություն առան ի սեր նրա, որ ցերծ էր մեռելներից, հոգիներն ազատվեցին տանջանքից: Այս պատճառով մարգարեն ասում է. «Շղթայվածներին արձակելու է գուբից, որտեղ ջուր չկա» (Սաղ 145.7): Այս բոլորն արեց մարդկանց փրկության համար, քանզի միայն մարդն է Աստծո պատկերը: Այս պատճառով, երբ դահեկանը բերեցին, ասաց. «Գնացեք կայսրինը կայսրին տվեք և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ 22.21, Մարկ 12.17, Ղուկ 20.25), այսինքն՝ ինչպես թագավորներն են իրենց պատկերը ոսկի դահեկանի վրա պատկերում, ես իմ կենդանի պատկերը կենդանի մարդու մեջ նկարեցի, քանզի Աստված ոչ թե ինչ-որ մեկին է երևում, այլ՝ միայն մարդուն: Միայն Աստված է մարդասեր և միայն մարդն է աստվածասեր, Աստված մարդունն է, և մարդը՝ Աստծունը, մարդու համար Աստված մարդացավ, և Աստծո համար մարդն աստվածացավ[57]:

Թե ինչու թաղվեց Քրիստոսը

Նախ՝ որովհետև ասաց Ադամին. «Քանզի հող էիր և հող ես դառնալու» (Ծննդ 3.19): Ինքը հող մտավ, որպեսզի վերացնի դատապարտությունը, ինչպես փշով փուշը հանեց և քրտինքով քրտինքը, այդպես էլ թաղմամբ՝ մահվան հողը:

Երկրորդ՝ Ադամի գործով անիծվեցին երկիրը և նրա բոլոր տարրերը, այդ պատճառով, երբ Քրիստոսն իջավ ջրի մեջ, մաքրեց այն ու [երբ] դրվեց գերեզմանի մեջ, օրհնեց հողը, հարությունից հետո քառասուն օր մաքրեց օդը, և երբ Սուրբ Հոգին իջավ հրեղեն լեզուներով, սրբեց հուրը:

Այդ պատճառով հողն օրհնված է, ուր և՛ հավատարապես օրհնված գերեզմանի մեջ թաղվում են հավատացյալներն ի Քրիստոս:

Երրորդ՝ մարմնով դրվեց գերեզմանի մեջ, որպեսզի մեր մարմնի ապականությունը բժշկի, և հոգով դժոխք իջավ, որպեսզի մեր հոգիները տանջանքից ազատի:

Չորրորդ՝ գերեզմանից և դժոխքից հարություն առավ, որպեսզի մեզ հարություն պարգևի, ըստ որում «սուրբ ննջեցյալների բազում մարմիններ Քրիստոսի հետ հարություն առան և մտան սուրբ քաղաք Երուսաղեմ» (Մատթ 27.52) և վկայեցին Քրիստոսի հարության մասին, թե դժոխքն ավերեց, հոգիներին երկինք հանեց և սատանային կապեց, քանզի Քրիստոսի խաչից հետո սատանան այլևս չի կարող մարդկանց հոգիները բռնությամբ դժոխք տանել:

Արդ՝ այս բոլոր և առավել քան այս բոլոր օգուտը Քրիստոսի թաղումից եղավ: Այս պատճառով պատշաճ չէ ասել «Քրիստոսի թաղում և գերեզման», այլ՝ սուրբ հարություն և անմահ կենդանություն, որ մեզ սուրբ գերեզմանից ընծայվեց:

Այսքանը Տիրոջ թաղման մասին:

Գլուխ Խ
ՏԻՐՈՋ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՑ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ութերորդ՝ [պատասխան նրանց,] ովքեր ասում են, թե Քրիստոսը որպես մարդ հարություն առավ: Նախ խոսենք մարդկանց ընդհանուր հարության և հետո՝ Քրիստոսի հարության մասին: Ասենք, որ մարդկանց հարությունը երկուսն է՝ անկատար և կատարյալ:

Անկատար հարությունն [այն] է, որ դարձյալ մեռնում է, ինչպես վեց մեռյալները, որ Քրիստոսից առաջ հարություն առան. երեքին, որոնց հարություն պարգևեց Քրիստոսը, և երեքին՝ Եղիան ու Եղիսեն:

Իսկ կատարյալ հարությունն [այն] է, որ դարձյալ չի մեռնում: Այսպես հարություն առավ նախ Քրիստոսը, որ մեռելների անդրանիկն է և ննջեցյալների [առաջին] պտուղը, և ապա՝ այլ սրբեր մարդկանցից: Ոմանք Քրիստոսի հետ հարություն առան և սուրբ քաղաք Երուսաղեմ մտան և վկա եղան Քրիստոսի հարությանը, և ուրիշներ՝ ընդհանուր հարության [վկաները պիտի լինեն], երբ Քրիստոսը կիջնի երկնքից, և փողը կհնչի, ու մեռելները հարություն կառնեն:

Եվ իմանալու է, որ հանդերձյալ կյանքում երկու բան ընդհանուր է, այսինքն՝ արդարների և մեղավորների [համար]: Նախ՝ հարությունը, երկրորդ՝ անմահությունը: Հետո ամեն ինչ զանազանվում է. արդարներին՝ փառք և պսակ, արքայություն և հանգիստ, իսկ մեղավորներին՝ տանջանք և մահ, խավար և կրակ, աչքերի լաց և ատամների կրճտոց և այլն: Ինչպես Ավետարանում է հրամայվում. «Երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն նրա ձայնը և դուրս կգան, ովքեր բարի գործեր են արել՝ կյանքի հարության համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի հարության համար (Հովհ 5.29): Եվ Պողոսը Կորնթացիներին [հղած] Երկրորդ [թղթում] ասում է. «Մեզ ամենքիս վիճակված է դեմ հանդիման լինել Քրիստոսի ատյանին, որպեսզի յուրաքանչյուր ոք իր մարմնով զգա, թե ի՞նչ է գործել. բարությո՞ւն, թե՞ չարություն» (Բ Կոր 5.10): Նաև Դավիթ մարգարեն ասում է. «Դու յուրաքանչյուրին հատուցես ըստ նրանց գործերի» (Սաղ 27.4):

Եվ եթե մեկն ասի, թե ինչո՞ւ է հարությունն ու անմահությունն ընդհանուր, ապա կասենք, որ հարությունն ու անմահությունը բնական հոգու համար է: Արդ՝ ամեն ոք ունի բնական հոգի. այդ պատճառով էլ բոլոր մարդիկ հարություն են առնում և անմահ մնում, իսկ փառքն ու պսակը հավատքի և բարի գործերի համար են: Այս է պատճառը, որ սրբերը փառավորվում են, իսկ չարերը՝ տանջվում:

Համառակաց հարության մասին

Եվ հարության մասին իմանալու է, որ [հարություն առնողները] ոչ ծեր են լինում և ոչ երեխա. նախ՝ որովհետև ծերն ու երեխան անկատար են, ուստի հարություն են առնում երիտասարդ հասակում, որ կատարյալ է: Երկրորդ՝ քանզի Ադամը երեսուն տարեկան արարվեց, և Քրիստոսը երեսուն տարեկանում հարություն առավ[58]: Եվ բոլոր մարդիկ այդ հասակում են հարություն առնում, ինչպես Պողոսն ասում է Եփեսացիներին [հղած թղթում]. «Կատարյալ մարդ լինելու, Քրիստոսի տարիքի չափ լինելու» (Եփես 4.13): Նաև՝ հարության ժամանակ չի երևում, նա կի՞ն է կամ մյուսը տղամա՞րդ է, [քանզի] արդարները լուսեղեն զգեստներով են ծածկվում: Եվ ոչ էլ անունով է ճանաչվում մեկը, ինչպես այժմ մեր մեջ, այլ՝ գործերից և փառքի պսակից:

Իմանալու է նաև այս, քանզի հարությունից հետո մարմնապես ոչ ուտում և ոչ էլ ըմպում են, ոչ կին են առնում և ոչ տղամարդու տրվում, ինչպես (հակառակն են) ասում մահմեդականները, հրեաներից ոմանք, որոնք սադուկեցիներ էին[59], և սուտ հերձվածողներ: Քանզի Հոբը նրանց ատելով ասում է. «Եթե մարդ դժոխք իջնի, այլևս դուրս չի գա և չի վերադառնա իր տունը, և իր բնակարանը նրան չի ճանաչելու» (Հոբ 7.9): Նախ Քրիստոսը նրանց հանդիմանում է և ասում. «Անմիտներ, հարությունից հետո ոչ կին են առնում և ոչ տղամարդկանց տրվում, այլ լինում են հրեշտակների նման կերակուրի անկարոտ և անմահ» (Ղուկ 20.35): Եվ եթե մեկն ասի, թե՝ Քրիստոսը կերավ հարությունից հետո, [ապա] կասենք, որ Քրիստոսը հարությունից հետո կերավ, որպեսզի հարությունը հաստատի: Իսկ ընդհանուր հարությունը ծածուկ չէ, ինչպես Քրիստոսինը. այդ պատճառով մարմնական կերակուրի կարիք չկա: Քանզի այնտեղ հոգևոր և աստվածային տեսությունը կերակուր է, որ ամեն ինչից քաղցր է:

Բայց Քրիստոսը հարությունից հետո զգեստով ու խոցվածքով երևաց, որ մեր հանդերձյալ կյանքում չի լինելու, քանզի յուրաքանչյուր մարդու զգեստը իր գործերն են՝ բարի կամ չար: Եվ այստեղ ունեցած մեր խոցվածքն այնտեղ ապաքինվում է: Նաև այստեղի նման մարմինը ոչ ավելի է և ոչ պակաս՝ կաղ կամ կույր, մեկձեռքանի կամ վեցմատանի, երկուգլխանի և այլն: Քանզի այնտեղ բոլոր անդամներն ուղղվում են առանց թերության և հավելվածի: Թեպետ բոլոր մարդիկ նույն տապանում են ննջում, [սակայն] յուրաքանչյուրն իրարից անխառն [կերպով] են հարություն առնում, քանզի ոչ մեղավորի մարմինն է արդարի հետ պատիվ ստանում և ոչ էլ արդարի մասն է մեղավորի հետ տանջվում:

Հարության օրինակի մասին

Ինչպես օրինակ զանազան սերմերը՝ ցորենը, գարին, կորեկը և մնացյալը նույն հողում են ցանվում, և յուրաքանչյուրն իր տեսակից է բուսնում, այնպես էլ հարության պարագան է: Դարձյալ՝ ինչպես սերմերից

մերկ հատիկն է հող ընկնում և բուսնում [որպես] զարդարուն հասկ, ցողուն, տերև և այլն, այնպես էլ թաղված մերկ մարմինն է հարություն առնում փառքով զարդարված, ինչպես առաքյալն է ասում Առաջին Կորնթացիներին [թղթում]:

Հարություն առածների յոթ զարդերի մասին

Իմանալու է, որ արդարները յոթ զարդերով են զարդարվում, այսինքն՝ երեքով՝ հոգին և չորսով՝ մարմինը: Քանզի երեք պակասությունները, որ մեր հոգում են, այսինքն՝ նախ՝ ագիտությունը, երկրորդ՝ մոռացությունը, երրորդ՝ արտմությունը այնտեղ վերանում են:

Նախ լինում է պայծառ գիտություն, երբ Աստծուն տեսնում ենք դեմհանդիման:

Երկրորդ՝ որպեսզի Աստծուն հաստատ ընկալենք և ոչ թե մոռանանք:

Երրորդ՝ Աստծուն տեսնելով այնպես կուրախանանք և այլևս չենք տրտմի, ինչպես Տերն ասաց. «Դարձյալ կտեսնեմ ձեզ և ուրախ կլինեք և ձեր ուրախությունը ոչ ոք չի կարող խլել ձեզնից» (Հովհ 16.22):

Իսկ մարմինը չորս պակասություն ունի այստեղ. այսինքն՝ նախ չարչարելի և մահկանացու է, երկրորդ՝ աղտեղի և սև, երրորդ՝ ծանր և ծույլ, չորրորդ՝ թանձր և կոպիտ:

Սրանք վերանում են այնտեղ.

Նախ՝ որովհետև սրբերի մարմիններն անմահ են և անչարչարելի:

Երկրորդ՝ աղտեղությունը վերանում է, և զարդարվում են լույսով, ինչպես արեգակը. Տերն ասում է. «Արքայության մեջ արդարները պիտի փայլեն իբրև արեգակ» (Մատթ 13.43):

Երրորդ՝ մարմինները պետք է թեթև և փութկոտ լինեն բոլոր բարի գործերում. այնպես որ՝ ուր հոգին կամենա, այնտեղ մարմնով կգտնվի:

Չորրորդ՝ թանձրությունը կվերանա և կլինի անոսր ու թափանցիկ, ինչպես արեգակի լույսն է անցնում երկնքով առանց ապականության: Եվ դարձյալ. ինչպես մեր Տեր Հիսուս Քրիստոսը հարություն առավ վեմով կնքված գերեզմանից և փակ դռներից մտավ աշակերտների մոտ, նույնպես սրբերի մարմինները հասնում են մինչև հրեղեն երկինքները:

Իսկ այսպիսի զարդեր հոգով և մարմնով արդարներն ունեն, ովքեր հավանացած են Աստծո, ինչի մասին Եսային ասում է. «Իմ անձը Տիրոջ մեջ պիտի ցնծա, որովհետև ինձ հագցրեց փրկության զգեստ և ուրախության պատմուճան, որպես փեսայի ինձ պսակ ավեց և որպես հարսի ինձ զարդերով զարդարեց» (Եսայի 61.10): Իսկ մեղավորները չունեն, քանզի մեղավորների հոգիները ագիտության խավարի և հավիտենական արտմության մեջ են և բաժանված են Աստծուց: Նրանց մարմինները դառնում են առավել անթափանց, ծանր ու զարշելի, ինչպես այստեղ. սև, աղտեղի և չարչարելի, քանզի անչափ չարչարանքներ են կրում, մահ են ցանկանում և չեն մեռնում, ինչպես Հովհաննեսի տեսիլքում. «Այն

օրերում մարդիկ մահ են փնտրելու և չեն գտնելու» (Հայտ 9.6):

Ընդհանուր հարության մասին այսքանը համառոտ ասվեց:

Քրիստոսի հարության մասին

Այժմ խոսենք Քրիստոսի հարության մասին:

Նախ՝ վերացնենք քո դայթակղությունը, որ ասում ես, թե իբրև մարդ հարություն առավ, իսկ ուրիշից հարություն առավ Քրիստոսը, իսկ թե Հայրը կամ [Սուրբ] Հոգին մեռելներից հարություն [պարգևեց] Քրիստոսին: Ո՞վ դու հիմար մեկնիչ, չլսեցի՞ր Տիրոջից, որ ասում էր. «Իշխանություն ունեմ իմ անձը դնելու», այսինքն՝ [ենթարկելու] մահվան, «և իշխանություն ունեմ բարձրանալու» (Հովհ 10.18), այսինքն՝ հառնելու գերեզմանից: Ինչպես ինքն իր կամքով եկավ չարչարվելու և մեռավ, և ինքն իր կարողությամբ հարություն առավ: Եվ դարձյալ ասում էր. «Մարդու Որդին քահանաներին պիտի մատնվի և չարչարվի և երրորդ օրը հարություն առնի» (Ղուկ 24.7): Եվ դարձյալ հրեշտակն ասում էր յուղաբեր կանանց. «Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում. այստեղ չէ, այլ հարություն առավ» (Ղուկ 24.5): Ինչո՞ւ չասաց, թե՝ հարություն առացավ, այլ թե՝ «հարություն առավ»: Նաև առաքյալն է բազում տեղերում ասում. «Հայրը նրան հարություն պարգևեց մեռելներից, նաև՝ Հոգին» (հմմտ Հռոմ 10.9, Ա Թես 1.10): Այդ պատճառով ասում է, որ երեք անձերի՝ Հոր, Որդու և Հոգու ներգործությունն ու կարողությունը նույնն է, որով եթե ասվում է, որ Հայրը կամ Սուրբ Հոգին հարություն պարգևեց Որդուն, ապա դա միևնույն կարող զորությունն է, որի շնորհիվ ինքը հարություն առավ, որով Հայրն է հարություն տալիս, նույնն է նաև Սուրբ Հոգու ներգործությունը: Այլև երբեմն պատիվը վերապահում է Հորը, որ պատճառն ու սկիզբն է. այդ պատճառով ասվում է, թե Հայրն է հարություն տալիս Քրիստոսին:

Իմանալու է, որ Քրիստոսը հարություն առավ ոչ թե անկատար հարությամբ, այլ՝ կատարյալ: Եվ [սա] որոշ է.

Նախ՝ որովհետև առաքյալն ասում է Հռոմեացիներին [հղած թղթում], թե. «Քրիստոսը մեռավ և հարություն առավ, այսուհետև չի մեռնի և մահը նրան այլևս չի տիրի» (Հռոմ 6.9):

Երկրորդ՝ Եբրայեցիներին [հղած թղթում] ասվում է. «Ինչպես յուրաքանչյուր մարդ մի անգամ է մեռնում և դրանից հետո դատաստան է, այդպես էլ Քրիստոսը մեր մեղքերն անարգելու համար մի անգամ մեռավ» (Եբր 9.27): Բայց երկրորդ անգամ գալու է մարդկանց դատաստանի և հատուցման համար:

Երրորդ՝ մեկ անգամ մեռնելով՝ մարդկանց [համար] կատարյալ փրկություն արարեց. այդ պատճառով երկրորդ անգամ չի մեռնում, ինչպես վերը ցույց տվեց:

Չորրորդ՝ քանզի Քրիստոսի հարությունը պատճառն է բոլոր մարդ-

կանց, քանզի «նա մեռելների անդրանիկն է և ննջեցյալների պտուղը» (Կող 1.18) և «ինչպես Ադամով բոլորը մեռան, այդպես էլ Քրիստոսով բոլորին կյանք և հարություն [տրվեց]» (Ա Կոր 15.22), ասվում է Կորնթացիներին [հղած] Առաջին [թղթում]:

Արդ, հարկ է, որ պատճառը կատարյալ լինի հարությամբ, որպեսզի մենք էլ նրանով կատարյալ հարություն ունենանք:

Քանզի անփոփոխելի է Քրիստոսի մարդկությունը

Իմանալու է, որ յոթ թերություններ կան, որոնք վերանում են մեր հարության [ժամանակ]. երեքը հոգունն են, չորսը՝ մարմինը, ինչպես վերն ասվեց: Սրանք ոչ թե հարությունից հետո վերացան Քրիստոսի մեջ, ինչպես ասում են հերձվածողներից ոմանք[60], այլ հղության պահին [իսկ], երբ Հոգու միջնորդությամբ Բանը մարմին եղավ, և բանական Հոգու նույն մասն ու մարմինը միացան և աստվածացավ Կույսի արգանդում: Եվ հայտնի է, որ ագիտությունը, մոռացումը և տրտմությունը վերացան բանական հոգուց, քանզի ուրախություն եղավ երկնքի և երկրի [համար]. ուրեմն ինքը տրտմություն չուներ: Եվ դարձյալ ասում է. «Ոչ ոք չգիտի Հորը, բայց [միայն]՝ Որդին, և հայտնվում է նրան, ում կամենում է Որդին» (Մատթ 11.28): Ուրեմն պարզ է, որ ոչ ագիտություն ուներ և ոչ մոռացում: Նաև մարմնի չորս փոփոխությունները, որ հարությունից հետո մեզ պիտի լինեն. մեր Տերը ցույց տվեց նախքան իր խաչելությունը. թափանցիկությունը ցույց տվեց, երբ կույս արգանդից ծնվեց, և կուսությունը անխախտ մնաց, պայծառությունը ցույց տվեց Թաբոր [լեռան] վրա, երբ դեմքը լուսավորվեց արեգակից ավելի, թեթևությունը ցույց տվեց ծովի վրա և լեռան գագաթին, երբ ընթանում էր օդի վրայով, իսկ անչարչարանելիությունը ցույց տվեց վերնատան մեջ, երբ իր անապական և անմահ մարմինն ու արյունը բաշխեց:

[Հարց.] Ապա ի՞նչ է այն, որ ասում ենք, թե հարությունից հետո մարմնով փառավորվեց:

[Պատասխան.] Իմաստը կրկնակի է. առաջին՝ ինչպես նեստորականներն են ասում, թե սոսկ մարդ ծնվեց Կույսից և մկրտության պահին Հոգով օծվեց, և հարությունից հետո Բանը բնակվեց մարմնի մեջ և պայծառացավ մարմինը: Այսպես հերձվածողներն են ասում[61]: Իսկ ուղղափառներս այսպես ենք ասում՝ փառավորելով մարմինը: Բանի մարմնի փառքն աստվածանալն էր, որ հղության պահին եղավ, ոչ թե երբ մկրտվեց կամ հարություն առավ, այլ երբ Կույսից Էմմանուել ծնվեց, այսինքն՝ մարդացած Աստված: Եվ հրեշտակն ասում էր. «Այսօր ձեզ Փրկիչ ծնվեց, որ Օծյալ Տեր է Դավթի քաղաքում» (Ղուկ 2.11): Աստվածությունը ծածկված էր մարմնի մեջ մինչև մկրտությունը, որ Հայրը վկայեց և Հոգին իջավ Քրիստոսի վրա: Հետո քարոզեց և հրաշքներ գործեց հավատացյալների համար և մինչև խաչ ու հարություն քողարկվեց թշնամիների և անհա-

վառների համար, «որպեսզի նրան չտեսնի անզգի աչքը» (Հոբ 28.7), ասում է Հոբը: Ապա, հարությունից հետո, երբ կատարեց տնօրինությունը, մարդկանց հոգիները փրկեց և իր հետ հարություն պարգևեց: Երբ իր մեջ ծածկված մարմնի աստվածությունը հայտնեց և հարությունից հետո այնպես փառավոր մարմնով երևաց աշակերտներին, ինչպես Թաբոր լեռան վրա: Իսկ նրանք, ովքեր Թաբոր լեռան վրա չէին տեսել, երկրպագեցին, երբ հարությունից հետո տեսան: Այդ պատճառով՝ նրանց երկրպագությունը հաստատեց ասելով. «Շոշափեցեք ինձ և տեսեք, քանզի նույնն եմ մարմնով և փոփոխված չեմ» (Ղուկ 24.39): Քանզի փոփոխությունը մեր մարմինների և հոգիների [հետ] պետք կատարվի հարությունից հետո, սակայն Քրիստոսի հետ միավորվելիս փոփոխություն չկար և չեղավ և ոչ էլ հավիտյան լինելու է ո՛չ խոսքով, ո՛չ հոգով և ո՛չ էլ մարմնով, ինչպես առաքյալն է ասում Եբրայեցիներին [հղած թղթում]. «Հիսուս Քրիստոսը երեկ, այսօր և հավիտյան նույնն է» (Եբր 13.8). «երեկ», այսինքն՝ անցյալում, «այսօր»՝ ներկայում և «հավիտյան»՝ հանդերձյալ [կյանքում]: Մարգարեն հանձին Քրիստոսի ասում է. «Սակայն դու նույնն ես, և քո տարիները չեն պակասում» (Եբր 1.12): Նաև Նիկիայում սուրբ հայրերը դավանության մեջ ասացին. «Եթե մեկն ասի Քրիստոսին՝ թե այլայլելի կամ փոփոխելի է, այնպիսիներին նզովում է կաթողիկե և առաքելական սուրբ եկեղեցին»[62]: Ամեն, թող լինի:

Գլուխ ԽԱ

ՏԱՍԸ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այժմ պատմենք Տիրոջ հարության մասին առաջիկա խոսքով:

Առաջին [հարց.] *Ի՞նչ է* [*այն, որ*] *ասում* [*է*]. *«Շաբաթ երեկոյան, երբ լուսանում էր մեկշաբթին» (Մատթ 28.1):*

[Պատասխան.] *Իմաստը երեքն է. նախ ոմանք շաբաթ երեկոյան մեկ մասն են երեկո անվանում, երբ արեգակը մայր է մտնում. ասում են Տիրոջ հարությունն այս պահին է, որ ընդհանուր կարծիք չէ. նախ՝ որովհետև Քրիստոսի հարությունը ոչ թե շաբաթ օրն է, այլ կիրակի: Երկրորդ՝ Մարկոսն ասում է. «Պատրաստեցին խունկերը և, պատվիրանի համաձայն, շաբաթ օրը հանգստացան, սակայն մեկշաբթի օրը եկան» (Ղուկ 23.56): Ոմանք երեկո են համարում ամբողջ գիշերը՝ մասն ամբողջ նկատելով, ինչպես այն,* [*որ ասում*] *է. «Երեկո եղավ»՝ ամբողջ գիշերվա համար է ասում. «և առավոտ եղավ»՝ ամբողջ ցերեկվա համար է ասում*[63]*: Այսպես այստեղ երեկո է անվանում կիրակիի բովանդակ գիշերը և քանի որ չի ասում երեկոյի առաջին մասը՝ պարզ է, որ առաջին մասում լույս չի լինի, ինչպես ասում է «երբ մեկշաբթին էր լուսանում». ուրեմն հստակ է, որ բովանդակ գիշերն է նշանակում, որի լուսաբացին է Քրիստոսի հարությունը: Սրան համաձայն չեն ճշմարիտ վարդապետները, քանզի հարությունը կիրակի լուսաբացին չեղավ, երբ կանանց երևաց, այլ նախ գիշերը հարություն առավ, ապա առավոտյան երևաց: Դարձյալ ոմանք ասում են՝ երեկո և լույս. այս երկու բառերը հիշելով՝ ակնարկում են կիրակի գիշերը, երբ հարություն առավ Քրիստոս: Եվ այս է ասում սուրբ Ոսկեբերանը*[64]*, որին համաձայն են բոլոր ճշմարիտ վարդապետները, ինչպես ցույց է տալիս առաջիկա* [*խոսքը*]*:*

Տիրոջ հարության օրվա և ժամի մասին

Երկրորդ [հարց.] *Քանի՞ օր մեռած մնաց և ո՞ր օրը հարություն առավ:*

[Պատասխան.] *Երեք օր և երեք գիշեր թաղված մնաց, ինչպես Հովնանը կետի փորում. ինչպես ասվեց չորրորդ հատորի հինգերորդ համարում*[65]*: Իսկ թե ո՞ր օրը հարություն առավ, կպատասխանենք՝ կիրակի օրը, քանզի ուրբաթ* [*օրը*] *խաչվեց և շաբաթ* [*օրը*] *թաղվեց, ըստ այն խոսքի, թե «Աստված հանգստացավ իր գործերից» (Ծննդ 2.3), այսինքն՝ ուրբաթ* [*օրվա*] *չարչարանքից հետո, շաբաթ հանգստացավ գերեզմանում, իսկ կիրակի հարություն առավ գերեզմանից:*

[Հարց.] *Ինչո՞ւ կիրակի:*

[Պատասխան.] *Չորս պատճառով. նախ՝ որովհետև բոլոր օրերի սկիզբն է, նրանում կատարվեցին Աստծո յոթ գործերը, այսինքն՝ երկինքը և*

երկիրը, հրեշտակներն ու լույսը և այլ տարրերը, որոնք արարչության յոթ գործերն են:

Երկրորդ՝ նրանում տասնմեկ խորհուրդներ եղան. Նույն՝ ապանից դուրս գալուց, Աբրահամին, Մովսեսին՝ Սինա լեռան վրա, նաև՝ օրենքների ավելուրջությունը կիրակի [օրը] եղավ:

Երրորդ՝ պատիվ տալով Քրիստոսի հարությամբ և առաքյալների գլխի վրա Սուրբ Հոգու իջնամբ:

Չորրորդ՝ մարդկանց ընդհանուր հարություն, Քրիստոսի գալստյան, և, յուրաքանչյուր գործի համաձայն, հատուցման օրն է:

[Հարց.] Քանի՞ ժամ մնաց գերեզմանում և ո՞ր ժամին հարություն առավ:

[Պատասխան.] Իմանալու է, որ Ավետարանը հայտնապես չի ասում հարության ժամը, ինչպես նաև՝ խաչի և թաղման, որովհետև գերեզմանը կնքված էր, երբ հարություն առավ, և ապա, հարությունից հետո, հրեշտակը իջնելով թափալեց վեմը և հարությունը ավետեց:

Եվ այս երեք պատճառով է.

Նախ՝ որովհետև Աստծո գործը ժամանակից վեր է:

Երկրորդ՝ որովհետև հանկարծակի և անժամանակ հարություն առավ: Երրորդ՝ որպեսզի լոկ հավատանք [ինչպես] հարությանը, այնպես էլ ծնունդին և փոխման, մեր մահվանն ու հարությանը, քանզի փրկությունը հավատքից է և ոչ գիտությունից:

Այս մասին զանազան բաներ են ասում վարդապետները. նախ՝ ոմանք ասում են, ինչպես մեծն Ներսեսը Սաղմոսի մեկնության մեջ. «Օրը յոթ անգամ պիտի օրհնեմ» (Սաղ 118.164). Քրիստոսի հարությունը շաբաթ [օրվա] երեկոյան է, երբ, ըստ Մատթեոսի, լուսանում էր կիրակին: Եվ ըստ այս կարծիքի, մարմինը քառասուն ժամ մնաց գերեզմանում, և հոգին քսանութ ժամ՝ դժոխքում[66]:

Իսկ ուրիշ վարդապետներ, ըստ Մարկոսի և այլոց, ասում են, թե արշալույսին հարություն առավ: Եվ, ըստ սրանց կարծիքի, մարմինը երեսունվեց ժամ մնաց գերեզմանում, և հոգին քսանութ ժամ՝ դժոխքում:

Իսկ մենք՝ ճշմարտության աշակերտներս, հետևելով Ոսկեբերանին, ասում ենք, որ գիշերվա մեջ էր գերեզմանից հարություն առնելու ժամը: Քանզի ուրբաթ [օրվա] իններորդ ժամին հոգին ավանդեց և դժոխք իջավ, և երեկոյան արևամուտին մարմինը գերեզման դրվեց: Եվ այսպես երեսուն ժամ մարմինը մնաց գերեզմանի մեջ, քանզի շաբաթ գիշերն ու ցերեկը քառասուն ժամ է, և կիրակի գիշերը՝ վեց ժամ, որ լինում է երեսուն ժամ, իսկ հոգին երեք ու կես ժամ նախ դժոխք իջավ, որ լինում է երեսուներեք ժամ ու կես: Եվ խորհուրդն այն է, թե որքան տարի մարմնով քարոզեց մարմնավորներին, նույնքան էլ հոգով քարոզեց հոգևորներին, այսինքն՝ երեսուներեք տարի ու կես երկրի վրա և երեսուներեք ժամ ու կես՝

դժոխքում:

Իսկ մարմինը երեսուն ժամից հարություն առավ գերեզմանից, քանզի երեսուն տարեկանում մարմնով մկրտվեց և ջրից դուրս եկավ և երեսուն տարեկանում հարություն առավ, և Ադամը երեսուն տարեկան ստեղծվեց: Նաև մենք ընդհանուր հարության [ժամին] երեսուն տարեկանում պիտի հարություն առնենք, ըստ այն խոսքի. «Հասնելու ենք կատարյալ մարդ լինելու, Քրիստոսի տարիքի չափ լինելու» (Եփես 4.13): Իսկ թե ինչո՞ւ գիշերը՝ պատճառները՝ բացատրված քսան գլխով՝ տե՛ս Հարցմանց [գրքում][67]:

[Հարց.] *Ապա ինչո՞ւ է մարգարեն ասում. «Արթնացի՛ր, փառք իմ, և ես կարթնանամ առավոտից» (Սաղ 56.9, 107.3):*

[Պատասխան.] *Ասենք, որ վաղ առավոտը և ուշ երեկոն նշանակում են կեսգիշեր, ինչպես ասում է սուրբ Կյուրեղը, թե՝ վաղ առավոտը և ուշ երեկոն ժամանակի միևնույն ընթացքն են:*

Յուղաբեր կանանց մասին

Երրորդ [հարց.] *Ավետարանն ինչո՞ւ է կանանց գալը արշալույսին ասում:*

[Պատասխան.] *Յուղաբեր [կանանց] մասին չորս գլուխների (Ավետարանների) տարբերությունը.*

Նախ՝ ժամանակից է. քանզի մեկն ասում է՝ երեկոյան, մյուսն՝ առավոտյան, երրորդը՝ արշալույսին և այլն:

Երկրորդ՝ հրեշտակի և գերեզմանի պահապան տեսիլքներից:

Երրորդ՝ կանանց անուններից: Այս պատճառով ոմանք կանանց գալը երկու անգամ ասացին. Մատթեոսինը՝ այլ, Մարկոսինը՝ այլ: Մյուսները երեք անգամ ասացին, ինչպես Ղուկասինը և Հովհաննեսինը, [որ] տարբեր է սրանցից: Սակայն նրանք, ովքեր ճշմարտությամբ իմացան, ասում են, որ չորս անգամ եկան գերեզման, և պահապան տեսիլքների հանդիպեցին: Եվ յուրաքանչյուր դասի մասին չորս ավետարանիչները գրում են:

Առաջինը Մատթեոսն է գրում, որ գիշերը եկան և մի հրեշտակ տեսան, որ վեմը նրանց առջև թավալեց ու նստեց նրա վրա: Կանայք՝ Մարիամ Մագդաղենացին և Հակոբի ու Հովհաննեսի մայրը:

Երկրորդը՝ Ղուկասը պատմում է՝ «վաղ առավոտյան» տեսան երկու լուսազգեստ այրեր և թավալված վեմը: Եվ յուղաբեր [կանանց] վրա ավելացնում է Հովհաննային, որ Հերովդեսի հազարապետ Քուզի կինն է (տե՛ս Ղուկ 8.3, 24.1-10):

Իսկ երրորդը՝ Մարկոսը պատմում է. «առավոտյան և արևագալին», [որ] Ղուկասից հեռու է, քանզի արևագալն այն չէ, երբ երևում է արևը, այլ՝ երբ մի փոքր լույս է փայլում երկնքում: Եվ անունների վրա ավելացնում է Սողոմեին, որ Զեբեդեոսի որդիների մայրն է: Մտնելով գերեզման, աջում՝ հարավակողմը նստած մի երիտասարդ տեսան:

Չորրորդը՝ Հովհաննեսն ասում է. «արշալույսին», այն է՝ երբ լույսը հաղթում է գիշերին: Եվ միայն Մագդաղենացին է [հիշվում]: Երկու հրեշտակներ տեսավ սնարի և ոտքերի, այսինքն՝ արևմտյան և արևելյան կողմը նստած: Թվում է, թե առաջինը վեմը թավալեց հյուսիսային կողմը և վրան նստեց, որպեսզի հրեշտակների նստելը խաչի ձև ունենա, և խաչյալին ավետարանեն: Այս իմաստով [է, որ] քահանաների գերեզմաններին խաչաձև նշանաքար ենք դնում: Եվ այսպես, աշակերտներին չապակրատանք էր թվում նրանց խոսքն ու տեսիլքը, սակայն բոլորն էլ Քրիստոսի նույն հարությունն էին պատմում:

Հրեշտակների մասին

Չորրորդ [հարց.] *Ի՞նչ է՝ «երկնքից իջած Տիրոջ հրեշտակը» (Մատթ 28.2):*

[Պատասխան.] *Նախ՝ ցույց է տալիս, թե Քրիստոսի հարությունը հրեշտակների օգնությամբ չեղավ:*

Երկրորդ՝ որպեսզի բոլորը երկնքի հրեշտակին ցոլացած տեսնեն, և չկարծեն, թե մարդիկ են գողացել (Տիրոջ մարմինը):

Երրորդ՝ ցույց է տալիս, որ հրեշտակները նրան զորացնելուց հետո այլևս չերևացին մինչև հարությունը.

Նախ՝ որովհետև հրեշտակները փոխմիջնորդ են. Տիրոջ չարչարանքը տեսնելով՝ հրով կայրեին հրեաներին, ինչպես այն ժամանակ Սոդոմում՝ Ղովտի համար:

Երկրորդ՝ որպեսզի սատանան չտեսնի հրեշտակների սպասավորությունը և կարծի, թե Աստծո Որդի է:

[Հարց.] *Ինչո՞ւ պայծառ երևացին:*

[Պատասխան.] *Չորս պատճառով.*

Նախ՝ որովհետև լույսի այդպիսի պայծառություն ունեն [իրենց] բնությամբ:

Երկրորդ՝ որպեսզի հարության պատճառով ուրախություն ցույց տան:

Երրորդ՝ այսպես է հայտարարում հարության ասածների դեմքը:

Չորրորդ՝ որովհետև այսպես պիտի լինեն սրբերն ընդհանուր հարությանը:

[Հարց.] *Ինչո՞ւ նրա աչքից պահապանները մեռածի նման եղան:*

[Պատասխան.] *Երեք պատճառով.*

Նախ՝ որպեսզի իմանան, թե Աստծո գործն է այն,

երկրորդ՝ որպեսզի շտապեն և պատմեն հրեաներին,

երրորդ՝ որպեսզի կանայք և հետո աշակերտներն ազատ և համարձակ գերեզման մտնեն:

[Հարց.] *Ինչո՞ւ է կանանց ասում. «Դուք մի՛ երկնչեք» (Մատթ 28.5, Մարկ 16.6):*

[Պատասխան.] *Նախ երկյուղից է հանգստացնում, որպեսզի ճշմարիտ*

հարության [մասին] կարդանան ըստ, ինչպես Հրեշտակը Դանիելին պարզեց (տե՛ս Դան 10.12):

Երկրորդ՝ «Դուք մի՛ երկնչեք», որ հետևեցիք Քրիստոսին, այլ երկյուղը խաչողներինն է:

Երրորդ՝ «մի՛ երկնչեք», քանզի սրանից հետո երկյուղը փարատվեց և տրտմությունը խնդության փոխվեց Քրիստոսի հարությամբ:

Հինգերորդ [հարց.] Ինչո՞ւ նախ կանանց երևաց:

[Պատասխան.] Երեք պատճառով.

Նախ՝ որովհետև մահվան բաժակը կնոջ ձեռքով եղավ. հարկ էր, որ հարության ավետիսն էլ կանանց ձեռքով լիներ:

Երկրորդ՝ Աստծո շնորհն է ցույց տալիս, քանզի չի արհամարհում կանանց սեռը, որովհետև ով ջերմագին սեր ունենա, նրա [համար] ընդունելի է՝ տղամարդ լինի, թե կին:

Երրորդ՝ քանզի կանանց սեռը ավելի համբավատարած է, քան տղամարդկանց:

Այդ պատճառով նրանց երևաց, որպեսզի ավելի համբավեն Քրիստոսի հարությունը:

Եվ իմանալու է, որ չորս պատիվ մատուցեց կանանց.

Նախ՝ որովհետև տեսավ,

երկրորդ՝ ողջույն տվեց,

երրորդ՝ շոշափվեց,

չորրորդ՝ [նրանց որպես] ավետաբեր առաքեց:

Եվ սա արեց, որպեսզի հաստատվի հարությունը:

Եվ եթե մեկը կամենա, կարող է տեսնել և համբուրել Քրիստոսին չորս կերպով.

նախ՝ հավատքով,

երկրորդ՝ աղոթքով,

երրորդ՝ ճաշակմամբ,

չորրորդ՝ հանդերձյալ [կյանքում]՝ անճառելի փառքով:

Վեցերորդ [հարց.] Ի՞նչ է, որ ասում է. «Ասացեք, թե աշակերտները նրան գողացան, երբ մենք քնած էինք» (Մատթ 28.13):

[Պատասխան.] Տե՛ս նրանց ստությունը. եթե քնած էիք, ինչպե՞ս իմացաք, որ աշակերտները գողացան կամ ուրիշ մեկը: Իսկ եթե արթուն էիք, ինչպե՞ս թույլ տվեցիք, որ գողանան: Եվ նրանց ստությունը հայտնի է բազում բաներից.

Նախ՝ իրենց խոսքերից երևաց սուտ լինելը:

Երկրորդ՝ աշակերտները տառապած, աղետ և հալածված մարդիկ էին. ինչպե՞ս գողացան:

Երրորդ՝ կնիքը գերեզմանի վրա էր:

Չորրորդ՝ զինվորները զգաստությամբ շրջապատել էին:

Հինգերորդ՝ քանզի վեմը մեծ էր և չէին կարող գողանի թավալել:

Վեցերորդ՝ զինվորների [մոտ] լույսը շատ էր, և հրեշտակը լույսի կերպարանքով իջավ, իսկ զորերը փախչում են լույսից:

Յոթերորդ՝ զմռսված պատանքը չի բաժանվում մարմնից:

Ութերորդ՝ ծալված վարշամակը չի վերցնում գողը:

Իններորդ՝ ինչո՞ւ առաջին գիշերը չգողացան, երբ պահապան չկար:

Տասներորդ՝ ի՞նչ կրան հերյուրեցին գողանալով մարմինը, թե՝ հարություն առավ:

[Հարց.] Ի՞նչ էր նշանակում վարշամակի ծալված լինելը, իսկ կտավինը՝ ոչ:

[Պատասխան.] Ծալված վարշամակն Աստվածությունն է նշանակում, իսկ կտավը՝ մարդկությունը: Դարձյալ՝ ինչպես ծալվածը ծածուկ է, միայն մի կողմն է երևում, այնպես էլ բոլոր հոգեղենների համար ծածուկ և անհաս է աստվածային էությունը, և միայն, այսինքն՝ նախախնամությամբ է երևում՝ որոնց կամենում է երևալ: Իսկ պատանքը ծալված չէ, քանզի անօրինությունն ամբողջովին հայտնի չէ և ոչ՝ անհայտ, ինչպես կտավը, որ բազում ծալվածք ուներ: Եվ սրանք հարությունն են վկայում, և ոչ թե գողացված [լինելը], քանզի գողը չէր ծալի վարշամակը և զմռսի կտավը:

Հարության վկաների մասին

Յոթերորդ [հարց.] Ովքե՞ր են Քրիստոսի հարության վկաները:

[Պատասխան.] Տասն են.

Նախ՝ մարգարեները, ովքեր սկզբից գուշակեցին Քրիստոսի հարությունը, ինչպես Եսային է ասում. «Երկրի վրայից խլեցին նրա կյանքը» (Եսայի 53.8)՝ որ մահն է: «Եվ Տերը կամենում է սրբել նրան վերքերից և լույս ցույց տալ» (Եսայի 53.10), սա [էլ] հարությունն է ակնարկում: Եվ Դավիթ մարգարեն ասում է. «Նրա մարմինն ապականություն չտեսավ, և նրա հոգին դժոխքում չմնաց» (Սաղ 15.10):

Երկրորդ՝ հաստատվում է օրինակներով. ինչպես Հովնանը կետի փորում երեք օր և երեք գիշեր ողջ մնաց. սա նշանակում էր Քրիստոսի մարմինը, որ մեռած էր, վերկենդանանում էր և կենդանի էր: Նաև՝ Մովսեսի մոտ վառվող մորենին չէր այրվում. [սա] նշանակում էր Քրիստոսի մարմինը, որ մեռած էր և կենդանի:

Երրորդ՝ ինքն իր [մասին] վկայություններով ասում էր. «Ահավասիկ Երուսաղեմ պիտի բարձրանանք, և Մարդու Որդին պիտի մատնվի և խաչվի, և երեք օրից հարություն պիտի առնի» (Մարկ 10.33, Ղուկ 18.31):

Չորրորդ՝ հրեշտակների բարբառումով, որոնք խնկաբեր կանանց ասում էին. «Հիսուսի՞ն եք փնտրում, խաչված Նազովրեցո՞ւն՝ հարություն առավ, այստեղ չէ» (Մարկ 16.6):

Հինգերորդ՝ կանանց վկայություններով, «ովքեր այս պատմեցին առաքյալներին»:

Վեցերորդ՝ նույնը հաստատվում է զինվորներով, որոնք պահպանում էին գերեզմանը, քանզի քաղաք մտնելով՝ քահանաներին պատմեցին հարության [մասին], թեպետև չէին կարողացել Քրիստոսին տեսնել, սակայն գերեզմանի ցնցումից և հրեշտակների երևումից երկյուղեցին և հարությունը իմացան:

Յոթերորդ՝ հաստատվում է սուրբ մեռելներով, որոնք Քրիստոսի հետ հարություն առան գերեզմաններից և սուրբ քաղաքը մտան:

Ութերորդ՝ հաստատվում է կնքված վեմով և պատանքով. վեմով՝ քանզի մատանիով էր կնքված և գերեզմանը ծերպ ուներ, որի միջից տեսնում էին մարմինը, և պատանքով՝ քանզի գլխի վարշամակը մի կողմ էր ծալված, որ նշանակում էր հրեշտակներից և մարդկանցից ծածկված նրա Աստվածությունը:

Իններորդ՝ հաստատվում է ականատեսների վկայություններով, որոնք մարմնական աչքերով տեսան հարուցյալ Քրիստոսին, որովհետև նույն օրը յոթ անգամ երևաց, նախ՝ Մարիամ Մագդաղենացուն և ապա՝ մյուսներին: Ուրեմն ականատեսների վկայություններից պարզորոշ է Քրիստոսի հարությունը:

Տասներորդ՝ նույն իրողությունների ճշմարտությամբ, այսինքն՝ Քրիստոսով, քանզի հարությունից հետո մարմինը շոշափվեց, աշակերտների հետ կերավ և խմեց, խոսեց և նրանց առաքեց մկրտելու, և նրանց օրհնեց, և նրանց առջև համբարձվեց երկինք: Իսկ նրանք ընթացան աշխարհի [տարբեր] կողմերը և քարոզեցին մեռելներից հարություն առած Քրիստոսին, որով մենք բոլորս հավատացինք և փրկվեցինք նրա հարության շնորհիվ:

Քրիստոսի հարության հրաշքների մասին

Ութերորդ՝ հարցնելու է [նաև] Քրիստոսի հարության հրաշքների մասին: Բայց նախ իմանալու է, թե քանի ժամ Տիրոջ մարմինը մնաց գերեզմանում, ինչպես և վայել է Աստծուն, ապականություն չտեսավ, քանզի ըստ մեր բնության, երբ հոգին բաժանվում է մարմնից, ապականության է ենթարկվում: Իսկ Քրիստոսի մարմինը, քանզի Աստված էր, ապականություն չտեսավ, ինչպես Դավիթն է ասում, և Պետրոսը՝ Գործք [Առաքելոցում], թե՝ «Նրա մարմինը ապականություն չտեսավ» (Գործք 2.31): Արդ, Քրիստոսի հարության պահին նրա մարմնում երկու հրաշք կատարվեց:

Նախ՝ յուրաքանչյուր մարմին, որ մեռնում է, նրա զգայարանները, որ հոգու գործիքն են, ապականվում են և զրկվում պատշաճից, թեպետ թվում է, թե զգայարանները անխափան են, սակայն ներքին անհրաժեշտ գործունեությունից զրկված են. այդպես էլ ամբողջ մարմինը: Եվ արդ, Քրիստոսի հարության պահին բոլոր զգայությունները պատշաճորեն պահպանվելով մնացին, որպեսզի բանական հոգու միավորությունը պատ-

կանի:

Երկրորդ՝ որովհետև Քրիստոսի մարմինն ամբողջապես ապաքինվեց բոլոր վերքերից, սակայն խոցվածքի հինգ մեծ սպիները մնացին՝ ի վկայություն հարության:

Բայց իմանալու է, որ Քրիստոսի հոգու հետ մարմնի միավորությունը երկու կերպով է հասկացվում. նախ՝ ինչպես տեղական է միավորվում իր տեղի հետ և, ըստ այդմ, ամեն արարված հոգի կարող է միավորվել մարմնի հետ, ինչպես հրեշտակներն ու դևերը, այդպես էլ մարդկային հոգին, եթե Աստված թույլ տա, կարող է մտնել իր մարմնի մեջ և կամ այլ [մարմնի մեջ], սակայն մարմինը դրանով չի կենդանանա: Միավորության երկրորդ եղանակը. հոգին չի կարող իրեն միավորել և ոչ էլ որևէ արարած, որովհետև այդ միավորությունը [նշանակում է] մարմինը կենդանացնել և հարություն տալ, ինչը պատշաճ չէ արարածներին:

Իմանալու է նաև այս, որ արյան հետ կապված չորս հրաշք եղավ.

Նախ՝ ինչպես Քրիստոսի մարմինը գերծ մնաց ապականությունից, այդպես էլ Քրիստոսի մարմնից հեղված արյունը մահից մինչև հարություն անապական մնաց:

Երկրորդ հրաշք. երկրորդ օրը, հրեշտակների պաշտպանությամբ, արյունը հավաքվեց, այսինքն՝ այն, ինչ կարող է հրեշտակների սպասավորությամբ լինել, հարկ չունի անընդմիջաբար Աստծո մեջ գանվել:

Երրորդ հրաշք. աստվածային զորությամբ հավաքված և գերեզմանով կնքված արյունն այնպես ներարկվեց, որ հրեշտակները չէին կարող այն հավաքել, քանզի այդպես անելու [դեպքում] երկու մարմին մեկ տեղում կլինեին, որ պատշաճ չէ հրեշտակներին:

Չորրորդ հրաշք. այս արյունը հարկ էր, որ աստվածային զորությամբ լիներ, քանզի հրեշտակները չէին կարող այն հավաքել, բայց միայն՝ ժամանակավոր շարժումով, և դա ուշացումով կլիներ: Եվ քանի որ հարկ էր վայրկենապես նույն կետում իրականանալ, [ուստի] անհրաժեշտ էր, որ Աստծով իրականանար:

Եվ այսպես կատարվեց հարությունը, և Քրիստոսը կնքված գերեզմանից հարություն առավ: Եվ քանի որ այսքան հրաշքներ կատարվեցին Քրիստոսի գերեզմանի վրա, այդ պատճառով Եսային ասում է. «Նրա գերեզմանը փառքով պիտի լինի» (Եսայի 57.2):

Իններորդ [հարց.] *թե՝ ինչպե՞ս հարություն առավ Քրիստոսը:*

[Պատասխան.] *Վարդապետներն ասում են, թե Քրիստոսը դժոխքից հարություն առավ, ինչպես հաղթողն է պատերազմից տուն դառնում, երբ վանում է թշնամուն և նրա ձեռքից կորզում հոգիներին ու նրա ավարը հափշտակում. այս պատճառով Հակոբն ասում է. «Առյուծի կորյուն է, ո՞վ նրան կարթնացնի» (Ծննդ. 49.9): [Նրան] ոչ ոք [հարություն չպարգևեց], բայց միայն՝ ինքն իր զորությամբ: Նաև ինչպես Հակոբն Ասորիք իջավ ձեռքին միայն [մեկ] ցուպ և այնտեղից վերադարձավ երկու բանակներով,*

այնպես էլ Քրիստոսը դժոխք իջավ միայն հոգով և երկու բանակներով վեր հառնեց, այսինքն՝ սրբերով, որոնք Քրիստոսի հետ վեր հառնեցին և սուրբ քաղաք մտան և հոգով ազատվեցին դժոխքից:

Վարդապետները նաև ասում են, թե Քրիստոսը դժոխքից դուրս եկավ չորս զորախմբերով.

Նախ [իր հետ] ուներ սրբերին, որոնց հարությունը պարզ երևաց մարմնով, որոնք Երուսաղեմ քաղաքը մտան և շատերին երևացին և Քրիստոսի ճշմարիտ հարության մասին վկայեցին և Քրիստոսի հետ երկինք բարձրացան:

Երկրորդ՝ սրբերի հոգիները, ինչպես նահապետներինը, մարգարեներինը և արդարներինը, որոնք այնժամ հավատացին դժոխքում, ազատվեցին և մտան հավիտենական ուրախության մեջ:

Երրորդ՝ մեղավորների հոգիները կապանքներից ազատվեցին այնտեղ մտած Քրիստոսի զորությամբ, ըստ այն խոսքի. «Մահապարտների հոգիները ազատեցիր և քաղաքները ավերեցիր» (Սաղ 101.21), [ասում է] մարգարեն, այսինքն՝ դժոխքում և ավերակում ոչ ոք չի բնակվում, բայց որոնք, ասում են, [թե] ժամանակավոր ազատներ են. «Եվ մեղավորները կրկին դժոխք կվերադառնան» (Սաղ 9.18):

Չորրորդ՝ հրեշտակների խմբերը, որոնք այնտեղ սպասավորում էին ընտրյալների հոգիներին, ինչպես Ավետարանն է ասում, «Հրեշտակները Ղազարոսին տարան Աբրահամի գոգը» (Ղուկ 16.22): Քանզի այնժամ Աբրահամի գոգ էր կոչվում [այն] վայրը, ուր հավաքված էին սրբերը, իսկ այժմ Աբրահամի գոգ է կոչվում երկնքի արքայությունը, երբ հրեշտակների սպասավորությունը, որն ավարտվեց այնտեղ, երկինք բարձրացավ:

Որ Քրիստոսն արագ հարություն առավ

Տասներորդ [հարց.] թե ինչո՞ւ Քրիստոսն արագ հարություն առավ:

[Պատասխան.] չորս պատճառով.

Նախ մարգարեների գրվածների կատարման համար, ինչպես Ովսեն է ասում. «Քեզ երկու օրից պիտի կենդանացնի, և երրորդ օրը հարություն պիտի առնենք և նրա առջև կանգնենք» (Ովս 6.2):

Երկրորդ՝ քանի որ առաքյալները Քրիստոսի մահը ողբացին, նրանց հավատքը կորցնելու համար, հարկ էր արագ հարություն առնել, որպեսզի անհավատության մեջ չմնան:

Երրորդ՝ հաստատելու համար ապագա հարության հույսը, որ շատերն ուրացան:

Չորրորդ՝ ցույց տալու համար սրբերի ճշմարիտ հարությունը, քանզի Քրիստոսից առաջ վեց մեռելներ հարություն առան, որ հիշատակում է [Սուրբ] Գիրքը. մեկին Եղիան հարություն տվեց, երկուսին՝ Եղիսեն և երեքին՝ Քրիստոսը, և դարձյալ մեռան: Սակայն Քրիստոսն անմահության համար հարություն առավ՝ այդ պատճառով կոչվում է մեռելների անդ-

բանիկ:

Դարձյալ իմանալու է, որ հարությունը երեք [տեսակ] է. ոմանք հարություն են առնում առաջոք, ինչպես Սամվելը, քանզի երևաց Սավուղին, բայց ճշմարտապես հարություն չէր առել: Ոմանք հարություն են առնում անկատար կերպով, ինչպես Ղազարը, որը դարձյալ պետք է մեռներ: Ոմանք հարություն են առնում կատարելապես, ինչպես Քրիստոսը, որ հարություն առավ՝ մնալով միշտ կենդանի: Արդ, առաջինը նշանակում է կեղծավորների դարձն ու ապաշխարությունը, երկրորդը՝ կրկին գլորվածների դարձն է, երրորդը՝ հաստատունների դարձն է: Այսքանն այս մասին:

Ով դու անհավատ և հերձվածող, լավ որ հակառակվեցիր երևացող բաներով (աշխարհիկ տրամաբանությամբ) ծննդյան, կրքերի, խաչելության և այլնի [վերաբերյալ]: Նախ՝ սովհեաև զգայությամբ միայն երևացողներն ես տեսնում՝ [դրանք] համարելով անմիտ և անիմաստ:

Երկրորդ՝ քանզի ոչ հավատ ունես և ոչ էլ Քրիստոսի երկինք համբարձվելու մեջ՝ բաժին, Հոր Աջ կողմը նստելու, [նա,] որ հայրական փառքով գալու է դատաստանի, իր հավատացյալներին և սրբերին պսակելու, նաև՝ մարդկանցից չարերին, դևերին և անհավատներին, քեզ նման ուրացողներին, մեր Տեր Հիսուս Քրիստոսի փրկական տնօրինությունը ժխտողներին դատելու համար:

Նրան փառք և երկրպագություն իր Հոր և ամենասուրբ Հոգու հետ. ամեն:

Այսքանն ուղղափառների պատասխանների մասին՝ ընդդեմ հակառակողների սուտ հարցումների:

որովհետև սա նույնանուն է, որը դու չես կամենում [ընդունել], երկրորդ՝ կենդանին և մարդը Սոկրատի մեջ մեկ բնություն են, իսկ դու բաժանում ես:

Տեսնենք երկրորդը. ինչպես մասն է ամբողջի, այնպես էլ ամբողջն է մասի մեջ: Նաև այդ ուրացար, որ անստեղծ (անեղ) բնությունը ոչ մասն է և ոչ էլ ամբողջը ստեղծված (եղական) [բնության], և երկրորդ՝ բաժանվելիս նույնը չի մնում:

Երրորդ՝ ինչպես սպիտակն է մարմնին ենթակա. սակայն այդ էլ չես կամենում [ընդունել]. նախ՝ որովհետև սպիտակը որակ է, իսկ Քրիստոսի մարդը՝ բնություն: Երկրորդ՝ սպիտակը համանուն է, որ վերը ուրացար: Ուրեմն քեզ հարկ է ասել ըստ հարաբերության կերպի՝ Քրիստոսի մարդը իրագործված է Բանն Աստծո մեջ և բնությամբ բաժանված: Ինչպես դու կամենում ես, այս կտեսնենք չորս կերպով:

Նախ՝ ինչպես հարաբերությունը ձայնով մեկ է և ունակությամբ՝ երկու, այդպես էլ անձը մեկ է, ասում ես, և բնությամբ՝ երկու:

Երկրորդ՝ ինչպես հարաբերությունը երկու հատկություն ունի մեկ էության մեջ, այնպես էլ Քրիստոսի համար ասում եք, թե երկու բաժանված բնություն ունի:

Երրորդ՝ ինչպես հարաբերությունն ըստ ինքյան չի լինում, այլ [գոյանում] է երկու իրերից, այնպես էլ Քրիստոսի համար չեք ասում միավորություն, այլ՝ երկու բնություն՝ բացադատված:

Չորրորդ՝ ինչպես հարաբերվածներն են կախված իրարից. տերը՝ ծառայից և ծառան՝ տիրոջից, այդպես էլ (Քրիստոսի) մարդկությունն է Բանից կախված և՝ ընդհակառակը:

Քրիստոսի մասին այսպես եք խորհում:

Սակայն հարաբերության (հարաբերությունների) մասին իմանալու է, որ նախ միաժամանակյա են, և մեկը մեկից առաջ չէ:

Երկրորդ՝ քանզի հարաբերության բնությունը նույնն է:

Երրորդ՝ քանզի նույնական կամ սաստկական իրերը մեկմեկու հակադարձ են:

Չորրորդ՝ քանզի սրանք մերժենում են մեկմեկու և բացասում իրար: Եվ Քրիստոսի մասին այս բաները չես խորհում:

Դարձյալ, ըստ թվաբանության, հինգ անգամ հինգ քառահինգ է, և սա կոչվում է բոլորակ կամ քառակուսի: Բոլորակը սկսվում է հինգից և ավարտվում հինգով, իսկ հինգ անգամ հինգ՝ քառակուսի է. և երկու տեսակն էլ անչափ ունի:

Այս մեր Տիրոջն է խորհրդանշում չորս կերպով.

նախ՝ ինչպես քառահինգ թիվը մեկ բնություն ունի, այնպես էլ մեր Տերը՝ Աստվածությամբ և մարդկությամբ միացած:

Երկրորդ՝ միավորյալ Աստվածությունն ու մարդկությունը միության մեջ անչափ է:

Երրորդ՝ բոլորակ է, քանզի սկիզբն ու վախճանն է: Եվ դարձյալ՝ պատկերը միացած է նախատիպին:

Չորրորդ՝ քառակուսի է կոչվում չորս տարրերից [բաղկացած] մարմինը, նաև՝ խաչով կատարյալ:

Արդ, դուք՝ Քրիստոսին բաժանողներդ, ոչ ըստ այս թվերի միավորության կարող եք Քրիստոսի միությունը հավատալ, ոչ էլ ըստ հարաբերության, ինչպես վերը ցույց տրվեց:

Հոգևոր տեսություն, որ կոչվում է գիծ, մակերևույթ, մարմին[72] և այլն

Արդ՝ նախ [սրանում] տեսնվում է Սուրբ Երրորդությունը, քանզի ամեն մարմին եռակի զատորոշ է և մեկ մարմին է: Այսպես, Սուրբ Երրորդությունը երեք անձնավորություն է և մեկ բնություն: Եվ սրանք այսպես են բաղդատում. գիծը Հայրն է, մակերևույթը՝ Բանը, մարմինը՝ Սուրբ Հոգին: [Սա] հարմար չէ, որովհետև գիծը և մակերևույթը մարմնի մասերն են: Սակայն սա՝ իբրև օրինակ: Մարմինը Հայրն է, որն ունի Որդի և Հոգի, մակերևույթը Բանն է, որ Հոր պատկերն է, գիծը մեզ մոտ իջած [Սուրբ] Հոգին է, և երկու կետը բղխումը և առումն է:

Դարձյալ՝ գիծը բացարձակ սկիզբ և ամենայնի պատճառ Աստված է, և երկու կետը՝ քանզի Աստված անսկիզբ և անվախճան է, այլ նաև՝ սկիզբն ու վախճանը ամենայնի, այլև՝ արքունական և արարչական զորություն: Այս նաև երևում է այլազգիների գրերում, որոնցից առաջինն Ալիֆն է. այսպիսի գիծ են գրուշմում, ինչը հայտնապես ցույց է տալիս մեկ Աստված, իսկ անհայտ նիշը՝ Որդին և [Սուրբ] Հոգին: Եվ մենք պարզորոշ երեք սահմներ ենք գրուշմում (ա): Աստվածությունն այսպես է: Իսկ մակերևույթը՝ նրանից եղած իմանալի բնությունն է, մարմինը՝ տեսանելի արարածներն են, որոնք տեղի և ժամանակի մեջ են: [Սա] դարձյալ երևում է մեր [օրինակով]. մարմինը՝ անձը և անհատն է, մակերևույթը՝ մարմնի արտաքինը, գիծը՝ հոգին, երկու կետը՝ սկիզբը և անվախճան լինելը, նաև՝ տեղի և ժամանակի մեջ ենք:

Դարձյալ այս երեք միությունները տեսնվում են մեր Տիրոջ մեջ. մարմինը Բանն է, մակերևույթը՝ երևալը, գիծը՝ հոգին, երկու կետը՝ իմացությունն ու կամքը: Մարմնացած Բանը եղավ ժամանակի ներքո, մարմնի մեջ ամփոփված:

Այսպես, Քրիստոսի միավորությունը ոչ միայն Սուրբ Գրքով է վկայվում, այլև գտնվում արտաքին (ոչ քրիստոնյա) իմաստասերների մոտ:

Ո՛վ երկաբնակներ, ձեզ դարձյալ վեց հարց տանք.

Առաջին [հարց.] *Քրիստոսը մե՞կ է, թե՞ երկու:*

[Պատասխան.] *Ըստ անձի մեկ է և ըստ բնության՝ երկու:*

[Ուղղափառն ասում է.] *Այն անձը, որ ասում ես՝ մեկ է, ի՞ր է, թե՞ անիր, քանզի եթե իր է՝ ապա քեզ հարկ է Քրիստոսին ասել մեկ իր, երկու,*

կամ՝ մասամբ մեկ և մասամբ երկու, կամ [էլ]՝ ամբողջ մեկ և ամբողջ երկու: Իսկ եթե [ասում եք] անիր՝ ապա միայն անվամբ է մեկ և ոչ իրապես, ինչպես անվամբ հաղորդվող և բնությամբ զանազանվող համանուն ձայնը: Պատասխան տուր:

[Հարց. ուղղափառն ասում է.] Այն անձը էություն և բնությո՞ւն է, թե՞ ոչ:

[Պատասխան. հակառակորդն ասում է.] Էություն և բնություն է, և ինչո՞ւ ոչ:

[Ուղղափառն ասում է.] Ապա եթե էություն և գոյացություն է, ինչպես սահմանումի մեջ է բացատրվում, անձը բանական բնության անբաժանելի գոյացությունն է: Արդ՝ եթե անձը էություն է, և անձի մեջ ասում են՝ մեկ է մարդկային բնությունը, մեկ է նաև էությունը: Եվ եթե մեկ է էությունը, որպես ճշմարիտ միություն, [ուրեմն] մի՛ ասա «և բնություն», քանզի էությունն ու բնությունը մեկ են:

[Ուղղափառների հարցումը.] Անձն անբաժանակա՞ն է, թե՞ միավորական: Քանզի եթե ասես միավորական է, [դրանով] դու անձը բնություն կկարծես, որովհետև բնությունը միավոր է. ըստ Պորփյուրի, տեսակի ընդհանրությամբ բազում մարդիկ մեկ են[73]:

Նաև Հայրը, Որդին և Հոգին բնությամբ մեկ են, ուրեմն և, ըստ քեզ, Երրորդությունը միավորյալ է: Ապա ինչպե՞ս է Երրորդությունը հատկորոշված, եթե ոչ՝ անձով: Իսկ եթե անձը բաժանական է, ինչպես հայտնի է սահմանումից՝ անհաղորդելի վիճակ է, ապա բաժանական է մարդկային բնության [նկատմամբ] և միավորված չէ օտար, տարբեր բնության հետ: Եվ Քրիստոսի համար ասելով երկու անձ ու երկու բնություն՝ նեստորական ես դառնում:

[Ուղղափառների հարցումը.] Անձը անհատն ու մասնականն է, ինչպես Պետրոսը, և անհատ է ասվում, քանզի չի բաժանվում, և չի հատվի, ինչպես մասն ամբողջից: Քանզի եթե նրան բաժանես, ինչպես՝ հոգին և մարմինը, կամ՝ ոտքը, ձեռքը և գլուխը, ամբողջ չի մնա, [ճիշտ] այդպես էլ Քրիստոսը մեկ անձ և մեկ անհատ է, որովհետև եթե նրան բաժանես Աստծո և մարդու, ապա ամբողջը նույնական չի լինի, այլ մի մասը՝ այլ և [մյուս] մասը՝ [այլ], մեկը և մեկը:

[Ուղղափառների հարցումը.] Դարձյալ հարցում Քրիստոսին երկաբնակ դավանողներից. երկո՞ւ բնություններն են պաշտելի, թե՞ մեկը. եթե երկուսը, ապա ձեզ հարկ է ասել. Փա՛ռք Հոր և Որդուն և երկու բնություններին և Սուրբ Հոգուն և [դարձյալ] սրա նման: Իսկ եթե մեկն եք [պաշտում], հարցնում եմ ձեզ. ո՞րն եք պատվում և ո՞րն անարգում: Քանզի եթե պատվում եք աստվածային բնությունը՝ ձեզ հարկ էր անարգել մարդկայինը և հրեական խարությամբ մոլեգնել և ասել. «Դու մարդ ես և քո անձն Աստված ես համարում» (Հովհ 10.33), նաև բովանդակ անօրինության խորհուրդն ուրանալ և նրա փրկությունից

հնազանդ, իսկ եթե մարդկային բնությունն ես պաշտում՝ կռապաշտ ես դառնում: Եվ Երրորդության կարգի մեջ ես ներմուծում նոր ու եկական մի աստված, և Բանին զրկելով փառքից՝ մարդուն տվեցիք, և մարդապաշտ եղաք, նաև՝ մարդու մարմին ուտողներ և մարդուն մկրտվածներ. «Եվ սուտ է մարդու (տված) փրկությունը» (Սաղ 107.13), հաստատեց մարգարեն: Ահա այս է քողարկված ամբարշտությունների կործանարար բացատրությունը. ովքեր մեկ Քրիստոսի համար երկու բնություն են սահմանում, թեպետ, համաձայն մեզ, մեկ անձ են հաշվում, սակայն բնությունների պատարշումով տարաձայն են մեզ և Աստծո եկեղեցիներին:

Գլուխ ԽԳ

ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄԸ ՄԵԶ. ՈՎՔԵՐ ՄԻ ԱՆՁ ԵՆ ԱՍՈՒՄ ԵՎ ԲԱԺԱՆՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՐԿՈՒ ԲՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

[Հարց.] *Ինչո՞ւ չեք ասում, թե Քրիստոսը երկու բնություն [ունի]:*

[Ուղղափառների պատասխանը.] *Որպեսզի Քրիստոսի մեջ երկու անձերը չպատառոտվեն. քանզի եթե երկու բնությունների բաժանենք, իհարկե, երկու անձերի կբաժանվի:*

[Հակառակորդն ասում է.] *Մարդն ինչո՞ւ է երկու բնություն և մեկ անձ:*

[Ուղղափառն ասում է.] *Մարդը երկու բնություն չէ, այլ՝ մի բնություն և մի անձ:*

[Հակառակորդն ասում է.] *Երկուսից ո՞րն ես ուրանում և մի բնություն ասում:*

[Ուղղափառն ասում է.] *Ոչ թե ուրանալով և զանցառելով, այլ՝ միավորությամբ մեկ բնություն [ընդունելով]:*

[Հակառակորդն ասում է.] *Բնությա՞մբ ես ասում միավորված, թե՞ անձով:*

[Ուղղափառն ասում է.] *Բնությամբ միավորյալ և մեկ անձ կատարյալ:*

[Հակառակորդն ասում է.] *Ինչպե՞ս ես ասում:*

[Ուղղափառն ասում է.] *Քրիստոսի միավորությունն ունի սկիզբ, միջնամաս և ավարտ: Սկիզբը՝ երկու բնություններն են, միջնամասը՝ միավորությունը մեկ բնությամբ, իսկ եզրն ու ավարտը՝ մեկ անձը:*

[Հակառակորդն ասում է.] *Ապա ինչո՞ւ եք ասում՝ մեկ անձ և երկու բնություն:*

[Ուղղափառն ասում է.] *Քանզի միավորվածը չի երկատվում, որովհետև երկուությունն ասելը կամ հավատալը Քրիստոսի երկատությունն ու բաժանումն է:*

[Հակառակորդն ասում է.] *Բանի անձը մարդկային ա՞նձ ստացավ, թե՞ բնություն:*

[Ուղղափառն ասում է.] *Աստված Բանն իր կատարելությամբ մարդկային բնություն, հոգի, մարմին և միտք առավ և միավորելով իր Աստվածությանը՝ եղավ մեկ կատարյալ անձ և մեկ դեմք:*

[Հակառակորդն ասում է.] *Ապա ինչո՞ւ չեք ասում անձով միացած:*

[Ուղղափառն ասում է.] *Քանզի անձն առանց բնության միայն անուն է և ոչ էություն:*

Եվ դարձյալ՝ անձի միությունը հետևում է բաժանումը, և բնությունն անբաժանելի է մնում:

Երրորդ՝ եթե միայն անձով միանա և ոչ բնությամբ, ապա Քրիստոսն

անձով և միայն անունով է Աստծո Որդի և ոչ բնությամբ:

Չորրորդ՝ ամեն առարկա միավորվում է իր բնությամբ և ոչ բնությունից դուրս. ինչպես կրակը՝ երկաթի և հոգին մարմնի հետ միավորվում է բնությամբ[74]:

[Հակառակորդն ասում է.] Եթե բնությամբ միացան, ապա բնությունների տարբերությունները վերացա՞ն:

[Ուղղափառն ասում է.] Թեպետ բնությամբ միավորվում է, [սակայն] տարբերությունը չի վերանում, քանզի տարբերությունների մնալը չի խափանում միավորությունը, ինչպես հոգու և մարմնի, ոսկու և կրակի [պարագային]: Եվ իմացիր, որ տարբերությունը երկուսն է. բաղկացական և բաժանական: Բաղկացական տարբերությունն [այն է], որտեղից տեսակն է գոյանում, ինչպես բանական և մահկանացու (լինելը) ամբողջացնում են մարդու բնությունը: Իսկ բաժանականն այն է, երբ բաժանում են բանականն ու անբանը՝ մարդը և ձին: Արդ՝ դուք, որ Քրիստոսի (համար) ասում եք, թե երկու բնություն ունի, բաժանական տարբերությունն եք ասում, իսկ մենք բաղկացական միավորությունն ենք խոստովանում:

[Հակառակորդն ասում է.] Աստծո և մարդու (համար) ինչպե՞ս եք ասում՝ մեկ կամք և մեկ գործ:

[Ուղղափառն ասում է.] Ինչպես մարդու բնությունն ասում ենք միավորված է Աստծո էության հետ, այդպես էլ մարդացածը միավորյալ մեկ կամք (ունի), և գործերը կամքին են հետևում: Ապա, ուրեմն, մեկ է ներգործությունը՝ մեկ կամքից, մեկ Քրիստոսից առաջ եկած և կատարված: Ինչպես սուրբ Դիոնիսիոսն է ասում. «Ոչ թե ըստ Աստծո աստվածային բաներ է կատարում, և ոչ [էլ] ըստ մարդու՝ մարդկային բաներ, այլ՝ մեր մեջ կենցաղավարած Աստծո մի նոր աստվածամարդկային ներգործություն»[75]: Այդպես ասում է նաև Աստվածաբանը Կղեդոնիոսին հղած Երկրորդ ճառում[76]:

Ո՞ւր են այն ուրացողները, որոնք բացահայտորեն երկուսի են բաժանում Քրիստոսի կամքը և գործը: Քաղցելը և ծարավելը մարդուն են վերագրում, իսկ բարձրագույն բաները՝ Աստվածությանը: Եվ դարձյալ հարցրեցին մեկ գործի (ներգործության) որպիսությունը. ոչ այն բանի պատճառով ենք ասում մեկ ներգործություն, որ չկա բարձր և ցածր (ներգործություն), այլ մեկ ենք ասում ներգործությունը, քանզի միությունից է ներգործված, ինչպես նույն ձեռքն է և՛ կարում, և՛ կարում, և՛ գրում, և՛ ջնջում: Նաև այս իմացիր, որ Քրիստոսի (համար) մի բնություն ենք ասում ավարտման պատճառով և ոչ սկզբի, և մի գործ (ներգործություն) ենք ասում սկզբի և ոչ թե գործի (ներգործության) ավարտման պատճառով: Իսկ կամքն ընկալում ես իբրև մեկ (իրականություն)՝ կամենալու և միավորվելու պատճառով, որ սկիզբն ու ավարտն է: Եվ այսպես ասում ենք. Մարդացած Բանն (ունի) մի բնություն, մի կամք, մի ներգործություն և մի կիրք: Ինչպես քնարն ու քնարահարը մեկ

ներգործություն են կատարում և ոչ երկու, գրիչն ու գրիչ շարժողը մեկ ներգործություն են կատարում և ոչ երկու, ձայնն ու խոսքը մեկ ներգործություն են կատարում և ոչ երկու, Հոգին և մարմինը մեկ ներգործություն են կատարում և ոչ երկու, ինչպես Հոգուց և մարմնից (բաղկացած) մարդը մեկ է և մեկ է մարդու ներգործությունը, այդպես էլ Բանն Աստված իր մարմնով կատարում էր մեկ ներգործություն, քանզի բնությունների միավորությունն առանց փոփոխման և բաժանման է:

Այսքանն այս մասին:

Դարձյալ հարցումներ երկաբնակներին, ովքեր ուրանում են մեկ Քրիստոսին մարդացած Աստված ասել, այլ բաժանելով՝ կատարյալ Աստված և կատարյալ մարդ

Առաջին հարցում. «կատարյալ»-ն անձի՞ համար եք ասում, թե՞ բնության: Քանզի եթե բնության համար եք ասում, Երրորդության մեջ երկու կատարելություն եք ներմուծում, որովհետև Երրորդությունը մեկ կատարյալ բնություն է և մարդու մեկ բնություն, իսկ եթե անձի համար եք ասում, ահա Երրորդությունը չորրորդություն դարձրեցիք, ինչպես ասվեց:

Երկրորդ հարցում. կույս Մարիամը Միածին Որդուն ծնեց իբրև այդպիսի՞ն, թե՞ իբրև անդրանիկ որդի, թե՞ երկուսը (միաժամանակ). եթե երկուսը (միաժամանակ), ահա երկու որդու մայր անվանեցիք, իսկ եթե՝ իբրև անդրանիկ, ահա, ըստ Նեստորի, կուսածին Որդուն Աստված չանվանեցիք, և եթե սոսկ [իբրև] Բան, գոյության սկիզբը մորից լինելն ես ասում և ոչ Հայր Աստծուց:

Երրորդ՝ առաքյալն ասում է. «Ամեն ծունկ նրան պիտի խոնարհվի» (Փիլիպ 2.9): Արդ՝ ո՛վ բաժանողներ, Քրիստոսի մեջ ո՞ր բնությունն է երկրպագելի, քանզի եթե Աստվածությունը հրեարար երկրպագես, ուրեմն առաքյալը սուտ է, որովհետև Հիսուս Քրիստոսին է ասում, իսկ եթե միայն մարդկությանը՝ մարդապաշտ հայհոյության մեջ ընկար և Արարչի փոխարեն, ընդդեմ աստվածային օրենքների, արարածին երկրպագեցիր:

Չորրորդ՝ «Մեզ համար մեկ է Հայր Աստված և մեկ՝ Տեր Հիսուս Քրիստոս» (Ա Կոր 8.6) ասում է: Ով դու երկաբնակ, ո՞ր բնությունն ես ասում Քրիստոսի մեջ մեկ Տեր. Աստծո՞ւնը, թե՞ մարդունը, քանզի եթե միայն Աստծունը՝ Արիոսի [հերձվածի] մեջ ընկար: Քանզի Քրիստոսին սոսկ Բան անվանեցիր, այսինքն՝ Հորից օծված, որից իմացվում է Հորից պակաս լինելը, իսկ եթե միայն մարդունն ես ասում, Բանին զրկեցիր Տերությունից: Եվ եթե ամենայն ինչի լինելը սոսկ մարդով ես ասում, չափազանց չար է: Իսկ եթե երկու բնություններն ես Տեր անվանում, առաքյալի դեմ ես խոսում, որ ասում է՝ Տեր Հիսուս Քրիստոսը մեկ է, ինչպես և Հայրը:

Հինգերորդ՝ «Դու ես Քրիստոսը՝ Աստծո Որդին» (Մատթ 16.16), ասում

է. քեզ եմ հարցնում, ո՛վ դու Քրիստոսին բաժանող, Աստծո Որդուն ի՞նչ բնությամբ ես ասում, քանզի եթե բնությամբ Աստվածություն ես ասում, ապա մարդկությունը համարում ես շնորհքով [եղած]: Իսկ եթե մարդկությունն ես բնությամբ Որդի անվանում. ահա [սրանով էլ] Բանը զրկում ես որդիությունից: Իսկ եթե՝ երկուսն էլ. ահա [սրանով] Հոր (համար) երկու բնության Որդի լինելն ասացիր:

Վեցերորդ՝ մկրտվեցինք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Արդ՝ հավատալով մկրտվում ես ինչպես Հորը, Սուրբ Հոգուն, այնպես էլ մարմնացած Որդուն, [որպես] մեկ Տիրոջ և մեկ Քրիստոսի: Հարցնում եմ Քրիստոսին բաժանողից՝ ո՞ր բնությանն ես մկրտվում. Աստծո՞, թե՞ մարդու: Քանզի, եթե միայն Աստծո, [ապա] անմահ բնությունը մահվան ենթակա ես դարձնում, որովհետև առաքյալն ասում է. «Քրիստոսին մկրտվածներս՝ նրա մահվանը մկրտվեցինք՝ թաղվելով նրա մեջ» (Հռոմ 6.3): Իսկ եթե միայն մարդու բնությանը, ուրեմն դեռ անկատար ես, քանզի սոսկ մարդուն մկրտվեցիր, նաև՝ քանզի Բանը հանեցիր Երրորդության կարգից՝ մարդուն չարադասելով նրա տեղը: Ուստի մկրտվում ենք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով:

Յոթերորդ՝ «Ինչպես Հայրն է կենդանի, այնպես էլ ես եմ կենդանի Հոր համար» (Հովհ 6.58) և «Ովքեր ուտեն ինձ՝ նրանք կհարատևեն ինձ համար» (Հովհ 6.55,57): Հարց տալու է երկուսի բաժանողներից. ո՞ր բնությունն ես ուտում, որով կենդանանում ես, քանզի եթե՝ սոսկ Աստծունը, ուտելի չէ Բանի բնությունը, իսկ եթե սոսկ մարդունը, ինչպե՞ս [կարող է] մարդու մարմինը կենդանարար լինել կամ ինչպե՞ս նա առաքվեց Հորից, ինչպե՞ս է, որ կենդանի է Հոր համար:

Ութերորդ՝ «Հայր, փառավորիր ինձ փառքով, որ աշխարհի լինելուց առաջ ունեի քեզ մոտ» (Հովհ 15.5): Արդ, ո՛վ դու բաժանող, ո՞ր բնությունն է ասում Քրիստոսի մեջ. եթե Աստծունն ես ասում, ցույց ես տալիս Բանի՝ փառքի կարոտ լինելը, և քեզ հարկ է Արիոսին հետևել: Իսկ եթե լոկ մարդկայինը՝ ինչպե՞ս փառք ուներ աշխարհի լինելուց առաջ: Եվ քանզի ինքը ժամանակի մեջ եղավ, ուրեմն սրանից և [Աստծուն] իր Հայրն անվանեց՝ [ասելով, որ] Դավթի զավակից է:

Իններորդ՝ «Նստեց բարձունքում Մեծության Աջ կողմում» (Մատթ 26.64, Մարկ 14.62): Այս ասա նմանապես. Մեծության Աջ կողմում նստածը Որդի էր բնությա՞մբ, թե՞, ըստ քեզ, որդիացած շնորհով: Քանզի եթե բնությամբ է, ուրեմն սրանից Առաքյալը և Ավետարանը, որ ասում է՝ Քրիստոս հարությունն առավ և համբարձվեց Հոր Աջ կողմը (Մարկ 16.20): Իսկ եթե մարդը նստեց, ահա Բանին զրկեցիր Հոր աթոռակցությունից, ո՛վ դու բաժանության սիրահար, իսկ եթե երկու բնություններն ես ասում, ահա երկուսի՝ Հոր աթոռակից լինելը ասացիր. մեկն՝ Աստված և մեկը՝ մարդ:

Տասներորդ՝ «Իշխանություն ունեմ իմ անձը դնել և վերցնել» (Հովհ

10.18)։ Արդ, ով երկասող՝ ո՞ւմ ես վերագրում ասվածը. քանզի եթե՝ միայն Բանին, ահա անմահին մահվան ենթակա դարձրեցիր, իսկ եթե՝ միայն մարդուն՝ [ապա] ինչպե՞ս կարող է մարդ լոկ իր [ցանկությամբ] մեռնել և իր զորությամբ հարություն առնել։

Այս տասը հարցումները երկաբնակ դավանողների դեմ են, ովքեր մեկ Քրիստոսին երկու բնությունների են բաժանում։

Դարձյալ՝ [կան և այնպիսիք,] ովքեր ցնորամտությամբ հակառակվելով ասում են, թե՝ նրանք, որ Քրիստոսի մեջ մեկ բնություն են դավանում, ո՞րն են ցանկանում խոստովանել՝ մշտնջենավոր աստվածայի՞նը, թե՞ երեկվանը, որ Կույսից էր։ Չեն գտնում իրենք իրենց. քանզի բաժանում են բնությունները և [երկու] ներգործություն, կամք և մի դեմք են դավանում երկու անջատվածների մեջ։ Արդ՝ արդյոք ո՞ւմ են հարադրում Քրիստոսի մեկ դեմքը. Հորից ծնված անեղական իսկությա՞նը, թե՞ Կույսից ծնված ժամանակավորին։ Գիտեմ, որ այս մասին բազում տարակույսներ ունեն, [որովհետև] իմանում են, որ դեմքի ենթակա լինելը անկարելի է առանց տեսակի։ Նաև ասում ենք՝ մարմնացած Բանը մեկ բնություն ունի՝ ոչ թե ըստ պարզության և ոչ ըստ չփոթ հեղումի, այլ ըստ միավորության։

Գլուխ ԽԴ

ԷՈՒԹՅԱՆ, ԲՆՈՒԹՅԱՆ, ԱՆՁԻ, ԳՈՅԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԻ ՄԱՍԻՆ

[Հարց.] *Ի՞նչ է էությունը, բնությունը, անձը և գոյացությունը:*

[Պատասխան.] *Էությունն ու բնությունը մեկ են, ինչպես մարդկությունը: Սակայն էությունը երբեմն անձն է ցույց տալիս, որ այստեղ է և այժմ, իսկ բնությունը՝ ոչ: Գոյացությունը բնությունն է պատկանում կամ ենթակա է բնությանը, ինչպես մարդը: Իսկ ենթադրությունը զանազանելին և բացորոշ հատկությամբ չզանազանվողն է, ինչպես ամեն մարդը: Իսկ անձը բացորոշ հատկությամբ հանդերձ զանազանվածն է, ինչպես Պետրոսը: Եվ «անձ» ասվում է միայն ի պատիվ բանական բնության: Պարզորոշ է, որ եզակի և անհատ մարդը զանազանված է իր հատուկ որակով:*

[Հարց.] *Որտեղի՞ց է ճանաչվում անհատը:*

[Պատասխան.] *Քանակով և որակով, քանզի դրանցով է երևում անհատ գոյացությունը:*

[Հարց.] *Մարմինն ընդգրկող քանի՞ իրողություններ կան:*

[Պատասխան.] *Հինգ, այսինքն՝ Քանակը, որ չափն է, Որակը, որ գույնն է, Ձևը, Տեղը, Բաժանվածությունը:*

[Հարց.] *Ի՞նչ է Տեղը:*

[Պատասխան.] *Տեղը մարմինն ընդգրկողն է, քանզի ամեն մարմին տեղով է ընդգրկվում: Եվ յուրաքանչյուր տեղ պատահական սեռից է. տարբեր է մարմնի բաղկացական տեղը և պատահական տեղը: Բաղկացականն [այն է], որ մարմնի մասերից է գոյանում՝ ներսը, դուրսը, վերևը, ներքևը և շուրջբոլորը: Քանզի յուրաքանչյուր մաս տեղում իր դիրքն ունի, [որից] բաղկացած է ամբողջը: Իսկ պատահական տեղն [այն] է, որտեղ նստած մեկը կարող է թողնել այն և լինել այլ վայրում, ինչպես [օրինակ] վերևում կամ ներքևում: Իսկ անմարմնի համար մարմնական տեղ չկա, ինչպես Աստծո, կամ հրեշտակների, կամ հոգիների [համար], քանզի անընդգրկելի են: Նաև պատահական տեղ [չունեն], թեպետ ի նշան պատվի երկինք է ասվում, այլ ոչ թե որպես մարմնական տեղ: Եվ իմանալու է դրանց տարբերությունը, քանզի հոգին պատված և սահմանավորված է մարմնով, բայց ընդգրկված չէ, իսկ հրեշտակը ոչ պատված է մարմնով և ոչ էլ ընդգրկված, այլ՝ սահմանավորված: Մինչպես Աստված տարբեր է դրանցից. քանզի ոչ սահմանավորված, ոչ ընդգրկված, ոչ պատված է որևէ բանով, ոչ [էլ] իմացությամբ, ոչ տեղով կամ մարմնով: Այսքանն այս մասին:*

[Հարցում.] *Եվ քանի որ այս ասվածներից փոքրիշատ հմտացաք, հարցնում եմ ձեզ, երկարնակ(ներ), այս երկուսից որի՞ն եք ասում մեկ*

Քրիստոս. սոսկ աստվածայի՞ն անձը, աստվածային բնությո՞ւնը, թե՞ մարդկայինը: Քանզի եթե մարդկությունն ենք անվանում Քրիստոս, ապա, ըստ Նեստորի, անձնապես բաժանեցիք նրան և սոսկ մարդ անվանեցիք Քրիստոսին, իսկ եթե աստվածային բնությունն՝ ապա տեսցիք Երրորդությունը մարմնացած, քանզի երեք անձերի բնությունն ընդհանուր է, իսկ եթե աստվածային անձն եք Քրիստոս անվանում, որ Օծյալ է, ապա նրան օծյալների մեջ փոխադրեցիք: Եվ միայն անձն եք ասում խաչի վրա մեռած, ինչպես ձեր երեքսրբյանում եք երգում. «Քրիստոս, որ խաչվեցիր մեզ համար, ողորմիր մեզ»: Բայց ձեր Լեթանիայում[77] ասվում է. «Քրիստոս՝ դու անոթ Աստվածության, ողորմիր». ապա նոր ուսմունք և երրորդ կառք: Իսկ եթե որանից, որպես բացորոշ բաժանումից, (առերևույթ) փախչում եք, ապա գառան [մորթով] եք ծածկում ձեր գայլությունը: Եթե [նույնիսկ] աստվածային անձը և նրա բնությունը մեկ Քրիստոս եք ասում, [այսուհանդերձ] առավելին կաք վերասացյալ տարակուսանքների մեջ, քանզի աստվածային անձն ու բնությունն եք ասում չարչարված և մեռած, որովհետև, ըստ Գրքի, Քրիստոսը խաչվեց և մեռավ մեզ համար: Իսկ եթե աստվածային անձն ու մարդկային բնությունն եք ասում մեկ Քրիստոս, ապա բացորոշ է, որ Քրիստոսին բաժանեցիք աստվածային բնությունից, որովհետև Աստծո անձը և մարդու բնությունն եք անվանում Քրիստոս և աստվածային բնությունը բաժանում եք: Իսկ եթե Քրիստոսի աստվածային բնությունն ու մարդկայինն ասում եք առանց անձի, ապա, Եվտիքեսի նման, շփոթում եք երկու բնություններն՝ առանց անձի միավորության: Եվ ինչի մեջ դուք զրպարտում էիք այլոց, նույն բանի մեջ ընկղմվեցիք: Իսկ եթե աստվածային անձը, աստվածային բնությունը և մարդկայինը մեկ Քրիստոս եք ասում, սա լինում է կամ միավորությամբ, կամ բաժանմամբ. քանզի եթե միավորությամբ, ապա շփոթ եղավ, որովհետև անձն ու բնությունը նույնը համարեցիք, իսկ եթե բաժանմամբ, սա երկու Քրիստոս է լինում կամ երեք, ըստ անձի և բնությունների բաժանման: Կամ մեկ Քրիստոս է լինում ըստ կոչման և երեք՝ ըստ էության: Այսպես էլ Նեստորն էր ասում մեկ Քրիստոս՝ ոչ թե ըստ իրի միության, այլ՝ ըստ անվան համաձայնության, ինչպես համանուն ձայնը նույն անվանումն ունի և մեկ անվան ներքո՝ տարբեր բնություններ:

[Հարցում.] Ի՞նչ պատճառով են քաղկեդոնականներն ու նեստորականներն ուրանում Քրիստոսի՝ բնությամբ միավորությունը, այլ միայն անձամբ և հարակցությամբ են ասում:

Պատասխանում ենք՝ երեք պատճառով են ուրանում Բանի՝ բնությամբ միավորությունն ու մարդեղությունը.

Նախ՝ որպեսզի չշփոթեն բնությունները միության մեջ, ինչպես ասաց Եվտիքեսը:

Երկրորդ՝ որպեսզի չչարչարվի աստվածային բնությունը մարդկայինի

հետ:

Երրորդ՝ որպեսզի Երրորդությունը մարմնացած չերևա, քանզի բնությունն ընդհանուր է, որպեսզի նրա Մայրը Երրորդության Մայրը չլինի: Այսպես նրանք են [ասում]:

Իսկ մենք կարճառոտ պատասխանենք:

Առաջին՝ ասենք. թեպետ Բանն Աստված բնությամբ միավորվում է մարդկության հետ, չի կրում որևէ շփոթում կամ խառնակում, քանզի անմարմին է և միավորվում է մարմնին, ինչպես հոգին և մարմինն են բնությամբ միավորվում և չեն շփոթվում:

Երկրորդի համար ասենք, որ Բանի անչարչար լինելը բնության բաժանում չի կատարում, այլ՝ բնության անեղություն, քանզի անեղ է. այս պատճառով [չի ենթարկվում] հեղաբեկման և չի կրում կրքերի փոփոխում, որոնք առկա են միավորված հեղվածների մեջ, ինչպես կրակը և երկաթը, հոգին և մարմինը, որոնք չարչարվում են անչարչարապես[78]:

Երրորդի համար ասենք, որ իսպառ հիմարություն և մոլորություն է այս (մասին) լսելն իսկ, քանզի անանձը միավորված բնությունն եք ասում, որ ընդհանուր էր, սակայն [մենք] անձնավոր բնությունն ու անհատն ենք ասում մարմնացած, քանզի միավորության սկիզբը բնության մեջ է, և ավարտն իրականացվում է անձի մեջ:

Ուրեմն նրանց [հարուցած] խնդիրը հիմարներինն ու ապուշներինն է, ուստի, ըստ այդմ, նրանք պարտավոր են ուրանալ նաև նրա մարդկային անբաժանելի բնությունը, որպեսզի մեր ընդհանուր մարդկության հետ չմիավորվի, որը և, ըստ նրանց, Քրիստոսի չարչարվելու հետ միասին չարչարվեց և մեռավ մեր բովանդակ մարդկությունը: Ուղղափառների եկեղեցին և մենք վանում ենք այսպիսի չարությամբ [հարուցված] խնդիրը և Բանին Աստված ենք խոստովանում ոչ մասամբ, այլ՝ իր լրությամբ մարմնացած և մարդացած, ըստ Պողոսի՝ «Նրա մեջ է մարմնապես բնակվում բովանդակ լրումն Աստվածության» (Կող 2.9) ոչ թե հեղմամբ կամ շփոթմամբ, այլ անշփոթ միավորությամբ է «Բանը մարմին եղել», և մեր բնությունը կատարելապես միավորելով իր Աստվածությանը, և մարմնով երևալով [որպես] տեսակցած մեկ բնություն, մեկ անձնավորություն, մեկ Տեր, մեկ Որդի, ըստ սուրբ հայրերի ուղղափառության, և մեկ ենք ասում մեր Տեր Հիսուս Քրիստոսին, մեկ՝ նրա բնությանը, քանզի մեկ է մարմնացած Բանի բնությունը:

[Հարցում.] *Ի՞նչ է մարմնացած Բանի ծայրագույն միավորությունը:*

[Պատասխան.] *[Սա] չորս կերպով է տեսնվում.*

նախ հրաշքով, որի սահմանն անիմանալի է և բնությունից վեր:

Երկրորդ՝ քանզի անեղի միավորությունն է եղականի հետ:

Երրորդ՝ քանզի անփոփոխ է միավորությունը:

Չորրորդ՝ քանզի անբաժանելի է:

[Հարցում.] *Բանի՞ն է միավորության եղանակը:*

[Պատասխան.] *Միավորությունը սեռաբար երեքի է բաժանվում՝ անշաղկապի, շաղկապվածի և շարադրվածի: Արդ՝ անշաղկապ միավորությունը բաժանվում է երեք տեսակի, քանզի էությունը էության հետ է միավորված կամ՝ պատահումը (պարագան) պատահման հետ, կամ էլ՝ էությունը պատահման հետ, որովհետև էությունը պատահման հետ միշտ անշփոթ է միավորվում, ինչպես որակը և քանակը գոյացության մեջ, քանզի անբաժանելի գաղափարներ են: Իսկ պատահումը պատահման հետ միշտ շփոթմամբ է միավորվում, ինչպես գորշը սևից և սպիտակից է (գոյանում): Եվ նրանք, որ միավորված են էությունը էությամբ, լինում են, որ շփոթմամբ են միավորված, ինչպես ջուրը գինու հետ և չորս տարրերը, և լինում են, որ անշփոթ են միավորված, ինչպես կրակն ու երկաթը, հոգին և մարմինը, սեռը՝ տեսակի մեջ և տեսակը՝ անհատի մեջ:*

Իսկ միավորությունը, որ շաղկապով է՝ սա ևս երեքի է բաժանվում, քանզի լինում են, որ միավորվածները էություններ են, և շաղկապը պատահումն (պարագա) է, ինչպես երկու խորից անջատ (անձեր) սերտ պատահմամբ շաղկապվում են: Եվ լինում են, որ պատահմունք են և էությամբ են շաղկապվում, ինչպես բոլորակ ձևը և գույնը, ենթական՝ նյութով: Բնարի զանազան ձայները մեկ ենթակա օդով են միավորվում: Եվ կան, որ էություններ են և էությամբ են շաղկապվում, ինչպես երկու նյութեր՝ սոսնձով կամ երկաթով:

Իսկ շարադրված միավորությունը՝ սա ևս բաժանվում է երեքի, այսինքն՝ ըստ դրության, ըստ ժողովման և ըստ կոչման: Առաջինը՝ ըստ դրության, ինչպես՝ կետը, գիծը, մակերևույթը, մարմինը, այլև՝ ոսկորը, միսը, ջիլը, մաշկը, որ մեկ անդամ են կազմում: Իսկ ըստ ժողովման, ինչպես՝ եկեղեցին, անձը, հավատը կամ քաղաքը: Եվ ըստ կոչման, ինչպես՝ քրիստոնյաները, մկրտվածները, ծառաները և արարածները: Ասվածներից ոչ մեկը չի համարվում Փրկչի միավորությունը, բայց միայն՝ առաջինի երրորդը՝ էությունը էության հետ՝ անշփոթ խառնումով, ինչպես հոգին և մարմինը:

Բայց եթե հարցնես, թե Քրիստոսի (համար) ի՞նչ պետք է ասել՝ մի բնությո՞ւն, թե՞ մի անձ՝ լսիր պատասխանը: Մեկ անձ ասելը երկու կերպով է. նախ մի անձ է ասվում անբաժանելի բանական բնության գոյացությունը, և մյուս անձը լոկ կոչում և անվանում է ասվում, ինչպես ցույց տվինք. մեկ գերեզման, մեկ շեղջ, մեկ անձ, մեկ տուն՝ անվանում մեկտեղված տարրերի բազմության [պատճառով]: Արդ՝ մեկ անձ ենք ասում Քրիստոսին և բնությամբ միավորված՝ սա ուղիղ դավանությունն է ի Քրիստոս: Իսկ երբ Քրիստոսին մեկ անձ ենք ասում և բնությամբ բաժանված, սա խաբեություն է երեք կերպով.

նախ՝ անձն առանց բնության սուտ անուն է,

երկրորդ՝ երբ բնությունը բաժանվում է, անձն էլ է բաժանվում,

երրորդ՝ անձի միավորությունը երբեմն բաժանվում է, սակայն բնու-

թյունը անբաժանելի է մնում:

Իսկ նրանք երկու անձ ասացին Քրիստոսի (համար), ակնհայտորեն բաժանում են Քրիստոսին, ինչպես նրանք, որ երկու բնություն են ասում՝ գաղտնաբար են բաժանում, այդպես էլ երկու անձ ասողները բացահայտորեն բաժանում են Քրիստոսին: Նրանք Քրիստոսին ոչ մարդացած Աստված են խոստովանում և ոչ մարմինը՝ Աստվածության հետ միավորված, այլ՝ սոսկ շնորհքով և բնությամբ նախագոյացած անձ, ինչպես մարգարեներից և սրբերից [մեկը, որի] մեջ Աստված էր բնակվում:

Իսկ եթե մեզ հարցնեն, թե մի բնություն ասելով, ո՞րն եք ուրանում՝ Աստծո՞ւնը, թե՞ մարդունը, [կպատասխանենք]. մենք ոչ թե ուրանալով ենք ասում՝ Քրիստոս մեկ բնություն [ունի], և ոչ շփոթմամբ կամ փոխարկությամբ, այլ մի բնություն ենք ասում միավորության պատճառով, ինչպես մարդուն ենք ասում մեկ և՝ մարդու բնությունը: Բայց դու հարցրու նրանց, թե՝ դուք, որ երկու բնություն եք ասում Քրիստոսի (համար). արդ՝ Քրիստոսի մեջ երեք գոյացություն կա, այսինքն՝ Բան , հոգի և մարմին, և այդ երեքը, ինչպես դուք եք բաժանում, երեք բնություններ են: Արդ՝ Քրիստոսի ո՞ր բնությունն եք ուրանում՝ Բանի՞, մարմնի՞, թե՞ հոգու, քանզի եթե Բանն ուրանաք, նեստորական եք, եթե մարմինն ուրանաք, եվտիքես(ական), իսկ եթե հոգին ուրանաք, ապոլինար(ական)[79]: Արդ՝ ձեզ՝ բաժանողներիդ, հարկ է երեք բնություն ասել Քրիստոսի (համար) կամ անբաժանելի միավորության պատճառով՝ մեկ բնություն:

[Հարցում.] Ինչպե՞ս փախչենք Նեստորի բաժանումից և Եվտիքեսի շփոթումից:

[Պատասխան.] Աստվածապաշտության ընթացքում Սուրբ Գիրքը մեզ միջինն է սովորեցնում, ինչպես ասում է Սողոմոնը. «Արքունական ճանապարհով գնա, մի՛ խոտորվիր աջ և ահյակ»: Արդ՝ աջ և ահյակ խոտորվում են հերձվածողները, ինչպես աջ խոտորված Սաբելը, [որ] Սուրբ Երրորդությունը մեկտեղեց մեկ բնության և մեկ անձի մեջ, և հակառակ սրան՝ Արիոսը, [որ] ձախ կողմ (թեքվեց)՝ երեք անձերի և երեք բնությունների բաժանելով (Սուրբ Երրորդությունը):

Իսկ Սուրբ Եկեղեցին մի բնություն է խոստովանում ընդդեմ Արիոսի և երեք անձեր՝ ընդդեմ Սաբելի: Քրիստոսի տնօրինության [մեջ] նմանապես Նեստորը չարաչար բաժանում է անձերը, բնությունները, կամքը, գործերը, և նրան հակառակ Եվտիքեսն ամեն ինչ շփոթում է, խառնակում անձը և բնությունը, կամքը և կիրքը:

Իսկ ճշմարտության աշակերտն աջ և ահյակ պատերազմում է ընդդեմ երկուսի, անբաժանելի է խոստովանում ընդդեմ Նեստորի և անշփոթ միավորություն [է խոստովանում] ընդդեմ Եվտիքեսի: Եվ այսպես փախչելով թյուր ծայրահեղություններից և պահելով բարեպաշտության միջին ընթացքը՝ մարդացած Քրիստոս Աստծո անշփոթ և անբաժան միավորությունն ենք խոստովանում, [որպես] մեկ անձ, մեկ բնություն, մեկ կամք,

մեկ գործ, ըստ ճշմարիտ խոսքի: Քանզի Բանն Աստված իր կատարելությամբ՝ անձով և էությամբ ոչ թե մասամբ, այլ անճառելիորեն լրիվ միացավ մարմնին՝ ոչ թե մարդուց մի մաս միայն վերցնելով, այլ անբաժանելի մարդկությամբ բովանդակ բնությունը ժողովելով. բանական հոգին, միտքը և մեր մարմինը միավորեց իր Աստվածությանն անշփոթ և անբաժանելի միությամբ, որովհետև երբեք՝ ոչ խոսքով, ոչ իմացությամբ, ոչ իրապես բաժանում չունենալով, նաև՝ ոչ դեմքով, ոչ բնությամբ, ոչ կամքով, ոչ գործով, քանզի միավորվածը չի բաժանվում, որովհետև միությունը վերացնում է երկվությունը: Այս միավորությունը խոստովանում ենք մեկ անձ, մեկ դեմք, մեկ կերպ, մեկ բնություն, մեկ կամք և մեկ ներգործություն: Եվ թեպետ, համաձայն մեզ, ուրիշներ թյուրապես ասացին մեկ անձ՝ մենք չենք խորշում և չենք համաձայնում նրանց: Եվ թեպետև ոմանք մեր նման մի բնություն են ասում՝ այսուհանդերձ չփոթելով, չենք մոլորվում նրանց նույնահունչ ձայներով, այլ հետևում ենք սուրբ հայրերին, որոնք առանց ենթադրությունների և խառնումների անշարժ են պահում Քրիստոսի միավորությունը:

Սուրբ Աթանասն ընդդեմ Արիոսի այսպես է գրում. «Աստծո Որդուն խոստովանում ենք հավիտենականությունից առաջ ծնված Հորից, և հետո ժամանակի մեջ ծնված մորից՝ ըստ հոգու նույնը լինելով [որպես] Աստված և Աստծո Որդի, իսկ ըստ մարմնի՝ մարդու Որդի՝ ոչ թե մեկ Որդու մեջ երկու բնությունը՝ մեկը երկրպագելի, մյուսն՝ աներկրպագելի, այլ՝ Աստծո մարմնացած Բանի մեկ բնությունը»[80]:

Նույնը նաև սուրբ Կյուրեղն է գրում Սեկունդոսին հղած թղթում. «Մեկ ենք ասում մարմնացած Քրիստոս Աստծուն և մեկ՝ նրա բնությանը, ինչպես հայրերն ասացին՝ մեկ է Աստծո մարմնացած Բանի բնությունը»[81]:

Նաև մեծն Դիոնիսիոսն է բազում տեղերում մեկ խոստովանում Աստծո մարդացած Բանի բնությունը, որի մասին Եկեղեցական քահանայապետության երրորդ գլխում ասում է. «Ամենակատար և անշփոթ կերպով մարդասիրաբար մարդանալով և տեսակցելով համաձայն մեր բնության ու մեր բաժանական [բնության հետ] անայլայլաբար առաջանալով [որպես] մեկ բնություն»[82]: Դարձյալ նույնի մեջ ասում է. «Քանզի Հիսուսի՝ աստվածապետական Բանի միությանն ու պարզությանն ըստ մեզ մարդանալով չարակցումով երևաց՝ մեր նվաստությանն իր ծայրագույն Աստվածությանը միացնելով»[83]: Դարձյալ սուրբ Ռեթեոսն Աստվածային անունների երկրորդ գլխում ասում է. «Քանզի և մարդասիրության պատճառով բնությամբ ներգաշնակվելով՝ գերագույն Աստված ճշմարտապես էացավ և այր եղավ»[84]: Եվ դարձյալ ասում է. «Ամենայնի պատճառն ու լրողը Հիսուսի Աստվածությունն է՝ ոչ մասամբ և ոչ ամբողջապես, և՛ ամբողջապես, և՛ մասամբ, որպես մասամբ և ամբողջապես ամենայնն իր մեջ ներառած (Աստվածություն)»[85]: Չորրորդ թղթում Դիոնիսիոսը դարձ-

յալ ասում է. «Հիսուս, որ ավելին է, քան յուրաքանչյուր մարդ, էությամբ շրջակարգվելով իբրև նույնական (էակ), ըստ ամբողջության ճշմարտապես մարդ եղավ»[86]: Եվ դարձյալ ասում է. «Մենք Հիսուսին ոչ թե մարդկորեն բաժանում ենք»[87]: Նմանապես ասում է. «Էությամբ վերագույնին իբրև սեփական (մարդկային) [էություն] ճշմարտապես գոյության կոչվեց»[88]: Դարձյալ՝ «Էությունից բարձրը էացավ և մարդուց բարձրը ներգործեց իբրև մարդ»[89]: Դարձյալ ասում է. «Քրիստոսը ոչ մարդ էր, ոչ որպես ոչ մարդ, այլ իբրև մարդկանցից մեկը, որ ավելին է, քան մարդը, և գերմարդը ճշմարտապես մարդ եղավ»[90]: Եվ դարձյալ. «Ոչ թե ըստ Աստծո աստվածայինն իրագործեց և ոչ ըստ մարդու՝ մարդկայինը, այլ մարդացած Աստծո՝ մեր մեջ կենցաղավարած մի նոր աստվածամարդկային ներգործություն»[91]: Սուրբ Ռեթեոսը նմանապես ասում է. «Ուստի, ըստ բնության, համայն մարդասիրության ճշմարտապես մարդ դարձավ»[92]: Դարձյալ. «Բանդի միավորությունն Աստվածությամբ է, և բաժանված լինելով ու միավորվելով [այն] չի նվազում»[93]:

Այլև Ֆրանկների վարդապետը, որին Ալբերտ[94] են անվանում, այսպես է գրում չորս տարբերություններով. Համաձայն դրանց՝ ասում են, թե՝ ա՞նձն անձ առավ, թե՞ բնությունը՝ անձ. որոնք, ասում է, սուտ են, իսկ այն, որ անձը բնություն առավ՝ ճշմարիտ է: Իսկ այն, որ ասում են, թե բնությունը բնություն առավ կամ՝ ընդհանուր բնություն, սուտ է, բայց բնությունը, որ Բանի անձի մեջ է, ճշմարիտ է:

Արդ՝ այս [բոլորը] նրանք են ասում: Բայց մենք ի զուր չենք մտացածին խոսքով մի բան ավելացնել կամ պակասեցնել, այլ հաստատ կանք և ենք սրբերի դավանության վրա, որոնք, ինչպես ցույց տվեց, մեզ ավանդեցին աստվածապաշտության խորհուրդը:

Այս մասին այսքանը բավական է, ամբողջ մնացյալը կգտնես Հարցմանց գրքում երկարորեն [պարզաբանված][95]:

Գլուխ ԽԵ

ԵՐԿԱԲՆԱԿՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ ԲԱՆԻ ՄԱՐԴԵՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

[Հարց.] *Քրիստոսի մարդկությունը տեսնո՞ւմ է Աստվածությունը, թե՞ ոչ:*

[Պատասխան.] *Ինչպես երևում է, մարդկությունը զատորոշում ես և [իբրև] տարբեր [բան] ընկալում մարդն ու Աստվածը:*

[Հակառակորդն ասում է.] *Այո, բնությամբ բաժանում եմ, սակայն անձով՝ միավորում:*

[Պատասխան.] *Այդ անձը գոյացությո՞ւն է, թե՞՝ լոկ անուն. քանզի եթե գոյացություն է, միավորված է Բանի գոյացությանը, [ապա] ինչպե՞ս չգիտի իր գոյացությունը: Իսկ եթե միայն անուն է՝ առանց էության, ապա [սոսկ] անվամբ ես Քրիստոսին Աստված խոստովանում և ոչ՝ գոյացությամբ և նրան Մովսեսին ես հավասարեցնում, որ անվամբ էր աստված կոչվում և ոչ՝ էությամբ:*

Եվ դարձյալ՝ Քրիստոս անունը երկու բնությունների միավորությունն է նշանակում, ինչպես ասում են Աստվածաբանը և սուրբ Կյուրեղը: Արդ՝ եթե Քրիստոսին բաժանեցիր՝ բաժանվեցիր հավատքից և քրիստոնյա չես: Եվ այսպես, Հարցմանց գրքում շատ է խոսվում մարմնի հետ Բանի միավորության [մասին]՝ ընդդեմ Նեստորի և երկաբնակների, ուր մեր խոսքը բավական վերլուծվում է[96]*: Սակայն, երբ հարցնում ես՝ Քրիստոս մարդը տեսնո՞ւմ է Աստծուն, թե՞ ոչ, հրեաներին ես համաձայնում, որոնք ասում էին. «Դու մարդ ես, և քո անձն Աստված ես համարում»: Այդ պատճառով հրեաները գայթակղվեցին, և հեթանոսները հիմարացան: «Եվ իմաստությունը պիտի խլեմ իմաստուններից ու խորհուրդները՝ խորհրդատուներից» (Ա Կոր 1.19): Եվ ինքը՝ Ճշմարտությունն ասում էր. «Գոհություն եմ հայտնում քեզ, Հայր, որովհետև սա ծածկեցիր իմաստուններից ու գիտուններից և տղեկներին ու անմեղներին հայտնեցիր» (Ղուկ 10.21), որովհետև իմաստունները մաքառում են ընդդեմ հավատքի, և մտքի քննությամբ չեն կարողանում հասնել ու զրկվում են իրենց փրկությունից, որովհետև հավատացյալները փրկվում են, իսկ հակառակվողները՝ կորչում: Մինչդեռ մեր հավատքի հիմքը Քրիստոսն է՝ հաստատված Հոր կողմից, և առհավատչյան Սուրբ Գրքի վկայություններն, վարդապետների խոսքերն ու օրենքի կանոններն են, ինչը կամենում եմ կարճառոտ [կերպով] հաստատել:*

Նախ՝ ընտիր անոթ Պողոս առաքյալը [խոսքն ուղղում է] հավատացյալներին՝ գրելով. «Քրիստոսն Աստծո զորությունն է և Աստծո իմաստությունը» (Ա Կոր 1.24): Արդ՝ Քրիստոս, որ Աստվածությամբ է օծված, Աստծո իմաստությունն է և ճանաչում է Աստծուն. ագիտությամբ

կորցրեցիր նրան, և ո՞ւմն է իմաստությունը:

Երկրորդ՝ [նրա] սիրելի աշակերտ Հովհաննեսը վկայում է. «Ոչ ոք չի տեսել Աստծուն, բայց միայն Միածին Որդին. նա պատմեց մեզ» (Հովհ 1.18): Միածին Որդի ենք իմանում Աստծո Բանին՝ Հորից ծնված և Կույսին Որդի եղած: Արդ՝ մարդկանցից և ոչ ոք Աստծուն չի տեսել, նաև Կույսի Որդին չի տեսել, ինչպես դու ես ասում, ուրեմն՝ սուտ է և պատմությունը, որ ուսուցանում է մեզ. քանզի չի տեսել, բայց պատմում է. ահա հայհոյության անդունդներ. [բայց] այս կարգի [բաների] մասին լռում եմ:

Երրորդ՝ առաքյալը գրում է. «Բազում խոսքերով և բազում օրինակներով Աստված խոսեց մեր հայրերի հետ», այսինքն՝ մարգարեների և հրեշտակների միջոցով, «իսկ վերջին օրերին մեզ հետ խոսեց Որդու միջոցով» (Եբր 1.1): Արդ՝ եթե Հայր Աստծո Որդին այլ է, [ապա] այլ Որդու միջոցով խոսեց մեզ հետ, [ուրեմն և] նոր օրենքը հնից ավելի այլ կլինի:

Չորրորդ՝ նույն առաքյալն ասում է. «Մենք Քրիստոսի միտքն ունենք և Աստծո խորհուրդների հազարապետներն ենք» (Ա Կոր 4.1): Արդ, եթե Քրիստոս այլ է, նրանք այլոց միտք ունեին. [ապա] ինչպե՞ս էին լինում Աստծո մտքերի հազարապետներ կամ հազարապետներն առավել են, քան Աստծո մտքերը:

Հինգերորդ՝ մատթեոսյան Ավետարանում խոստովանելով ասում է. «Ամենայն ինչ ինձ տրվեց իմ Հորից» (Մատթ 11.27): Ի՞նչ է տրվածը՝ եթե կատարյալ գիտությունն չավելց, իսկ եթե սոսկ Բանին ավեց և ոչ մարդուն, ապա մարդկությունն ես սուտ խոստովանում. «Ամենայն ինչ ինձ տրվեց», քանզի գիտություն չավեց, և կամ Բանը մարդկությունը զրկեց գիտությունից և չավեց:

Վեցերորդ՝ նույնի մեջ ասում է. «Ոչ ոք չի ճանաչում Հորը, եթե ոչ՝ Որդին և ոչ ոք [չի ճանաչում] Որդուն, եթե ոչ՝ Հայրը» (Մատթ 11.28): Արդ, եթե տարրերից և ոչ մեկը չի ճանաչում Հորը, ըստ քեզ, նաև Որդին չի ճանաչում, [ուրեմն՝] Որդին օտար է լինում Հորը: Եվ դարձյալ, ինչպես դու ես կարծում, նաև ինքը՝ մարդու Որդին, իրեն չէր ճանաչում և հրեաները չէին ճանաչում՝ ասելով. «Ո՞վ է այն մարդու Որդին» (Ղուկ 10.22), ապա մարդու Որդին լինում է ըստ հրեաների կարգի և ոչ ավելի:

Յոթերորդ՝ վրա է բերում. «Եվ Որդին հայտնվում է ում [որ] կամենում է» (Անդ): Բայց Որդին կամեցավ և աշակերտների ձեռքով [կատարված] հրաշքների միջոցով իրեն և Հորը հայտնեց, ինչպես պարզ է ծառը երևում: Արդ՝ եթե ինքն իր աշակերտներին հայտնվեց և իր մարդկությունը չհայտնեց, [ուրեմն՝] ինքն իր աշակերտներից այլ է [լինում], և կամ այն, ինչ չգիտեր, չհայտնեց:

Ութերորդ՝ Հովհաննու Ավետարանում ասում է. «Ինչպես Հայրն ինձ գիտի, [այնպես էլ] ես գիտեմ Հորը» (Հովհ 10.15): Իմացությամբ հայտնապես իրեն հավասար է ցույց տալիս Հորը: Արդ՝ եթե Հայրն ավելի

գիտի, իսկ Որդին՝ քիչ, կստացվի, որ կամ Հայրը քիչ գիտի, ինչպես Որդին, կամ [էլ] Որդին ճիշտ չի ասում:

Իններորդ՝ Հովհաննեսն ասում է. «Հայրը սիրում է Որդուն և ամեն ինչ ցույց է տալիս նրան» (Հովհ 2.18): Արդ՝ եթե ամեն ինչ ցույց տալը Հոր սիրո նշանն է, ապա եթե ոչինչ ցույց չտա՝ ատում է Որդուն:

Տասներորդ՝ Մատթեոսի Ավետարանում ասում է. «Ինչո՞ւ եք [այդպես] խորհում ձեր մտքում» (Մատթ 16.8): Եվ Հովհաննեսն ասում է. «Ինքը գիտեր՝ ինչ կա մարդու մեջ» (Հովհ 2.25): Եվ սրտի գաղտնիքն իմանալը միայն Աստծուն է (մատչելի), ըստ այն խոսքի՝ «Աստված քննում է մեր սրտերը և երիկամները» (Սաղ 7.10): Ուրեմն նա, որ ուրիշների սիրտը գիտի, իրենն ավելի գիտի: Արդ՝ կամ Ավետարանն ես սուտ [համարում], կամ քո խոսքերի մեջ ես սուտ, ըստ քո Հոր՝ սատանայի նմանության:

Տասնմեկերորդ՝ Հովհաննու [Ավետարանում] ասում է. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը» (Հովհ 14.6), այսինքն՝ (այն ճանապարհն եմ), որ տանում է Հոր մոտ և ձեզ ճշմարտությամբ եմ ցույց տալիս: Արդ՝ եթե ինքը ճշմարտությամբ չգիտի՝ մեզ ինչպե՞ս է ցույց տալիս, և եթե ինքը մոլորված է, մեզ ինչպե՞ս կտանի Հոր մոտ:

Տասներկուերորդ՝ Ղուկասն ասում է. «Մանուկն աճում էր և զորանում՝ լի շնորհքով և իմաստությամբ» (Ղուկ 1.80, 2.40). քանզի նրա շնորհների լիությամբ մենք արդարացանք և նրա իմաստությամբ Աստծուն ճանաչեցինք, ինչպես ասում է Հովհաննեսը. «Օրենքները Մովսեսի ձեռքով տրվեցին, շնորհքը և ճշմարտությունը Հիսուս Քրիստոսի ձեռքով եղան» (Հովհ 1.47): Ահավասիկ Ավետարանն ասում է «իմաստությամբ լցված» և դու [ասում ես]՝ պակաս: Արդ, եթե նրա շնորհն ու իմաստությունը պակաս է՝ մենք ինչպե՞ս լիությամբ առանք:

Տասներեքերորդ՝ Եսային ասում է Քրիստոսի վերաբերյալ. «Նրան լցրեց իմաստության, հանճարի, գիտության և խորհրդի Հոգով» (Եսայի 11.2): Սրանց մեջ են պարունակվում բոլոր ճանաչելիները, քանզի իմաստության մեջ է բոլոր աստվածային [բաների] ճանաչումը, հանճարի մեջ՝ բոլոր նյութականների ճանաչումը, գիտության մեջ՝ եզրակացությունների ճանաչումը, խորհրդի մեջ՝ բոլոր արարածների ճանաչումը, ուրեմն՝ Սուրբ Հոգով լցված Քրիստոսի հոգին ամենայն ինչի ճանաչումն ունի:

Տասնչորսերորդ՝ Եփեսացիներին [գրած թղթում] Պողոսն ասում է. «Հայրը երկնավորների մեջ Քրիստոսին կարգեց բոլոր Իշխանությունների, Պետությունների, Զորությունների և բոլոր տեսակ անուն ունեցողների վրա՝ ոչ միայն այս աշխարհում, այլև՝ հանդերձյալ կյանքում» (Եփես 1.21): Արդ՝ երկնային փառքի մեջ գերադասելին այն է, որ Աստծուն կատարելապես է տեսնում, ուրեմն՝ Քրիստոսի հոգին Աստծուն կատարելագույն [կերպով] էր ճանաչում:

Տասնհինգերորդ՝ երկինք համբարձվելիս՝ վերին զորությունները զարմանալով ասում էին. «Ո՞վ է սա, որ գեղեցիկ պատմուճանով և բուռն

զորությամբ գալիս է երկրից: Ասում է. Ես եմ, որ արդարություն և փրկության իրավունք եմ բարբառում: Դարձյալ ասում են. Ինչո՞ւ են քո զգեստները կարմիր: Ասում է. Հնձան հարեցի միայնակ» (Եսայի 63.1-3): «Հնձան»-ը խաչն է, որ արյամբ ներկվեց: Արդ՝ [եթե] բոլոր մարդկանց՝ մարգարեներին և սրբերին հրեշտակներն են սովորեցնում, իսկ նրանք Քրիստոսից են սովորում, ապա ինչպե՞ս կարող է գիտությամբ պակասավոր [լինել] հրեշտակներին սովորեցնողը:

Տասնվեցերորդ՝ Հովհաննու Ավետարանում ասում է. «Նրան գիտեմ և նրա խոսքը պահում եմ, և եթե ասեմ՝ նրան չգիտեմ՝ ձեզ նման սուտ կլինեմ» (Հովհ 8.55): Արդ՝ եթե գիտի Հորը, գիտի և իրեն, և եթե իրեն չգիտի՝ ինչպե՞ս կիմանա Հորը: Եվ եթե Հորը չգիտի՝ ինչպե՞ս է նրա խոսքը պահում իր մեջ:

Տասնյոթերորդ՝ (Տիրոջ) հարցին [ի պատասխան] Պետրոսն ասում է. «Տեր, դու ամեն ինչ գիտես և ճանաչում ես բոլորին և որ՝ սիրում եմ քեզ» (Հովհ 21.17): Ինչպե՞ս է, որ գիտի բոլորին և, ըստ քեզ, իրեն չգիտի, իսկ եթե ամենայն ինչ ճանաչում է, նաև՝ Պետրոսի սերը, ապա նրա իմացությունը պակասավոր չէ:

Տասնութերորդ՝ առաքյալն ասում է. «Նրա մեջ է մարմնապես բնակվում Աստվածության բովանդակ լրումը, որ էությամբ է» (Կող 1.17): Արդ՝ եթե բովանդակ Աստվածությունը Քրիստոսի մեջ մարմնապես է էացել և նրանից քաղարկում է իմացությունը՝ սա նշանակում է կամ ոչ մարմնացած ու մարդացած Աստված է կամ էությամբ է և իմացությունից զրկված, որ սուտ է:

Տասնիններորդ՝ Մատթեոսի Ավետարանում ասում է. «Երկինքն ու երկիրը կանցնեն, բայց իմ խոսքերը չեն անցնի» (Մատթ 24.35): Արդ՝ եթե Քրիստոսի խոսքը մարդու խոսք է և ագետի, ապա անցավոր է, իսկ եթե Աստծո խոսք է և անանց, ուրեմն՝ ագետ կամ գիտությամբ պակասավոր չէ:

Քսաներորդ՝ Կողոսացիներին [հղած թղթում] առաքյալն ասում է. «Քրիստոսի մեջ են ծածկված իմաստության և գիտության բոլոր գանձերը» (Կող 2.3): Արդ՝ ագետը բովանդակ իմաստությունն ու գիտությունն իր մեջ գանձված չունի, իսկ գանձը՝ երկնքի և երկրի իմաստության աղբյուրը, ինչպե՞ս կարող է գիտության կարոտ լինել կամ ուրիշից ստանալ: Երկաբնակը թերևս ասի, [թե] սրանք բոլորը Քրիստոսի անձին են վերաբերում և ոչ մարդկությանը: Այս մասին ասենք. եթե մինչև այժմ բնությունն էիր բաժանում, ապա հիմա՝ նաև անձը: Արդ՝ եթե մի անձ ես խոստովանում Քրիստոսին և մարդու բնությունը՝ միացած Բանի անձի մեջ, [ապա] այն, որ էությամբ և բնությամբ Բանինն է, իր մարմնի միավորությամբ ամբողջական կլինի, իսկ եթե [ասես, թե]՝ այլ է Բանինը, և այլ է մարմնինը, ապա մարդկությունը բաժանած կլինես անձից և ըստ քո առաջնորդի՝ Նեստորի և Պողոս Սամոսատացու, կպղծես՝

երկու անձ և երկու բնություն, և [եթե] մինչև այժմ ծածուկ Նեստորական էիր, [ապա] հիմա բացահայտեցիր քեզ: Եվ այժմ, ըստ վկայության կարգի, քեզ հետ խոսենք, ո՛վ երկարնակ և մարդապաշտ Նեստորական, Քրիստոսին բաժանող և Նրա շնորհներից բաժանված, որ ասում ես, թե Քրիստոսը սոսկ մարդ է, տգետ, մարմնով՝ տկար և ապականացու՝ մարդկային կարիքների տակ ընկած:

Տասնմեկերորդ՝ արդ՝ եթե Քրիստոսը տգետ միտք ուներ, տկար հոգի և ապականացու մարմին, [ապա ինչպե՞ս է, որ] Քրիստոսը եկավ, որպեսզի մեր տգիտությունը վերացնի և լուսավորի [մեզ], որ «նստած էինք խավարի մեջ» (հմմտ Սաղ 106.10, Եսայի 42.7), նա է Աստծո Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքն ու ապականությունը: Եվ արդ, տգետը չի կարող վերացնել տգիտությունը, և ոչ մեղավորը՝ մեղքը, ոչ ապականացուն՝ ապականությունը և ոչ էլ հողեղեն մարդը կարող է մարդուն փրկել, «քանզի սուտ է մարդու (տված) փրկությունը» (Սաղ 107.13), ուրեմն՝ տգիտությունը վերացնողը տգիտություն չուներ, և մեղքն ու ապականությունը վերացնողը՝ ոչ մեղք և ոչ ապականություն: Նաև մարգարեն է վկայում. «Մեղք չգործեց և հոգով արդարացավ» (հմմտ Ա Տիմ 1.16), «Նրա մարմինն ապականություն չտեսավ» (Սաղ 15.10):

Տասներկուերորդ՝ Պողոս առաքյալը և Հովհաննես Ավետարանիչը վկայում են ապագայի մասին. «Նրան տեսնելու ենք, ինչպես որ է» (Ա Հովհ 3.2) և «Ճանաչելու ենք նրան, ինչպես նա ճանաչեց մեզ» (Ա Կոր 14.12): Արդ՝ եթե ընդհանուր հարության արդարներն Աստծուն տեսնելու են դեմ հանդիման, ինչպես որ է, և այժմ Քրիստոսը չի կարող տեսնել, [ապա] գիտությամբ յուրաքանչյուր մարդուց փոքր կլինի, որ սուտ է:

Տասներեքերորդ՝ Տերն ասում է Սուրբ Հոգու մասին. «Այս աշխարհը չի տեսնում նրան և չի ճանաչում, բայց դուք ճանաչում եք, քանզի ձեր մեջ է բնակվում» (Հովհ 14.17): Արդ՝ եթե առաքյալները, որ Հոգու բնակարաններն են, ճանաչում են [Սուրբ] Հոգի Աստծուն, և [եթե] Քրիստոսի մարդկությունը չի ճանաչում, [ապա] Քրիստոսը բնակարաններից (առաքյալներից) փոքր կլինի:

Տասնչորսերորդ՝ հրեշտակների մասին վարդապետներն ասում են, թե [նրանք] առավոտի ու երեկոյի ճանաչումն ունեն. առավոտի [ճանաչում ունեցողները] տեսնում են Աստված Բանին և նրանից գիտություն են առնում, իսկ երեկոյի [ճանաչում ունեցողները] տեսնում են արարածներին: Արդ՝ եթե հրեշտակները տեսնում են Աստված Բանը և, ինչպես դու՝ Նեստորականդ ես ասում, Քրիստոս մարդը չի տեսնում, ապա Քրիստոսը գիտությամբ փոքր է հրեշտակներից: Ուրեմն ինչպե՞ս է [որ նա] «բոլոր Իշխանությունների և Պետությունների գլուխը և ուսուցիչն է» (Կող 2.10): Եվ ինչպե՞ս է, որ «նրան են երկրպագում երկնավորները, երկրավորները, սանդարամետականները և ամեն լեզու խոստովանում է, թե Հիսուս Քրիստոս Տեր է ի փառս Հայր Աստծու» (Փիլիպ 2.10):

Քսանհինգերորդ՝ Հովհաննու Ավետարանում Տերն ասում է. «Հավիտենական կյանքն այս է՝ որպեսզի միայն քեզ ճանաչեն՝ ճշմարիտ Աստված և ում առաքեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհ 10.3): Արդ՝ եթե Հայր Աստծուն և Հիսուս Քրիստոսին ճանաչելը հավիտենական կյանք է, և ինչպես դու ես ասում, Քրիստոս մարդը չի կարող ճշմարտությամբ ճանաչել, ապա զրկված է հավիտենական կյանքից: Ուրեմն ինչպե՞ս է [որ] ասում է. «Ով ուտի իմ մարմինը և ըմպի իմ արյունը՝ հավիտենական կյանք ունի» (Հովհ 6.55), եթե ինքը հավիտենական կյանք չունի, ուրիշներին ինչպե՞ս կարող է տալ: Ապա ինչպե՞ս է [որ] ասում է. «Ես եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը» (Հովհ 14.6), և Հովհաննեսն ասում է. «Կյանքը մարմնով հայտնվեց» (Ա Հովհ 1.2):

Քսանվեցերորդ՝ Տեսիլքն ասում է. «Արժան է Գառին Աստվածության և գիտության առնել, որ ամենայնի ճանաչումն է» (Հմմտ Հայտ 5.12): Արդ՝ Աստծո Գառը մարդու Որդին է. նա է Բանի միավորությամբ ստացել Աստվածության և ամենայնի ճանաչում:

Քսանյոթերորդ՝ Հովհաննեսն ասում է. «Ոչ թե Հայրն է դատում մեկին, այլ բովանդակ դատաստանն իր Որդուն տվեց» (Հովհ 5.22): Արդ, Որդին դատում է ոչ միայն ըստ Աստվածության, այլև ըստ մարդկության, համաձայն այն խոսքի, [թե] «Երբ մարդու Որդին գա Հոր փառքով և նստի իր Փառքի Աթոռին» (Մատթ 25.31): Ուրեմն դատավորին հարկ է անհուն գիտություն ունենալ, որպեսզի կարողանա քննել բոլոր հրեշտակների և մարդկանց բնությունը, բոլոր եղած և լինելիք գործերը, բոլորի խորհուրդներն ու խոսքերը, առաջինը, միջինը և վերջինը, ապա ուրեմն՝ Քրիստոսի հոգին անհուն գիտություն ունի, քանզի ճանաչում է անհունը:

Քսանութերորդ՝ ձեր Ալբերտ վարդապետն ասում է, թե Քրիստոսը հավատարապես ճանապարհորդ և ընկալող էր իր պաշտավորման պահից[97]: Արդ՝ ճանապարհորդ էր, ըստ մարմնի անօրինության՝ մահվամբ և հարությամբ մանելով փառքի մեջ: Եվ ընկալող էր. քանզի (նա) մտքի բանական իմացությամբ էր լիալրված և աստվածային փառքի միավորությամբ. Քրիստոսն այս փառքով և ներգործությամբ էր ընկալում բովանդակ սահմանավորը և գերազանց տեսությամբ ճանաչում էր բովանդակ անսահմանը:

Քսանիններորդ՝ նրանց Իսիդորոս[98] վարդապետն ասում է, թե Երրորդությունն ինքն իրեն ծանուցում է մարդու միջոցով: Իսկ Հովհան Դամասկացին[99]՝ երկաբնակների պարագլուխն ասում է, թե Քրիստոսի մեջ բովանդակ Աստվածությունը միավորված է մարդկային բնությանը, և [նա] երևում է Քրիստոսի հոգում: Եվ նրանց Օգոստինոս[100] վարդապետն է ասում Երրորդության գրքում, թե՝ աստվածային էության ընկալումն Աստծո Որդուն է պատկանում ըստ բնության և մարդու Որդուն՝ ըստ միավորության շնորհի: Նաև նրանց Թովմա[101] վարդապետն ասում է, թե՝

ինչպես Քրիստոսի Հոգին ճանաչում է բովանդակ անհունը, այնպես [էլ] Քրիստոսի Հոգին ճանաչում է իր բովանդակ կարողությունը և ամենայն ինչ, որ կարող է: Ուրեմն կարող է մեր անհուն մեղքերը սրբել, ինչպես Հովհաննեսն է Ընդհանրական Թղթերի մեջ ասում. «Նա է մեր մեղքերի քավությունը» (Ա Հովհ 2.2) և ոչ միայն մեր, այլև՝ ամբողջ աշխարհի, ուրեմն՝ Քրիստոսի Հոգին ճանաչում է անհունը:

Երեսուներորդ՝ սուրբ վարդապետները Քրիստոսի մարդեղության [համար] օրինակ են բերում. ինչպես լույսը օդի հետ է միավորվում և կրակը երկաթի հետ[102]: Արդ՝ ինչպես լուսավորված օդը խավարի մաս չունի, այդպես [էլ] Քրիստոսի Հոգին միավորված է Բանն Աստծու հետ և չունի աղքատության մաս, և ինչպես երկաթին միավորված կրակը վերացնում է նրա սառնությունը, սևությունը, և ծանրությունը մնում է (դրանից չի փոխվում), այդպես [էլ] Աստծո Բանին միավորված Քրիստոսի մարմինը Բանի Աստվածությունն ու կարողությունն ունի, ինչպես Գրիգոր Աստվածաբանն է ասում. Համարձակվում և ասում եմ՝ հավասար Աստված է. ինչպես տվողն է, այնպես էլ վերցնողը: Քանզի անմարմինը մարմնացավ, Բանը թանձրացավ, Աստված մարդ եղավ մեկ անձնավորությամբ և միավորված բնությամբ, մեկ Տեր, մեկ Քրիստոս, Աստծո և Կույսի մեկ Որդի՝ խոստովանված երկնավորների և երկրավորների կողմից և հաստատված Սուրբ Գրքի վկայությամբ, ինչպես ցույց տվեց:

Արդ՝ մտքով քննելը հանդգնություն է, իսկ հավատալը՝ կյանք, քանզի փրկությունը հավատքից է: Դարձյալ՝ մտքի քննությամբ անմատչելին մատչելի չի լինում, այլ՝ հավատքով է իմացվում: Այսպես հարկ է «սրտով հավատալ և բերանով խոստովանել, քանզի ով ինձ խոստովանի մարդկանց առջև՝ ես էլ նրան կխոստովանեմ Հոր և սուրբ հրեշտակների առջև: Եվ ով ուրանա ինձ՝ ուրացված կլինի հրեշտակների առջև» (Հմմտ Հռոմ 10.10, Մատթ 10.32,33), ասում է Ճշմարտությունը: Բոլոր ճշմարիտ դավանողները Քրիստոսին Աստված խոստովանեցին և դրա մեջ նահատակվեցին և երկրից երկինք վերացան Քրիստոս-Ճշմարտության մոտ: Եվ մենք նույն դավանության վրա հաստատուն մնանք անշարժ հույսով ի վին կենաց և մահվան և մահից հետո արժանավոր լինենք նրա խոստացած բարիքին մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի մեջ:

Չորրորդ հարցի ավարտը:

Գլուխ ԽԶ

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԿ ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՔՐԻՍՏՈՍԻ ՓՐԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ՝ ԱՍՎԱԾ ՏԵՐ ՎԱՀՐԱՄ ՎԱՐԴԱՊԵՏԻՑ

Հավատում և խոստովանում ենք մեկ Աստվածությունը երեք անձերի մեջ՝ ոչ [թե] ըստ անձերի բաժանված երեք աստվածություններ՝ մեկն իբրև արարիչ, մեկն՝ արարած, որպես գործիք, և մեկը՝ պաշտոնատար արբանյակ, քանզի սա Արիոսի մոլորությունն է [վերաբերում] և հեթանոսների բազմաստվածությանը, և ոչ, ըստ Աստվածության միության, երեք անձերը շփոթմամբ խառնենք և իբրև մեկ հասկանանք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունները՝ լոկ մեկ դեմքի հորջորջումներ [համարելով], ըստ այն [օրինակի], որ մի մարդ և՛ մարդ է կոչվում, և՛ կենդանի, և՛ Սոկրատես, բայց մեկ (ամբողջ) է, քանզի սա հրեական (դավանությունը) համախոհ Սաբելի (հերձվածն) է:

Արդ՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն խոստովանում ենք [որպես] երեք անձեր և մեկ Աստվածություն, ինչպես մի տան մեջ վառվող երեք լապտերներ բաժանված են երևում ըստ անձերի և միավորված՝ լույսով: Սակայն [այս] օրինակն ամբողջապես համեմատելի չէ նրան, որի օրինակն է, քանզի լապտերներից մեկը, բաժանվելով մյուսներից, իր լույսը լրումով տանում է իրենից՝ զատորոշված մյուսներից:

Իսկ այստեղ այդպես չէ. քանզի մարդ դարձած Աստծո Որդին չբաժանվեց Հորից և Հոգուց և ոչ էլ Աստվածության մեկ մասը (միայն) միացավ մարդկությանը, այլ՝ «նրա մեջ է մարմնապես բնակվում Աստվածության բովանդակ լրումը», սակայն նրանք թափուր չմնացին Աստվածությունից,

քանզի դա մարմնին և նյութին է [վերաբերում]: Իսկ մեկ Աստվածության աննյութ էությունն ամբողջապես բովանդակվում է Հոր, Հոգու և մարդկային մարմնի մեջ, որ միայն Որդին հագավ, քանզի Հայրը և Հոգին մարմին չառան, այլ նրանց հաճությամբ և գործակցությամբ միայն Որդին մարմնացավ, [որ] երկրի վրա էր և Հորից անբաժանելի, քանզի թեպետ անձով բաժանված են, բայց բնությամբ և Աստվածությամբ միավորված, ըստ [այն օրինակի, որ] աղբյուրը, գետը և ծովը անվամբ և ինքնությամբ բաժանված են, սակայն բնությամբ միավորված՝ մեկ ջուր են:

Սակայն այս օրինակն էլ ուղղակիորեն չի համերաշխվում ճշմարտությանը, քանզի սրանք երբեմն լուծվում են մեկմեկու մեջ՝ խախտելով առանձնավորությունը: Բայց Սուրբ Երրորդության մեջ այսպիսի բան չի տեսնվում, որովհետև թեպետ Բանն ասաց, թե՝ «Դու, Հայր, իմ մեջ ես, և ես՝ քո մեջ» (Հովհ 10.38), և թե՝ «Ով տեսավ ինձ՝ տեսավ Հորը» (Հովհ 14.9), [սակայն] սրանով չակնարկեց մեկմեկու մեջ լուծում ու անձերի շփոթում, այլ անձնավորությունների մեկ բնությունը, Աստվածությունը և էակցությունը հայտանշեց, քանզի նրանք, որ բնությամբ մեկ են, անձնավորությամբ հատկորոշված են:

Խոստովանել Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. Հորը՝ անծին և անսկիզբ, Որդուն՝ Հորից ծննդով սկսված, Հոգուն՝ բխումով և դուրս գալով՝ ոչ [թե] ժամանակով և հետո եղած, քանզի անժամանակ էությունը ժամանակից հետո չի սկսվում, քանզի թեպետև Որդին Հոր ծնունդ է՝ սկսված լինելով Հորից, բայց ոչ թե ժամանակի մեջ, ապա թե ոչ նրան անսկիզբ կհամարեն, քանզի Հորից անսկզբնաբար է սկսվում անսկիզբը՝ նրան մշտնջենավորակից լինելով, ինչպես նույն Հայրն է ասում Որդուն. «Քեզ հետ է իմ զորության օրերի սկիզբը, արուսյակից առաջ քեզ ծնեցի արգանդից» (Սաղ 109.3): Ծնունդ և Որդի (լինելու պատճառով սակայն) կրտսեր չէ Հորից, այլ Որդին և Հոգին հավասարակից լինելով Հորը, միայն պատճառ ունենալով Հորը, Որդին՝ ծննդյան, Սուրբ Հոգին՝ բխման, ինչպես արեգակը և լույսի ծնունդը, որ նրանից է, և ճառագայթի դուրս գալը:

Սրանք ևս ամբողջապես չեն համապատասխանում ճշմարտությանը, քանզի արեգակի սկավառակի մեջ լույսը և ճառագայթն առավելություն ունեցող ներգործումներ են, մինչդեռ անձն անձի նկատմամբ (այդպես չէ): Եվ Հորից ծնված Որդին և դուրս բխած Հոգին, ըստ էության միավորության ունեն նաև առանձնավորական հատկություն: Անձերի առանձնավորությամբ է մեկ բնությունը, էությունը և մշտնջենավորությունը, որով հավատալու է, որ երեքը և մեկը, մեկը և երեքը նույնն է, ըստ որում [սրա մեջ] մեր նախագաղափարի խորհուրդն է երևում, [մեր], որ նրա անեղության պատկերով գոյացանք: Այս պատճառով աստվածաբան Մովսեսը խրատում է. «Նայիր քո մեջ» (Բ Օր 4.9): Քո նկարված պատկերին նայելիս սկզբնատիպի ինչ-որ աղոտ նմանությունը կտեսնես, քանզի երբ քո մեջ շարակցված բաղադրամասերն անմատչելի մնան,

պարզն ու բովանդակված էությունը մի՛ հանդգնիր քողազերծել և խնկությունը հասու լինել: Արդ, անհասանելիին այնքան ես մոտիկ, որքան քո օրինակում առկա նյութի մատչելիությունն ես ընդունում:

Ըստ այսմ՝ քո բանական հոգուց միտքդ ծնվում է որպես հորից և խոսքդ [բանդ] բխում է իբրև աղբյուրից: Այսպես՝ Որդին Հոր ծնունդն է և Սուրբ Հոգին՝ նրանից բխելը: Բայց օրինակը սկսվում և դադարում է՝ միաժամանակ ընկալելով և՛ հասումը, և՛ ցնդումը, իսկ ճշմարտությունը թեպետ սկսվում է, այլ՝ [իբրև] Հորից անսկզբնաբար և անժամանակապես ծնված Որդի և նրանից (Հորից) մշանջենաբար բխած Սուրբ Հոգի: Ոչ թե մեկն առաջին և մյուսը վերջին է, և ոչ թե նրանցից մեկը՝ ցածր կամ բարձր, այլ համապատվաբար և զուգափառ. ոչ թե մեկն աջից և մյուսը ձախից է, քանզի սա տեղի հայտանիշ է և պարունակ, այլ անպարփակ է բնությունը, և միաժամանակ առանց տարածության են (անձերը), և նրանց մեջ են տարածությունները, քանզի գործով բաժանվում և իրենց ինքնությունն են ցույց տալիս բոլորին, սակայն եղականներին (մահկանացուներին) այլ կերպ են (ներկայանում), քան՝ ինչպես իրենք իրենց, որովհետև միմյանց նկատմամբ էությամբ են և մեր նկատմամբ՝ ողորմությամբ, նրանք ամբողջապես աջակողմ են, նաև՝ դեմք և տեսություն:

Եվ Գրքում [էլ] ասվում է. «Նստիր իմ Աջ կողմում» (Ղուկ 20.42), նաև՝ «Բարձունքում մեծության Աջ կողմում նստեց» (Մարկ 14.62): [Սա] նաև Որդու անօրինական մարդեղության և Հոր հետ համազգության[103] հայտնաբանությունն է: Քանզի Թագավորական սուրբ Երրորդության համար ամենայն ինչ ընդհանուր է. մեկ էությունը, մեկ բնությունը, մեկ կամքը, մեկ ներգործությունը, մեկ փառքը, մեկ զորությունը և մնացյալ սրանց համասար [բաները], որոնցից յուրաքանչյուրը համապատասխան պարունակվում է (երեքից) ամեն մեկի մեջ. այդ պատճառով անբաժանելի և իրար միացած են երևում, և նրանցից մեկը չի բացակայում (անձերի) մեջ և ոչ էլ լիալրում (անձերից մեկին): Որդով Հայրն է ներկայանում, և [Սուրբ] Հոգով Հայրն ու Որդին են ծանուցվում, և նրանցով իմացվում են նրանք, ըստ այն [խոսքի], թե՝ «Տեր, քեզնից է կյանքի աղբյուրը և քո երեսի լուսով ենք տեսնում լույսը» (Սաղ 35.10): Այսինքն՝ Որդով Հոգին է երևում, որ Հորից բխած կյանքի աղբյուրն է և Հայրը, անժամանակ լինելով, Որդու և լուսո աղբյուր Հոգու սկիզբն ու պատճառն է, ինքը նրանցից չէ և ոչ՝ այլ պատճառից, քանզի Հայրն անսկիզբ և անպատճառ է և իրենից եղածների սկիզբն ու պատճառն է:

Հետևաբար Որդին և Հոգին Հորից են սկսվում, որպեսզի չընկալվեն [իբրև] երեք սկիզբներ, կամ էլ երկուսն [որպես] տարբեր սկիզբներ կամ էլ այլոց համար սկիզբ լինեն, ինչպես Հայրը Որդու Հայրն է և Որդին՝ մեկ այլի սկիզբը, Որդին Հոր (սկիզբն է) և դարձյալ՝ Հայրը՝ այլոց, քանզի այս բազում սկիզբները միմյանցից տարբեր են երևում, ինչը բազմաստվածություն կամ անաստվածություն է: Եվ ոչ միայն ընկալվելով՝ սկզբում

ռակա անձն է հատուկ (լինում), կամ անկարգ առանձնավորությունը, կամ չփոթությունը, կամ մեկը մյուսի փոխարկվելը և մեկ մեկու մեջ լուծումը, որպես թե Հայրը [կարող է] երբեմն Որդի լինել և Որդին՝ Հայր և Հայրը՝ Հոգի. սա փառավոր Երրորդություն չէ: Մինչդեռ հատկությունն ըստ առանձնավորությունների է և միությունն [ըստ] բնության՝ որպեսզի անձնավորությունների անշփոթ լինելը երևա, և մեկ բնությամբ անճառ միությունը հաշտվի: Այլև մեկ սկիզբ է ծանուցվում, քանզի թեպետ Որդին և Հոգին մշտնջենավորությամբ, էությամբ և Աստվածությամբ հավասար են Հորը, սակայն սկսվում են Հորից՝ մեկ սկզբից և այն անսկիզբ կատարյալը կատարելագույնից է, որ նույնապատկեր ու համագոյ են:

Միակ Երրորդություն և եռյակ միություն, մեկ Աստված ենք եռանձնական դեմքով երկրպագելով փառավորում. անեղ, անմարմին, բնությամբ մշտնջենավոր բարի և բովանդակ բարիքը գիտակցող անվախճան Արարիչ և անփոփոխելի Տերություն: Եվ բոլոր մնացյալ այսպիսի (որակումները) երեքին են վերաբերում հավասարապես, քանզի նրանք, որ էությանն ու բնությանն են, հավասարապես երեքին են վերաբերում և (երեքի համար) ասվում: Իսկ նրանք, որ հատուկ են և առանձին, միայն անձերինն են, և (համապատասխանորեն) են անվանվում. ինչպես Հայրը միայն ինքն է անծին, անսկիզբ և անպատճառ. Որդին և Հոգին չունեն այս (հատկությունները): Որդին ծնունդ և Որդի է ասվում և ոչ՝ բխում և Հոգի, ըստ այդմ էլ Հոգին՝ ոչ Որդի և ծնունդ է ասվում. սրանք են երեք անձնավորությունների հատկությունները:

Եվ ինչո՞ւ արդյոք երեք անձերը երեք աստվածություններ չեն: Իմանալու է, որ անձնավորությունների մեջ են կերպավորվում հատկությունները. Հայրը՝ անծին և անսկիզբ, Որդին՝ ծնունդ և սկսված, Հոգին՝ բխումն:

Սակայն սրանք էություն և բնություն չեն, այլ էության և բնության հատկություններ են. այդ պատճառով երեքն են, իսկ էությունն ու բնությունը, որոնց մեջ են այդ (երեքը), մեկն են: Այդ պատճառով էլ Աստվածությունը մեկն է, որովհետև Երրորդության Աստվածությունը էությունից է, որ մեկն է և ոչ, (ըստ) անձնավորության, երեք: Քանզի Աստվածությունն Հայրության, Որդիության, Հոգիության կամ անծնունդ ծնված և բխած լինելու (պատճառով) չէ, այլ Աստվածություն է մեկ էության (պատճառով), որի մեջ են երևում այս երեք անձնավորությունները ու հատկությունները:

Այդ պատճառով էլ Աստվածությունը մեկն է, քանզի մեկն է էությունը, որ Աստվածություն է և ոչ՝ երեք աստվածություն, ըստ երեք անձնավորությունների, որոնք էություններ չեն անձերի մեջ, այլ էության հավասար առանձնավորություններն են, որոնք հանգրվանում են կատարյալ թվի, այսինքն՝ Երրորդության մեջ, քանզի Աստված կատարյալ է, որի պատճառով էլ Երրորդություն է, ըստ այսմ Աստվածաբանն ասում է,

թե՝ Միակը (Մեկը) գործելիս Երեքն է (գործում), այսինքն՝ Հայրը (այդպիսին) է մնում Որդու ծննդյան (պահին), ընդհուպ (ամբողջ) Երրորդության համար՝ Հոգու բխման (պահին ևս): Ասվում է՝ միակն է գործում, որպեսզի Աստվածության մեջ պակասություն չլինի և չի սահմանափակվում երկուսով, որպեսզի Աստվածությունը նյութ և սեռակ չկարծվի, ինչպես հելլենացիներից ոմանք էին ցնդաբանում:

Նաև երեքից չանցավ, որպեսզի բազմաստվածություն չհամարվի, այլ երեքի մեջ մնաց նա, որով մի նոր կատարելության մասին ենք իմանում, քանզի երեքն ունի սկիզբ, միջնամաս և ավարտ: Թվերից և ոչ մեկը չունի այս ձևը. որովհետև թեպետև այլ թվերն ունեն միջնամաս և ավարտ, սակայն՝ ոչ երեքի նման, որի միջնամասը, սկիզբը և ավարտը միակություններ են, քանզի երեքի մեջ է միությունը, և երեքն է միությունը, ինչպես մեկ Աստվածությունն է երեք անձերի մեջ և երեք անձերը՝ մեկ Աստվածության մեջ[104]*: Պյութագորասի խոսքերը (վկայակոչելով)՝ Պլատոնն ասում է, թե Աստված անսկիզբ և անվախճան է: Ըստ այսմ մեկ բնություն ունեցող Սուրբ Երրորդությունն անսկիզբ և անվախճան է. Հայրը սկիզբ է և անվախճան, Որդին՝ Հորից անժամանակ սկսված և Հոր հետ անվախճան: Սկիզբը Հայրն է և Հորից անժամանակ սկսված Հոգին, որ Հոր նման անվախճան է, ինչը և վախճանն ու ավարտն է Սուրբ Երրորդության, քանզի այսպես նաև Բարսեղն է ասում Վեցօրյայի մեջ Սուրբ Հոգու վերաբերյալ*[105]*:*

Արդ՝ եթե Որդին և Հոգին միայն ծնունդն էին կամ միայն բխումն՝ Հայրը և երկու որդիները նույնը կլինեին, որով մի Աստվածությունը երկու կլիներ և ոչ՝ Երրորդություն, [ապա] ինչո՞վ էր Աստվածության կատարելությունը, եթե երկու ծնունդները մեկ լինեին կամ երկու բխումները մեկ համարվեին: Այդ պատճառով Որդին չի բխում Հորից, ինչպես Հոգին, և ոչ էլ Հոգին ծնունդ է, ինչպես Որդին, որպեսզի այնտեղ մարմնական ազգակցություն չգտնվի, [իբրև] երկածին և երևացող եղբայրներ, ըստ որում և Որդին չի ծնվել Հոգուց, ինչպես Հորից, կամ Հոգին Որդուց չի բխել, որպեսզի այնտեղ թոռներ չընկալվեն [դրանք], այլ ինչպես միայն Հայրն է ծնող, նույնպես միայն Որդին է ծնունդ, և միայն Հոգին՝ բխումն: Ըստ այսմ Որդին Միածին է կոչվում չորս պատճառով.

առաջին՝ այն (պատճառով), քանզի միայն Հոր ծնունդն է և ոչ այլոց ծնողը, և Հայրն էլ նրա ծնողն է և ոչ ինքը այլոց ծնունդը:

Երկրորդ՝ Միածին է կոչվում, քանզի Հոր ծնունդը միայն նա է և ոչ մեկ ուրիշը, որովհետև թեպետև Հոգին ևս Հորից է, սակայն բխումն է և ոչ՝ ծնունդ:

Երրորդ՝ Միածին է ասվում, քանզի ամեն ծնունդ երկուսից է լինում, բայց միայն նա է այնպիսի ծնունդ, որ միայն Հորից է ծնվել անմայր, ինչպես երկրի վրա՝ անհայր, Կույս մորից[106]*:*

Չորրորդ՝ քանզի ամեն ծնող առաջ է, քան իր ծնունդը, բայց այստեղ

ծնվածն ու ծնողը մեկ են՝ համագոյ և մշտնջենավորակից: Այս բանում ոմանք տարակուսում են՝ ինչպե՞ս կարող են հավասար լինել ծնողն ու իր ծնունդը, քանզի նույն ինքը՝ Հայր անունը հիշվելիս [իր] ավագ լինելն է ցույց տալիս, քան Որդին, թեպետև գույն չափով ժամանակ վերցնես, այնուամենայնիվ, որքան էլ հեռավոր, անժամանակ և անհասանելի անվանես (Որդուն), Հայրը մեծ է երևում, քան Որդին: Հարկ է իմանալ, որ այսպիսի կարծիքը հատուկ է մեր նյութական բնությանը: Մեզանում հայր և որդի է երևում, քանզի մեր մեջ հայրը, որ ուրիշ մեկից է, (նրա) սկիզբն իր հայրն է, որ երբևէ իր հոր որդին է (եղել), հետո իր որդու հայրությունն է ստանձնում. այս պատճառով իր որդուն այնքանով է հավասար և ժամանակակից, որքանով նրա վրա հայրություն է ստանձնել, և այնքանով է մեծ իր որդուց, քանի դեռ հայր չէ:

Սակայն այսպես չէ աննյութական բնությունը. քանզի Հայր Աստված սկսված չէ մեկ ուրիշից և ոչ էլ երբևէ մեկ ուրիշի որդին է եղել և հետո ստանձնել հայրություն, այլ միշտ Հայր է. և այս հայտնի է (նրանով), որ Հայրը Հայր է իր Որդով:

Արդ՝ եթե նա միշտ Հայր է և Որդով է Հայր, ապա ուրեմն Որդին մշտնջենավորակից է նրան, որով նա միշտ Հայր է: Եվ դարձյալ՝ նա այն պատճառով է միշտ Հայր, որովհետև Աստված է. Աստված ինչ որ է, [ինչ որ] ունի, միշտ [այն] է, [ինչ է], ոչ թե հետո է ստացել և ինչ որ անկատարությունից կատարելության հասել: Եթե Հայրը Որդուց մեծ է, [ապա] պարզ է, որ մինչ այդ հայր չէր և թերի էր հայր լինելուց, և երբ հայր եղավ, հայրությունը կատարելություն ստացավ: Նաև՝ երբ հայր եղավ, այլ տարրկայի փոխարկվեց՝ միաժամանակ ընդդեմ և ներհակ դառնալով ինքն իր (նկատմամբ): Անհայրությունից հայրության, անկատարությունից հետագայում կատարելության հասածը, այլափոխվածը և ինքն իրեն ներհակ եղածն Աստված չէ:

Այս պատճառով, քանզի Աստված Հայր է՝ մեծ ամբարշտություն է այս նրան վերագրելը: Այլ նրան հավատալ իբրև բոլորի Աստված, ամբողջապես ամենակատար և ոչ թե թերությունից լիալրության հասած, և նրան ճանաչել [որպես] մեկ և միակ զորություն և ոչ թե բաժանված և այլափոխված: Այլև մեզից վեր խաղաղություն է և խաղաղարար և ոչ թե ինքն իրեն ներհակ և ընդդեմ: Եվ հավատը մեր մեջ հաստատում է՝ նրան միշտ Հայր հավատալ և նրան միշտ Հայր խոստովանելով՝ Որդուն մշտնջենավորակից հավատալ, քանզի նա միշտ Որդով է հարատևորեն Հայր ծանուցվում: Եվ այսպես պետք է ընկալվի նաև Սուրբ Հոգու բխումն ու Հոր բխող լինելը, քանզի Հայրը միշտ Հոգու բխողն է. [ուրեմն] բացորոշ է, որ Հորից բխած Հոգին մշտնջենավորակից է Հորը, որի շնորհիվ է նախ բխում:

Եվ եթե մեկն ասի, թե Որդուն հետո ծնելու և հայրություն ստանալու պատճառով Հայր Աստված անկատար և թերի էր երևում, քանզի արա-

բաժիններն էլ հետո առեղծեց, որով և Արարիչ ճանաչվեց, մի՞թե սրանով նրա թերի լինելը կերևա: Այսպես ասածը պետք է իմանալ, որ արարածները թեպետ ժամանակում երևացին և առեղծվեցին Աստծո կողմից, սակայն դրանց սկզբնատիպերն ու հարացույցներն իմանալի կերպով մշտնջենավորապես Աստծո մոտ էին, նրա կամքի մեջ, որով նա միշտ Արարիչ է: Ըստ այսմ՝ Մովսեսն ասում է. «Աստված ամբողջ վայրի բանջարը առեղծեց, երբ առկավին չկար, և ամբողջ վայրի խոտը, երբ դեռ չէր բուսել» (Ծննդ. 2.5): Տեսնո՞ւմ ես. Աստված նրանց առեղծել էր, երբ դեռ չէին եղել, այսինքն՝ նրանց և բոլոր արարածների սկիզբը (դրեց), քանզի Աստված միշտ Արարիչ է:

Դարձյալ՝ Աստվածության մեջ արարչությունը (արարիչ լինելը) հայրության նման չէ, քանզի հայրությունն առանձնավորությունն է, իսկ արարչությունը՝ բնությանը, որովհետև հայրությունը միայն Հորն է և ոչ թե՝ Որդունն ու Հոգունը, քանզի Հոգին և Որդին Հայր չեն, ինչպես և Հայրը Որդի և Հոգի չէ, իսկ արարչությունը Հորը, Որդունը և Հոգունն է, որովհետև Հայրը, Որդին և Հոգին համազոր են արարչությամբ, քանզի արարչությունն Աստվածությունն է, և հայրությունը ոչ թե Աստվածությունն է, այլ Աստվածության մեջ է, այսինքն՝ արարչությունը միությունն է, որ երեք անձնավորությունների մեջ է, իսկ հայրությունը, որդիությունը և հոգիությունը երեք անձնավորություններինն են, որ մեկ բնությանն ու Աստվածությանն են (պատկանում)[107]: Բանի որ հայրությունը Հորը, որդիությունը Որդունը, բխումը Հոգունը միշտ պատկանելն ասացինք, դրանք նրանց նույն բնությունը մի համարիր, քանզի Հոր անծնելությունը, Որդու ծնելությունը և Հոգու բխողությունը նրանց բնությունը չէ, որովհետև երեքի բնությունը մեկ է: Այլ սրանք բնության մեջ առանձնավորությունների հատկություններն են: Քանզի եթե սրանք Աստծո բնություն նկատես, կաճապարես երկու ամբարշտությունների մեջ ընկնել: Կամ նույնը երեք բնություն ասես, ըստ երեք անվանումների և նույնը մեկմեկու ընդդիմամարտ համարես, իբրև անծին, ծնված և բխած, քանզի այս անվանումները հակառակ են իրար, այդ պատճառով ասվում է, որ նրանցում ներհակություն կա: Եթե անծնելությունը բնություն է, նա Աստված է, քանզի Աստվածությունը բնություն է, ապա ծնելությունն Աստվածություն չէ, քանզի հակառակ է անծնելությանը: Իսկ եթե ծնելությունը բնություն է, Աստված է, [ապա] անծնելությունն Աստված չէ: Նմանապես՝ բխումը: Եվ այսպես երեք անձերն էլ զրկվում են Աստվածությունից, որի մեջ այդպիսին են: Կամ եթե մի բնություն ես ասում Սուրբ Երրորդությանը, ապա անծնելությունը, ծնելությունը և բխումը բնություն ես անվանում՝ [ասելով թե] մեկ է նրանց բնությունը. (սրանով նրանք) մեկմեկու նկատմամբ փոփոխական կդառնան՝ իբրև թե Հոր անձը երբեմն Որդի և ծնունդ կլինի, և նա (Որդին)՝ Հայր, նույնպես և՝ Հոգին: Ուրեմն այսպիսի (դատողությունները) անտեղի են և մեծ

ամբարշտություն, կամ (նշանակում են) հակընդդեմ աստվածներ ասել կամ՝ մեկը մյուսի փոխարկվողներ:

Հետևաբար, ուղիղ դավանություն է անծնելությունը, ծնելությունը, բխող լինելը և առանձնավորության նման անվանումները բնություն չասել, այլ՝ մեկ բնություն (ունեցող) անձնավորությունների հատկություններ: Եվ Միածնի ասելը, թե՝ «Իմ Հայրը մեծ է ինձանից» (Հովհ 14.28) մի՛ ընկալիր ըստ բնության, այլ ըստ պատճառի, քանզի Որդու ծնողն է և Հոգու բխողը, որոնք մեկ բնություն են: Ըստ այսմ՝ մեծ է համաձայն պատճառի և ոչ՝ էության զանազանության և օտարության, քանզի մեծ (լինելը) առավելապես էակցությունն է ցույց տալիս, որովհետև մեծ է ասվում ոչ երբեք զանազան էության, այլ միևնույն էության դեպքում, քանզի ոչ ոք չի ասում՝ մարդը ձիուց մեծ է կամ արծիվը՝ փղից, այլ՝ մարդը մեծ է մարդուց, և ձին՝ ձիուց: Իսկ եթե էության մեծ (լինելը) Հորը վերագրես, ո՞ւր կդնես Որդու վերաբերյալ ասվածը. «Սպասենք մեծ Աստծուն՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին» (Տիտ 2.13), նաև այս՝ «Տերը մեծ է», այսինքն՝ Հայրը, «մեծ է նրա զորությունը» (Սաղ 146.5), այսինքն՝ Որդին, «քանզի Քրիստոսն Աստծո զորությունն է» (Ա Կոր 1.24), և «նրա իմաստությանը», այսինքն՝ Սուրբ Հոգուն «չափ չկա» (Սաղ 146. 5): Եվ կամ այն, որ Որդու մասին Երեմիան ասում է, թե՝ «Սա է մեր Աստվածը, ըստ որում մի այլ բան չպետք է համարել. որանից հետո երկրի վրա երևաց և մարդկանց մեջ շրջեց» (Բար 3.38):

Մի՞թե միայն Որդին է Աստված և կամ երեքին մեծ անվանելով՝ այլևայլ աստվածներ են լինում: Ուստի Քրիստոս Հոր (հավասար) մեծ կոչվեց պատճառի համար, և էության ու բնության միավորությունը ցույց տալով ասաց. «Ես և իմ Հայրը մեկ ենք» (Հովհ 10.30):

Հարկ է իմանալ, որ անձնավորությունների հատկությունները չեն քակտում բնության միությունը, և ոչ էլ տարբեր են ցույց տալիս Որդու բնությունը, որովհետև ծնունդ է և Հոգունը, [որովհետև] բխում է: Ահավասիկ Եվան Ադամից է, բայց՝ նրա կողից, իսկ Աբելը՝ Ադամի սերմից, սակայն [և այնպես] մեկ է նրանց բնությունը և Ադամինը, որից էին նրանք, և մեկմեկու (համար) եղբայրներ չէին Եվան ու Աբելը, թեպետ մեկ պատճառից էին՝ Ադամից, ինչպես և եղբայրներ չեն Որդին և Հոգին, որոնք [իբրև] պատճառ միայն Հորն ունեն: Պարզելու է նաև այս, թե Որդին Հոր ծնունդը լինելով՝ դադարո՞ւմ է (այդպիսին լինելուց), թե՞ տակավին ծնվում է: Հարկ է իմանալ, որ սրանցից և ոչ մեկը չպետք է ընդունել. քանզի եթե մեկն ասի՝ դադարում է ծնվելուց, ապա բացորոշ է, որ (երբևէ) սկսել է, որովհետև ամեն դադար սկսվելուց է (լինում): Այդ պատճառով, թեպետ Աստծո Որդին Հայր Աստծուց է ծնվել, բայց, սկիզբը չունենալով՝ անսկզբնաբար և անժամանակ, որով և՝ առանց դադարի: (Իսկ եթե ընդունենք) թե տակավին ծնվում է՝ ահա (սրանով) Որդին հանդիմանվում է իբրև անկատար մեկը, և անկատարն ինչպե՞ս (կարող է)

Աստվածության մեջ գտնվել: Այլ [պարտ է] միշտ հավատալ նրան [իբրև] Հոր ծնունդ՝ ոչ սկսվող և ոչ դադարող:

Եվ այսպիսիք անտեղի հարցումներ են, ինչպես (օրինակ)՝ եթե մեկը հարցնի, թե ժամանակը ժամանակի մե՞ջ եղավ, թե՞ ժամանակի մեջ չեղավ. եթե՝ ժամանակի մեջ՝ ի՞նչ էր այն, որ առավել էր այս ժամանակից, և եթե ժամանակի մեջ չէր, ի՞նչ [կարող] էր լինել այն, որ ժամանակի մեջ չէր: Եվ [կամ] երբ եղար, մանուկ էիր քեզ, իսկ այժմ մանո՞ւկ ես քեզ, թե՞ ոչ. քանզի եթե քեզ մանուկ էիր, ապա երկու անձ ես դու, [իսկ] եթե քեզ մանուկ չես, ապա դու օտար ես ինքդ քեզ: Եվ [կամ] մեկ այլը՝ էությո՞ւն ծնեց, թե՞ ոչ էություն, քանզի եթե՝ էություն, ապա ինչպե՞ս [կարող] էր ծնել նրան, որ էություն էր, իսկ եթե՝ ոչ էություն, ապա ծնվածը ծնողից հեռու է (եղել): Նմանապես և այս. դադարե՞ց, թե՞ տակավին ծնում է: Նաև՝ Հայրը [հոժար] կամքո՞վ ծնեց Որդուն, թե՞ ոչ. քանզի եթե՝ ոչ [հոժար] կամքով, ապա Հայրը բռնադատված մեկն է, իսկ բռնադատվածն Աստված չէ, պարզ է [ուրեմն, որ] նրանից ծնվածն էլ Աստված չէ, և ոչ էլ նա է Աստված: Եվ եթե՝ [հոժար] կամքով, ապա ստացվում է, թե Որդին կամքի ծնունդ է և ոչ՝ Հոր, և Հայրն օտար է Որդու [նկատմամբ] և Հոր կամքը՝ Հոր: Ոմանց կողմից նոր խնդիր հարուցվեց [այն մասին], թե Հայրն ու Որդին հարաբերվող են. մեկմեկու են վերաբերում և ներհակ են իրար: Ըստ որում հարաբերության սահմանումը [հետևյալն] է. հարաբերվող են կոչվում նրանք, որ [այն], ինչ իրենք են, ասում են, թե առկա է ուրիշների մեջ: Այս պատճառով է, որ Հայրը Որդու Հայրն է և Որդին Հոր Որդին է, բայց Հոգին այսպիսի բան չի անվանվում. օտար մեկն է Հոր և Որդու [նկատմամբ]:

Իմանալու է, որ այս անունները բնություններ չեն, այլ բնության մեջ են, քանզի Հոր մեջ հայրությունը բնություն չէ, և Որդու մեջ որդիությունը բնություն չէ, այլ՝ առանձնավորություն և հատկություն: Այդ պատճառով էլ Հոգին լինելով Հոր և Որդու նույն բնությունից՝ Հոգի լինելու և բխում [ունենալու] առանձնավորության հատկությունն ունի: Եվ երեքի բնությունը մեկ է. դրանք մեկ բնության մեջ են: Իսկ եթե մեկը դրանք բնություն համարի, ապա երբ ասվում է՝ Որդին Հոր զորությունն ու իմաստությունն է, ինչո՞ւ փոխարինաբար չի ասվում Հոր [համար, թե] Որդու՝ Բանի զորությունն ու իմաստությունն է: Իսկ եթե առաքական հարաբերությամբ առաջնորդվեն, ասելով՝ «Իմաստունի իմաստությունն իմաստություն է», և «Իմաստունն իմաստությամբ է իմաստուն», թող իմանան, որ սա մարմնավորներիս է [հատուկ] և ոչ անմարմիններին: Նրանք, որ այսպես են ասում, բացասում են Որդու էությունը, քանզի ըստ մեզ (մարդկային ընկալման) իմաստությունն ու խոսքը [բանը] էություն չեն, այլ՝ հետամուտ (պարագա): Մենք ևս մարմնապես պատասխանենք նրանց, թե ըստ այդմ էլ՝ «Հոգևորի հոգին հոգի է», և «Հոգևորը հոգով է հոգևոր», ինչն անհնար է Աստվածությանը վերագրել, քանզի

թեպետ էակիցը, փառակիցը և ուրիշ այսպիսիները փոխարինում են իրար, որովհետև էակիցը մեկի էակիցն է, և փառակիցը մեկի փառակիցն է, սակայն ոչ ամեն փոխարինություն էակցության նշանակ է: Այդ պատճառով Հոգին Հոգի է ասվում՝ չփոխարինվելով Հորով և Որդով, ինչպես նրանք են [փոխարինում] իրար: Այսպիսի անվանումները թող բնություն չկարծվեն, այլ՝ մեկ բնության հատկություններ, քանզի Հայր, Որդի և Հոգի է ասվում երեք անձերին մեկ բնության մեջ անխաթար պահելու պատճառով:

Պարզելու է, թե միայն Հա՞րն է անհրաժեշտ Աստված համարել՝ Քրիստոսի [այն] խոսքի պատճառով, թե՝ «Հայր, տուր որ նրանք միայն քեզ ճանաչեն ճշմարիտ Աստված» (Հովհ 17.3): Պետք է իմանալ, թե՝ «որ նրանք միայն քեզ ճանաչեն ճշմարիտ Աստված» ասելուց հետո, վրա է բերում. «և որին առաքեցիր՝ Հիսուս Քրիստոսին»: Արդ՝ այս մասին ոմանք ասում են, թե ինչո՞ւ չասաց՝ «և որին առաքեցիր՝ Աստծուն՝ Հիսուս Քրիստոսին» կամ «Տիրոջը», այլ լոկ իր անունը՝ «Հիսուս Քրիստոսին»: Նրանց պատասխան տանք՝ նախ այս ասելով. ամեն ոք, ով ճշմարիտ չէ, նա սուտ է, և ով սուտ է, այն չէ, ինչ կոչվում է: Արդ՝ երբ գտնում ենք Որդու Աստված քարոզվելը, մի՞թե պարտավոր ենք նրան սուտ աստված կարծել և ոչ՝ ճշմարիտ:

Նաև մեջբերենք վկայություններ, որոնցով Որդին Աստված է քարոզվում. Եսային գրում է, թե՝ «Մեզ մանուկ ծնվեց, մեզ Որդի տրվեց, որի անունը հզոր Աստված է կոչվում» (Եսայի 9.6): Դարձյալ, թե՝ «Ահա կույսը պիտի հղանա և Որդի ծնի, որի անունն Էմմանուել պիտի կոչվի, որ թարգմանվում է՝ Աստված մեզ հետ է» (Եսայի 7.14): Արդ՝ եթե Որդին Աստված է, ինչպես Գիրքն է վկայում Հովհաննեսի խոսքի մեջ, թե՝ «Ի սկզբանե էր Բանը և Բանն Աստված էր» (Հովհ 1.1), ապա պարզորոշ է, որ նաև ճշմարիտ Աստված էր: Ըստ որում նույն Հովհաննեսն ասում է. «Եվ նրա ճշմարիտ Որդունը՝ Հիսուս Քրիստոսինն ենք» (հմմտ Հովհ 3.33), քանզի ճշմարիտ Հոր ճշմարիտ Որդին է նա, ինչպես ինքն էր ասում, թե՝ «Ես եմ ճշմարտությունը և կյանքը» (Հովհ 14.6): Նաև ի ծնե կույրին ասաց. «Դու հավատո՞ւմ ես Աստծո Որդուն»: Եվ երբ հարցրեց, թե՝ «ո՞վ է», Հիսուսը պատասխանեց. «Ես եմ, որին տեսնում ես, և խոսում եմ քեզ հետ: Նրան հավատաց և երկրպագեց» (Հովհ 9.35-38): Նաև նա, որին հրեաները կամենում էին քարկոծել. Ավետարանիչը պատճառն է ասում, թե՝ «Որովհետև Աստծուն իր Հայրն էր անվանում, և իր անձն Աստծուն հավասար էր նկատում» (Հովհ 5.18), որի [պատճառով] իրեն՝ Փրկչին ասում էին. «Դու մարդ ես, և քո անձն Աստված ես համարում» (Հովհ 10.33): Արդ՝ մի՞թե փախավ և հրաժարվեց այս կոչումից. ոչ թե խուսափեց, այլ առավել ես այն իր վրա հաստատեց, որով և ասաց, թե՝ «նրանց աստվածներ է կոչում, որով Աստծո Բանը եղավ»: Ինչպես Գիրքն է ասում. «Ես ասացի, թե Աստվածներ եք լինելու և Բարձրյալի որդիներ»

(Սաղ 81.6, Հովհ 10.34,35): Իսկ նրան, որին սրբեց Հայրը, ու մարմին հագցնելու խմատով հաղորդեց աշխարհ ուղարկեց, դուք ասում եք, թե՝ հայհոյում ես, որովհետև ասացի, թե՝ «Աստծո Որդի եմ» (Հովհ 10.36): Այսպիսի գործերից պետք է ճանաչեք, որ Աստծո Որդի եմ: Եվ «Աստծո Որդի» անունն այլ բան չի հաստատում, քան [այն], որ ճշմարիտ Աստված է, քանզի ինչպես մարդուց մարդ է ծնվում, այնպես էլ Աստծուց՝ Աստված և Կյանքից՝ Կյանք և Լույսից՝ Լույս և Հզորից՝ Հզոր: Այդպես էլ Որդին ճշմարիտ Աստված է ճշմարիտ Աստծուց: Այլև «ճշմարիտ» է ասում ճշմարիտ Աստծուն զատորոշելու համար սուտ [աստվածներից], որոնք կուռքեր են: Եվ եթե մեկը «որպեսզի միայն քեզ ճանաչեն ճշմարիտ Աստված» խոսքի պատճառով կարծի, որ միայն Հայրն է Աստված, ապա այդպիսին Երեմիայի խոսքերով էլ միայն Որդուն կհամարի Աստված լինել, քանզի նա ասում է. «Սա է մեր Աստվածը, ընդ որում մեկ ուրիշին չպիտի համարենք, որ երկրի վրա երևաց և մարդկանց մեջ շրջեց» (Բար 3.38): Այս պատճառով ուղղափառ մաքերին խմանալու է, որ Աստվածությունը հավասարապես Հորը, Որդունը և Սուրբ Հոգունն է, քանզի Աստված է Հայրը, Աստված է Որդին և Աստված է Սուրբ Հոգին, ըստ որում Պետրոսն ասաց Անանիային, թե՝ «Ինչո՞ւ ստեցիր Սուրբ Հոգուն. ոչ թե մարդկանց ստեցիր, այլ՝ Աստծուն» (Գործք 5.4):

Եվ Պողոսն է ասում. «Տերը Հոգին է»: Որ [Աստված] երեք անձնավորություն է՝ իր [մասին] հայտնում է Մովսեսին՝ ասելով. «Ես եմ Աբրահամի Աստվածը, Իսահակի Աստվածը, Հակոբի Աստվածը» (Ելից 3.6,15,16, 4.5): Եվ [այն], որ երեք աստվածներ չեն, այլ՝ մեկ Աստված, ինքը հայտնեց՝ ասելով Մովսեսին, թե՝ «Աստված ասաց». սա միության [վկայությունն է], «Մարդ ստեղծենք ըստ մեր պատկերի և ըստ նմանության». սա՝ անձնավորություն: «Եվ Աստված մարդուն ստեղծեց իր պատկերով». սա միության [վկայությունն է], «և ըստ Աստծո պատկերի ստեղծեց նրան». սա՝ սաանձնավորություն: «Եվ Աստված ասում է». սա միության [վկայությունն է], «Ահա Ադամն իբրև մեզանից մեկը եղավ». սա՝ անձնավորություն: «Եվ Նոյն ասում է. Օրհնյալ է Տեր Աստվածը, Սեմի Աստվածը». սա անձնավորությունների [վկայությունն է], «Աստված Հաբեթին պիտի մեծացնի» (Ծննդ 9.26,27). սա՝ միություն: Եվ աշտարակի վերաբերյալ Աստված ասաց. «Եկեք իջնենք և խառնենք կառուցողների լեզուն» (Ծննդ 11.7). սա հայտնապես անձնավորությունների [վկայությունն է], և Աստծո՝ Մամբրեի կաղնու մոտ Աբրահամին երևալը ինկապես միությունն է վկայում և «Աբրահամն իր աչքը բարձրացրեց և տեսավ, որ ահա երեք այրեր կային իր գլխի վերև». ասելով երեք անձնավորություններ հավատում. ինչպես և նույն ընթերցվածից մինչև ավարտ երեքի և մեկի [մասին է] խոսում: Սրանից հետո Գիրքն ասում է, թե՝ «Տերը Տիրոջից հուր և ծծումբ տեղացրեց Սոդոմի վրա» (Ծննդ 19.24,29). [սա] անձնավորություններն է նշանակում: «Եվ այդ քաղաքները կործանելուց

հետո Տերը հիշեց Աբրահամին» (Ծննդ 19.24,29). որանով միությունն է հայտանշում: Դարձյալ՝ մեկ Աստվածությունն ու երեք անձնավորությունը նրանից է իմացվում, որ Աբրահամն Իսահակին զոհաբերելիս հրեշտակն ասաց. «Տերն ասում է. Իմ անձի վրա եմ երդվում» (Ծննդ 24.16). այս խոսքը [ասվում է] հանձին Հոր:

Եվ Դավիթը, խոսքը Հայր Աստծուն ուղղելով, ասում է Որդու վերաբերյալ. «Բազուկը և զորությունը քոնն են» (Սաղ 88.14), ինչը մեկնաբանում է Պողոսը, թե՝ «Քրիստոսն Աստծո զորությունն է» (Ա Կոր 1.24):

Եվ եգիպտացիներն իրենց [վրա եկած] հարվածի պատճառով ասացին, թե՝ «Սա Աստծո մատն է» (Ելից 8.19), որ Սուրբ Հոգին է նշանակում, ինչի մասին Քրիստոսն Ավետարանում ասում է, թե՝ «Աստծո մատով եմ հանում դևերին» (Ղուկ 11.20):

Արդ՝ անձը, բազուկը և մատը, որ զանազանված են անվամբ և մասերով բաժանված, Սուրբ Երրորդության երեք անձնավորություններն են հայտանշում: Եվ քանի որ անձը, բազուկը և մատը մեկ կենդանություն է՝ այսպես [էլ] երեք անձնավորությունները մեկ բնություն են, մեկ Աստված, Արարիչ և այլն: Ինչպես բազուկն է անձին [պատկանում] և մատը՝ բազուկին և անձին, այդպես էլ Որդին՝ Հորը և Հոգին՝ Հորն ու Որդուն. ինչպես ասաց Քրիստոսը, թե՝ «Դու, Հայր, իմ մեջ ես և ես՝ քո մեջ» (Հովհ 10.38, 14.10): Այսպես էլ Մովսեսը Սուրբ Երրորդության միությունը հայտնեց ասելով՝ «Լսիր Իսրայել, քո Տեր Աստվածը մեկ Տեր է» (Բ Օր 6.4): Նաև իր իսկ՝ Աստծո ասածով՝ «Ես եմ, որ էնն եմ» (Ելից 3.14), միության մասին ենք իմանում, իսկ Եսայու միջոցով Իսրայելին ասված [խոսքով]. «Իմ Հոգին և իմ խոսքը (Բանը) քո մեջ են» (Եսայի 59.21), անձնավորություններին ենք հավատում: Նմանապես Միքիայի ասածով. «Չի մերժի նախատինքը, որ ասաց, թե Իսրայելի տունը բարկացրեց Տիրոջ Հոգին» (Միք 2.6): Եվ այն, որ Եսային, ի մասի ունենալով մարգարեություն, գրեց. «Տերը, Տերն ուղարկեց ինձ, նաև՝ նրա Հոգին» (Եսայի 48.16): Եվ Դավիթն ասում է, թե՝ «Երկիրն իր պտուղը տվեց, և օրհնեց մեզ Աստվածը, Աստվածը մեր, մեր Աստվածը կօրհնի մեզ» (Սաղ 66.7), նաև թե՝ «Տերն իմ Տիրոջն ասաց. Նստիր իմ աջ կողմում» (Սաղ 109.1), և «Երկիրը լիացավ Տիրոջ ողորմությամբ, և երկինքը հաստատվեց Տիրոջ խոսքով, և նրա բոլոր զորությունները՝ նրա Հոգու բերանով» (Սաղ 30.6), այսինքն՝ Որդով և Հոգով, քանզի «Քրիստոսն Աստծո իմաստությունն է» (Ա Կոր 1.24), ասում է Պողոսը: Նաև Սողոմոնն է [ասում], թե՝ «Աստված իմաստությամբ հաստատեց երկրի հիմքերը, խորհրդով պատրաստեց երկինքը և իր հանճարով անդունդները պատռեց» (Առակ 3.20), այսինքն՝ Սուրբ Հոգով: Որով և, որանց համար, Մովսեսն ասում է. «Սկզբից Աստված երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ծննդ 1.1-3), այսինքն՝ Հայրը: «Եվ Աստծո Հոգին շրջում էր ջրերի վրա» (Ծննդ 1.1-3)՝ կենդանացնելով արարածներին: «Եվ Աստված ասաց. Եղիցի լույս» (Ծննդ 1.1-3), որ Որդին

է: Ինչպես ասաց Երեմիան. «Ձայնեց լույսին և դողալով անսաց նրան» (Բար 3.38). սա էր Աստվածը, որ երևաց երկրի վրա: Եվ Սողոմոնն ասում է. «Ի՞նչ է նրա անունը, և ի՞նչ է նրա Որդու անունը» (Առակ 30.4):

Արդ՝ այս բոլորը և մնացյալը, որ հարում են սրանց, ցույց են տալիս մեկ բնության և Աստվածության մեջ երեք անձնավորությունների (առկայությունը): Իսկ այն խոսքը, թե՝ «Տիրոջ խոսքը, որ եղավ Եսայուն» (Եսայի 38.4), «Աստծու պատգամը, որ եղավ Երեմիայի վրա» (Երեմ 1.1), «Տիրոջ խոսքը Նավում Եղկեսացու հետ էր», «Այսպես է ասում ամենակալ Տերը» (Ամովս 3.13). [սա] ցույց է տալիս, որ մեկ Աստվածությունն ու մեկ Տերությունը երեք անձնավորության մեջ է, որ փառավորյալ Երրորդություն է, ինչի մասին Եսային հայտնապես սովորելով սերովբեներից՝ եկեղեցուն վարդապետեց ասելով. «Սուրբ, Սուրբ, Սուրբ զորությունների Տեր» (Եսայի 6.3). երեք անգամ «Սուրբ» ասելով՝ երեք անձնավորության մեկ Տերության և Աստվածության մեջ լինելը հայտնեցին: Նույնին մեկ Տեր անվանելով՝ մեկ Աստվածությունը երեք անձերի մեջ հռչակեցին: Այս են քարոզում նաև իրենց վեց թևերով. երկու թևերով ծածկում էին իրենց գլուխները, որ սկիզբն է՝ ցույց տալով, որ [նրանցից իսկ] ծածկված է սկիզբը փնտրել Աստծու մեջ, քանզի [նա ինքը] անսկիզբն է: Եվ երկու թևերով [ծածկում էին] իրենց ոտքերը, որ վերջինն է՝ հայտնելով, թե անվերջն ու անվախճանը միայն [կարող] է քննել նրան, և նրան այնչափ են [ճանաչում], որքան սերովբեների թևերն են թույլ տալիս իմանալ երեք անձնավորությունը մեկ բնության և մեկ Աստվածության մեջ և մեկ Աստվածությունը՝ երեք անձնավորության մեջ: Արժան է իմանալ, որ մեկ բնության մեջ երեք անձնավորության անճառ միավորության մասին [խոսելիս]՝ Սուրբ Գիրքն առանց խառնության է նրանց անունը տալիս և յուրաքանչյուրի հատկությունը պահպանում, այսինքն՝ միայն Հայրն է Հայր և անսկիզբ, միայն Որդին է Որդի և ծնունդ, միայն Հոգին է Հոգի և բխումն: Սակայն երբեմն էլ Գիրքը Հորը Հոգի է անվանում, Որդուն Հայր կոչում և նրանց՝ Հոգի, նաև՝ բխումն է Որդի անվանում և Հոգին՝ Միածին: Ոչ թե շփոթումը կամ այլայլությունը և մեկը մյուսին փոխարինելն է ցույց տալիս՝ իբրև թե Հայրը երբեմն Հոգի է լինում, Հոգին՝ Որդի և այլն. մերժիր այսպիսի կարծիքները, քանզի թեպետ Սուրբ Երրորդությունը մեկ բնության մեջ է, որովհետև բնությամբ և էությամբ մեկ են, բայց յուրաքանչյուր անձնավորության ներհատուկն անշարժական և անշփոթ է:

Բայց աստվածային գիրքն, ամբողջապես նրանց միավորությունը ցույց տալով, իրենց՝ մեկմեկու տրված անուններն ու հատկություններն է հիշում՝ միաժամանակ մեզ սովորեցնելով բարձրագույն խորհուրդներ, ինչի մասին կխոսենք այժմ: Հորը հոգի է անվանում Գիրքն, ըստ որի Քրիստոսը սամարացի կնոջն ասում է. «Աստված հոգի է» (Հովհ 4.24): Սրանով ոչ թե Հոր՝ Հոգու փոխարկված լինելը ցույց տվեց, այլ աշխարհին

ցույց տվեց մարմնապես չպաշտել անմարմին Աստծուն, ինչպես Իսրայելը՝ Հնին, երբ զոհերով, ճենճերահոտերով, ինչպես նաև՝ նյութական տոներով էր պաշտում Աստծուն: Բայց քանի որ Աստված անմարմին է և Հոգի, հարկ է անմարմնաբար և հոգևորապես պաշտել նրան: Եվ սա հայտնի է դառնում հաջորդող խոսքերով. քանզի երբ ասաց, թե՝ «Աստված Հոգի է», այսինքն՝ աննյութ և անմարմին, ավելացնում է, ասելով՝ «Նրան երկրպագողներին հարկ է հոգով և ճշմարտությամբ երկրպագել» (Հովհ 4.24), այսինքն՝ նրան երկրպագել անմարմնաբար և սուրբ: Եվ դարձյալ, որին Հոգի կոչեց, նույնի հետ երկրպագելի է նաև Սուրբ Հոգին և Միածին Որդին, որին Ճշմարտություն անվանեց: Եվ Եսային Որդուն գալիք աշխարհի հայրն է անվանում (Եսայի 9.6), որպեսզի Հոր հետ Որդու՝ երկնքի և երկրի [վրա ունեցած] համազոր տերությունը ցույց տա: Քանզի, երբ մարմին հագնելու պատճառով լսես Որդու խոսքը, թե՝ «Այն օրվա և ժամի մասին ոչ ոք չգիտի՝ ոչ հրեշտակները, ոչ Որդին, բայց՝ միայն Հայրը» (Մատթ 24.36)՝ անգիտություն մի վերագրիր Որդուն և (նրան մի համարիր) Հորից փոքր: Այլ իմանալով Որդու՝ գալիք աշխարհի հայր լինելը, իբրև Տեր և Արարիչ ճանաչիր, և գալիք օրն ու ժամը չիմանալը անօրինության պատճառով է և ոչ անգիտության: Քանզի նա գալիք աշխարհի հայրը, տերը և իմացողն է և ներկայիս՝ իբրև Հոր հետ հայր: Եվ Հայրը, Դավթի բերանով, իր Միածին Որդուն ասում է. «Քեզ հետ է իմ զորության օրերի սկիզբը» (Սաղ 109.3): Սրանով մի՛ համարիր, թե ինքը մեկ այլ սկիզբ ունի և ինքը նրանից է սկսվել և ծնվել, նաև՝ որ Հայրն ու Որդին հավասարապես սկսված են մեկ այլ սկզբից. զերծ մնա այսպիսի կարծիքներից և իմացիր, որ սրանով անսկզբնական Հորից Որդու անժամանակաբար սկսելն է ցույց տալիս: Այս պատճառով վրա է բերում. «Արուսյակից առաջ ծնեցի քեզ» (Սաղ 109.3), այսինքն՝ թեպետ ինձանից ես սկսել ծնունդով, բայց քո անունն արևից առաջ է, և քո սկիզբը մշտնջենավորապես իմ մեջ է, որ անսկիզբն եմ: Ոչ թե Որդին անսկիզբն է, քանզի [իբրև] սկիզբ ունի Հորը, այլ՝ ոչ հետո է [և ոչ էլ] Հորից կրտսեր, բայց անսկիզբ Հոր հետ է էությամբ և մշտնջենավորու-թյամբ նրանից սկսված Միածինը, որ անսկզբի մեջ է: Եվ Քրիստոսն ինքը, որ մարմնի ծննդյան և հոգու (ծննդյան) մասին էր խոսում Նիկոդեմոսի հետ, ասում էր. «Մարմնից ծնվածը մարմին է, հոգուց ծնվածը՝ հոգի» (Հովհ 3.6): Մարիամից Սուրբ Հոգով ծնվելու պատճառով դու նրան Հոգի մի համարիր, ինչպես հրեշտակն ասաց, թե՝ «Նրանից ծնվածը Սուրբ Հոգուց է» (Մատթ 1.20): Այս ոչ թե իր, այլ մկրտվելու համար ասաց, թե՝ ջրից և Հոգուց ծնվածները հոգևոր և աստվածային են (Հովհ 3.5): Եվ երբ Հորից ծնված Միածին Որդուն Դավիթը Հոր նկատմամբ բխում է անվանում, այսինքն՝ Հոր ասելով. «Իմ սիրտը բարի խոսք [Բան] պիտի բխի» (Սաղ 44.2), [սրանով] թող մեկը Որդուն Հոգի և բխում չհամարի, քանզի Որդին Հոր ծնունդն է: Բայց նաև Գիրքը նրան Հոր այրական սրտից բխած բարի

խոսք [Բան] է անվանում այն պատճառով, քանզի «ծնունդ» բառը թեպետ ծնողի բնությունից և էությունից ծնված լինելն է ցույց տալիս, բայց ախտավոր մտքի համար տեղիք է տալիս նյութական և ախտավոր կարծիքի, ուստի Որդու՝ Հորից անախտ և աննյութ ծնվե-լուն մոտիկ է գտնում «բխում» բառը, որ անախտ բան է: Քանզի անախ-տաբար բխումը բխողից է դուրս գալիս, ինչպես ջուրը՝ աղբյուրից և պտուղը՝ ծառից, որպեսզի ծննդյամբ Որդուն Հոր էությունից և բնու-թյունից իմանաս և անախտական բխմամբ նրան ծնված համարես:

Այդպես էլ Սուրբ Հոգին, որ բխում է Հորից. Գիրքը նրան ծնունդ է անվանում, քանզի Սողոմոնը Հոր մասին ասում է. «Իմաստության ընդհանուր ճարտարապետն ինձ սովորեցրեց, որ նրա մեջ մտավոր Հոգի կա սուրբ՝ միածին» (Իմաստ 7.21): Ոչ թե սրանով Հոգին ծնունդ է նկատում, քանզի նա բխումն է Հորից, այլ այն է կամենում ցույց տալ, որ թեպետ բխումը բխողից անախտաբար է դուրս գալիս, սակայն ոչ թե էակցությունն ու միությունն է իսկապես ցույց տալիս: Ըստ որում ակունքից և աղբյուրից բխած ջուրը հոսելն ու այլայլվելն է հայտանշում, որովհետև չնայած բխած ջուրն այնտեղի ջրերից ես վերցնում, [բայց] այս է միանգամայն դրսևորում, և ոչ թե անձերից յուրաքանչյուրը հատկորոշում: Իսկ եթե ջրի բխումը գետնից ընդունես, ապա այլ կլինի բխեցնողի էությունը և այլ՝ բխողի: Այսպես էլ ծառերի պտուղը նրանց էությունից պետք է համարել, սակայն նրանք տարբեր են ըստ համի և ըստ որակի: Այդ պատճառով էլ փոքր օտարություն է նկատվում բխեցնողի և բխողի մեջ, որով Գիրքը Հոր էությունից բխող Սուրբ Հոգին մոտիկ է գտնում «միածին» անվանը, որպեսզի ցույց տա, թե իրեն բխեցրած Հորից բխած Սուրբ Հոգին ծնունդի նման է, [նաև՝] որպեսզի բխումով՝ Սուրբ Հոգու՝ Հորից անախտաբար դուրս գալն իմանաս և ծնունդով՝ Հոր էությունից և բնությունից նրա բխած [լինելուն] հավատաս: Այս պատճառով էլ բխումը Հոր բնությունից ծնվածին՝ Որդուն է մոտիկ գտնում՝ հայտանշելով անախտական ծնունդը, և Հոգու՝ Հորից անախտական բխումը ծնունդին է հարադրում՝ Հոր էությունից և բնությունից Հոգու բխումը ցույց տալով:

Աստվածաշունչ Գիրքը փառավորյալ և պաշտելի Սուրբ Երրորդության և մեկ Աստվածության մասին այսքան և սրան համազոր գիտելիքներ մեզ պարգևեց, իսկ սրանից ավելին քարոզեց [իբրև] եղականներից (հողեղեններից) անհասության ամպով կոծկված, և ճանապարհի սկզբում բարերարությունն ու ներգործությունն իր արարածների մեջ՝ մասնավոր նշաններով ծանուցեց, և նրա էության ու բնության հետ ծանոթությունն անճառապես կոծկեց, սակայն նրա գոյությունն ու անհաս էությունը մեզ հայտնեց, որով հավատում ենք, թե կա Աստված՝ վկայված օրենքներով, մարգարեներով և Նոր Կտակարանով, նաև՝ այստեղ (առկա) տեսանելի բաների բնական քննությամբ են իմացվում «սկզբից նրա անտեսանելի

բաները՝ նրա Աստվածությունը, մշտնջենավորությունը և զորությունը» (Հռոմ 1.20): Նախ նրանից ենք [իմանում], քանզի բոլոր արարածներս մի պատճառից ենք, ինչպես մասերն՝ ամբողջից, ըստ որում բոլոր զգայականներս չորս տարրերից ենք: Արդ՝ երբ մեկը գտնի սրանց պատճառը, որ իր վրա չունենա որևէ պատճառ, հայտորոշ է, որ նա է Արարիչն ու պատճառն ամենայնի: Ինչպես Պլատոնն է ասում, թե՝ Հորն ու ամենայն ինչի պատճառին գտնելը գործ է, [բայց] գտնելով (նրա մասին) պատմելը՝ անհնար[108]: Եվ դարձյալ՝ Ամենայնի պատճառը մեկն է, և ինքն՝ անպատճառ[109]:

Երկրորդ՝ պետք է իմանալ, որ բոլոր էակները մեկմեկու ներհակ են և բացասող, ինչպես ջուրը՝ կրակին և այլն, ինչպես նաև՝ հասման և ծորման մեջ. ուրեմն սրանցից դատ կա մեկը, որ սրանց հարակա հոսելն ու ծորելն անկորուստ և անսպառ կերպով պահում է իր մեջ, և նա, ով կատարում է այս ներհակ և ապականացու բաները գոյության [կոչելով] և միաբանության մեջ պահելով, հայտորոշ է, որ նա ինքը սրանց արարիչ Աստվածն ու նախախնամողն է: Այս պատճառով աստվածային գրքերը մեզ սովորեցրին հավատալ և նրան Աստվածություն անվանել և ամբողջապես հրաժարեցրին նրա բնության անունը հետազոտել, քանզի այն միշտ անտեսանելի են հուշակում՝ ասելով. «Աստծուն ոչ ոք չի տեսել երբեք» (Ա Հովհ 4.12): Նաև Պողոսն է ասում, թե՝ «Նրան ոչ ոք չի տեսել և ոչ էլ կարող է տեսնել» (Ա Տիմ 6.16), քանզի թեպետև Մովսեսն ասում է, թե տեսել է Աստծուն և խոսել նրա հետ, նրանից օրենքներ ընդունել, բայց ոչ թե նրան տեսավ, ինչպես ասաց, թե՝ «Ոչ ոք չի կարող իմ երեսը տեսնել և ապրել» (Ելից 33.20), այլ (նրա) մի կերպը և նմանությունը: Ապա թե ոչ՝ ինչո՞ւ է գրված, թե՝ «Տիրոջ հրեշտակը Մովսեսին երևաց մորենու մեջ կրակի բոցով» (Ելից 3.2): Եվ թե՝ «Հրեշտակների հրամաններով ընդունեցինք օրենքները» (Դան 13.55) և «հրեշտակներով կարգված միջնորդի ձեռքով» (Գաղ 3.19): Նույնպես և՝ Եսային, թե՝ «Տիրոջը տեսա՝ Բարձրության Աթոռին նստած» (Եսայի 6.1): Եվ Մանովեն, թե՝ «Կորանք[110], ով կին, քանզի Աստծուն տեսանք» (Դատ 13.22): Եվ Հոբը, թե՝ «Աստծուն դեմ հանդիման տեսա, և փրկվեց իմ անձը» (Հմմտ Հոբ 42.5): Նաև Եզեկիելին, Միքիային, Աբրահամին և այլոց (երևացածը) բնության և էության ճշմարիտ դրսևորումը մի համարիր, այլ՝ ինչ-որ նմանություն, երևույթ: Քանզի եթե նրան տեսնեին, ինչո՞ւ իրականում նրա երևալը պատշաճ կերպով չպիտի ասեին, [որպես] պարզ անպարունակելի տարածք, այլ նրա մասին խոսում են [իբրև] մի տեսակ նյութական և թանձր իր, [իբրև] երևացող մարդ և Աթոռ նստող, [իբրև] գաղտն և անասուն: Տեսնո՞ւմ ես, որ սա նրա բնության երևումը չէ, որովհետև ինչպե՞ս (կարող է) Աթոռում պարունակվել այն, որ ասաց. «Երկինքն ու երկիրը ես եմ լցնում» (Երեմ 23.24), և կամ Պողոսն ինչպե՞ս է ասում նրան «անմատչելի լույսի մեջ բնակվող» (Ա Տիմ 6.16). մի՞թե նա, իբրև

տարածք, բնակվելով մեկտեղվում է, և կամ անմատչելի լույսը, որի մեջ է բնակվում, մե՞ծ է իրենից և իրեն պարունակո՞ղ:

Այստեղից դարձյալ հայտորոշ է, որ նրա բնությունն արդարները չէին տեսնում, քանզի այլևայլ բաներ էին նրա մասին խոսում. մեկը մի բան, մյուսը՝ մեկ այլ: Իսկ նա, ով իրերի բնությունը տեսնում է, ամեն ժամ և ամեն ոք նրա նույն բովանդակությունն է (տեսնում). բնությամբ (նրան) տեսնելով որպես մարդ՝ ամեն ոք նրան մարդ է տեսնում, և ամեն ժամ ինքը մարդ է երևում և ոչ թե մեկը նրան մարդ է տեսնում, մյուսը՝ արծիվ և կամ՝ ով այսօր մարդ է, վաղն արծիվ է երևում: Իսկ (ինչ) անտեսանելի էությանն է (վերաբերում), քանի որ նրա բնությունը չէին տեսնում, նրա մասին զանազան բաներ էին ասում. մեկը Ծեր և Հինավուրց ասաց նրան, մեկ ուրիշը նրան Մանուկ անվանեց, մեկը՝ Քահանա և մեկ ուրիշը՝ արյունազգեստ պատերազմող, մեկը՝ կանգնած, մյուսը՝ նստած, երբեմն՝ առյուծ, երբեմն էլ՝ հովազ և տարակուսած ինձ, որոնք ոչ թե բնության ցուցիչներն են, այլ (այդպես կոչվում են) ինչ-որ անհրաժեշտության պատճառով: Ինչպես ինքն ասաց. «Ես տեսիլների մեջ հաճախակի պիտի երևամ և մարգարեների ձեռքով (այս կամ այն բանի) պիտի նմանվեմ» (Ովս 12.10), քանզի ոչ ոք չի կարող տեսնել իսկ, այլ՝ ինչպես իրերի անհրաժեշտությունն ու ժամանակն են պահանջում, ասում է, [ըստ այն] ձևի և նմանության պիտի հաճախակի երևամ: Քանզի արդեն Իսրայելին առյուծ էր երևում և այլն, պատերազմը վանելով՝ զինվոր, քավել կամենալով՝ քահանա, անսկիզբ լինելը Հինավուրցի ձեռքում երևալով էր ցույց տալիս, և անթառամ մանկությամբ անվախճան բարեգործելն էր հայտնաբանում, ոտքի կանգնելով՝ նրանց թիկունքից հասնելն ու օգնելն էր ցույց տալիս: Աթոռին նստելով՝ դատաստան է կամենում անել, բայց նստելը նաև նրա էության հարամնայությունն ու մշտնջենավորությունն է հայտանշում, ինչպես Գիրքն է ասում. «Դու հավիտյան նստած ես, և մենք հավիտենական կորուսյալներ ենք» (Բար 3.3): Տեսնո՞ւմ ես, որ նստելը նստելու համար չի ասում, այլապես «Դու նստած ես» ասելով ըստ կարգի (պետք) էր ասել. մենք ոտքի վրա ենք: Այդպես էլ մարմնական դեմք ենք ընծայում նրան. աչք՝ «Բաց քո աչքը և տես» (Եսայի 37.17), ականջ՝ «Տեր, խոնարհեցրու քո ականջը և լսիր ինձ» (Սաղ 16.6, 30.3), նաև՝ ձեռք՝ «Երկարեց իր ձեռքը և մոտեցրեց իմ բերանին» (Երեմ 1.9), ռունգեր՝ «Տեր Աստված անուշ հոտ հոտոտեց» (Ծննդ 8.21), ոտքեր՝ «Դրախտում Տեր Աստծո քայլելու ձայնը լսեցին» (Ծննդ 3.8) և բերան՝ «Տիրոջ բերանն այս խոսեց» (Եսայի 1.20): Եվ այլ այսպիսիներն Աստվածաշունչ գիրքը հարկադրված, մեր թանձրության և նյութականության պատճառով, իբրև դեմք ու ձև դնում է [Աստծո] անսահման և անմարմին էության վրա, աչքով՝ նրա տեսողական զորությունը հայտնելով, ականջով՝ աստվածային լսողությունը, ձեռքով՝ ամենակատար ներգործությունը: Այսպես էլ մեր տկարության պատճառով նրա մասին այլաբա-

նությամբ ասված մյուս բաներն անհրաժեշտ է աստվածավայելչապես ընկալել, ըստ նրա ուղիղ մտքի: Նմանապես և այն, որ Գիրքը նրա անախտ գոյությանը ինչ-որ ախտեր է վերագրում, այսինքն՝ «Տերը սրտմտությամբ բարկացավ իր ժողովրդի վրա» (Թվոց 25.3, Դատ 2.14,20, 3.8, Հեսու 7.1), «Երկնքում բնակվողը նրանցով պիտի ուրախանա» (Սաղ 2.4), «Տերն արթնացավ ինչպես քնից» (Սաղ 77.65), «Տերը զղջաց, որ թագավորեցրեց Սավուղին» (Ա Թագ 15.35), նաև՝ իբրև ոմն անտեղյակ. «ո՞ւր ես, Ադամ» (Ծննդ 3.8): Եվ մնացյալ այսպիսիք, որ մարդկանց են պատշաճ, որոնք (թեպետ համար) չեն, բայց վերագրվում են Աստծուն: Բայց իմանալու է, որ ամեն իրողության մեջ հարկ է չորս այսպիսի գլուխներ (կարգեր) զատորոշել, այսինքն՝ առաջադրվածը ո՞ր կողմից է պատշաճում լինել (այդպիսին). դրանք են՝ չկան, բայց անվանվում են, կան, բայց չեն անվանվում, կան և անվանվում են, չկան և չեն անվանվում[111]: Նախ մեր խոսքը վարենք արարածների վերաբերյալ, և հետո՝ վերլուծությամբ վերցնենք Սուրբ Գրքում առկա Արարչի աստվածաբանությունը:

Չկան, բայց անվանվում են՝ եղջերվաքաղը, արալեզը, հուշկապարիկը և այլ մի քանի այսպիսի անգո բաները, որոնք գոյություն չունեն, քանզի չկան, և ասում են, թե մեր կողմից են անուն ստացել:

Կան, բայց չեն անվանվում՝ ծովում և ցամաքում բնակվող և իրապես գոյող բազում կենդանիներ, սակայն դրանք չճանաչվելու պատճառով մեր կողմից չեն անվանվում, բայց ըստինքյան կան և գոյում են աշխարհում:

Կան և անվանվում են, ինչպես մարդը, առյուծը, արծիվը և մնացյալը, որ գոյացել են և ասվում ու, մեր կողմից ճանաչվելու պատճառով, անվանվում են:

Չկան և չեն անվանվում, ինչպես խոզն արծիվ չէ և չի ասվում արծիվ, և մարդն ուղտ չէ և չի ասվում ուղտ, անմոլար (հաստատուն) աստղագնդերը մոլորական չեն և չեն անվանվում մոլորական:

Արդ՝ այսպիսիները վերցնենք սուրբ և աստվածաբան գրքերում. Աստծո համար Գիրքն ասում է՝ ննջել, արթնանալ, ծիծաղել, բարկանալ, զղջալ և անգիտանալ: Սրանք և այսպիսիները չկան, բայց Աստծուն են վերագրվում իրերի անհրաժեշտությամբ: Ապա թե ոչ՝ ինչպե՞ս կարելի է քնած ասել Աստծուն, որ «չի ննջում և չի քնում Իսրայելի պահապանը» (Սաղ 120.4): Քանզի քունն անզգայության ախտ է՝ զգայություններից մարմինը խաղաղեցնելու, իսկ արթուն լինելը նրան հակառակ՝ քնի վերացումն է, կենդանական շարժումը և իր բնավորական ներգործությունը: Եվ ծաղրը (ծիծաղը) անբան շնչի ընդարձակումն է մեկանում՝ ջլով և մկաններով կատարված: Եվ դրան հակառակ՝ հեծեծանման շնչով հավաքված արտասուքը, նեղվելով ուղեղաթաղանթի խոնավ գալարչիներից, կարծես խողովակներով իջնում է աչքերի մեջ, ինչպես սեխն ու դրա նմաններն ընդունած ջուրը կաթիլավորում են: [Իսկ] բարկանալը սրտի շուրջն արյան

եւանդոտ (շարժումն է, որ կատարվում է) մաղձի ճնշումից: Արդ՝ այսպիսի ախտերն ինչպե՞ս ենք բնավորապես ընծայում Աստծո պարզ և բացարձակ էությանը: Բայց այսպես պետք է իմանալ. երբ Իսրայելը մեղանչեց, և թշնամիները նրան տիրեցին, և նրանք վեր աղաղակեցին, և (նրանց աղաղակը) չլսվեց, և դա Աստծո քուն անվանեցին. (իրականում) նա չի քնում, քանզի Եղիան պախարակում է բահաղականներին, թե՝ Ուժեղ աղաղակեք, մի՞թե քնած է ձեր աստվածը: Եվ սա Գրքի իսկ սովորությունն է՝ բարեգործության լռությունը քուն անվանել, երկայնամտությունը՝ բարեգործություն, արհամարհելն ու պախարակելը՝ ծաղր, բարեբարելը՝ քաղցրություն, վրեժխնդրությունը՝ բարկություն: Եվ այլ նմանները չկան Աստծո մեջ, սակայն ասվում են:

Կան, բայց չեն ասվում, ինչպես անմահ, անսկիզբ և անապական, քանզի այսպիսիք Աստծունն են, և չեն ասում որպիսությունը, այլ՝ միայն բացակայությունը՝ անմահ, անսկիզբ, որովհետև նրանից առաջ ոչինչ չլինելու պատճառով է ասվում անսկիզբ, և քանի որ չունի փոխճան, անմահ և անապական է կոչվում: Եվ այս ոչ թե դրական, այլ բացասական (իմաստով է) ասվում, ինչպես երբ մեկն ասում է, թե երկու հինգն ութ չէ, քսան չէ և հիսուն չէ, բացառելով այն՝ հայտնում է, թե այս չէ և այն չէ: Իսկ դրականն այն է, երբ մեկն ասում է՝ երկու հինգը տասն է:

Այսպես, Աստծուն անմահ, անսկիզբ և անապական ասելը ճշմարիտ է, քանզի Աստված այսպես է, բայց թե ի՞նչ է՝ չի ասում, այլ միայն այն է ասում, թե մահկանացու չէ, չունի սկիզբ, ապականացու չէ: Այս պատճառով սա այն է, ինչ կա և չի ասվում, քանզի բացառում է անէությունը և չի ասում, թե ինչ է:

Կան և ասվում են. ինչպես Աստված, Արարիչ, բարի, քանզի այս է, և այսպես է ասվում:

Չկա և չի ասվում. ինչպես Աստված անգո և չար չէ, և երբեք չի ասվում (այդպես):

Այդպես էլ աստվածային անունները, որոնք Սուրբ Գրքում են, նրա էության և բնության հայտնողները չեն, ինչպես մարդու անունն է հայտնում մարդու բնությունը և առյուծի անունը հայտնում է առյուծի բնությունը, քանզի անունը սահմանի համառոտն է: Ըստ այսմ իմաստասերներն ասում են, թե անունը համառոտ սահման է, և սահմանն ընդարձակված անուն է[112], քանզի անունն ու սահմանը հավասարապես են հայտանշում մարդու բնությունը: Քանզի եթե մեկն ասի՝ կենդանի, բանական, մահկանացու, մտքի և հանճարի ընդունակ. սա մարդու բնությունն է հայտնում, իսկ եթե կարճ և համառոտ ասի՝ մարդ. սա ևս մարդու բնությունն է հայտնում: Իսկ Աստծո անունը, որ կոչում է Գիրքը, երբեք ցույց չի տալիս նրա բնությունը, այլ՝ արարածների մեջ [առկա] ներգործությունն ու շնորհաբաշխությունը. ինչպես Աստված է կոչվում մեզ հաստատելու կամ այստեղ բերելու պատճառով[113], և Տեր՝

երկնավորներին և երկրավորներին տիրելու պատճառով, Ամենակալ՝ քանզի բոլորին հավաքել և ամրացրել է անքակտելի միության և խաղաղության մեջ: Այլև բոլոր այսպիսիները ճանապարհների սկզբում նրա բարության անվանումներն են և ոչ թե անճառությունը հայտանշողները: Նաև այն, որ Մովսեսի հետ խոսելիս ինքն իրեն կոչեց «որ էությունն եմ անվանվում» (հմմտ Ելից 3.14), թեպետ ուրիշ անուններից ավելի պանծալի և մերձավորագույն է Աստծո համար, սակայն չի նշանակում նրա բնությունը, այլ միայն այն, որ Աստվածությունն անսկիզբ և անվախճան է, որովհետև «որ էությունն» անունն այն է ցույց տալիս, որ ոչ սկիզբ ունի և ոչ դադար:

Արդ՝ այս պատճառով բացասական (բացբարձական, անճառելի) աստվածաբանությունն Աստծո համար [ավելի] բարձր և հրաշափառ է, քան դրականը (վերադրականը, ճառելին): Եվ դրական են, երբ Աստծուն ասում ենք Թագավոր՝ նրա վրա ավելացնելով ամենայն ինչ. և՛ Տեր, և՛ Բարի, և՛ Լույս, և՛ Իմաստություն, և՛ Զորություն, և՛ Բարձրյալ, և՛ Հզոր և այլ նմանները, որոնք բացասականից ավելի նվազ են: Եվ բացասական են, երբ նրան վեր համարելով՝ ասում ենք. Անսկիզբ, Անմահ, Անհաս, Անճառ, Անեղ, Աներբ, Անուր, Անվախճան. քանզի թեպետ սրանցով բացառելով ենք ասում, թե Աստված այսինչ չէ և այնինչ չէ, ճառելի չէ, հասանելի չէ, (որևէ) տեղ չի գտնվում և թե՝ ի՞նչ է և ո՞վ կարող է (նրա մասին) մեկին հայտնել, այսուհանդերձ առավել է, քան այն, որ, վրան ավելացվելով, ասվում է՝ Աստված այսինչ է կամ՝ այնինչ, քանզի այսպիսիներից է տկար միտքը հաճախ խաբվում, ախտավորաբար հափշտակվում և Աստծուն Թագավոր կարծում, ինչպես մենք տեսնում ենք, և Տեր՝ մեր մոտ եղածների նման, և Բարի՝ որին մենք ճանաչում ենք, և այնպիսի լույս, որ երևում է մեզ, Իմաստություն, որին հասու ենք: Եվ այս մեծ անմտություն է՝ Աստծո համար այսպիսի բաներ իմանալ, որոնք մեր մեջ են, քանզի թեպետ Աստծուն ճանաչելու նպատակով [ասվեց], թե՝ էություն է, և տեսանելիների [միջոցով] նրան հավատալով՝ Սուրբ Գիրքը և եկեղեցու աստվածաբանները նրան պատվականագույն անվանեցին, սակայն վեր է ամեն անունից և հասողությունից: Այդ պատճառով լավ է նրան բացասականի միջոցով աստվածաբանել, քան դրականի, այսինքն՝ [լավ է] նրան Անուր, Անտեղ ասել, քան՝ «նստած է երկնքի երկնքում» և «Բարձրյալը բարձունքներում է բնակվում», քանզի սրանով (կարծեք) տեղում է պարփակվում անպարփակ էությունը, և տկար միտքը կիմանա, թե երկնքի երկնքում նստածն այն է, որ, ինչպես Եսային է ասում. «Երկինքը թզով է չափում և երկիրը՝ քլով» (Եսայի 40.12): Սա Աստծո համար ասված նյութեղեն մի խոսք է, որ մարմիններին է պատշաճելի: Բայց մարգարեն, նրա անբավ և անչափ մեծությունը կամենալով ասել, ուրիշ բան չգտավ ցույց տալ և «թիզ» ու «քիլ» ընծայեց Աստծուն, միաժամանակ երկնքի՝ երկրից մեծ լինելը ցույց ավեց, քանզի ասաց, [որ] նա [երկինքը] թզով և

երկիրը քլով չափեց: Արդ՝ Աստծո այսպիսի անվանումները ակարների նյութեղեն իմացությունների պատճառով են: Իսկ բացասականները՝ անսկիզբ, անմահ, անհաս և այլն, թեպետ Աստծո բնությունը չեն հայտնում և նրա ինչ լինելը չեն ասում, քանզի նրան անճառելի են անվանում, բայց լսողների միտքը վերացնում են զգալիներից (նյութեղեններից) և թույլ չեն տալիս Աստծուն ինչ-որ տեսավոր և նյութեղեն բան իմանալ: Այլև պարտ է այս իմանալ, որ երբ նրան ասում ենք՝ անհաս և այլն, հարկ է նրան գոյություն և էություն խոստովանել և հետո այսպիսի (անուններ) ասել, քանզի նրանք ևս, որ էություն և գոյություն չեն, անհաս, անեղ, անպատում, անուր են ասվում, որովհետև չկան, հասանելի չեն և պատմելի չեն: Ըստ այսմ անեղը երեքի է բաժանվում. կա անեղ, որ չի եղել, չկա, ինչպես եղջերվաքաղը և այլ անգո բաները: Կա անեղ, որ չի եղել ներգործությամբ, բայց կա զորությամբ, ինչպես կավի մեջ՝ կարասը, պղնձի մեջ՝ արձանը, և փայտի մեջ՝ արկղը: Կա նաև անեղ, որ կա և է, սակայն չի ստեղծվել, ինչպես Աստված, որ կոչվում է անեղ էություն: Այս պատճառով խոստովանելի է երեք անձնավորություն և մեկ Աստվածություն՝ անեղ, կատարյալ, անհաս, անճառ, երկնավորների և երկրավորների համար անիմանալի էություն, բոլորի Արարիչն ու ամենայնի Նախախնամողը, բոլորի վրա Աստված՝ հավիտյանս օրհնյալ[114]:

[Սա] Վահրամ վարդապետի նույն գավառությունից է, որ խոսք է մարգեղության մասին, այն, որ ասում է. «Եկ անճառը ճառենք»: երկարության պատճառով [սա] մեզ մնաց գրել [հետագայում], որպեսզի դու [այժմ] չձանձրանաս: Բայց ամենասուրբ Երրորդության վերաբերյալ աստվածաբանությունը միայն վերջում գրեցի իբրև վկա, մեկնություն և իբրև թագավորական մատնադրոշմ սկզբից ասված խոսքերից:

Ողջ լեր ի Տեր[115]:

Գլուխ ԽԷ

ՆՐԱ՝ ԳՐԻԳՈՐԻ ՀԱՎԱՏՔԻ ԴԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՍՆՉՈՐՍ ԱՍՏԻՃԱՆՈՎ, ԻՆՉԸ ԺՈՂՈՎԵԼՈՎ ԱՅՍՊԵՍ ԴԱՎԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՍԱՐԱԿ ԲԱՌԵՐՈՎ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԽՈՍՔՈՎ

Խոստովանում և ամենակատար սրտով հավատում ենք Հորն [իբրև] անեղ, անծին և անսկիզբ Աստված, այլև Որդու ծնող և Սուրբ Հոգու բխող:

Հավատում ենք Բանին՝ [իբրև] Աստված, հավիտենականությունից առաջ Հորից անեղ ծնված և սկսված՝ ոչ թե հետո և ոչ կրտսեր, այլ որքան Հայրը Հայր է, նրա հետ և Որդին՝ Որդի:

Հավատում ենք Սուրբ Հոգուն [իբրև] Աստված՝ անեղ, անժամանակ, ոչ թե ծնված, այլ բխած Հորից՝ էակից Հորը և փառակից Որդուն:

Հավատում ենք Սուրբ Երրորդությանն [իբրև] մեկ բնություն, մեկ Աստվածություն, ոչ թե երեք աստվածներ, այլ մեկ Աստված, մեկ կամք, մեկ թագավորություն, մի իշխանություն, երևացողների և աներևույթների Արարիչ:

Հավատում ենք սուրբ եկեղեցուն և սրբերի հաղորդությամբ մեղքերի թողությանը:

Երեք անձերից Բանին հավատում ենք [իբրև] Աստված՝ հավիտենականությունից առաջ ծնված Հորից, ժամանակի ընթացքում Աստվածածին Կույս Մարիամի մեջ իջած, նրա արյունից առած և իր Աստվածությանը միավորած, անարատ Կույսի արգանդում ինն ամիս գոյած: Եվ կատարյալ Աստված եղավ կատարյալ Մարդ, հոգով, մտքով և մարմնով՝ մեկ անձ, մեկ դեմք և մեկ բնության մեջ միավորված մարդացած Աստված՝ առանց փոփոխման, առանց այլայլության, անսերմ հղություն և անապական ծնունդ, որովհետև ոչ նրա Աստվածության սկիզբը կա և ոչ էլ՝ նրա Մարդկության վախճանը, «քանզի Հիսուս Քրիստոսը երեկ և այսօր նույնն է և հավիտյան» (Եբր 13.8):

Հավատում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ երկրի վրա շրջած, երեսուն տարեկանից հետո՝ մկրտության եկած, վերևից [լսված] Հոր վկայությանը. «Դա՛ է իմ սիրելի Որդին» (Մատթ 17.5), և աղավնակերպ Սուրբ Հոգու իջնելուն, սատանայից փորձված և նրան հաղթած (լինելուն), մարդկանց փրկություն քարոզած, մարմնով աքնած, վաստակած, քաղցած և ծարաված, հետո [իր] կամքով չարչարանքի ենթարկված, խաչված, մարմնով մեռած և Աստվածությամբ կենդանի մնացած, Աստվածության հետ միավորված մարմինը՝ գերեզմանի մեջ դրված և անբաժանելի Աստվածությամբ հոգով դժոխք իջած, հոգիներին քարոզած, դժոխքն ավերած և հոգիներին փրկած, և երեք օրից հետո մեռելներից հարություն

առած, աշակերտներին երևացած:

Հավատում ենք մեր Տեր Հիսուս Քրիստոսին՝ նույն մարմնով երկինք համբարձված և Հոր Աջ կողմը նստած: Այլև [հավատում ենք, որ] նույն մարմնով և Հոր փառքով գալու է՝ դատելու ողջերին և մեռածներին, բոլոր մարդկանց հարության ժամանակ:

Հավատում ենք գործերի հատուցմանը՝ արդարներին՝ հավիտենական կյանք և մեղավորներին՝ հավիտենական տանջանք:

Այս է հավատքի ուղղափառ դավանությունը, որ հարկ է յուրաքանչյուր քրիստոնյայի ամեն ժամ սրտի մեջ և լեզվի վրա պահել, քանզի առաքյալն ասում է. «Սրտով հավատալն արդարություն է գործում և բերանով խոստովանելը՝ փրկություն» (Հռոմ 10.10):

Սա է հիմքը. պարտ է սրա վրա կառուցել բարի գործերը:

Սա է անշարժ վեմը. մեզ պարտ է սրան հարել և [սրա վրա] հաստատվել:

Սա ճրագ է կյանքի խավարում. հարկ է [այն] միշտ ձեռքին պահել և դրանով լուսավորվել:

Սա է ճանապարհը, որանով պիտի ընթանանք դեպի հավիտենական կյանք, մեր Տեր Հիսուս Քրիստոսը, որով և որին, հավասարապես Հորը և Սուրբ Հոգուն, փառք և գոհություն հավիտյանս. ամեն:

[Հարց.] *Եվ այս ես իմանալու է, թե ինչո՞վ է զանազանվում մտքի տեսությունը զգայությունների տեսությունից:*

[Պատասխան.] *Հինգով. նախ՝ որովհետև միտքն անմարմինն է տեսնում և զգայությունները՝ մարմինը:*

Երկրորդ՝ միտքը տեսնում է առարկայի գոյացությունը, որ դրված է խորքում, իսկ զգայությունը՝ վրա եկած պարագաները (պատահմունքն), ինչպես որակը, քանակը և այլն:

Երրորդ՝ զգայությունը տեսնում է մասնավորը, ինչպես այսինչ մարդուն, որ անհատ է, իսկ միտքն ընդհանուրն է իմանում, որ բնությունն է, ինչպես մարդկությունը:

Չորրորդ՝ զգայությունը մերձավորն է տեսնում, ինչպես այստեղ և այժմ, իսկ միտքը՝ հեռավորը, անցյալն ու ապագան:

Հինգերորդ՝ միտքը տեսնում է որպես ներգործական պատճառ և ճարտարագետ, իսկ զգայությունը՝ որպես գործնական պատճառ և միջնորդ:

[Հարց.] *Ի՞նչ է բանականության սկիզբն ու ավարտը:*

[Պատասխան.] *Ինչպես գործնականը, որ բարոյականն է, սկսվում է աստվածային բարիքից և ավարտվում բարու մեջ: Այդպես էլ տեսականը, որ բանականն է, սկսվում է ճշմարտությունից, որ Աստված Բանն է և ավարտվում է նույն ճշմարտության մեջ: Դարձյալ՝ գործնականի սկիզբը կամքն է, իսկ տեսականինը՝ մտքի իմացական զորությունը:*

Գլուխ ԽԸ
ՃՇՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՎԱՏՔԻ ՄԱՍԻՆ

[Հարց.] *Ի՞նչ է ճշմարտությունը:*

[Պատասխան.] *Ճշմարտությունը նույն պարզ և աստվածային խոսքն է, որ չունի ոչ մի ստություն և հակառակ չէ [ինքն] իրեն: Եվ սրանով զանազանվում է ճշմարիտը ճշմարտությունից, այսինքն՝ մասը՝ ամբողջից, ինչպես մարդը՝ մարդկությունից: Դարձյալ՝ ճշմարիտ է մարդու խոսքը և ճշմարտություն է աստվածային խոսքը: Դարձյալ՝ ճշմարիտը երբեմն ստի է փոխվում, ինչպես իմաստասերների խոսքը, իսկ ճշմարտությունը չի փոխվում, ինչպես հավատքի լույսը: Քանզի այս ճշմարտությունից հավատքի լույսը ծագելով հավատացյալների մտքի մեջ՝ անփոփոխ սիրտությամբ հավատացյալներին հաստատում է ճշմարտության մեջ և ճշմարտությունը՝ նրանց մեջ, ինչպես գիտությունն է միավորում իմացողին իմացվողի հետ, նույնպես և հավատքն է միավորում ճշմարտությունը հավատացյալի հետ:*

[Հարց.] *Ինչո՞վ են զանազանվում և հավասարվում բնական քննությունը և հավատքի տեսությունը:*

[Պատասխան.] *Նրանով են հավասարվում, քանզի երկուսն էլ ճշմարտին են հետամուտ: Բայց [այնուամենայնիվ] զանազանվում են.*

Նախ՝ որովհետև բնական [քննությունը] երկրորդական և բազում ճշմարտությունների համար է կատարվում, իսկ հավատքի [տեսությունը]՝ միակ և աստվածային ճշմարտության [համար]:

Երկրորդ՝ բնականը շեղվում է ճշմարտությունից և տարակուսում, իսկ հավատքը հաստատուն և անտարակույս է ճշմարտության մեջ:

Երրորդ՝ բնական քննությանը հետևում է հերձվածը, իսկ հավատքին՝ ուղղափառությունը:

Չորրորդ՝ բնական քննությունը մտքի մեջ է գտնում ճշմարիտը, իսկ հավատքի միտքը ճշմարտությանն է հետևում:

Հինգերորդ՝ բնական տեսությունն անվարձատրելի է, իսկ հավատքը վարձ է ընդունում և փառք:

Այսքանն այս մասին:

Գլուխ ԽԹ

ՀԱՎԱՏՔԻ, ՀՈՒՅՍԻ ԵՎ ՍԻՐՈ ՄԱՍԻՆ

Մեր միտքը և հոգին ստեղծված բանական լույս է՝ ոչ զգալի, այլ իմանալի և անմարմին, քանզի Աստված իմանալի և բանական լույս է, և մեր միտքն իր պատկերով ստեղծեց, [իբրև] իմանալի և բանական լույս: Եվ ինչպես աչքի լույսը միավորվում է արեգակի լույսի հետ և հետո [միայն] կարողանում է գույն, ձև և չափ տեսնել, այդպես էլ Աստծո իմացական լույսը միավորվում է մտքի բանական լույսի հետ, և նրանով է մարդը տեսնում երկնավոր և երկրավոր գիտությունների զանազանությունները, հավատում Աստծուն, հուսով և սիրով հաստատվում Աստծո մեջ: Այս է հավատքի լույսը, որ Աստծո բանական շնորհը հեղում է մեր բանական մտքի վրա, և իրականանում է հավատքը, ինչպես հավատքն են սահմանում, թե՝ հավատքն առաջին լույսից բանական անձի վրա հեղված ունակություն է՝ հոգևոր բարիքները ճանաչելու համար: Այլև օրենքի լույսն է մտնում մեր հոգիների մեջ, և դրանով են հաստատվում մեր հավատքը և հույսը: Իսկ սրա վրա հավելված Ավետարանի լույսը մեր մեջ կատարյալ հավատք, հույս և սեր է հաստատում: Եվ այսպես երեք լույսերով, այսինքն՝ բանականից, գրավոր օրենքներից և Ավետարանի շնորհներից հեղված լույսերով մեր մեջ հաստատվում են աստվածային երեք առաքինությունները՝ Հավատքը, Հույսը և Սերը:

Հայտնի է, որ բոլոր նահապետները երեք աստվածային առաքինությունների ունեին մասամբ [միայն] և անկատար կերպով, քանզի լոկ հավատում էին, որ կա Աստված, նույնիսկ հավատքի հայր Աբրահամը, որ «հավատաց Աստծուն, և [դա] նրան արդարություն համարվեց» (Հռոմ 4.9): Եվ Աստծո հույսն ու սերը նրա մեջ կատարյալ էին, իսկ Մովսեսի օրենքներով նրանք կատարյալ հավատք ստացան, [նաև՝] մարմնավոր հույս և սեր: Մինչդեռ Քրիստոսի Ավետարանով հավատքը, հույսը և սերը կատարյալ դարձան, քանզի հավատքը հաստատվեց Սուրբ Երրորդության երեք անձերի մեջ, այլև Քրիստոսի մարդեղության մեջ, հույսը հաստատվեց անտեսանելի հոգևոր բարիքի մեջ, իսկ Աստծո նկատմամբ սերն անխզելի կյանքով, «որովհետև ո՞վ կարող է մեզ բաժանել Քրիստոսի սիրուց» (Հռոմ 8.38), ասում է առաքյալը:

[Հարց.] *Ինչպե՞ս են այս երեք առաքինությունները զանազանվում:*

[Պատասխան.] *Հինգ բաներով.*

առաջին՝ ինչպես ցույց տրվեց, հավատքը, հույսը և սերը երեք ժամանակներում եղան, այսինքն՝ օրենքներից առաջ, օրենքների մեջ, Ավետարանների մեջ:

Երկրորդ՝ քանզի երեք լույսով հաստատվեցին, այսինքն՝ հեղված բանական լույսից, գրավոր օրենքներից և Ավետարանի շնորհներից, ինչպես

տացինք:

Երրորդ՝ քանզի երեք աստվածային անձերը զանազանվում են ըստ համեմատության. հավատքը Հորն է պատշաճում, հույսը՝ Որդուն, Սերը՝ Սուրբ Հոգուն[116]:

Չորրորդ՝ ըստ մտքի երեք կարողության. հավատքն իմացության հավանությունն է, հույսը՝ ավանդված հիշողության, և սերը՝ կամքի հոժարության:

Հինգերորդ՝ ըստ հոգու երեք զորությունների. հավատքը բանական մասն է, հույսը՝ ցասման, և սերը՝ ցանկության:

Գլուխ Ծ

ՀԱՎԱՏՔԻ ԵՎ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

[Հարց.] *Ի՞նչ է հավատքը և ի՞նչ են գործերը:*

[Պատասխան.] *Նախ ասենք, որ «Հավատքն առանց գործերի մեռած է, և գործերն առանց հավատքի՝ ունայն» (Հակ 2.17): Ուրեմն՝ հավատքը գործով է կենդանի ու երևացող, ինչպես առաքյալն է ասում. «Հավատքը սիրով է հաջողված» (Գաղ 5.6), և գործը հավատքով է կատարյալ և վարձատրված, քանզի գործերն առանց հավատքի ունայն և անվարձ են:*

Դարձյալ իմանալու է, որ հավատքը և գործը հավասարվում են յոթ բաներով.

Նախ՝ որովհետև երկուսն էլ Աստծո կողմից մարդկանց տրված շնորհներ են:

Երկրորդ՝ երկուսն էլ լույս են և լուսավորում են մեզ:

Երրորդ՝ երկուսն էլ մեր բարության պատուղն են:

Չորրորդ՝ երկուսն էլ վարձատրելի են այստեղ և հանդերձյալ [*կյանքում*]*:*

Հինգերորդ՝ երկուսն էլ Աստծո սիրո մեջ են հաստատված:

Վեցերորդ՝ երկուսն էլ միշտ աճում են և ոմանց մեջ առավել ու ոմանց մեջ նվազ են երևում ըստ կարողության:

Յոթերորդ՝ երկուսն էլ պահելի են մինչև մահ անփոփոխ կերպով:

Բայց և զանազանվում են յոթ բաներով.

Նախ՝ հավատքը հոգու մեջ է, իսկ գործը՝ մարմնի:

Երկրորդ՝ հավատքը ծնող է, իսկ գործը՝ ծնունդ:

Երրորդ՝ հավատքն Աստծո զորությանն է հավատում, իսկ գործը՝ զործողի:

Չորրորդ՝ հավատքն Աստծո էությունն է գիտում, իսկ գործը՝ հրամանը:

Հինգերորդ՝ հավատքը դյուրին է և հասարակ, իսկ գործը դժվարին է և (միայն) ոմանց (մատչելի):

Վեցերորդ՝ հավատքը ողորմություն է ստանում և գործն՝ արդարություն:

Յոթերորդ՝ հավատքն Աստծո տեսությանն է առաջնորդում, իսկ գործը՝ փառաց պսակին:

Այսքանն այս մասին:

ԱՅՍ ԳԻՐՔԸ ՀՈՐԻՆՈՂԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Արդ՝ այս փոքրածավալ աստվածաբանությունը, որ հավաքեցի սուրբ գրքերից՝ սկսելով անսկզբնական Բանից և ավարտելով հավատքի և գործի (վերաբերյալ խոսքերով) քեզ հոգևոր դանձ ընծայեցի ի հիշատակ Քրիստոսով (եղած) բարիքի, լույսի որդի և վերին Սիոնի ծնունդ, Աստծո հավատարիմ ծառա Մատուաշահ:

Եվ (հորինողն) երեք բան է խնդրում քեզնից, [իբրև] փոխհատուցում շահողներին տրված քանքարների.

Նախ՝ որպեսզի միշտ աշխատասեր մտքով սրանց ծանծրանալու այս գիրքը հարաժամ ընթերցես և դժվար վերծանելի բաները մտավորականներից հարցնես և գյուտերինները մտքում պահես և ուրիշներին սովորեցնես:

Երկրորդ խնդրանք՝ որպեսզի հավատքի ու գործերի մեջ հաստատուն և անփոփոխ մնաս մինչև կանչվելու (մահվան) պահը:

Երրորդ խնդրանք՝ որպեսզի հեռու մնաս բազում ստապատիր խոսքերից և հերձվածողների աղանդներից, քանզի վերջին ժամանակներն են, և Նեռի նախակարապետները բազմացել են, խաբեությունն ու սուտն առաջացայլ են, իսկ արդարությունն ու ճշմարտությունը՝ հեռացել և ամբողջապես նվազած մարդկանց մեջ, ըստ Դավթի սաղմոսերգության՝ նաև Տերը համաձայնում է ասելով. «Մարդու Որդին գալով՝ կգտնի՞ արդյոք երկրի վրա հավատք» (Սաղ 8.5): Այս պատճառով, լույսի և ճշմարտության որդի, փախիր նեստորականներից, իբրև կատաղի շներից, քանզի Քրիստոսի Աստվածության բացահայտ ուրացողներն են և համերաշխ են այլազգիներին և հրեա խաչողներին, հատկապես մարդադավաններ և կռապաշտներ են, որոնք սոսկ [իբրև] մարդու միս և արյուն են ճաշակում ի կորուստ իրենց և ոչ թե՝ [որպես] Աստծո Որդու ճշմարիտ մարմին և արյուն:

Փախիր նաև Քաղկեդոնի ժողովի երկարնակներից, որպես թունավոր վիշապներից, որոնք երկճյուղ լեզվով, [իբրև] Նեստորի համախոհ, ուրանում են Տիրոջը [որպես] մեկ (միություն) և իրենց ուղղափառ են հռչակում. լեզվով ուղիղ և սրտով՝ թյուր: Բացահայտ խոստովանողներ են և ծածուկ ուրացողներ. «Տիրոջը շրթունքներով են պաշտում և սրտով մեկուսացած, զատված են Տիրոջից, որոնց դատաստանը հավիտյան է», ասում է առաքյալը: Բայց դու, որովայնից ընտրված և Տիրոջ կողմից սիրված որդյակ, թող քեզ չխաբեն ամբարիշտ այրերը, «որոնց աստվածն իրենց որովայնն է և փառքը՝ ամոթը» (Փիլիպ 3.19): Քրիստոնյայի հավատն են ընթերցում և այլազգիների գործը սիրում, մի գնա նրանց խաբեբա կախարդների հետևից, «քանզի նրանց ոտքերը դեպի չարն են ընթանում» (Առակ 1.16), ասում է իմաստունը: Բայց դու, ինչ որ լսեցիր և սովորեցիր ճշմարտության հայրերից, նույնի մեջ անշարժ և հաստատուն եղիր՝ մտքի, խոսքի և գործի մեջ: Եվ թող չմարի քո մտքի ճրագը և

չնվազի քո լապտերի յուղը: Եվ երբեք քո հավատքի լույսը չծածկես փափկության կամ երկյուղի գրվանի տակ, այլ բովանդակ սրտով և ամբողջ հավատքով ու լեզվով հավատա Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն [որպես] ծնող, ծնունդ և բխում. ոչ թե հետո կամ ժամանակի մեջ (եղած), այլ միշտ և հավիտենապես: Երեք անձեր և մեկ բնություն, մեկ տերություն, մեկ կամք, մեկ գործ և ամենայն ինչ անբաժանելի:

Իսկ երեք անձնավորություններից մեկը՝ Բանն Աստված, հետո, ժամանակի մեջ Աստվածածին Կույսից մարմին, հոգի ու միտք ստացավ և անբաժանելիորեն միավորեց իր Աստվածությանը: Մարմնացած և մարդացած Աստված մեկ անձ է, և երկու բնությունների մեջ միավորվածը մեկ բնություն է, մեկ կամք, մեկ գործ: Երեսուն տարի հետո եկավ Հորդանան և մկրտվեց Հովհաննես Մկրտչից: Հայրը վերևից վկայեց. «Դա է իմ սիրելի Որդին» (Մատթ 17.5) և ոչ թե դրանք, այլ մեկին՝ Միածին Բանին Կույսի Որդի դավանեց՝ ասելով. «Դա է իմ սիրելի Որդին»: Եվ աղավնակերպ Սուրբ Հոգին իջնելով՝ իր փառակցի [մասին] վկայեց:

Եվ այնպես քառասուն օր պահելով՝ հաղթեց փորձիչին, որ հաղթել էր Ադամին: Այսպես մեր բնությամբ քաղց և ծարավ կրելով՝ կամավորությամբ գալիս է դեպի խաչի չարչարանքը: Աստված մարմնով մեռնում է և փառքի Տերն անարգվում, ինչպես Աստվածաբանն է ասում. «Աստված խաչվեց՝ արեգակը խավարեց»[117]:

Եվ անապական մարմնով դրվեց գերեզմանի մեջ և իջնելով դժոխքի մեջ՝ լույս ծագեցրեց բանտում արգելափակված հոգիների (վրա), կապեց հզոր սատանային և ազատեց Ադամից [ի վեր եղած] հոգիներին: Ովքեր հավատացին՝ հավիտենապես ազատվեցին, և ովքեր չհավատացին՝ ժամանակավորապես ազատվեցին, և դարձյալ դժոխք են վերադառնում, ինչպես Դավիթն է ասում. «Մեղավորները դարձյալ դժոխք պիտի վերադառնան» (Սաղ 9.18):

Եվ հետո երրորդ օրը հարություն առնելով՝ քառասուն օր առաքյալներին երևաց և իր հարությունը հաստատեց: Ապա նույն մարմնով երկինք համբարձվեց և նստեց ամենակալ Հոր Աջ կողմում, այսինքն՝ Աստվածության Փառքին:

Եվ վախճանին գալու է ողջերին և մեռածներին դատելու, այսինքն՝ արդարներին և մեղավորներին կամ դևերի դասին և նրանց կամակատար մարդկանց: Սա է կենաց ճանապարհի ճրագը և լույսը: Սա է առաջնորդը և ուղղորդիչը երկրից դեպի երկինք:

Այս են մեզ ավանդել ուղղափառ հայրերի երեք սուրբ ժողովները, որոնք [եղան] Նիկիայում՝ ընդդեմ Արիոսի, որ Աստված Բանին արարած էր անվանում, Կոստանդնուպոլսում՝ ընդդեմ Մակեդոնի, որ Սուրբ Հոգուն էր հայհոյում, Եփեսոսում՝ ընդդեմ Նեստորի, որ ուրացավ Կույսին [որպես] Աստվածածին, այլ մարդածին [համարեց] և ծնվածին ոչ թե Աստված, այլ մարդ դավանեց:

Հավատքի այս դավանությունը և քրիստոնեության կանոնը[118] մեզ բերեցին բազմաչարչար Հայր և մեր սուրբ Լուսավորիչ Գրիգորիոսը և նրա որդիներն ու թոռները՝ սուրբ Ներսեսն ու սուրբ Սահակը: Եվ այլ մնացյալ մինչև այժմ (եղած կանոնները), որ ունենք եկեղեցու մեջ, անփոփոխ պահեցինք և պահում ենք մինչև վերջին կանչը և շնչի դադարը:

Եվ դու, ուղղափառության զավակ, ինչպես վերոգրյալն է փոքրիշատե սովորեցնում, քիչ կարդա և շատ սովորիր և նույնի մեջ անփոփոխ կերպով հաստատուն մնա, քանզի բոլոր ճշմարիտ դավանողները Քրիստոսին Աստված խոստովանեցին, նույն (խոստովանության) մեջ նահատակվեցին և երկրից երկինք տեղափոխվեցին Քրիստոս-Ճշմարտության մոտ:

Եվ մենք նույն դավանության վրա անդրդվելի մնանք՝ կենաց և մահու մեջ և մահից հետո անշարժ հուսով, և նրա խոստացած բարիքին արժանավոր լինենք մեր Տեր Քրիստոս Հիսուսով: Որով և Որի մեջ հավասարապես Հորը և Սուրբ Հոգուն անվախճան հավիտյանս փառք, պատիվ և իշխանություն բոլոր դարերից. Ամեն:

Հիշատակարան

Եվ ես՝ ուսումնականների մեջ տարտամս, խոսքի սուտանուն խուզարկու Գրիգորս, հավաքեցի աստվածաբանության այս գիրքը, որ անվանվելով կոչվում է Ոսկեփորիկ, քանզի անունը դրված է ըստ բովանդակության. ոսկի, այսինքն՝ անապական և պատվական աստվածային գանձերով լցված, ինչը և իրեն ունեցողներին ու սիրողներին զորացնում է աստվածաբանությամբ:

Արդ, սա գրվեց այս սուրբ առաքյալի՝ Եվստաթեոսի առաքելական Աթոռի և այլ բազմահավաք սրբությունների հովանու ներքո, նեղ և դժվարին ժամանակի մեջ, մեր ազգի թվականության 850 (1401) *-ին ոմն բարեպաշտ խոջա Մասուտշահի՝ Թավրիզ քաղաքի մեծարգո այրերից մեկի խնդրանքով: [Նա] բազում անգամ գրով և խոսքով խնդրեց գրել Սուրբ Երրորդության և Քրիստոսի Աստվածության մասին: Եվ ես տկար հոգով և մաշված մարմնով գրեցի և հավաքեցի սուրբ հայրերից ճշմարիտը և ուղիղը կարճառոտ խոսքով, և չորս հատորների բաժանեցի ընթերցողների դյուրության համար, և իբրև թագավորական կնիք ու մեկնություն մեր վարդապետներից հավելյալ խոսքեր վրան ավելացրի:*

Ծանոթագրություններ

1. Տպագրում՝ «Մաշղուտ»: Ելնելով հեղինակային հիշատակարանի տեղեկությունից պետք է եզրակացնել, որ «Ռոկեփորիկ»-ի պատվիրատու խոջա կամ իշխան Մասուտշահը («Մասուդ» արաբերեն նշանակում է «երջանիկ», իսկ «Մասուդշահ»՝ «երջանիկ շահ») Թավրիզի հայ երևելիներից մեկն էր: (էջ 5):

2. Ըստ N8503 ձեռագրում առկա լուծմունքի (թերթ 8բ ի լուսանցս), Տաթևացին նկատի ունի Արիստոտելին: (էջ 9):

3. Ակնարկում է հելլենիստական շրջանի հույն նշանավոր մտածող Էպիկուրի (Ն. Ք. 341–270թթ.) աթեիզմը, որ հիմնված էր Լևկիպի և Դեմոկրիտի ատոմիստական ուսմունքի, ինչպես նաև՝ նյութի հավերժության գաղափարի վրա. տե՛ս Философский словарь. Под редакцией Н. Т. Фролова, изд. IV, М., 1981, с. 430-431: (էջ 11):

4. Տե՛ս ծնթ. 16, 19:

Հմմտ. «Ստորոգութիւնք Արիստոտելի», տե՛ս հետևյալ հրատ. մեջ. «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք և Թուղթ Գիւտայ կաթողիկոսի առ Դավիթ», Բ տպ., Վենետիկ, 1932, էջ 314–315, նաև՝ «Տիմէոս» («Պլատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք Եւթիփռոն. Պաշտպանութիւն Սոկրատայ և Տիմէոս», հրատ. Հ. Ս. Սուքրյան, Վենետիկ, 1877, էջ 97): (էջ 12):

5. Ավերրոյես Կորդուբացին (Իբն Ռոշդ՝ 1126–1198թթ.) արաբ համբավաշատ իմաստասեր և բժիշկ է: Հայտնի է Արիստոտելի աշխատությունների նվիրված իր մեկնություններով: Տաթևացին նրան հիշատակում է նաև իր «Լուծումն համառօտ յառաջաբանն Աւետարանին Յովհաննու» աշխատության մեջ: Ինչպես նշում է Հ. Անասյանը, «Ավերրոյեսի իմաստասիրական երկերի հայերեն թարգմանություններ մեզ հայտնի չեն: ...Դժվար է ասել՝ Տաթևացին ունիտորական (միաբարական) դրականության հայ թարգմանություններից էր ծանոթ Ավերրոյեսի իմաստասիրական գործերին, թե՞ նրանց լատիներեն հրատարակություններից, կամ թե՝ արդյոք նրա ձեռքում ուղղակի եղե՞լ են Ավերրոյեսի իմաստասիրական երկերի հայերեն թարգմանություններ» (տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Բ, Երևան, 1976, էջ 1027-1028): (էջ 13):

6. Հմմտ. «Ստորոգութիւնք Արիստոտելի», էջ 271: (էջ 15):

7. XV-XVI դդ.-ից ի վեր լուրջ կասկած է հայտնվել Պողոս առաքյալի աշակերտ Ս. Դիոնիսիոս Արիսպագացու (Արեոպագացի. Գործ 14.34) անվամբ առկա երկերի հեղինակային պատկանելության շուրջ: Գիտության մեջ գերիշխում է այն կարծիքը, որ հեղինակն ապրել է V-VI դդ.: Հենվելով ձեռագրական մի շարք տվյալների վրա Ս. Ս. Արևշատյանը ենթադրում է, որ մասնավորապես «Յաղագս երկնային քահանայապետութեան» և «Յաղագս եկեղեցական քահանայապետութեան» երկերի հեղինակությունը սխալմամբ ավերված է V-VI դդ. հայ նշանավոր մտածող Դավիթ Անհաղթի անվանը (տե՛ս Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք, համահավաք քննական բնագրերը և առաջաբանը Ս. Ս. Արևշատյանի, Երևան, 1980, էջ 20–21): Սակայն, ըստ գիտական շրջանառության մեջ մտած մեկ այլ կարծիքի, արեոպագյան երկերն իրապես պատկանում են Ս. Դիոնիսիոս Արիսպագացուն (Г. М. Прохоров, Памятники переводной и русской литературы, XIV-XV веков, Л., 1987, с. 5-16): Հետևելով եկեղեցական ավանդությոն՝ այդ և մնացյալ երկերը հիշատակում ենք Արիսպագացու անունով: Ինչպես միջնադարի շատ մատենագիրներ, Տաթևացին ևս առավել հաճախակի դիմում է Ս. Դիոնիսիոս Արիսպագացու հեղինակությանը: Աստվածաբանական գրերն բոլոր

հիմնադրույթները նա հաստատում է Արիսպագացու օգնությամբ: Միտքն, ամենայն հավանականությամբ, քաղված է Արիսպագացու «Յաղագս աստուածայնոց անուանց» երկից, ձեռ. N*49, թերթ 244բ-256բ:, (էջ 16):*

8. *Կռապաշտության ծագման վերաբերյալ այս միտքը լայնորեն տարածված էր տակավին հայրախոսական գրականության մեջ: Այսպես, Ս. Գրիգոր Աստվածաբանն ասում է. «Են ոմանք, ասէ, որք պատկեր սիրելեացն արարին, և որք զկնի եկին, անգիտացան զպատճառն և սովորութիւն կալեալ՝ աստուած պաշտեցին»: Այս միտքը, որ վկայակոչվում է Խաչիկ Ա կաթողիկոսի (973-991թթ.) Սեբաստիայի մետրապոլիտին հղած թղթում (տե՛ս «Տիեզերական Պատմութիւն Ստեփաննոսի վարդապետի Տարօնեցւոյ», Փարիզ, 1859, էջ 228), գտնում ենք Հովհաննես Սարկավագի (մահ. 1129թ.) «Վասն մասանց պատուոյ» երկում նմանապես. Հ. Հ. Բյուսյան, Հովհաննես Սարկավագի «Վասն պատկերաց» և «Վասն մասանց պատուոյ» աշխատությունները, «Պատմա-բանասիրական հանդես», 1979,* N*4, էջ 133: (էջ 18):*

9. *Սոկրատեսը (Ն.Ք. 469-399թթ.) հին հունական իմաստասիրության մեծագույն հեղինակություններից մեկն է: Ապրել և գործել է Աթենքում, ուր նրան ունկնդրել են Պլատոնը, Արիստիպոսը և ուրիշներ: Գրավոր ժառանգություն չի թողել: Սոկրատի իմաստասիրության մասին իմանում ենք նրա աշակերտների, հատկապես Պլատոնի, գրառումներից: Ըստ Սոկրատի, աշխարհի կառուցվածքը, իրերի նյութական բնույթը սկզբունքորեն անճանաչելի են. բացառապես ճանաչելի է սեփական անձը: Այս պատճառով նա կոչ է անում. «Ճանաչիր ինքդ քեզ»: Տաթևացին այստեղ ակնարկում է Սոկրատի բնափիլիսոփայական սկզբունքները, որոնց համաձայն նա մերժում էր չաստվածների («կուռքերի») գոյությունը: Մեղադրվելով անաստվածության մեջ՝ մահապատժի ենթարկվեց, տե՛ս* В. С. Нерсесянц, Сократ, М., 1980: *(էջ 25):*

10. *Կռապաշտությունը պախարակող սուրբգրային փաստարկների այս շարքը ընդարձակորեն և առավել հաճախակիությամբ վկայակոչվել է ջատագովական աստվածաբանության մեջ.* В. В. Бычков, Эстетика Поздней Античности, М., 1981, с. 167-168: *(էջ 25):*

11. *Մանիքեցիների աղանդապետը Մանին (216-276թթ.) էր, որի ծնողները սերում էին պարսկական նշանավոր ընտանիքներից: Իբրև աղանդապետ ծավալել է քարոզչական լայն գործունեություն, գրել բազում աշխատություններ: Ըստ Մանիի ուսմունքի՝ լույսն ու խավարը, բարին և չարը նախասկզբնական, հավասարազոր, ինքնակա սկզբունքներ են, որոնք տևական հակամարտության մեջ են (դուալիզմ): Լույսն ու բարին համակ հոգևոր նախասկիզբ են, իսկ խավարն ու չարը՝ նյութական, տեսանելի աշխարհը, որը պետք է կործանվի: Այսպիսով, աղանդավորական գաղափարախոսություններում առկա դուալիզմը մասնավոր համակարգի է վերածվում Մանիի ուսմունքի մեջ: Մանիքեական դուալիզմի դեմ անտեղիտալի պայքար են մղել Արևելաքրիստոնեական եկեղեցու սյուներ Դիդիմոս Ալեքսանդրացին, Բարսեղ Կեսարացին, Տիտոս Բոստրացին (այս մասին մանրամասն տես Ե. Գ. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 91-106): Մանիքեական ուսմունքի մասին է խոսում նաև Եզնիկ Կողբացին («Եղծ աղանդոց». Աղանդների հերքումը, թարգմանությունը, ներած. և ծնթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 86-87): Ինչպես երևում է, Տաթևացին օգտվում է Կողբացու հաղորդած տվյալներից: (էջ 26):*

12. *Ս. Դիոնիսիոս Արիսպագացու այս միտքը («Յաղագս աստուածայնոց անուանց», ձեռ.* N*49, թերթ 223բ-225բ) հստակ արձագանքն է Արևելաքրիստո-*

նեական աստվածաբանության մեջ լայնորեն տարածված այդ գաղափարի («Չարը բնություն չէ»): Այսպես, Ս. Աթանաս Ալեքսանդրացին (տե՛ս ծնթ. 51) «Բան յաղագս հեթանոսաց» երկում գրում է. «Գոյն անվանում եմ բարիք, իսկ անգոյն անվանում չարիք, քանզի անգոյը ստեղծվում է մարդու խորհուրդներով» (տե՛ս О. П. Флоренский, Столп и утверждение истины, М., 1914, с. 693): Ս. Գրիգոր Նյուսացին (շուրջ 335-394թթ.) ևս իր Ժողովողի մեկնության մեջ արձանագրում է. «Արտաքոյ ուրեմն Աստուծոյ է չարութիւնն, որոյ բնութիւնն ոչ ինքեամբ է ինչ, այլ ի բարւոյն յուշգոյութենէ հաստատեալ լինի... անգոյ չարութեան բնութիւն ի բաց անկանել բարւոյն գոյացու...», ձեռ. N436, թերթ 62բ-63ա: Ս. Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում»-ի մեջ կարդում ենք «Առանձին բնութեամբ չարը չար չէ և ոչ բարին՝ բարի, այլ ի միտս ունի բարի և չար լինել» («Յաճախապատում ճառք սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի», աշխատ. Ա. Տեր-Միքելյանի, Ս. Էջմիածին, 1894, էջ 52): «Էությամբ չար ոչ մի բան չկա...», «ինչ չար բան, որ լինում է, ի բնե չար չենք ընդունում...», հաստատում է Եզնիկ Կողբացին (տե՛ս անդ, էջ 52, 59): Այս միտքը շեշտվում է նաև Մխիթար Գոշի (XII դ.) Երեմիայի մարգարեության մեկնության մեջ. «Թէ բնութեամբ է չարութիւն, աւելորդ են օրէնք. ոչ բնութեամբ մարդն ծառայէ չարին» (ըստ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութեամբ երից վարդապետաց Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան», Վենետիկ, հտ. Ա, 1836, էջ 499): (էջ 30):

13. Տե՛ս Ս. Գրիգոր Տաթևացի, «Գիրք հարցմանց», Կ. Պոլիս, 1729, էջ 20-21: (էջ 31):

14. Միտքը քաղված է Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկից. ձեռ. N49, թերթ 292բ-293ա: (էջ 35):

15. Ամենայն հավանականությամբ քաղված է Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկից. Հմմտ. ձեռ. N49, թերթ 184ա, 245ա: (էջ 36):

16. Արիստոտել Ստագիրացին (Ն. Ք. 384-322թթ.) անտիկ իմաստասիրության երևելի դեմքերից մեկն է: Եղել է Պլատոնի (տե՛ս ծնթ. 19) աշակերտը, հռչակավոր զորավար Ալեքսանդր Մակեդոնացու դաստիարակը, փիլիսոփայության մեջ քաջ հայտնի «Պերիպատետիկյան դպրոցի» հիմնադիրը:

Տաթևացին այստեղ նկատի ունի Արիստոտելի նշանավոր «Ստորոգութիւնք»-ը («Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք...», էջ 267-316), որ հեղինակի «Յաղագս մեկնութեան» երկի հետ, ըստ Գ. Տեր-Մկրտչյանի և Մ. Աբեղյանի (Գ. Տեր-Մկրտչյան, Անանիա Շիրակացի, Վաղարշապատ, 1896, էջ 34-35, Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա, Երևան, 1944, էջ 99-202) հայերեն է թարգմանվել 5-րդ դարի 80-ական թվականներին: Հայ իմաստասիրական մտքի պատմության մեջ Արիստոտելի խաղացած դերի մասին տե՛ս «Արիստոտելը և հայ փիլիսոփայությունը» (հոդվ. ժող.), Ե., 1980: (էջ 36):

17. Սաբել Լիբեացին ժխտում է Սուրբ Երրորդության երեք անձերի (Հայր, Որդի, Սուրբ Հոգի) ինքնահատուկ պաշտոնները՝ դրանք վերապահելով միայն Հորը: Այս պատճառով, նկատի առնելով Սաբելի որդեգրած միաստվածյան բացարձակաբանությունը, դավանաբան հեղինակները հաճախ Սաբելի հերձվածն անվանում են «Հրեական», իսկ Սաբելին՝ «Հրեականին հետևող»: Ուստի, հակառակ սաբելյան հերձվածի, Սուրբ Երրորդությունը «բաժանեմք անբաժանաբար, և միաւորեմք որոշմամբ, ըստ ուղղափառ հարցն դաւանութեան» («Հրահանգ քրիստոնեական հաւատոյ ըստ ուղղափառ դաւանութեան եկեղեցւոյ Հայաստանեայց, աշխատ. Մեսրայ վարդապետի Գրիգորեան Զմիւռնացւոյ», Մոսկվա, 1850, էջ

151): (էջ 40):

18. Բնագրում՝ «Ովսէ»: Սակայն տարբերությունն այն է, որ Տաթևացու մոտ «արար զամենայն»-ի փոխարեն «արար զիս» է: (էջ 46):

19. Պլատոնը (Ն. Ք. 428/427 - 348/347թթ.) անտիկ իմաստասիրության հսկաներից է: Եղել է Սոկրատեսի (տե՛ս ծնթ. 9) աշակերտը և Արիստոտելի (տե՛ս ծնթ. 16) ուսուցիչը: Թողել է 30-ից ավելի փիլիսոփայական երկխոսություն: Պլատոնի իմաստասիրությունը հիմնված է իր մեծանուն ուսուցչի, պյութագորականների, Պարմենիդեսի և Հերակլիտեսի փիլիսոփայական ուսմունքների վրա: Աշխատություններն աչքի են ընկնում աստվածաբանական նրբանուրբ դիտումներով, որոնք շատ կողմերով աղերսվում են հրեական աստվածաբանությանը: Նրա իմաստասիրության մեջ առաջին անգամ մտավոր համակարգի են վերածվում հոգևոր նախասկզբի, Ոգու («գաղափարներ») հավիտենականության և նյութի ժամանակավոր լինելու մասին անտիկ փիլիսոփայության մեջ արտահայտված մտքերը: Պլատոնի երկերից մի քանիսը («Տիմէոս», «Եւթիփռոն», «Պաշտպանութիւն Սոկրատայ», «Օրէնք», «Մինովս») հայերեն են թարգմանվել VIդ. առաջին կեսում (Սեն Արևշատյան, Պլատոնի երկերի հայերեն թարգմանության ժամանակը, «Բանբեր Մատենադարանի», N10, 1971, էջ 7-20): Վկայությունը քաղված է Պլատոնի «Տիմէոս» աշխատությունից. տե՛ս «Պլատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք... Տիմէոս», էջ 91: (էջ 47):

20. Սուրբ Երրորդության այսօրինակ համաբանությունն ընդհանուր գծերով նման է Օգոստինոս Երանելու (տե՛ս ծնթ. 100) Երրորդաբանությանը, ըստ որի Սուրբ Երրորդության երեք անձերը խորհրդականորեն ներկա են հոգեկան և մտային երեք վիճակների (Հիշողության, Ողջախոհության, Կամքի) մեջ. տե՛ս С. С. Аверинцев, Судьбы европейской культурной традиции в эпоху перехода от античности к Средневековью -"Из истории культуры Средневековья и Возрождения", М., 1976, с. 51: Ըստ Օգոստինոսի «Հանգանակ» ճառի, մարդը բաղկացած է մտքից, հոգուց և մարմնից. իրականություն, որ պատկերն է Սուրբ Երրորդության. տե՛ս «Նեմեսիոսի փիլիսոփայի Եմեսացւոյ Յաղագս բնութեան մարդոյ», Վենետիկ, 1889, էջ 9: (էջ 48):

21. Հայրախոսական աստվածաբանության մեջ լայնորեն կիրարկված այս մտքի (հմմտ. Ս. Դիոնիսիոս Արիոպագացի, «Յաղագս աստուածային անուանց», ձեռ. N49, թերթ 182 ա, բ) վաղագույն աղբյուրներից մեկը Հաճախապատում ճառերից մեկի համապատասխան հատվածն է (տե՛ս անդ, էջ 10 և շար.), որ վկայակոչվում է VIIդ. կազմված «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մեջ (տե՛ս հրատ. Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի, Սուրբ Էջմիածին, 1914, էջ 21): (էջ 48):

22. Արիոսը (մահ. 336թ.) ուղղափառ եկեղեցու համար լուրջ վտանգ ներկայացնող հերձվածողական մի շարժման՝ արիոսականության պարագլուխն էր: Գործել է գլխավորապես Ալեքսանդրիայում, եղել Եգիպտոսի Մելիտոս եպիսկոպոսի համախոհը, ընկել նրա գաղափարների տիրական ազդեցության տակ: Սակայն առժամանակ զատվելով նրանից՝ Ալեքսանդրիայի Ս. Պետրոս պատրիարքի միջոցով սարկավագ է ձեռնադրվում: Այնուհետև Ս. Պետրոսի հաջորդ Ակյուղասի օրոք կարգվում է Բաւքալ քաղաքի երեց: Իր գաղափարները սկսում է բացահայտորեն քարոզել 317 թվականից: Զինված լինելով անտիկ հունական տրամաբանության մեթոդներով՝ նա ժխտում է Հոր նկատմամբ Որդու համապատիվ, համագո լինելը: Արիոսը պնդում է, որ Հայրը Որդուն ստեղծել է ժամանակի մեջ: Այսպիսով, ըստ նրա տեսության, լինելով Հայր Աստծո և արարչության միջնորդը, Որդին Հորից բաժանված է գոյաբանական անդունդով,

ուրեմն և՝ սատրագաս է Հորը: Ուղղափառ եկեղեցին անանդիտալի, սկզբունքային պայքար է մղել արիոսականության դեմ. 325թ. Նիկիո և 381թ. Կ. Պոլսի տիեզերաժողովներում մասնավոր որոշումներ կայացնելով Բյուզանդական կայսրության մեջ քաղցկեղի նման տարածված այդ հերձվածի դեմ՝ վերջնականապես արմատախիլ անելով այն մինչև IV *դարավերջ: (էջ 50):*

23. *Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին (մահ. 444թ.) տիեզերական եկեղեցու բազմերախտ հայրերից մեկն է: Եղել է Եփեսոսի (431թ.) Երրորդ տիեզերաժողովի նախագահը և որպես այդպիսին, վերջնականապես հաստատագրել մարդեղության խորհրդի քրիստոսաբանական սկզբունքները: Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու դավանաբանությունը վճռական դեր է կատարել Հայ եկեղեցու դավանաբանության կազմավորման մեջ: Թողել է մատենագրական հարուստ ժառանգություն (մեկնություններ, ճառեր, թղթեր), որի մի զգալի մասը հայերեն է թարգմանվել* V*դ.: Մեզանում հատկապես մեծ համարում են ունեցել հեղինակի «Պարապմանց» և «Գանձուց» գրքերը, որոնք ուսուցանվել և «լուծմանց առարկա են եղել» հայ մատենագիրների համար: Նրա մատենագրական վաստակը ամենալայն կիրառությունն է գտել հայ մեկնաբանական և դավանաբանական գրականության մեջ (այս մասին տե՛ս «Կնիք հաւատոյ»-ի Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի ներածությունը, էջ* LII-LIII*):*

Տաթևացին այստեղ նկատի ունի Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու «Առ Երեմիաս՝ թէ մի է Քրիստոս՝ ընդդէմ Նեստորի» թղթի համապատասխան հատվածը (տե՛ս «Գիրք պարապմանց», Կ. Պոլիս, 1717, էջ 371): (էջ 52):

24. *Ս. Գրիգոր Աստվածաբանը (Նազիանզացի՝ 328-389թթ.) բյուզանդական մատենագրության երևելի ներկայացուցիչներից մեկն է: Աստվածաբանական ժառանգության մեծ մասը հայերեն է թարգմանվել* V*դ. (տե՛ս Կ. Մուրադյան. Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983): Ինչպես դավանաբան հեղինակներից շատերը, Տաթևացին ևս լայնորեն վկայակոչում է Աստվածաբանի մատենագրական ժառանգությունը: Վկայությունը բերված է «Ցաղագս Սուրբ Հոգւոյն» ճառից (տե՛ս ձեռ.* N*1500, թերթ 816բ-821ա): (էջ 53):*

25. *Ըստ Մակեդոնի հերձվածի, Սուրբ Հոգին լինելով եղական և սպասավորելով Հորն ու Որդուն, կրտսեր է նրանցից և այդու՝ ստորադաս է նրանց: Այս պատճառով Նիկիական (325թ.) հանգանակի «Եւ ի Հոգին Սուրբ» բառերի վրա Մակեդոնի հերձվածի դեմ գումարված Կ. Պոլսի տիեզերաժողովը (381թ.) ավելացնում է «Տէրն և կենդանարարն, ի Հօրէ ելօղն, ընդ Հօր և Որդւոյ երկրպագակիցն և փառաւորակիցն» արտահայտությունը, որն ամբողջացվում է Հայոց Հանգանակում ավելացված «անեղ և կատարեալ» բառերով (տե՛ս «Հրահանգ», էջ Խ-ԽԱ, նաև՝* N*81): (էջ 53):*

26. *Ս. Հովհան Ոսկեբերանը (344/54-407թթ.) տիեզերական եկեղեցու ամենապայծառ դեմքերից մեկն է: Ծնվել է Անտիոքում, ճարտասանության մեջ հմտացել նշանավոր Լիբանիոսի մոտ: Այնուհետև դառնում է քաղաքի Կաթողիկե եկեղեցու ավագ երեցը, իսկ 398թ., հրավիրվելով մայրաքաղաք, ձեռնադրվում է Կ. Պոլսի պատրիարք: Վարքագիր հեղինակները պատմում են նրա բացառիկ առաքինության, սրբակենցաղ վարքի մասին: Նա անսակարկ նվիրումով ծառայել է եկեղեցու շահերին, հանձին Եվդոքսիա կայսրուհու պախարակել բյուզանդական արքունիքի հոռի բարքերը: Իր համարձակ մերկացումների պատճառով 403թ. Ս. Հովհանն աքսորվում է: Սակայն, վախենալով ժողովրդի ցասումից և այդ օրերին տեղի ունեցած երկրաշարժից, արքունիքը ետ է բերում հայրապետին: Շատ չանցած, 404թ. դարձյալ աքսորվում է Կիլիկիայի Կուկիսոն քաղաքը, ավելի ուշ՝ Պիցունդա: Զիջմանալով ճանապարհի դժվարություններին՝ մեռնում է 407թ.: Ս.*

Հովհանի ճառերն աչքի են ընկնում ճարտասանական պերճախոսությամբ, հռետորական ոճի բոլոր արժանիքներով, որոնք իրավունք էին վերապահել արդեն VI դարից ի վեր նրան պատվել «Ոսկեբերան» անունով: Թարգմանական ավանդույթը վկայում է, որ Ս. Հովհան Ոսկեբերանի երկերը սկսել են հայերեն թարգմանվել հեղինակի կենդանության օրոք իսկ: Մեծ հուշակ են վայելել հատկապես Մատթեոսի Ավետարանի և Եսայու մարգարեության մեկնությունները, որոնց շատ հատվածներ մեզ են հասել միայն հայերեն թարգմանությամբ: Այսպես է նաև Ոսկեբերանի բյուրաթիվ ճառերի պարագան: (էջ 53):

27. Խնդրի վերաբերյալ մանրամասն տե՛ս В. Болотов, К вопросу о Filioçue, СПБ, 1914: (էջ 56):

28. Սուրբ Հոգու վերաբերյալ աստվածաբանական համաբնույթ մեկնաբանություններ տալիս են Անանիա Սանահնեցին (XIդ.) և Վանական վարդապետը (XII-XIIIդդ.). տե՛ս N567, թերթ 47ա, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 341: (էջ 56):

29. Տե՛ս ծնթ. 11: (էջ 57):

30. Քաղված է Ս. Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածայնոց անուանց» երկից, ձեռ. N49, թերթ 186բ: (էջ 59):

31. Անդ, ծնթ. 30, թերթ 183բ: (էջ 59):

32. Քաղված է հեղինակի «Յաղագս Որդւոյ» ճառից (ձեռ. N1500, թերթ 806բ-810ա (Ա), թերթ 810ա-813ա (Բ), թերթ 813ա-816բ (Գ): (էջ 59):

33. Տե՛ս ծնթ. 32: (էջ 59):

34. Տե՛ս ձեռ. N1500, թերթ 805ա-806բ: (էջ 59):

35. Տե՛ս ծնթ. 34: (էջ 59):

36. Գլխի այս հատվածը բերված է Ս. Հովհան Ոսկեբերանի «Ի Սուրբ Երրորդութիւնն» ճառից (տե՛ս «Կնիք հաւատոյ...», էջ 45-48: Հմմտ. հեղինակի Սաղմոսաց մեկնության հետ. «Բանբեր Մատենադարանի», N15, Երևան, 1986, էջ 269, ինչպես նաև՝ «Սեբերիանոսի Եմեսացւոյ Գաբաղացւոյ եպիսկոպոսի ճառք ԺԵ», Վենետիկ, 1830, էջ 6): (էջ 61):

37. Աստծո մարդացման միջոցով մարդու աստվածացման գաղափարը գալիս է Նոր Կտակարանից (Բ Պետ 1.4) և հայրախոսական աստվածաբանություններից: Այսպես, վաղ քրիստոնեական ջատագովական աստվածաբանության նշանավոր սյուներից մեկը՝ Իրենեոսը (IIդ.) ասում է. «Աստծո Որդին դարձավ մարդու Որդի, որպեսզի մարդու որդին դառնա Աստծո որդի (PG, t. 7, col. 873, В. Лосский, Догматическая богословия, "Богословские труды", 1972, N8, с. 168): Այս միտքն առկա է Ս. Աթանաս Ալեքսանդրացու մոտ նմանապես. «Աստված մարդացավ, որպեսզի մարդն աստվածանա» (PG. t. 25, col. 192] տե՛ս свящ. Вл. Федоров, Некоторые богословские аспекты проблемы ответственности христианина за человека и общество -"Журнал Московской Патриархии", 1981, N4, с. 37: (էջ 67):

38. Ոչ բաւացի վկայաբերումն է Ս. Գրիգոր Աստվածաբանի «Ի Սուրբ Պասքայ» ճառի համապատասխան հատվածի, ձեռ. N1500, թերթ 740բ: (էջ 71):

39. Լույսի աստվածաբանական այսօրինակ աստիճանակարգումը, որ սերտորեն աղերսված է Փիլոն Եբրայեցու (Ալեքսանդրացի Ն. Ք. 21/28թ.-Ք. Հ. 41/49թ.) լուսային աստվածապաշտությանը (В.В.Бычков, Эстетика Филона Александрийского, "Вестник Древней Истории", 1975, N3, с. 73), գալիս է հայրախոսական մատենագրությունից: Այն իր ամենաբնորոշ դրսևորումն է գտնում Ս. Աթանաս Ալեքսանդրացու՝ Աստծո, իբրև լույսի և նրա Որդու, իբրև ճառագայթի, մեկնաբանության մեջ (տե՛ս Migne, PG. t. 26, col. 573): (էջ 73):

40. Հայրախոսական մատենագրության մեջ դասական դարձած այս միտքը հանդիպում է նաև Vդ. հեղինակ Անտիպատրոս Բոստրացու՝ Քրիստոսի ծննդյանը նվիրված Երկրորդ ճառում. «Եկի զկիրինն՝ անմայր, ի վայր անհայր քարոզել...». տե՛ս «Գանձասար», N1, 1992, էջ 27: (էջ 90):

41. Մաքսիմանոս Դայա՝ Հռոմի կայսր (305-313թթ.): (էջ 137):

42. Փլավիոս Վալերիոս Կոստանդիանոս Օգոստոս՝ Հռոմի կայսր (306-337թթ.): (էջ 137):

43. Բերված է բյուզանդական նշանավոր մատենագիրներ Անդրեաս Կեսարացու (VIդ.) և Արեթաս Կեսարացու (Xդ.) Հայտնության մեկնությունից, «որ հայերեն է թարգմանվել նախ 1179թ. Հռոմկլայում Հերապոլիսի մետրոպոլիտ Կոստանդինի կողմից և գրի առնվել Ներսես Լամբրոնացու (XIIդ.) ձեռքով, և ապա վերանայվել ու սրբագրվել է վերջինիս կողմից» (տե՛ս «Մեկնութիւն Յայտնութեան սուրբ աւետարանչին Յովհաննու, արարեալ տեառն Անդրէի և Արետասայ եպիսկոպոսացն Կեսարու, թարգմանեալ ի յոյն բնագրէ և սրբագրեալ տեառն Ներսեսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոց», Երուսաղեմ, 1855, տեղեկությունն ըստ. Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, Երևան, 1959, էջ 870-871): (էջ 149):

44. Տե՛ս ծնթ. 43: (էջ 149):

45. Քաղված է Ս. Գրիգոր Լուսավորչի Վարդապետությունից (տե՛ս «Աղաթանգեղայ Պատմութիւն Հայոց», աշխատ. Գ. Տեր-Մկրտչյանի, Ս. Կանայանցի, Տփղիս, 1909, պարագրաֆ 364, 368, 369, 383-387): (էջ 151):

46. Վկայությունը բերված է հեղինակի «Ի Յայտնութիւն Տեառն» և «Ի ծնունդն Քրիստոսի» ճառերից (տե՛ս ձեռ. N1500, թերթ 724բ, 726ա): (էջ 152):

47. Ս. Գրիգոր Սքանչելագործը (213-270թթ.) ծնվել է Պոնտոսի Նեոկեսարիա քաղաքում, Պաղեստինի Կեսարիա քաղաքում 233-238թթ. աշակերտել է քրիստոնեական մտքի մեծագույն ներկայացուցիչներից մեկին՝ Որոգինես Ալեքսանդրացուն: Ամենայն իրավամբ համարվել է Պոնտոսի առաքյալը: Հայերեն թարգմանությամբ հայտնի են նրա ճառերը, ճառական հատվածները, ինչպես նաև՝ «Հաւատամք»-ը, որ երկու անգամ վկայաբերվում է «Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մեջ (այս մասին տե՛ս Կարապետ եպս. Տեր-Մկրտչյանի Ներածությունը, էջ XXXVII-XXXVIII): Վկայությունը բերված է հեղինակի «Խօսք ի Ծնունդն Քրիստոսի» ճառից: Ի դեպ՝ Սքանչելագործի այս ճառը, հակառակ ասորական, վրացական, արաբական և սլավոնական մատենագրության մեջ Ոսկեբերանի անվամբ ավանդված լինելուն, հայ թարգմանական ավանդույթի մեջ հայտնի է Սքանչելագործի անվամբ: Ապացուցված է, որ ճառն իրապես Ս. Գրիգոր Սքանչելագործինն է (տե՛ս Հ. Ա. Վարդանյան, «Երանելւոյն Գրիգորի Սքանչելագործի Խօսք ի Ծնունդն Քրիստոսի», «Հանդէս ամսօրեայ», 1912, էջ 394): Զգալի է այս ճառի ազդեցությունը հայ շարականագրության վրա: Այդ ազդեցության առավել բացորոշ հետքերը կան Մովսես Խորենացու «Խորհուրդ մեծ և սքանչելի» շարականում: (էջ 153):

48. Ս. Բարսեղ Կեսարացին (329-379թթ.) տիեզերական եկեղեցու կարկառուն դեմքերից մեկն է: Գրիգոր Աստվածաբանի և Գրիգոր Նյուսացու հետ միասին նա կապադովկյան շրջանակի պատկառելի հեղինակություններից է, որ աչքի է ընկել մասնավորապես եկեղեցավարչական գործունեությամբ: Կեսարացու երկերի մի կարևոր մասը (Վեցօրյա ճառեր, Պատարագամատույց) հայերեն են թարգմանվել Vդ.: Վկայությունը քաղված է հեղինակի «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառից (հրատ. Պ. Տեր-Պողոսյան, «Հանդէս ամսօրեայ», 1968, էջ 422): Այն հայե-

րեն է թարգմանվել VIIդ. Դավիթ Տարոնացու ջանքերով: Այս երկին կարևոր դեր էր վիճակված հայ դավանաբանական մտքի պատմության մեջ, ճառը լայնորեն օգտագործվել է Սեբաստիայի մետրոպոլիտի պատասխան թղթում («Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 212), Անանիա վրդ. Սանահնեցու (XIդ.) «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» (ձեռ. N6453, թերթ 54աբ) և Մովսես Երզնկացու (XIVդ.) «Պատասխանիք թղթոյն Տրապիզոնի առ հառուածեալն Գրիգոր երեց» (հրատ. Ն. Պողոսյան, «Էջմիածին», 1975, N1, էջ 34) դավանաբանական աշխատություններում: (էջ 153):

49. Ս. Եպիփան Կիպրացին (315-403թթ.) վաղ բյուզանդական եկեղեցական մատենագրության երևելի ներկայացուցիչներից է, եղել է Կիպրոսի Սալամին քաղաքի եպիսկոպոսը: Եկեղեցական ավանդույթը նրա անվան հետ է կապում միջնադարյան գրականության մեջ մեծ կիրառում գտած առակավոր զրույցների ժողովածուի՝ «Բարոյախօս»-ի հորինումը: Նրա գրչին է պատկանում «Դեղատուփ» («Պանարիոն») աշխատությունը, որը կարևոր սկզբնաղբյուր է հերձվածների պատմության հետազոտման համար: Հայերեն թարգմանությամբ մեզ են հասել հեղինակի բազմաթիվ ճառերն ու սուրբգրային մեկնությունները: Վկայությունը բերված է Կիպրացու՝ Տիրամորը նվիրված մի ճառից. ըստ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հա. 1, էջ 623 («դիմ» բառի տակ): (էջ 154):

50. Վկայությունը բացակայում է Նեստորի դեմ գրված հեղինակի հետևյալ թղթերում. «Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրի՝ թէ մի է Քրիստոս: Զոր խնդրեաց Երեմիաս ընդդէմ Նեստորի» («Գիրք պարապմանց», էջ 295-404), «Կիւրղի ընդդէմ Նեստորի» («Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 396-406): (էջ 154):

51. Ս. Աթանաս Ալեքսանդրացին (295-373թթ.) Արևելաքրիստոնեական դավանաբանական աստվածաբանության մեծագույն հեղինակություններն է: 326-373թթ. եղել է Ալեքսանդրիայի պատրիարքը, ամենագործուն կերպով մասնակցել Նիկիայի Ա տիեզերական ժողովի (325թ.) աշխատանքներին և անտեղիտալի պայքար մղել արիոսական հերձվածի դեմ՝ ի պաշտպանություն «Նիկիական ուղղափառության և իրավամբ կոչվել «սիւն եկեղեցւոյ»: Հայերեն թարգմանությամբ (V-VIIIդդ.) հասել են նրա բազմաթիվ ճառերը, թղթերը, մեկնությունները, որոնցից շատերի հունարեն բնագրերն այսօր անհայտ են: Նրա մատենագրական ժառանգությունն ամենալայն կերպով օգտագործվել է հատկապես հայ դավանաբանական գրականության մեջ (տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հա. 1, էջ 321-368): Բաղվածքը ոչ բառացի վկայաբերումն է հեղինակի «Խօսք ի սուրբ Աստուածածինն եւ ողջոյն Եղիսաբեթի», «Ներբողեան ի սուրբ Աստուածածինն եւ ի միշտ կոյսն Մարիամ» և «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառերի առանձին հատվածների (տե՛ս «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի ճառք, թուղթք եւ ընդդիմաստացութիւնք», Վենետիկ, 1899, էջ 260-263, 284-285, 294-307): (էջ 155):

52. Բնագրում «փեղամբար» («փէղամպէր»), որ պարսկերենում (peygambar) «մարգարե, պատգամաբեր» նշանակությունն ունի: (էջ 160):

53. Բերված է Ս. Դիոնիսիոս Արիսպագացու Գայիոսին հղած Չորրորդ թղթից, ձեռ. N49, թերթ 306բ: Այս հատվածը վկայակոչվում է նաև «Կնիք հաւատոյ» ժողովածուի մեջ (էջ 101, 256-257) և Անանիա վրդ. Սանահնեցու «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց» աշխատության մեջ (տե՛ս Հ. Հ. Քյոսեյան, Անանիա Սանահնեցու «Հակաճառության» դավանաբանական աղբյուրները. «Էջմիածին», 1981, N7, էջ 51): (էջ 160-161):

54. Տաթևացու բերած վկայությունը տարբերվում է «Երգ երգոցի»

ընկալյալ թարգմանությունից: Ինչպես երևում է, նա օգտագործում է մյուս թարգմանությունը: Այդպես նա վարվում է իր Երգ երգոցի մեկնության մեջ նմանապես. Երգ երգոցի հայերեն թարգմանության տարբերակների մասին տե՛ս Հ. Հ. Ոսկյան, Երգ երգոցի առաջին և երկրորդ թարգմանութիւնք, Վիեննա, 1924: (էջ 162):

55. *Դավանաբանական գրականության մեջ լայնորեն կիրառվող այս եզրը («եկամուտ») ունի «Ներմուծված, հետամուտ» իմաստը, այսինքն՝ մեղքի հետևանքով ապականացու տարրերի, ստորին բնազդների ողոսկումը մարդու մեջ: (էջ 168):*

56. *Ըստ երևույթին վկայությունը բերված է Ս. Հովհան Ոսկեբերանի (տե՛ս ծնթ. 26) Մատթեոսի Ավետարանի մեկնության Չորրորդ գրքից, որը մեզ ամբողջապես չի հասել: Ի դեպ՝ գրաբարեն թերի է նաև Երրորդ գիրքը («Յով-հաննու Ոսկեբերանի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի ւմեկնութիւն Աւետարանագրին Մատթէոս», Վենետիկ, 1826): Այս գրքերը լայնորեն օգտագործվել են Հովհաննես Ծործորեցու և Գրիգոր Տաթևացու Մատթեոսի մեկնություններում: Հետևաբար բացառված չէ, որ Տաթևացին վկայակոչել է իր ձեռքի տակ եղած Ոսկեբերանի մեկնության Չորրորդ գրքից (հմմտ. ձեռ. N1198, թերթ 417բ–456բ): (էջ 173):*

57. *«Միայն Աստված... աստվածացավ» միտքը քաղված է Vդ. մեծանուն մատենագիր Եղիշեի մի երկից: Այն վկայակոչվում է Վարդան Այգեկցու (XIIIդ.) «Արմատ հավատոյ» դավանաբանական աշխատության մեջ. ձեռ. N979, թերթ 364բ–365ա: Այս մասին շնորհակալությամբ տեղեկացանք Հ. Հայրապետյանից: (էջ 178):*

58. *Ինչպես ձեռագրերում, այնպես էլ տպագրում՝ «երեսուն»: Սակայն Ավետարանից գիտենք, որ Քրիստոսը հարություն է առել 33 և մկրտվել 30 տա-րեկան հասակում: Բնականաբար հեղինակը չէր կարող նման թյուրիմացություն թույլ տալ: Պետք է ենթադրել, որ այսօրինակ «թյուրիմացությունը» հետևանք էր իրողության տեսական իմաստավորման, երբ մկրտությունն ու հարությունն աստվածաբանորեն նույնացվում են, քանզի մկրտության ընդերքում հարություն կա և հարության ընդերքում՝ մկրտություն: (էջ 181):*

59. *Սակայն Ավետարանն (Մատթ 22.23) ասում է, որ սադուկեցիք առհասարակ չէին հավատում հարությանը. տե՛ս «Բառարան Սուրբ Գրոց», Կ. Պոլիս, 1881, էջ 474–475: (էջ 181):*

60. *Ակնարկում է Սևերիանոս Անտիոքացու հերձվածը* (VIդ.)*, ըստ որի Քրիստոսի մարմինն անապական էր հարությունից հետո միայն. տե՛ս «Գիրք թղթոց», էջ 60, 67: (էջ 184):*

61. *Ակնարկում է Արիոսի և Սևերիանոսի (տե՛ս ծնթ. 22, 60) հերձվածը: (էջ 184):*

62. *Քաղվածքը բառացի չի համապատասխանում իր աղբյուրին՝ «Հան-գանակ ժողովոյն Նիկիոյ». տե՛ս «Հրահանգ», էջ Իէ: (էջ 185):*

63. *Ամենայն հավանականությամբ ակնարկում է Ս. Բարսեղ Կեսարացու Վեցօրյա արարչության մեկնության համապատասխան տեղը («Յաղագս Վեցաւրեայ արարչութեան», աշխատ. Կ. Մուրադյանի, Երևան, 1984, էջ 58): (էջ 186):*

64. *Տե՛ս ծնթ. 65: Հմմտ. «Մեկնութիւն սուրբ Աւետարանին որ ըստ Մատթէոսի արարեալ ի սրբոյն Ներսիսէ Շնորհալւոյ մինչ ի համարն 17 Հինգե-րորդ գլխոյն և անտի աւարտեալ յերանելւոյն Յօհաննու Երզնկացւոյ որ և կոչի Ծործորեցի», Կ. Պոլիս, 1825, էջ 284–287: Ինչպես ծանուցվում է «Հարցմանց» գրքում (էջ 514), վկայությունը քաղված է Ոսկեբերանի Մատթէի մեկնության*

Հարության ճառից: (էջ 186):

65. *Նկատի ունի Ս. Հովհան Ոսկեբերանի Մատթեոսի Ավետարանի մեկնության Չորրորդ գրքի համապատասխան հատվածը (տե՛ս ծնթ. 56): Հմմտ. «Տեառն Յովհաննու Ոսկեբերանի ի Մատթէոսի Աւետարանին մեկնութիւնէ» տե՛ս հետևյալ հրատ. մեջ. «Յայսմաւուրք», Կ. Պոլիս, 1834, էջ 37 (հավելված), նաև՝ Շնորհալի, Մեկնութիւն Մատթէի, էջ 287): (էջ 186):*

66. *Նկատի ունի Ներսես Լամբրոնացու նշանավոր Սաղմոսաց մեկնությունը (տե՛ս ձեռ. N990, թերթ 652ա, բ): (էջ 187):*

67. *Տե՛ս «Գիրք Հարցմանց», էջ 503-516: (էջ 188):*

68. *Տե՛ս հետևյալ հրատ. մեջ «Դաւթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք», էջ 267: (էջ 196):*

69. *Վկայությունը բերված է Ս. Գրիգոր Աստվածաբանի «Ի Յայտնութիւն Տեառն» ճառից (ձեռ. N1500, թերթ 724բ), որը վկայակոչվում է նաև «Տեառն Գրիգորի Պատասխանի վարդապետացն Հայոց հիւսիսային կողմանցն» թղթում (տե՛ս Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացին..., էջ 156): (էջ 196):*

70. *Պորփյուր Փյունիկեցին (շուրջ 233-304թթ.) ուշ անտիկ շրջանի իմաստասեր է, աշակերտել է Նորպլատոնյան դպրոցի հիմնադիր նշանավոր Պլոտինին: Եվրոպական միջնադարի իմաստասիրության պատմության մեջ կարևոր դեր է կատարել նրա «Արիստոտելի Ստորոգությունների ներածություն» աշխատությունը, որը հայերեն է թարգմանվել տակավին 480-ական թվականներին: Այն պարտադիր ձեռնարկ է համարվել Արիստոտելի տրամաբանության ճիշտ հասկացման համար: Սրանով է բացատրվում այն բուռն հետաքրքրությունը, որ հայ (և ոչ միայն հայ) միջնադարի հեղինակները ցուցաբերել են այս աշխատության նկատմամբ: Ուստի պատահական չէ և այն, որ Պորփյուրի «Ներածությունը» համակողմանիորեն մեկնաբանվել է. հայտնի են Դավիթ Անհաղթի և Գրիգոր Տաթևացու մեկնությունները, այս մասին տե՛ս* С. С. Аревшатян, Формирование философской науки в древней Армении, Ереван, 1973, с. 195-198:

Այստեղ Տաթևացին նկատի ունի Պորփյուրի «Ներածության» հետևյալ տողերը. տե՛ս «Կորիւն վարդապետ, Մամբրէ Վերծանող և Դաւիթ Անյաղթ մատենագրութիւնք», Վենետիկ, 1833, էջ 228-230, 230-234: (էջ 197):

71. *Նեստոր Անտիոքացին եղել է Կ. Պոլսի պատրիարքը (428-431թթ.): Մովսես Խորենացին նրա հերձվածի մասին հետևյալն է հաղորդում. Նեստորը «հրեական հասկացողությամբ հետևելով, հայհոյեց ամենասուրբ Կույսին (ասելով, թե) նա մարդածին է և ոչ Աստվածածին: Որովհետև (ասում էր նա), ծնվածը նրանից սկիզբ առավ. ուրիշ էր Մարիամից շնորհով ծնված որդին, և ուրիշ էր Հորից հավիտենական ժամանակներից առաջ ծնված որդին, այնպես որ լինում են երկու որդի, և Երրորդությունը դառնում է չորրորդություն» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, աշխատ. թրգմ. և ծանոթ. Ս. Մալխասյանի, Երևան, 1981, էջ 302): Եփեսոսի տիեզերաժողովը (431թ.) խստագույնս դատապարտեց Նեստորի հերձվածը և Նեստորին գահընկեց անելով՝ Աֆրիկա աքսորեց: Այսուամենայնիվ, այդ վտանգավոր հերձվածը տարածվեց շատ երկրներում, այդ թվում, նաև Հայաստանում՝ լուրջ սպառնալիք դառնալով եկեղեցու ուղղափառ դավանության համար: (էջ 197):*

72. *Ս. Երրորդության խորհրդական մեկնաբանության համար որպես օրինակ կիրարկված «Գիծ-Մակերևույթ-Մարմին» հարաբերությունն, ինչպես երևում է, քաղված է Արիստոտելի «Ստորոգութիւնք»-ից (տե՛ս «Կորիւն վարդապետ, Մամբրէ Վերծանող... մատենագրութիւնք», էջ 280-281), ուր այն կենցաղավարում է իբրև վերացարկված իմաստասիրական գաղափար: (էջ 199):*

73. Տե՛ս «Կորիւն վարդապետի, Մամբրէ Վերծանողի... մատենագրութիւնք», էջ 230–234: (էջ 200):

74. Քրիստոսի Աստվածության և մարդկության անճառելի միավորությունը ցույց տալու նպատակով կիրարկված այս օրինակը (կրակ-երկաթ) լայնորեն օգտագործվում է դավանաբանական գրականության մեջ: Այն օգտագործում են Սեբաստիայի Մետրոպոլիտը, Անանիա վրդ. Սանահնեցին և Մովսես Երզնկացին. տե՛ս ծնթ. 48: (էջ 203):

75. Բաղված է Ս.Դիոնիսիոս Արիսպագացու Գայիոսին հղած Չորրորդ թղթից. ձեռ. N49, թերթ 306բ –307ա: (էջ 203):

76. Տե՛ս ձեռ. N1500, թերթ 830ա–831ա: (էջ 203):

77. Լատիներեն Լիթուրգիա (liturgia = Պատարագ) բառն է: (էջ 208):

78. Տե՛ս ծնթ. 74: (էջ 209):

79. Ըստ Եվտիքեսի հերձվածի, Աստծո Բանը ճշմարտապես չի մարմնանում և բանական հոգի ու մարդկային միտք չի ստանում, այլ իր աստվածային բնությունը բերում է երկնքից՝ բացարձակապես օտար, անհաղորդ մնալով մարդկային բնույթին: Նա պնդում է, թե «զմարմին Տեառն մերոյ ոչ էր ի բնութենէ մարդկան, այլ յառաջ քան չլինելութիւն մարդոյն և նախ քան զյաւիտեանս ընդ Աստուածութեան իւրում» (տե՛ս Ե. Գ. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդներ... էջ 186–187): Հակառակ Նեստորի՝ Եվտիքեսը քարոզում է, որ Քրիստոսի մեկ բնությունը միավորությամբ չէ, «այլ՝ չփոթմամբ և այլայլութեամբ, այսինքն թէ՝ Բանն Աստուած ձև և նմանութիւն միայն էառ ի սրբոյ Կուսէն և ոչ ճշմարտապէս մարդ եղև» («Հրահանգ», էջ 277): Հայ եկեղեցին հետևողական պայքար է մղել Եվտիքեսի հերձվածի դեմ: Հովհան Օձնեցին (VIIIդ.), Խոսրով Անձևացին (Xդ.), Ներսես Շնորհալին (XIIդ.), Ներսես Լամբրոնացին (XIIդ.) առանձին անդրադարձումներով խոսում են այս հերձվածի մասին (տե՛ս «Հրահանգ», էջ 277–278, 280–282):

Ըստ Ապողինար Լաոդիկեցու (IVդ.) հերձվածի, Քրիստոսի մեջ բացակայում են բանական հոգին և միտքը: Դրանց տեղը զբաղեցնում է անխառն Աստվածությունը, որը բնակվում է Տիրոջ մարմնի մեջ: Ապողինար Լաոդիկեցին թողել է բազում աշխատություններ, որոնք սակայն հասկանալի պատճառներով մեզ են հասել տիեզերական եկեղեցու կողմից ճանաչված հեղինակություններ Գրիգոր Սքանչելագործի, Աթանաս Ալեքսանդրացու, Եփրեմ Ասորու, Հուլիոս Հռոմայեցու և այլոց անուններով (տե՛ս Բ. Ուտիև, Ապողինարի մի բնագրի հայերեն թարգմանությունը Եփրեմի անվան տակ, «Բանբեր Մատենադարանի» 1977, N12, էջ 163–167): Հատկապես նշանավոր է նրա Ղևտացվոց գրքի մեկնությունը, որի առանձին հատվածներ պահպանվել են այդ գրքի մի խմբագիր մեկնության մեջ: Ապողինարի երկերից առանձին հատվածներ պահպանվել են նաև Կաթողիկե թղթերի մի խմբագիր մեկնության մեջ: (էջ 211):

80. Ոչ բառացի այս վկայությունը բերված է Ս. Աթանաս Ալեքսանդրացու «Արտադրութիւն առաքելական Յաղագս աստուածայնոյն մարմնաւորութեան Աստուծոյ Բանի» ճառից (տե՛ս «Ս. Աթանասի Աղեքսանդրիոյ Հայրապետի ճառք...», էջ 281): (էջ 212):

81. Վկայությունը քաղված է Ս. Կյուրեղ Ալեքսանդրացու Սուկեսոս (Տաթևացին օգտագործում է շատ ձեռագրերում հանդիպող անվան «Սեկունդոս» ձևը) եպիսկոպոսին հղած Երկրորդ թղթից (տե՛ս «Գիրք պարապմանց», էջ 418): Այս հատվածն ակնարկվում է Ս. Ներսես Շնորհալու՝ հունաց Մանվել կայսրին հղած թղթում: (էջ 212):

82. Տե՛ս ձեռ. N49, թերթ 111ա–111բ: (էջ 212):

83. Տե՛ս անդ (ծնթ. 82), թերթ 110բ: (էջ 212):

84. Նկատի ունի Ս. Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» աշխատության երկրորդ գլուխը. տե՛ս ձեռ. N49, 176բ–192ա: (էջ 212):

85. Քաղված է «Յաղագս աստուածային անուանց» երկի «Սրբոյն Յերոթէոսի Յաղագս աստուածաբանականաց տարրութեանց» ենթագլխից (տե՛ս ձեռ. N49, թերթ 188բ): (էջ 212):

86. Բերված է Ս. Դիոնիսիոս Արիսպագացու Գայիոսին Հղած Չորրորդ Թղթից (տե՛ս ձեռ. N49, թերթ 306ա): (էջ 213):

87. Անդ (ծնթ. 86): (էջ 213):

88. Անդ (ծնթ. 86) թերթ 306ա,բ: (էջ 213):

89. Անդ (ծնթ. 86): (էջ 213):

90. Անդ (ծնթ. 86) թերթ 306բ: (էջ 213):

91. Անդ (ծնթ. 86) թերթ 306բ–307ա: (էջ 213):

92. Քաղված է Ս. Դիոնիսիոս Արիսպագացու «Յաղագս աստուածային անուանց» երկից. տե՛ս ձեռ. N49, թերթ 159ա–296ա: (էջ 213):

93. Տե՛ս «Գիրք Հարցմանց», էջ 70–93: (էջ 213):

94. Ալբերտ Մեծը (1193–1280թթ.) լատին աստվածաբանության նշանավոր սյուներից մեկն է: Եղել է Թովմաս Աքվինացու ուսուցիչը: Թողել է բազմաթիվ աշխատություններ, որոնք հրատարակվել են տակավին XVIIդ.: Հայերեն թարգմանությամբ հայտնի են նրա «Յաղագս գաղտնեաց կանանց», «Գիրք գաղտնեաց յաղագս բնութեան խոտից, ականց և կենդանեաց», «Դրախտ հոգւոյ յաղագս առաքինութեանց....» և «Համառօտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան» աշխատությունները: Վերջինս, որ թարգմանության օրոք իսկ հայտնի է եղել գերազանցապես «Ալբերտ-գիրք» անունով, իրականում պատկանում է Հուգո Ռիպլինին: Այն «ունեցել է մի հին թարգմանություն, որից միայն մի բեկոր է հասել. հավանաբար այդ հինը հիմք է ծառայել այն երկրորդ թարգմանության, որը կատարվել է 1344թ. (Պետրոս Արագոնացու և) Հակոբ Թարգմանի ձեռքով՝ Քռնա վանքում և որը հետագայում Մխիթար Սեբաստացու կողմից սրբագրության ենթարկվելով՝ տպագրվել է» (տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Ա, էջ 389, С. С. Аревшатян, К истории философских школ средневековой Армении, Е., 1980, с. 21) Ինչպես երևում է, Տաթևացին իր ձեռքի տակ ունեցել է այդ երկի թարգմանությունը, որից և վկայաբերել է. տե՛ս «Համառօտութիւն աստուածաբանութեան երանելւոյն Մեծին Ալպերտի....», Վենետիկ, 1715, էջ 247–248: (էջ 213):

95. Տե՛ս «Գիրք Հարցմանց», էջ 70–93: (էջ 213):

96. Տե՛ս «Գիրք Հարցմանց», էջ 66–68: (էջ 214):

97. Տե՛ս «Համառօտութիւն աստուածաբանութեան....», էջ 265: (էջ 219):

98. Հավանաբար նկատի ունի վաղ միջնադարի իսպանացի եկեղեցական գործիչ, աստվածաբան Իսիդորոս Սևիլիացուն (շուրջ 560–636թթ.) և նրա նշանավոր «Ստուգաբանություններ»-ը, որի հայերեն թարգմանության մասին որևէ տեղեկություն չի պահպանվել: Ըստ երևույթին Տաթևացին օգտվել է միարարական գրականության մեջ նրա մասին եղած տվյալներից: (էջ 219):

99. Հովհան Դամասկացին (շուրջ 650–754թթ.) բյուզանդական աստվածաբանության խոշորագույն դեմքերից մեկն է: Ստացել է համակողմանի կրթություն: Իր մատենագրական ժառանգությամբ նա եզրափակում է հայրախոսական աստվածաբանության անցած դարավոր ուղին, որպես այդպիսին իր «Աղբիւր գիտութեան» հանրագիտարանային աշխատությամբ Դամասկացին համակարգի է բերում վաղ բյուզանդական աստվածաբանության բոլոր գլխավոր ձեռքբերում-

ները: Այդ երկասիրությամբ նա կանխանշում է արևմտյան սքոլաստիկայի կարևոր սկզբունքները, հաստատագրում սքոլաստիկ մտակառուցման եղանակները: Իզուր չէ, որ նրան անվանում են «Արևելքի Աքվինացի»: Հովհան Դամասկացու աշխատություններից շատերը վրացերենից հայերեն են թարգմանվել հայ քաղկեդոնական միջավայրում Սիմէոն Պղնձահանեցու ջանքերով XIII*դ. («Հանդէս ամսօրեայ», 1947, էջ 200-208): Վկայաբերված միտքն ամենայն հավանականությամբ քաղված է Դամասկացու «Ներածութիւն իմաստասիրութեան» աշխատությունից, որի առաջին մասը (որ հայտնի է «Յաղագս գոյի, էութեան» խորագրով)* X*դ. հունարենից հայերեն էր թարգմանել Բագարատ Մամիկոնյանը, իսկ մնացյալ մասերը՝* XIII*դ. վրացերենից՝ Սիմէոն Պղնձահանեցին (տե՛ս Հ. Ս. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. Բ, էջ 1047-1048, նաև՝ Գ. Զարբհանալյան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց, Վենետիկ, 1889, էջ 576-579): (էջ 219):*

100. *Օգոստինոս Երանելին (354-430թթ.) լատին աստվածաբանության հզորագույն հեղինակություններից է: Սկզբնական կրթությունը ստացել է իր ծննդավայր Տագաստ քաղաքում, այնուհետև սովորել Մադավր և Կարթագեն քաղաքներում: 30 տարեկան հասակում տեղափոխվում է Հռոմ, դասավանդում ճարտասանություն, այնուհետև հրավիրվում Միլանոյի արքունական դպրոց, ուր և վերջնականապես հրաժարվում է մանիքեությունից (տե՛ս ծնթ. 11) և քրիստոնեություն ընդունում: 396թ. դառնում է Հիպպոնի եպիսկոպոսը: Տասնամյակներ շարունակ հետևողական պայքար է մղում դոնատիստյան և պելագյան հերձվածների դեմ: Թողել է աստվածաբանական հսկայածավալ ժառանգություն: Նրա երկերից մի քանիսը հայերեն են թարգմանվել միարարական միջավայրում՝* XIII-XIV*դդ.: Դատելով խորագրից՝ միտքը քաղված է քրիստոնեական դոգմատիկայի գլխավոր սկզբունքների մասին խոսող, հեղինակի նշանավոր* «De Trinitate» *աշխատությունից (ըստ երևույթին գարձյալ միարարական թարգմանությունների միջնորդությամբ) (տե՛ս* Migne, PL, t. 42*): (էջ 219):*

101. *Լատին աստվածաբանության մեջ Օգոստինոս Երանելուց հետո երկրորդ խոշորագույն հեղինակությունն է Թովմաս Աքվինացին (1225-1274թթ.): Կաթոլիկ եկեղեցու պաշտոնական ուսմունքի (1879թ. ի վեր) բոլոր հանգուցակետերը հիմնված են Աքվինացու սքոլաստիկ աստվածաբանության վրա: Թողել է բազմաթիվ աշխատություններ, որոնց մեջ գլխավորը հեղինակի* «Summa Teologiae»*-ն («Հաւաքումն աստուածաբանութեան») է: Նրա երկերից մի քանիսը հայացվել են միարարական միջավայրում* XIV*դ. 20-40-ական թվականներին* (С. С. Аревшатян, К истории философских школ средневековой Армении, с. 20): *Միտքն ամենայն հավանականությամբ քաղված է Աքվինացու «Հաւաքումն աստուածաբանութեան» երկի մաս կազմող «Յաղագս անօրինութեանն Քրիստոսի» աշխատությունից. ձեռ.* N*3649: (էջ 219):*

102. *Տե՛ս ծնթ. 74: (էջ 220):*

103. *«Համագոյութիւն»* (omousiov) *եզրը Արևելաքրիստոնեական աստվածաբանության կարևորագույն հասկացությունների պահերից մեկն է դրսևորում: Այն լայնորեն կիրառվել է մասնավորապես Քրիստոսաբանության և Երրորդաբանության մեջ: «Համագոյութիւն»-ը մատնանշում և ընդգծում է Հոր, Որդու և Սուրբ Հոգու նույն էության պատկանելը: Այդ եզրի մասին հանգամանալից տե՛ս* П. Флоренский, Столп и утверждение истины, М., 1914, В. Лосский, Догматическое богословие, с. 138: *(էջ 225):*

104. *Միտքը քաղված է Ս. Գրիգոր Աստվածաբանի Մկրտության, Հայտնության, ինչպես նաև՝ «Առ որս» ճառաշարքի «Խաղաղական Երկրորդ» և*

«Յաղագս Որդւոյ» ճառերից. ձեռ. N1500, թերթ 729բ–737ա, 727ա–729բ, 806բ–10ա, 810ա–13ա, 813ա–6ա, 839բ–841բ: Այն վկայաբերվում է նաև «Կնիք հաւատոյ...» դավանաբանական ժողովածուի մեջ (էջ 32, 35): Այս մտքի ընդհանուր տեսական ակունքներից մեկը կարող է լինել Պլատոնի «Տիմէոս» երկխոսության «Քանզի յորժամ Թուոյ երից... առաջին լեալ, և վերջին և առաջինն դարձեալ միջին» հատվածը (տե՛ս «Պլատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք... Տիմէոս», էջ 95): (էջ 227):

105. Նկատի ունի Ս. Բարսեղ Կեսարացու «Յաղագս Վեցաւրեայ արարչութեան» երկի «Հոգին Սուրբ է... զի կատարումն փառաւորեալ Երրորդութեանն եղիցի նովաւ հաւատարիմ» (Երևան, 1984, էջ 52) հատվածը: (էջ 227):

106. Միտքը հանդիպում է Անտիպատրոս Բոստրացու «Ի Ծնունդն Քրիստոսի» ճառում. «Եկի զվերինն՝ անմայր, ի վայր անհայր քարոզել», «Գանձասար», 1992, Ա, էջ 27 (աշխատ. Հակոբ Քյոսեյանի) (227):

107. Երրորդաբանական այս խորհրդածության ընդհանուր ակունքը Ս. Աթանաս Ալեքսանդրացու՝ Սուրբ Հոգուն և Սուրբ Երրորդությանը նվիրված երկերն են. տե՛ս Ս. Աթանասի ճառք, էջ 113, 120: (էջ 229):

108. Տե՛ս ծնթ. 19: (էջ 238):

109. Տե՛ս ծնթ. 19: Հմմտ. «Պլատոնի իմաստասիրի Տրամախօսութիւնք...», էջ 92, 114: (էջ 238):

110. Աստվածաշնչի հայերեն թարգմանության ընկալյալ բնագրում «կորանք»-ի փոխարեն՝ «մահով պիտի մեռնենք»: (էջ 238):

111. Իմաստասիրելու այս չորս եղանակների մասին խոսվում է ս. Գրիգոր Աստվածաբանի ճառերից մեկում, ձեռ. 4149, թ. 86ար (էջ 240):

112. Միտքը քաղված է Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» աշխատությունից (տե՛ս «Դաւիթ Անյաղթ, Երկասիրութիւնք փիլիսոփայականք», էջ 40): Այն վկայակոչում է նաև XIIIդ. պատմիչ և դավանաբան հեղինակ Ստեփանոս Օրբելյանը (տե՛ս «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց», Կ.Պոլիս, 1756, էջ 20): (էջ 241):

113. «Աստված» անվան այսօրինակ ստուգաբանությունը լայնորեն հայտնի է Հայ Առաքելական եկեղեցու աստվածաբանության մեջ: Այսպես, Խոսրով եպս. Անձևացին (Xդ.) իր Ժամակարգության մեկնության մեջ ասում է. «Աստուած անունն արարչական է... և առ մեզ ստուգաբանի թե «Աստ էած զմեզ» («Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն Ժամակարգութեան...», Կ. Պոլիս, 1840, էջ 93): Իր մեկ այլ երկում նա բացատրում է. «Տէրն անուն վասն սիրելոյն է, իսկ Աստուածն՝ վասն ստեղծանելոյն եւ յատուկ ածելոյ զեղեալքս» («Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն աղօթից Պատարագին», Վենետիկ, 1860, էջ 16): Իր Պատարագի մեկնության մեջ XIIդ. մատենագիր Ներսես Լամբրոնացին նմանապես բացատրում է. «Ստեղծիչ արարածոյս գիտացեալ միայն զնա, այսր ազգաւ յարդեանց իրացն կոչեցաք զարարիչն Աստուած, այսինքն՝ աստ ածող զոչէսն յէութիւն և ի գոյութիւն՝ զերկնաւորն և զերկրաւորս» («Հրահանգ», էջ 129): (էջ 241):

114. ԽԶ գլուխը XIIIդ. մեծանուն մատենագիր Վահրամ Րաբունու «Յաղագս Սրբոյ Երրորդութեան եւ միոյն Աստուածութեան եւ փրկական տնօրէնութեան Քրիստոսի» ընդարձակ ճառի Սուրբ Երրորդությանը վերաբերող մասն է, որը N2322 ձեռագրում բերված է իբրև առանձին ճառ (թերթ 253ա–264բ): (էջ 243):

115. Ելնելով N5118 (թերթ 180 ի ստ. լուս.) N8503 (թերթ 142բ ի ստ. լուս.) ձեռագրերի գրիչների «Աստ գրէ զԳէորգ վարդապետի հարցումն, որ ի Դրախտիկ

գիրքն էառ Մխիթար վարդապետն» ծանուցումից՝ պետք է ենթադրել, որ Վահրամ Րաբունու հիշյալ (տե՛ս ծնթ. 112) ճառը Տաթևացին Ոսկեփորիկի մեջ է ներմուծել Հովհան Որոտնեցու աշակերտ Գևորգ վրդ. Երզնկացու (XIV-XV դդ.) խնդրանքով: Սակայն անգիտության պատճառով Տաթևացին զանց է առել մեջբերել Վահրամ վարդապետի ճառի «Զկնի ճառիցս մեզ անճառն» սկսվածքով երկրորդ մասը, որը N2322 ձեռագրում ներկայանում է իբրև առանձին միավոր (թերթ 264բ–272բ)՝ «Յաղագս մարմնաւոր տնօրէնութեան Քրիստոսի» խորագրով: Գրիչները վկայում են, որ ճառի երկու մասերը (տե՛ս տպ. «Ճառք եւ խոստովանութիւնք», Երուսաղեմ, 1856, էջ 117–216, ըստ Ն. եպս. Պողարեան, Հայ գրողներ, էջ 317) միասին զետեղվել են Մխիթար վարդապետի «Դրախտիկ» գրքում: Այդ աշխատությունը ցավոք մեզ հայտնի չէ: (էջ 243):

116. Այս միտքը հանդիպում է X դ. պատմիչ Ուխտանես եպիսկոպոսի Թուղթ ընծայականում. «Հաւատն՝ ի Հայր, յոյսն՝ յՈրդի, սէրն՝ ի Սուրբ Հոգի» («Պատմութիւն Հայոց», Վաղարշապատ, 1871, էջ 7): (էջ 248):

117. Վկայությունը բերված է «Ի սուրբ Պասքայ» ճառից (տե՛ս ձեռ. N1500, թերթ 740բ): Այն լայնորեն վկայակոչվում է հայ դավանաբանական գրականության մեջ (տե՛ս Կ. Մուրադյան, Գրիգոր Նազիանզացին, էջ 163, Հ. Հ. Քյոսեյան, Անանիա Սանահնեցու «Հակաճառության» դավանաբանական աղբյուրները, «Էջմիածին», 1981, N7, էջ 51, Ստեփանոս Օրբելյան, «Հակաճառութիւն ընդդէմ երկաբնակաց», էջ 12, 86): (էջ 251):

118. Խոսքը Հավատո հանգանակի մասին է, որ Հայաստան բերվեց Ս. Գրիգոր Լուսավորչի որդու՝ Արիստակեսի միջոցով: Նիկիայի եկեղեցական տիեզերաժողովից (325թ.) բերված այդ հանգանակը (որ հայտնի է «Նիկիական հանգանակ» անունով) ճոխացվեց Ս. Գրիգոր Լուսավորչի («Իսկ մեք փառաւորեսցուք...») ու Եփեսոսի ժողովից (431թ.) առաջ գործած մի շարք հայրապետների (Մեծն Ներսես Պարթև՝ 353–373 թթ., Ս. Սահակ Պարթև՝ 387–436թթ.) ձեռքով (Հրահանգ, էջ ԺԷ–ԻԴ): Տաթևացին այստեղ նկատի ունի մասնավորապես առաքելական կանոնները, որ խմբագրել և Կանոնագրքի մեջ է ներմուծել Հովհան Օձնեցի հայրապետը (717–728թթ.) (տե՛ս «Կանոնագիրք Հայոց», աշխատ. Վազգեն Հակոբյանի, հտ. Ա, Երևան, 1964, էջ 18–60, 75–100): (էջ 252):

Աբել-230*
Աբրահամ(նահապետ)-43, 72, 78, 88, 90, 91, 99, 100, 101, 111, 115, 145, 162, 164, 187, 194, 234, 238
Ադամ-48, 68, 77, 80-83, 85, 91, 103, 111, 161, 172, 178, 184, 188, 230, 251
Ազովտոս-124
Աթանաս(Ալեքսանդրացի)-155, 156, 212
Ալբերտ(Մեծ)-213
Ահարոն-87
Անդեաս-46
Ապողինար(Լաոդիկեցի)-211
Անանիա-55,123
Աննա(մայր Սամվել մարգարեի)-103
Աննա քահանայապետ-126
Անտիոք-124, 125
Ավեռոես-13, 30
Արիոս-50, 51, 58, 84, 205, 211, 212, 251
Արիստոտել-12-14, 22-24, 29, 30, 32, 34-36, 38, 47
Աքրիպպաս-126

Բաբելոն-142, 145
Բառնաբաս-124
Բարսեղ Կեսարացի-153, 227
Բաղաամ-104
Բել-113
Բեթանիա-113
Բեթղեհեմ-76, 101, 106, 152, 156
Բութանիա-127

Գաբրիել(հրեշտակապետ)-88, 102, 148, 153, 161
Գամաղիել-123
Գրիգոր Աստվածաբան(Նազիանզացի)-53, 59, 71, 82, 151, 152, 196, 206, 226, 251
Գրիգոր Լուսավորիչ-150, 151, 252
Գրիգոր Աքանչելագործ-152, 153
Գրիգոր Տաթևացի-2, 253
Գալիլիա-110, 114
Գեդեոն-100
Գոգ և Մագոգ-144, 146

Դավիթ(թագավոր, մարգարե)-19, 21, 43, 69, 76-78, 89, 100, 101, 103-108, 111, 121-123, 136, 149, 152, 154, 175-177, 180, 184, 192, 205, 234, 236, 250, 251
Դամասկոս-124
Դանիել-15, 46, 88, 94, 100, 103, 148, 190
Դեմետրիոս-125
Դիոնիսիոս(Արիսպագացի)-16, 30, 35, 36, 58, 125, 160, 196. 203, 212

Եգիպտոս-84, 85, 99, 104, 106, 153
Եզեկիա-84
Եզեկիել-15, 103, 136, 147, 173, 238
Եղիա-85, 111, 140, 143, 180, 194:
Եղիսե-85, 167, 180
Եղիմաս(մոգ)-125
Եղիսաբեթ-163
Ենովք-140,143
Եպիփան Կիպրացի-154
Եսայի-8, 24, 25, 31, 45, 47, 100-105, 126, 136, 137, 147, 162, 175, 176, 182, 191, 193, 216, 232, 235-237, 241
Եսավ-23
Եվա-48, 54, 162, 230
Եվստաթեոսի Աթոռ-253
Եվտիքես(Գործք Առաքելոց)-125
Եվտիքես-208, 211
Երեմիա-24, 25, 31, 102, 103, 230, 233, 235
Երիքով-113
Երուսաղեմ-21, 94, 113, 124, 125, 147, 191, 194
Եփեսոս-251
Եփրատ-101, 139
Եփրեմի տուն-104

Զաքարիա(մարգարե)-175
Զաքարիա(հայր Հովհաննես Մկրտչի)-162
Զաքեոս-113
Զեբեդիա-188

Էպիկուրոս-11

Թաբոր-184, 185
Թավրիզ-253
Թովմաս-117
Թովմա(Աքվինացի)-219

Իսիդորոս-219
Իկոնիա-125
Իսահակ(նահապետ)-43, 99, 173, 233, 234
Իսրայել-85, 103, 104, 106, 114, 116, 122,

* Ընդգրկում է միայն բնագրում առկա անունները. Հ. Ք.

138, 148, 236, 240, 241

Լամպեա-141
Լյուդիա-124

Կայիափա-109, 116
Կեսարիա-126
Կոստանդիանոս(կայսր)-137, 143
Կոստանդնուպոլիս-144,251
Կիլիկիա-125, 126
Կղոդիանոս(Կղեդոնիոս)-203
Կյուրեղ(Ալեքսանդրացի)-52, 212
Կոռնելիոս(Հարյուրապետ)-124
Կրիսպոս-125

Հաբեթ-233
Հակոբ(Նահապետ, Իսրայել)-23, 43, 45, 99, 102-104, 173, 174, 176, 177, 193, 233, 239
Հակոբոս(Տեառնեղբայր)-125, 127
Հեսու-15
Հեսսե-45,101
Հերովդես-107, 125,188
Հիպոլիտոս(Բոստրացի)-141
Հիսուս Քրիստոս, Էմմանուել-9, 10, 21, 39, 42, 44, 50, 51, 56, 57, 67, 68-73, 75-79, 81-87, 89-91, 93-95, 99, 100, 103-107, 109-112, 114, 115, 117, 124-130, 133-135, 138, 140, 141, 143, 145-149, 151, 155, 159, 160, 162-174, 177-184, 186-190, 192-199, 202-206, 208, 210-220, 230, 232, 235, 244, 245, 247, 252
Հոր(Երանելի)-11, 28, 46, 84, 104, 181
Հովել-54
Հովհաննա-188

Հովհաննես(ավետարանիչ)-20, 50, 51, 68-70, 93, 94, 122, 125, 130-133, 148, 182, 188, 215-218, 220
Հովհան(նես) Դամասկացի-219
Հովհաննես(Մկրտիչ)-104, 107, 160, 162, 163, 165, 251
Հովհան(նես) Ոսկեբերան-53, 173, 186, 187
Հովնան(մարգարե)-107, 178
Հովնան(հայր Սիմոնի Պետրոս առաքյալի)-117
Հոպպե-124
Հովսեփ(Աստվածահայր)-111, 114, 177
Հովսեփ Արիմաթացի-109, 117, 177

Հորդանան-44, 166, 167
Հռոմ-144
Հուդա(առաքյալ)-131
Հուդա(Իսկարիովտացի)-28, 122, 175
Հուդայի Թագավորություն-101, 104, 106

Ձիթենյաց լեռ-109

Ղազարոս(աղքատ)-194
Ղազարոս,Ղազար(Մարիամի և Մարթայի եղբայրը)-68, 115, 116, 170, 195
Ղովտ-100, 189
Ղուկաս(ավետարանիչ)-21, 126, 188, 216

Մակեդոն-50, 53, 55, 58
Մակեդոնիա-125
Մամբրեի կաղնի-43, 233
Մանի, մանիքեցիներ-26, 30, 31, 57
Մանովե-100
Մասուաշահ-2,5,250,253
Մատթիա(առաքյալ)-122
Մատթեոս-106, 110, 113, 187, 188, 216, 217
Մաքսիմիանոս(կայսր)-137
Մարիամ Աստվածածին, Կույս-76, 86, 88, 94, 101-111, 117, 140, 151, 152, 154-156, 163, 166, 172, 184, 204, 206, 215, 236, 244, 251
Մարիամ Մագդաղենացի-189,192
Մարկոս-186-188
Մաղաքիա-104
Մելքիսեդեկ-87-91, 102
Միքայել(հրեշտակապետ)-140
Միքիա-46, 106, 234, 238
Մովսես-9, 21, 36, 43, 72, 75, 77, 78, 84, 85, 90, 93-95, 99, 100, 102, 108, 114, 115, 134, 142, 143, 155, 156, 165, 175, 177, 187, 197, 214, 224, 229, 233, 234, 238, 242
Նաբուգոդոնոսոր-18
Նազարեթ-114
Նազովրեցի-104, 106, 116, 122
Նեռ-141
Նեստոր-251
Ներսես(Մեծ)-252
Ներսես(Լամբրոնացի)-187
Նեեմիա-167
Նեստոր-154, 197, 211
Ներոն(կայսր)-126
Նիկանոր-123
Նիկիա-251

Նիկոդեմոս-42, 117, 236
Նիկողայոս-123
Նինոս-18
Նինվե-18
Նոյ-72

Ովսէ-178, 194

Պարմեն-123
Պետրոս(առաքյալ, Սիմոն, Շմավոն, Կեփաս)-13, 40, 55, 108, 109, 115, 117, 122-125, 127, 128, 175, 192, 200, 217
Պիղատոս-109, 116, 137, 176
Պլատոն-12, 28, 47, 227, 238
Պյութագորաս-227
Պողոս(առաքյալ, Սողոս)-9, 12, 19, 27-29, 36, 39, 40, 43, 51, 53, 55, 60, 61, 70-72, 82, 96, 117, 118, 121, 124-126, 147, 180, 181, 209, 214, 216, 218, 234, 238
Պոնտոս-127
Պորփյուր Փյունիկեցի-197, 200
Պրոքորոն-123

Ռեբեկա-103
Ռեթեոս-212, 213

Սաբել-40, 41, 50, 211
Սահակ(Պարթև)-252
Սամարիա-123
Սամվել-103
Սառա-103
Սափիրա-123
Սեթ-48, 54, 162
Սեկունդոս-212
Սեմ-43, 44, 233
Սիմեոն(Ծերունի)-104
Սիմոն(Սամարիացի)-123
Սինա լեռ-93, 100, 144, 187
Սիոն-5, 91, 94, 104, 128, 141, 250
Սիրաք-50
Սկևա(քահանա)-125
Սոդոմ-43, 189, 233
Սոկրատես-25
Սողոմե-188
Սողոմոն-11, 18, 23, 25, 45, 50, 76, 77, 101, 103, 162, 171, 177, 197, 234, 235, 237
Ստեփանոս(Նախավկա)-123

Վահրամ(Րաբունի)-223, 243

Տաբիթա-124
Տարսոն-126
Տիմոթեոս(աշակերտ Պողոս առաքյալի)-125
Տիմոն-123
Տովբիթ-53
Տրովադա-125

Փիլիպպոս-123, 124

Քաղկեդոն-250
Քեբրոն-76
Քոբար-100
Քորեբ-99
Քուղ-188

Օգոստինոս(Երանելի)-219

Ֆելիքս-126

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑԻ

ՈՍԿԵՓՈՐԻԿ

Grigor Tatevaci

" VOSKEPORIC "

(An encyclopedia of religious knowledge)

Աշխարհաբարի վերածեց
և ծանոթագրեց *Հակոբ Քյոսեյանը*

Շապիկը և ձեռագիր էջը՝ *Ալբերտ Մելքոնյանի*
Խմբագիրներ՝ *Ա. Դիլանյան*
Ա. Բաղդասարյան
Ս. Սվազյան
Սրբագրիչներ՝ *Գ. Հակոբյան,*
Գ. Դերձակյան
Զարդանախշերը՝ *Հ. Գրիգորյանի*
Համակարգչային ծառայությունը՝ *Ա. Հովսեփյանի*
Մ. Հովհաննիսյանի

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Տպարան